Google

Тем, что эта книга дошла до Вас, мы обязаны в первую очередь библиотекарям, которые долгие годы бережно хранили её. Сотрудники Google оцифровали её в рамках проекта, цель которого – сделать книги со всего мира доступными через Интернет.

Эта книга находится в общественном достоянии. В общих чертах, юридически, книга передаётся в общественное достояние, когда истекает срок действия имущественных авторских прав на неё, а также если правообладатель сам передал её в общественное достояние или не заявил на неё авторских прав. Такие книги – это ключ к прошлому, к сокровищам нашей истории и культуры, и к знаниям, которые зачастую нигде больше не найдёшь.

В этой цифровой копии мы оставили без изменений все рукописные пометки, которые были в оригинальном издании. Пускай они будут напоминанием о всех тех руках, через которые прошла эта книга – автора, издателя, библиотекаря и предыдущих читателей – чтобы наконец попасть в Ваши.

Правила пользования
Мы гордимся нашим сотрудничеством с библиотеками, в рамках которого мы оцифровываем книги в общественном достоянии и делаем их доступными для всех. Эти книги принадлежат всему человечеству, а мы – лишь их хранители. Тем не менее, оцифровка книг и поддержка этого проекта стоят немало, и поэтому, чтобы и в дальнейшем предоставлять этот ресурс, мы предприняли некоторые меры, чтобы предотвратить коммерческое использование этих книг. Одна из них – это технические ограничения на автоматические запросы.

Мы также просим Вас:

- **Не использовать файлы в коммерческих целях.** Мы разработали программу Поиска по книгам Google для всех пользователей, поэтому, пожалуйста, используйте эти файлы только в личных, некоммерческих целях.
- **Не отправлять автоматические запросы.** Не отправляйте в систему Google автоматические запросы любого рода. Если Вам требуется доступ к большим объёмам текстов для исследований в области машинного перевода, оптического распознавания текста, или в других похожих целях, свяжитесь с нами. Для этих целей мы настоятельно рекомендуем использовать исключительно материалы в общественном достоянии.
- **Не удалять логотипы и другие атрибуты Google из файлов.** Изображения в каждом файле помечены логотипами Google для того, чтобы рассказать читателям о нашем проекте и помочь им найти дополнительные материалы. Не удаляйте их.
- **Соблюдать законы Вашей и других стран.** В конечном итоге, именно Вы несёте полную ответственность за Ваши действия – поэтому, пожалуйста, убедитесь, что Вы не нарушаете соответствующие законы Вашей или других стран. Имейте в виду, что даже если книга более не находится под защитой авторских прав в США, то это ещё совсем не значит, что её можно распространять в других странах. К сожалению, законодательство в сфере интеллектуальной собственности очень разнообразно, и не существует универсального способа определить, как разрешено использовать книгу в конкретной стране. Не рассчитывайте на то, что если книга появилась в поиске по книгам Google, то её можно использовать где и как угодно. Наказание за нарушение авторских прав может оказаться очень серьёзным.

О программе
Наша миссия – организовать информацию во всём мире и сделать её доступной и полезной для всех. Поиск по книгам Google помогает пользователям найти книги со всего света, а авторам и издателям – новых читателей. Чтобы произвести поиск по этой книге в полнотекстовом режиме, откройте страницу `http://books.google.com`.

GRAD
EREN
223
BUHR

A 980,168

THE UNIVERSITY OF MICHIGAN · LIBRARIES ·

Digitized by Google

Digitized by Google

Digitized by Google

Chashak hellen ew latin..

ՃԱՇԱԿ

ՀԵԼԼԷՆ ԵՒ ԼԱՏԻՆ

ՃԱՐՏԱՐԽՕՍՈՒԹԵԱՆ

ԹԱՐԳՄԱՆԵԱՑ Ի ԲՆԱԳՐԱՑ

Հ. ԱՐՍԷՆ ԿՈՄԻՏԱՍ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ

ՄԽԻԹԱՐԵԱՆՑ

Ի ՎԵՆԵՏԻԿ

Ի ՎԱՆՍ ՍՐԲՈՅՑՆ ՂԱԶԱՐՈՒ

1863

Digitized by Google

Grad
IREN
223
BUHR

Digitized by Google

Good
EREN
223
1.11.99

ԵՍՔԻՆԵՍԻ

ՃԱՌ

ԸՆԴԴԷՄ ԿՏԵՍԻՓՈՆԻ

Digitized by Google

Digitized by Google

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Իշխան ոք՝ որ չեւ էր տուեալ զհամար՝ անտեսութիւնն՝ աթենացւոց օրէնքն չհրամայէին ուստիք խնդրել 'ի ժողովրդենէն պակ 'ի պարգեւ նմին։ Եւ մեւս եւս օրէնք պատուիրէին, զպատկան պարգեւելոյս 'ի ժողովրդենէն՝ 'ի հասարակաց ժողովն մատուցանել։ Դիմոսթենի գործ 'ի ձեռն հասեալ կարկատել զպարիսպն Ամենայ, իւրով եւս ծախիւքն էր զոյն վճարեալ։ Կանեսիփոն ոմն անուն՝ քաղաքակից իւր և բարեկամ, չեւ Դիմոսթենի հատուցեալ զհամար գործակալութեանն, առաջի արար ժողովրդեանն և հաճեցոյց շնորհել նմա պակ ոսկի, և մատուցանել զոյն, հակառակ օրինացն, յաշխարհամեւ տեսարանի՝ ակն յանգիման բազմաժողով հրապարակին, և քարոզ կարդալ՝ զի 'ի վերայ առաքինութեան և երախտեաց իւրոց առ ժողովուրդն աթենացւոց՝ ընդունէր Դիմոսթենէս զոյն փոխարէնս։

Եպքինէս 'ի ճառի տոս ամբաստան լինի զԿանեսիփոնէ, զի հակառակ օրինացն՝ պակ հրամայէ իշխանի որոյ չեւ է տուեալ համարս, և զի 'ի տեսարանն խնդրէ զոյն մատուցանել, և զի սուտ գովէ զառաքինութիւն և զբարերարութիւնս առանն՝ յորում չիք ինչ բնաւ երեւեալ լաւութիւն, և ոչ երախտաւորութիւն առ ժողովուրդն։

Դատ մեծ. զի են 'ի նմա և օրինացն նուրբ մեկնութիւնք յերկոսին կողմանան, և ծանր պայքար զերախտեաց առ պետութիւնն։ Եւ զի Եպքինէս 'ի Դիմոսթենեայ 'ի գլխաւորութիւն ամբաստանեալ էր վասն անիրաւ հրեշտակութեանն, այն պատճառաք են Եպքինեայ՝ 'ի վրէժխնդրութիւն թշնամւոյն՝ դատասխանելոյ ընդ անուամբ Կանեսիփոնի զգործոց և զհամբաւոյ Դիմոսթենի։ Զի ոչ այնչափ զհամար չասելոյն ասէ, որչափ զի ապիրատ ոք է և իբրև լաւագոյն ոք գովի։

Digitized by Google

Այս ամբաստանութիւն Եպիսկոպոսի զկասեցիցեն՝ քառասմ մի յառաջ քան զմահ Փիլիպպեայ արքայի մակեդոնացւոց մատուցեալ, իսկ գտաստանն ամենք ինչ զկնի կատարեցաւ, մինչդեռ Ալէքսանդր տիրացեալ էր ասիացւոց կողմանցն։ Զամենայն Եկեղեցի ասեն խուռնութեաց գիմեալ յատեան անդր։ Եւ զինչ իսկ քան զայն՝ տեսիլ ցանկալի և արժանալուր ինչ, ուր երկոքին մեծանուն ճարտարախօսքդ 'ի պայքար մտանէին 'ի դատ մի մեծ այսպիսի՝ ամենայն հնարագիտութեամբ հանճարոյ և քննախանձ տխիւք։

ԿԻԿԵՐՈՆ, զքաջընտիր ազգէ ճարտասանից. Ի. որ և խոստանայ թարգմանել զերկոսին ճառսն հելլենականս 'ի լատին, որ արդ չեն 'ի միջի՝ բաց 'ի յառաջաբանէն իւրմէ, բայց կայցեն յաւուրս Ս. Հերոնիմոսի։

Digitized by Google

ԵՍՔԻՆԵՍԻ

ՃԱՌ

ԸՆԴԴԷՄ ԿՏԵՍԻՓՈՆԻ

Տեսանեք, ով արք ամենայնիք, քանիսն պատրաստութիւնք և ճակատք յօրինեալ կայցեն, և պաղատանք ընդ հրապարակս 'ի դորս առեալք յոմանց՝ զի չափոյքն և օրինաւորքն մի յարգիւնս եկեսցեն 'ի քաղաքիս։ Այլ ես՝ նախ 'ի դէսն, երկրորդ անգամ յօրէնսն և 'ի ձեզ մեծահաւատս հասեալ կամ այսր, և ոչ մի ինչ կասկածութիւն մեծապէս քան զօրէնսն և զկրաւունս առ. ձեզք համարեալ։

Ցանկալի էր արդ, ո՛ արք ամենայնիք, թէ համարէն ժողովք խորհրդեան Հինգհարիւրոցն[1] և ժողովք ժողովրդեանն ուղիղ վարէին 'ի վերակացուսցն, և օրինադրեալքն 'ի Սոլոնէ 'ի հաստատ լինէին օրէնքք 'ի բարեկարգութիւն ճարտարախօսաց։ Զի մարթիցի նախ երկրպագունքն 'ի քաղաքացիս ըստ օրինացն հրամանի ցածութեամբ մատչել յատեան, առանց ամբոխի և խռովութեան, ապա խորհուրդ բարեաց քա-

Digitized by Google

զաքիս 'ի հմտութենէ փորձոյ. և ապա՝ ուսմունք և յայլոց քաղաքացւոց կամ իցէ՝ կարգաւ ըստ հասակին մի ըստ միոջէ յայսմանի առնել զամենայնէ զմիտս իւր։ Զի Թուի ինձ, թէ այսու օրինակաւ քաղաքս բարւոք սնօրինեսցի, և նուազ ընկեցին փուլսիչք դատաստանաց։ Բայց քանզի որ ինչ դամ մի յառաջագոյն բարւոքն էին վկայեալ՝ եղծաւ բարձաւ այժմ ամենայն, և համարձակ գրին ոմանք արտաքոյ օրինացն հրամանս, և զգիրսն զայն այլք ոմանք 'ի վճիռս հանեն, ոչ արդարապէս վիճակեալք գահերիցութեան, այլ հայթայթանօք առեալք զաթոռս. և եթէ յայլոց խորհրդականաց ոք՝ իրաւամբք վիճակեալ 'ի գահերիցութիւն հասեալ գտանիցի, և զէր ընտրութիւնդ ուղղութեամբ հրատարակիցէ [2], որք զքաղաքավարութիւնն ոչ հասարակաց ինչ՝ այլ սեփական իւրեանց ձեռականն վարկանին, սատանեն նմա՝ մի եշխեալ պատմել։ Եւ զուսմին 'ի հարկի ծառայութեան կացուցեալ, և անձամբք անձանց առեալ իշխանութիւնս, և զօրինի դատաստանն չքնեալ, որ ինչ ըստ իւրեանց անձնակամակ հաճութեանն իցեն՝ զայնս ընտրեն խրոխտով. լուեալ կայ դեղեցկագոյնն և խմաստնագոյն 'ի քարոզս քաղաքիս, թէ « Որոց ըստ յինեմեակն եղեալ իցեն՝ ո՞'ի նոցանէն կամիցի հրապարակաւոս լինել, և դարձեալ յայլոց անթենացւոցն մի ըստ միոջէ։ » Եւ ճարտասանիցն ատահակութեան ոչ զօրեն ունել զդէմ, ոչ օրէնք, ոչ նահապետք, ոչ տոհմն գահերեց, տանեերորդ մասն քաղաքիս [3]։

Եւ զի այս այսպէս, և ժամանակք քաղաքիս այսպիսի՝ որպիսի դուք իսկ տեսանէք, մի ևեթ մասն տեսչութեան կայ մնայ 'ի ձեռս, եթէ և եանշմարեմ ինչ, զանիրաւաց փուրսիչք ամբաստանութեան։ Իսկ եթէ և զայս քակտիցէք, կամ քակտեղեսցն տաջիք Թոյլ, ահա կանխեմ ասեմ ձեզ՝ զի առ փոքր փոքր զվարչութիւնն բռնանգակ 'ի ձեռս ոմանց լքանիցէք յանդէտս։ Քանզի քաջ գիտէք, որք աթենացիք, զի առ մարդիկ համբրէն՝ երրեակ քաղաքավարութիւնք են. ինքնակալութիւն, սակաւապետութիւն և ընկերհաշտու-

Digitized by Google

թիւն. ինքնակալութիւնք և սակաւապետութիւնք վարին ըստ կամս իշխեցողացն, իսկ քաղաքք ընկերահաշուք՝ հաստատուն օրինաք։ Մի ոք ապա 'ի ձենչ անդիտացի զայս, այլ հաւատսի դիտացիչ ամենայն ոք, զի յորժամ եկեալ յառեան մանանիցէ՝ դատել զամբաստանութիւն անիրաւութեան, յաւուրն յայնմիկ առաջի կայ նմա զաղատութենէ իւրմէ հատանել վճիռ։ Վասն որոյ և օրէնդիրն [A] զայս նախ կարգեաց յերդման անդ դատաւորացն. « Վճիռ ըստ օրինացն տաց. » զի ճարտար գիտէր թէ յորժամ պահեսցին քաղաքքն օրէնք, և ընկերահաշութիւն կացցէ յակառանի։

Զայս ընդ ուշի կապեալ ձեր՝ առեալ պարտիք զորս հակառակ ինչ օրինաց տայցեն հրամանն, և մի ինչ յանիրաւութեանց անտի փոքր համարել, այլ մեծեղեռն զամենայն։ Եւ զայս իրաւունս ձեր՝ մի ումեք 'ի մարդկանէ տալ թոյլ յանփշտակել. ոչ զօրավարացն բարեխօսութեանց, որ 'ի բազում ժամանակաց հետէ գործակից ոմանց եղեալ ճարտարախօսաց՝ ապականեն զքաղաքավարութիւնն, և ոչ աղաչանացն հիւրոց, զորս 'ի մէջ ածեալ ոմանց՝ զերծանին 'ի ձեռաց առաւելից անօրէն քաղաքավարութեամբ իւրեանց։ Այլ զոր օրինակ ամենայն ոք 'ի ձենչ յամօթ մատնէր՝ դասալիք լինել յոր կարգեցաւն 'ի մարտի, նոյնպէս և այժմ ամաչեսջիք թողուլ զտեղին՝ յոր օրինացն դասեցայք պահապանք ընկերահաշութեան յաւուր յայսմիկ։

Եւ զայն ևս պարտ է յուշ ածել, զի զարդիս քաղաքացիք ամենայն՝ որոց զքաղաքս ձեզ յանձն արարեալ է, և զվարչութիւնն 'ի ձեզ հաւատացեալ, կէսք ասա են և ունկն դնեն դատաստանիս, և այլք հեռի՝ իւրաքանչիւր 'ի գործ իւր. յորոց պատկառեալ, և երդմանցն զորս երդուալք յիշողեղեալ և օրինացն, եթէ յանդիմանեսցուք զԿտեսիփոն՝ արտաքոյ օրինացն դիր հանեալ, և սուտս դրեալ և վնասակարս քաղաքիս, լուծէք, արք ամենայնիք, զանօրէն հրամանն, պինդ կալջիք քաղաքիս զընկերահաշութիւն, զիրշնամիս օրինացն և քաղաքիս պատուհասեսջիք, և որ հակա-

Digitized by Google

ռակ օգտի ձերում գնացեալքն իցեն։ Եթէ սովին մնօք ունին մատուաջիք առաջիկայ խօսիցս, քաջ գիտեմ զի արդար և ուղիղ ըստ երդմանդ՝ և 'ի շահ օգտի ձերոյ և ամենայն քաղաքիս առնիցէք գաստ։

Արդ յուսամ յաղագս ամբաստանութեանս առ հասարակ ասացեալ բաւական 'ի մուտս սաստ. իսկ զօրինացն համարատուաց, զորովք ապահաս արարեալ Կաբեխիոնի 'ի գիր հրամանին, կամիմ ասել կարճառօտս։ Զի յառաջ ժամանակաս տիրացեալ ոմանց՝ մեծամեծ իշխանութեանց 'ի քաղաքիս, և զմատակարարութիւն գանձուց 'ի ձեռն առեալ, և 'ի դուռս յամենեսին եղեալ կաշառաբեկ, յինքեանս յաւրեցուցեալ զձմրարարիսաս [8] խորհրդարանին և զժողովրդեանն, աճապարելին ուռնէին զառաջս համարատուութեանն՝ գողութեամբք և քարոզն կարդալով. մինչև 'ի համարատուութեան իշխանաց՝ 'ի մեծ տագնապ տարակուսի անկանել գաստախաղից, և ոչ առաւել գաստաւորուց։ Զի բազումք 'ի համարատուաց՝ յայտնապէս գող ըմբռնեալք գանձուց աշխարհին, պրծանէին 'ի գաստատանաց. և յիրաւի։ Զի կարծեմ ամօթ կրեալ գաստողացն, եթէ այնպէս ինչ երևեսցի՝ թէ նոյն այր 'ի նմին քաղաքի, թերևս և 'ի նմին տարւոջ, փոքր մի յառաջ քարոզեալ 'ի հանդիսի՝ զի վասն առաքինութեանն և արդարութեանպակ ոսկի պատկի 'ի ժողովրդէնէն, և ապա փոքր մի յետոյ նոյն այր եղանիցէ յատենէն պարտաւոր գողութեան 'ի հաշիւն. որպէս զի հարկ լինել գաստաւորացն՝ ոչ ըստ այն ժամու անիրաւութեանն, այլ առ ամօթոյ ժողովրդեանն առնել զքննիչն։

Յայս հայեցեալ օրէնդրի ուրուք, կարգէ օրէնս մի յոյժ վայելուչս, որ արդեալս յայտնապէս՝ զպարտականս համարոյ մի պատկել։ Եւ յետ այսմ այսպէս քաջ նախահոգակ լինելոյ օրէնդրին, գտանին տակաւին բանք քան զօրէնսն զօրագոյնք. զոր թէ ոչ ոք ազդիցէ ձեզ՝ յանզգաստից 'ի պատրանս ըմբռնեալքք։ Զի յորոց արտաքոյ օրինաց

զհամարատարուն պատկերն՝ են որ բնութիւնամբ հաստատագոյնք են, — եթէ յանիրաւս հրամանատարանն գտանիցի ոք հաստատագոյն, — և սակայն արկանեն ինչ գէթ պատրուակ ամենեցուն։ Զի յաւելուն 'ի գիր հրամանին, պատկերզհամարատուն յորժամ եթէ զհաշիւն և զհամար իշխանութեանն ասացէ։ Քաղաքս զնոյն ապաքէն կրկ անիրաւութիւն, զի գովութեամբք և պատկեր յառաջագոյն հաստատեալն պաշտպանին, սակայն հրամանին գրող՝ գէթ ցոյցս իմն լուսեալն առնէ, զի թէպէտ և անիրաւ ինչ է գիրն, սակայն ինքն 'ի յանցանացն պատկառէ։ Իսկ Կոստանդին, ոչ ապրք ամենացնք, վասնզի զհամարատարուն օրինաց, և զպատճառանոն եւ՝ զոր արդ իսկ ասացիս՝ բարձեալ 'ի միջոյ, մինչ չեն զհաշիւն, մինչ չեն զհամարան առեալ, գրեաց ասասէն և ասաս զիշխանն պատկերզԴիմոսթենէս։

Բայց նոքա, ոչ ապրք ամենացնք, այլ իմն բան այժմոտասացելոյն հակառակ ասացին, որպէս թէ ոչ ամենայն յոր հրամանաւ կարգեալ ոք ինչ գործիցէ՝ իշխանութիւն իցէ, այլ հոգաբարձութիւն ինչ և պաշտօն եւթէ։ Իսկ իշխանութիւն՝ զայն ասացին լինել, զոր Օրինապահքն [6] ընտրեն 'ի մեհենին Թեսեւսի, և զոր սովոր է ժողովրդն ընտրել 'ի ժողովս իւր [7], զօրավարս և ասպահապետս, և զորս ըստ նոցանէն իշխանութիւնք։ Իսկ զայնն ասենայն՝ հրամանաւ եւթէ գործակալութիւնս։

Իսկ ես՝ առ նոցա խօսեմ՝ զօրէնս ձեր ասեցէ՛ 'ի մէջ, զոր գուբգ օրինադրեցէք 'ի ցրուեն այդպիսի բարբառեաց, յորում և գրեալ կայ յայտնապէս։ « Որ ընտրութեամբն են, ասէ, իշխանութիւնք, — զասենայն առ հաստատակ միով անուամբ բովանդակեալ օրէնսգրին, և հաստատ իշխանութիւն կոչելով զընտրեալսն 'ի ժողովրդենէն, — և գործավարք, ասէ, գործոց ուշխարհին, — և է իսկ Դիմոսթենէս պարապաշէն [8] մեծագունի գործոց գործավար, — և ամենեքին որ միանգամ աւելի քան զաւուրս երեսուն անտեսցին ինչ զքաղաքին, և որ զգիսաւորութիւն ասենից առնու-

ցուն, — և ամենայն ոստիկանք գործոց՝ գլխաւորութիւն ունին ասենի. » զի՞նչ պատուիրէ նոցա առնել: Ոչ պաշտել, այլ իշխել, փորձ գտեալ յատենի. — զի և վնճակաւն ընտրեալ իշխանութիւնք՝ ոչ եթէ անփորձ ինչ իշխեն, այլ յետ ընդ հարցփորձ անցանելոյ. — և տալ հաշիւս և համարս առ գպրապետն և առ համարառուս՝ հրամայէ, որպէս և այլոց իշխանութեանցն:

Եւ զի զՇմարիոն ասէմ, զնոսին իսկ զօրէնսն ընթերցցի[9] ձեզ:

ՕՐԷՆՔ

Եւ արդ, ո՛վ արք աթենացիք, յորժամ զոր օրէնսգիրն իշխանութիւնս անուանէ՝ սոքա գործակալութիւնս և հոգաբարձութիւնս յորջորջիցեն, ձեզ անկ է յուշ ածել և ախոյեան հանել զօրէնսն առ նոցա յանդգնութիւնն. և ընդդէմ բերել նոցա, թէ չհաճիք ընդ խորամանգ խաբեբայն՝ որ կարծէն բանիւք զօրէնսն տապալել. այլ անկրաւ ինչ գրեալ ուրուք, ոչչափ և հարատար խօսիցի, նոյնչափ և մեծագունի արժանի եղիցի բարկութեան: Զի պարտ է, ո՛ արք աթենացիք, հարատարախօսի՝ զնոյն նման օրինացն բարբառել. իսկ յորժամ այլ ձայն օրէնքն արձակիցեն, և այլ հարատարախօսն, 'ի կողմ արդարութեան օրինացն պարտ է տալ վճիռ, և ոչ խօսելեացն անամօթութեան:

Իսկ զոր Դիմոսթենէսն ասէ անփախուստ բան, կամիմ կանխել ասել զնմանէ համառօտս: Քանզի հանդերձեալ է դա ասել. « Պարապաշէն եմ, ոչ ժխտեմ զայդ. այլ մատուցի քաղաքիս հարիւր մնաս, և զգործն մեծ 'ի գլուխ հանեալ վճարեցի. իսկ արդ ի՞մ ինչք պարտապան իցեմ համարս տալոյ. եթէ ոչ և խնամոտ բարեբար կամաց համարք ինչ իցեն: » Առ այդ բաղբաղայդ՝ լուարուք զոր ասեմս յիւրում, և ձեզ յօգուտ: Զի 'ի քաղաքի աստ յայսմիկ՝ այսքան վանչիկանի և մեծի՝ ոչ ոք է առանց համարս տալոյ,

Digitized by Google

յորմց և իսկ 'ի հաստատակաց գործ մատուցելոց : Եւ նախ զզարմանալին ուսուցից ձեզ. որպէս զի և զքուրմն և զքրմանոյշս ընդ համարատուհանդուրթեամբ լինել հրամայէն օրէնքն, և միահաղոյն զամենեսեան առհաստատակ, և զմի մի իւրաքանչիւր ընդ անձինն. որոց է ընծայս ևեթ առնուլ, և տալ թան վասն ձեր առ դիսն մատուցանել. և ոչ միայն առանձինն ուշոգիս, այլ և խառն հաստատակ զազգս, զնուագերդս և զքաղրազս, և զայլն ամենայն : Արա այսու՝ և զպեռս 10 կառուցից և կազմից պատերազմիկ նաւացն՝ օրէնքն պարտ առնեն համարոյ. որ ոչ 'ի հաստատակաց համարուէ մատակարարքն ինչ իմիք լինին, և ոչ 'ի ձերոց հասիցդ բազում ինչ շրջթեալ և սակաւս ծախեալ, 'ի հատուցանելն ձեզ զձերն՝ յաւելուած ասեն արարեալ շնորհս, այլ որ յայտնի իսկ 'ի հայրենի գոյիցն 'ի ձեզ առատացեալքն են :

Բայց ոչ միայն նաւակառոյցդ, այլ և աւազամեծարս առեալք ասեն կալաց քաղաքին՝ ընդ գաստատանական համարով անկանին :

Քանզի նախ՝ ասենի Արիսապգին հրամայեն օրէնքս մատանել 'ի գիր համարակարացն, հաշիւս և համարս տալ. և որ անդ ահաւորն է և մեծամեծաց 11 իշխան՝ ընդ ձերով գաստատանուդ արկանէ : — Իսկ արդ ոչ պատկեցի առեան Արիսապգին : — 12 Զի և ոչ 'ի հարց անտի կարգեալ գայ առ նոսա : — Իսկ արդ ոչ 'ի պատիւ ելևել առնիցեն : — Եւ կարի իսկ քաջ. բայց ոչ շատ համարին՝ եթէ ոչ ոք առ նոսա յանցանիցէ, այլ և եթէ մեղիցէ ոք՝ պատուհաս կապեն 'ի վերայ. իսկ ձեր ճանրատարխօգդ շնացեալ ապերասանեն : Դարձեալ և զնորհրդարանն զհինգհարիւրոցն պարտական համարոյ կացուցանէ օրէնսդիրն. և այնպէս ասասիկ թերահաւատեալ 'ի համարատուսց, մինչև 'ի գլուխ անդր օրինացն ասել. « Իշխան որ համարս ունիցի տալ, մի ուրեք, ասէ, գնասցէ 'ի տարս աշխարհ : »

Տի՛, ևհէ, ասասցէ ոք թերևս, քանզի իշխան կացեալ

եմ, չելից ուրեք ըստ աշխարհս։ — Ոչ. զի մի առեալ ըզ-
դանձս և զգաղանիս քաղաքին՝ հատուած երթիցես փա-
խստեայ։ Դարձեալ ոչ ներեմ համարատուի նուիրել զից
զդոյսն, ոչ ձօնի հանել, չլինել ուանք յորդեգիրս, ոչ կաս-
կածել զիւրսն, և ոչ այլ ինչ բազում. հակիրճ ասել,
գրաւեալ օրէնսդրին զինչս համարատուաց յամրի դնեմ՝
մինչև հատուցցեն քաղաքին զհաշիւն։ — Բարուք. տակայն
է ոք այր՝ որ չէառ ինչ 'ի գանձուէ աշխարհին և ոչ ծա-
խեաց, բայց յիրս ինչ հասարակաց եղև միջամուխ։ — Եւ
նմա պատուիրեմ՝ հաշիւս առալ համարատուացն։ — Իսկ
զիսիրդ որ չառնեմ ինչ և ոչ ծախեաց՝ տայցեմ հաշիւս քաղա-
քին։ — Նա ինքն օրէնքն յաւելու. ուստուցանեմ զոր պարտն
է արձանագրել. զի զայս ինչ հրամայեմ 'ի գրի հարկանել.
« Չառի ինչ 'ի քաղաքէն և ոչ ծախեցի։ » Զինք ինչ 'ի քաղա-
քիս առանց համարոյ և հարց և քննիս առնելոյ։ Եւ զի արդ-
արար ասեմ, նոցին իսկ օրինացն լուսարուք։

ՕՐԷՆՔ

Արդ 'ի կարի ժամրտեալ Դիմոսթենեի և ասել, թէ վասն
որոցս չպարտիմ ինչ համարս, զայն տուք նմա պատասխա-
նի. « Մի թէ չէր քեզ պարտ, ով Դիմոսթենէս, թոյլ տալ
քարոզին համարատուաց՝ կարգալ զհայրենասանդ և զորի-
նաւոր քարոզութիւնն զայն. Ո՞ այն ոք որ ամբաստան
լինել կամիցի։ » Որոմ կամիցին 'ի քաղաքացւոց՝ թոյլ
տուր յարուցանել քեզ փուրսիշ, զի չետուր ինչ բնաւ,
այլ և 'ի բազմաց անտի՝ զոր 'ի շինութիւն պարապացն ու-
նիս՝ սակաւ ինչ ևեթ արկեր 'ի կիր. մինչ գեռ տարանգոտ 13
տասն առեալ ես առ այն 'ի քաղաքէն։ Մի յափշտակեր
զպատիւն, և մի 'ի ձեռաց դատաւորացն զվճիռն կորզեր,
և մի 'ի վերս քան զօրէնսն քաղաքաւարիր, այլ ըստ նոցա-
նէն. զի այս իսկ է՝ որ զընկերահաշտիսն ուղղէ։

Արդ՝ առ մնասի պատճառանսն զոր դոքա պատճառին,

Digitized by Google

ցայս վայր յինէն ասացեալ լիցի։ Իսկ զի արդարեւ համարս պարտէր Դիմոսթենէս՝ յորժամ ասա [14]'ի մէջ մատոյց զիրն-գիրն, զի իշխան կայր'ի վերայ տեսլարանաց և իշխան պարբերապաշտեաց, և ոչ զիշխանութիւնն այնոցիկ առեալ ուրեք էր ձեզ զհաշեա և զհամարս, զայդ յասաջիկայդ հանդիսացայց ցուցանել ձեզ'ի հաստատակաց գաղտութիւնցս։

Օ՜ն ընթերցիր նոցա, առ որով իշխանաւ, յորմէ՞ տամ սեան, յորմէ՞ տաւուր և յինչ ժողովի ընտրեցաւ Դիմոսթենէս յիշխանութիւն տեսլարանաց։

ՕՐԱՀԱՄԱՐ

Արդ՝ եթէ և ոչ մինչ աւելի քան զայդ ցուցանիցի, 'ի պարտութիւն յիրաւի մատնեալ լինիցէր Կտեսիփոն. զի ոչ իմ մինչ գատաւորութիւն պարտաւորէ զնա, այլ հաստատակաց գաղտութիւնքս։

Յառաջ ժամանակաւ, ոմանք ասեցնացիք, կայր քաղաքիս արձանագրող [15] ընտրեալ, որ առ խորհրդանշիւր նահանգեստութեամբ համարս տայր ժողովրդեան զելից և զմոկից. իսկ առ վստահութեան ձերում Յեբուլոս [16] մինչ չէ էր կարգեալ օրէնքն Հեգեմոնի [17], որք'ի վերայ տեսլարանաց ընտրեալքն էին՝ նոքա վարէին զիշխանութիւն արձանագրողին. ունէին և զիշխանութիւն հարկահանաց և զնաւագործաց, և զղենանոցն չունէին, և ճանապարհաց էին յարգարիչք, և զամենայն իսկ գրեթէ յանձնձանաւ քաղաքիս ունէին բովանդակ։ Զայս ոչ'ի բաստրանաւ և ոչ'ի ստանգաստանաւ մինչ նոցին ասեմ, այլ զայն կամիմ ցուցանել ձեզ, զի թէ ոք զմտքս մինչ իրիք իշխանութեան համարս պարտիցի, չասայ թայլ օրէնագիրն պատկել, մինչև ասցէ զհաշիւն և զհամարս։ Իսկ Կտեսիփոն ոչ մինչ վերերեաց պատկ ինգրել Դիմոսթենի, որոյ զամենայն իսկ իշխանութիւնս միանգամայն'ի վար արկեալ է յանթենացուցս քաղաքի։

Եւ զի զպարտաւորինայն ևս ունէր իշխանութիւն՝ յոր-

Digitized by Google

ժամ՝ սա զինգիրդ մատոյց, և զգանձս աշխարհին մատա-
կարարեր, և տուգանս արկանէր՝ ոչ ինչ ընդհատ յայլոց
իշխանաց, և առաջնորդութիւն ունէր զդատաստանոցաց,
այդոցիկ ղնոյն ինքն զԴիմոսթենէս և զԿաեսիփոն մատուցից
ձեզ վկայս։ Զի առ Քերոնդեաւ իշխանաւ, որ օր քսան
և ինն էր թարգելիսն ամսոյ, 'ի Ժողովել Ժողովրդեանն, հրա-
մայն եհան Դիմոսթենէս՝ յատեան կոչել զչեղեալն յերկրորդ
և յերիր աւուրս Սկիրոփորիոնի. և 'ի հրամանի անդ պա-
տուէր եհ՝ 'ի միոյ միոյ 'ի ցեղից անտի ընտրել հոգաբար-
ձուս գործոց պարապելոց և հանդերձապետս։ Եւ կարի յի-
րաւի. զի իցեն քաղաքիս անձինք համարատուք՝ յորոց
զծախիցն հաշիւս հատանիցէ։

Ա՛ռ ազէ ընթերցիր ինձ զհրովարտակն։

ՀՐՈՎԱՐՏԱԿՔ

Այո, այլ անդէն ածէ թափէ առ այդ. Ոչ վիճակաւ
կարդեցայ 'ի շինուած պարսպին, և ոչ 'ի Ժողովրդենէն
ընտրեալ։ — Եւ յաղագս այսր՝ Դիմոսթենէս և Կաեսիփոն
բազում արասցեն խօսս. իսկ իմն՝ հակիրճ և հաւաստի,
որ փութով լուծցէ զարուեստս նոցին։ Այլ նախ սուղ ինչ
զայսցանէ կամ է ինձ ասել առ ձեզ։

Քանզի իշխանութեան, ոմ աթենացիք, օրինակք են
երեք. յորոց մին և ամենեցուն քաջայայտ՝ որ վիճակաւ և
որ ընտրութեամբ կան յիշխանութիւնն. երկրորդ՝ որոց
գործ ինչ մատակարարութեան քաղաքիս 'ի ձեռս տուեալ
է առաւել քան զաւուրս երեսուն, և որ ոստիկանքն են
գործոց աշխարհին. իսկ երրորդն՝ յօրէնսն անդ գրեալ կայ.
«Եւ եթէ այլք ոմանք ընտրութեամբ զառաջնորդութիւն
դատաստանաց ունիցին, և նոցա իշխել՝ յետ փորձ և ընտ-
ուրն գտանելոյ։» Իսկ եթէ ոք հանցէ 'ի բաց զիշխանն
ընտրեալս 'ի Ժողովրդենէն և զվիճակաւսն, մեայ՝ զի և զորս
ցեղք և երիր մի ցեղից և խառնաղանձն ընտրեն 18 յին-

Digitized by Google

քեանց հաղարապետս հաստատեսցեն զանձուն, իցեն և նոքա իշխանք ընտրեսցանք։ Եւ այս լինի, յորժամ որպէս այժմն՝ հրամայեցի ինչ ցեղից. կամ փոխս հատանել, կամ նաւս կառուցանել պատերազմիկս։

Եւ թէ զՀշէմարիսն բարբառիմ՝ 'ի նոցուանց անուն յորինացն առջիք 'ի միտ։

ՕՐԷՆՔ

Ցուշ լիցին ձեզ նախատացեալ բանքս, զի և իշխանացն որ 'ի ցեղից անսի՝ հարցուփորձ գատաստանի հրամայէ օրէնսդիրն. և ցեղն Պանգիմնեան՝ [19] իշխան և պարսպաշէն էցոյց զԴիմոթենէս, որ ունի 'ի դոյն պէտս գրեթէ ատան տաղանդ 'ի տեսչութենէն. և միւս օրէնքն արդեալսն, զիշխան որ համարս պարսի՝ մի պակէր. և ձեր երդուեալ է՝ ըստ օրինացն առնել գատաստան. իսկ Ճարտարախօսդ գրեաց պակէր զհամարպարտ առանց յաւելուածոյն « Ցորժամ տայցէ զհաշիւն և զհամարսն. » և ես զանիրաւութիւնն ակն յանդիմանն ցուցանեմ՝ վկայս առհասարակ մատուցեալ զօրէնսն, զհրովարտակսն և զհակառակորդսն։ Եւ զիաՀրդ ելցէ ուանք յայտնագոյնս նշաւակել զայր 'ի հրամանս իւր անիրաւեալ։

Եւ զի զքարոզութիւնն իսկ պակին արտաքոյ օրինացն լինել հրամայէ 'ի գրին, և զայդ ևս ուսուցից ձեզ։ Զի օրէնքն յայտնաբարբառ պատուիրեն. եթէ խորհրդականքն պակիցեն զոք՝ 'ի տաՀարին խորհրդոց քարոզել, իսկ եթէ ժողովուրդն՝ 'ի հրապարակի ժողովոյն, և մի այլ ուրեք։

Կարդա ինձ զօրէնսն։

Digitized by Google

ՕՐԷՆԿ

Այդ սաղմոսիկ օրէնքն, ով արք սիրելեաց, և յոյժ գեղեցկապէս կարգեալ։ Զի թուի թէ՝ չիարձեալ օրէնսդրին թէ առ արտաքինսն յօրացեալ նաղշին Հարտարախօսն, այլ՝ շատացի պատուիլ՝ի քաղաքիս՝ի Ժողովրդենէն, և մի՝ի քարոզութիւնս զօշաքաղել[20]։ Այդ օրինադիրն այսպէս. իսկ Կոռեսիոն զնարդ։

Ընթերցիր զՀրամանն։

ՀՐԱՄԱՆ

Լսէք, ով արք սիրելեաց, զի օրէնսդիրն պատուէր տայ՝՝ի Ժողովրդական, ՝՝ի Պնիքսի[21], ՝՝ի Ժողովարանի անդ հաւակիլ զպասակեալն՝՝ի Ժողովրդենէն, և մի՝ այլ ուրեք. իսկ Կաեսիոն՝՝ի սեսարանի. ոչ ըստ օրէնսն Լեթ անցեալ, այլ՝ փոխեալ և զատեալն. ոչ՝՝ի Ժողովէ սիրելեացուց, այլ՝՝ի մրցել նարոց ողբերգակաց. ոչ առաջի Ժողովրդական, այլ՝ յանգիսան հելլենացուց. զի սեսցեն և նոքա զորպիսի ոք այր պասակիցեմք։

Այդ այսպէս արտաքոյ օրինացն հանեալ հրամանն, և Հակառակեալ Դիմոսթենիս հանդերձ գոս բերելոյ առ օրէնսն. զոր ես կանխեցից յայտ արարիլ ձեզ, զի մի յանկարծ խարդաւանիցիք։ Թէ օրէնքն չՀրամայիցին զպասակեալն՝՝ի Ժողովրդենէն քարոզել արտաքոյ Ժողովոյ նորա, ոչ ունիցին դոքա բարբել. այլ իրաւունս իմն յառաջ ածցեն զԱսանդարամեռական[22] օրէնսն, և զմասն ինչ Լեթ օրինացն առնուցուն՝՝ի կիր, դողացեալ զմտագիւրութիւն ձեր. և՝՝ի մէջ մատուցին օրէնս իմն՝ ոչ ինչ՝՝ի փուրջիչ այսր պատշաճեալ, և ասասցին՝ որպէս թէ քաղաքիս կրկին կայցեն օրէնք՝՝ի վերայ քարոզութեանց. մի՝ զոր ես այժմ՝՝ի մէջ առնում, և յայտնապէս արգելու՝ զպասակեալն՝՝ի Ժողովրդե-

Digitized by Google

նէն մի հրատարակել արտաքոյ հրապարակի ժողովրդեան. և միւս ևս ասասցին նոքա լինել օրէնս այնմ հակառակ, և շնորհեալ իշխանութիւն՝ զքարոզութիւն պատկին առնել յողբերգական [25] 'ի տեսարանին, յորժամ ժողովուրդն ասացէ հրաման. և ըստ այնմ օրինաց ասասցին գրեալ կոտ-սեփոնի։

Բայց ես առ գոցս մեղմեխանան զձեր օրէնսդ առից ինձ ջատագով, զոր և 'ի բոլոր գատաստանաց թեատրոն փութամ առնել անպակաս։ Զի եթէ այդ ճշմարիտ իցէ, և սովորութիւն այդպիսի սպրդեալ մտեալ 'ի ձեր քաղաքավարութիւնդ, զի օրէնքդ ինչ ասպախոք խառն ընդ վաւերականն կայցեն արձանագրեալ. և զմիոյ գործոյ երկուք՝ միմեանց ընդդիմաբանք, զի՞նչ ևս ասասցէ ոք լինել զքաղաքավարութիւնդ զայդ, ուր զնոյնս հրամայեն օրէնքն առնել և մի առնել։ Ա՛յլ չէ այդ այդպէս, և ծն անդր փարգասա՝ քաւլեցի ձեզ յայդպիսի անհեղգութիւն օրինաց երբեք երթալ անկանել։ Եւ որ զընկերահաշտիս հաստատուն օրէնսդրին՝ ոչ անփոյթ եղև նմա զերծդ. այլ յայտ յանդիմանութեամբ պատուիրեալ է օրինապահացն՝ ամի ամի ազգել զօրէնսն յատենի ժողովրդական [26], գտակաւ քննել ատենդ՝ եթէ իցէ՞ ինչ 'ի դրին օրէնք՝ այլուամ օրինաց հակառակամարտ, կամ խոտան ինչ 'ի կարևորսն, կամ թէ իցէն ինչ օրէնք զիրաց իրաց սահելի քան զմի։ Եւ եթէ ինչ գտանիցէն, գրել 'ի տախտակսն [27] և դնել պատուիրեալ առաջի Անոնանագրացն [28]. և հաստատեսցց ժողովել զժողովուրդն՝ յայտ արարեալ 'ի կարգումն օրինագրաց լինել զատեանն. և գլխոյն գահերիցանց յընտիր առնել ժողովրդական՝ զոմանս յօրինացն բառնալ և զկնաս թողուլ, զի մի և եթէ օրէնք իցեն զմիոյ միոյ իրաց, և մի բաղումք։

Ա՛ռ ընթերցիր ինձ զօրէնսն։

ՕՐԷՆԳ

Այդ՝ եթէ, ով ասք աթենացիք, հաւատով ինչ էին գոցա բանքն, և կրկին կային օրէնք յաղագս քարոզութեանց, հարկաւ՝ կարծեմ՝՝ի գտանել զայն օրինապահաց, և յաւանդել նահապետաց յօրէնդիրսն, մին յօրինաց անտի բառնայր՝ի բաց, կամ որ խչխանութիւնն տայր քարոզելոյ, և կամ որ արգելոյրն։ Իսկ զի չէք ինչ եղեալ յայդցանէ, ակներ և յանդգնմանէն՝ ոչ միայն տուտ խօսել, այլ և ամենեքին իսկ անհնարին։

Եւ թէ ուստ ուստէք առեալ բերիցեն զսուտդ զայդ, ես ցուցից ձեզ, ասացեալ նախ յինչ աղագս եդան օրէնք քարոզութեանց՝ի տեսարանին։

Ի լինել ողբերգութեանց՝ի քաղաքիս՝ քարոզ կարգային ոմանք, ոչ՝ի հաւանութենէ ժողովրդեան, կիսոց՝ պակ՝ի ցեղիցն առնուլ, այլոց՝՝ի ժողովրդականաց։ իսկ այլք ոմանք՝ ազգեցութիւն քարոզեալ՝ զծառայս իւրեանց արձակէին առաստս, վկայս աղաստութեանն արարեալ զհելլենացիս։ Եւ որ քան զամենայն դժուարին էր, ասանձկանութիւն գտեալ ոմանց յարտաքին քաղաքս՝ հնարաւորէին տալ քարոզ կարգալ, թէ ժողովուրդն, օրինակ ինն հռոդացւոցն կամ քիացւոց կամ այլոց ուրուք քաղաքի, պակէ զնոսա վասն առաքինութեան և բարեբաւութեան։ Եւ զայս առնէին՝ ոչ հանգոյն պակեալոցն յատենէ ձերմէ կամ՝՝ի ժողովրդենէ՝՝ի հաւան զձեզ ածելով և հրամարտակաւ, բազում շնորհս ձեզ խոստովանելով, այլ ըստ իւրեանց մտի և անհրամանն առ՝՝ի ձէնջ։ Եւ՝՝ի սոյն սակս պատահէր ամբոխել հանդիսականացն և պարապետաց և խաղալկաց, և քարոզելոցն՝՝ի տեսարանին՝ մեծապատիւ մեծարել քան զնպաստակեալսն՝՝ի ժողովրդենէն։ Զի սոցա ցուցեալ էր տեղին՝՝ ժողով ժողովրդեանն՝ ուր պարտն էր ընդունել զպակն, և արգելեալ՝՝ մի այլ ուրեք քարոզել։ իսկ նոցա հաչակ հար-

Digitized by Google

կանէր լու 'ի լու Հեղինէանցն բոլորեցունց. և ապա հրամանաւ և հաճոյիւք ձերով, իսկ նոքա՝ առանց հրամանի։

Զայս տեսանել օրէնագրի ուրուք՝ կարդէ օրէնս ինձ՝ որում՝ չեք ինչ հաւատարութիւն ընդ օրէնս պատկերոցն 'ի ժողովրդենէն, և ոչ լուծանէ զայն. զի ոչ երբեմն ժողովրդեանն էր որ ամբոխէրն, այլ տեսարանն։ Եւ ոչ ընդդէմ ինչ նախակարգեալ օրինացն գնէր, զի և չէր իսկ մտրճ. այլ յաղագս անհրամանի 'ի ձէնջ պատկերոցն 'ի տոհմայնոց և 'ի ժողովրդականաց, և յաղագս ազատութեանց ստրկացն և յաղագս օտարոտի պատկերացն։ Եւ յայտնի իսկ տրգելու՝ մի ազատել ծառայ 'ի տեսարանի, և մի զպատկառուն 'ի տոհմից և 'ի ռամկէն՝ քարոզել, և մի, ասէ, որ յայլմէ ինչ ուսիցէ. և թէ ոչ, յանարդութիւն լինել քարոզչին։

Արդ, յորժամ պատկերոցն յասեմնէն յայտ առնիցէ՝ յասեմնի անդ հուշակիլ, և պատկերոցն 'ի ժողովրդենէն՝ 'ի ժողովի անդ իւրում, իսկ պատկերոցն 'ի ժողովրդականաց և 'ի ցեղից՝ էնրամայիցէ հրատարակիլ յողբերգական, որպէս զի մի ոք պատկս և հուշակս մուրանալով՝ ստացցի պատիւ սուտ. և յորժամ յաւելուցու ևս յօրէնսն՝ ստատել զի մի յայլմէ ոք ուսիցէ քարոզեացի, բայց միայն յասեմնէն և 'ի ժողովրդենէն և 'ի ցեղեցն և յիւրոց ժողովրդականաց. և յորժամ զայդոսիկ 'ի բաց տանիցի, զինչ այլ մնայ՝ բայց պատկերն օտարամուտք։ Եւ զի հաւատի ասացեալքս իցեն՝ 'ի նոցունց իսկ յօրինացն տաց ձեզ նշանակ մեծ։

Զի ահա զնոյն ինքն զպատկն ոսկի՝ զքարոզիչն 'ի տեսարանի ստանիս՝ հանեալ 'ի պատկերոցն, Աթենասայ տուրբ առնել հրամայեն օրէնքն։ Իսկ ո՞ 'ի ձէնջ ժպրհեացի 'ի ժլատութիւն այդպիսի զաթենացւոցս ժողովուրդ ըստգասնել։ Զի ոչ եթէ քաղաքս միայն, այլ և ոչ տոկական ոք այնպէս անազգի գտանիցի, որպէս զի զոր ինքն իսկ ետ զպատկն՝ զնոյն և քարոզ կարդալ և ապա 'ի բաց կապտել և դից նուիրել։ Այլ կարծեմ զայդ վասն օտարական լինել.

Digitized by Google

լոյ պատկին. և ձնեալ լինի, զի մի զօտարաց ոք մտերմութիւն նախատեսցէ քան զնոսոյ աշխարհին արարեալ՝ վասն թարգեացի հոգւոյ։ Իսկ պատկ որ 'ի հրապարակ ժողովրդեան քարոզեալ՝ ոչ ոք նոցիրեն, այլ օրէն է ժառանգել զայն. զի ոչ ինքն միայն, այլ և սերնդոց իւրոց 'ի տան ունելով գլիչատակն՝ մի երբեք անզգամեսցին մոռք առ ժողովուրդն։ Եւ վասն այնորիկ յաւել օրէնդիրն, մի հռչակել 'ի տեսարանի զօտարոտի պատկին՝ եթէ ոչ ժողովուրդն տայցէ հրամանն. որպէս զի քաղաք որոյ կամ իցէ պատկել զոք 'ի ձերոցն, հրեշտակս արարեալ ազատեսցէ զժողովուրդն. զի յորժամ քարոզեսցի, մեծ ևս ձեզ քան պատկողացն կալցի ընդոհս վասն քարոզութեան տալոյ օձանեփ։

Եւ զի զատուգութիւն բարբառիմ՝ զինքնին զօրէնսն լուարուք։

ՕՐԷՆՔ

Այդ յորժամ ձեզ 'ի խաբա ասիցեն, թէ գրեալ կայ ևս յօրէնսն, զի եթէ ժողովուրդն հաճեալ հաւանեսցի՝ մարթի պատկել 'ի տեսարանին, յուշ լիցի ձեզ զալ նոցա պատասխանի. Այո, այլ եթէ յայլմէ քաղաքէ տացի քեզ պատկին. իսկ եթէ յաթենացւոցս ժողովրդենէ, ցուցեալ է քեզ տեղին՝ ուր արժան է այդմ լինել. խափանեալ ես՝ մի ուրեք արտաքոյ հրապարակի ժողովրդեանն քարոզել։ Զի թէ զինչ իցէ « Եւ մի այլ ուրեքն, » առ խօսեցոց զօրն ողջոյն, ոչ երբեք օրինաւոր ինչ կարասցես զհրամանդ ցուցանել։

Սնակ ինձ մանն ինչ ամբաստանութեանս յոր վուրեամ ձեռիմ մանաւանդ. և են բազբազայքն՝ որովք խնդրեսցէ պատկել զնա։ Քանզի այսպէս ասէ 'ի հրամանին. « Եւ քարոզն կարդասցէ 'ի տեսարանին առ հեղինեացիս, թէ ժողովուրդն աթենացւոց պատկէ զնա վասն առաքինութեան և քաջութեան. » և որ ևսն է, « զի յամենայն ժամ խօսի և գործէ զօգուտ ժողովրդեանն։ » Պարզ լինի մեզ ամենեքին բանս

այսուհետև, և ՀԵՂ լսելեացդ գիւրին 'ի գաստել. զի ինձ գաստախաղին՝ զայս պարտ է ՀԵՂ ցուցանել, թէ որ զԻԼԻՄՈՍ-ԹԵՆԵԱՅ են գովեստք՝ սուտ են, և թէ ոչ սկսեալ գորս երբեք բարի ինչ խօսել, և ոչ ցարդ գործէ անպակաս զօգուտ ժողովրդեանն։ Եւ թէ զայդ յանդիմանիցեմ, յիրաւի արդեաք պարտաւորեսցի Կոտեսիփոն 'ի փուրսիչ ամենասուտ-ԹԵԱՆՆ. քանզի ամենայն օրէնք արդէլուն՝ չգրել ինչ ուրեք սուտ 'ի հրամանս տէրութեանն։ Իսկ ՀԱՍՏԱՏՈՒՄԻՆ՝ զՀԱԿԱՌԱՆԻ այսմ ցուցանելի է. և գուք լինիք մերոց բանեցս գաստաւորք։ Եւ այդ իսկ է խնդիր։

Զվարս ԴԻՄՈՍԹԵՆԻ քննել՝ երկայնապոյն բանից գործ վարկանիմ։ Զի զի՞ պիտի այժմ ասել զդիպուածսն նոցա յամբաստանութենէ անտի իւրոց վերացն, յորժամ գաստախաղ եկաց ԱՐԻՍՏԱՊԷՆ զԻՄՈՍԹԵՆԵԱՅ ազատեցոյ՝ զՀՕՐԵՂԲՕՐՈՐԴՈՅ իւրմէ, և զպատուին կատարին. կամ զկրս զբրաւորութեանն ԿԵՍԻՓՈՆՈՒԵԱՅ [27], և զնաւակցութիւնն 'ի ՀԷՆԼԵԱՊՆՈՍ, յորում մի 'ի նաւակառուցից եղեալ ԴԻՄՈՍԹԵՆԷ, և տարեալ 'ի նաւին զբրաւորն, հայցակից նմին լեալ և զոհակից և նուիրակից, և այդոցիկ՝ վասն հայրենի ընդ իւր բարեկամութեանն տրժանացեալ, յորժամ 'ի քաջութենէ գաստաստան մահու 'ի վերայ կայր նմա՝ ոչինչ գանգատելոց չարախօս զնեմնէն լինել. և գարձեալ զկրսն ՄԻԳԵԱՅ [28], և զկուռվին ընկալեալս 'ի կապաւարանին՝ յորժամ պարապէն իսկ էր [29]. և թէ սրպէս ընդ երեսուն մնասու վաճառեալոց միանգամայն և զանէինն թշնամանս և զգաստակնիք ժողովրդեան՝ որով 'ի մեհենի ՍԱՄՈՍԱՏԵՆԻ գաստապարտեալ զՄԻԳԵԱՍ։ Այլ արդ զայդոսիկ, և այլ ևս գոցին նմանս, հաճոյ թուի ինձ զանց առնել. ոչ եթէ մնասն ինչ ՀԵՂ լինելով կամ ասոխս աչառելով, այլ զանգիտեալ՝ թէ գուցէ յանդիմանեցայց 'ի ՀԷՆՉ, ճշմարիտ ինչ թերևս ասացեալ, բայց զրոյցս պատաւելս և քաջածանօթս։ Իսկ արդ, ո՛ Կոտեսիփոն, որոյ մեծամեծքն յամբաստանս՝ այնպէս հաւատարիմ են և ծանօթա-

կանք ուսկնդրաց, մինչև դատախազին քարուքար սուտ խօսել, այլ վազելիս և յոյժ յոռաջածանօթս, արդեօք արժանն ինչ իցէ այնմ պատակ ընդունել ոսկի, եթէ պախարակեսցուս։ Եւ քեզ յանդգնելոյդ 'ի հրամանն տալ սուտ և անօրէնն՝ արժանն իցէ արդեօք քամահանս առնել առանից, եթէ տալ վրէժս քաղաքիս։

Իսկ զվարչութեան անիրաւութեանցն ջանացայց ստուգագոյնս ասել։ Զի լսեմ թէ յորժամ տացի նոցա ժամ խօսելոյ, Դիմոսթենէս 'ի համար արկանելոց է առ ձեզ, իբրև զի քաղաքիս չորք կացին ժամանակք՝ յորս ինքն առաքինացաւ։ Յորոց մի և առաջին ամենեցուն, որպէս լսեմս, զժամանակն համարի՝ յորում ընդ Փիլիպպեայ 'ի վերայ Ամփիպոլսի պատերազմ մղէաք. և զժամանակն զայն որոշէ խաղաղութեամբն և նիզակակցութեամբ [30], զոր Փիլոկրատես ազնուացի առաջի արար, և դա ինքնդ ընդ նմա, որպէս ես ցուցից։ Երկրորդ ժամանակ ասէ եղեալ, զոր խաղաղութեամբ [31] անցուցաք. յայտ իսկ է թէ մինչև ցօրն՝ յորում լուծեալ զխաղաղութիւն քաղաքիս՝ գոյն ինքն Ճարտարախօսդ զպատերազմն առաջի արար։ Եւ երրորդ՝ զժամանակն զոր 'ի կուսի կայաք, մինչև 'ի Թշուառութիւնն Քերոնեայ [32]։ Եւ չորրորդ՝ զայժմս ժամանակս։ Եւ զայսոսիկ 'ի թիւ արկեալ, ըստ որում լսեմ, ձայնատուր առ իս է լինելոց և հարցանել, զորմէ իսկաբէ 'ի չորեցունց ասսի ժամանակաց իցեմ ես ամբաստան, և երբ ասիցեմ զնա ոչ յօգտակարագոյնս ժողովրդեան քաղաքավարեալ. և եթէ չկամիցեմ տալ պատասխանի, այլ կոր 'ի գլուխ եղեալ 'ի բաց խուսափիցեմ, սպառնայ դալ հրապարակացոյց զնա առնել, և եկակոչ առեալ արարեալ՝ սխալել տագնապել զնա տալ պատասխանի։ Արդ, զի մի դա ունքասցի, և զի դուք այժմն տեղեակ լինիջիք և ես տայց պատասխանի, քեզ՝ Դիմոսթենէս՝ առաջի դատաւորացս և այլոց քաղաքացոց՝ որ շուրջս կան արտաքուստ արտաքս, և Հելլենաց՝ որոց փոյթ եղև զդատաստանս զայս լսել, — զի ոչ

Digitized by Google

սակաւս տեսանեմ այսր հաստեալս, այլ որչափ չիշէ ինչ ոք երբեք եկեալ կուսակալ 'ի հաստակաց հանգիստրան, — ահա տամ պատասխանի՝ թէ 'ի վերայ չորիցդ ևս զատուցելոց 'ի քէն ժամանակաց առհաստարակ լինիմ զքէն ամբաստան։ Եւ եթէ կամիցին դիք, և զատուորքս հաստարակ լուիցեն մեզ, և մարթացիս ևս ընդ միտ ածել զոր գիտեմն ընդ քեզ, ապէ ունիմ ամենայն իրաւք յայտ առնել զատուորացս, թէ փրկութեան քաղաքիս պատճառաք դիքն եղեն, և որք մարդասիրապէս և չափոմբ վարեցան յիւրս քաղաքիս։ իսկ ամենայն թշուառութեանց քաղաքիս պատճառեղեալ զԴիմոսթենէս։ Եւ խօսիցս կարդ զայն կալայց, զոր զս ինքն լսեմ թէ գնելոց է։ զի ճառեցից նախ զառաջնոյ ժամանակէն, և ապա զերկրորդէն, և երրորդ՝ որ ըստ համանէն, և չորրորդ՝ զայժմու իրացս հաստատելոց։

Եւ արդ 'ի վեր 'ի խաղաղութիւն անդր ելանեմ՝ զոր դու և Փիլոկրատէս առաջի արարէք։ Քանզի, ով արք աթենացիք, եթէ թոյլ տային ձեզ ոմանք՝ ապասել հրեշտակացդ առաքելոց 'ի ժամանակին յԵլլադա՝ ազատել զնոսա հաղորդս լինել հելլենախուռմ ժողովոյն ՅՅ ընդդէմ Փիլիպպոսի, դոյր ձեզ զառաջին խաղաղութիւնն զայն առնել հաստարակ միաբան խորհրդով հելլենացւոց, և 'ի գալ ժամուն՝ 'ի կամաց հաւանութենէ հելլենացւոց՝ 'ի ձեզ զապարատեսութիւնն հանել։ Զրկեցայք յայդցանէ 'ի ձեռն Դիմոսթենէի և Փիլոկրատեայ և կաշառակրծութեանց գոցա՝ զոր կաշառեցան կպլ հակառակ ձերոմ պետութեանդ։ Իսկ եթէ յանկարծոյն լուր բանիս կարի իմն չաւատալի ոմանց երևեցաւ 'ի ձէնջ, զառաջիկայ ունկնդրութիւնդ այնպէս արարէք, որպէս յորժամ յետ երկար ժամանակի 'ի հաշիւս մտանիցեմք ծախուց արծաթոյ։ Ի երբեք՝ զի թիւր կարծեսք դամք 'ի տանէ զհաշուէն։ իսկ իբրև հաշիւքն բռնանգակիցին, չիք ոք 'ի ձեզ այնպէս գժպահի յախտարակաց, որ ոչ մեկնեսցի անտի՝ խոստովան եղեալ և վկայեալ ճշմարտութեան հաշուին համարոյ։ Այսպէս և

Digitized by Google

այժմ զունկնդրութիւնդ արասջիք։ Եթէ իցեն 'ի ձէնջ՝ որ
եկեալ իցեն 'ի սանէ կանխակալ կարծեաք մտաց, թէ չիք
ինչ Դիմոսթենի միաբանութեամբ ընդ Փիլոկրատեայ ասա-
ցեալ երբեք 'ի շահ օգտին Փիլիպպեայ, որ ոք 'ի դոյն խոր-
հուրդս կայցէ՝ մի ինչ անպարտ արձակեսցէ, և մի պարտ-
ապուր, մինչև լուիցէ։ զի և չէ իսկ արդար։ Իսկ եթէ կար-
ճառօտս ինձ լուիցէք՝ զի յուշ ժամանակին արարից, և
զհրովարտակն մատուցից 'ի մէջ՝ զոր ընդ Փիլոկրատեայ
գրեաց Դիմոսթենէս, եթէ ինքնին իսկ ստուգութեան հա-
շիւք դատանիցեն զԴիմոսթենէս յաշխատագոյն քան զՓիլո-
կրատէս գրեալ վճռա 'ի սկզբանէ յաղագս խաղաղու-
թեանն և նիզակակցութեան, և յառաւել ևս ամենապար-
տութիւն՝ պաշտօն արարեալ Փիլիպպեայ, և չապատեալ
'ի գիմաց նորա հրեշտակացն, և պատճառ եղեալ ժողովրդ-
եանն՝ մի ընդ միասամուռ ժողովոյ հելլենացւոց առնել
զխաղաղութիւնն, և 'ի ձեռս Փիլիպպեայ զկերտուքլեպէս
աղքայ Թրակիոյ մատնեալ՝ զայր բարեկամ և նիզակակից
քաղաքիս, եթէ զայդ ամենայն ցուցից ձեզ հաստատեալ,
խնդիր մի փոքր աղաչեցից զձեզ։ յաստուածն զձեզ երդ-
մնեցուցեալ, ձեռն առաք ինձ հաւանութեան, թէ զառա-
ջինն 'ի չորից անսի ժամանակաց ոչ ուղիղ քաղաքավարեալ
է դորա։ Բայց սկսայց ասել՝ ուստի դիւրաւ ինձ զկեռ ժա-
մանիցէք։

Դրեաց Փիլոկրատէս հրամանն, թէ օրէն է Փիլիպպոսի
քարոզ և հրեշտակս առաքել այսր վասն խաղաղութեան և
թիկանց առնելոյ։ Անիրաւ ամբաստանեցաւ հրամանդ։
եկին ժամանակք գաւառատանին։ դատախազէր նամակա-
դիրն Լիւկինոս, ջատագովէր Փիլոկրատէս, պաշտպան կայր
ընդ նմա և Դիմոսթենէս։ Փիլոկրատէս արդարացաւ։ Ցեռ
այսորիկ եհաս ժամանակ, թեմիստոկլէս իշխան։ Ցայսմ
վայրի մատնէ Դիմոսթենէս 'ի տուն խորհրդոյ խորհրդա-
կան, ոչ վիճակաւ և ոչ տեղապահութեամբ [34], այլ գնոյ
առեալ մարթանաք, զի զամենայն ինչ բան և գործ նպաստ

Digitized by Google

լինիցի Փիլոկրատեայ, որպէս արդիւնք իսկ իրացն յայտ առարին։ Զի և զայլ ինն հրամանն յառաջ տարաւ Փիլոկրատէս, յորում ասիցէ ընարել հրեշտակս ասան, որոց երթեալ առ Փիլիպպոս աղաչեսցեն զնա՝ արձակել այսր ինքնիշխան հրեշտակս վասն խաղաղութեանն։ Մի 'ի նոցանէն էր Դիմոսթենէս, և 'ի դարձին անտի՝ գրուատիչ էր խաղաղութեան։ և զոր այլ հրեշտակքն՝ զնոյնս և ինքն պատմէր։ և նա միայն յատենակալացն գիր եհան՝ դաշինս ընդ քարոզն Փիլիպպեայ և ընդ հրեշտակսն կռնելոյ, յոր և նմանս Փիլոկրատեայ հարեալ 'ի գրին։ միոսմն՝ իշխանութիւն առեալ քարոզ և հրեշտակս այսր յղելոյ, և միւսումն՝ յուսիսս ընդ հրեշտակութեանն մնանելոյ։ Ա՛յլ յառաջի կայագ ուշի ուշով միս գիր ինձ։

Քանզի իրք և գործք հասեալ կային, ոչ ընդ այլ հրեշտակսն՝ որ ըստ յեղափոխ իրացն յաշխարհ զրպարտեցան զկնի ուրեմն 'ի Դիմոսթենեանայ, այլ ընդ Փիլոկրատեայ և Դիմոսթենի։ և յերեսուն։ զն 'ի միասին էին 'ի հրեշտակութեանն, և 'ի միասին զգիրս հրամանացն հանէին։ Նախ, զն մի սպասիցէք հրեշտակացդ առաքելոց 'ի յորդորել ընդ դէմ Փիլիպպոսի։ որպէս զն մի ընդ այլ հելլենացիսն, այլ գուք ձեզն առանձինն զխաղաղութիւնն առնիցէք։ Եւ երկրորդ, զն ոչ խաղաղութեան ևեթ, այլ և նիզակակցութեան ընդ Փիլիպպեայ տայիք հրամանն։ առ 'ի յետին վճռութիւն անկանելոյ կուսակցաց Ժողովրդ ձերոյ, 'ի տեսանելն զձեզ աղաչաւորս առ նոսա 'ի պատերազմ, իսկ առանին՝ ոչ խաղաղութեան ևեթ, այլ և նիզակակցութեան արարեալ հրամանն։ Եւ երրորդ, զն Կերսոբլեպտէս Թագաւոր Թրակիոյ մի յերգմնիսն գոցի, և մի հաղորդ Թիկանց և խաղաղութեան լինիցի։ Նա և հրամանն ևս լինէր գումարատակ առնել 'ի վերայ նորա։

Որ զայդոսիկ գնոյ առնոյր կաշառաւ 318, ոչինչ անիրաւէր։ զի յառաջ քան զերդմունն և զդաշինն ոչ անպատահ ինչ էր նմա զգուտ իւր հայթայթել։ բայց որ մնան

'և տուր եղէն առ նա զօրութեանց քաղաքիս՝ մեծի բարկութեան են արժանի։ Զի որ այժմս զանձն ատեցող Աղեքսանդրի ասէ լինել և յոյնժամ Փիլիպպոսի Դիմաթենէս, որ զԱղեքսանդրի հիւրասիրութիւնն ինձ մեղ գնէ, խորամանգեալ զպատեհ պատեհ ժամանակս քաղաքիս, գիր մատուցանէ՝ ժողով գումարել Նահապետաց յուր ամենայն Եւրոպեոլիոնի, յորում Աղեքսանդրայ զոհք էին և նախատօնակ [26], 'ի արքունի անդ աւուր, որպիսի ինչ չինէ ոք եղեալ յառաջագոյն։ Զի՞նչ առ այս կցկցեալ բարայս։ Որպէս զի, ասէ, ընդ հատանել հրեշտակացն Փիլիպպէայ՝ հետ ընդ հետ վաղվաղակի 'ի խորհուրդ մտանիցէ ժողովուրդն զիրացն Փիլիպպէայ։ Վասն չէ եւ երևելոցն հրեշտակաց կանխէր ժողով կազմէր, զժամանակս ձեր գողանայր, և զգործն շտապէր, զի մի ընդ այլ հեղլեն, 'ի հատանել հրեշտակացն ձերոց, այլ ինքնաձեռն միայնակ զնաղաղութիւնն առնիցէք։ Զհետ այսորիկ, ով արք աթենացիք, եկին հասին հրեշտակք Փիլիպպէայ [27], իսկ ձերքն էին 'ի տար աշխարհ յորդորել զհելլենացիս ընդդէմ Փիլիպպէայ։ Ցայսմ վայրի այլ իմն գիր հրամանի տայ վճռել Դիմաթենէս, գրեալ 'ի նմա՝ ոչ զնաղաղութենէն միայն, այլ և զնիզակակցութենէն առնուլ ձեզ խորհուրդ, ոչ մնացեալ ձերոց հրեշտակացն, այլ անդէն և անդ յետ սպանդարամատակարարացն ասնից ոստանիս, որ օր ութուտասն և ինն ուտասն էր ամսոյն։

Իսկ թէ արդար խօսիցիմ՝ լուարուք հրովարտակացն։

ՀՐՈՎԱՐՏԱԿՔ

Եւ արդ, ով աթենացիք, իբրև անցին գնացին ասնքն սպանդարամատականք, ժողովքն եղեն. և յառաջնումն անդ ատենի կարդացաւ հասարակ հրամանն նիզակակցաց, զորոյ զբանիցն ծայրագոյն դիւրաքաղ դիւրաս ցուցից համառօտիւք։ Զի գրեցին նախ՝ ձեզ միայն խորհել վասն խաղաղութեանն,

խակ զանուն նիզակակցութեան լուեցին. ոչ առ մոռացութեան ինչ, այլ զի և զնաղաղութիւնն ինքնին 'ի գլխովին կարևոր առաւել քան թէ վայելուչ ինչ վարկուցեալք։ Յետ այնորիկ, 'ի գարման կաշառակրծութեանն Դիմոսթենի, բարուք 'ի դիմի հարան և գլուեցին 'ի հրամանի անդ, զի օրէն ինչ, ուստ ուստք և կամք իցեն 'ի հելլենացւոց, մինչև յաստիս երիս 'ի նմին տրձանի 38 ընդ ասթենացիս 'ի գիր անցանել, և բաղդրդ լինել երդմանցն և դաշանց։ Երկու ինչ մեծ այնու աշխատարեալ ածեալ գլուսմբ. նախ՝ զերեքամեայ ժամանակին բաւական առ հելլենացւոցն հրեշտակութիւն պատրաստեալ, և ապա զմտերմութիւն հելլենացւոցն հաստատակաց ժողովովն շահեալ քաղաքիս. որպէս զի եթէ անցումն լինիցի զուխուքն, մի մեք միայն և անկաղմք զպատերազմին մղեացուք, որպէս այժմն եհաս մեզ կրել 'ի ձեռն Դիմոսթենեայ։

Եւ թէ հաստատրիմ բանքս իցեն՝ 'ի հրամանէ անտի լուեալ 'ի միտ առնուցուք։

ՀՐԱՄԱՆ ՆԻԶԱԿԱԿՑԱՑ

Վկայեմ զի պաշտպան կացի ես հրամանիդ այդմիկ, և ամենեքեան որ յասուպնում առեալին խօսեցան առ ժողովուրդն։ Մեկնեցաւ ժողովուրդն յոստոմ թէ եղիցի խաղաղութիւնն, բայց եղիցի՝ հաստատակ հաւանութեամբ հելլենացւոցն բոլորեցուցեալ։ և զի ոչ բարուք իցէ խորհել 'ի նիզակակցութիւն յետ կոչ առնելոյ առ հելլէնս։ Գիշեր մի ընդ մէջ, և եկաք 'ի վաղիս անդր 'ի ժողովն։ Անդ կանխեալ գրաւեալ Դիմոսթենի զբերան և ոչ ումեք տեղի թողեալ խօսիլ, ոչ ինչ օգուտ ասաց լինել յերեկի բանիցն, եթէ ոչ 'ի նոյնս հաւանեացին հրեշտակք Փիլիպպեայ։ և առանց նիզակակցութեան չՀանաչեմ ասաց զնաղաղութիւնն։ Զի չէ պարտ, ասէ, — քանզի յիշեմ և զբայն ասացեալ՝ առ առեալութեան խօսողին և բանին, — չէ պարտ պատառել

Digitized by Google

'ի խաղաղութենէն զնիզակակցութիւնն, և ոչ յապաղա-
նացն հելլենացւոց ակն ունել, այլ մեզէն տալ պատերազմ
կամ խաղաղութիւն առնել առանձինն։ Եւ 'ի կատարածն
կոյս՝ յաւեան անդր կոչեցեալ զԱնտիպատրոս, հարցանէր
հարցումն ինչ, ցուցեալ նմա յառաջագոյն զոր ասէլոցն
էր, և ուսուցեալ՝ զոր հակառակ քաղաքիս պիտոյ էր նմա
տալ պատասխանի։ Եւ հուսկ ուրեմն ելին այդոքիկ 'ի
յաղթութիւն, Դիմոսթենի՝ բանիւ հարստահարեալ, և
Փիլոկրատեայ գրեալ զՀիմն։

Եւ զոր մնայրն նոցա, վասրանդի տալ զԿերսոբլեպտէս
և զգաւառն Թրակիոյ, արարին. և զայն՝ որ օր քան և
հինգ էր Եվակեբոլիոն ամսեան, չէ չուեալ Դիմոսթենի 'ի
յեռին հրեշտակութիւնն՝ որ յաղագս երդմանցն։ Քանզի
Թէնամիդ այդ Աղեքսանդրի և Փիլիպպեայ, Հարստարախօսդ
էր, երկիցս չոգաւ հրեշտակութեամբ 'ի Մակեդոնիա, որ
և ոչ մի անգամ արժան էր. և արդ հրաման տայ արհամար-
հել զմակեդոնացին։ Եւ 'ի ժողովին, զվեցերորդ աւուրն
ասեմ, հնարիւք եղեալ ատենական, նատեալ մնանեաց 'ի
ձեռս եւ զԿերսոբլեպտէս միաբանութեամբ ընդ Փիլոկրա-
տեայ։ Զի Փիլոկրատէս զանխլաբար ընդ այլ բանս հրա-
մանին արկ խառնեաց, և Դիմոսթենէս վճիռ եւ առնել, յո-
րում գրեալ կայր. « Ատենականացն նիզակակցաց երդմնի
լինել առ հրեշտական Փիլիպպեայ 'ի սմին յայսմ աւուր։ »
Այլ 'ի դիմաց Կերսոբլեպտի չգոյր ոք բազմեալ գահակից։
Եւ երդումն հրաման տալով բարձակցաց ատենին՝ արգել
զԿերսոբլեպտէս, որ չէր աթոռակից յատենի անդ։

Եւ թէ Ճշմարիտ ասիցեմ՝ ընթերցիր ինձ, ո՛ այն ոք էր
որ գրեայն զայսոսիկ, և ո՛ այն ոք նախագահն՝ որ եռն վճռել։

ՀՐԱՄԱՆ. ՆԱԽԱԳԱՀ

Գեղեցիկ, ո՛վ արք աթենացիք, գեղեցիկ է հաստատակաց
դպրութեանցն դիւան. քանզի անշարժ ինն է, և ոչ չրջի

ընդ դասալիքան [39] քաղաքականութեան, այլ ասայ ժողովրդեան՝ յորժամ և կամիցին՝ ճանաչել զոր վաղուց չարքն իցեն, և խնդրիցեն բարերար երևել՝ ի վերին երեսս։

Ասայ ինձ զքծնութեանց նորա անցանել բանիս։ Քանզի Դիմոսթենի, ով արք ամենայնիք, զամ մի ողջոյն խորհրդական եղեալ, ոչ ուրեք երբեք երևի՝ ի բարձերիցութիւն կոչեալ՝ ի հրեշտակաց զոք. այլ նախ զառաջինն և յայնժամ միայն հրաւիրեաց զհրեշտակսն՝ ի բարձերիցութիւն [40], և բարձկնեարս արկ, և պատատառս ոսկեաց ծիրանածուէնս, և ընդ այդն՝ առաջնորդեաց հրեշտակացն՝ ի տեսարանն, մինչև՝ ի շչիւն լինել վասն ծանակութեանն և սրտականացն։ Եւ՝ ի ժամ մեկնելոյ նոցա՝ ի Թեբէ՝ ի վարձու կալեալ երիս լուծս ջորւոց [41], յուղարկեաց զհրեշտակսն՝ ի Թեբէ, արկեալ զքաղաքս մեր՝ ի կատականս։

Այլ զի մի ըստ ճառս ելից արտաքս, սա ինձ զհրամանն որ վասն բարձերիցութեանն։

ՀՐԱՄԱՆ

Արդ դա, ով արք ամենայնիք, այդչափ մեծդ արուեստ կատարեալ, լուեալ յառաջադոյն՝ ի լրտեսացն Քարիդեմոսի [42] զմահն Փիլիպպեայ, ստեղծեալ իւր անուրջս իմն առ՝ ի դիցն, ստեաց՝ իբրև ոչ՝ ի Քարիդեմեայ առեալ զաղդ իրին, այլ յԱրամազդայ և յԱթենասայ, առ որս՝ ի տուէ սքանչելագործն եղեալ, գիշերի խօսակիցս իւր ասէ լինել զնոսա, և հանդերձելոցն նախապատուս։ Եւ դեռ եօթնօրեայ մնեալ ունելով զդուստրս իւր, յառաջ քան զուսուցն և զօրինի սպասն նմա հարկանելոյ, պատկ՝ ի գլուխ և ապիտակահանդերձ զուհեր արջառս [43], և անօրինեալ. չուառականն՝ որոյ զայն ոք կորուսեալ էր՝ որ միայն և առաջին կարգացեալ էր զնա հայր [44]։ Ոչ՝ ի թշուառութիւնն ոանհայր լինիմ, այլ զարան կրկնեմ. զի որդիասեացն և անզգամ հայր՝ ոչ երբեք լինիցի քաղաքավար բարեբարոյ. և որ յանձանց

Digitized by Google

սիրելեացն և ընտանեկաց զգուշութիւր փակէ, ոչ առ աւելի ինչ զձեզ զօտարոտիսդ կալցի բնաւ. և որ առանձինն չարն է, ոչ երբեք հրապարակաւ բարի լինիցի. և որ առ ոնին խոտանն է, ոչ բնաւ 'ի Մակեդոնիա ընտիր և քաջ էր 'ի հրեշտակութեանն. զի ոչ զվարան, այլ զվայրան [45] ևեթ փոփոխեաց։

Արդ՝ թէ ուստի 'ի յեղափոխութիւն իրացն եկն, — քանզի այս երկրորդ է նորա ժամանակ, — և թէ զինչ պատճառքն իցեն, զի Փիլոկրատէս զհանգոյն Դիմոսթենի քաղաքավարութեանցն կրեալ ամբաստանութիւն՝ սարսափեր եղև, իսկ Դիմոսթենէս եկաց զայլոց չարախօս, և թէ ուստի բնաւ յայս տառապանս խարդաւանեաց զմեզ այրդ ալիզ, զայդոսիկ մտադիւրագոյն և արժան է լսել։

Զի իբրև այն ինչ մտեալ անց Փիլիպպոս ընդ Դրուսան [46], և զքաղաքս փովկիացւոց յեղակարծումն տարակարծի տապալեաց, և զթեբացին՝ որպէս ձեզ թուէր 'ի ժամանակին՝ առաւել քան զպատեհ ժամուն և զձեր օգուտ զօրագոյնս յարդարեաց, և ձեր զարհուրեալ՝ ժողովեցէք զաղխս ձեր 'ի բացավայրաց, և փուրսիշ ծանր ամբաստանութեան զհրեշտակացն կայր ներթելոցն զնաղաղութենէն, մանաւանդ զՓիլոկրատեայ և զԴիմոսթենէ, զի ոչ միայն պատգամաւորեացն, այլ և հրամանացն գրոցքն էին. — և զայնու ժամանակաւ դէպ եղև ընդ հակառակս ելանել Դիմոսթենի և Փիլոկրատեայ՝ գրեթէ զնոցին իրաց՝ զորոց և ձեր կասկածեալ էր զդժառութիւն նոցա [47], — յայսպիսոյ խառնութեան 'ի նեղքս անկանել՝ ընդդարձոյս ախսիւքն իւրովք զառաջնակայիցն առնոյր խորհուրդ, վատութեամբն և նախանձուն ընդ Փիլոկրատեայ կաշառառութիւնն. և Համարեր՝ զի թէ զորոց ընդ իւրն էին 'ի հրեշտակութեանն՝ և զՓիլիպպոսէ չարախօս ամբարձցի, յայտ իսկ կորնչիցի Փիլոկրատէս, և որ այլ ևս ընդ նմայն էին հրեշտակքն վտանգեացին, և ինքն հաճոյ եղիցի, և մանաւանդ սիրելեաց և ապիրատն՝ երևեսցի հաւատարիմ ժողովրդեանն։ Իրա-

Digitized by Google

զդաց եղեալ Թշնամեաց հանդուտեան քաղաքին, լքիմաս Թեամբ հրաբիրեին զնա յատեան, զնա միայն անկաշառ 'ի քաղաքին անուանեալ: Իսկ նորա մատուցեալ՝ բանայր նոցա դուռն մարտի և ամբոխից: Դա այդ է, ով արք աՀեՀնացիք, որ նախն եգիտ զբերդն Սերբիոս և զԴորիսկոս և զԵրգիսկէ և զՄիրտիսկէ և զԴանոս և զԴանիս. վայրք՝ զորոց և ոչ զանուանն գիտէաք յառաջագոյն: Եւ յայն տարեալ հասոյց զնրան, մինչ զն եՀԵ չառնիցէ հրեշտակս Փիլիպպոս, արհամարհատ քաղաքին ասել զնա. իսկ ԹԷ առնիցէ, լքառեաս առաքել և ոչ հրեշտակս: Եւ եՀԵ 'ի քաղաք ինչ հասարակ և հաւասար ապաստան առնել կամիցի զՄնասուց ինչ դատաստան, ասել՝ ԹԷ չէք դատաւոր հասարակ ընդ մեզ և ընդ Փիլիպպոս: Ցայր նա մեզ զՀալոնեասս [48]. իսկ դա չեՀրէր առնուլ՝ եՀԵ տայցէ, այլ ոչ 'ի գուրս տայցէ, զվանկից վիՀելով: Եւ հուսկ ուրեմն՝ պատկեալ զպատերազմեալն ընդ Արիստոգեմաս 'ի Թեասալիս և 'ի Մագնեսիս հակառակ ուխտին խաղաղութեան, ըզհաշտութիւնն եղյծ, և նիՀեաց զմրաղ և պատերազմ:

Այո. բայց պղնձի և ազամանդեայ պարսպաս, ըստ խրատու ասելոյ, զաշխարհս մեր պարսպեաց նիզակացութեամբն եւբիացւոց և Թեբացւոց: Այլ, ո՛ արք աՀեՀնացիք, յայդմ իսկ մեծամեծս նեՀգեցայք, և ոչ գիտացէք: Թէպէտ և փութամ ՀԵպիմ ասել զզարմանալի նիզակացութիւնն Թեբացւոց, այլ վասն կարգի խօսիցս՝ զեւբիացւոցն արարից նախ յիշատակութիւն:

Քանզի ՀԵր, ո՛ աՀեՀնացիք, բազում և մեծամեծ կրեալ ինասս 'ի Մենեսարքոսէ քալկիսացւոց՝ 'ի հօրէն Կալչիասայ և Տաւրոսթենի [49], զորս դա այժմ կաշառասդնաց լեալ՝ յանդգնի ընդ աՀեՀնացիս 'ի համար արկանել. դարձեալ և 'ի Թեմիսոնէ երեարիացւոյ, որ 'ի խաղաղութեան զՈրոպոս 'ի ՀԷՆՉ Թափեաց [50]. զայսոսիկ կամաս մոռացօնս արարեալ ՀԵր, իբրև Թեբացիք դիմեցին յԵւբիա՝ ջանացեալք ընդ լծով արկանել զքաղաքն, յաւուրս հինգ հա-

Digitized by Google

սէք նոցա յօգնութիւն [51] նաւուք և հեռակաւորու. և յառաջ քան զաւուրս երեսուն տիրապետեալ Եւբիոյ, դաշնաւորեալ զԹեբացիս՝ արձակեցէք զնոսա, և զբաղաքն ինքնին 'ի գլխովին և զպետութիւնս նոցին անդրէն դարձուցէք ուղղութեամբ և արդարութեամբ առ աւանդատուն, ոչ իրաւունս դատեալ՝ յինչել զբարկութիւն առ 'ի ձեզ հաւատացեալսն։

Եւ այսչափս առ 'ի ձէնջ տեսեալ բարիս քալկիացւոց, ոչ ըստ այնմ ինչ հատուցին ձեզ շնորհս. այլ իսկ և իսկ իբրև անցէք յԵւբիս յօգնականութիւն Գ'ուռաքեայ [52], 'ի սկզբան անդ գէթ պատճառէին բարեկամս ձեզ լինել. իսկ իբրև այն ինչ հասաք 'ի Տամինայս, և զանց զՊոմիլէոն [53] անուանեալ լերամբն տարաբաք, անդ Կալլիաս քալկիսեցի, զոր կաշառաբերեալ Դիմոսթենէս դրուատեր, յանկարծակի զբանակ քաղաքիս 'ի դժուարին անձուկս ուրեք պաշարեալ, ուստի չէր նոցա ելք առանց յաղթութեան մարտի, և ոչ ուստեք յոյս օգնականութեան՝ ոչ 'ի ծովէ և ոչ 'ի ցամաքէ, զօրաժողով պարարեալ յամենայն Եւբիոյ, և տուեալ ածել գունդ 'ի Փիլիպպոսէ, և եղբօր իւրոյ Տարոսթենի, որ այժմ աջուն կարկառէ առ ամենեսին և ծիծաղի, անցուցեալ անդր զփովկիացիսն օտարականս, առհասարակ եկին անկան 'ի վերայ՝ սատակել զմեզ։ Եւ թէ չէր նախ ուրուք 'ի դից փրկեալ զբանակ մեր, և ապա զօրականին ձերոյ հեծելոց և հետեւակաց արիացեալ, և առ ասպարիսի Տամինայց յաղթեալ մարտին՝ Ճակատու պատերազմի, և դաշնաւորս զթշնամին արձակեալ, վասնզ 'ի վերայ կայր մերոյ քաղաքիս՝ ամենաստարտ ձաղ և ծանակ լինելոյ։ Զի ոչ եթէ դժբախտութիւն 'ի պատերազմի մեծ ինչ չար իցէ, այլ յորժամ ընդ անարժանս անձինն ախոյեանս՝ 'ի կռիւ մտեալ ուրուք և ձախողեցի, այն անշուշտ կրկնապատիկ ազէտք իցեն։ Համայն ձեր այդմ ամենայնի համբերեալ, միւսանգամ հաշտեցարարք ընդ 'ի ձէնջ հան-

Բայց Կալլիաս քալկիսեցի Թողութեան 'ի ձէնջ հան-

Digitized by Google

դիպեալ, ասուղ ինչ ժամանակ առեալ զկայ՝ անդրէն վերեալ եկն յիւր բնութիւն. բանիւ զեւբիական ժողովն 'ի Քալկիս գումարեալ, և արդեամբք հղօրագոյն զեւբիա պատրաստեալ ձեզ ախոյեան, և արարեալ իւր հարստութիւն նշանաւոր: Եւ զօրավիճն յայն յուսացեալ առնուլ զՓիլիպպոս, խաղաց գնաց 'ի Մակեդոնիա, և շրջէր ընդ Փիլիպպեայ և կոչէր մի 'ի սիրելեաց նորա: Սակայն մինչ սակաւ գտեալ և առ Փիլիպպոս, և անտի ևս փախստականն գնացեալ անկաւ առ Թեբացիսն: Այլ և գնոսա ընդ վայր հարեալ, և քան զԵւրիպոս [34] առ որով բնակէին, յաճախագոյն կերպարանափոխ լեալ, Թեբացւոց և Փիլիպպեայ յատելութիւն գարձաւ: Եւ 'ի վարան ոտգնապի յանհնարս մնալ՝ Թէ յինչ ձեռն արկանիցէ, նա զի և հրամանն ևս եղև պատերազմի 'ի վերայ նորա, յոյս մի ևս Թէթ փրկութեան ետես մնացեալ, գաշնակից առնուլ զաթենացւոց ժողովուրդն՝ զնիզակակիցն անուանեալ, զի օգնական լինիցի՝ եթէ ոք ուսանէք յատնիցէ 'ի վերայ իւր. որ և դիպելոց իսկ էր յայտնապէս, եթէ չէր ձեր եղեալ խափան:

Զայս խորհուրդ 'ի մտի եդեալ՝ հրեշտակս առնէ այսր զԳալատիասն և զԵմոգենն և զԻթոգորոս զերկոյնքն Թացն [35], բերել ժողովրդեանս յոյս մտոի, իսկ Դիմոսթենէ և իւրոցն՝ տրծաթ: Եւ երիս ինչս միանգամայն գնեաց. առաջին, չանկանել 'ի ձերմէ նիզակակցութենէն. զի չգոյր ինչ այլ 'ի միջի, եթէ ժողովրդեանս զմտաս զառաջին անիրաւութիւնն ածեալ՝ չառնոյր յանձն զնիզակակցութիւնն, այլ կայր նմա՝ կամ փախստեայ գնալ 'ի Քալկիսէ, կամ ձերբակալ եղեալ մեռանել. այնչափ սպայ 'ի Փիլիպպոսէ և 'ի Թեբացւոց գումարտակ լինէր 'ի վերայ նորա: Երկրորդ, առ որ զնիզակակցութիւնն հրովարտակ առնէր՝ գայնն կաշառէր, որպէս զի քալկիսացիք մի 'ի ժողով եկեսցեն ՅԱԹԷՆս [36]: Եւ երրորդ, զի մի հարկս ինչ հարկանիցէ: Եւ ոչ 'ի միոջէ իմեքէ կամացն իւրոց վրիպեաց Կալլիաս. այլ Դիմոսթենէսդ բռնաւորաստաց, որպէս ինքնդ ձեւա-

Digitized by Google

նայ, զորմէ և Կոստանդին զօրագլխան ասէ միշտ Հաստատ բախտաւոր, դա մնան եղև Հանից քաղաքիս, և գրեաց 'ի Նիզակակցութեան անդ՝ երթալ մեզ 'ի Թիկուն քալկեսացւոց, բան մի ևեթ փոփոխեալ. 'ի փոխարէնս այնմ՝ յօրինուածութեան սակս՝ յաւելեալ 'ի գրին, քալկեսացւոց գալ յօգնութիւն՝ եթէ ոք յանթենացիս արշաւիցէ։ Իսկ զժողովն և զհարկս՝ որովք գոյր զօրանալ պատերազմին, վաստակեալ ետ համօրէն, գեղեցիկ գեղեցիկ անուանմամբք ըզձաղանաց գործոն հրաման տուեալ, և բանիւք հրաստարեալ զձեզ, որպէս թէ պարտ իցէ քաղաքիս նախ զօգնութիւնն մատուցանել մշտակարօտ հելլենացւոց, իսկ զնիզակակցութիւնն ապա յետոյ զկնի բարերարութեանցն։

Բայց առ 'ի քաջ խելամուտ ձեզ լինելոյ՝ զի ճշմարիտ են բանքս, ծն ամ. ինձ զգիր հրամանին Կալլիասայ, և զնիզակակցութիւնն, և կարդաս զվճիռն։

Վ Ճ Ի Ռ

Սակայն ոչ այն ինչ է գժնդակ, եթէ օգուտք այնպիսիք վաճառեցան և ժողովք և հարկք, այլ գժնդակագոյն քան զայն երևեսցի ձեզ զոր յասել կամ։ Զի Կալլիաս քալկեսացի յայն չափ ամբարտաւանութեան և ապահովութեան եհաս, և Դիմոսթենէս՝ գովելոյ 'ի Կոստանդին՝ յայն կաշառակրծութիւն, մինչև զհարկն Որէոսի և Երետրիոյ՝ զտասն տաղանդսն, ձերով իսկ տեսանելով և խմանալով և հայելով, գաղտագողն բառնալ 'ի միջոյ, և զերեսփոխանս քաղաքացն այնոցիկ հանեալ 'ի ձէնջ՝ անդրէն 'ի Քալկիս և յեւբիականն անուանեալ ժողով գումարել[57]։ Իսկ թէ ոչպէս և որով խորամանգութեամբք, զայդ այժմ արժան է ասել։

Քանզի հասեալ առ։ ձեզ, ոչ ևս 'ի ձեռն հրեշտակացն, այլ ինքնին իւրով անձամբն Կալլիաս, և եկեալ 'ի ժողով ժողովրդեանն՝ խօսեցաւ բանս 'ի Դիմոսթենեայ յօրի-

Digitized by Google

նեալս ։ Զի ասէր զանձնէ 'ի Պելոպոնեսեայ եկեալ, նորոգ հրաման տուեալ աշխարհին՝ հանել հարկս հարթեր տաղանդաւ չափ 'ի կուիսն ընդդէմ Փիլիպպոսի. և 'ի համար եւս արկանէր՝ որչափ ինչ պարտն էր միում միում հանգանակել. աքայեցւոց և մեգարացւոց համօրէն՝ վաթսուն տաղանդ, և որոց յԵւբիա քաղաքաց առ հասարակ՝ քառասուն. և 'ի գանձէ անտի զօրաժողով լինել ընդ ծով և ընդ ցամաք. և թէ՝ էին այլ ևս բազում քաղաք հելլենացւոց՝ յօժարեալք 'ի բաժանորդ լինել հարկատուութեանն, մինչ զի ոչ ինչ չքաւորել՝ ոչ արծաթով և ոչ ամբոխիւ ։ Եւ այսքիկ մերկապարանոցք. բայց ասէր և այլ ինչ իրս գործել 'ի ծածուկ, և վկայս այնոցիկ լինել զոմանս 'ի մերոց ասսի քաղաքացւոց. և 'ի վախճանել խօսիցն՝ յականէ յանուանէ 'ի մէջ կոչէր զԴիմոսթենէս, և աղաչէր պատասպարան լինել։

Իսկ դորա յառաջ մատուցեալ պարկեշտականնազանգ՝ 'ի գովութիւն առնոյր զԿալլիաս, և պատճառէր գիտել ըզգաղանիսն, և կամել ասէր պատմել ձեզ զհրեշտակութիւնն յոր ջոգաւ 'ի Պելոպոնէս [38] և յԱքառնանիա ։ Եւ բանից գլուխ խօսից նորա այս էր, թէ զամենայն պելոպոնեսացիս և զակառնանացիս ինքն 'ի հարկի կացուցեալ էր ընդդէմ Փիլիպպոսի, և հրամայեալ սակ արծաթոյն՝ էր 'ի լուսին բովանդակութեան սրարշաւ նաւաց հարիւրոց, և բիւրուց հետևակամարտ զօրաց և հազար հեծելոց. և թէ՝ յայդոսիկ յաւելուցուն գունդք պետութեանցն, 'ի Պելոպոնիսէ աւելի քան զերկու հազար ապառազէն, և յԱքառնանիոյ այլ ևս նոյնչափ. և այսր ամենայնի սպարապետութիւն տացի 'ի ձեռս ձեր. և այդ ամենայն բովանդակեցի ոչ ա-նոգան քան զվեշտասան ամսոյն Անթեստերիոնի. զի քաղոզեալ և պատուիրեալ էր յիւրմէ քաղաքի քաղաքի, դալ ամենեցուն ժողովել 'ի խորհուրդ յԱթէնս 'ի լուսին լուանի։ Զի այրդ այդ զիւրն ևեթ գործէ, և ոչ զհասարակացն. զի այլ ամբարհաւաճք յորժամ սուտ ինչ խօսիցին, անյայտս և անհաստատս հնարին ասել, կասկածեալ թէ գուցէ փա-

Digitized by Google

շամանն ինչ կրեացեն. իսկ Դիմոսթենէս յամբարտաւանելն՝ նախ երգմամբ ասէ՝ զանձն 'ի մահ նզովելով, և ապա՝ զոր ինչ քաջ գիտէ թէ չէ լինելոց՝ յանդգնի ասել, համար ևս առնելով թէ երբ լինիցի. և զորոց զդէմն տեսեալ իւր չէք՝ զնոցա անուանն ասէ, գովացեալ զունկնդրութիւն և զբաստուքաբանից առեալ կերպարանս։ Վասն որոյ և յոյժ արժանի ատելութեան է. զի որ ինքն չարն է՝ զլաւացն գրոշմս զեղծանէ։ Զայդոսիկ բարբառեալ՝ ասայ գոլրին ընթեռնուլ վճիռ մի երկայն քան զԻլիականն, և ունայն քան զՇառան զոր սովորն է խօսել, և քան զվարս կենաց իւրոց, բայց լի անլինելի յուսով, և բանակոք՝ որոց չէք ուրեք երբեք խօսեալ։ Եւ զբաղեցուցեալ զձեզ բացէ 'ի բաց արտաքոյ խաբեկանացն, և յուսով զբաստեցուցեալ, անդ ապա ուշ 'ի կուրծս յինքն գալարեալ՝ գիր հանէ հրամանի, ընտրել և առնել հրեշտակս յԵրեւարիա, զի երթեալ աղաչեսցեն զԵւտրիացիս, — զի և պարտ իսկ էր աղաչել զնոսա, — մի՛ ևս ձեզ տալ զՀարկն՝ զՀինգ տաղանդն, այլ Կալիլիասայ. և կրկնել ընտրել այլ ևս հրեշտակս յՈրէոս առ որէոսացիսն, զի աղաչեսցեն՝ զնոցնս հաստարակ ընդ աթենացիս բարեկամս և թշնամիս համարել։ Եւ ապա 'ի վերոյ ամենայնի, 'ի հրամանի անդ երեւի ընդ խաբանան յաւելեալ գրեալ, աղաչել հրեշտակաց զորէոսացիսն, ոչ ձեզ՝ այլ Կալիլիասայ տալ զՀինգ տաղանդն։

Եւ թէ Ճշմարիտ իցեն ասացեալքս, թողեալ 'ի բաց զպոռոտող Ճոռոմն և զպատերազմիկ նաւն և զՀպարտ ամբարտաւանութիւնն, ա՛ռ 'ի ձեռս ընթերցիր զպատիր խաբէութիւնն՝ զոր քոզատեղեաց այլն պիծ և անօրէն, զորմէ Կաւեսիփոն և 'ի գրի ատ յայսմիկ հրամանին ասէ միշտ յոգատակարգոյնս ժողովրդեանն աթենացւոց բանիւք և արդեամբք անգութ Ջանացեալ։

ՀՐԱՄԱՆ

Լուսաւոր դուք ապաքէն բանիւ զնաւատորմն, և զհեաւակախումբ գուսանարուսական, և զլուսնին լուսոն [80] և զժողովոյն ակումբս, բայց զբաժս նիզակակցացն հարկաց կորուսէք արդեսմիք։

Մնայ ինձ ասել, թէ տաղանդս երիս վարձս առեալ Դիմոսթենի՝ այնպէս զհրամանն զայն գրեաց. տաղանդ մի 'ի Քալկիսէ 'ի ձեռն Կալլիասայ, տաղանդ մի յԵրետրիոյ 'ի ձեռն Կլիտարքոսի [60] բռնաւորին, և տաղանդ մի յՈրէոսէ՝ որով և նշանակեցաւ խակ. վասն զի որէոսացիք՝ ընկերահաշտեաց վարին, և զամենայն ինչ 'ի հասարակ կամաց հաւանութենէ վճարեն։ Քանզի ծախեալք ապառեալք 'ի պատերազմին ընդ Փիլիպպեայ, և 'ի տոգնոյ տարակուսի մնեալք, սուրբն առ գա զԳնոսիդեմոս, զՔարիդեմի որդին՝ իշխանին կացելոյ երբեմն յՈրէոս, աղաչել զգա՝ Թողուլ քաղաքին խրեանց զտաղանդն, և խոստանալ կանգնել նմա պատկեր պղնձի յՈրէոս։ Իսկ գա եաս պատասխանի Գնոսիդեմայ, չունել ինչ պէտս փոքու խմբի պղնձոյ, այլ զտուզանդն պահանջել 'ի ձեռն Կալլիասայ։ Բռնագատեալ որէոսացւոց և անձեռնհաս գտեալ, գրաւականեցին նմա փոխանակ ընդ տաղանդոյն զհասս պետութեանն, և ածին Դիմոսթենի կաշառառութեանն ամսոյ ամսոյ վաչխ՝ մի մի գրամ առ մնաս մնաս, մինչև հատուցին զգլուխն։ Եւ գործեցաւ այդ 'ի հասարակաց ժողովրդեանն հրամանէ։

Եւ թէ արդարս ասեմ, առ ինձ զգիր հրամանին որէոսացւոց։

ԳԻՐ ՀՐԱՄԱՆԻ ՈՐԷՈՍԱՑԻՈՑ

Այդ սովորական է հրամանն, ով արք աթենացիք, քաղաքիս ամոթ, կշտամբանք ոչ փոքր՝ Դիմոսթենի քաղաքա-

Digitized by Google

վարութեանցն, և յայտ յանդիման ամբաստանութիւն զԿտեսիփոնէ. զի այսպիսում զշնչաքաղ կաշառաւորուի չէք այր բարի լինել, որպէս իշխեաց սա գրել 'ի հրամանին։

Ասա յայսմ վայրի է տեղի երրորդ ժամանակին, դառնագունին քան զամենայն ժամանակ, յորում կորոյս Դիմոսթենէս զիրս քաղաքիս և զհելլենացւոց՝ ամպարշտութեամբն զոր անօրինեցաւ 'ի դէլփական մեհեան անդր, և հրամանն տալով զանիրաւ և զանարդար նիզակակցութիւնն ընդ Թեբացիս։ Սկիզբն 'ի նորա առ աստուածն յանցաւորութեանց արարից ասել։

Կայ, ով արք աթենացիք, Կիրբայինն անուանեալ դաշտագետին, և Նաւահանգիստն՝ որ այժմ անիծեալ և նզովեալն կոչի։ Էր երբեմն զի 'ի տեղւոջն յայնմիկ բնակեցին կիրբացիք և ակրագալեանք [61], ազգք քան զբնաւս անօրէնք, ամպարիշտք առ դէլփական մեհեանն և առ դահամունսն, և յԱմփիկտիոնն [62] մեղանչականք։ Զայրացեալ ընդ իրսն, մանաւանդ նախնեացն ձերոց, որպէս ասին, զկնի ապա և այլոցն Ամփիկտիոնաց, հարցին պատգամ յաստուածոյն, որով արժան իցէ պատժով պատուհասել զարսն։ Հրաման պատասխանուցոյ առնէ Պիւթիա. Պատերազմ տալ ընդ կիրբացիսն և ակրագալեանս զամենայն սիւ և զամենայն գիշեր, և զերկիր նոցա աւար հարեալ և դերի վարեալ զնոսա՝ նուիրել պիւթեան Ապոլոնի և Արտեմեայ և Լետովայ և խնամոցն Աթենասայ [63], խոպան անվար լինել 'ի ապառ, և զվայրն զայն ոչ նոցա ակօսաբեկ առնել, և ոչ այլում թոյլ տալ։ Ընկալեալ Ամփիկտիոնաց զպատգամն, հրաման ետուն խորհրդով Սոլոնի աթենացւոյ՝ առն հզօրի յօրէնսդրութիւն, և գեղեցելոյ 'ի քերդութիւն և յիմաստասիրութիւն, զօրաժողով լինել 'ի վերայ նզովելոցն ըստ աստուածեղէն պատգամին։ Եւ գումարտ խմբեալ զօր բազում զԱմփիկտիոնացն՝ 'ի ծառայութիւն վարեցին զորեարն, լեր արկին խցին զնաւակայն, զքաղաք նոցա հիմն 'ի վեր բրեցին, և զերկիրն սրբեալ նուիրեցին ըստ

Digitized by Google

պատասխանատոյ հրամանին։ Եւ 'ի վերայ այնր ամենայնի երդուան երդումն անյեղլի, մի ինքեանց հերկս յերկիրն սուրբ հարկանել, և մի այլոյ մոմք թոյլ տալ, այլ օգնական լինել աստուածոյն և նուիրական գեռնոյն ձեռաք և ոտիք և ամենայն զօրութեամբ։ Եւ ոչ հերիք եղև նոցա զերդումն զայն կռել և թ, այլ և նզովս և անէծս սաստիկ յաւելին 'ի վերայ։ Զի այսպէս գրեալ կայ յանէծսն. « Եթէ ոք, ասէ, անցանիցէ զայսոքիւք, կամ քաղաք, կամ սոսկական ոք, կամ ազգ, նզովեալ լիցի Յապոլոնէ և Յարտեմայ և 'ի Լետովայ և 'ի խնամողն Աթենասայ։ » Եւ անէծս կարդայ նոցա, մի երկրին պտղաբերել, մի կանանց մանկունս ծնանել՝ նմանս ծնողացն, այլ Հիւսաղս, և մի երեքց ըստ բնութեան զուակադործել. պարտութիւն 'ի պատերազմունս և 'ի դատաստանս և յատեանս, և անէանց նոցա կորուստ՝ և տանց նոցա և տոհմի։ « Եւ մի երբեք, ասէ, սրբութեամբ զոհեսցեն Ապոլոնի, մի Արտեմայ, մի Լետովայ և մի խնամողին Աթենասայ, և մի նուէրք նոցա լիցին ընդունելի։ »

Եւ թէ Հիմարիա ասեմ, ընթերցիր զպատգամն աստուածոյն։ Ո՛ւնկն գիք անիծիցն, յիշեցէք զերդմնիսն զոր նախնիքն ձեր ընդ Ամփիկտիոնն արարին։.

ՊԱՏԳԱՄՆ

« Ոչ քերդի քաղաքիս հասու եղեալ կործանեալիք,
Մինչև ալիք կապուտակն Ամփիտրիտայ զանգս աստուածոյն՝
Յոփունսն մանկելով 'ի սրբանուէրս՝ ողողեսցեն։ »

ԵՐԴՄՈՒՆՔ. ԱՆԷՍՔ

Մինչ դեռ սակաւին անէնքդ այդ և երդմունք և տուեալ հրաման պատասխանատոյն արձանացեալ կային, և կան և մինչև յայժմ, Լոկրացիք Ամփիսայ [64], մանաւանդ վերա-

կացուք նոցին, արք քան զամենեսին օրինաւորագոյնք, արօրագիր զգաշան արարին, և զնղովեալ և զանիծապարտ նաւահանգիստն պարսպեալ վերստին՝ խոնեցան անդ 'ի բնակութիւն, և ժողովեցին բաժա 'ի նաւելոցն անդր, և յերթելոցն անդր 'ի դարասանից կաշառաբեկ զոմանս արարին, յորոց մի էր Դիմոսթենէսդ։ Զի դարասան առ 'ի ձէնչ ընտրեալ, առնու գրամս հաղար յամիխացւոց՝ չառնել և ոչ մի ինչ յիշատակ զնոցանէ յԱմիխիսոնն։ Խոստացան նմա և առ յապա ժամանակ առաքել նմա յԱթէնս ամի ամի քան մնաս յանիծեալ և 'ի նզովեալ ստացուածոց անտի, զի ամիխացւոց զօրավիգն լեցի յԱթէնս ամենայն իրաք։ Ուստի և առաւել քան զոր յառաջն՝ եհաս նմա անուժչկութեան հարուածովք պաշարել զամենեսին յոր և հուսն մատչէր միանգամ, թէ յայր սոսկական, թէ յիշխան, թէ 'ի քաղաք ընկերահաշտ։

Բայց ամպարշտութեանն ամիխացւոց տեսեալ քանիսն յաղթող գտաւ աստուած և բախան։ Զի առ խշանաւն Թէոփրաստեաւ, մինչդեռ աւանդապահն էր Դիոգնետոս անապիլիատացի, ընտրեցէք գուք գարասանս զՄիդիան զայն անագիրասեցի՝ որում կենդանի լինել ցանկալի էր մեզ 'ի բազում գլխոց, և զԹրասիկլէս խոնացի, և երրորդ ընդ նոսա զնա։ Ընդ հասանել մեր 'ի Դելփիս՝ դէպ եղև նոյն հետայն Դիոգնետեայ աւանդապահին տենդիւ ջերանալ. նոյնպէս էր դիպեալ և Միդեայ [65]։ Իսկ այլ Ամիխիսոնք կային ակմբեալ։ Իսկ որ զմոերմութիւն ընդ քաղաքիս յայտ առնել կամէին, ազգ եղև մեզ 'ի նոցանէ, զի ամիսացիքն նկուն եղեալ յայնժամ, և չարաչար 'ի սպասահարկութիւն մտեալ թեբացւոցն, հանէին հրամանն հակառակ քաղաքիդ ձերոյ, տուգանս տաղանդաց հնգից արկանել ժողովրդեանն աթենացւոց. վասն զի ասպարս ոսկիս նուէր կախեցեալ 'ի նոր տաճարին [66] մինչ չև էր սրբեալ, և զայս ըստ կարգի գրեցաք 'ի վերայ. « Աթենացիք 'ի Մարաց [67] և 'ի Թեբացւոց [68], 'ի կուռել նոցա ընդդէմ Հելլենաց։ »

Digitized by Google

Կոչեցեալ զիս աւանդապահին՝ ապաչէր երթալ'ի Ժողովն և ասել ինչ առ Ամփիկիսոնան վասն քաղաքիս. զոր և իմ իսկ միաբ խնդրէին յառաջագոյն։ Յօժարագոյնս մնացեալ իմ 'ի Ժողովն, ոչ ուրուք յայլոց դարձանելոց 'ի միջի լինելով, երբև խօսիցս սկիզբն արարի, ամփիսացի ոմն անդուստ զաղաղակ բարձեալ, այր քան զբնաւս ստամբակ, և որպէս ինձ թուէր՝ ոչ միով իւիք խրատու վայելեալ, թերևս և դիւ ուրուք դրդեալ զնա 'ի զառանցանս, « Խակզբանէ իսկ, ասէ, ո՛վ արք հելլենացիք, եթէ զդաստ էիք, և ոչ անուն Ժողովրդեան աթենացւոց անուանէր յաւուրս յայսոսիկ, այլ իբրև զնզովս հերքէին 'ի մեհենէն։ » Մինչդամայն և յուշ առնէր զիովկիսացւոցն նիզակակցութիւն՝ զոր Կրովբիլոն [69] այն գրեաց. և այլ ինչ բազում և գժընդակ 'ի հեշտուկս քաղաքիս 'ի համար արկանէր, խօսելով զոր ոչ յայնժամ ժուժկալէի լսել, և ոչ զարդիս հեշտաբար ինչ ընդ միտ ածեմ։

Զոր իմ լուեալ՝ այնպէս իմն արամտեցայ, որպէս ոչ բնաւ երբեք 'ի կեանս իմ։ Զանց զայլով բանիւքս արարեալ, զի 'ի միաս իմ ելեն յիշեցուցանել զամփիսացւոցն ամպարշտութիւն 'ի սուրբ երկիրն, և անդուստ յանկելեալ անաի ցուցանել Ամփիկիսոնացն, — զի դաշան կիրբայեն ընդ մեհենիսն կայ դէմ յանդիման. — « Ցեսանէք, ասեմ, ո՛վ արք Ամփիկիսոնք, զդաշագ զայդ գործեալ յամփիսացւոց, և տունս բրտի և հանդրուանս շինեալ 'ի նմա. տեսանէք ձերովք աչօքդ զնզովեալ և զանիծեալ նաւահանգիստն կառուցեալ. դուք ձեզէն գիտէք անկարօտ այլոց վկայից, զի հարկս հանին դուքս և Ժողովեցին արծաթ 'ի սրբանոցէր նաւահանգստէն։ » Առ սմին ետուս նոցա ընթերնուլ զպատգամն աստուածոյն, զնախնեացն երդումն և զկարգացեալ անէծքն. և կնքեալ յայտ արարի, թէ ես 'ի վերայ Ժողովրդեանն աթենացւոց և գլխոյս խոյ և որգւոցս և տանս հասից ըստ երդմանն յօգնութիւն աստուածոյն և երկրին սրբութեան՝ ձեռօք և ոտիւք և ձայնիւ և ամենայնիւ արով

և կարօղ ինչ իցեմ իւնք, և զքաղաքն մեր քաւեցից առ 'ի դիցն։ « Արդ դուք ձեզէն վասն ձեր խորհեցարուք։ Սկիզբն առին խանքն սրբութեան [70], զենելիքն կան առ բանդոք, զբարիս հասարակաց և զանձանց հանդերձեալ էք ինդրել 'ի դից։ Տեսէք ազէ՝ որով ձայնիւ, որով հոգւով, որով երեսաք, զոր համարձակութիւն առեալ՝ զինդրուածդ առնիցէք, անպատուհաս զոսա թողեալ զնղովեալս և զանիծապարտս։ Զի ոչ եթէ առակաք ինչ օրինակաց, այլ պարզ գրեալ կայ յանէծսն 'ի գլուխս ամպարշտացն և որոց թոյլն տայցեն՝ զոր ինչ արժանն իցէ նոցա կրեալ պատիժս. և 'ի կատարած կոյս նղովիցն կայ գրեալ. Որ ոչն, ասէ, պատուհասեսցեն՝ մի սրբութեամբ զոհեսցեն Ապոլոնի, մի Արտեմեայ, մի Լետոյայ և մի խնամողին Աթենասայ, և մի զոհք նոցա լիցին ընդունելի։ »

Իբրև զայսպիսիս և այլ ինչ բազում առ սոքօք 'ի Ճառարկեալ իմ՝ մեկնեցայ և 'ի բաց ելի յատենէ անտի, բազում աղաղակ և աղմուկ լինէր Ամփիկոնեանցն, և ոչ ևս բանք էին զվահանացն 'ի մէնջ նուիրելոց, այլ զամիսացուցն պատուհասն։ Իսկ 'ի տարաժամեալ աւուրն՝ մատուցեալ քարոզն ասէ. « Որ միանգամ 'ի Դելֆիս երկեմենիք ըստ արբունս ելեալքն իցեն [71], ծառայ՝ թէ ազատ, եկեսցեն հասցեն ընդ այգանալ աչալրջոցն, առեալ գերանդիս և փայտասս, 'ի Ջենարանն [72] անդր անուանեալ վայր։ » Եւ նոյն քարոզ կարդաց դարձեալ, աւանդապահաց և դարբասանից գալ ժողովել 'ի նոյն տեղի յօգնականութիւն աստուածոյն և նուիրական երկրին. « Եւ քաղաք որ ոչ անդ գտանիցի, հեղբեսցի 'ի մեհենէն և 'ի նղովս և յանէծս եղիցի։ »

Ի վաղիւ անդր ընդ առաւօտն խաղացաք գնացաք 'ի նկատեալ տեղին, ինչաք 'ի կիրրային դաշտավայրն, և զնաւահանգիստն հիմն 'ի վեր բրեալ, և հրձիգ արարեալ զբնակարանն, դարձաք անդրէն։ Մինչդեռ մեք զայնու էաք, ամփիսեան Լոկրացիք՝ վաթսուն վտանաւ հեռի 'ի Դելֆիս

բնակեալք, եկին հասին միախուռն զինեալք 'ի մեր վերայ. և թէ չէր արշաւակի հաղիւ հաղ փախստեայ 'ի Դելֆիա անկեալ, սատակման 'ի վերայ կայր մեր վտանգ։

Ի վաղորդեան աւուրն Կոտոխիոս [73], որ հարց և քնին առնէր խորհրդոց, արար հանդէս Ամֆիկտիոնաց. զի հանդէս անուանեն՝ յորժամ ոք ոչ միայն զդարատանն և զաւանգապահն կոչեցէ 'ի մի վայր, այլ և զորս 'ի միասին զոհեն և հարցանեն պատգամ յաստուածոյն։ Արդ՝ բազում դատախազք լինէին յայնժամ զամֆիսացւոցն, և գովութիւն շատ մերոյ քաղաքիս։ Եւ կնիք ամենայն խօսից, հրաման առնեն աւանդապահացն՝ 'ի կէս եդեալ ժամու յառաջ քան զյաջորդ ժողովն դալ հասանել 'ի Դրունն, առեալ ածեալ զվճիռն՝ ըստ որում դատաստան տալոց եղեն. ամֆիսացիք զմեղայն առ աստուածն, առ երկիրն սուրբ և առ Ամֆիկտիոնան։

Եւ թէ զստուգութիւն պատմեմ, ընթերցող ձեզ դպրապետն զհրամանն։

ՀՐԱՄԱՆ

Զվճիռդ զայդ մատուցեալ մեր առ ատեանն խորհրդոյ, և դարձեալ 'ի ժողովն առ ժողովուրդն, հաճեցաւ ժողովուրդն ընդ գործս մեր, և քաղաքս համարէին բարեպարիշտ զայնս դատեցաւ։ Իսկ Դիմոսթենէսի՝ 'ի պատճառս ամֆիսացւոցն դաղտորսակ խոստման՝ հակառակ ընդդիմաբանեալ, և իմ յայտ յանդիման առայլի ձեր նշանակեալ զնա, թերև ոչ ևս կարէր այրդ յիրացն յայանութենէ զեկծուցանել զքաղաքս, մնեալ այնուհետև 'ի խորհրդարանն և 'ի բաց տարեալ զսոսկականն՝ հանէ առ ժողովուրդն հրաման մի, պատրեալ զանհմտութիւն դրողին. և զնոյն զայն 'ի ժողովի անդ խորամանգեաց հատատել և լինել վճիռ կամաց ժողովրդեան, մինչ դեռ յարուցեալ էր ժողովն և

Digitized by Google

ես ինքն մեկնեալ, — զի բնաւ չասայն Թոյլ, — և բաղումք 'ի բաց գնացեալ։ Որոյ համառօտն այս ինչ է հրամանին. « Աւանդապահն աթենացւոց, ասէ, և գարասանք՝ որ հանապազորդ գարասանքն իցեն, երթիցեն 'ի Դրուսնն և 'ի Դելփիս՝ 'ի ժամանակս կարդեալս առ 'ի նախնեաց։ Կարի վայելուչ ըստ ձայնիցն, այլ արդեամբք՝ ամենայնի. զի խափան լինի ժամանելոյ 'ի գումարումն անդր Դրանցն, որ հարկաւ յառաջ քան զորինաւոր ժամանակն ունէր լինել։ Եւ գարձեալ 'ի նմին վճռի առաւել ինչ հաւաստի և գաժանագոյն յաւելեալ գրէ. « Աթենացւոցն, ասէ, աւանդապահ և գարասանք՝ որ հանապազորդեան գարասանքն իցեն՝ մի՛ կցորդ լինիցին անդամոր գումարելոյն, մի՛ բանից, մի՛ գործոց, մի՛ հրովարտակաց և մի՛ բնաւ ինչ իրիք իրաց։ » Եւ մի՛ բնաւ հուն լինել զի՞նչ իցէ։ Զշնամարիան ասացեալ արդեաք, եթէ զհեշտալուրն։ Ասացեալ զշնամարիան. զի հեշտալին ցանգ խօսեցեալ՝ յայս տեղի հասոյց զքաղաքս։ Զտայ Թոյլ յիշել զերգմունն զոր նախահարքն մեր երդուան, և ոչ զանեծն և ոչ զհրամանն պատասխանւոյ աստուածոյն։

Եւ արդ մեք, ո՛վ արք աթենացիք, ըստ հրամանիդ ըստ այդմիկ կացաք մնացաք. իսկ այլ Ամիֆիկտիոնք ժողովեցան 'ի Դրուսնն, բայց միայն 'ի մոյ քաղաքէ [7] զորոյ ես զանուանն չասայ լեզուիս, և մի՛ այլում ումեք 'ի հելլենացւոց հացեն հարուածք նորա։ Եւ դումարեալ՝ վճիռ արարին զօրախաղաց լինել 'ի վերայ ամիֆիսացւոց, և սպառապես ընտրեցին զՍոսանիփոս փարսալացի՝ այն որ զիսորհրդոյն կամաց զհարցուփորձ արարեալն էր, մինչ դեռ չէր Փիլիպպոս 'ի տան իւրում 'ի Մակեդոնիա, և ոչ յԵլլադա մտ, այլ 'ի Սկիւթս անդր յոյժ բացական. զոր իսկ և իսկ ժարհեացն ասել Դիմոսթենէս, թէ իմ գրդեալ ածեալ է 'ի վերայ հելլենացւոց։ Եւ խաղացեալ գնացեալ նոցա յառաջնում ասպատակին՝ չափաւորապէս յոյժ վրեցան ընդ ամիֆիսացին։ Զի փոխանակ մեծամեծ անիրաւութեանցն ընչից չափ ևեթ տուժեցին զնոսա, և ժա-

Digitized by Google

մանակակիցս և յայտ արարին հաստատանելոյ զայն աստուածոյն, և զնզովեալսն և զերբացն եղելոց պատճառս հաստատեալ՝ զվասն կրօնասիրութեան վասրանդեալսն գործուցին անդրէն։ Իսկ իբրև ոչ զարծանիցն եռուն 'ի գոտս աստուածոյն, և զանիծեալսն անդրէն գործուցին, և զբարեպաշտոնսն որ 'ի ձեռն Ամիկիկոնացոյ էին գործեալ եկեալ՝ մերժեցին հանին 'ի բաց, ապա այնուհետև զերկրորդ պատերազմն եռուն ընդ ամիկիսացիսն յետ հարուստ մի ժամանակի, մինչ գործ արարեալ հասեալ կայր Փիլիպպոս 'ի սկիզբեանն արշաւանէն [75]. աստուածոյն պարգևելով մեզ զաստիճանդութիւն բարեպաշտութեան, իսկ Դիմոթեոսի կաշառակրծութեանն՝ խոչ ընդ ոսն մեզ լինելով։

Ո՞չ ապաքէն կանխապէսկոյց լեալ ապդ մեզ առնէին զիքն զգայոյ լինել, բայց միայն մարդկեղէն և եթէ չարձակեալ բարբառ։ Իմ չիք ուրեք տեսեալ երբեք քաղաք առաւել պահպանեալ 'ի գից, և 'ի Ճարտարախօսաց ոմանց մատնեալ 'ի կորուստ։ Մինեթ չէր ինչ բաւական 'ի զգուշութիւն երևեալն 'ի Խորհուրդս նշան, նորընծայ նաւիրեալոցն վասնման մահու [76]։ Ո՞չ ապաքէն այսոցիկ նախաքարոզ լինէր Ամենիազս զգուշանալ, և առաքել 'ի Դելֆիս հարցանել զաստուածն՝ զինչ պարտ իցէ առնել. և ոչ ընդդիմախօսէր Դիմոսթենէս, ասել՝ թէ Փիլիպպոս [77] Զիւթիս, այրդ այդ անխրատ՝ վայելեալ և զմայլեալ խշխանութեամբն 'ի ձէնջ ընդունելով։ Ո՞չ ապաքէն հուսկ ուրեմն [78], մինչդեռ անտանէր և անհաճոյ զոհքն էին, առեալ արձակեաց զզօրականն 'ի յայսմանի վասնդ։ Եւ սակայն տուղ ինչ յառաջ իշխեաց ասել, յայն սակս ոչ ասպատակ տուեալ և միջամուխ լեալ Փիլիպպէայ յերկիրք մեր, վասն զի զոհքն չէին նմա բարենշանք։ Իսկ արդ որմ՞ պատժի իցես դու արժանի, մեղանչականդ Եվլիպայ։ Զի եթէ յաղթեցն 'ի պարտեալսն աշխարհ ոչ եմուտ՝ վասն ոչ նմա բարեդուշակ եղելոյ զոհիցն, և քո ոչինչ նախատես եղեալ հանդերձելոցն լինելոյ, մինչ չև ընդունելի լեալ զոհից՝ յուշաբերեցեր զբանական, մինչ

պակէ՞լ ինչ զքեզ արժան իցէ 'ի վերայ Թշուառութեանց քաղաքիս, եթէ տարագիր ըստ աշխարհ հանել։

Քանզի զի՞նչ անակնկալ և անկարծելի որ առ մեզք չկատարեցաւ. զի ոչ կեանս կեցաք մեք զմարդոյ, այլ 'ի նորոբինակ զրոյցս զկնեացն մերոց ծնաք։ Ո՞չ ապաքէն Պարսից Թագաւորն, որ զԱԹոս եհերձ, որ զՀելլեսպոնտոս կամրջեաց, որ հող և ջուր 'ի հելլենացւոց խնդրէր, որ յանդգնէր գրել 'ի հրովարտակս իւր՝ թէ տեր իցէ ամենայն մարդկան յելիցն արևու մինչև 'ի մուտս, այժմ ոչ վասն աշխարհակալութեան պատերազմի, այլ իւրոյ գլխոյն փրկութեան [79]։ Եւ փառացս այսմիկ, և ընդդէմ պարսկայնոյն զօրավարութեան՝ ո՞չ զնոսա տեսանելոք արժանացեալս, որ զդէլփական մեհեանն հանին յաղատութիւն։ Եւ թերեւ ինքնին, թերեւ քաղաք մատաւոր, ո՞չ 'ի միումբ աւուր յափշտակեալ խլեցաւ 'ի միջոց Եղլադայ. թէպէտ և արդարապէս, զի ոչ ուղիղ խորհեալք զբոլորից. իսկ զարկածն և զխեղաբարութիւն ոչ մարդկօրէն, այլ յաստուածուստ կրեալք։ Իսկ Թշուառական լակեդեմոնացիք՝ ձեռն ևԵթ մեեալք իսկզբանէ յիրս աւարառութեան մեհենին [80], որ ինդրէին երբեմն զգլխաւորութիւն հելլենացւոց, այժմ առ Ալէքսանդր են առաքելոց [81] կալ 'ի պատանդի և ցոյցս առնել զալէտս իւրեանց, և անձանց իւրեանց և հայրենի աշխարհին զայն ամենայն չարչարել՝ որ ինչ միանգամ նմա հաճոյ Թուեսցի, և իրաւանց ակն ունել 'ի չափաւորութենէ յաղթողին, առ որ ինքեանք նախ գոեալ են վնասակար։ Իսկ քաղաքս մեր, հասարակաց հելլենացւոցն ապաւէն, յոր գային ժողովէին յառաջագոյն Եղլադայ հրեշտակութիւնք, իւրաքանչիւր ըստ քաղաքի քաղաքի զփրկութիւն գտանել 'ի մէջ, զարդիս ոչ ևս զհելլենացւոցն իշխանապետութենէ ոգորի, այլ զհայրենի յատակէն [82]։

Եւ այս ամենայն հասին մեզ յորմէ հետէ 'ի վարչութիւն քաղաքիս եկն եւ Դիմոսթենէս։ Զի բարւոք հատանէ զայդպիսեաց վճիռ հեսիոդոսն քերդող։ Քանզի ասէ ու-

Digitized by Google

ՐԷՔ [85] 'Ի ԽՐԱՏ ԺՈՂՈՎՐԴՈՑ ԵՒ 'Ի ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԻՒՆ ՔԱ-
ՂԱՔԱՑ, ՁԼԱՐԱ 'Ի ՌԱՄԿԱՎԱՐԱՑ ՄԻ ԸՆԴՈՒՆԵԼ։ Այլ ԵՒ Ա-
ՂՈՒՆՆ ԻՍԿ ԱՍԱՑԻՑ. ԶԻ ՅԱՅՆ ԿԱՐԾԵՄ ՍԱԿԱ ՈՒԱՆԵԼ ՄԵՂ
'Ի ՄՆԿՈՒԹԵՆԷ ՁՔԵՐԴՈՂԱՅՆ ՀԱՆՃԱՐ, ԶԻ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՀԱ-
ՍԱԿԻՆ ԱՌՑՈՒՔ 'Ի ԱԿԷՍ։

Եւ քաղում անգամ ողջոյն սուժի քաղաք յառնէ չարէ
Որ ապիրատն երևեալ որոճայցէ ոճիր ազգնս.
Զբրուանեանն առ նոսա շարժեալ յերկնից ոսոգայ հարուած,
Սով հմայն և սրածութիւն, և ժողովուրդք վատնեալ սպառին.
Կամ նա զլոյն նոցին բանակ կորուսանէ կամ ըզպարիսպ,
Կամ զնաւս յանդունդս Արամազդ ահեղամուռնչ պատուհասէ։

ԵԹԷ ՁԱՓԱՍ ՈՍԿԻ ՔԵՐԴՈՂԷՆ ՔԱՂՔԱՅԵԱԼ՝ ԶՄԻՍՈՆ ԿՐԿ-
ԿԻՆԷՔ, ԿԱՐԾԵՄ ԹԷ ՈՉ ՀԵՍԽՈՂԵԱՅ ԹՈՒԼՑԷՆ ՁԵՂ ՔԵՐ-
ԴԱԾՔ, ԱՅԼ ՊԱՏԱՂԱՄ ՁՈՒԵՍՉՈՒԹԵՆԷՆ ԴԻՄՈՍԹԵՆԷ. ԶԻ ԵՒ
ՆԱԽԱՏՈՒԱԿԱՆՆ ՄԵՐ, ԵՒ ՀԵՏԵԱԿԱԽՈՒՄԲ ԶԻՆՈՒՈՐՈՒԹԻՒՆ,
ԵՒ ՔԱՂԱՔՔ ՄԻԱՆԳԱՄԱՅՆ ՍՊԱՌԱՊՈՒՈՒ ՅԱՓՇՏԱԿԵԱԼ ՎԱՆ-
ԴԵՑԱՆ 'Ի ԳՈՐԱ ՔԱՂԱՔԱՎԱՐՈՒԹԵՆԷՆ։

Այլ ԻՆՁ ԹՈՒԼ, ՈՉ ՓՐԻՆՈՆԴԱՍ, ՈՉ ԵՒՐԻՔԱՍՈՍ [84], ԵՒ
ՈՉ ԱՅԼՈՔ ԵՐԲԷՔ 'Ի ՎԱՆԿՈՒՑՆ ՀԱՐԱՑ՝ ԱՅՍՊԻՍԻ ԵՐԵՒԵԱԼ ԿԱ-
ԽԱՐԴ ԵՒ ԽԱԲԵԱՅ, ՈՐ, — ՈՎ ԵՐԿԻՐ ԵՒ ԳԻՔ ԵՒ ՔԱՂՔ ԵՒ
ՄԱՐԴԻԿ՝ ՈՐՈՑ ԿԱՄՔ ԻՄԵՆ ԼՍԵԼ ԶՀՇՄԱՐՍՈՒԹԻՒՆ, — ՈՐ ԳԷՄ
ՅԱՆԴԻՄԱՆ ՅԵՐԵՍՍ ՁԵՐ ՅԱՆԴՁՆԻ ԱՍԵԼ, ԹԷ ԹԵԲԱՅԼՔ՝ ՈՉ
ՅԵՐԵՍԱՑ ՀԱՆԴԱՄԱՆԱՑ ԺԱՄԱՆԱԿԻՆ, ՈՉ ԱՌ ՄՈՍԱԼՈՍ
ՀԱՍԵԱԼ ԵՐԿԻՒՂԻՆ ԻՍՐԱՆՑ, ԵՒ ՈՉ 'Ի ՊԱՐԾԱՆԱ ՁԵՐ ԱՐԱ-
ՐԻՆ ԶՆԻՂԱԿԱԿՑՈՒԹԻՒՆՆ ԸՆԴ ՁԵՂ, ԱՅԼ ՅԱՌՆԱԽՈՍՈՒ-
ԹԵԱՆՑ ԴԻՄՈՍԹԵՆԷ։ Սակայն ՅԱՌԱՋ ՔԱՆ ԶԳԱ ԲԱՂՈՒՄ
ՀՐԵՇՏԱԿՈՒԹԻՒՆ ՎՃԱՐԵՑԻՆ 'Ի ԹԵԲԷ՝ ՈՐՔ ԸՆՍԱՆԵԱՑՆՔ
ՈՒՍԱՆՔ ԷԻՆ ՆՈՅԱ. ԵՒ ՆԱԽ ԹՐԱՍԻԲՈՒԼՈՍ [85] ԿՈՂԼԻԱՑԻ, ԱՅՐ
ՀԱՍԱՍԱՐԻՄ ՔԱՆ ԶԲՆԱՍԱ ԱՌ ԹԵԲԱՅԻ. ԸՍՏ ՆՄԱՆԷ ԹՐԱ-
ՍՈՒԼԼ ԵՐԵՔԻՑԻ [86] ԹԵԲԱՅՑՈՅՆ ԱՍՍՆԼԱԿԱՆ. Ի ԷՈՂԱՄԱՍ
ԱՔԱՌՆԱՑԻ՝[87] ՈՉԻՆՉ ԸՆԴՀԱՍ 'Ի ԴԻՄՈՍԹԵՆԵԱՅ ՀՁՕՐ 'Ի ԲԱՆՍ,
ԲԱՅՑ՝ ԳԷԹ ԸՍՏ ԻՍ՝ ԱՌԱՒԵԼ ՔԱՂՑՐԱԽՕՍ. ԱՐՔԵԴԵՄՈՍ

Digitized by Google

պէնէքսացի 88 և բանիւք զօրաւոր և բազումս հանեալ վասն Թեբացւոց յիւրում քաղաքավարութեանն. Արիստոփոն ազենիեցի՝ հարուստ մի ժամանակ կրեալ զարատ բիսվատ-նալոյ. Ֆիլոանդրոս անտիլիսատցի, որ արդ ևս կենդանի կայ. համայն և այնպէս՝ ոչ ոք երբեք 'ի ստացանէ կարող դատաւ ածել զնոսա ընդ ձեզ 'ի հասարոյր: Զպատճառսն գիտեմ, այլ չափաւ ինձ ասել՝ վասն նեղութեան կարեաց ժամանակին նոցա: Բայց կարծեմ թէ իբրև Փիլիպպոս հանեալ 'ի նոցանէ զԱիկէա եւ ցԹեսալացիս 89, և զպատերազմ՝ զոր յառաջ դարձոյց յերկրէն բիսվատացւոց, զնոյն զայն պատերազմ ած վերստին ընդ Փովկիս 'ի վերայ բուն իսկ քաղաքին Թեբացւոց, և հուսկ ապա առեալ զԵլատիա 90 պարպեաց ամրութեամբ և պահապանս 'ի նեղբս արար, անդ յայնժամ՝ յորժամ առ դուրս նոցա հասին չորիքն, առաքեալ կոչեցին զաթենացիս. և դուք եկեալ գնացեալ մնաք 'ի Թեբէ, հանդերձեալք 'ի զէն և 'ի զարդ, հեւեալք և այրուձի, մինչ չև էր վանկ մի լոկ Դիմոսթենի վասն Թիկանց գրեալ: Եւ որ եմոյծն զձեզ 'ի Թեբէ՝ ժամանակն էր և ահափեռք երկիւղին և սէրք Թիկունս օգնականութեան առնելոյ, և ոչ Դիմոսթենէս:

Քանզի յիրաս յայս՝ երիս մեղս մեծամեծս քան զամենայն մեղսս ձեզ Դիմոսթենէս: Առաջին, զի մինչ դեռ Փիլիպպոս՝ յանուն ընդ ձեզ պատերազմէր, բայց արդեամբք առաւել ատելութեամբ էր ընդ Թեբացիս, որպէս և ելք իրացն յայտ արարին 91, — և զի՞ պիտի յանձխել զբանս, — զայնպիսի զկարևորսն Թաքուցեալ դորա, և պատճառեալ՝ Թէ նիզակակցութիւնն լինելոց իցէ, ոչ 'ի հարկէ հանդամանաց ժամանակին, այլ յիւրոց գրեչատակութեանցն, հանձնաց զմիտս ժողովրդեան՝ մի և խորհել Թէ որով պայմանաւք առնել իցէ զնիզակակցութիւնն, այլ չիտ համարել միայն՝ զի առնիցի: Եւ այսմ կանխեալ դամագիտ լեալ, ըզԲիսվոխս համարէն մատնեաց եւ 'ի ձեռս Թեբացւոց, գրեալ 'ի հրամանին՝ զի Թէ քաղաք ինչ յետս կացցէ 'ի

Digitized by Google

թեբացւոց, աթենացիք 'ի Թիկունս հասցեն բիովոտացւոցն Թեբայ [92], բաւական գողացեալ և վատաբանդեալ զիրսն, որպէս սովորն է, իբրև թէ արդեամբք բարբարեալքն բիովոտացիք՝ շատանայցեն պատուհասեալ բանիւքն Դիմոսթենի, և ոչ մնասանեալ զայրանայցեն ընդ կիրս բարեացն որ անցին ընդ նոսա։ Եւ այսու և զերկու մասն ծախուց պատերազմին արկ 'ի վերայ ձեր՝ յորոց հեռի էին վատանքք, և զերիր մասն եւեթ՝ Թեբացւոց, առեալ կաշառս վասն ամենայնի այսորիկ։ Եւ զզօրավարութիւնն որ ընդ ծով եդ հաստատեաց, իսկ զծախսն՝ ձեզ վճայն առանձինն։ և զոր ընդ ցամաքք, եթէ չէ պարտ զառանցել, համայն առեալ մատագիւր մատոյց Թեբացւոց։ Մինչև 'ի պատերազմն անդ ոչ իշխան լինել Սպարտակի զօրագլխին ձերոյ խորհել 'ի փրկութիւն զօրականին։ Զայսոսիկ՝ ոչ եթէ ես ինչ չարախօսեմ, և այլք անտես առնեն, այլ և ես ասեմ և ամենեքեան պարտաւեն, և դուք ինքնին իրագէտք էք, և ոչ ցանաւք։ Զի զայս ախտանայք ընդ Դիմոսթենի։ վասն ընդելացեալք լսել զանիրաւութիւնս նորա, ուստի և ոչ զարմանայք։ Բայց չէ արժան այդմ այդպէս լինել, այլ զլսել և պատուհասել, եթէ իրաց քաղաքիս պարտ եցէ այսուհետև բարեաւք ընթանալ։

Երկրորդ և մեծ քան զայդ անիրաւեցաւ անիրաւութիւն, զի զնորհրդարան քաղաքիս և զընկերհաշտութիւնն ինքնին գլխովին խլեալ Թաքնաբար՝ փոխեաց 'ի Թեբէ 'ի Կադմիականն, մատեալ յուխտ ընդ իշխանն Բիսովիոյ՝ [93] հաստատակ հաւանութեամբ զիրսն վճարել։ Եւ այնչափ ինքն իւրում անձինն հանդերձեաց հարստութիւն, մինչև յաստեան այսր անցեալ ասել, թէ ուր և նմա հաճայ թաւեացի՝ երթայցէ հրեշտակութեամբ, թէ և դուք ոչ առաքիցէք։ և թէ ոք 'ի զօրագլխաց նմա բանս ընդդէմ գնիցէ, 'ի ծառայի սակի կալեալ զիշխանագ և ուսուցեալ մի ինչ հակառակ նմա խօսել, ասէր փուրսիշ յարուցանել յատենէ ասոտի ընդդէմ սպայապետութեանն։ զի 'ի բաղում ինչ ասէր

վայելեալ ձեզ բարիս 'ի ձեռն իւր յատեանէ ասսի քան 'ի զօրագլխաց սպարապետութեանն։ Եւ վարձս գտեալ 'ի դատարկ տեղեաց այլազգի գումարտակին [94], և զարծաթ զօրականին գողացեալ, և բիւր մի այլազգի 'ի վարձու կալեալ ամիսիսացւոց, մինչ գեռ ես բողոք յոյժ հարկանէի 'ի ժողովն և քանքատէի, 'ի բառնալ այլազգեացն 'ի միջոյ՝ ած խառնեաց զվտանգն ընդ քաղաքս մեր ընդ անպատրաստ [95]։ Զի զինչ կարծիցէք փափաքելի Փիլիպպեայ 'ի ժամանակի անդ յայնմիկ. ոչ ապաքէն ուրոյն ուրոյն ընդ զօրս քաղաքի քաղաքի, և ուրոյն Յանիսսա ընդ այլազգիսն տալ Ճակատ, և ըմբռնել զհելլենացիս վհատեալս յերեսաց այնպիսում հասելոյ հարուածոյ։ Եւ այնպիսեաց չարեացապարտ եղեալ Դիմոսթենէն, ոչ շատ համարի՝ զի չեռ վրէժս, այլ և անաղդակի և՝ եթէ ոչ պակ ոսկի պատկիցի. ոչ շատ է նմա հուշակիլ առաջի ձեր, այլ եթէ ոչ և յանգիսման հելլենացւոց քարոզեսցի՝ ոգոլեալ գժոխէ։ Ապայէս ահա բնութիւն չարաշուէր՝ 'ի մեծ իշխանութիւն հասեալ՝ հասարակաց ոլորիլ եղեան։

Իսկ երրորդ և մեծ քան զՃառեալսդ այն է՝ զոր ասելս հանդերձեալ եմ։ Քանզի Փիլիպպեայ չարհամարհեալ ըզՀելլէնս, և ոչ անգիտացեալ, — զի չէր անհանճար ոք, — թէ զբարեացն յիւրում ձեռին եղելոց՝ 'ի դոյզն ինչ մասին աւուր կռուելոց է, վասն որոյ և ցանկայր իսկ առնել հաշտութիւն, և առաքելոց էր հրեշտակս. և իշխանք Թեբացւոց 'ի կասկածի կային 'ի սպառնացեալ վտանգէն, և յիրաւի. զի ոչ Ճարտարախօս ոք անհմուտ մարտի և դասալիք՝ խրատուս էր նոցին, այլ փովկիտեան տասանամեայ պատերազմն էր խրատեալ զնոսա խրատ յաւերժայիշատակ։ Ի լինել այսմ այսպէս, իրազեկ լեալ Դիմոսթենէն, և խիթացեալ յիշխանացն բիսովտացւոց ինքնուրոյն զՀաշտութիւնն առնելոյ՝ ոսկի 'ի Փիլիպպեայ կաշառս առանց իւր առնլով, և անկեաց զկեանսն համարեալ՝ եթէ անմասն 'ի կաշառակրծութենէ ուստէք ելանիցէ, յարուցեալ ընդոստ

'ի ժողովի ժողովրդեան, ուր ոչ ոք 'ի մարդկանէ ասէր ինչ, թէ արժան իցէ հաշտութիւն առնել ընդ Փիլիպպեայ և թէ ոչ, այլ որպէս ինքեան Թուէր, ազդ իմն առ իշխանն բիւզանցւոց առնելով հաստուցանել առ ինքն զբաժին առիցն, երդուաւ յԱթենաս, — զոր որպէս Թուի՝ 'ի շահ օգտի Դիմոսթենի Ճարտարեաց Փիդիաս և յերդմնահարութիւն նորա, — ան և ան, եթէ արժան լինիցէ ոք առնել հաշտութիւն ընդ Փիլիպպեայ, բուռն զհերաց այնպիսւոյն հարեալ՝ առնուլ տանել զնա 'ի բանտ. նմանօրինի լինելով քաղաքավարութեանն Պլէոփոնի [98], որ առ լակեդեմոնացւոցն պատերազմաւ, որպէս ասանդի, զքաղաքս կորոյս։ Այլ քանզի ոչ պատկառ կացին նմա իշխանք Թեբացւոց, նա և զչուեալ գնացեալ զօրս ձեր դարձուցին յետս, զի 'ի խորհուրդ վասն հաշտութեանն մատնիցէք, անդ բնաւ իսկ 'ի շամբչութիւն հատեալ, և յատեան եղեալ՝ մատնիչս հելլենացւոց գաւաճանս զբիովտացւոց իշխանն կոչեաց. և գրեալ ասաց հրաման, այն որոյ չէր երբեք յերեսս Թշնամեաց զանն կատուցեալ, առաքել ձեզ հրեշտակս 'ի Թեբէ, խնդրել 'ի Թեբացւոց անտի անցս 'ի վերայ Փիլիպպոսի։ Իշխանք Թեբացւոց զամօթի հարեալ, Թէ գուցէ արդարև մատնիչս հելլենացւոց լինելոյ կարծիս առնուցուն, յետս կացին 'ի հաշտութենէն և 'ի պատերազմ յորդորեցան։

Ասա արժան է և զարանցն այնոցիկ զքաջաց առնել յիշատակ, զորս գորա, մինչդեռ անուէր և անյաջող զոհքն էին, արձակեալ յանշուշտ վտանգ, իշխեաց ապա փախստեայ և դասալեք ոտիւքն եղանել կանգնել 'ի շիրիմ [97] վախճանելոցն, և զնոցա առաքինութիւնն գրուատել։ Ո՛վ առմեծամեծն և կարևորս՝ քան զամենայն մարդիկ անպիտանագոյնդ, և 'ի յանդգնութիւն խօսիս՝ գէր 'ի վերոյ զարմանալեդ, կամիցիս սոյնհետայն ձեռն 'ի գործ արկանել՝ զանն պիշ ուսնելով յերեսս սոցա՝ և ասել, թէ յաղէտս աստ քաղաքս արժան է քեզ պատկել։ Եւ եթէ ասիցէ և դա, ունկցիք դուք ժոյժ, և ընդ վախճանեալսն մեռանիցի ու-

րեմն և յիշատակդ ձեր։ Եկայք աղէ եղբարք ինձ մաղթ խուն ինչ ժամանակ, ոչ յատենի ատա, այլ 'ի տեսարանին. և գրեսջիք՝ թէ տեսանիցէք զքարոզն յառաջ մատուցեալ, և զոր հանդերձեալն է լինել քան հրովարտակին զքարոզութիւնն լսիցէք. և հարցփորձ արարէք ընդ միոս ձեր, եթէ հաշուիցիք արդեաք թէ ընտանեակք վախճանելոցն առաւել ինչ արտասուս արկանիցեն յողբերգութիւնն և 'ի կարիս գիւցազանցն, որ սոցին իրաց զհետ 'ի մէջ գայցեն, քան 'ի վերայ ապախտաւորութեան քաղաքիս։ Զի ո՞ այն ոք այր հեղլէն լցէ և ըստ ազատաց օրէնս դատախրակեալ, որում ոչ ցաւեսցէ, 'ի յուշ լինել նմա՝ եթէ ոչ այլ իմիք՝ դէթ այսմ, զի անդ ուրեմն երբեմն 'ի սմին յայսմ աւուր, մինչդեռ որպէս այժմս ողբերգութիւնք լինելոց էին, յորժամ բարեկարգ ևս էր քաղաքս և ընտրելագոյն առաջնորդքդ վարէր, յառաջ անցեալ քարոզն և 'ի մէջ մատուցեալ զորբան՝ որոց անկեալ էին հարքն 'ի ճակատու, պատանեակս սպառազէն զարդարեալս, կարդայր զգեղեցիկն քան զամենայն քարոզ և խրախուսիչ յառաքինութիւն. զայն թէ « Զպատանեակքս զայսոսիկ՝ որոց հարքն կատարեցան 'ի պատերազմին արութեամբ քաջութեամբ նահատակեալք, աւասիկ մինչև յարբունս հասակի իւրեանց անոյշ ժողովուրդն. իսկ այժմ սովին սպառազինութեամբ վառեալս արձակէք բարեպատեհ բախտիւ երթալ դատնալ 'ի գործս իւրեանց, և կոչէք զնոսա 'ի յառաջագահս 98։ Քարոզէր զայս յայնժամ, բայց ոչ ևս այժմ. այլ մերձ կացուցեալ զպարեացապարան որբութեան մանկըտոյն՝ զինչ քարոզեսցէ, կամ զինչ բարբառ արձակեսցէ։ Զի եթէ ընդ հրամանս հրովարտակին անցանիցէ ևեթ, համայն ոչ լուութեամբ ծածկեսցի ամօթն որ 'ի ճշմարտութենէն, այլ ձայնի քարոզին հակառակ ընդդէմ բարբառել թուեսցի, այն զի Զայրս զայս, եթէ գա այր իցէ, պակէ ժողովուրդ աշխենացուց վասն առաքինութեան՝ զվասացն վասն, վասն քաջութեան՝ զանարին և զդասալիքն։ Մի,

Digitized by Google

աղաչեմ զձեզ՝ ով արք աթենացիք, երդմնեցուցեալ յԱքամանդ և յայլ աստուածն, մի՛ ի կաքաւարանի անդ Սպանդարամետին՝ նշան վատթարութեան անձանց ձերոց կանգնիցէք, և մի զաթենացւոցս Ժողովուրդ առաջի հելլենացւոց խելագար յանդիմանեսջիք, և մի թշուառական թեքացուցն յուշ արկջիք զանհարին և զանբուժելի աղէտս նոցա, զորս վասն դորա վտարանդիս և փախստեայս ՝ի քաղաքդ Ժողովեցէք, զորոց զմեհեանսն և զորդիս և զդերեզմանս կորոյս կաշառակրծութիւն Դիմոսթենի և ոսկին Թագաւորական։

Այլ քանզի անձամբ ոչ դիպեցայք, գոնէ մնացեալ հայեցարուք ՝ի տառապանս նոցա, և դիք ՝ի մտի՝ թէ ահա տեսանիցէք զքաղաքն յառ և յաւար մատնեալ, զպարիսպսն կործանեալ, հրոյ ճարակ զապարանսն, զկանայս և զզմանկսն վարեալ՝ ի գերութիւն, զծերունիս յարանց և զզպառաւունս՝ ի կանանց անդան ուրեմն մոռացեալ զազատութիւն, կական բարձեալ՝ զձեզ աղերսելով, արամտեալ՝ ոչ ընդ վրէժինդիրս իւրեանց, այլ ընդ եղեռնագործսն այդր ամենայնի, պաղատին առ ձեզ՝ մի և մի իւիք օրինակաւ ըզդահիճդ Ելլադայ պատկել, այլ և ՝ի դիւէ և ՝ի բախտէ անտի որ արբանեկէ աւանդ՝ անձնապահ լինել։ Զի ոչ քաղաք և ոչ այր ոք սոսկական՝ Դիմոսթենի խորհրդով վարեալ՝ յանգորոր եղ երբեք յայժմս։ Եւ գուք, ո՛ արք աթենացիք, ո՛չ ամաչեցէք, եթէ ՝ի վերայ նաւավարացն նաւելոց ՝ի Սալամիս օրէնս եդեալ, զի թէ ոք ՝ի նոցանէն յակամայ կամս զնաւակն շրջիցէ յանցի անդ, մի ևս օրէն լեցի նմա կալ նաւավար, որպէս զի մի ոք խօլաբար ընդ կեանս հելլենացւոց վարեսցի, իսկ զտապալիչդ Ելլադայ և քաղաքիս համանգամայն, թողուցուք անդրէն միանգամ ՝ի վարչութեան իրացս հասարակաց [90]։

Իսկ առ ՝ի ճառել և զչորրորդ Ժամանակէն և զայժմս հատատեալց իրացս, յիշեցուցանել կամ է ինձ ձեզ, զի Դիմոսթենէս ոչ ՝ի զօրուէն միայն եղև գաստալիք փախստա-

Digitized by Google

կան, այլ և 'ի քաղաքէս. զի առեալ նաև մի զձեր պատերազմի, գնաց Ժողովեաց արծաթ 'ի հելլենացւոց։ Իսկ իբրև անակնկալ լինի փրկութիւն ածգարձոյց զնա այսրէն 'ի քաղաքս, զառաջին աւուրսն զդոլանի հարեալ կայր այրն, և կիսամահ յատեան մատուցեալ՝ ստիպեաց զձեզ՝ զինքն ընտրել պահապան խաղաղութեան։ Բայց դուք առժամայն ոչ տայիք թոյլ գրել 'ի հրամանն զանուն Դիմոսթենի, այլ Նաւսիկլէսի հրամայէիք զայն. իսկ այժմ և պակ եւս խնդրէ։ Իսկ իբրև վախճան եհաս Փիլիպոսի, և Ալէքսանդր եկաց յիշխանութեանն, անդրէն վերստին բանդագուշեալ դորա՝ մեհեանս կանգնեաց Պաւսանիայ [100], և ընդ բամբասանաց արկ զատեանդ՝ աւետեաց զոհս մատուցանելոյ. և աւելի անուն եդ Ալէքսանդրի Բախայ. և իշխեաց ասել՝ թէ ոչ ուրեք խլրտեացի նա 'ի Մակեդոնիոյ. զի շատ համարի, ասէր, ելանել զգնալ 'ի Պելլա, և ընդերահարց լինել [101]։ Եւ զայս ոչ 'ի կարծ ինչ ասեմ, ասէր, այլ ճշմարիտ գտակաւ, զի գինք արեան է առաքինութիւն։ Ինքն զի անարիւն ոք է, և զԱլէքսանդրոս նկատեալ ոչ ըստ բնութեան Ալէքսանդրի, այլ ըստ իւրում անարութեանն։ Իբրև թեսալացիք հրման եռուն պատերազմի 'ի վերայ քաղաքիդ ձերոյ, և մանուկն համբակ յիրաւի էր ցասուցեալ յառաջու, և բանակն զթեբաւ կայր, պատգամաւորաւ 'ի ձէնջ ընտրեալ՝ փախստեայ գարձաւ էին 'ի միջոց Կիթերոնի [102], ոչ 'ի խաղաղութեան և ոչ 'ի գումարտակի պիտանի ոք զանձն երևեցուցեալ։ Եւ որ գժնդակ քան զամենայն է, դուք զդա ոչ 'ի ձեռս եռուք, և ոչ թոյլ արարէք՝ զի 'ի ժողովի [103] հելլենացւոցն դատեսցի. իսկ այժմ, եթէ ճշմարիտ են որ ասէին, դա աւադիկ եռ զձեզ վտարանդիս։

Զի որպէս նաւաստիքս [104] պատմեն և որ չոգանն հրեշատակութեամբ առ Ալէքսանդրոս, — և յիրաւի հաւատարմանան իրքն, — Արիստոն ոմն անուն է պլատէացի, դեղավաճառին Արիստոբուլեայ որդի, թերևս ծանօթ իսկ

ու�՝ի ձէջ։ Պատանեակս այս, քան զայլս գեղեցկա-
կերպ, բնակեաց ժամանակս երկայնս՝ի տան Դիմոսթենի-
առ՝ի զինչ գործել կամ կրել՝ յերկեայս են իրքն, և ինչ
բնաւ անվայելուչ յասել։ Սա, որպէս լսեմս, թէ զինչ ոք
արդեաք իցէ և որպէս կեցեալ՝ յանծանօթս մնալով, սպրդի
մտանէ առ Ալէքսանդրոս և ընդելանի նմա։ Ի սորա ձեռն
գիրս յղեալ Դիմոսթենի առ Ալէքսանդրոս, գտանէ վստահ
ինչ և հաճութիւն, և բազում շողոմս առնէ։ Եւ աստի ա-
ռէաք՝ի միտ, որպէս նման են իրքն ընդ պարսաւանդ։

Զի եթէ խորհէր ինչ յայժմուցս Դիմոսթենէս, և հա-
կառակորդ էր՝ որպէս ասէն՝ Ալէքսանդրի, ժամանակք
երեք պատեհագոյնք եկին ելին նմա, յորոց և ոչ մի յօ-
գուտ արկ։

Մի առաջին, զի այն ինչ գեռ յիշխանութիւն յաջոր-
դեալ Ալէքսանդրոս, չև զերս իւր կապմ յօրինեալ, խաղաց
գնաց նա յԱսիա 105. և Թագաւորն Պարսից՝ հզօր դոյր
նաւուք և գանձիւ և ամբոխիւ հեռակազօրու, և յառա-
ջամիտ էր ընդունել զմեզ՝ի նիզակակցութիւն վասն եկեալ
հասեալ իւրոց վտանգիցն։ Խօսեցար ինչ բան յայնժամ,
Դիմոսթենէս, կամ հրաման ինչ գրեցեր։ Կամիս զի եդիս
զքեզ ահաբեկեալ յայնժամ և զքո բարդ առեալ՝ի կիր։
Սակայն աշխարհին ժամանակ ոչ ներել երկչոտութեան
Հարտարախօսին։

Իսկ իբրև համագունդ ամենայն սպայիւն եկն էջ Դա-
րեհ, և Ալէքսանդրի սպառնալիք՝ի վերայ կային՝ի Կիլի-
կիա 106, զի ցականեալ ամայի էր յամենայնէ, որպէս գուգ
ասէիր, և անգէն հետ ընդ հետ՝ ըստ քում բանիդ՝ ամբա-
կակոխ լինելոց էր՝ի պարսկախուռմ այրուձիոյն ասպատա-
կէ. և մինչ գեռ քաղաքս ոչ տանէր զքո յաւակնութիւնդ,
և զնամականին զոր՝ի մատուցանդ յեռեալ Հեմիեր, և ցու-
ցանէիր ոմանց ոմանց զերեսս իմ իբրև զպակուցելոյ ու-
րուք և վհատելոյ, և ոսկեբիւր 107 զնա կոչէիր և ասէիր
զենլի պատկեալ՝ի սպանդ, եթէ հարուածդ ինչ պատահեցէ

Ալէքսանդրի. համայն և ոչ յայնժամ արարեր ինչ, այլ այլում իմիք բարեպատեհ ժամու թողուիր։

Արդ զայսու ամենայնիւ զանց արարեալ՝ ասացից զայժմու նորագարդ իրացս։ Լակեդեմոնացիք և այլազգի զօրականն պատահեցան մարտիւ, և սատակեցին զզօրն որ զԿորրագաս։ Բայց Էլիացիք 'ի կողմ եղին նոցա, և աքայեցիք առ հասարակ՝ բաց 'ի պելլենացւոց, և Արկադիա համարէն՝ բաց 'ի Մեգալոպոլսէ. այլ և սա 'ի պատնէշ պաշարումն 'ի նեղ անկեալ և զօր ամենայն յառնուլ կայր։ Իսկ Ալէքսանդրոս՝ ըստ Սայլն և գրեա թէ ըստ ոլորտս տիեզերաց 'ի բաց անցեալ գնացեալ էր, և Անտիպատրոս հարուստ մի ժամանակ լինէր զօրաժողով, և առաջիկայն անյայտ։ Ցայտ արա մեզ աստանօր, ով Դիմոսթենէս, զինչ այն ինչ էր զոր գործեցեր բնաւ, և զինչ այն զոր խօսեցար երբէք. և թէ կամիս՝ ասա՝ քեզ տեղի 'ի բեմէս՝ մինչև ասասցես։ Այլ զի լուռ կաս պապանձեալ առ ատաղնապի տարակուսանացդ, ներողամիտ լինիմ առ քեզ. և զոր յայնժամն ասացեր՝ ես այժմ ասացից։

Ո՞չ յիշեցէք զկծծի և զանհաւատ բանս դորա, որոց զիմիրդ դուք, ով արք երկաթիք, հանդուրժեցէք 'ի լուր, յորժամ մատուցեալ ասէր. « Իբրև զայգի յատանեն ոմանք զքաղաքս, կոճռպեն կէսք զբարուանակս ժողովրդեանն, զՀիլս իրացն առնեն կարթակոտոր, ողորակաց յանձուկս կաշկանդիմք, այլք զարբանս իբրև տաղունք կրատեն։ » Իսկ զինչ այդոքիկ իցեն, այ աղուես. բանիք, եթէ հրեշք։ Եւ դարձեալ, յորժամ շուրջ յածեալ զքեզ յատենին՝ կոկոզաբանեիր իբրև ախոյանացեալ Ալէքսանդրի. « Վկայեմ՝ թէ ինձ ապատամբեցին Լակեդեմոնիք, վկայեմ՝ զի ինձ վարանջեցին Թեսալացիք և Պերրեբք։ » Դո՞ւ զգիւղ մի վարանջեցուցես. գո՞ւ հուպ մատիցես, չասեմ թէ 'ի քաղաք, այլ 'ի տուն մի՝ ուր կասկած գուցէ վասնզի։ Բայց միայն՝ թէ ուրեք կարասուոյ ծախք լինիցին, անդ մերձ անցեալ նստիցիս. այլ առն ինչ գործ՝ գործեացես ոչ։

Իսկ եթէ ինքնօրէն ինչ դէպ տայցէ, զու անդէն կերպարա-
նեսցիս, և 'ի վերայ եղելոյն և կատարելոյն գրոշմեսցես ըղ-
քեզ. այլ եթէ արհաւիրք ինչ 'ի վերայ հասանիցեն, փա-
խիցես 'ի բաց, իսկ եթէ քաջալերեալ համարձակիցիսք ինչ,
պարգևս խնդրեսցես և պատկ ոսկի պատկիլ։

Այո՛, բայց ռամկավարութեան նախանձաւոր է։ — Այլ եթէ 'ի Հռոմայեցութիւն խօսիցս գորս գէտանն ու-
նիցիք, խաբեսջիք՝ որպէս և յառաջն. իսկ եթէ 'ի բնու-
թիւնն և 'ի Հշմարտութիւն, ոչ պատրիցիք։ Այսպէս մտիք
ընդ դմա 'ի հաշիս, և ես ընդ ձեզ 'ի համար արկիցի՝ որ ինչ
պարան իցէ լինել 'ի բնութեան առն ռամկավարի և ցած-
նոյ. և 'ի հակառակէն եդիցի՝ որպիսի ինչ ոք լինիցի այր սա-
կաւուց իշխանապետութեան սիրող և վատթար. և ձեր
ընդ միմեանս հարեալ զերկասեան զայդ՝ 'ի քնին առէք զգա,
ոչ ըստ որում բանքն իցեն գորս, այլ ըստ որում կեանքն։

Արդ ես ամենեցուն ձեզ խոստովանեալ համարիմ, թէ
'ի ռամկավարն պարտին լինել այսոքիկ։ Նախ, զի ինքն ազատ
իցէ և առ 'ի հօրէ և առ 'ի մօրէն. զի մի վասն տոհմին ան-
կածութեան՝ թշնամի օրինաց իցէ որ պահէն զընկերհաշ-
տութիւն։ Երկրորդ, զի 'ի նախահարց անտի իւրոց երախ-
տիք ինչ գտանիցին առ ժողովուրդն, կամ, որ կարևորա-
գոյն ևն է, մի ինչ խէթ ոխութեան, զի մի առ 'ի զօրա-
վիգն լինել նախնեացն տատասպանաց՝ չարիս ինչ ընդ քա-
զաքն անցուցանել նկրտիցի։ Երրորդ, զգաստ և չափաւոր
արժան է լինել նմա 'ի բնէ 'ի հանապազորդ վարան, զի մի
առ ծախուցն շռայլութեան կաշառեսցի 'ի ինեան ժողովրդ-
գեան։ Չորրորդ, մտավարժ լինել և կորովի 'ի բան. քանզի
բարի է խելամտութիւն յընտրութիւն լաւագունացն, և
գիտութիւն Հարատարախօսի և բան՝ առ 'ի հաւան զուն-
դիրն ածելոյ. իսկ թէ ոչ, զիմաստութիւն նախամեծար
ընտրելի է քան զբանիկ կորովութիւն։ Հինգերորդ, քա-
ջասիրտ լինել, զի մի 'ի տատնապողականս և 'ի վտանգս՝
ընդ վայր զժողովուրդն հարկանիցէ։ Իսկ որ սակաւուց իշ-

Digitized by Google

խանութեան թեկն ածիցէ, ամենայն ինչ հակառակ ընդ-դէմքն այդոցիկ գտանիցին 'ի նմա. զի զի՞ և պիտոյ իցէ առնուլ ասել վերստին։

Եւ արդ տեսէք, զի՞նչ յայտնանէ գտանիցի 'ի Դիմոսթենէս. և քննութիւն առնիցի ամենայն արդարութեամբ։ Դորա հայրն էր Դիմոսթենէս պէտանեցի, այր ազատ, զի չէ պարտ ստել։ Բայց 'ի մօրէն կուսէ և 'ի մօրն հաւուն՝ որ-պիսի՞ ինչ իցէ. ես ասացից։ Գիլոն անուն էր ոմն 'ի Կերա-միկոնէ [110]. մատնեալ սորա 'ի ձեռս Թշնամեաց զԿիմիթէոն որ 'ի Պոնտոս [111], մինչդեռ քաղաքին էր այն տեղին, յա-րեաւ 'ի վերայ նորա փուրսիչ ամբաստանութեան. չեկաց նա չմնաց դատաստանին, այլ՝ տարադէմ փախստեայ գնա-ցեալ [112] և 'ի մահ դատակնքեալ՝ երթեալ հասանէ 'ի Բոս-պոր, և առնու անդ պարգև 'ի բռնաւորաց անտի զանուա-նեալն Բուրսատանս [113]. և առնէ կին՝ զմեծատուն ոք՝ անշուշտ, երդուեալ յԱրամազդ, որ և ոսկի բաղում եբեր նմա. բայց յաղդէ՝ սկիւթացի։ Յորմէ լինին նմա դստերք երկու, զորս առաքեալ նորա այր բազմագանձ Հոխու-թեամբ, զմին ամուսնաւորեաց ընդ ո և պէտ ումեք, — զի մի՛ շատից յաչաց ելանիցեմ. — և զմիւսն, արհամարհեալ զօրէնս քաղաքիս՝ առ իւր կնութեան Դիմոսթենէսն պէտա-նեցի [114]. և 'ի սմանէ ծնեալ է ձեզ կախարդասարդ այդ և զլապարտիչ Դիմոսթենէս։ Արդ ըստ մայրենի հաւուն՝ թշ-նամի արդեաք իցէ դա ժողովրդեանս, զի զնախինս նորա 'ի մահ պարտաւորեալ է ձեր. և մայրենեաքն՝ սկիւթացի, խուժադուժ, հեղ՛ի՛ենացի ևեթ ուսեալ ձայն. վասն որոյ և ըստ ժանտութեանն չէ բնիկ։

Իսկ ըստ հանապազօրեայ վարուցն՝ զի՞նչ ոք իցէ։ Ի նաւագործէ դպիր երևեալ, զհայրենին այպանելի օրինա-կաւ վատնեալ, և կարծիս անհաւատարմի առեալ յայդու-սիկ, և բանադնաց ընդ ոսոխսն եղեալ՝ դիմեաց եւ 'ի բեմ ասէնին։ Եւ 'ի քաղաքէս առեալ արծաթ առատ՝ սակաւ ինչ մնացոյց. իսկ այժմ ոսկին թագաւորական յորդեալ

զեղեալ ոսոլեաց զծախս դորա. բայց և ոչ այն շատ լեցի. զի և ոչ մի ինչ ՀՈՒԹԻՒՆ լիացոյց երբեք զչարախտավար վարս։ Եւ գլուխ ամենայնի, ոչ յիւրոց հասիցն զկեանան պահաբէ, այլ'ի ձերոց վտանգիցդ։

Իսկ ըստ մտաւորութեան և բանից կորովութեան՝ որ պիսի՞ ի՞նչ։ Դժնեայ'ի խօսել, վատթար'ի կեալ. զի և զեւր իսկ մարմին և զգաւակաբերութիւն այնպէս ի՞նն խառնավար արարեալ, որպէս զի չառնոմ յանձն զգործեցեալսն ՀԱՌԵԼ. քանզի և տեսեալ իսկ է իմ երբեմն յաչաց եղեալս զայնոսիկ՝ որ զմերձաւորաց դարշելիսն կարի ի՞ն հաւաստեաւ'ի վեր հանէին։ Թո՛ղ զայդ, զի՞նչ անտի օգուտ քաղաքիս։ Խօսքն բարիք, գործքն դառիք։

Իսկ զարութենէն՝ տուղ ինչ մնայ ինձ ասել։ Զի եթէ յուրատատ կայր յերկչոտութենէն, կամ թէ գոք ընդ իւր չէիք իրագէտ, դեղերեալ յամենայր ինձ արդեօք ասասնոր բանս. այլ՝ քանզի և ինքն խոստովան լինի'ի ժողովսն, և ձեր իսկ միտքդ վկայեն, ոչ այլ ինչ մնայ՝ բայց յուշ ածել զոր'ի վերայ այսոցիկ զօրէնսն։ Քանզի վաղեմի օրէնքդիրն Սոլ՛ոն՝ նմին պատժոց պարտ համարէր զայն որ չառնուցու յանձն զինուորել, և որ զդաս իւր լքանիցէ, և զերկչոտն ինքնին գլխովն. զի են են և երկչոտութեան փուրսիշք ամբաստանութեան։ Այլ՝ զարմացի ոք թերևս'ի ձէնջ, թէ ի՞նչն և բնութեան դատախազք։ Ե՞ն։ Ընդէր։ Զի իւրաքանչիւր ոք'ի մէնջ, քան'ի թշնամեացն'ի պատժոց օրինացն երկուցեալ, նահատակ ախոյեան իւրոյ աշխարհին լինիցի։ Արդ օրինադիրն՝ զչենուորեալն և զվատն և զդասալքք փախստականն՝ միապէս արտաքոյ սրբութեան սրակարանացն 113 հրապարակին արդելու. չտայ պսակել, և ոչ'ի հասարակաց քաղաքաժողով մեհեանսն մտանել։ Եւ դու՝ զանարժանն ըստ օրինայ պսակի՝ հրամայես մեզ պսակել, և քով հրամանաւդ'ի կաքաւարան ողբերգակացն հրաւիրես զչարժանին, 'ի տարհար Սպանդարամետին զայն՝ որ իւրով վատութեամբն մատնիչ և դահիճ եղև մեհենեացն։

Digitized by Google

Այլ զի մի՛ ի կարգէ բանիս ըստ արտուղի վարեալ սահ-
ելիւբեցից զՁեզ, զայս յուշ ածէք. յորժամ ասակաւոր ոք
զանձն լինեալ ասիցէ, հայեսջիք՝ մի՛ ի բանս նորա, այլ՛ ի
կենցաղն. և միտ եդեալ նայիցիք՝ ոչ յոր ինչ զանձն ասիցէ
լինել, այլ յոր ինչ և էն։

Եւ քանզի զպսակաց բանք անկան մեզ և զպարգևաց,
մինչ գեռ՝ ի մոի ունիմ՝ կանխեմ ասեմ Ձեզ, ո՛ որք աթե-
նացիք, զի թէ ոչ՛ ի բաց խափանիցէք զառաստաձիր պար-
գևդ և զտարապարտ վայրավատնուն պսակացդ, ոչ պա-
տուեսցէն շնորհ ինչ Ձեզ կացին, և ոչ քաղաքիս իրք յու-
զութիւն գայցեն։ Զի զասիբատան ոչ երբէք՛ ի լսութիւն
ածիցէք, իսկ զընտիրսն՝ ՛ի յետին որոմութիւն արկանի-
ցէք։ Եւ՛ ի սուգութիւն բանիցս՝ ակն ունիմ՝ նշանակս
ցուցանել Ձեզ մեծամեծս։ Զի թէ հարցանիցէ ոք զՁեզ.
արդեաք փառաւորագոյն Ձեզ Թուիցի քաղաքս յայժմու-
ժամանակիս, թէ առ նախնեաքն. խոստովան լինիցիք միա-
բերաբար, թէ առ նախնեաքն։ Եւ արք յայնժամ արդեաք
լաւագոյնք էին, թէ այժմ։ Ցայնժամ լաւագոյնք, իսկ զար-
դիս յոյժ վատթարեալք։ Իսկ ապա պարգևք և պսակք և
հռչակութիւնք և պարէնք՛ ի Պրիտանին [116], արդեաք՛ ի
ժամանակին յայնմիկ յորդեալ էին, եթէ յարգեանս առ
մեզ։ Ցայնժամ բարութիւնք չէին ինչ յաճախ առ մեզ,
և անուն առաքինութեան պատուական էր. իսկ այժմ՝
վաղ հնացեալ անշքացեալ [117] է բանդ, և զպսակելն՝ սովո-
րութեամբն և ոչ խնամով ինչ առնիք։

Արդ՝ որ միանգամ զայդ այդպէս զմտաս ածիցեն, ան-
ճահ թուիցի նոցա, զի պարգևք յաճախաւորք եղեն այժմ,
և իրք քաղաքիս՝ յայնժամ առաւել քան այժմս բարգա-
ւաճք. և արք՝ այժմ յոռեգոյնք, իսկ յայնժամ ազնուա-
գոյնք։ Եւ զայս ես Ձեռն արկից ուսուցանել զՁեզ։ Մինթէ
համարիցիք, ո՛վ արք աթենացիք, թէ յօժարիցի ոք ընդ
կիրթ ոչխարիականացն անցանել կամ այլոց իրիք պսակա-
բեր մրցանաց, ամենախումբ մարտին կամ այլոց ուրուք՛ ի

Digitized by Google

ծանր ծանր նահատակութեանց, եթէ ոչ քաջագունին տացի պատկն, այլ որ հայրենասիրութեանցն շահիցի: Բնաւ և ոչ ոք ընդ վարժան կամեսցի երանել: Իսկ այժմիկ, կարծեմ, վասն անօսրութեանն և դժուարակոփն լինելոյ, և վասն գերեցկութեան և անմահ յիշատակի յաղթութեանն՝ յանձն առնուն ոմանք, զանձն 'ի ձեռին եդեալ, և մեծաց ժուժ կալեալ ատառապանաց, 'ի Հզնութիւնդ մնանել[118]: Գրեսջիք՝ թէ դուք ի՞նչէք քաղաքական առաքինութեանն հանդիսադիրք, և ընտրեսջիք. զի թէ զպարգեւագ սակաւուց ոմանց և արժանաւորաց և ըստ օրինացն մատուցանիցէք, բազում լինիցին ձեր նահատակք առաքինութեան. իսկ եթէ որոմ ուսիք և կամիցի, և որոց հնարիմաց մարթուցչքն իցեն՝ շնորհիցէք, եղծանիցէք յայնժամ և զաբերբարոյ բնութիւնն:

Եւ զի զուղղութիւն խօսիմ, կամիմ փոքր մի ևս առնել զձեզ խելամուտ: Արդեաք լաւագոյն այր Թուքիցի ձեզ լեալ Թեմիստոկլէս զօրավարն 'ի նաւամարտի անդ Սալամիսայ՝ յորում յաղթեցէք պարսկայնոցն, եթէ Դիմոսթենէսգ դասալքք: Եւ Միլտիադէս՝ յաղթողն խուժայնոց 'ի Մարաթոնեան Հակատամարտին, եթէ դա: Եւս և նոքա՞ որ 'ի Փիլէայ[118] դարձուցին այսրէն զնախատեալ ժողովուրդն: Եւ Արիստիդէս՝ արդարն յորջորջեալ, անուն ժառանգեալ աննման Դիմոսթենէսին . . . : Այլ իմ յաստուածն ոչխարական երդուեալ, ոչ 'ի դէպ վարկանիմ 'ի նոյն աւուրս զգաղանդ զայդ ընդ արան ընդ այնոսիկ յիշատակել: Ցուցցէ արդ Դիմոսթենէս 'ի խօսան իւրում, իցէ՞ երբեք եղեալ հրամանն պատկելոց զոք յարանց անտի: Այլ ուրեմն ապախտաւոր էր ժողովուրդն: Քաւ լիցի. այլ մեծախորհուրդ. և որ ոչն առին պատիւ, արժանաւորք քաղաքին. զի ոչ 'ի նշանագիրս համարէին պատուել, այլ 'ի յուշ յիշատակի երախտաւորելոցն, որ 'ի ժամանակէ անտի յայնմանէ մինչև յօրս յայս կայ մնայ անմահ:

Իսկ զի՞նչ ընդունէին պարգեւս. արժան է և զայն յիշատակել: Առ նոսին ժամանակաւ, ոմ՞ արք աթենացիք, էին

ոմանք որ բազում Հզանց և կարևոր վտանգաց ժուժկալ եղեալ, առ Սորիմոն գեղով [120] պատերազմեալ յաղթեցին Մարաց։ Սոցա այսր հաստեալ՝ խնդրեցին պարգև 'ի ժողովրդենէն, և շնորհեաց նոցա ժողովուրդն պատիւս մեծամեծս, որպէս 'ի ժամուն թուէր. երիս հերիմաս [121] քարեղէնս կանգնել 'ի դահլիճին հերմեայց [122]. բայց ոչ զանուանս իւրեանց դրոշմել 'ի նոսա, զի մի զօրավարացն, այլ ժողովրդեանն համարեսցի արձանագիր։

Զհաւատոիս բանիցս 'ի նոցունց իսկ 'ի քերդածացն ծանիջիք. զի յառաջնումն 'ի հերմեայց անտի արձանագրեալ էր.

Սորատպինդ էին և այնք, որ 'ի Մարացն երիտասարդս
Առ Իեռնիս անդ ուրեմն ըզյորձանօք Սորիմոնի՝ [123]
Ըզսովքն տապալարկ և զբուռն ահեղ ածեալ Արէս,
Յառաջեցին գրտանել ըզթշնամեացքն տապնապ։

Եւ յերկրորդումն,

Եւ զայս վարձս հատուցին զօրագրկացն աթենացիք
Փոխան որիտուր երախտեացն և մեծի այն քաջութեան.
Զոր տեսեալ ոք յապառնեաց՝ ևս առաւել խրախուսեսցէ
Համաչխարհին 'ի վերայ իրաց տաժանս յանձն առնուլ։

Եւ 'ի վերայ երրորդին հերմեայ գրեալ էր,

Ի քաջաբէ ասսի երբեմն Մենեսթեւս ընդ Սորիդայս [124]
Յաստուածայինն առաջնորդ 'ի որովկանն եղև դաշտ։
Զոր երբեմն Հոմերոս գանայեցւոց զրահազգեստից
Ռազմայարդար Շակատուց ասաց եկեալ այր շքեղ։
Այսպէս չէ ինչ անդէպ աթենացւոց առնուլ անուն՝
Պատերազմաց յօրինիչ և քաջօրէն արութեան։

Իցէն ուրեք զօրավարացն անուանք. և ոչ ուրեք, այլ՝ ժողովրդեանն։ Մատերուք արդ մտօքդ և 'ի սրահն նկարէն [125]. զի ամենայն առաքինի հանդիսից յիշատակարանք

Digitized by Google

'ի հրամայական կան ձեզ առաջի։ Իսկ զինչ իցէ զոր ասեմն, ո՛ տրք ասիցեալիք։ Անդ մարտիրոսեանն նկարեալ կայ Հակատամարտ։ Իսկ ոմ զօրապլուխն էր։ Առ այս հարցումն՝ ամենեքեան տայցէք պատասխանի, թէ Սիլիտիա գէս։ սակայն չիք անդ անուանն նշանագրեալ։ Ո՞րպէս։ մինթէ չհայցեցուց զպատիւդ զայդ։ Հայցեցայ, բայց չէտ Ժողովուրդն, այլ փոխանակ անուանն՝ զայն ևեթ շնորհեաց նմա, զի առաջին 'ի գլուխ գնդին նկարեսցի՝ խրախուսելով զզօրականն [126]։ Եւ 'ի մեհենի Դիցամորն [127] առ երի խորհրդարանին, զոր ինչ եւուքն պարգև այնոցիկ որ զգաղթական Ժողովուրդն այսրէն դարձուցին 'ի Փիլէայ՝ դոյ տեսանել։ Զի որ զհրամանն զայն գրեաց և յաջողեցաւ՝ Աղքինոս էր Կիլիկացին, մի յառաջնորդաց անտի Ժողովրդեանն։ և գրեաց նախ տալ նոցա 'ի սպաս զոհից և նուիրաց հաղար դահեկան, որ չէ և ոչ տասն տասն դահեկան առ այր։ Հրամայէ տալ ձիթենի պատկաւ պատկել զմի իւրքանչիւր, այլ ոչ ոսկեզնաւ։ զի յայնժամ 'ի շքի էր պատկ ձիթենի, իսկ այժմ և ոսկեզնին արհամարհեալ։ Եւ զայն ոչ վայրապար հրամայէ առնել, այլ սուրբագոյն քննութեամբ սահմանին, թէ քանիք ոմանք իցեն 'ի նոցանէ՝ որ պաշարեալ պնդեալ կացին 'ի Փիլէ 'ի յարձակել լակեդեմոնացւոց և Երեանիցն 'ի վերայ ապաւինելոցն 'ի Փիլէ, և ոչ թէ որ 'ի դիմել թշնամեաց դասալիքն եղեն 'ի Քերոնիա։

Եւ թէ արդար ասիցեմ, զհրամանն ընթերցցի ձեզ։

ՀՐԱՄԱՆ ՊԱՐԳԵՒԻ ԴԱՐՁԵԼՈՑՆ Ի ՓԻԼԷԱՑ

Ընթերցիր առ սին և զոր Կոսեսիփոն գրեաց Դիմոթէոնի, մեծի չարեացապարտին։

Digitized by Google

ՀՐԱՄԱՆ

Ի հրամանէ աստի յայսմանէ ՄԷՔԵԱԼ կորնչի պատիւ նոցա՝ որ առաՄՆորդքն կացին դարձի ժողովրդեանն։ ԵԹԷ այս վայելուչ է, այն ամենալից. եԹԷ նոքա ըստ արժանի մեծարեցան, դա տարապարտ պատկի։

Սակայն ըսեմ, զի դա ասել հանդերձեալ է, Թէ ոչ արդար դործեմ ես յօրինակ առնուլ նմա զնախնեացն գործս։ Զի և ոչ Փիլամոն ըմբիշ [128], աստուցէ, յոլիմպիականսն պատկեցաւ՝ Գլաւկոսի վաղՄՆչականին այնմիկ յաղԹող եղեալ ըմբշամարտի, այլ որոց առ իւրեանս էին ոխորիմք։ Իբրու այն Թէ տգէտք իցէք դուք, զի ըմբշաց ընդ իրեարս են մրցանք, իսկ որոց պատկն խնդրիցեն՝ ընդ առաքինութեան ինքնին գլխովին, որոյ վասն իսկ և պատկին։ Զի պարտ է քարոզին անսուտ լինել, յորժամ զքարոզութիւնն 'ի տեսարանին առ Հելլէնան առնիցէ։ Մի ուրեմն Ճառեացես մեզ՝ Թէ լաւ քան զՊատեկիոն [129] առաքինացեալ իցես, այլ յարութիւն քաջութեան ժամանեալ՝ այնպէս ապա այնուհետև շնորհս 'ի ժողովրդենէն խնդրեսջիր։

Այլ զի մի խոտորեցուցից զձեզ յառաջադրութենէս, ընԹերցցի ձեզ դպիրն զարձանագիրն որ դրոշմեցաւ 'ի վերայ այնոցիկ որ զժողովուրդն դարձուցին 'ի Փիլեայ։

ԱՐՁԱՆԱԳԻՐ

Արութեան պատիւ պրսակս ամենական բնաշխարհիկ գունդ
Սոցա շնորհեաց՝ որ երբեմն նախաձեռն գրսան
Զանօրէն կրօնիւք իշխողս քաղաքիս ցածուցանել,
Ի պարանոցքս իւրեանց առբկալեալ ըզվլասանդ։

Վասն զի քակեցին դոքա զնշխեցեալսն գոռոզացեալսն արտաքոյ օրինաց, վասն այնորիկ պատուեալս ասէ զնոսա քերդողն։ Զի 'ի լուր ամենեցուն հնչէր 'ի ժամանակին,

թէ յորմէ հետէ բարձին ոմանք զդատախազս անիրաւութեանց, քակտեցաւ լուծաւ ժողովուրդն։

Եւ յիրաւի իսկ, որպէս և լուեալ է իմ 'ի հօրէն իմմէ, որ զենտուն և զհինգամենիւք կենացն վախճանեցաւ, յամենայն 'ի վերոյ քաղաքիս խառն և կցորդ գտեալ. որ բազում անգամ խօսէր ընդ իս պարապով. քանզի ասէր, մինչ դեռ այն ինչ դարձեալ եկեալ էր ժողովուրդն. զի թէ զուսքէ փուրսիշ ամբաստանութեան յանէնիցէ յատենի, ընդ մի համար է անուն և գործն 130։ Զի զինչ ամպարշտագոյն քան զայր՝ որ անիրաւս խօսիցի և գործիցէ։ Եւ զլսելն, որպէս նայն պատմէր, ոչ այնպէս առնէին որպէս այժմս լինի. այլ գաժանագոյն յոյժ էին դատաւորքն առ անիրաւ հրամանահանսն քան զդատախազն ինքնին զվնասին, և յաճախ յետս դարձուցանէին զդպիրն, և պատուէր տային կրկնել ընթերցուել վերստին զօրէնսն և զհրամանն. և կորընչէին անիրաւս հրամանահանքն, ոչ միայն եթէ զամենայն օրինօքն վաղեալ անցեալ լինէին, այլ՝ եթէ և վանկ մի եթէ փոփոխէին։ Իսկ այժմս եղեալքս ծաղրս մեծի իրք են։ Զի գալիրն ընթերցուս զանօրէն հրամանն, իսկ դատաւորք՝ իրրև ցուցս իմն լսելով կամ օտար ինչ իրս, յայլ ինչ շուշեալ միտս եղեալ հային։ Եւ ահա չարահնար արուեստիւքն Դիմոսթենեսեայ՝ չարին սովորութեան մուտ տայք 'ի դատաստանսդ։ Զի փոխեցան ձեզ իրաւունք քաղաքիդ. զի դատախազն յոլոք գեղերեալ՝ ընդ անէին առնէ պատասխանի, և եկակոչ առնելաքրշն՝ դատ եղեալ չարաբոսկ. և ասենակալքն՝ զբոց իրաւարարքն են մոռացեալ երբեմն, զորոց չէին գատաւորք՝ այնոցիկ դատանիք ածել ստիպին։ Եւ ամբաստանեալն, եթէ միայն հպեսցի բնաւ 'ի խնդիրն, ոչ զգրելոցն անիրաւութենէ ասէ ինչ, այլ՝ զի երբեմն և այլոց ուրուք զնոցնա գրեալ յաւելագոյն՝ և արգարացեալ է։ Ցայս ազագս և այժմ մեծամեծս փքացեալ լսեմ զկոսիփան։

Ծարհէցաւ երբեմն 'ի ձեզ պարծել Արիստոփոնն այն

աղենիեցի և ասել, թէ եօթանասնեկի և հնգիցս անգամ ամբաստանեալ յանիրաւութիւն և արձակեալ էր։ Այլ ոչ և Կեփալոն այն հինաւուրց, ժողովրդասէրն քան զամենայն համարեալ, ոչ այդպէս. այլ 'ի հակառակէն պարծէր և ասէր, բազում ինչ քան զբնաւս գիր հանեալ հրամանի, չէր երբեք դատափետեալ յօրինազանցութիւն. զեղեցիկս կարծեմ պանծացեալ։ Զի յօրինազանցութիւն ամբաստան լինէին զմիմեանց՝ ոչ միայն որ հակառակ վարչութեանն էին, այլ և բարեկամք զբարեկամաց, եթէ մեղանչէին ինչ 'ի քաղաքն։

Եւ այսմ անտի հասանիջիք 'ի վերայ, զի Աղքինոս կիլէցի ամբաստանութիւն օրինազանցութեան մատոյց զԹրասիբուլէայ ստիրեցւոյ, որոյ գրեալ էր ինչ արտաքոյ օրինաց, պակէլ ասելով զմի ոք 'ի դարձէլոց անտի ընդ իւր 'ի Փիլէայ. և պարտաւոր արար զնա, թէպէտ և երախտիք կային նորա դեռադեռ, որոց չառին ինչ ակն դատաւորքն. զի համարէին՝ թէ զոր օրինակ յայնժամ դարձոյց այսրէն զփախստեայ գնացեալսն Թրասիբուլոս, նոյն և այժմ զորս կային՝ խախտեալ վտարիցէ անօրէն ինչ հրամանն տալով։ Բայց զարդիս ոչ էս. այլ ամենայն ինչ յետս ընդդէմ դուրծի։ Զի քաջ զօրավարքն էին, և ոմանք յորոց ոտձիկս 'ի Գրիտանին գտեալ էն, բողոք արկանեն ընդդէմ ամբաստանութեանց օրինազանցութեան. զորս է ձեզ իրաւամբք առապաշնորհս ունել։ Զի եթէ ոք պատուեալ յընկերահաշտիս, յայսպիսում քաղաքականութեան՝ զոր աստուածք և օրէնքն պահպանեն, ժոի Թիկունս տալ անօրէն հրամանահանաց, քակտէ զպետութիւնն յորմէ պատուեալն է։

Զինչ այսուհետև մնայ մարդոյ՝ որ արդարապէս և ցաւծութեամբ ջատագովն լինիցի. ես ասացից։ Յերիս մասունս բաժանեալ է օրն՝ յորժամ օրինազանցութեան ինչ փուրսիչ 'ի նեղքս անկանիցի յատեան դատաստանի։ Զի ջուրն 131 առաջին՝ արկանի դատախազին և օրինացն և ընկերահաշտութեանն. երկրորդ ջուրն՝ դատափետելումն՝ որ ընդ անձին

տայ պատասխանի, և որոց 'ի նոյն նպատակ լինին բանիւք։ Իսկ եթէ առաջնով վճռաւն չլուծանիցի օրինապանցութեանն փուրսիշ, անդէն ջուրն երրորդ արկանի 'ի հանդէս պատուհասին և չափոյ բարկութեան ձերոյ։ Արդ որ 'ի հանդիսի անդ ոք հարցափորձին զվճիռն ժամ, զբարկութիւն ձեր յաղերս ածեալ ողոքէ. իսկ որ յառաջին անդ խօսան ժամ զվճիռն՝ զերդումն ժամ, զօրէնն ժամ, զընկերհաշտութիւնն ժամ, յորոց և ոչ զմին օրէն է ումեք ժամել, և ոչ յորմէ ժամեցին՝ ընդհեալ։ Ապա տուք դոցա պատուէր՝ թոյլ առնել ձեզ՝ զառաջին վճիռն ըստ օրինացն ածելոյ, և այնպէս 'ի հանդէս հարցափորձին դալ հաստատել։

Եւ ամենեքին իսկ, ո՛ ալիք աթենացիք, ասել լինի կայ ինձ առաջի, թէ պարտ է և օրէնս ինչ դնել 'ի վերայ ամբաստանութեանց օրինապանցութեան եւեթ, զի մի օրէն լիցի՝ ոչ գաստախազին և ոչ պատասխանատուին ջատագովս 'ի թիկունս օգնականութեան ածել։ Զի ոչ անյայտ ինչ են իրաւունքն, այլ՝ օրինաքն ձերովք սահմանեալ։ Զի զոր օրինակ 'ի հիւանդութեան, յորժամ գիտել կամիցիս զուղիղն և զոչն, զքանոնն մատուցանեսք որով ճանաչի, նոյնպէս յամբաստանութիւնս անիրաւութեան՝ հուպ առ ձեռն կայ կանոն իրաւանց՝ տախտակդ այդ [132], և հրամանն նոր, և առընթերագիր նմին գրոչմեալ օրէնքն։ Ցոյց ապէ զդոցին ընդ միմեանս միաբանութիւն և էջ. և զի պիտի քեզ կոչել զորավիդն 'ի թիկունս զդիմոսթենէս։ Իսկ յորժամ զարդար պատասխանատուութեամբն [133] վաղեալ՝ կարդաս այր մի խորամանդ չարագործ և ճարտարապետ խօսից, գողանաս թովեա զլսելս, զեան գործես քաղաքիս, զընկերհաշտութիւնն եղծանես։

Իսկ արդ զինչ հնար խորհելոյ յայնպիսեաց խօսից. ես ասացից։ Իբրև մատուցեալ այսր Կտեսիփոն կատարեսցէ առ ձեզ զյառաջաբանն հանդերձեալ յօրինեալ նմին, և ապա ժամանակաւ դեղերեալ՝ չառնիցէ ուղղորդ պատասխանի, յուշ ածէք նմա անխռովաբար՝ առնուլ 'ի ձեռս ըզ-

Digitized by Google

տախտակդ, և կարդալ առընթեր հրամանին իւրոյ զօրէնսն։ Եւ եթէ խլիցեալ չլուսելոյն ձեզ առնիցէ, մի և դուք կամիցիք լսել նմա. զի ոչ եթէ զամբաստանելոցն զանարդար պատասխանիս ժողովեալ իցէք լսել, այլ զորոց ըստ իրաւանց կամիցին տալ պատասխանի։ Իսկ եթէ զիրաւացի ազերսաբանութեամբն զանց արարեալ՝ զԴիմոսթենէս կոչիցէ, ևս առաւել մի ընդունիցիք զայրն եղեռնաւոր՝ որ համարի բանիւք զօրէնսն տապալել։ Եւ մի ոք 'ի ձէնջ 'ի լաւութիւն ինչ իւր զայն համարեսցի, զի 'ի հարցանել Կոսիփոնեայ թէ կոչեսցէ զԴիմոսթենէս, ինքն նախ ձայն բարձեալ, Կոչեա կոչեա [154]։ Զարոյ քում կոչես, օրինացն կոչես, ընկերհաշտութեանն կոչես։ Սակայն եթէ հաճոյ ինչ ձեզ թուեսցի լսել զԴիմոսթենէս, պահանջեցէք 'ի դմանէ նովին ոճով զպատասխանիսն առնել՝ որով ես զամբաստանութիւնս։ Իսկ ես որպէս եղէ ամբաստան. զի և զայն յուշ ձեզ արարից։

Ոչ նախ ընդ անձին առանձին վարս Դիմոսթենի անցի ես, և ոչ 'ի քաղաքական անիրաւութեանց նորա յիշեցի ինչ նախ, թէպէտ և բազում ինչ Հոխագոյնս արդեաք ունէի ասել. կամ թէ տառապեալ ոք և տարակուսեալ քան զամենեսեան էի։ Այլ նախ զօրէնսն յանդիմանեցի՝ որ ասատն չպակել զհաշուապարտս. ապա զՀարտարխան կշռամբեցի՝ զի զհաշուապարտն Դիմոսթենէս հրամայէր պակել, ոչ ինչ յաւելեալ և ոչ կարդալ նախ 'ի գրին՝ թէ «Յորժամ զհամարսն տայցէ,» այլ և զձեզ և զօրինաքն բացէ 'ի բաց 'ի սպառ արհամարհեալ. ասացի և զոր յայտնի լինելոց էին մեռոի բաղբաղաք, զոր և ձեզ յիշել աղաչեմ։ Երկրորդ անգամ, անցի ձեզ ընդ քարոզութեանցն օրէնս՝ յորս անշուշտ վճարեալ է, զպակեալն 'ի ժողովրդենէն մի ուրեք արտաքոյ ժողովոյն քարոզել։ Եւ ասեն՝ նաքարշ Հարտասանդ՝ ոչ եթէ միայն յօրէնսն յանցուցեալ է, այլ և 'ի ժամանակ քարոզութեանն և 'ի տեղին. զի ոչ 'ի ժողովին հրամայէ զքարոզութիւնն լինել, այլ 'ի տեսա-

Digitized by Google

բանին. ոչ 'ի գումարել աթենացւոց, այլ 'ի հանդերձել ոգ-
բերգակացն 'ի հանդէս ելանելոյ։ Զայսոսիկ Ճառեալ, սուղ
ինչ և զանձին առանձին իրաց նորա ասացի, և յաշխա-
դոյն զհամաշխարհի ապիրատութեանց իւրոց բողոք հար-
կանեմ։

Զսոյն օրինակ և 'ի Դիմոսթենէ զպատասխանին պա-
հանջելէն. նախ՝ զօրինաց համարապարտիցն, և երկրորդ՝
զքարոզութեանցն, և երրորդ՝ զմեծն քան զամենայն ասել՝
զի և ոչ արժանի իսկ է պարգևի։ Իսկ եթէ խնդրեսցէ 'ի
ձէնջ՝ թողութիւն առնել նմա զբանիցն կարդ, խոստանա-
լով 'ի կատարածն կոյս պատասխանատութեանն լուծանել
զօրինազանցութեանն բասիր, մի՝ ներէք. և մի անգիտա-
նայք՝ զի մաքառումն է այդ առեղական. զի համարուն չեն
նորա կամք այնուհետև տալ պատասխանի զանօրէնութե-
նէն. այլ՝ քանզի չունի ինչ իրաւաբանել, հրոսող հինիւ աս-
պատակաւ իմն այլոց իրաց 'ի մոռացօնս զձեզ հնարիցի ար-
կանել ամբաստանութեանս։ Ապ, որպէս 'ի մերկակուիս
մրցանն տեսանէք զբմբիշն՝ վասն ոտնկայիցն ընդ իրեարս
յերկար դուպար 'ի հենգնոջ կացեալս, նոյնպէս և դուք
զօրն ողջոյն վասն կարդի խօսիցն մարտերուք ընդ նմա 'ի
վերայ քաղաքիս, և մի տայք նմա թոյլ՝ արտաքս քան զօ-
րինազանցութեան Ճառան թարթափել, այլ զեռզ առեալ
և յողացեալ 'ի լսարանիդ, վարեցէք զնա 'ի բանս խնդրոյն,
և ապաս արարէք յեղյեղուկ շրջելմանց բանիցն իւրոց։

Այլ յորժամ օրինակ զայդ առնիցէք զուանկդրութիւնդ,
որ ինչ անդ պատահելոցն խցէ ձեզ՝ և զայն արժան է ինձ
կանխել այժմէն ասել առ ձեզ։ Անդ յայնժամ 'ի հանդիսի
գործ արարեալ զանձն՝ հանցէ ձեզ 'ի դէմս զկախարդասարն
և զքաւակահատուն և զպատառօղն և խրամատող կարգաց
քաղաքիս։ Դիւրաւ ևս լայ դա քան զայլոց ծիծաղել, և
քան զամենեսեան առ ձեռն պատրաստ ունի զբարերդմնու-
թիւն։ Ոչ ինչ զարմացայց՝ եթէ յանկարծ յեղափոխեալ՝
'ի թշնամանս դարձցի որոց միանգամ շուրջս կան արտաքոյ,

Digitized by Google

ասելով թէ սակաւապետութեանն ձեռնտուք, 'ի նմին իսկ 'ի Հնմարտութենէն գոգ 'ի համար արկեալք, հասեալ կայցեն յատեան չարախօսին, իսկ ընկերհաշտութեանն՝ 'ի դատապետելոյն։ Իբրև զայսպիսիս խօսիցի, առ խաղմարար բանսն՝ զայն նմա 'ի դէմս ածէք, զի եթէ, ով Դիմոսթենէս, քեզ նմանօղ ինչ էին ոք զգաղթեալ ժողովուրդն դարձուցին 'ի Փիլէայ, չկայր բնաւ այսօր ընկերհաշտութիւնս։ Անդ նոքա՝ 'ի հասանել մեծամեծ չարեաց՝ կէցուցին զքաղաքս, զգեղեցիկն քան զամենայն բարբառեալ բան խրատու։ Մի չարայուշ ոմեակալ լինել։ Իսկ դու՝ հարուածս դարձեա, և քան փրկութեան քաղաքիս՝ առ օրին բանիցդ փոյթ է քեզ առաւել։

Իսկ յորժամ որ երդմնասուտդ է՝ յերդմանցն հաւատս ապաստան լինիցի, զայն նմա յուշ արարէք, թէ որ յաճախն երդնու սուտ, և միշտ առ նոյնս խնդրէ հաւատարիմ լինել երդմամբքն, զմի յերկուց աստի պարտ է նմա ունել, — որոց և ոչ մին կայ Դիմոսթենի, — կամ աստուածս նոքանորս, կամ ունկնդիրս ոչ զնոյնս։

Իսկ յաղագս արտասուացն և ողբակաց ձայնին, յորժամ զձեզն հարցանիցէ։ « Եւ յո՞ ապաստան անկանիցիմ, ով ազգ աթենացիք։ հատէք ընկեցէք ապիրատ արարէք զիս 'ի պետութենէդ։ չիք ուր ապաւինեցայց, » անդրէն կրկնեցէք առ նա։ « Իսկ ժողովուրդս աթենացւոց յովապաստան եղիցի, Դիմոսթենէս։ յոր նիզակակցաց պատրաստութիւն, յոր գանձս։ զինչ ինչ 'ի քաղաքավարութեանդ վասն ժողովրդեանս մերերեցեր։ զի զոր վասն անձինդ կալար խորհուրդ՝ ամենեքեան տեսանեմք։ Թողեալ զքեզ զոսմանս, ոչ որպէս կարծիսն 'ի Պիրէոն բնակեա, այլ դիմեալ երթաս 'ի քաղաքէս 135, և թոշակ ճանապարհի ամբարեալ ես՝ քոյով վատութեամբդ՝ զթագաւորական ոսկին և զկաշառակրծութիւնդ յիրաց աշխարհիս։ »

Եւ զի՞ իսկ բնաւ արտասուքդ իցեն, զինչ կականումդ, զինչ ձայն բարբառոյդ։ Ո՞չ Կտեսիփոն է ամբաստանեալն,

Digitized by Google

և փուրսիչն անպատուհաս [136]. իսկ դու ոչ զընչեցդ, ոչ զանձնէ և ոչ զբաստոյդ նահատակիս։ Իսկ զիմէ՞ ապա լցէ դորա փոյթ և ջան։ Զոսկի պատկաց և դքարոզութեանց 'ի տեսարանին արտաքոյ օրինաց. որում թէ և ցնորեալ ժողովուրդն կամ մոռացեալ զեղեալսն, յայսպիսում տա-րաժամու կամէր զդա պատկել, դմա պարտ էր մատչել առ ժողով անդր և ասել. «Աղք սթենացիք, զպատկդ ընդու-նիմ, բայց զժամանակն խոտեմ՝ յորում քարոզութիւնն լինիցի. զի զորոց 'ի սուգ և 'ի խղճութիւն [137] կայ քաղաքս, չէ ինձ արժան վասն նոցին պատկիլ։» Այլ զայդ ասել կար-ծեմ առաքինակրօն առն. իսկ զոր դուդ ասիցես, ասասցէ թերևս ընչան ոք նշանակ՝ կերպարանեալ զառաքինութիւն։

Այլ մի՞ ոք 'ի ձէնջ, երդուեալ 'ի հերակլէս, մի՞ ոք զան-գիտեսցէ, թէ գուցէ Դիմոսթենէս, այր մեծահոգի և քա-ջակինդ 'ի պատերազմական, վերիպեալ 'ի մրցանակացն, դարձ 'ի տուն և դաւ անձինն արարեալ՝ զիւրովին երթայցէ, որ այնչափ ծաղր հեղու զառ ձեզ պատուոյն, զի զգլուխն զայն պիտի և դատապարտ, զոր սա արտաքոյ ամենայն օրի-նաց հրաման արար պատկել, բիւրեցս ցտեսց և ընդ այնր վարձս էառ, զկամաւոր ինքնահարուածն վերացն եղեալ նա-մակագիր. և կռուիս 'ի նոյն ընկալաւ, մինչև կարծեմ թէ դեռ ևս կան մնան 'ի նմա ակներև հետք և նշմարանք բրո-նապատակացն Միդիասայ։ Զի այրդ այդ՝ ոչ կառափն մար-դոյ, այլ գլուխ տոկոսեաց [138] բարձեալ կրէ։

Եւ զԿտեսիփոնէ՝ որ զհրամանդ գրեաց՝ կամ է ինձ ա-սել փոքր 'ի շատէ, զշատն թողեալ. զի զհանդէս առից ըզ-ձեր, թէ կարօղ ինչ եցէք զկարի չարադոյնսն ճանաչել ա-ռանց ուրուք զգացուցանելոյ. և որ երկոցունցն հասարակ խառն ինչ է և իրաւացի առ ձեզ ճառելոյ, զայն ասասցիս։ Քանզի շուրջ անցեալ ընդ հրապարակն և հաւաստի զմի-մեանց առեալ կարծիս ճշգրտաբանեն։ Զի Կտեսիփոն ոչ զանձնէ ինչ ասէ կասկած լինել, զի ակն ունի 'ի տոսկա-կանաց լինել համարի, այլ զԴիմոսթենի յիրս տեսչութեանն

Digitized by Google

զկաշառակրծութենէն ասէ խիթալ, զափշութենէն և զվատասրտութենէն։ Իսկ Դիմոսթենէս՝ յանձն իւր հայեցեալ՝ վստահ լինել ասէ, այլ 'ի Կտեսիփոնի չարութենէն և 'ի բռազարածութենէն մեծապէս երկնչել։ Եւ որ այսպէս զիրեարս մինասապատ առնեն, դուք հասարակաց նոցա բասրանայն դատաւորք, մի երբեք ընդունիցէք նոցա արձակուրդ։

Կամիմ ասել կարճ'ի կարճոյ և վասն բամբասանաց նոցա զինէն։ Աղդ լինի ինձ զի Դիմոսթենէս ասել հանդերձեալ է, թէ քաղաքիս օգուտ բաղում է յինքենէ, իսկ յինէն մնաս յոյժ, և զՓիլիպպոս և զԱլէքսանդրոս և զսո'ի նոցանէն տոյժս՝ յիս կրթել հանել։ Զի այնպիսի ոք դրժնեայ ճարտարող է բանից, որպէս թուի, մինչև ոչ զայն և եթ բաւական վարկանել, զի եթէ վարչութիւն ինչ կալեալ է իմ առ ձեզ կամ ճառս ինչ հրապարակախօսեալ, զայնցանէ ամբաստան լինել, այլ և զցածութենէ կենացս չարախօսք և զլռութենէս դատախազք, զի մի մնասցէ նմա տեղի ազատ 'ի զրպարտանաց. և զյամենս ընդ պատանեական յերիտասարդանոցս պախարակէ. և զդատաստանէ ստոր այսմանէ՝ անդէն 'ի գլուխ խօսիցն բաղայս ինն յաւաջ մատուցանէ, ասել՝ թէր ոչ եթէ վասն քաղաքիս ինչ զայս ամբաստան լինիցիմ, այլ 'ի ցոյցս Ալէքսանդրի՝ առատելութեան նորա առ դա։ Եւ, երդուեալ Ամամանդ, որպէս լսեմն՝ հարցանելոց ևս է զիս, թէ ընդէր բռանդակ զքաղաքավարութիւն իւր պարսաւիցեմ համարիս, և ոչ մի ըստ միոջէ խափանեցի առ ժամայն, և չեղէ ամբաստան, այլ յոլն անկեալ, և 'ի գործս տեսչութեանն չյաճախեալ, հուսկ ապա ուրեմն եղէ նամանկագիր։

Իսկ իմ չկամ նախանձեալ ընդ պարապմունսն Դիմոսթենի, և ընդ իմս ոչ ամաչեմ, և ոչ զբանս իմ խօսեալս առ ձեզ՝ ապախտ ինչ լինել կամիցիմ, և ոչ՝ եթէ զդրդայն էր իմ խօսեալ յատենի, զարև տեսանել առնուի յանձն։ Իսկ զլռութիւն իմ, ով Դիմոսթենէս, պարկեշտութիւն կե-

նացս յորինեաց. զի սակաւիկ ինչ շատ է ինձ, և մեծամեծաց ոչ ցանկանամ հարաչաւր. վասն որոյ և լուռ կամ, և խօսիմ եւ՝ եթէ հարցանիցիմ ինչ խորհուրդ, այլ ոչ 'ի հարկէ ծախուց բնութեանս բռնադատեալ: Իսկ դու, կարծեմ, 'ի կաշառիդ կարկեալ կաս, և 'ի վանեալդ կակաչէս. և խօսիս՝ ոչ յորժամ քեզն ինչ բարւոք թուիցի, և ոչ զոր կամիսն, այլ յորժամ վարձահատոյցքդ պահանջիցեն. և ոչ պատկառես ճանաչակալ զորոց նոյնհետայն ստախօս յանդգնանիս:

Զի՞ ահա ամբաստանութիւնս այս, զոր ոչ վասն քաղաքիս, այլ առ 'ի ցոյցս առնելոյ Ալէքսանդրի ասես լինէն 'ի մէջ ածեալ, յայնժամ մատուցաս՝ մինչդեռ տակաւին կենդանի կայր Փիլիպպոս, և Ալէքսանդրի չէր պայազատեալ զտէրութիւնն, ոչ քո զՊաւսանիայ զտեսիլդ տեսեալ և ոչ ընդ Աթենասայ և Հերայի գիշերայն եղեալ խօսակից: Եւ զնա՞ւդ էր ինձ կանխել յառաջագոյն առ ականէ ցոյցս և շուշականս առնել Ալէքսանդրի, բայց եթէ զնոյն անուրջս և իմ ընդ Դիմոսթենի անրջացեալ:

Այլ պատուհասակոծ առնես զիս, զի ոչ ստէպ յաշակերտեմ առ Ժողովուրդն, այլ ընդ ժամանակս ժամանակս. և համարիս թագչել 'ի մէնջ, զի զշոխութիւնդ զայդ ոչ յընկերահաշտեաց, այլ յայլմէ օտար քաղաքականութենէ առեալ 'ի ներքս մուծանես: Վասն զի 'ի սակաւուց իշխանութեան՝ ոչ որ կամին ոք, այլ որ բուռն ինչ ոք է՝ նա լինի ամբաստան: Իսկ յընկերահաշտիս՝ ուր ումեք և կամ իցէ և յորժամ հաճոյ նմա թուեսցի: Երբեմն երբեմն յատեան գալ 'ի խօսս՝ նշան է առն ըստ սէտս և ըստ օգտի քաղաքավարելոյ. իսկ և ոչ օր մի վրիպել՝ հարկաւ ընդ գործ մտելոյ և վարձկանելոյ:

Իսկ յաղագս չէ՞ և այս լինէն 'ի դատ վարելոյդ 139 և կրելոյ զպատիժ ապիրատութենացդ, յորժամ 'ի բանս այսպիսիս փախուցեալ անկանիս, կամ զունկնդիրդ համարիս մոռացկոտս, կամ անձամբ զանձն խաբես: Քանզի զամ-

Digitized by Google

պարշաւութիւնս քո յամենիսականն և զկաշառաբերութիւնդ յԵւբիա, 'ի վերայ անցելոց ժամանակաց՝ յորս յայտ յանդիմանութեամբ կշռամբեցար լինէն, ակն ունիս թերևս թէ մոռացեալ լիցէ ժողովրդեանս։ Իսկ զպարշտակութիւնդ լիցս նաւացն և նաւակառուցից՝ որ ժամանակ սուզանել մարթիցէ, յորժամ օրէնս իմն երից հարիւրոց նաւաց եդեալ, և հրապուրեալ զաթենացիս՝ զքեզ կարգել ոստիկան նաւատականին, յանդիմանեցար յինէն, զի վաթսուն և հինգ երագընթաց նաւաց նաւարարս 'ի բաց խափանեալ, զմեծ և նաւական զօրութիւն քաղաքիս անհետ կորուսեր՝ քան յորժամ նաւամարտիւ 'ի Նաքսոս՝ Լակեդեմոնացւոց և Պոլլիսի յաղթեցին աթենացիք [140]։

Բայց յայնպիսի իմն հաւահալած խրատուել ակնհար բաղբաղայից ցանկեալ պաշարեցեր զվան քո պատուհասս, մինչև ոչ 'ի քեզ յանիրաւդ, այլ 'ի քո վրէժինդիրսն հասանել անկանել վասնզին. յաշխս 'ի մէջ բերեալ 'ի բանսարկութիւնս քո զԱՀէքսանդրոս և զՓիլիպպոս, խծբիծ ըսագտանաց 'ի վերայ եդեալ՝ թէ զի խոչ և խութ ընդ ոտն անկանին ոմանք յաջողուածոց քաղաքիս. քո միշտ խանգարեալ զոր կայն, և զհանդերձեանն աւետաւորելով։ Ո՞չ ապաքէն, հուսկ ուրեմն, մինչ դեռ ինձ զքէն առաջի կայր սմբաստան լինել, հնարեցար զրմբունումն Անաքսինոսի ովքէոսացւոյ, որ վաճառս վասն Ոլիմպիայ գնոց առնոյր [141], և գեղարանոք խոշտանգեցեր զայրն՝ քով ձեռամբդ գրելով դատաստանիս, մահու զնովաւ ածել պատուհաս։ Եւ սակայն առ նմա օթեցար յՈվրէոս, 'ի նմին սեղանոյ կերեալ և արբեր և նուէրս հեղեր, և աչ յայլ արկեր՝ առեալ զնա յայրբարեկամ և 'ի հիւր։ Եւ դաս զնա սպաներ. և զայսմ ամենայնէ՝ առ ամենայն աթենացիս փաշաման լինէն կրեալ, և հիւրասպան կարդացեալ, չեղեր յուրատ յամպարշտութենէ անտի. եւտուր պատասխանի, առ որ աղաղակ եբարձ ժողովուրդն և հիւրք ամենայն՝ որ միանգամ շուրջն կային.

Digitized by Google

զՀրապարակաւն, զի ասացեր. Զաղջ քաղաքիս առաւել մեծարեցի քան զսեղանն հիւրասէր [142]:

Լռեմ զսուտ նամականին և զկայանս լրտեսաց և զխոշանդանս 'ի պատճառս անդոյ յանցուածոց. որպէս թէ կամեցեալ իմ միաբանութեամբ ոմանց վերս 'ի վայր զքաղաքս զգրգռել: Եւ յետ այսր ամենայնի, հարցանելոց է զնա, որպէս լսեմն, որ այն բժիշկ իցէ՝ որ ախտացելոյն չտայցէ ինչ խրատ 'ի հիւանդութեանն. և 'ի մեռանելն՝ 'ի յուզարկումն [143] եկեալ նորին, առ ընտանեան Հառ արկեալ պատմիցէ, թէ ի՞նչ հնարիւք գոյր նմա գալ յառողջութիւն: Իսկ զանձեղ ո՞չ հարցանիցես. որ այն իցէ վարիչ ժողովրդեան՝ որ կարող իցէ արտակել նմա, և զդէպ ժամանակս փրկութեան քաղաքին տայցէ վտարանդի, և զքաջախոհան բանաարկութեամբ արգելուցու 'ի խորհրդոց. և փախուցեալ 'ի վտանգաց և զքաղաքն անհնարաւոր տուժիւք պաշարեալ, եկեալ ապա խնդրիցէ առաքինութեան պակ. բարի և ոչ մի ինչ գործեալ, և ամենայն աղետից եղեալ պատճառք, և հարցանիցէ ևս զզրպարտեալն՝ զընկեալն 'ի քաղաքավարութենէ այնց ժամանակաց՝ մինչ գեռ գոյր փրկութիւն, թէ ընդէր ուրեմն ոչ յետս նահանջեցէք զնա 'ի մեղանչելոյ: Իսկ հուսկ զնի ամենայնի՝ ընդ քողով ծածկիցի այն, զի 'ի տապնապել մարտի պատերազմին՝ ոչ պարապէաք զքո պատուհասիւդ գալ, այլ վասն փրկութեան քաղաքիս 'ի հրեշտակութիւն երթայաք [144]: Բայց իբրև ոչ շատ թուեցաւ քեզ չտալ պատիժս, այլ և պարգևս խնդրես, ծաղր և ծանակ 'ի հեղ՚Հենացիս զքաղաքս կացուցեալ, յայնժամ 'ի մէջ անցեալ՝ զգիր ամբաստանութեանս մատուցի:

Այլ յորոց լսեմն ասել Դիմոսթենի, 'ի դիան երդուեալ յոլիմբականս՝ ընդ այն առաւել զչարիսն զոր այժմս եմ մերկանալոց: Զի որպէս թուի, զբնութիւն իմ առակելոց է 'ի համբարուս. յորոց 'ի լուր՝ ոչ հեշտանալ ասէ զլսելն, այլ կորնչել. վասն որոյ և անհաճոյ զհամբարուացն

լինել երգս. Նոյն և զխոց բանիցս փորձ և զքնութիւն իմ 'ի ինսս ունկնդրացն եղեալ։ Այլ զբանդ զայդ ես ամենեին ոչ ումեք վայելուչ վարկանիմ ասել զնէն. զի կորանք իցեն չկարել ապա արդեամբք ցուցանել զեպերն՝ յորժամ պահանջիցի։ Իսկ թէ հարկ ինչ էր ասել, ոչ Դիմոսթենի անկ էր բանն, այլ առն ումեմն զօրավարի, որոյ մեծամեծս վճարեալ յօրինուածս քաղաքիս, և անբաւական գտեալ 'ի խօսս, նմին իրի և յոսոխացն բնութիւն նախանձ բերիցէ, գիտելով չափ՝ զի ոչ ինչ 'ի գործեցելոցն իւրոց կարողութիւն է նմա ճառել. իսկ զդատախազն տեսանիցէ կաթող՝ և զոչ գործեցեալսն իւր ընծայեցուցանել լսելեացն իբրև կատարեալս։ Իսկ յորժամ բայիւք բանից աճառեալ և զանգեալ այր, և այն դառամբք և կախարդս կանոք, հուսկ ուրեմն 'ի պարզմտութիւն և յարդիւնս գործոց փախուցեալ ապաւինիցի, ո՞ հանդգ բռեսցէ. զորոյ թէ զլեզուն ոք իբրև զիոզոց [145] 'ի բաց կորզեսցէ, մնացեալն ոչ ինչ է։

Բայց ես ընդ ձեզ զարմանամ, ով արք աթենացիք, և խնդիր առնեմ. յինչ դէտ ակն կալեալ մերժիցէք զամբաստանութիւնս։ Միթէ զի օրինաւո՞ր է հրամանն. այլ չէք երբէք լեալ հրաման անօրէն քան զայդ։ Իսկ միթէ զի հրամանահանդ չնցէ՞ արժանի դատ տալոյ. չեն ուրեմն առ ձեզ հարցք և քննիք վարուց, եթէ զդա արձակիցէք։ Ո՞չ և այն տրտմութեան իցէ, զի որ երբեմն ձեր պատահամբարն էր ոսկեղէն պատկաց՝ կաքաւարանն, որովք Ժողովուրդս պատկեր 'ի Հելլենաց, մատնեալ կայցէ այսօր 'ի պատկս օտարոտիս, և 'ի Դիմոսթենի առնելոյ՝ դուք անպատկ և տանց քարոզութեան լինիջիք, և դա հուչակեսցի։ Եւ եթէ յոլբերգակ քերդողացն ոք, որ յետ այսորիկ հանդիսանալոցն են, զթերսիտէս յողբերգութեանն պատկաւոր ցուցանիցէ 'ի Հելլենացւոց, ոչ ոք 'ի ձէնջ ունիցի ժոյժ. զի անարի և զբարպարիչ զնա լինել ասէ Հոմերոս [146]. և դուք յորժամ զայդ պիսիդ պատկիցէք այր, ո՞չ կարծիցէք լինել 'ի չէիւն մատցն Հելլենացւոց։ Քանզի հարքն ձեր զպատաւորս և զվայե-

Digitized by Google

լուչս իրաց՝ Ժողովրդեան ընծայէին, իսկ զնուաստս և ըզխոնարհս՝ 'ի յոռի Հարստարարեսան տանէին. բայց Կտեսիփոն արժան հատմարի ձեզ բառնալ 'ի Դիմոսթենէ զանչքութիւն, և զժողովրդեամբն արկանել։

Երջանիկ ասէք զանձինս, որպէս և էքդ իսկ 'ի յաջողելդ. իսկ տայցէ՞ք վՀիա հրամանի՝ թէ թողեալ լքեալ 'ի բախտէն՝ 'ի Դիմոսթենեայ դառեալ լցէք բարիս. և որ անպատեհ քան զամենայն է, 'ի նոյն ատեանս՝ զըմբռնեալսն 'ի բասրանս կաշառոց անարգիցէ՞ք, իսկ զոր ինքնին գիտէք վարձուք քաղաքավարեալ՝ պակիցէ՞ք։ Եւ որ 'ի Սպանդարամետականսն են դատաւորք, եթէ ոչ ուղիղ դատիցին զչրջաբոլոր կաքաւս պարուց, ընդ պատժով զնոսա արկանէք, իսկ ձեր՝ ոչ պարաւոր խաղալկաց կարգեալ իրաւարարք, այլ օրինաց և քաղաքական առաքինութեան, զպարգևադ՝ ոչ ըստ օրինաց, ոչ սակաւուց և արժանաւորաց, այլ խորամանգ հնարաւորելոցն շնորհիցէք։ Դատաւոր այդպիսի ելցէ ապա յատենէն՝ զանձն նկուն արարեալ, և զօրաւոր զՀարստարարեսան։ Զի այր սոսկական յընկերաՀաշտ քաղաքի՝ օրինաք և քուէիւն թագաւորէ. իսկ յորժամ առեալ զայդոսիկ տացէ այլում վտարանդի, ելցէ՝ իւրովն զՀարստութիւն իւր։ Այս այսու և երդումն, զոր երդուեալ մեր 'ի դատաստան, զՀետ իւր վարեալ՝ խէթ մտացն լինի. զի 'ի նորա ձեռն, կարծեմ, եղեն մեղքն, իսկ շնորհն՝ առ որ շնորհեացն՝ անյայտ մնաց. քանզի քաւէն յաներևոյթս արկանի։

Ինձ այսպէս թուի, ով արք աթենացիք, թէ առ անըզդաստութեան մերում 'ի տեսչութեան՝ երկոքին ևս 'ի մեզ ելանեն, և ուղիղն գնալ, և 'ի վտանգի կալ։ Զի 'ի ժամանակի ասա յայսմիկ՝ բազումքդ 'ի ձեռս սակաւուց թողուցուք զմեծամեծս ընկերհաշտութեան, զայդ ոչ գովեմ. իսկ զի առ մեզ չէք եղեալ չար և յանդգնութեան Հարստասանիչ առատութիւն, յայդմ բարեբախտիկ եմք։ Զի յառաջ ժամանակաւ այնպիսի բնութիւնս բուսոյց աշխարհս, որ

Digitized by Google

դիւրաւ ինն խախտեցին զռամիկն, զի հեշտանայր ընդ փա-
ղաքշանս։ Ապա այնուհետև ոչ յորոց երկնչէրն, այլ յորոց
ձեռս մատնեաց զանձն՝ նոքա եղծին զնա։ Որպիսիք ոք
գտան և յԵրեմնից [147] անտի ոմանք, որ առաւել քան զհա-
զար հինգ հարիւր 'ի քաղաքայնոցս առանց դատաստանի
'ի մահ վարեցին, առանց և զվնասն անդամ՝ յէր սակս մե-
ռանելոցն էին՝ լսելոյ. և ոչ 'ի դիահանան և 'ի Թաղուն
վախճանելոցն Թոյլ տային կարևորացն ջերմոց հուպ մատ-
չել։ Ո՞չ ընդ ձեզք նուաճիցէք զվարիչս քաղաքիս։ Ո՞չ կոր
'ի գլուխ 'ի բաց արձակիցէք զայժմու ամբարձեալսն։ Ո՞չ
ուշ 'ի կուրծս առնիցէք, զի ոչ ոք երբեք յառաջագոյն մտա-
բերեաց 'ի քաղաքումն Ժողովրդեան՝ մինչ չև մոզացեալ կրն-
ճացեալ և բուռն եղեալ քան զդատաստանս։

Արդ ես, ո՛ արք աթենացիք, մտադիր ինն առաջի ձեր
'ի համար արկանէի առ տուող հրամանին, առ որոյ երախ-
տեաց զԴիմոսթենէս արժանի դատիցի պսակի։ Զի Թէ
ասիցես, ուստի սկիզբն արարեալ ես հրամանագրիդ, Թէ
զի զիտոսն զպարսպօքս բարւոք փորեաց, զարմանամ ընդ
քեզ. զի քան զայդ բարւոքն 'ի գլուխ տանել, այդմ պատ-
ճառն լինել մեծագոյն դարմանք են։ Զի ոչ վասն պատնէշ
զպարսպաքն ածելոյ, և ոչ զհաստակաց գերեզմանն բրե-
լոյ խլելոյ [148] արժան ինչ իցէ ուղիղ քաղաքավարելոյն պար-
գևս խնդրել, այլ վասն բարւոյ իրիք քաղաքին սատար լինե-
լով։ Իսկ եԹէ յերկրորդ գլուխ հրամանիդ եկեսցես, յորում
իշխեցեր գրել՝ Թէ այր լաւ է, և անհանգիստ 'ի բարի ժողո-
վրդեանն աթենացւոց ջանացեալ խօսի և գործէ, 'ի բաց
տարեալ զկոկոզանս և զպարպատիւն գրուածոյդ, մատիր
աղէ 'ի գործն, ցոյց մեզ զպոռոտախօս բանդ։ Զի ահա՝
զառ ամփիսացիսն և եւբիացիս զկաշառադնացութիւնն
Թողեալ, ուր զպատճառս ընդ Թեբացիս նիզակակցու-
Թեանն տանիս հանես 'ի Դիմոսթենէս, զանգէտսն պատ-
լես, և զդիտունսն և զդաստս Թշնամանես։ Զի զբլացեալ
զպատեհ ժամանակին և զփառս սոցա՝ որով եղև նիզակա-

Digitized by Google

կցութիւնն, զանխլաբար իմն 'ի մէջ՝ զպարծանս քաղաքիս Դիմոսթենեի ընծայել կարծես։

Իսկ թէ քանիսն իցէ ապարատանութիւնդ այդ, զուն գործեցից ես ուսուցանել մեծաւ նշանակաւ։ Զի Պարսից արքայն, ոչ բազում ժամանակաւ յառաջ քան զԱլէքսանդրի յԱսիա դիմելոյ, առաքեաց առ Ժողովուրդս գիր մի թշնամանալից և խուժադուժ, յորում յետ այլոց կարի իմն անազդակեալ բանից՝ գրեալ կայր 'ի վերջ կոյս նամակին. «Եւ, ասէ, ոչ տայ ձեզ ոսկի. մի խնդրէք յինէն, զի չառնուցուք։» Սակայն նոյն ինքն պաշարեալ յարդի վասն գիշն հասելոց 'ի վերայ իւր, մինչ ոչինչ խնդրէին աթենացիք, ինքնին կամաւորապէս յղեաց առ Ժողովուրդն երեքարիւր տաղանդ, զոր խմաստութեամբ չընկալաւ [149] Ժողովուրդն։ Եւ բերող ոսկւոյն՝ էր ժամանակն և երկիւղն և պէտք նիզակակցութեանն. նոյն և զթեբացւոցն նիզակակցութիւն վճարէր։ Բայց զու խեղդ արկանես՝ անդադար զանուն թեբացւոցն յեղյեղելով և զթշուառ նիզակակցութեանն. իսկ զեօթանասուն տաղանդքն լուութեամբ անցցանես, զոր կանխեալ հատեր խորեցեր յոսկւոյն արքունի։ Ո՞չ առ կարօտութեան արծաթոյ էր, վասն հնգից տաղանդաց, զի օտարազգիքն չեռուն 'ի դուրս առ թեբացիս զմինչնաբերդ ամրոցն [150]. և վասն ինն տաղանդաց արծաթոյ, մինչդեռ արկադացիք առ հասարակ խումբ արարեալ կային [151], և զօրավարքն կազմք յօդնականել մեզ, ոչ չոգաւ գործն 'ի գլուխ։ Իսկ զու յօրանաս 'ի Հռխութիւն, և 'ի հեշտութիւնս անձին մատակարարես. և բծնիս գլուխ խօսիցս, ոսկին արքունի առ դմա, իսկ վիշտք վտանգաց առ ձեզ։

Արժան է և զանհանձարութիւն դոցա նկատել. զի եթէ ժպրհիցի Կտեսիփոն կոչել զԴիմոսթենէս խօսել առ ձեզ, և նա եղեալ զանձն գովիցէ, ծանրագոյն ևս եղիցի լուրն այն քան զգործն որոց համբերեցէք։ Զի ուր և արանց ատուգիս քաջաց, որոց բազում բարեաց գործոցն իրագէտ

Digitized by Google

իսկ եմք, եթէ զանձանց դրուատս խօսիցին՝ ոչ հանգուրժեմք, ապա յորժամայր ոք 'ի գարշանս եղեալ քաղաքիս՝ զանձն 'ի գովութիւն առնուցու, ցՍր ուրուք զայն լուեալ և ժուժկալեցէ։

Արդ՝ եթէ խմաստուն իցես, 'ի բաց կացցես յանպատկառ գործոյ այսր, և դու քեզէն առնիցիր զպատասխանատուութիւնդ, ասվ Կոեսիփոն։ Ապաքէն ոչ յայն ինչ յենուցուս, թէ չիցես կարող խօսել. զի և անպատեհ իսկ իցէ քեզ, որ փոքր մի յառաջ յանձին կաբար ընտրել պատգամաւոր առ Կլէոպատրա 152 դուստր Փիլիպպոսի, առ 'ի ցաւակից ընդ նմա լինելոյ ընդ մահն Աղէքսանդրի՝ 153 Մոլոսաց արքային, եթէ այժմ անբաւական զանձդ ասիցես 'ի խօսել։ Թող զայդ, զկին մի այլազգի ազգաւոր՝ կարօղ գտար մինթարել, իսկ վարձուք հրամանն գբեալ՝ ոչ ունիցիս տալ ընդ անձին պատասխանի։

Կամ թէ որուամ պակին տալ հրամայեցեր՝ այնպիսի՞ ոք է որ յերբախտաւորեալսն ոչ ճանաչիցի՝ եթէ ոչ ոք ընդ քեզ նմին ջատագով մնանիցէ։ Ալէ հարց զգաստատրոգ, թէ ճանաչէին զՔաբրիաս և զՄիթիկրատէս և զՏիմոթէոս, և ուստիր 'ի նոցանէ՝ ընդէր եւոուն նոցա պարգևս և կանգնեցին պատկերս։ Չի ամենեքեան ընդ մի բերան տացեն քեզ պատասխանի, թէ Քաբրիասայ՝ վասն առ Նպաքոսիս հաւատարմութեան, Միթիկրատեայ՝ զի զլակեդեմոնացւոց զգունդն սատակեաց 154, Տիմոթէի՝ վասն ընդ Կերկիւրա հաստատութեանն 155, և այլոց որոց միոյ միոյ բազում և չքնաղ պատերազմական քաջութեանց գործեցան հանդէպք։ Իսկ Դիմոսթենի, հարց թէ իմ իմիք տայցէք փոխարէն։ Փոխանակ՝ զի կաշառաբեկ, զի վատասիրտ, զի դասալիք։ Եւ մի թէ զդմ պատուիցէք, թէ զձեզ անարդիցէք և զի վերայ ձեր մեռեալն 'ի Հակատու, զորս դիք 'ի մահ տեսանել յողբ և 'ի կական՝ եթէ դա պակեսցի։ Քանզի և անհնարին իրք իցեն, ասվ արք սթենացիք, զի զիայաս և զքաբինա և զերկաթ՝ զանմուունչն և զանիմաստս, եթէ յուրուք

վերայ անկեալ սպանանիցեն, տարագիր ըստ տահմանս վտարիցեմք [186], և եթէ անձին ոք առնիցէ, զձեռնն որ զայն գործեաց՝ ուրոյն 'ի մարմնոյն թաղիցեմք, իսկ զԴիմոսթենէս, ով աթենացիք, որ զյեսին արշաւանն [187] հրամայեաց և զզօրականն մատնեաց 'ի կորուստ, զդա դուք մեծարիցէք։ Թշնամանեացին ուրեմն վախճանեալքն. վհատեալ տարակուսեցին կենդանիքն, տեսեալ՝ զի առաքինութեան մրցանակ պակի մահ, և յիշատակ անհետ կորուսեալ։

Եւ որ մեծն քան զամենայն է, եթէ հարցանիցեն զձեզ մանկագոյնք, ըստ որում օրինակի արժան իցէ նոցա զվարս իւրեանց տնօրինել, զի՞նչ ընտրիցէք։ Քանզի ճարտար դիտէք, ով արք աթենացիք, զի ոչ կռուանոցք, ոչ վարժարանք և ոչ երաժշտաց դուսանութեան արուեստականք ևեթ հրահանգեալ կրթեն զմանկտին, այլ մանաւանդ հրապարակաւ քարոզութիւնքն։ Քարոզն ոք 'ի տեսարանին՝ զի պակի առ առաքինութեան և քաջութեան և խնամոտ մոտցն, որ այր քարոզակն իցէ և գարշ վարուք, զայն տեսեալ համբակին՝ եղծաւ զեղծաւ։ Ապիրատի ուրուք և բոզարածի իբրև զԿտեսիփոն՝ 'ի պատիժս մտեալ, խրատեցան և այլք։ Ընդ հակառակս բարւոյն և արդարոյ գրեալ ուրուք հրաման, դարձ 'ի տուն արարեալ՝ խրատ տայ որդւոյն. իսկ նա արժանապէս հեստեալ անասատէ. այլ յիրաւի խեղդ ընդ անձն անուանի անդ խլատն։ Ա՛յսուհետև՝ որպէս ոչ դատողք ևեթ, այլ և յերևանի կացեալք, այնպէս տուք զՀոդ, առ արդարանալոյ յաչս քաղաքացւոց, որ ոչ աստ յատենիս դիպեցան, այլ հարցանիցեն ապա զձեզ՝ թէ զի՞նչ իրաւունս հանէք։ Քանզի ճարտար դիտէք, ով արք աթենացիք, թէ այնպիսի թուիցի լինել քաղաքս, որպիսի ոք հռչակեալն իցէ. զի նախատինք իցեն ձեզ՝ ոչ նախնեացդ լինել նմանողս, այլ Դիմոսթենի անարութեանն։

Իսկ արդ զիարդ Հողոպրեացի ոք յայդպիսի խայտառակութենէ։ — Եթէ, որ յանձինս կանխեալ առեալ իցեն

Digitized by Google

'ի միջոյ զբարերար անուանն՝ գրուժանքն բարուք, 'ի նոցանէն զգոյշ լինիցիք։ Զի միամիտ մոերմութիւն և ընկերհաշտութեան անուն 'ի միջի կայ, և աճապարեալ յաճախ յայնս ապաւինին բանիւ՝ որ առաւել ուրացեալքն են անտի գործովք։ Արդ իբրև ըմբռնիցէք զճարտարախօս ոք՝ օտարոտի պակաց ցանկացեալ և հաչակութեանց առ համբրէն հելլենացիս, հրամայեցէք նմա, զի որպէս օրէնքն պատուիրեն առնել զառհաւատչեայս տուրեառից, արժանահաւատ երաշխաւոր բանիցն ածել և նմա 'ի մէջ զիեանցն ոճ և զզգաստական վարսն։ Եւ թէ ուրեք դոքա չկայիցեն, մի զգովութիւնն հաստատուն առնիցէք նմա, և փոյթ խնամոյ տարայք ընկերհաշտութեանն՝ որ 'ի բաց ահա զերծանի 'ի ձեռաց ձերոց։ Մինթէ ոչ դժնդակ ձեզ թուիցի, զի տաճարն խորհրդոյ և ժողովուրդն ընդ վայր հարեալ, և հրովարտակք և հրեշտակութիւնք դան 'ի տունս սոսկականաց, ոչ 'ի վարկապարզի մարդկանէ, այլ յորոց մեծ ընդառաջինն են յԱսիա և յԵւրոպէ։ Եւ որոց իրաց պատուհաս մահ է ըստ օրինաց, ոչ յուրաստ լինին ոմանք գործեալ զայնս, այլ խոստովան լինին 'ի ժողովրդեանն, և զնամականին ընթեռնուն առ միմեանս. և են՝ որ յանդգնեալ հոլանեալ հրաւէր առ ձեզ կարգան՝ հայել յերեսս իւրեանց, և են որ պարգևս խնդրեն իբրև կեցուցիչք քաղաքիս։ Իսկ ժողովուրդն՝ առ յուսահատութեան եղելոցն՝ իբրև զառամութեամբ զառանցեալ և դագաշեալ, կամ ըզխօթամտութեան հարեալ, զանուն ևեթ ընկերհաշտութեանն ակնդ կալեալ՝ զգործսն այլոց եթող։ Իսկ ապա յարուցեալ գնայք 'ի ժողովոց, ոչ եթէ խորհուրդ ինչ առեալ զերացդ, այլ իբրև 'ի հանգանակաց զսինքեալ քերթաքաղ խերշևանսն ճաշակեալք [138]։ Եւ զի ոչ շաղփաղփեմ, յայս հայեցեալ զնեաջիք զբանն։

Եղև երբեմն ատանօր, — ծանր է ինձ ասէպ ասէպ խարխարել զնարուանս քաղաքիս, — եղև այր ոմն սոսկական, որոյ նաւարկել միայն 'ի Սամոս [139] համարձակեալ,

նոյն օրին յատենէ Արիսպագին, իբրև հայրենի աշխարհին մատնիչ, մահուամբ պատուհասեցաւ։ Եւ այլ ոք սոսկա-կան՝ նաւաւալ տարադէմ 'ի Հռոդոս 160, զի վատաբար կրեաց զերկիւղ, ամբաստանեալ փոքր մի յառաջ հաւա-սար ելլն նմա քուէք. եթէ և մի ևեթ 'ի միւս կողմն ան-կանէր, յաքսորս էր առաքեալ կամ թէ և սպանեալ իսկ։ Աղէ դիցուք առ սմին զայժմաւ եղեալքս։ Այր ճարտարա-խօս, ամենայնիւ չարեացասարտ, դասալեք 'ի զօրուէն, փախստական 'ի քաղաքէս, դա պատկ պահանջէ, և հռչա-կելոյ զանձն արժանի վարկանի։ Ո՞չ 'ի բաց հալածիցէք զմարդդ իբրև զհարուած հելլենացւոց առ հասարակ. կամ թէ ո՞չ մանաւանդ Հերբակալ զնա արարեալ, իբրև զաւազակ հինահաւ իրաց աշխարհիս՝ սահարկեալ ընդ քա-ղաքականութիւնս 'ի վերայ լոկ բայից և բանից, առնիցէք նմին պատուհաս։

Ցուշ լեցի ձեզ և Ժամանակս՝ յորում զվճռոդ էք հա-մանելոց։ Սակաւիկ միւս ևս աւուրք, և ահա Պիւթեանքն կատարելոց են հանդէպք, և ժողովն հելլենացւոց գումա-րեսցի 161։ Ի Դիմոսթենեան վարչութենէ ժամանակաց ալարտեցաւ քաղաքս. եթէ զդա պատկիցէք, միախոհ կար-ծիցէք ընդ որս որք զհասարակաց խաղաղութեամբս ա-պարթանեալ անցանեն։ Իսկ եթէ զհակառակն գործիցէք, աղատեաջիք զժողովուրդն 'ի բամբասանաց։

Արդ՝ մի իբրև զօտարէ խմբէք, այլ իբրև զբնիկ սեփ-կան քաղաքէ խորհեալջիք. և զպատուիրադ բաշխիցէք, այլ ընդ ընտիրս հանիցէք, և զպարգևադ ազնուագոյն ան-ձանց և արժանապատիւ արանց ընծայեցէք։ Եւ ոչ յա-կանջալուրս միայն, այլ և յականատեսս, 'ի ձեզ ինքեանս հայելով, քննեցէք՝ դդ ոմանք իցեն 'ի ձէնջ որ օգնականքն իցեն Դիմոսթենի. միթէ որսակիցք իւր, կամ հանդիսա-կիցք 'ի մարզս Ֆրիտասարդութեան իւրոյ։ Այլ յոլիմբա-կանն երդուեալ իմ Արամազդ, ոչ յորս կնճիռ վայրի չա-հատակեալ դորա երբեք, և ոչ առուգութեան մարմնոյ

կալեալ ինամ, այլ համակ 'ի վարժս խորամանգ հնարից՝ ընդդէմ ընչեղաց սկեալով զժամանակն անցուցեալ։

Իսկ յամբարտաւանութիւն դորա հայեցեալ, յորժամ զբիւզանդացիս ըստ ձեռն Փիլիպպեայ իւրով պատգամաւորութեամբն երեալս մեծաբանիցէ, զակառնանացիս վարանիցեալ, զարհուրեալ զթեբացիս հրապարակախօսութեամբքն. — զի յայն ապշութիւն հասեալ համարի զձեզ, մինչև յայդ ևս 'ի բանս պատիրս ելանել, որպէս եթէ զդիսն հաւանութեան 'ի նմա անուցեալ ձեր 'ի ծոց քաղաքիս, և ոչ քիչ զոք չարաբան. — և իբրև 'ի վախճան ճառիցն ժամանեալ՝ բարեխօսս իւր զհաղորդս կաշառառութեանցն կարդասցէ, դիք 'ի մտի տեսանել յատենիս՝ ուր կամն և խօսիմ, գէմ ընդդէմ առ դոցա ստամբակութիւնն ճակատեալս զերախտագործ բարերարսն քաղաքիս. զՍոլոն՝ որ գեղեցիկ գեղեցիկ օրինաց զընկերհաշտութիւնս զարդարեաց, զայրն ճարտարամիտ և զօրէնդիր քաջ, որ իւրով վայելչականաւն խնամատարութեամբ հայցէ 'ի ձէնջ, մի՛ և մի՛ բնաւ զԻմոսթենի խօսանն նախամեծար ընտրել քան զերդմունդ և զօրէնսն. զԱրիստիդէս, որ զհարկս հելլենաց բարեկարգեաց, յորոյ 'ի վախճանեն՝ զդատերսն ժողովուրդն ամուսնացոյց. որ արդ կոծ առնու 'ի վերայ անարգանաց արդարութեան, և հարցանէ՝ թէ համբաւն ամաչիցէք ոչ, զի զԱրթմիոս [162] զելիացի, այն որ երբեր եմոյծ յԵլլադա զՄարաց ոսկին, և եկ բնակացեալ էր 'ի քաղաքիս և հիւր ժողովրդեան աթենացւոց, փոքր միւս ևս և 'ի սպանանել եկեալ էին հարքն ձեր, և 'ի հասարակ կամաց հաւանութենէ տարագիր արարին 'ի քաղաքէս և յամենայն երկրէ տերութեան իւրեանց. իսկ դուք՝ զԻմոսթենէս, ոչ զոտ 'ի Մարացն զոսկին բերեալ, այլ և զկաշառաբերին, և արդ ևս կաշառգին յոլովացեալ, ոսկի Պարսկաստանեայ գերէ՛ք աբատախուրել. և զԹեմիստոկլէս, և զանկեալսն 'ի Մարաթոն և 'ի Պլատիէս, և զնոսին իսկ զնախահարդդ շիրիմս, ո՞չ կարծիցէք անդ հաչել հառաչել յոգւոց հանել,

եթէ դա որ ինքնին իսկ խոստովան լինի խառն ընդ խուժ-դուժան հակառակ հելլենացւոց մրցեալ, պակի առնիցի արժանի։

Արդ ես [163], ո՛ Երկիր և Արեգակն և Առաքինութիւն և Հանճար, և խրատ՝ որով խելամուտ եմք բարւոյն և չարին, եղէ ես օգնական՝ և ասացի։ Եթէ՝ի ճահ և արժանի ըստ ինասուն դատախազեալ, ասացի որպէս և կամիս։ Իսկ եթէ նիզակ, որպէս ինչ կարող դոյ։ Իսկ դուք, և ըստ բանիցս ասացելոց և ըստ պակասն ինացելոց, ձեզէն տուք զարդարն և զոգուտ քաղաքիս դատակնիք վճռոյ։

Digitized by Google

Digitized by Google

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ ԻՆՉ

Ի ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՃԱՌԻՍ

Թիւ 1. Ամենացիք բաժանեալ էին 'ի տասն ցեղս, և ամի ամի 'ի միոջէ միոջէ 'ի ցեղից անտի ընտրեալ յիսուն քաղաքացիք, նոքա միահամուռ կացուցանէին զժողով Հնգից հարիւրոցն, որոց գործ էր պատրաստել և 'ի կարգի դնել յաւուրսն որ ինչ միանգամ յատեան ժողովրդեան եղանելոցն էր:

2. Ժողովուրդն համբարձմամբ ձեռացն յայտ առնէր զկամս հաճութեան իւրոյ. և 'ի վճարել նուիրակին զհամար ձեռացն ամբարձելոց՝ գահերեց ժողովոյն յայտ զընտրութիւնն առնէր. և զոքա կոչէին ձեռնադրեալք: Թող զայդ, էր միւս ևս ընտրութիւն վիճակաւ, և վիճակաւորք կամ վիճակեալք կոչէին: Բայց ոչ ինքակալարանի և յախուռն ինչ լինէր վիճակն 'ի կոյր բախան ապառատան. այլ նախ հաւանութիւն ժողովրդեանն պիտեր առ արժանի լինելոյ վիճակի: Այս վիճակարկութիւն յանձն էր Օրինապահաց. և լինէր 'ի մերձենին Թեսաւսաի: Լինէին և 'ի տոհմաց տոհմաց ոմանք ընտրեալք, և կոչէին ընտրիքն կամ հաճոյքն:

3. Ամենայն ցեղ ունէր ըստ կարգին զգահերիցութիւն 'ի ժողով Հնգից հարիւրոցն: Նահապետք էին յիսուն աստենակալք՝ որ 'ի դիմաց ցեղին կային 'ի գահերիցութիւնն, որոց և միայն էր իշխանութիւն 'ի ժողով կոչելոյ զժողովուրդն: Նախագահն տան 'ի յինից անտի ընտրեալք՝ գահերեց բազմէին մէն մի եօթնեակ, և 'ի ժողովս ժողովրդեանն առաջի առնէին զնդիրն:

4. Սոլոն, գերագոյն օրէնսգիրն ամենացուց, որպէս 'ի վերոյ ասաց:

Digitized by Google

5. Ճարտարախօսք տաճարին խորհրդոյ թուին լեալ քաղաքացիքն՝ որ 'ի խորհրդականաց անտի ջատագով կային կամ պաշտպան սահմանելոյն 'ի ժողովս կարգին իւրեանց։

6. Այս անուն էր վեցեցուանց իշխանացն՝ որոց պաշտօն էր հսկել 'ի պահպանութիւն օրինաց, թող զերիս առաջինսն, զիշխանն Յորջորջական, զիշխանն Արքայ, և զիշխանն Ասպարապետ։ Յանուն Յորջորջական իշխանին յորջորջէր տարին, և սեփականագոյն գործ էր նորա տեսչութիւն քաղաքական. Արքայ իշխանն նախաթառ էր յիրս կրօնից. Ասպարապետի իշխանին յանձն էր հրամանատարութիւն զօրաց։

7. Այս ժողովք ժողովրդեան յընտրութիւն իշխանաց՝ 'ի Պնիքս անուանեալ տեղւոջն լինէին։

8. Հրամանն նորոգութեան պարսպացն առ Դիմոսթենէս՝ թուի եղեալ յելս առաջնոյ կամ 'ի մուտս երկրորդի ամի հարիւր և տասն Ուլմպիադին, յորում մօտալուտ 'ի վերայ կայր ընդ Փիլիպպեայ պատերազմն։

9. Լաելեայն խմանի՝ ընթերցցի դիւանադպիրն, զի նորա էր ընթեռնուլ առ ժողովուրդն զօրէնսն, զդիւանագիրս և զվճիռս՝ զորս 'ի մէջ կամէր անել Ճարտարախօսն։ Բայց աստ և յառաջիկայսդ ակնարկին միայն 'ի Ճառիս Էսքինեայ ատենական վկայութիւնքն, այլ ոչ բերին 'ի մէջ որպէս ցանկ կէս պատասխանւոյն Դիմոսթենի։

10. Որքա էին գոյսուրքն 'ի քաղաքացիս, որ ըստ պէտս պէտս կառուցանէին կամ հանդերձեալ կազմէին զնաւս տերութեանն յընտիր իւրեանց։

11. Ատեան Արիսպագին էր դատաւոր գլխապարտութեան յանցանաց. բայց երբեմն և զայլ կարևոր իրաց դատաստանս 'ի նա ապատասան առնէին արտաքոյ սովորութեան։

12. Միտք բանին այս է. Առանց համարս տալոյ՝ ոչ է պատկիլ. իսկ համարքդ յետ ելանելոյ յիշխանութենէն են, ապա ատենակալք Արիսպագին՝ որոց մշանջենաւոր է պաշտօն իշխանութեան՝ պատկիլ ոչ ունին։

13. Տաղանդն ատտիկեան էր յայնժամ վաթսուն մնաս. մնան հարիւր դրամ, դրամն՝ ինսուն և երեք դանգ կամ հարիւրորդ այժմու գալլիական դահեկանի. և այն էր միակն 'ի հաշիւս հելլենական արծաթոյն։

14. Սա, այս ինքն է Կտեսիփոն, զոր պարտ է իմանալ ատտ և զկնի ուրեք ուրեք. որպէս և յորժամ դա ասիցէ, զԴիմոսթենէս իմանայ՝ որ անդն կայր անշուշտ, զի ատէպ և առ նա ինքն դարձուցանէ զխօսն։

15. Արձանագրօղ կոչէր՝ որ ունէր գրիչատակագիրս արծաթոյն

զոր առնուին գանձապետք. և այն յիշատակագիրք գային ապա 'ի պետս հարցափորձի համարոյ իշխանացն։ Իսկ իւրաքանչիւր նա-հապետութիւն յիշատակեալ փոքր մի զկնի, էր ժամանակ երեսուն և հինգ աւուրց յորս տուէր իշխանութիւն նոցա։

16. Զեբուլոնդ զայդ անապիւտեցի յիշատակէ Պլուտարքոս իբրև զքաղաքացի ոք բարեհամբաւ։ Գանձապետս կացեալ՝ աճեցուցեալ էր զմուտս գանձին։

17. Հաւանելի է՝ թէ այս այն Հեգեմոն է, զորմէ և Դիմոսթենէս խօսի 'ի Պասկի ճառին։

18. Քաղաքն աթենացւոց և ատտիկէաստան համարէն բաժանէր 'ի ցեղս, յերրորդ մի ցեղից և յաւանս կամ 'ի տոհմս ազանց։

19. Տասնեքին ցեղք աթենացւոց յորմէրոյէին յանուն տասնեցունց դիւցազանց աշխարհին։ Ցեղն պանդիոնեան՝ 'ի հինգերորդ աբքայէն Աթենայ 'ի Պանդիոնէ առնոյր զանուանակոչութիւնն։

20. Այս է՝ հնարել քաղել արծաթ յարտաքնոցն Հելլենաց՝ որ տեղեակ լինիցին մեծի անուան իւրում՝ և ցանկանայցեն գնել զայնպիսի հզօր պաշտպան յԱթենս։ Սովին ևս կծանէ զԴիմոսթենէս։

21. Պնիքս էր տեղի մի բարձրաւանդակ մերձ 'ի դղեակն, ուր լինէին յաճախ ժողովք ժողովրդեանն։ Արդի նորոգ հաստեալ փորուածք տեղացն 'ի յայտ ածին զվայրն ուր էր, և զաշտեհանս բեմի ճարտասանին։

22. Կրկին էին տունք Սպանդարամետական. մինք, 'ի կարգի երեքեալի հանդիսից, 'ի քաղաքի անդ կատարէին մնա 'ի գարուն, և կոչէին Դիոնիսեանք. փոքունքն կատարէին յանդաստանս մերձ յաշուն, և Հնձանեանք անուանէին։

23. Ցաւալ քան զՍպանդարամետական կացուրդն՝ մատուցանէին քերդողք նորանոր ողբերգութիւնս առ 'ի հանդիսել՝ թէ ո՛ քան զո խլեցէ զմրցանակն։ Ողբերգութիւն որ ընտիր քան զայլսն գտանէր՝ դատաւորքն կարգեալք 'ի տերութենէն պակէին զայն, և տային խաղալ հանդիսիս մեծաւ։ Եւ որ յերկրորդ և յերրորդ կարգ դասէին, խաղային և զայնս։ Եւ այս ամենայն ողբերգութիւնք կուչէին նորփ։

24. Օրինապահացն գործ թուի լեալ, առաջի առնել ժողովրդեան և զպիտոյ փոփոխմունս օրինացն։

25. Տախտակս ասէին՝ յորս դրոշմեալ հրապարակէին օրէնքն, որոց հաստատութիւն խնդրելի էր 'ի ժողովրդենէն։

26. Անուանադիրքն էին տասնեքին դիւցազունքն՝ զորոց անուանն եգ Կլեսթենէս 'ի վերայ միոյ միոյ 'ի տասանց ցեղիցն աթենացւոց. որոց և պատկերքն կանգնեալ կային 'ի հրապարակի քաղաքին դէմ յանդիման տաճարին խորհրդոյ։

27. Կեփիսոդոտ առաքեալ էր յաթենացւոց 'ի Հելլեսպոնտոս զո-

Digitized by Google

բագլուխ նաւաց՝ ի նուաճել զիսառամել գնացս Միդիայ, որ տիրա-
նալ կամէր համարէն Թրակիոյ։ Եմուտ նա ի նաւն՝ որոյ շինող էր
Դիմոսթենէս, և մատեաւ յԱլեսկենդրէ. անդ ըմբռնեալ և պատ-
բեալ ի Քարիդեմեայ՝ եդ գաշինս և եթող ի Կերսոբլեպտէ զիշխա-
նութիւն Թրակիոյ։ Արտմոնեալ աթենացւոց՝ ջնջին զգաշինսն, և
գտասպարտեցին զԿերփիսոդոտ ի տուգանս տասնիգաց հնգից։

28. Մինչդեռ պարապէսն էր Դիմոսթենէս, ընկալաւ կուսի մի
ի Միդեայ ի Սպանդարամետական հանդիսին։ Պարտաւոր վասն
այնր արարեալ էր նորա զՄիդիաս ի ծանր ինչ տուգանս, այլ ապա
երկուցեալ ի թշնամութենէ ճոխ և հզօր քաղաքացւոյն, պահան-
ջեալ էր միայն երիս հազարս դրամից։ Պատմէ զայս Պլուտարքոս ի
վարսն Դիմոսթենի, և յաւելու ի պատիւ նմին. «Ոչ կարծեմ թէ
երեք հազար դրամք ցածուցանէին զբարկութիւն Դիմոսթենի, եթէ
կայր նմա ակն և հնար յաղթանակելոյ։» Կայ և ճառն Դիմոսթենի
ընդդէմ Միդեայ։

29. Պարապէսն՝ էր գլուխ դասուն երաժշտաց, որ մրցէին գայաղ-
թանակէ ի մեծահանդէս տօնս հելլենացւոց աշխարհին։

30. Այս խաղաղութիւն կամ հաշտութիւն կնքեցաւ յերկրորդում
ամի հարիւր և ութ Ոլիմպիադին։

31. Տեւեաց խաղաղութիւնն ամս վեց. զի յառաջնում ամի հա-
րիւր և սման Ոլիմպիադին՝ մօտալուտ առ դուրս կայր պատերազմն
ընդ Աթէնս և ընդ Փիլիպպոս։

32. Քերթեալ ճակատամարտն մղեցաւ յերրորդում ամի հարիւր
և տասն Ոլիմպիադին, յորում պարտեցան աթենացիք, և Դիմոսթե-
նէս փախեաւ մազապուր։

33. Աթէնք լինելոց էր հանդիսարան ժողովոյ հրեշտակացն հել-
լենացւոց։

34. Խորհրդականաց ընտրութիւնն վիճակաւ էր։ Ընտրէին նոյն-
պէս և երկրորդ զոմն՝ տեղակալ, որ առաջնոյն յաջողեսցէ ի մա-
հուն նորա կամ ի յանցաւորն գտանել։

35. Այս կաշառող՝ Փիլիպպոս է յայտնապէս։

36. Արդեալեալ էր յօրինացն ժողովել զժողովուրդն յաւուրս ազ-
նից։ Եւ նախագծեալ աստանօր հաւանելի է թէ նշանակիցէ զկա-
ճառսն ի մրցումն երաժշտականին, որ լինէին յառաջնում աւուր
մեծի տօնիցն Ակլեպեայ՝ խմբելոց յԵպիդաւրոս։

37. Հրեշտակքդ էին Անտիպատրոս, Եւրիլոքոս և Պարմենոն։
Եւ Անտիպատրոս այն իսկ էր՝ զոր Ալեքսանդր ի մեկնել իւրում
եթող փոխանակ ընդ իւր արքայ ի Մակեդոնիա։

38. Ի կնճեայ արձանս գրոշմէին դաշինքն որ ընդ Թագաւորս կամ
ընդ պետութիւնս։

39. Քաղաքական դասալիք կոչէ Եսքինէս զայնոսիկ, որ ըստ ժա-

Digitized by Google

մանակին՝ կողմանէ 'ի կողմն փոփոխին. զի զնոյն հելլէն ձայն վարէ աստանօր՝ որ և զփախստեայ զինուորէ 'ի կողմ ելանելոյ ասի։

40. Այս բարձերիցութիւն էր իշխանութիւն բազմելոյ ընդ նախաթոռս ակմէի ատենին։

41. Իմա կաս 'ի զուգից ջրոց ելեալս, որովք անձանց իշխանականաց էր ճանապարհորդել։

42. Քարիդեմոս որեաթի յԵւբիոյ, զինուորեալ ընդ Իփիկրատեաւ՝ արժանի եղեալ էր քաղաքակցութեան աթենացւոց վասն ծառայութեանցն։ Եթէ զմանէ են բանք Եաքինեայ, հաւանութեան է՝ թէ էր նա յարքունիս Փիլիպպեայ 'ի սուսերահար լինելնորա 'ի Պաւսանիայ. քանզի անդէն լրտուես գէտ սուրհանդակաւ ընկեցեալ ասէ զնմանէ Եաքինէս առ Դիմոսթենէս զլուր սպանման արքային մակեդոնացւոց։

43. Սոլոնի արգելեալ էր յօրէնսն՝ ոգաւորաց չգենուլ արջառս. և զայս ևս յաւելեալ բարգեալ Եաքինեայ յառաջինսն՝ համարձակ այնուհետև անօրէնք ասէ։

44. Յիրաւի նկատէ աստանօր Պլուտարքոս, զի այս մեղադրութիւն Եաքինեայ՝ գովեստ է մանաւանդ Դիմոսթենի. զի յոյս ազատութեան հայրենեացն յաղթէր հայրագործով աղէտից ցաւոցն։

45. Ղղնպիսի նմանական ձայնք են և 'ի հելլէն բնագրին Եաքինեայ. զի ասէ. Οὐ γὰρ τὸν τρόπον, ἀλλὰ τὸν τόπον μόνον μετηλλαξε. ոչ զոչ ծն փոփոխն, այլ ծն փոխն մնոն ՝ի՝ Ի՛ՆԼԼՈՒՓՈՒ։

46. Դրունք կամ Պահակ կոչէին Թերմոպիլայքն, կամ ըստ հայումս՝ Ջերմադրունքն անուանեալ կապան կամ կիրճ լերանց, ընդ որ էր անցք 'ի Մակեդոնիոյ յԵլլադա ընդ Թեսալիա և ընդ հովիտն Իտայ լերին, և գիւրամուտ լինել մինչև յատակեստան։

47. Զայն տայ իմանալ Եաքինէս, որպէս թուի, թէ Փիլոկրատէս չհաներ ման և բաժին Դիմոսթենեայ յարձանդոյն զոր առնոյր 'ի Փիլիպպոսէ, յորմէ և կազելնոցին։

48. Հալոնեսոս կամ Ալոնեսոս կղզի է Եգեան ծովուն առ երի Մակեդոնիոյ՝ 'ի մուտս Թերմեան ծոցոյն։ — Փոքր մի զնի յիշատակեալն Արիստոդէմ՝ զօրավար էր աթենացի, որիշ 'ի համանուն կատակագուսանէն զորմէ խօսի Դիմոսթենէս։

49. Մենաստրքոս, Կալլիաս և Տաւրոսթենէս՝ միայն 'ի յիշատակէ աստի Եաքինեայ ծանօթ են, թէպէտ ճշմարիտ իցեն ճառաբանքդ ըզնոցանէ, թէպէտ սուտ ըստ մանէ։

50. Այս յատիշտակութիւն Որոպոսի եղև յերրորդում ամի հարիւր և երրորդ Ոլիմպիադին։

51. Աթենացիք խաղացին 'ի Թիկունս եւբիացւոց յերրորդ ամի հարիւր և հինգ Ոլիմպիադին։

52. Պլուտարքոս՝ բանաւոր Երետրիոյ՝ կոչեաց զաթենացիս յոգ-

Digitized by Google

նութիւն ընդդէմ Փիլիպպոսի, որ 'ի չորրորդ ամի Հարիւր և վեց Ոլիմ-պիադին սպառնայր Եւբիոյ. բայց ապա նենգեաց նոցա, և ձեռն ետ 'ի մակեդոնացին։

53. Տամինայք, քաղաք Եւբիոյ էր 'ի գաւառին Երետրիացւոց. ընդ պարսպօք քաղաքին յաղթեցին աթենացիք քալկիսեցւոց՝ զօրա-վար զինակիսն ունելով։ իսկ Կոտիլէոն՝ լեռան Եւբիոյ, կարի մօտա-ւոր Տամինայց։

54. Եւրիպոս նեղուց՝ որ բաժանէ զԵւբիա 'ի ցամաքէն Եղլադայ։ Ի հնոցն հռոմայեցւոց Սենեկա ողբերգակն և Պլինիոս բնապատում՝ օր ըստ օրէ եօթն անգամ ուռնուլ և ցածնուլ ասեն անդ ծովուն յե-լեալ երթեւեկի ծփանացն։ — Քալկիս էր քաղաք գլխաւոր կաւու-ցեալ 'ի ծովափին Եւրիպոսի։

55. Ընթացք կամ արշաւ՝ մեծ իմն էին 'ի գուլպարս նահատակաց մրցարանին, յորս երեք էին նշանաւորք. պարզ ընթացք կամ սապա-ռեզ, որ էր ինքնուն և չորք ձողաչափ և կէս. կրկինն՝ երկիցս նոյն-չափ. երկոյնն՝ որոյ էր չափ աւելի քան զերկուսասան սապարիզաց, յոր և յաջողեալ Դիոդորի՝ յայն անուն յորջորջէր։

56. Ի քաղաքի սատ լինէին ժողովք նիզակակցացն աթենացւոց, արկանել Հարկս քաղաքի քաղաքի 'ի պէտս ծախուց պատերազմի։

57. Զայդ յայն սակս առնեն Կալլիաս և Դիմոսթենէս ըստ Եաքի-նեայ, զի հեռացուցեալ 'ի ժողովոյն յիւրեանս վտարեսցեն զՀարկն զոր բերեալ էին։ Եւ առաքեն 'ի ժողովն Եւբիոյ, զի նոյնպէս՝ ըստ Եաքինեայ՝ անդ դաւակիցք Կալլիասայ գուն 'ի գալանիս դնեին յա-րուցանել զկղզին ընդդէմ աթենացւոց։

58. Ի Պելոպոնէս հրեշտակութեամբ չոգաւ Դիմոսթենէս յա-ռաջնորդ ամի Հարիւր և ինն Ոլիմպիադին։ Թերևս 'ի դարձին 'ի հրեշտակութենէ անտի չոգաւ և յԱկառնանիա։

59. Զօր լման լուանին, զՀնգետասան ասեմ ամսոյն, կէտ եղեալ էր Դիմոսթենի ամենեցուն 'ի ժողովգումարելոյ։

60. Զգլուտարքոս հալածեալ Փիլիպպոսի յԵրետրիոյ՝ կացու-ցեալ էր ընդ նորա զԱլիտարքոս։

61. Կիրրացիք բնակիչք էին Կիրրայ՝ որ էր քաղաք վաթուն վը-տաւանաւ հեռի 'ի Դելփեայ առ ծովեզերին. իսկ ակրագալանք կամ կրաւալանք՝ դրացիք էին կիրրացւոց։

62. Ամֆիկտիոնք, աշխարհագումար ատեան դաշնակից քաղա-քաց, ժողովէին երկիցս 'ի տարւոջ. գարնանի՝ 'ի Դելփիս, և աշնանի՝ 'ի Ջերմագրուն. էր զի և ատեպ էս ըստ Հարկի պիտոյից իրացն։ Բազմաց 'ի հելլէն ժողովրդոց իրաւունք էին առաքել 'ի ժողովն երե-կուս երկուս խորհրդակիցս, երբեմն երիս կամ չորս, բայց երկու և եթ քսանայք էին նոցա։ Առաջինն՝ գլուխ պատգամաւոր խորհրդակցացդ՝ կոչէր Աւանդապահ կամ Դիւանապահ՝ պահապան մեհենագիր ա-

ւանդից կամ դիւանաց, այլքն անուանէին Դարբասանք, այս են պաշտիրակք Ճարտարապետք առաքելք ի Ջերմագրունեան։ Դոյն անուն էր և պատգամաւորելոցն ի ժողովն գեղվական։ Աստուն Ամիկիտիոնացն գատաւոր էր հասարակաց խնդրոց կրօնից և ազգային։

63. ՅԱթենս ի պաշտօն առեալ էր Ամենաս աստուածուհի խնամող անուամբ, զի խնամ կալեալ ծնողացն Լեսովայ՝ մոր Ապոլոնի և Արտեմեայ, հոգացեալ էր զամենայն զպէտս աստուածուհւոյն։ Բայց իմաստունքն ամենացուց ընդարձակ առմամբ իմանային նովա զաստուածեղէն Միտան և զիմնամն որով վարի ամենայն ինչ։

64. Լոկրացիք որոշէին ի լոկրացիս Ոզոլս, ի լոկրացիս ոգունտեանս, և ի լոկրացիս եպիկնեմեանս։ Լոկրացւոցն Ոզոլաց մայրաքաղաք էր Ամֆիսսա՝ այժմ կոչեցեալ Փալէօքսոխեռ։

65. Այս այն Միդիաս է՝ որ կռփահարեալ էր զԴիմոսթենէս ի մեծախուամբ տեսարանի։

66. Նորն ասել զոտաճարն՝ կարծիս տայ երկուց լինելոյ ի Դելփիս. բայց չէր. այլ ի հրկէզն լինել՝ վերստին կառուցին Ամֆիկտիոնք, և մինչ չև էր վճարեալ գործն և տաճարն սրբեալ՝ կախեցին ամենայնիք ի կամարսն զվահանսն ոսկիս յիշատակեալս յԵսքինեայ։ Իսկ շինութիւն մեհենին անկատար մնաց մինչև ի գալուստն Ներոնի ի Դելփիս։

67. Հելլէնք Մարս կոչէին Երբեմն և զՊարսիկս. վասն Կիւրոսի յաղթանակաւն ի մի գաւազան զերկոսին ազգն խառնելոյ։ Այլ առաջ յառաջ քան զայն՝ հաւն Կիւրոսի Աժդահակ մարապարատցի կոչի ի Խորենացւոյն. Ա. ԺԹ։

68. Յառաջնում արշաւանին Պարսից ի Հելլենաստան՝ միաբանեցին ընդ նոսա և Թեբացիքն։

69. Կրոմբիլոս ի բնէ, ըստ Հեսիքիոսի, նշանակէ ցցունս հերաց ի ճակատէ յետս ընդ գլուխն վարեալ, և ըստ Սուիդասայ՝ զնոսոպիս վարսից մանկանց։ Արպոկրատիոն զԿրոմբիլոսն՝ յոբՇրՇլանաց անուն ասէ լեալ Հեգեսիպպոսի։ Մարթի թէ Եսքինեայ բանք զայնմ ճարտարապետ էին։ զի այն ասել՝ դայանի ուսեալ ակնարկէ։ Բայց չգիտեմք էր սակս և յոր դէպս զիովկիսացւոցն Նիզակակցութիւն գրով յատեան հանեալ էին Հեգեսիպպոս։

70. Այս է՝ խանքն կամ ափսեայքն սուրբք՝ բարձեալ կան ի ձեռս մատուցանելեաց նոցին ի սկզբան զոհեցն։ Եղեալ կային ի խանսն գահամունք նուիրացն, դանակն և այլ անօթք կարևորք ի պէտս արարողութեանն։ Ասացեալ է և Եւրիպիդեայ, (Իփիգ. Աւլ. 1575),

Կալքաս կիւսահրմանն յոսկիածոյն անդ ի խան
Զեռամբ իւրով ըղթուն ի պատենից սպրասուր
Մերկացեալ արկ, և ըզգլուխ օրիորդին պըսակեաց։

Digitized by Google

71. Իսա զայնոսիկ որ քանանեայքն էին, որ և էր ամ կատարեալ երիցութեան. զի 'ի կատարեալ արքունս հասեալ համարէին ուխտաստանանելոն. իսկ սկիզբն՝ որպէս և ցայժմ յամենայն բարեխառն դասանգամ 'ի չորեքտասանի տիոցն լինէր. վասն որոյ և ոմանք աստ զվեշտասանեմեանսն կամին խմանալ:

72. Թիտոն ըստ հելլենականին ասացեալ, որ է տեղի սպանդից, զոհարան:

73. Կոտոիփոս՝ յազգէ արկադացի, յարեալ էր 'ի Թեսալացիս և եկեալ բնակէր 'ի Փարսալ քաղաքին 'ի Թեսալիա, զոր ատտիկեցի բարբառ Թեսալիա ասէ:

74. Մի այն քաղաք՝ Թեբէ էր; զոր կործանեաց Ալեքսանդր յերկրորդում ամի հարիւր մետասան Ոլիմպիադին:

75. Փիլիպպեայ առանձինն տրտունջ կայր զԱթէնասայ սկիւթացւոց արքայէ. վասն որոյ խաղաց 'ի վերայ նորա, հար սատակեաց զբազտուար բանակ նորա, և Թափեաց աւար սաստիկ:

76. Ցանկարծամահ սատակումն իւղագլխելոցն 'ի խորհրդատունս՝ սատուածասատ պատուհաս համարեալ էր: Սակայն ըստ հին մեկնչի ուրումն՝ ոմանց 'ի նուիրելոցն 'ի ծով մերձեալ յօրինի լոգացումն՝ կուռ եղեալ են ծովական իմն նշանգի, որպէս առանդութիւնն ասէր:

77. «Դիմոսթենէս, ասէ Կիկերոն, յառաջ քան զամս իբր երեքբիւր՝ Փիլիպպանալ ասէր զՊիլիթեայ. այս է որպէս Թէ միպանեալ ընդ Փիլիպպեայ. որ յայն ակնարկէ, իբրև զի ասել զնա կաշառաբեկ 'ի Փիլիպպեայ լեալ.» (Կիկ. յղ. գուշակ. Բ):

78. Հուակ ուրեմն ասել՝ զՊերոնեայ ճակատամարտն տայ իմանալ: Անուէր և անհաճոյ դից զոհք՝ զչարահմայն նշանակեն և զվատախտաբակ:

79. Վասն զի բազում յաղթութիւնս տարեալ էր Ալեքսանդրի 'ի վերայ Դարեհի:

80. Պղծեալ էր փովկիացւոց զՀողն սրբեալս Ապոլոնի. վասն որոյ և հարկ եղև նոցա մղել երկարժամանակեայ մարտ պատերազմի ընդ բազում ժողովուրդս Ելլադայ: Լակեդեմոնացիք՝ յատենէ Ամփիկտիոնացն տուգանեալք հազար տաղանդաց՝ վասն կողմականին տիրելոյ Թեբացւոց դղեկին, անցին առ փովկիացիս: Սոքա 'ի կուռի անդ աւար հարին զմեհեանն դելփիական, և կարծիք եղեն՝ լակեդեմոնացւոցն ևս յաւարաման ընդ նոսին խառնելոյ:

81. Մինչդեռ Ալեքսանդր յԱսիա էր, լակեդեմոնացւոց զայն պատեհ համարեալ 'ի թօթափելոյնն, ապստամբեցուցին գրեթէ բովանդակ զՊելոպոնէս: Անտիպատրոս՝ յետ յամառ կռուոյ՝ եբեկ զնոսա յերկրորդ ամի հարիւր երկոտասան Ոլիմպիադին, և շնորհեաց նոցա դեսպանս առնել առ արքայ, և 'ի բերանոյ նորա լսել զվիճակ իւրեանց:

Digitized by Google

82. Իսա զՀայրենի երկրէն։ Նովին մտօք Հելլենականին վարէ զբառդ և Հայ Թարգմանիչ Գրիգորի Աստուածաբանին, և 'ի նմանէ մերս Յովհ. Սարկաւագ վարդապետ։

83. Հեսիոդոս. Վաստակք և Աւուրք. տող 223 կամ 238։ Բայց վերջին տող յառաջ բերեալ տանցդ փոքր մի այլազգ է ըստ բառիցն յայժմու օրինակն Հեսիոդեայ. այս ինքն,

Կամ յանդունդս Զբրուանեանն ընդաւս իւրեանց պատուհասէ։

Եւ յետ չորրորդ տողին՝ կան 'ի նմա այլ եւս երկու տողք, զորովք զանց արարեալ Թուի Եաքինէս, որ են սոքա.

Անծընունդ լինին կանայք, և ապարանք գառնան յաւեր
Խորհրդով ոլիմպականն Արամազդայ, և այլ երբեք...

Զի հին մատենագիրք, ոչ միշտ ճշգիւ 'ի մէջ առնուն զբանս նախնեաց։

84. Փրինոնդաս և Եւրիբատոս՝ երկու խաքերայք էին անուանիք, մինչև անուանց նոցա յառակս լինել։

85. Թրասիբուլոս՝ զօրավար էր աթենացի, որիչ 'ի զկնի յիշատակելոյն։ Եւ կոլիտ էր ազգեան եգէական ցեղին։

86. Թրասոնին, Արքեդեմոս և Պիւանդրոս ոչ այլ ուստեք ծանօթ են մեզ, բայց 'ի բանից աստի Եաքինեայ։ — Երբեմն էր այլ ազգեան եգէական ցեղին։

87. Լէոդամաս յաշակերտութենէ Իսոկրատայ էր. և գտանի անուն իւր 'ի վճռի ուրեք յիշատակելոյ 'ի Դիմոսթենէ։ Իսկ Աբատնա էր գիւղաքաղաք Ինէական տոհմին։

88. Պելէքս էր ազգեան լէոնտեան ցեղին. և որ փոքր մի զկնի Ազենիա՝ ազգն էր հիպոթոնտեան տոհմին։

89. Ի փովկիական պատերազմին՝ զքաղաքն Նիկէա առեալ էր Թեսալացւոց 'ի ձեռաց փովկիացւոցն. Փիլիպպոս անդրէն դարձոյց առնոսա, զի որսացի զնոսա 'ի կամն իւր։

90. Եւատիա էր գլխաւոր քաղաք Փովկիսի առ երի Թեբայ։

91. Ցետ մարտին Քերոնեայ՝ եդ Փիլիպպոս 'ի Թեբէ պահապանս, մինչ գեռ ինքն 'ի հաշտութիւն խօսէր ընդ աթենացիս, և զգերին նոցա գարձուցանէր առանց իրիք փրկանաց։

92. Ճարտար չքնաքանութիւն Դիմոսթենի էր՝ Թեբայ բիովտացիքն սաեալ, առ խորչելոյ յանուանէ Թեբացւոց՝ Թշնամեաց Ամենայ։

93. Գերագոյն ատեան Բիովտիոյ գումարէր 'ի Թեբէ, ուր հրեշտակս առնէին գլխաւոր քաղաքքն Տանագրա, Թեսպիէս, Պլատիէս,

Digitized by Google

և այլք բազումք. և անուն կոչէր նոցա՝ Իշխանք Բիովտիոյ, գլուխք կամ գլխաւորք:

94. Դատարակ էին տեղիք զինուորացն որ առ ժամն չէին 'ի զօրուն, բայց տերութիւնն տայր և նոցա զթոշակսն, և գրաւէին զայն զօրագլուխք:

95. Այդոցիկ ոչինչ յիշատակ առնէ պատմութիւնն:

96. Այս այն Կլէոփան թիւր՝ զորմէ խօսի Եպիքնէս և 'ի Ճառի Անիրաս Հրեշտակութեանն: Յելս պէլոպոնիսեան պատերազմին՝ նոքա մահ ապառնացեալ էր ամենայնի, որ խորհուրդ տայցէ ընդունել զհաշտութիւնն ընծայեալ 'ի լակեդեմոնացւոց առ աթենացիս՝ յետ հարուածոց նոցին 'ի Սիկիլիա: Զկլէոփոնէս բանք լինին 'ի բազում կատակերգութիւնս Արիստոփանեայ, մանաւանդ 'ի Գորտսն:

97. Զի ըստ Պլուտարքեայ՝ ժողովուրդն ոչ միայն առ յանցաւորս չկալաւ զԴիմոսթենէս, այլ և 'ի նա ապապարեալ յանձն արար զԳիւրեզմանականն անկելոց 'ի Գերոնեայ ճակատուն, ուստի փոխադրեցան ոսկրոտի նոցին առ յուղարկաւորութիւն առնելոյ նոցա հաշակաւ աշխարհօրէն:

98. Պլատոն ևս խօսի զսովորութենէդ զայդմանէ 'ի Մենէքսենին իւրում:

99. «Զէ մարթի ժխտել, ասէ Լահաւափ, զճարտարութիւն ընդդիմադրութեանցդ. ամենայնիւ հնարի Եպիքնէս առնելի առնել զոսոխ իւր. գուսարէ զատենիւն զուրուս եղկելի քաղաքացւոցն, կացուցեալ զնոսա 'ի մէջ Ժողովրդեանն և Դիմոսթենի. վրէժխնդիր ուրուականօքն պաշարեալ զնա՝ կարմէ զնովաւ պատնէշ իմն անճողոպրելի: Սակայն Դիմոսթենէս միով շնչով տապալէսցէ զայդ ամենայն կազմութիւն և զհանդերձանս ագաձև քինախնդրութեան՝ զոր դատարանդ յարուցանէ 'ի վերայ նորա:»

100. Պլատոնէն Փիլիպպոսի:

101. Բաս Պոլիբիոսի, յորժամ արքայ Մակեդոնիոյ զհս մատուցանէր, զընդերս սպանդին բերէին առաջի նորա զի ինքնին զհմայսն հարցանիցէ: Եւ ըստ Պլուտարքեայ՝ Ալեքսանդր 'ի յետին ամսն յոյժ 'ի խոհրս զառածեալ անկաւ: — Եւ մանուկն համբակ ասել փոքր մի զկնի՝ ակնարկէ յարհամարհական ինչ ձայն Դիմոսթենի ասացեալ 'ի դէմս նորին:

102. Կայ և այդ առ Պլուտարքեայ՝ 'ի վարս Դիմոսթենի: Զի հրեշտակ առաքեալ ընդ այլս ոմանս առ Ալեքսանդր, յահէ աշխարհակալին եթող զընկերսն 'ի Կիլիերսն լեառն, և դարձաւ յետս ընդ կրուն:

103. Ի բանից ատոի հաւանելի է՝ զԱմիլիկտիոնեան ժողովն իմանալ ասատ:

104. Այս այն նաւատիք են՝ որ զնուիրական նաւն վարէին, որով սովոր էին ծովել պատգամաւորք կամ դեսպանք:

Digitized by Google

105. Ինքն Ալեքսանդր ոչ անց նախ յԱսիա, այլ յղեաց զԱստաւլոս և զՊարմենիոն։

106. Մեծն յիսաստ, ուր ասպա յաղթութիւն մեծ կանգնեաց Ալեքսանդր 'ի վերայ գնդին Պարսից։

107. Քանզի..ըստ նախնեացն օրինի՝ օծանէին ոսկւով զեղջերս սպանդին, և զգլուխն պատկէին։ Այսմ օրինակեր Դիմոսթենէս զնա քրնէս, իբրև առ գուրս հասեալ կորստեան։

108. Այլազգի զօրք այն էին՝ որ յետ մարտին Իսասայ հասան 'ի պարսկական բանակէն հրամանաւ արքային, և զնացին 'ի Թիկունս օգնականութեան պելոպոնիսեան վաստակաւորութեանն։

109. Պերրէպք էին բնակիչք հիւսիսակողմանցն Նիլագայ՝ 'ի Պենէոս գետոյ և անդր։

110. Կերամիկոն էր գիւղ մի ակամանտեան ցեղին։

111. Նիմիէոն էր քաղաք 'ի ցամաք կղզւոյն Քերսոնեսի տաւրացւոց։

112. Օրէն էր ամենայն ամբաստանելոց տարագնաց լինել 'ի հայրենի գաւառէն՝ մինչ գեռ ընդ դատաստանաւ էր։ Եթէ դատապարտն տայր զնա դատապարտ առնել, ոչ և ս կարող լինէր դառնալ անդրէն։

113. Ըստ հելլենականին Κύποι Կիպի կամ՝ Կեպի ասացեալ, որ է գոբոկեպ. և էր քաղաք կառուցեալ 'ի վերայ Բոսպորի 'ի դազթականաց միլեսացւոց։

114. Զի օրէնք աթենականք չհրամայէին առնել կին այլազգի։

115. Սրբարանքդ էին անօթք ջրոյ սրբութեան 'ի մուտս տաճարաց և հրապարակաց, որով ցողէին զանձինս 'ի գալ մտանել 'ի ներքս։

116. Պրիտանիոն՝ որ է Նահապետարան, էր ապարանք մեծ 'ի քաղաքս Նիլագայ յասանելականութիւն գեսպանաց, հասարակաց հիւրոց, թոշակաւորաց պետութեան, յունկնդրութիւն ստանից, 'ի պահպանութիւն հասարակաց՝ թերապիից, մանաւանդ մեհենական հրոյն. յԱթենս՝ և լուսնոյն էր ցոլմանոյ։

117. Բնագիրն սակ 'ի թաց լոսայս. յայն զանկարկուն ունելով, զի հանգերձ՝ որ գամ մի լուսանայ, կորուսանէ զծարիկ գունին՝ զնորութիւն և զպայծառութիւն. նոյնպէս պարգևք՝ անխտիր յաշխարհաք՝ մաշեն և թափեալ 'ի փառաց պարծանացն։ Ակայէ այժմ և կոռնելիոս նկատս 'ի Մելիսթենէսն։ «Բրպէս պատիւք ժողովրդեան մերոյ, ասէ, նուազ և անօգտ էին երբեմն, և նոքին իրի չքեղք։ իսկ այժմ զեղունք և առատութիւնք, նոյնպէս յաստ ժամանակաւ առ աթենացւովքն։»

118. Ռասոիոս. Քերթ. 410.

«Ղեկավարեալն 'ի ցանկալի ասպարիսին ժամանել կէտ
Վաստակեաց յոյժ 'ի տալոյ տիս, 'ի քիրան 'ի ցուրտ՝ համբերատար,
Ժուժկալեալ հրաժարեաց յԱստղկանէ և 'ի գինւոյ։»

Digitized by Google

119. Փիլէ՝ ամրոց էր Աստիկէի, յոր ապաստան անկան պաշտ-պանք ընկերհաշտութեանն, գլուխ ունելով և առաջնորդ զԹրասի-բուլոս և զԱքիլլէս, ի բռնակալել երեսնից բանաւորացն Աթենայ, զոր և ի պարտութիւն մատնեալ լաւագամ՝ ազատեցին ըզ-հայրենեան։

120. Սարիմոն՝ գետ էր Թրակիոյ, առ որով յաղթութիւն մեծ տարաւ Կիմոն զօրավար աթենացւոց ի վերայ գնդին Պարսից։

121. Հերոմեք էին դրօշակք Տիւր դից ըստ նախնեաց մերոց, որ է Հերմէս ըստ Հելլենաց. և էին կճեալք, չորեքկուսիք, պատշաճք յարձանագրութիւնս։

122. Այս գահլիճ, կամ գաւիթ ևս թէ կամիցիս կոչել, էր ի հրա-պարակի ժողովրդեանն։

123. Էիոն կամ Էիոն՝ էր քաղաք Թրակիոյ ի բերան Սարիմոնի՝ ոչ հեռի յԱմֆիպոլսէ։ Էր յայնժամ ի ձեռս Փերսիքսի, որ ըստ Պլուտարքեայ աւանդելոյ՝ Բուտեսի յանձն արարեալ էր պահելոյն. որոյ չկարացեալ զդէմ ունել թշնամեաց՝ հրձիգ արար զքաղաքն, և հոսեաց զանձն ի հուրն։

124. Զմենեսթեւս մարթի տեսանել յիլիականին Հոմերի. երգ բ. 552։

125. Սրահն այն ըստ հելլէն ձայնին Պիկիլէ կոչէր, որ է ըստ մեզ Նկարէն, վասն երևելի իրաց ազգին ի նմա նկարակերտն լինելոյ։

126. Առ այս և կոռնելիոս Նեպոս ասէ. «Քանզի և այսմ Միլ-տիադայ՝ որ զԱթենս և զյունանատան բովանդակ ազատեցոյց, այս-պիսի տուաւ պատիւ ի Նկարէն անուանեալ գահլճին. զի ի նկարել Մարաթոնեան մարտին, ի դասու զօրավարացն տասներեցուն՝ առաջ-ին նորա պատկերն դնիցի, ինքն զզօրն խրախուսեսցէ և զպատերազմն մղիցէ։»

127. Ի տաճարի Դիցամօրն Կիւբեղեայ աւանդեալ պահէին աթե-նացիք գյիշատակարանս աշխարհին և զգիւանագիրս։

128. Ըմբիշ էր Փիլամմոնդ՝ ժամանակակից Եպքիմեայ և Դիմոս-թենի։ Իսկ Գլաւկոս էր ի Կարիստեայ քաղաքէ Եւբիոյ՝ անպարտելի նահատակ առ հինսն։

129. Հազարապետ էր այրդ այդ իրաց քաղաքին աթենացւոց, նշանաւոր՝ չարաչար վարչութեամբն, մինչ զի անուն իւրոյ յառակ փոխել։

130. Այս է, նոյնպէս խստիւ պատուհասեալն զվասելիսն հակա-ռակ օրինաց, և որ զբէնան գործովք լուծանելին։

131. Հելլենացւոց ի պէտս՝ էին ժամաչափք ջրեղէնք, որովք սահ-մանէր՝ այսչափ կամ այնչափ ջրոյ հոսմամբ՝ ժամանակ իւրաքանչիւր ատենաբանի խօսելոյ։

132. Կախէին յատենի դատաստանին զյուցակ հրամանին՝ զորմէ

Digitized by Google

էր ամբաստանութիւն, և անդէն 'ի նմին առքնեալ գրեալ զօրէնսն՝ որոց հակառակ ելանէր հրամանն այն։

133. Աղաչէր պատասխանատուութիւն զայն իմա, որ ըստ օրինացն և ըստ կարգի լինիցի։

134. Կոչեա՛ կոչեա՛ ասել Եաբինի 'ի գիմաց ամբոխին՝ զայն ինն յայտ առնէ, թէ սխալարձելով մոռացիր լսէին սահմանեալք զԻմիսոթենէս։

135. Դիմասոթենէս, ըստ Եաբինեայ մոռացն տեսանելոյ, ընակեալ էր 'ի Պիրէան իբրև նաւ մի անդանօր խարսխեալ կայմ 'ի փախուստ։

136. Քանզի էին գտեալք որոց ոչ գոյին պատիժք սահմանեալք յօրինացս, այլ թողեալ էին 'ի խոհեմութիւն դատաւորացս։

137. Զի հինքն 'ի տուգս խրեանց զՀերսն խղէին կամ գերծուին։ Հնութիւն ասովորութեանս և 'ի սուրբ գիրս երևի, զոր մերքն խղել ասացեալ են։ Եւ 'ի Հռոմի ընթեռնումք։ (Ոդիս. Գ. 198).

Եւ ըզՀերսն խրզել և ընդ ծընօտս արտօսք հեղուլ։

Եւ ըստ Պլուտարքեայ պատմելոյն, 'ի մեռանել Հեփեստիոնի՝ եւս Ալէքսանդր խղել զքաջս երիվարաց և զիրուց, զի անասունք անգամ սուգ առնուցցուն զտիրելոյ իւրմէ։

138. Թարգմանութիւնդ տայ բաւական զնմանատն, թէ ոչ գլուխ է այն մարդոյ, այլ պատճառաբ կամ աղբիւր շահից և հասոյց. ըստ որում ամենք յարմարել ցանկացան և զընդգիրն և փոխել զբառն πρόσοδος մուտք, հաս, 'ի κεφάλαιον գլուխ գրամոյ, և ասեն. Ոչ կաւսին, այլ գրամոյ գլուխ ստացեալ ունի այրդ։

139. Բազում անգամ ասխեալ էր Եաբինեայ ընդ Դիմոսթենի յաւնեաթասութիւնս իւր, այլ չէ էրբեք դատ վարեալ։

140. Քաղաքիսս զօրավար ասիենացւոց յաղթեալս Պոլչեսի 'ի Նաւակուսին մերձ 'ի Ղաքսոս։

141. Ալիմոիսս ընդ Աստիպատրի զնկավարէր զկրս Մակեդոնիոյ և զնալաղայ, մինչ դեռ Ալէքսանդր յԱսիա էր։ Աստիպատրս՝ մի 'ի քառասնեղոս, 'ի կերպի վաճառականի երթեալ մտեալ էր յԱթենս։

142. Յայտ է և 'ի մերոց հնութեան մատենից, զի աղ և հաց և սեղան միկնորդք և առիթք բարեկամութեան էին. քանզի նորին և նշանակք են։

143. Հինքն հելլենացւոց, որպէս և հռոմայեցւոց, զեօթն օր պահէին զմեռեալն, յուրն՝ այրելին, յլինն՝ թաղելին զաճիւնն. յոր միտս ասէ Ոլասոխոս. (Վերերգ. ԺԷ. 48).

« Զինանօրեայսն ցբրուել ըզփոշիս։ »

Այլ Եաբինէս որպէս գիտացեալ է զառակ օրինակին Դիմոսթենի։ կամ բերեալ 'ի բերան յուսկն իւր հասեալ, կամ յետոյ ուրեմն

Digitized by Google

յաւելեալ յօրինեալ 'ի Ճառիդ, որպէս և այլ ինչ ինչ, զոր օրինակ և համբարեալն նմանութիւն որ խուն ինչ զկնի։

144. Զհրեշտակութենէն ասէ, զոր ասթենացիք առաքեցին առ Փիլիպպոս յետ Ճակատուն Քերոնեայ՝ խնդրել զհաշտութիւն։

145. Զնոյն նմանութիւն առնու և սուրբ Ոսկեբերանն 'ի վերջ կոյս քառասուն և երրորդ Ճառին, « Եթէ 'ի փողոյն զլեզուական 'ի բաց հանիցես, անպիտան մնայ այլ գործին. բայց ոչ այսպէս փողն հոգեւոր։ »

146. Հոմերոս յիլիականին. Բ. 212։

147. Լակեդեմոնացիք, յետ հասու լինելոյ քաղաքին Ասթենայ, կարգեալ հաստատեցին 'ի նմին բռնաւորս երեսուն, որ բազում եղեան չարաչար 'ի վերայ քաղաքացւոցն հաստատեալին։

148. Ի բեռեկ պարսպացն հարկ եղև Դիմոսթենի, որպէս երբեմն Թեմիստոկլի, քանդել զգերեզմանս. այնու Եաքինէս իբրև մահնա-կապուտ զնա բռնադատանէ։

149. Պատմութիւնն ոչ ինչ յիշատակէ զայդ, որպէս և ոչ զթուղ-թըն սուղ ինչ յառաջ 'ի մէջ ածեալ յԻաքինեայ։

150. Միկենաբերդ՝ ակառն է կադմեական, ամրակողմն գլուխ քա-ղաքին Թեբացւոց, դղեակ բերդ 'ի բերդի ամրացեալ, զոր կալեալ էր մակեդոնացւոց։

151. Մինչդեռ Աւէքսանդր յԱսիա էր, Թեբացիք կոչեցին զաբ-կաղացիսն 'ի Թիկուռնա՝ առ զլուծն մակեդոնական ընկենլոյ. արկա-դացիք պահանջեցին տան տաղանդ յառաջ քան զիրին ձեռնարկու-թիւն։ Թեբէ՝ 'ի գիւտ արծաթոյն ապատան եղև 'ի Դիմոսթենէս, որոյ առեալ էր յարքայէն Պարսից գանձս առ 'ի յարուցանել թշնա-մս Մակեդոնիոյ։ Դիմոսթենէս զլացաւ, չառ յանձն տալ և Անտի-պատրոս փութացաւ հասոյց արկադացւոց զտասն տաղանդն, զի մի խլըտեսցին 'ի տեղւոջէ իւրեանց։

152. Փիլիպպոս զդուստր իւր Կլէոպատրա տուեալ էր կնութեան Աւէքսանդրի եղբօր Ոլիմպիայ, քեռւոյն Աւէքսանդրի մեծի, Մոլ-ոսաց կամ եպիռուացւոց արքայի։

153. Աւէքսանդր, զորմէ արդ իսկ առացաք, ըստ խնդրոյ տաբեն-տացւոց խաղացեալ յիտալիա 'ի Թիկունս նոցին, և 'ի պարտութիւն մատնեալ յերեսաց ընակչացն Բրուտիոնի՝ կորեաւ ամենայն զօրքն յերեքաբիւր երեսուն և միում ամ 'նախ քան զմեր Թուականութիւնս։

154. Զայս յաղթութիւն տարաւ Իփիկրատէս 'ի կորնթեան պա-տերազմն ընդդէմ Ագեսիլայ սպարտացւոյ, 'ի չորրորդ ամի հարիւր վեցտասան Ոլիմպիադին։ Գունդն յիշատակեալ լակեդեմոնական՝ էր հնգից հարիւրոց այրենեաց հաստատեալ, կամ ըստ այլոց՝ եօթն ինն հարիւրոց։ Գլուխ գնդին կոչէր սպայապետ։

155. Ի խաղալ Տիմոթէի զաւաջինն 'ի Թրակիա, շուրջ պատեցաւ

Digitized by Google

զՆլաղաւ՝ իւրով նաւահանգիստն, և նուաճեաց յաթենացիսն ըզ-
կերկիւրա կամ Կորկիւրա կղզի, այն է Քորֆու։

156. Յօրէնսն Դրակոնի հրամայեալ էր կորուսանել և զանշունչ
իրս՝ որոց անկումն թէ ոք մեռանիցի։ Եւ զայդ օրէնս պահեաց Սոլոն։

157. Յետին արշաւան՝ իմանալի է զպատերազմն որ յանկ եւ Քե-
ռոնեայ ճակատամարտիւն։

158. Թուի ակնարկել՝ ի գանձս տեսաբանին, որ յառաջ կարդեալ
էին՝ ի զօրաժողովս և՝ ի կազմս հանդերձանաց նաւուց, և ապա բաշ-
խեցան՝ ի ժողովուրդն յաւուրս հանդիսից և կացարդից։

159. Թերևս զԱւտոլիկոնէ են բանքդ, որ յԱրիսպագէն՝ ի մահ
դատապարտեցաւ։

160. Լէոկրատ՝ յետ քերոնեան խորտակմանն՝ եմուտ՝ ի նաւ գի-
լերի ամենայն կարասեաւն, և ինքնահալած անկաւ՝ ի Հռոդոս. յետ
հինգ ամի դարձաւ եկն յԱթէնս, և՝ ի Լիկուրգոսէ ուսմանէ ամբաս-
տանեցաւ յատենի։

161. Այս գումարումն ժողովոյ յայտնապէս զԱմիիկոմանացն
ասայ իմանալ։

162. Իբրև նշկահեաց Եգիպտոս զԱրտաշէս Երկայնաձեռն, խա-
ղաց ապայ ծանր՝ ի վերայ նորա, և չկարաց ինչ ասնանել նմա յերթ-
սաց ամենաբուռնն որ պահէին զնա։ Յաստուն արքայից արքայի դարձ-
աւ յայնժամ՝ ի վերայ նոցա, և արձակեաց՝ ի Պելուսիոնէս ընդ Արթ-
միսի գաղտագողի դաւաճանս՝ գանձուք հանդերձ՝ յարուցանել նոցա
թշնամիս. այլ ոչ յաջողեաց. Լակեդեմոն ոչ կամակցեցաւ որսմուս-
թեան արքային։

163. Այս վերջին բանք, կնիք խօսիցն Եռքինեայ, ըստգտեալ է
՝ի քննաբանից իբրև իմաստակութեան սնոտի պայթիւն՝ անհամա-
մատ ընդ նախակարգեալ պերճաբանութիւնն. որպիսի ինչ ոչ նշմա-
րի և ոչ ուրեք առ Դիմոսթենի։

Digitized by Google

Digitized by Google

ԴԻՄՈՍԹԵՆԻ

ՃԱՌ

ՅԱՂԱԳՍ ՊՍԱԿԻՆ

Digitized by Google

Digitized by Google

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Զոր ինչ 'ի Կիկերոնէ ասացաքս զՇառէն Եաքինեայ 'ի Նախադրութեան անդ իւրում՝ բաւական է 'ի յայտ ածել զպատճառս մեծի խնդրոյն, յորոյ վերայ 'ի պայքար մտին երկոքին հռչակաւոր ճարտարախօսք Աթենայ. նա 'ի դատաւորել, և սա 'ի տալ պատասխանի ընդ անձին և ընդ կտեսիփոնի, և արդարացուցանել զանձինս և զհրաման Պսակին։ Բայց և զամենէ զեկուցանելի է ինչ առանձինն համառօտս։

Աթենացիք, յետ պարտութեան իւրեանց՝ թեբացւովք հանդերձ՝ 'ի մեծի ճակատամարտին առ Քերոնեաւ, կասկածեալ և 'ի խեթի լեալ 'ի մեղմեխ խորհրդոց Փիլիպպեայ, և անվստահք ընդ նորոգութիւն առաջնոյ ուխտին դաշանց և թիկանց ընդ նմա, թէ գուցէ յաւուր միում, որպէս ընդ այլսն, և ընդ բուն իսկ քաղաքին իւրեանց գոռայցէ մակեդոնական ամբոխին յաղթօղ գումարտակք, վասն որոյ պարտ վարկան կազմել և զօրացուցանել զՀին և զվարխուլ պարիսպս իւրեանց։ Ի տասանց անտի ընտրելոց առ այդ գործակալաց՝ գլխաւոր հոգաբարձու գտաւ Ճարտարախօսն Դիմոսթենէս, ոչ միայն ըստ արժանի 'ի գլուխ հանեալ զերն, այլ և զմասն ինչ հայրենի ընչից 'ի վերայ աշխարհին իւրոյ եդեալ ձրի, եւ հատանել կրկին փոսս 'ի պատնէշ Պիրէոնի։

Մեծի այսր երախտեաց առնն փոխարէն, առաջարկութեամբ կտեսիփոնի քաղաքացւոյ իւրոյ և բարեկամի, յանձն առ հաճեցաւ առեանն պարգևել նմա պսակ ոսկի, և 'ի Սպանդարամետական տօնիցն հանդիսի տալ հրատարակել զպարծանսն։ Եաքինէս, վաղուց ոխերիմ նորա, հակառակ դատաւորաց ամբարձաւ այնմ հրամանի. նամակագիր եղև 'ի վերին երեսս զկտեսիփոնէ, թէ լուծանէ զօրէնսն՝ պահանջելով զայն պատիւ վասն իշխանի՝ մինչ չեն նորա ըստ

Digitized by Google

օրինացն տուեալ զհամար գործակալութեանն, և վասն առն միոյ՝ որ ամենայն աղետից ամենացուցն չարեացապարտն էր, և զժամանակէն և զտեղւոյ քարոզութեանն, որ ընդդէմ օրինացն էր։ Դիմոնթենէս, որ ամենայն նետիցն Եպիթեթայ բուն նպատակն էր, պատասխանի յաղթողական առնէ ամբաստանութեանցն զերբահաչակ Ճառիւս յաղագս Պսակին, քան զոր չէր ինչ սքանչելի ի նախնեացն առ մեզ հաստեալ Ճարտարախօսութիւն, շնորհելով ինչ ինչ եւեթ բարուց և սովորութեանց ժամանակին և ազատաբերան ազգին։

Բայց ոչ անդէն առաժամայն եղև դատաստան վիճին մեծի, այլ ի հինգ կամ ի վեց ամի թագաւորութեանն Աւէքսանդրի, եօթն կամ ութ ամաւ զկնի պատերազմին Քերոնեայ, առ որով նամակագիր լեալ էր Եպիթեթս, սուղ ինչ յառաջ քան զԱպանդրապատուական տօնան, յորս պսակացն լինէին քարոզութիւնք։ Ամենայն Եկեղեցիք գրեթէ անդ էր ի լուր պայքարին։ Եպիթեթս նկուն եղեալ յանհնարին կորովաբանութենէն Դիմոսթենի, վտարանդի գնաց ի Հռոդոս։ Ի մեկնել նորա՝ մնացոյց նմա Դիմոսթենէս արծաթ բազում ի նպաստ, և ստիպեաց ընդունել. և նորա ընկալեալ գոչեաց. « Զիարդ ոչ ասրիպացայց ընդ զրկումս ի Հայրենեաց, ուր այսպիսի մեծանձն ոսոխ թողում, որպիսի և ոչ բաբեկամ գտից այլուր։ » Անդ կանգնեաց զհամբաւարարն ընդ բազում ժամանակս վարժող Ճարտասանութեան, և նախ քան զամենայն արտասանէր զերկոսին Ճառքս յակումբս աշակերտացն. որոց գովեալ յոյժ զնորայն և ասացեալ, իսկ զնմանէ յետ այսր Ճառի պարտեցաւ, ապա իբրև ի Դիմոսթենէն գայլն, և ի հիացումն իսն կրթեալք՝ կայթիս և պայթիս հարկանէին, աւանդի ասացեալ առ նոսա. « Իսկ զինչ ունիք առնել, եթէ զինքն ի զվիշապն զայն լսէիք։ » Եւ այս ոչ փոքր գովեաս է, ոչ միայն Դիմոսթենի, այլ և Եպիթեթայ առն ոսոխի և նախանձողի։

Զհնոցն դատաստան հաստատէ զՃառէս առաջին քննաբան աւուրցս և քաջ հելլենագէտն Վիլմէն, զի ասէ. « Փիլիպպեանքն (Ճառք Դիմոսթենի) թեպէտ և վասնզի էին, այլ Ճառ Պսակին իրաւամբք դասի առաջին գլուխ գործոցն Դիմոսթենի։ » Առաւել ի յայտ գայ մեծութիւն Դիմոսթենի, յորժամ ընթեռնուցի առ հինն՝ այնչափ հեշտացեալ ամենացուցն ընդ պերճաբանութիւն Եպիթեթայ, մինչև զերբեակ Ճառս նորա յանուն երեցուց Շնորհացն յորոշելոյ։ Իսկ զԴիմոսթենէս՝ հին և նոր դասքն կոչեցին իշխան Ճարտարախօսութեան, հեղեղ յափշտակիչ, որոտընդոստ փայլակին կայծակնատարափ, գէր ի վերոյ քան զամենայն հիացումն զարմանալեաց։ « Այրս այս և Բանն մի են » ասաց Լաֆոնթէն։

Digitized by Google

ԴԻՄՈՍԹԵՆԻ

ՃԱՌ

ԾԱՂԱԳՍ ՊՍԱԿԻՆ

Նախ քան զամենայն, ով այլք աթենացիք, ուխտիւք խնդրեմ յաստուածոց և յաստուածուհեաց բոլորեցունց, զի զինամսն զոր ընդ քաղաքիս և ընդ ձեզ ամենեսին ունիմ ես հանապազ, նոյն և՝ ի ձէնջ առ իս գտանիցի՝ ի հանդիսի աստ յայսմիկ. և ապա, որ վասն ձեր է մանաւանդ և՝ ի ձեր բարեպաշտութիւն և՝ ի փառս, զի տացեն ձեզ դիք՝ մի՛ խորհրդակից առնուլ զդատախազն, եթէ զիարդ պարտ իցէ ձեզ լսել ինձ. զի անագորոյն իմն այդ լինիցի. այլ զօրէնսն և զերդումնդ[1], յորում առ այլովք ամենեքումբք իրաւամբք՝ դրեալ կայ և այս. Երկոցուն կողմանցն միապէս դնել ունկն: Որ այն ինքն է, ոչ միայն մի՛ ինչ կանխել առնել դատապարտ, և զնոյն միամտութիւն երկոցունցն շնորհել, այլ և որով կարգաւ և որով ոճով և կամիցի և ընտրիցէ իւրաքանչիւր ոք յոտոխացն, թոյլ տալ նովին և վարել:

Digitized by Google

Արդ ես յոյժ նիազ գտանիմ 'ի մեծրոի ասա քան զԵս-քինէս, մանաւանդ երկուք այսոքիւք մեծամեծաք, ով արք աթենացիք։ Մի, զի ոչ զնոցին իրաց գուսարիմք. քանզի ոչ նոյն է ինձ այժմ 'ի ձերմէ մոերմութենէդ վրիպել, և նմա ջայջոլել 'ի դատախազութիւնն զ. այլ ինձ... բայց չկամիմ ասել ինչ գժպատեհ 'ի մուս ասա Ճառիս. իսկ դա՝ վարկպարազի անիսէթ յիմքէ չարախօսէ զնէն։ Եւ միւս ևս, որ յամենայն մարդիկ 'ի բնէ հաստատեալ է, բամբասանաց և ամբաստանութեանց մտագիւր մատուցանել ունկն, իսկ ընդ անձնագովն խոժոռել։ Արդ՝ որ հեշալին է յայսոսիկ, այն դմա տուեալ է. իսկ որ, որպէս բանից կարդ է ասել, զամենեսեան խեղդէ և մղձկէ, այն ինձ մնայ։ Եւ եթէ սովին երկիւղած մոգք չարկից 'ի Ճառ զառ 'ի յինէն գործեցեալն, Թուեցայց չունել ինչ 'ի հեղբու�չարախօսութեանցն, և ոչ՝ որովք խնդրեմն պակիլ՝ յայտ առնել։ Իսկ եթէ 'ի գործս իմ և 'ի անտեսութիւնս անցանիցեմ, բազում անդամ հարկ լիցի ինձ խօսել զանձնէ։ Այսուհետև գուն գործեցից կարի իմն չափով զայն առնել. իսկ զոր իրքն ինքնին ստիպիցեն, այն ինաս 'ի նա յիրաւի երթեալ կրթեսցի՝ որ յարոյցն զայսպիսի պայքար։ ✗

Թուի ինձ, ով արք դատաւորք, թէ խոստովան լինիցիք գուք ամենեքեան, զի այս հասարակ ընդ իս և ընդ Կաեսիփոն է գուսարած, և ինձ ոչ նուազ ինչ փութոյ արժանի։ Զի յամենայնէն անկանել դառն է և գժնդակ, մանաւանդ եթէ յանուն թշնամւոյ հասանիցէ այդ 'ի վերայ, և ևս առաւել 'ի ձերմէ խնամոտ և մարգասէր կամացդ վրիպել, որչափ և մեծ իսկ է այդմ լինել արժանի։ Եւ քանզի այսպիսի ինչ է պատերազմս այս, աղաչեմ և խնդրեմ յամենեցունց 'ի ձէնջ առ հասարակ՝ ունկն մատուցանել պատասխանատուութեանս իմում առ բոլորքն՝ ըստ ամենայն իրաւանց, որպէս ինչ օրէնքն հրամայեն, զորս օրինագրողն իսկզբանէ Սոլոն, իրաւախոհ առ ձեզ և ժողովրդախնամ, ոչ գրով և եթէ հաստատուն լինել պարտ համարեցաւ, այլ

Digitized by Google

և ձերով դատաւորացդ երդմամբ։ Ոչ եթէ Թերահաւատ ինչ 'ի ձէնջ լինելով, որպէս ինձ Թուի, այլ տեսեալ, զի զբարեպայման և զքամբասանս՝ արդեաք վասն յառաջագոյն ճառելոյն զորաւոր գտանի դատախազն, չիք դատապետելոյն 'ի բաց անցուցանել, եթէ իւրաքանչիւր զի 'ի ձէնջ 'ի դատաւորացդ՝ ոչ երկիւղածութեան առ դիմն պատկառ կացեալ, երկրորդի և խօսողին իրաւանցն մեծարանս առնիցէ, և երկոցունցն հարթ և հաւասար յանկնդրութիւն մատուցեալ՝ այնպէս ամենայնի տեղեակ և խելամուտ լինիցի։

Արդ, քանզի որպէս Թուի՝ զբովանդակ կենաց անձինս առաջի կայ ինձ այսօր տալ համար և զհամաշխարհի քաղաքավարութենէս, կամ է ինձ՝ որպէս 'ի սկզբանն՝ միանգամ պատասել առ դիս. և ապաշեմ, ձեզ լու 'ի լու, նախ՝ զի զոր խմառ քաղաքս և առ ձեզ ամենեսին կալեալ է միշտ խնամս, նոյն և 'ի ձէնջ առ իս լինիցի 'ի մտրամ առ. և գարձեալ, զի որ օգուտ ինչ է 'ի հասարակաց ամենեցուն փառս և 'ի բարեպաշտն իւրաքանչիւր, զնոյն ամենեցուն ձեզ շնորհեսցեն դիք խորհել և խմանալ զդատս զայսմանէ։

Եւ արդ, եթէ Եպիսկոպոս, զորոց միանգամ նամակագիր լեալ քան մատուցեալն էր, զայնցանէ և եթէ ամբաստան կայր, և ես զայնմ հրամանէ [1] տայի ուղղորդ պատասխանի։ Այլ քանզի և ընդ այլսն անցանեալ՝ ոչ սակաւ բանս ծախեաց, և բազում ինչ ասեաց զինէն, հարկ համարիմ և իրաւունս, ով արք աթենացիք, ասել նախ սուղ ինչ զայնցանէ. զի մի զք 'ի ձէնջ յապաքուստ արտաքս բանից 'ի քարշ ածեալ՝ այլազգայնս ինչ լուիցէ յինէն զիրաւունս դատաստանիս։

Յաղագս անձին, որչափ ինչ լուտացեալ հայհոյեաց դա զիս, տեսէք քանի պարզ և արդար իսօսիցիմ։ Եթէ այնպիսի ինչ զք գիտէք զիս, որպիսի դա բասրբաղեաց, — զի ոչ այլ ուրեք երբեք կեցի՝ բայց առ ձեզդ, — մի և ձայնիս ան-

Digitized by Google

դամ բարբառոյ ժուժկալէք, թէպէտ և զամենայն ինչ զհա-
սարակաց՝ յոյժ գեղեցկապէս իցէ իմ անօրինեալ. այլ այժ-
մէն սատէն և սատ յարուցեալ պարտուորս արարէք։ Իսկ
եթէ լաւագոյն յոյժ քան զդա և 'ի լաւագունից, և ոչ ա-
նարդ ինչ քան զդք 'ի համեմատից, — զի մի ծանր ինչ ասացից,
— և զիս և զիմն համարիք և ճանաչէք, մի և յայլսմա-
մենայնի հաւատայք դմա. զի յայտ ուրեմն է՝ թէ նոյնպէս
յօգեաց ստեղծ զամենայն. և ինձ, զոր 'ի բազում առաջին
պայքարս ցուցեալ էք յամենայն ժամանակի, զնոյն և
այժմ շնորհեցէք մուերմութեան խնամ։

Թէպէտ և գժնամիտ եմ, Եպքինէս, սակայն զայդ ամե-
նևին տիմարաբար կարծեցեր, թէ թողեալ իմ զՀառա գոր-
ծոցն և քաղաքավարութեանց՝ 'ի քո լուսանագ գնիցեմ
դէմ։ Զայդ ոչ արարից, չեմ ինչ այդպէս անզգայեալ.
այլ անեսութեանցն՝ զորս ստեալ գտրուվեցեր՝ եա ընդ եա
մատեայց 'ի քնին. իսկ զյոդնախուռն հրոսոզ ձաղանացդ՝ [5]
ապա յեռոյ արարից յիշատակ, եթէ սոցա լսել կամ լի-
նիցի։

✝ Իսկ արդ ամբաստանութիւնք բազում և անհնարինք,
որոց և ոմանց մեծամեծ և վերջին պատուհաս հրամայեն
օրէնքն. բայց ընտրութիւն իսկ այսր դատի՝ զատելոյ զբա-
պարտութիւն 'ի գէմս բերել, և զթշնամանս և զլուսանս և
զզուսանս միանգամայն, և զամենայն ինչ զայդպիսի. և զե-
ղերանցն և զինաստուցն ասացելոց, եթէ ճշմարիտք էին,
չէք քաղաքիս ըստ արժանի վրէժս պահանջել, նա և ոչ
սուղ ինչ սակաւ։ Զէ պարտ արդարեւ խոփմանել զմատչէն
առ ժողովուրդն և լինել արժանի ատենաբանելոյ. բայց
ոխութեան և մախանաց պայմանաւ զայն գործել, ոչ, աս-
տուածովքն երդուեալ, ոչ ուղիղ ինչ է, ոչ աղնուական և
ոչ արդարացի, ով արք աթենացիք. այլ յորս ինքատակար
զնս տեսանէր առ քաղաքս, եթէ այնչափ ինչ էին որչափ
գա այժմս ողբերգակեալ [6] Հառամաբանէր, զորինացն պա-
տիժս առ յանցանն 'ի գործ արկանել։ Եթէ քնութեան

Digitized by Google

ինչ արժանի զնս տեսանիր գործեալ, յորուցանել 'ի վերայ իմ փուրսիչ, և այնպէս յաստեան դատաստանի առաջի ձեզ զնս կացուցանել. և թէ անիրաւ ինչ իրիք հրամանահան, զանիրաւութենէս ամբաստան լինել: Քանզի չմարթէ ըզ-Կռեսիփոն վասն իմ առնել պարտաւոր. և եթէ ոչն ինչ ունէր յանդիմանել զնս, չվարէր ընդ նոսա դատ: Եւ որ-դարև իսկ, եթէ ինչ յորոց այժմս չարաչաւոչ և ճառա-տէր, և կամ այլ ինչ առ ձեզ մեղուցեալ տեսանիր զնս, զամենայնեկ օրէնքդ դոն և պատուհասք և դատք և դատաս-տանքք՝ դատն և ահագնատատ սպառնալեաց լի, և դոյր նոսա հանել զայն ամենայն ընդ իմ գլուխ. և եթէ զայդ առ-նել յառնէր դայր 'ի մեզ, և զայդ օրինակ վարէր ընդ իս, գործք նորա վկայ և երաշխաւոր մատանէին ամբաստանու-թեանն: Իսկ զարդիս՝ մոլորեալ յուղիղ և յարդար ճանա-պարհէն, և ըստ որոտուզի խոտորեալ 'ի յանդիմանու-թեանց՝ որ յարդեանց անտի իրացն, յետ այսչափ ժամա-նակաց՝ բարուրս և հենգնութիւնս և կատականս կցկցեալ կարկատունս՝ խեղկատակէ: Հուսկ ուրեմն, զինեն են ամ-բաստանութիւնքն, և զոսա առնեաքարշ եկակոչ առնէ. և բովանդակ ռազմի ճակատու պատերազմիս գլուխ կացու-ցեալ զատերութիւն իւր ընդ իս, բայց ոչ ուրեք նովա-յայտ յանդիմանն հարեալ լինէ 'ի գիմի, զայլ ոք կողոպատել տրկանել 'ի պատուոյն ? Թուի նկրտեալ: Եւ 'ի վերայ այ-լոց ամենայնի իրաւանց, զոր ունիցի ոք ասել վասն Կռեսի-փոնի, և զայս ևս յոյժ 'ի գէպ Թուի ինձ ասել, ով ոք ա-Թենացիք, Թէ զմերմէ ատելութենէս մեզ մեղէն արժան էր 'ի խուզափորձ մտանել և պահանջել զանձինս, և ոչ Թէ զկռուէն ընդ միմեանս Թողուլ, և երթալ խնդրել չարիս ինչ այլում ումեք հասուցանել. զի այդ՝ ծագ անիրաւու-Թեան է: †)

Եւ որդ, զբնաւ իսկ զամբաստանութիւնն գտանիցէ ոք ըստ այսմ՝ ոչ արդարութեամբ և ոչ ճշմարտութեամբ ինչ ասացեալ. բայց կամիմ և մի ըստ միոջէ առնուլ զնոսա

'ի խոյզ և 'ի քնին, մանաւանդ որ ինչ միտեղամ վասն հաշ-
տութեանն և հրեշտակութեանս ասեաց զինեն, զգոր-
ծեալսն իւր ընդ Փիլիպպաւեայ՝ [8] յիս հանելով։ Այլ հարկ
է, ոմ՝ զոր աթենացիք, և վայելուչ ևս, յուշ առնել ձեզ՝
թէ զինչ իրք էին 'ի ժամանակին, զի ըստ այնր ժամուն
նկատիցէք զամենայն։

Ի յաւուն փովկիական պատերազմին [9], ոչ ինև, զի չէ
էր իմ յայնժամ կացեալ 'ի վարչութեան, յայն միտս էիք
դուք զաւաջինն՝ զի ընդ փրկութիւն փովկիացւոցն կա-
մեիք, թէպէտ և տեսանէիք զնոսա անիրաւութեամբ գնա-
ցեալս, և խնդայիք ընդ թեքացւոցն որ զինչ և է կիրս, ոչ
ընդ խօլ ինչ և ոչ տարապարտ ընդ նոսա ցասուցեալք. զի
ոչ չափով ինչ վարեցան յորս յայլոցեցանն 'ի լեւկտրա։
Որ այսու, ոգջոյն Պելոպոնէս քայքայեալ պատուակտեալ
էր, և ատելիք լակեդեմոնացւոց [10] չէին բաւական հարկա-
նել կործանել զնոսա, և ոչ զորս յառաջագոյն արարեալ էր
նոցա [11] իշխանա՝ տեարք էին քաղաքացն. այլ առ նոսա և
առ այլս ամենեսին էր կագ և շփոթ անվճար։ Զայն տե-
սեալ Փիլիպպեայ, զի չէր յաներևայթս ինչ, ծախեալ ինչս
առ իւրաքանչիւր նոցա մատնիչսն, զամենեսեան արկ ընդ
միմեանս և վերդուեաց. ապա յոր ինչ սխալէին այլք և չա-
ղաչար խորհէին, ինքն կազմէր և զարդանայր ընդդէմ բո-
լորեցուն։ Եւ իբրև երկարելով պատերազմին տառապեալ՝
հզօրքն յայնժամ, իսկ այժմ ներգնեալքն թեքացիք, յայտ-
նի էր ամենեցուն թէ հարկաւ առ ձեզ էին ապաւինելոց,
Փիլիպպոս՝ զի մի այդ լինիցի և մի քաղաքքս 'ի մի միաբա-
նութիւն եկեսցեն, ձեզ խազաղութիւն և նոցա օգնութիւն
խոստացաւ։ Արդ՝ զինչ եղև նմա նպաստ յրմբռնել զձեզ
գրեթէ 'ի կամաւոր պատրանս։ Այլոց հելլենացւոցն խար-
դախութիւն կամ ագիտութիւն, կամ թէ զերկոսին ևս ա-
սել. որք յոյժամ անդուլ և երկայն պատերազմ մղէիք
դուք, և այն՝ առ հաստատակաց ամենեցուն օգտի, որպէս
յայդեանց իրացն յայտ եղև, ոչ արծաթով, ոչ անձամբք

Digitized by Google

և ոչ այլով իւիք ամենևին չեղեն ձեզ զօրավիգն. յորոց յիրաւի և յարժանի բարկացեալ ձեր՝ յօժարութեամբ անսացէք Փիլիպպոսի։ Ապա ուրեմն, յանձն առեալն յայնժամ խաղաղութիւն՝ յայսցանէ, և ոչ՝ որպէս դայդ չարախօսեաց, յինէն կատարեցաւ։ Եւ զդոցա 'ի նմին զապիրատութիւնս և զկաշառակրծութիւնս, եթէ ոք ողջմտութեամբ. խոյզ և խնդիր առնիցէ, այժմու եղէլոց երացս դատանիցէ պատճառս։ Եւ զայս ամենայն ճշդիւք ստուգապատում առնեմ վասն ճշմարտութեան. զի թէ թուիցի ինչ յայտոսիկ առաւել իմն ինամ, ոչ իմ ինչ է բնաւ, այլ որ առաջին խօսեցաւ և 'ի միտ արկ զխաղաղութիւն՝ Արիստոդեմոս էր կատակերգակն [12], և որ առն և գրեաց և զանձն վասն այնր եւս ընդ դմա 'ի վարձկանութիւն՝ Փիլոկրատէս ազնուացի, քոյդ, Եպքինէս, և ոչ իմ զոմոյ, թէ և պայթեսցիս սուտդ խօսելով։ Եւ որ ջատագովն կացին նմա, յոր և է ապագա, զի զայդու զանց առնեմ առ տեղեաւս, Եւբուլոս և Կեփիսոփոն [13], իսկ ես՝ բնաւ և ոչ ուրեք երբեք։

Բայց թէպէտ և այսոքիկ այսպէս, և 'ի ճշմարտութենէն վկայեալք, դա սակայն յայն լրբութիւն եկն, մինչև ժպրհել ասել զիս՝ ոչ միայն խաղաղութեանն արարող, այլ և խափանիչ քաղաքիս՝ չառնելոյ զայն համաշխարհական հելլենացւոցն ժողովով։ Իսկ արդ, ո՛վ... զինչ արդեօք իսկաբանեալ կարդասցէ ոք քեզ անուն... եթէ իցէ՞ ուրեք, ուր քո անդ մերձ կացեալ՝ տեսեր զի յայնպիսի մեծ գործոյ և 'ի նիզակակցութենէ, որպիսի այժմս ողբերգեն ճամարտակեցեր, զրկեցի ես զքաղաքս, և զայրացար ինչ. կամ յառաջ մատուցեալ՝ ուսուցիր և պատմեցիր զայսոսիկ որովք այժմս չարախօսես։ Եւ սակայն, եթէ իմ վաճառեալ էր Փիլիպպոսի զխափանած միաբանութեան հելլենացւոց, քեզ մնայր չլուել, այլ ազաղակել և վկայութիւն գնել և յայտ առնել սոցա։ Զայդ ոչ ուրեք արարեալ քո, և ոչ ուրուք լուեալ 'ի քէն զայդ բարբառ։ Եւ

յերաւի. քանզի և չգոյր ինչ յայնժամ առ ոք 'ի հելլենացւոց առաքեալ հրեշտակութիւն, այլ վաղուց ծանուցեալ էին ամենեքեան զմիտս իւրեանց. և գա առողջ ինչ ոչ խոսեցաւ զայսցանէ։ Թող զայդ, ջարաչար զրպարտէ դա և զքաղաքս 'ի ատութիւնս իւր։ Զի եթէ գուք զՀելլէնս 'ի պատերազմ հրաւիրեալ, համայն և առ Փիլիպպոս հրեշտակս առնէիք վասն հաշտութեան, զնուրբատեայ [14] իրան, ոչ զգործ քաղաքի և ոչ զարանց բարեաց, լինէիք գործեալ։ Այլ չէ և չէ այդ այդպէս։ Զի յինչ միտս, յինչ կամս առաքելոց էիք զնոսա 'ի ժամանակի անդ. միթէ վասն խաղաղութեան. այլ հաստատեալ կայր առ ամենեսեան. իսկ միթէ վասն պատերազմի. այլ գուք ձեզէն 'ի հաշտութիւն խորհէիք։ Ապա ես՝ ոչ իսկզբանէ խաղաղութեան առաջնորդ և ոչ միաստակար ինչ եղեալ գտանիմ. և ոչ յայլում ամենայնի՝ զոր ասեաց դա զինեն՝ Հշմարիտ ինչ ուրեք երևի։

Արդ, իբրև արար քաղաքս զհաշտութիւնն, տեսէք ասա դարձեալ՝ զինչ իւրաքանչիւր ոք 'ի մինչ ընտրեաց գործել. զի ասի առջիք 'ի միտ, ով այն ինչ ոք էր՝ որ յամենայնի գործակիցն էր Փիլիպպոսի, և ով ոք վասն ձերր ջանահնար և օգտի քաղաքիս 'ի խնդիր։ Եղեալ իմ խորհրդական՝ հրամանն եռու հանել, նաև հրեշտակացն Ճեպով ընդ կարճոյ Ճանապարհ ուր և գիտիցեն լինել զՓիլիպպոս, և առնուլ 'ի նմանէ զերդմունսն. իսկ նոքա և ոչ յետ հրամանին կամեցան առնել զայն։ Իսկ առ ինչ էր այդ, ով ազգ աթենացիք. ես պատմեցից։ Փիլիպպեայ շահ այն էր, զի հարուստ մի ժամանակ 'ի մէջ անցցէ երդմանցն, և ձեզ՝ զի սակաւ։ Ընդէր։ Զի գուք ոչ միայն յօրէ յորմէ երդուայքն, այլ յորմէ ակն կալայք լինելոյ հաշտութեանն, զամենայն կամութիւն պատերազմի լուծէք լքէք. իսկ նա յամենայն ժամ առաւել ևս յայն հանդերձէր, ակն ունելով, որ և Հշմարիտ իսկ էր, թէ որ ինչ յառաջ քան զերդմանցն կուռել վաղ աՃապարեալ զբռամբ ածիցէ 'ի վերայ քաղաքիս, զայն ամենայն հաստատութեամբ կալցի անկա-

Digitized by Google

պուտ. զի ոչ սակս այնր ինչ ջնեսցէ ոք զհաշտութիւնն։ Որոց իսկ յառաջնասեռ և խելամուտ եղեալ, ոմն արք աթենացիք, հանել եռու զհրամանն զայն՝ նաւել ուր Փիլիպպոսն գասանիցի, և վաղագոյն զերգմունս ուխտեցին ընդունել. որպէս զի մինչ դեռ 'ի ձեռս Թրակացւոց՝ մերոց նիզակակցացն էին տեղիքն, զորս գա 'ի հենգն արկ այժմիկ, Սերրիոն և Միրոխան և Երգիակէ [13], այնպէս կռեսցին գաշինքն, զի մի ամենապարեալ կալեալ նորա զամուր ամուր տեղիսն՝ սիրեսցի Թրակիոյ, և բազում գանձիս և զօրու ամնքացեալ, գիւրաս այնուհետև յայլ եւս իրս ձեռնարկեց լինիցի։ Արդ դա զհրամանն զայն ոչ սահ և ոչ ընթեռնուխակ զի եւս խորհրդականս՝ պարտ վարկայ մուծանել առ ձեզ զհրեշտակսն, զայն ազարտաէ։ Այլ ազէ զինչ արժան էր առնել. չհրամայեալ մուծանել զուրեկեալսն առ 'ի ընդ ձեզ խօսելոյ, կամ պատուէր տալ Ճարտարապետին [16] արգելուլ 'ի նոցանէ զտեսիլ հանդիպեսին. սակայն երկուց գանդաց գոյր նոցա հասանել կալ 'ի զնին տեսլեանցն, եթէ չէր մեր տուեալ զգիր հրամանին։ Ընդէն շահուց քաղաքիս պատրաստ ուրեմն էր ինձ ապատ առնել, և զայնն ամենայն իբրև զգոսան վաճառակուր առնել Փիլիպպոսի. քան, սիր օն անդր 'ի բաց տար։

Այլ արդ ամ. կարդաս ինձ զհրամանն, զոր հաստատի գիտելով գորս՝ զանց արար։ Կարդաս։

ՀՐԱՄԱՆ

« Ես Իշխանաւն Մնեսիփիլեաս, որ օր վերջին էր հեկատոմբէոնի, 'ի նահապետութեան [17] պանդիոնեան տոհմին, Դիմոսթենէս գիմոսթենեան ամենայնի ասաց. Քանզի Փիլիպպոս հրեշտակս առաքեալ 'ի հաշտութիւն՝ եդ գաշինս հաւանութեամբ, հաճոյ թուեցաւ ատենի և ժողովրդեան աթենացւոց՝ 'ի կատարումն հաշտութեանն յանձն առեալ [18] յառաջնում ժողովի ժողովրդեան, ընտրել անդէն

Digitized by Google

հրեշտակս հինգ՝ յամենայն աթենացւոց, և ընտրելոցն չուել գնալ առանց խրիք յապաղանաց՝ ուր ուրեք և [illegible] ստուգեսցեն զՓիլիպպեայ, և առնուլ զերդմունսն 'ի նմանէ և տալ փութանակի 'ի վերայ ընկալեալ ուխտից նորա ընդ Ժողովրդեանն աթենացւոց, զերկոցունց ևս նիզակակիցս 'ի միասին առեալ։ — Հրեշտակ ընտրեցան Եւբուլոս անափիլիատացի, Եսքինէս ատրոմետեան կորթովկեցի, Կեփիսոփոն հռամնուսեցի, Դեմոկրատէս փլիացի, Կլէոնիս կորթովկեցի։»

Յետ զայս իմ հրաման հանելոյ յայնժամ, և օգուտ ըզքաղաքիս հայթայթելոյ և ոչ զՓիլիպպեայն, պատուական հրեշտակքդ այդոքիկ անփոյթ արարեալ նստան 'ի Մակեդոնիա լի և լի ամիսս երիս, մինչև գարձաւ եկն Փիլիպպոս 'ի Թրակիոյ, զամենայն ինչ յիւր վտարեալ անդանօր. մինչ դեռ դոյր՝ յաւուրս տասն, նա մանաւանդ յերիս կամ 'ի չորս, հասանել 'ի Հելլեսպոնտոս, և ապրեցուցանել զամուրսն կռելով դաշանցն, մինչ չև թափեալ նորա զայնս։ Քանզի 'ի լինել մեր անդ՝ ոչ մերձենայր 'ի նոսա, կամ ոչ մոտանէաք ընդ նմա յուխտ. ուստի և վրէպ գտանէր 'ի հաշտութենէն, և ոչ թէ զերկոսեան ևս զքառամբ արկանէր, և զամուրսն և զհաշտութիւնն։

Արդ՝ 'ի հրեշտակութեան անդ առաջին գողոնք Փիլիպպեայ և կաշառաբերութիւն ալանդ այդոցիկ անկիրաւոց և ատելեաց դից՝ այդպիսի եղև. որոյ վասն՝ և յայնժամ և այժմ և յամենայն ժամ խոստովան լինիմ պատերազմել և ընդ հակառակս դոցին երանել։ Այլ մաղմաղակի հետ՝ այլ ևս ինչ ահագին քան զայդ տեսանիցէք վրիժագործութիւն։

Քանզի իբրև ուխտեաց զհաշտութիւնն Փիլիպպոս, նուաճեալ նախ զԹրակիա 'ի ձեռն դոցա հետեալոց 'ի հրամանէս, դարձեալ միանգամ կաշառագնաց ընդ դոսա լինէր, մի գնալ մեկնել 'ի Մակեդոնիոյ՝ մինչև զսպայն 'ի վերայ փովկիացւոց ամենայն կազմութեամբ պատրաստ յօ-

Digitized by Google

ընենացէ. զի գուցէ 'ի ցուցանել նոցա սատ՝ թէ հանգերձեալ է և կազմի 'ի չու, եկանիցէք խաղայցէք դուք, և ծովեալ պատերազմիկ նաւուքդ 'ի Դրոնան, որպէս յառաջն, փակիցէք զկիրճն. այլ ընդ լսել ձեր 'ի պատմելոյ դոցա զայդոսիկ՝ և նա 'ի ներքս անդ 'ի կապանն 'ի Դրոնան ընկիցի, և դուք մի ինչ ունիցիք առնել: Այնպէս յահի և 'ի մեծի տաղնապի կայր Փիլիպպոս, թէ. գուցէ և յետ փութալոյ իւրոյ յայդոսիկ, մինչ չէ զիրվիկնացիսն կորուսեալ նորա, ձեր իրազեկ եղեալ՝ հրամանն տայցէք խաղալ հասանել նոցա 'ի Թիկուանս, և իրքն զերծանիցին եկցեն 'ի ձեռաց իւրոց. վասն որոյ կրկին կաշառէ զԹքակոծելիդ զայդ արհամարհ, ոչ հաստատակ ընդ այլ հրեշտակսն, այլ ինքնուրոյն առանձինն, զայս ինչ և զայս գալ խօսել առ ձեզ և խոստանալ, որովք ամենայն ինչ գնաց կորեաւ:

Բայց աղաչեմ և խնդրեմ, ով արք աթենացիք, զայս ձեզ յուշն կապել ընդ բովանդակ պայքարս, զի եթէ չէր ինչ այլ արտաքոյ ամբաստանութեանն դատախազեալ Եսքինեայ, և ոչ ես այլ ինչ բան օտար 'ի ներքս խառնէի. այլ նորա զամենայն բարրանս և զհայհոյութիւնս միահաղոյն արկեալ 'ի վար, հարկ է և ինձ առ ամենայն չարախօսութիւնս դորա կարճ 'ի կարճոյ տալ պատասխանի:

Արդ զինչ ատենաբանութիւնք էին դորա յայնժամ, որովք ամենայն ինչ կորեաւ: — Թէ չէ պարտ խռովիլ ընդ անցանել Փիլիպպոսի 'ի Դրոնան, զի զամենայն զոր կամիք լինիցի՝ եթէ 'ի հանդարտութեան կացջիք. և յետ երկուց կամ երից աւուրց լուիջիք, զի որոց թշնամի գայ՝ բարեկամ լինիցի, և որոց բարեկամ՝ ընդ հակառակն թշնամի: Զի ոչ եթէ բանք, ասէր նազաբանելով, սերտեն զմտերմութիւն, այլ միաբանութիւն 'ի նոյն մի շահ օգտի. և Փիլիպպոսի և փովկիսացւոց և ձեզ ամենեցուն օգուտ այն է, զերծանել յանզգայութենէ և 'ի պերճանացն Թեբացւոց: — Զայդոսիկ մտադիր իմն լսէին ոմանք 'ի պմանէ վասն յայն ժամու ատելութեանն ընդ Թեբացիս: Արդ զի՞ եղև

Digitized by Google

եւ ընդ եւ վաղվաղակի, ոչ առ՝ ի յերկարս ինչ։ Զուարա-
կան փոփկիացուց կորնչել, քաղաքաց նոցա բրել և խել,
և ձեզ՝ որ հանդարտեալ կայիք և սորա՝ ի քանի, սուղ ինչ
զինի ժողովել զկահ և զկարասի ձեր՝ ի վայրաց վայրաց, և
դմա՝ ըմբռնել զոսկին. և առ. ողջոյ դարձեալ՝ առեալ Թիւնն
առ Թեբացիս և առ Թեսալացիս՝ քաղաքիս եղև, իսկ Հնոր-
հակալութիւն՝ ի վերայ եղելոցն՝ Փիլիպպոսի։

Եւ զի այս այսպէս է, կարդա ինձ զԿալլիսթենէի հրա-
մանն և զհրովարտակն Փիլիպպոսի, յորոց յերկոցունց ան-
տի այս ամենայն յայտնի լինիցի ձեզ։ Կարդա։

ՀՐԱՄԱՆ

«Աստ Մենեսիփիլեաւ իշխանաւն՝ հրամանաւ նահապե-
տաց և առաւնին ժողովեալ ժողովրդեանն՝ ի զօրագլխաց [19],
որ օր քսան և մի էր Մեմակտերիոնի, Կալլիսթենէս եաէո-
նիկեան փալերացի ասաց. Մի ումեք յայթենացուց մի իւիք
պատճառանաք՝ ի վայրի օթել, այլ յոստանին և՝ ի Պիրէո-
նի, որոց չնչեմ՝ ի պահպանութիւն կարգեալ։ Եւ սոցա իւ-
րաքանչիւր զտեղին յոր կարգեցանն՝ պահել անմեկինք՝ ի
տուէ և՝ ի գիշերի։ Եւ որ ոչն հնազանդեսցի հրամանիս
այսմ, ընդ մատնիչսն պարտաւոր լիցի պատժոց, եթէ ոչ
յանհնարս ինչ զանձն ցուցանիցէ եկեալ։ Եւ զանհնարիցն
դատաստան՝ տեսցէ զօրապետն ոստիկան զինուց, և զան-
ձասպետն և խորհրդեան գպիրն։ Ժողովել արագ արագ և
զամենայն ինչ՝ ի վայրաց. զոր՝ ի սահմանի հարիւր և քսան
վատանաց՝ յոստանն և՝ ի Պիրէոն, իսկ զոր արտաքոյ վատ-
անաց հարիւր և քսանից՝ յԵլեւսիս, ՝ի Փիլէ, յԱֆիդնա,
՝ի Հռամնուս, ՝ի Սունիոն։ Այլ Կալլիսթենէս փալե-
րացի։»

Մինթէ դովին ակնկալութեամբք արարէք զնաղտաղու-
թիւնն, կամ թէ զայդոսիկ աւետարերաց ձեզ վարձկանդ
այդ։

Աղէ ընթերցիր և զհրովարտակն՝ զոր յետ այնորիկ ա-
ռաքեաց այսր Փիլիպպոս։

ԹՈՒՂԹ ՓԻԼԻՊՊՈՍԻ

«Թագաւոր մակեդոնացւոց Փիլիպպոս, աթենացւոց
խորհրդեանն և ժողովրդեան ինդալ։

«Գիտասն լեզի ձեզ, զի անցաք մեք ընդ Դրունսն, ըզ-
փովկիսատան ընդ մեզ նուաճեցաք, և որ միանգամ մոա-
գիւր 'ի մեզ յարեցան քաղաքք՝ մուծաք 'ի նոսա պահա-
կապանս. իսկ զատամբակեալսն առեալ ուժով և 'ի հարկի
ծառայութեան կացուցեալ՝ յատակեցաք։ Բայց լուր ա-
ռեալ զկամութեան ձերոյ յօգնականութիւն նոցին՝ գրեցի
առ ձեզ, զի մի ընդունայն ինչ աշխատ լինիցիք յայդոսիկ։
Զի համայն ասել, ոչ չափաւորութեամբ ինչ գործել
թուիք՝ յետ ընդ իս հաշտութեան դաշանց՝ տակաւին հա-
կառել յիմ վերայ, և զայդ՝ ուր փովկիացիք էին 'ի մերոց
հասարակաց ուխտիցս համարի։ Վասն որոյ՝ եթէ չկայցէք
մնայցէք 'ի դաշինդ, ոչ ինչ աւելի առնիցէք՝ բայց կան-
խել յանիրաւութիւն։»

Լսէք զխարդ հաւատոյ յայսս առնէ և կնքէ 'ի թղթի
այդր առ ձեզ առ նիզակակիցս իւր, թէ զայս ամենայն ա-
րարեալ ես և կատարեցի յակամայս աթենացւոց և 'ի հե-
ճուկս. վասն որոյ, եթէ բարուք խորհիցիք, ժվ թեբացիք
և թեսալացիք, զդասս առ թշնամիս ունիցիք և յիս հաւա-
տայցէք։ Ոչ սովին բանիւք գրեալ, բայց 'ի ներքոյ զայս
նշանակեալ կամացն։ Այպա այնուհետև ամ գնաց զնոսա.
մինչև ոչ իմիք յետ այնորիկ նախատեսս լինել նոցա և ոչ
զգալ, այլ թոյլ տալնմա տէր լինել ամենայն իրաց։ Յայնմ
ամենայնի թշուառական թեբացիք յայժմու վիշտս վասն-
գին։ Իսկ այսմ վատահութեան ձեռնտու և զօրավիգն, և

Digitized by Google

այսր՝ ստուերանց աւետաւոր և ձեր դաւաճան, դա այդ է որ այժմ ընդ կարիս թեբացւոցն յողբա հարեալ պատմէ զողորմ ողորմ աղէտսն, մինչ դեռ այնոցիկ և փովկիսացւոցն եղերանց և որոց դամ մի հելլէնք կրեցին չարչարանս, ամենայնի դա ինքնին իսկ է վնասակարա։ Յայտ իսկ է՝ զի ցաւէ քեզ 'ի վերայ եղելոցն, Եպքինէս, ողորմիս և թեբացւոցն, զի սատցուածք են քո 'ի Բիովտիա և զհողս նոցա մշակէս. իսկ ես ինդամ, որ հետ ընդ հետ 'ի դոցին գործօնէն 'ի դատ պահանջեցայ [20]։

Այլ արդ գնացեալ անկայ 'ի բանս՝ զորս լաւ ևս արդեօք պատշաճեցի ասել վայրիկ մի զկնի. վասն որոյ դասնամ դամ անպրէն 'ի ցոյցս անդր, թէ արդի իրացս պատճառք՝ դոցա ապիրատուութիւնք եղեն։

Քանզի իբրև պատրեցայք դուք 'ի Փիլիպպոսէ 'ի ձեռն նոցա, որք առ հրեշտակութեամբքն վարձկան մտին նմա և ոչ ինչ ճշմարիտ ոչ պատմեցին ձեզ, խաբեցան և եղկելի փովկիսացիք, և քաղաքանի իւրեանց սատակեցան, զի՞ ե՞զև։ — Թեսալացիքն [21] անդոմնելիք, և ապառումթեբացիք՝ բարեկամ, երախտադրծ և փրկիչ զՓիլիպպոս համարէին. նա էր նոցա ամենայն ինչ. և թէ այլ ինչ ոք ասել կամէր, չլսէին զձայնն։ Իսկ ձեր՝ յեղեալոցն կասկածեալ և դժգոհեալ, համայն 'ի խաղաղութեանն կայիք. զի և չգոյր ինչ ձեզ գործել անձին առանձին. և այլ հելլէնացիք՝ ձեզ նման խարդաւանեալք և վրիպեալք 'ի յուսից, ըղձմոռութեամբ կային 'ի հաշտութեանն և նոքա, թէպէտ և յեպանակաւ ինն 'ի վաղուց հետէ հարեալք պատերազմաւ։ Քանզի յորժամ Փիլիպպոս հրոս հանեալ՝ ասպատակ սիռեալ 'ի լիւրիկեցիս և 'ի Ցրիբալս և ուրեք ուրեք 'ի հելլենացւոց [22], վանեալ վկանդէր, և կուտէր առ ինքն զօր բազում և ստուար, և ոմանք հաշտութեանն օճանաւ 'ի քաղաքաց քաղաքաց անդր երթեալք կաշառաբեկ լինէին; յորոց մի էր և դա, յայնժամ ապաքէն յայնժամ ամենեքին՝ յորոց վերայ զայսոսիկ նիւթեր նա, մարտիւ

պատերազմի պաշարեալ կային։ Իսկ եթէ չզգային, այն այլ
ինն համար է, և ինձ չէ ինչ փոյթ. վասն զի ես կանխէի
ասէի և վկայութիւն գնէի և առ ձեզ հանապազ, և յո՛ և
առաքէի 23։ Բայց քաղաքք յախտի կային ջերեալք, զի
վարիչք և գործակալք առնուին կաշառս և ընչիւք զեղծա-
նէին. իսկ սոսկակիրք և ամբոխին՝ էր զի չլինէին յառաջա-
տես, և էր զի՛ի հանապազորդ պղերգութեան և՛ի դասարբ-
կութեան խանձ ըմբռնեալ կային. և ամենեքեան իսկ այն-
պիսի կրէին կիրս, զի իւրաքանչիւր կարծեալ այնպէս էր,
թէ՛ի նոսա միայն չժամանիցեն չարիքն, չլինիցին դամա-
գիտ. այլ այլոցն վասնզգալ ակն ունէին զիւրեանցն յամրի
և յանկասկածի ունել երբ և կամիցին։ Այնուհետև, որ-
պէս կարծեմ, փոխարէն մեծի և տարաժամ հեղգութեան
խառնաղանձին՝ եհաս նմա յաղաղութենէն անկանել, և
առաջնորդացն՝ որ բաց միայն յանձանց զայլն ամենայն
վաճառեալ վարկանէին, խելամուտ լինել՝ զի նախ զինքեանս
էին վաճառեալ. զի փոխանակ սիրելեաց և հիւրոց, որպէս
կոչէիին՝ ի կաշառիլ իւրեանց, այժմ սուտակասպաս և աս-
տուածոց ատելի և այլ ինչ ևս անուանս լսեն վայելչականս
զամենայն։ Արժան և իրաւ. զի ոչ ոք, ով արք ամենացիք,
՝ի շահ օգտի մատնէին ինչս ծախէ. և ոչ, իբրև գնելոցն տէր
լինիցի, խորհրդակից այնուհետև առնու երբեք զմատնիչն.
զի ոչ ինչ երջանկագոյն քան զմատնիչն գտանէր յայնժամ։
Այլ չէ այդպէս և չէ։ Իսկ զի՞րդ։ Տիր օն անդր բացէ՝ ի
բաց։ Այլ իբրև խշխանութեանն հետամուտ՝ հասու եղեալ
դամ մի՝ ի բուն արկ զիրան, և տէր է նոցին խարդախո-
ղացն, և անզգամութեանն տեսող, յայնժամ ապա յայն-
ժամ և ատեայ և չաւատայ և ընդ գռեհ ածէ։ Իսկ արդ
միտ դիր. զի թէպէտ և անց գնաց իրացն ժամանակ, բայց
մոռացեաց միշտ է ժամանակ այսոցիկ տեղեակ հմուտ լինե-
լոյ։ Լասթենէս բարեկամ անուանէր Փիլիպպոսի մինչև
մատն և տուր եղև Ոլինթեայ, Տիմոյլաոս՝ մինչև կորոյս
զթեբէ, Եւդիկոս և Սիմոս Լարիսացիքն՝ մինչև զթեսալիա

Digitized by Google

տրարին ընդ Փիլիպպեաս. ապա տիեզերքը ամենայն լցան խռնեցան մատնչքն, որ հալածականն եղեն և 'ի Թշնամանս, և զինչ մնաց 'ի չարեաց որ չանց ընդ նոսա: Զինչ ընդ Ա-րիստոտոս 'ի Սիկիոնի, և զինչ ընդ Պերիկլես 'ի Մեգա-րա. ոչ հերքեալ ընկեցան: Յորոց ամենայն հաստատեաս տեսանիցէ ոք, զի որ առաւել զգուշանայ իւրում հայրենի աշխարհին և յաճախ ընդդիմացանէ սոցա, նա ինքն, Եա-քինէս, նա ձեզ մատնչացդ և վարձկանաց նոթձէ որով կա-շառակուրծ լինիցիք. և առ նոցուն բարմութենէ և հակա-ռակորդաց խորհրդոցդ ձերոց՝ 'ի միջի էք դուք այսօր ողջ և վարձաւորք. ապա թէ ոչ, դուք ձեզէն ձերովանն՝ վա-զու ևս էիք կորուսեալ:

Թէպէտ և այլ ինչ բազում ասել ինձ զայն ժամու եղե-լոցն ասել, զայս ևս քան զբաւականն աւելի համարիմ ա-սացեալ: Բայց պատճառս ինքնդ է. զի զչարութեան իւրոյ և զանիրաւութենացն շնչով ժայթքեաց յիս զերիկեան անդրոյթս, յորոց հարկ էր 'ի բաց լուանալ ինձ առաջի կրօնաբարոյութեանց քան զիրացն ժամանակ: Ո՛ դիտէ՝ թա-խանձ եղեալ մշձկեցայք և դուք, որ միոյ չէ իմ ասացեալ ինչ՝ տեղեակ էիք վարձկանութեան դորա 'ի ժամանակին: Իսկ նա բարեկամութիւն և հիւրութիւն զայն անուանէ. և արդ իսկ ասաց ուրեք, բայց Զ Ալիքսանդրի հիւրութիւնն՝ նախատինս դնէ ինձ: Ե՞ս քեզ զհիւրութիւնն Ալիքսան-դրի. ո՞ւստ ուստեք ընկալեալ քո զայն, կամ զնմանդ ե-կեալ արժանի: Քա՛ յինէն՝ Փիլիպպեայ հիւր կամ Ա-լիքսանդրի բարեկամ զքեզ ասել. ոչ մոլիմ այդպէս. բայց եթէ զմշակս, կամ որ այլ ինչ իրիք՝ վարձուք 'ի սպասու-կայցեն, բարեկամս և հիւրս որոց 'ի վարձու ունիցին արժան իցէ կոչել զնոսա: Այլ չէ և չէ այդ այդպէս: Զիարդ: Նա և քաջ 'ի բաց իսկ հեռի: Նա աւանիկ ես զքեզ նախ Փիլիպպոսի և այժմ Ալիքսանդրի վարձկան կոչեմ, այլ և ողբա ամենեքին ընդ իս. եթէ ոչ հաստատաս, հարց զդաստ. նա մանաւանդ ես փոխանակ քո հարցից զայդ: Արդեաք

Digitized by Google

ձեզ, ո՛ ալբ աթենացիք, Ալէքսանդրի հիւր թուի լինել Եպքինէս, թէ վարձաւոր [25] ։ ։ ։ Լաւ զինչ ասեն ։

Կամ է ինձ արդ և զգրոյ ամբաստանութեան գրաս առնել պատասխանի, և անցանել ընդ գործեցեալն յինէն. որպէս զի Եպքինէս, թէպէտ և ինքնին քաջահմուտ, հասմայն լուիցէ՝ յէր սակս և հրամանաւորելոցս այսոցիկ, և եւ մեծագունից քան զսոսա, համարիմ զանձն իմ արժանի հանդիսելոյ պարգևաց ։

Աղէ կարդա ինձ զգիրն զայն ամբաստանաց ։

ԳԻՐ ԱՄԲԱՍՏԱՆՈՒԹԵԱՆՆ

« Ա՛ռ իշխանաւն Քերոնտեաւ, որ օր վեց էր Եւլափեբոլիոնի, Եպքինէս ատրամետեան կոթովկեցի մատոյց առ իշխանն գիր ամբաստանութեան անիրաւութեանց՝ զԿոտիփոնէ Լէսոթենեան անապիլատացւոյ. զի գրեաց հրաման անիրաւ, թէ պարտ և արժան է պակիլ զԴիմոսթենէս գիմոսթենեան պէանեցի ոսկի պսակաւ, և հռչակել՝ ի տեսարանին՝ 'ի մեծ Սպանդարամետական, 'ի նոր ողբերգութիւնն, թէ ժողովուրդն պակէ զԴիմոսթենէս գիմոսթենեան զպէանեցի պսակաւ ոսկեաւ վասն առաքինութեանն և խնամոտ մատցն ունելոյ հանապազ առ ամենայն հելլէնացիս և առ ժողովուրդն աթենացւոց, և վասն բարեբաւութեանն, և վասն զի գործէ և խօսի միշտ զօգտակարագոյնս ժողովրդեանն, և յօժարափոյթ է առնել զոր կարօղ լինիցի զբարին։ Զայս ամենայն՝ սուտ և անիրաւ գրեալ, ուր օրէնքն ոչ ներեն՝ նախ գիրս ստութեան 'ի գիւանս աշխարհին արկանել, և ապա՝ զպարտականն համարոյ պսակել, — և է Դիմոսթենէս պարապաշէն և ոստիկան տեսարանաց [26]. — և դարձեալ չհրատարակել զպսակն 'ի տեսարանի 'ի Սպանդարամետականն 'ի նոր ողբերգութեան. այլ եթէ ատեանն պսակիցէ, 'ի խորհրդարանին քարոզել. իսկ եթէ քաղաքն, 'ի Պնիքսի՝ 'ի ժողովի ժողովրդեան ։

Digitized by Google

Տուգանք՝ յիսուն տալանդ։ Վկայք [27] դատախազութեան՝ Կեփիսոփոն Կեփիսոփոնեան հռաձնուացի, Կլէոնէն Կլէոնեան կոթովկեցի։»

Եւ արդ, ով արք աթենացիք, զոր ինչ ամբաստան լինի զհրամանէն, այդոքիկ են։ Եւ ես 'ի դոցունց իսկ յայդցանէ ակն ունիմ աստստին յայտ առնել ձեզ, թէ զամենայնէ արդար տաց զպատասխանիսս. քանզի զնոյն նման նմին զբաստանացն կալեալ կարդ, զամենայնէ մի ըստ միոջէ ասացից կարդաւ, առանց ինչ կամաւ պակաս առնելոյ։ Արդ՝ քանզի գրեալ է թէ գործեմ և խօսիմ հանապազ զօգտակարագոյնս ժողովրդեան, և յորդոր եմ 'ի բարին որում ձեռնհասն իցեմ, և գովեալ զիս 'ի նոսին, զայդոցիկ դատաստան 'ի գործս տեսչութեան իմոյ կարծեմ լինել։ Զի 'ի նոցին քննութենէ՝ կալ լիցի ձեզ 'ի վերայ, թէ Ճշմարիտ արդեաք և 'ի Ճահ գրեաց զինէն զայդոսիկ Կոռեսիփոն, եթէ սուտ։ Եւ զի չյաւել 'ի գրին՝ թէ յետ զհամարսն տալոյ պակեալ, և 'ի տեսարանին զպակն քարոզել հրամայեաց, և զայդ կարծեմ կցորդ լինել ընդ գործս տեսչութեան իմոյ, և թէ իցեմ ինչ արժանի պակի և քարոզելոյ 'ի միջի սոցա, և եթէ ոչ։ Թուի ինձ թէ և զօրէնսն ըստ որոց մարթեր զամ նամակագիր լինել՝ ցուցանելի է։

Այսպէս իմ, ով արք աթենացիք, եղեալ է 'ի մոի՝ իրաւամբք և պարզաբար զպատասխանիսս առնել։ Բայց եկիցց և 'ի գործեցեալսն իմ. և մի ոք համարիցի զիս՝ օգտել զՃառա ամբաստանութեանցն՝ յորժամ 'ի հելլենական երթեալ անկանիցեմ 'ի գործս և 'ի բանս։ Զի որ դատախազն է յաւուցեալ՝ լաւագունացն խօսող և գործօն լինելոյս ըստ հրովարտակին, և որպէս ոչ Ճշմարիտս զայդոսիկ չարախօսեաց, նա է որ զՃառա ամենայն քաղաքավարութեանց իմոց և ըզգործոց՝ կարևոր պիտոյս և հարկաւորս կացուցանէ 'ի փուրսիշ ամբաստանութեանն։ Թող զայդ, և քանզի բազում ընտրութիւնք են քաղաքավարութեան, ես զհելլենական

իրացն յանձին կալայ. վասն որոյ և զհաւատսիսս՝ 'ի նոցունց առնել արժան է ինձ և իրաւ։

Արդ՝ զոր յառաջագոյն քան զիմ վարչութիւն և զհրապարակախօսել կանխեաց կալաւ և գրաւեաց [28] Փիլիպպոս, 'ի քաց թողեալ, զի ոչ յիս ինչ մօտ լինել հանարիմ, իսկ յորոց արդելեալ կարձեցաւնն՝ յորէ յորմէ յայդոսիկ 'ի մէջ եկեալ երևեցայ ես, զայն ամենայն յիշատակեցից և զնոցին հանարս կալայց. զայս ևեթ յաւելեալ առ տեղեաւս։

Փիլիպպոսի, ոմ զոր աթենացիք, մեծ ինն առաւելութիւն գտաւ, զի առ Հելլէնս, ոչ առ ոմանս ևեթ, այլ առ ամենեսին առ հաստատակ, տոհմականօք բուսան բղխեցին մանկիչք և կաշառակուրծք և աստուածոց ատելի որեար, այնչափ՝ որչափ ոչ ումիք յուշ գայ երևեալ երբեք յառաջագոյն։ Զորս մարտակից և օգնական առեալ Փիլիպպեայ, զկանխաւ խեթացեալսն ընդ միմեանս զՀելլէնացիս և զմեռեալս՝ չար ևս պատակտեաց, էր զոր խաբելով, էր զոր կարասեաւ խթելով, և էր զոր ամենայն օրինակաւ զեղծուցեալ. և ձեղքեալ պատատեաց 'ի ծուէնս ծուէնս, ուր ամենեցուն մի էր օգուտ, խափանել զբարգաւաճանս նորին։ Եւ զի յայսմ պայմանի էին Հելլէնք առ հաստատակ, և յանդիսութեան՝ առ ոտս բուսեալ չարին, պարտ է ձեզ, ոմ զոր աթենացիք, միտ եդեալ նայել՝ զինչ ընտրել 'ի դէպ էր քաղաքիս 'ի գործել և առնել. և զայնր համարս պահանջել յինէն. զի որ յայնմ վայրի վարչութիւն զանձն մատոյց, ես ինքնին իսկ եմ։ Արժանն ինչ էր արդեօք քաղաքիս, Եսքինէս, թողեալ զնմանութիւն և զպատիւ իւր, 'ի թեաւլացւոց և 'ի Դոլոպացն դասու գործակից Փիլիպպոսի մատնել՝ զի 'ի ձեռս բերցէ նա զիշխանապետութիւն Հելլենացոց, և զնախնեացն պարծանս և զերաւունս աղարտել. կամ թէ զայդ չառնել, քանզի արդարև գժնդակ իսկ է, այլ զոր ինչ տեսանէրն մօտ առ գուրս հասեալ 'ի չնապատնել ուրուք, և զոր 'ի հեռուստ իսկ՝ որպէս թուի՝ նշմարէր, զայն ամենայն 'ի գալ հասանելն ընդ վայր հարկանել։

Digitized by Google

Ա՛յլ որ զգործեցեալսն սաստկակոծ առնէ սանդարամա-
կանաք, եւ այժմ մեռադիւրութեամբ պահանջելոցդ 'ի նմա-
նէ։ Ցորմէ կողմանէ կամէր լինել զքաղաքս. արդեաք ընդ
սատաճրս աղետիցն և ձաղանաց հասելոց հելլենացւոց, զոր
'ի Թեսալացիսն և յընկերշակողս նոցին պատշաճեցուսցէ-
ք. կամ ընդ արհամարհողս լինելոցն՝ 'ի յոյս զօշաքաղու-
թեան իւրեանց, յորս գասեսցուք զարիկագացիս, զմեսե-
նացիս և զարգիացիս։ Բայց և յոլովք 'ի սոցանէ, նա՛ և
բնաւք իսկ, չար եւս քան զմեզ կոր 'ի գլուխս ելին վասթա-
րեալք։ Զի եթէ ընդ տիրելն և անցեալ գնայր վաղվաղակի
Փիլիպպոս, և խաղաղ մնայր այնուհետեւ, և ոչ իւիք զոք 'ի
դաշնակցացն և ոչ յայլոց հելլենացւոցն խուէր, համայն և
այնպէս գայր ինչ բասիր և գաղով որոց ոչն կացին հակառակ
գնացից նորա։ Իսկ եթէ զամենեցուն սպառասպուս զպա-
տիւ, զպետութիւն և զազատութիւն բառնայր ընդէր, մա-
նաւանդ թէ և զքաղաքավարութիւն եւս զորոց և կարէր,
զիա՞րդ ապա ձեր ըստ իմում խրատուս եկեալ՝ և չիցէ ա-
ռեալ խորհուրդ փառաւորագոյն քան զամենայն։

Բայց անդրէն դարձ առնեմ։ Զի՞նչ անկ էր, Եպքինեա,
առնել քաղաքիս, 'ի տեսանելն զՓիլիպպոս՝ զի հորգէր
յարգարէր անձին զիշխանութիւն և զբռնակալութիւն հել-
լենացւոց. և կամ զի՞նչ պարտ էր ինձ խօսել կամ գրել՝
խորհրդականիս ՅԱԹԷՆՍ, — զի և յայդմ խոսիր մեծ կայ,
— որ ընդ ամենայն ժամանակսն՝ մինչև յօրն յորում ամ-
բարձայ ես յատեան՝ տեսանէի զաշխարհն իմ ցանգ 'ի վե-
րայ գլխաւորութեան և պատուոյ և փառաց նահատակեալ,
և վասն այնր պարծանաց և օգտի ամենայն հելլենացւոց՝
առաւել ծախեալ ինչս և անձինս քան զծախս այլոց իւրա-
քանչիւր հելլէն ժողովրդոց վասն իւրեանց։ Եւ զինքնին
Փիլիպպոս՝ ընդ որում էր ձեզ կռիւ, տեսանէի՝ զի վասն
իշխանութեան և հարստութեան մի ակնն խոց կայր [29],
անրակ խորատակեալ, խեղ և հաշմ ձեռն և ազդր, և զոր
յանգամոց մարմնոյն կամիցի առնուլ բախան, 'ի պատրաս-

Digitized by Google

սի ունէր ընկենուլ զամենայն հեշտաբար, եթէ միայն ձեռ-
ցելումն՝ 'ի պատիս և 'ի փառս կեցէ։ Սակայն իշխէր ասել
և ոչ ոք, թէ անելոյն 'ի Գէլլա գիւղ անհնարն յայնժամ և
փոքրիկ՝ այսչափ ինչ մեծանձնութիւն անկ իցէ 'ի հոգւոջն,
մինչև հելլենացւոցն իշխանութեան ակն դնել, և զայն 'ի
միտ արկանել, և թէ ձեզ աթենացւոցդ՝ զոր ամենայն յա-
մենայն ատենախօսութիւնս և 'ի տեսարանս՝ նախնեացդ
առաքինութեան յիշատակաց ակնատես և ականջալուր
եղելոցդ՝ այսքան վատթարութիւն լինիցի, մինչ զի կամա-
կար մոռք ինքնաձեռն մատուցանել Փիլիպպեայ զհելլե-
նացւոցն ապիկամութիւն։ Զայդ և ոչ ոք ունէր ասել։

Ամայր ուրեմն և հարկ իսկ էր, զամենայն զոր նայն ընդ
ձեզ անիրաւեալ գործէր՝ ձեզ այնմ իրաւամբք ընդդէմ
կալ։ Զայն և գործէիք դուք իսկզբանէ վայելուչ և ըստ
արժանի. ես գիր հանեի և խորհուրդ տայի՝ որչափ ժամա-
նակս 'ի քաղաքավարութեանն կայի. զայդ և լինիմ իսկ
խոստովան։ Իսկ զինչ արժան էր ինձ առնել. ահա հար-
ցանեմ զքեզ, Թաղեալ զայն ամենայն, զԱմֆիպոլիս, զԻդ-
նա, զՈսիդէա, զՀալոնեսոս. և ոչ զմի յայդցանէ ոչ յի-
շեմ. զԵրրիոն, զԻորիսկոս և զԵպարեթեայ աւերածն,
և զոր այլ ևս այսպիսի զրկանս զրկեցաւ քաղաքս, և գիտեմ
իսկ ոչ թէ եղեն բնաւ։ Եւ սակայն՝ դու ասացեր, թէ զայ-
դոցիկ Հնաս 'ի մէջ առեալ իմ՝ ասելն զատաս արարի. ուր
այդոցիկ հրամանքն՝ Եւբուլեայ և Արիստոփոնի, և Դիո-
պիթեայ [30] էին, և ոչ իմ, ով որ դիւրահեշտի խօսիպ զա-
մենայն զինչ և կամիս։ Արդ՝ ոչ ևս ինչ ասացիս զայդցանէ։
Այլ որ զԵւբիա [31] յիւր վատրեալ՝ պատուար պատրաս-
տեաց ընդդէմ Աստիկէաստանի, որ ձեռն արձակեաց 'ի
Մեգարա [32], որ զՈրէոն ամ., որ զՊորթմոս բրեաց, որ
կացոյցն յՈրէոս զՓիլիատիդէս բռնաւոր և յԵրետրիա զՍիլ-
տարբոս, որ զՀելլեսպոնտոս հնուանձեաց, որ պաշարեաց
զԲիւզանդիոն, և զհելլենական քաղաքանին՝ էր որ սաստ-
կաջինջ արար, էր յոր վատրանդիս տարեալ գաղութ բնա-

կեցոյց. որ զայս ամենայն արար և կատարեաց՝ բուռն ինչ եղեալ արդեաք, և զբկեաց զլացաւ և դրժեաց դաշանցն և եղծ զհաշտութիւնն, թէ ոչ. և արժան էր արդեաք երևել ումեք 'ի հելլենացւոց՝ կանգնել կալնմա կրճիմ 'ի գնացից անտի, թէ ոչ։ Եթէ այդմ չէր արժան, այլ Եղագայ երևել կալ Միւսացւոցն անուանեալ առ և առար [33], մինչ գեռ տակաւին ողջ են և 'ի միջի աթենացիք, ապա ընդ վայր վաստակ եղէ ես խօսել զայդցանէ, ընդունայն ճգնեցաւ և քաղաքս՝ ինձ անսացեալ. և այն ամենայն որ գործեցաւն՝ լիցին ինքառք, և իմ ինքաք։ Իսկ եթէ պարտ էր յառնել ումեք ընդդէմ այդոցիկ ախոյեան ընդդիմահար, ոմ այլ արժան էր լինել՝ բայց միայն ժողովրդեանն աթենացւոց։ Արդ զայդ ոնօրինեցի ես յայնժամ. և դէտ ակն 'ի վերայ եդեալ՝ զի զամենայն մարդիկ նա 'ի ծառայութիւն արկանէր, ընդդէմ կացի, և անգագար եղէ 'ի փոյթ խօսելոյ և խրատելոյ՝ մի թողուլ քանել զայդոսիկ Փիլիպպոսի։

Սակայն զնաղաղութիւնն նա էլոյծ՝ յաւարի առեալ զնաւան, և ոչ թէ քաղաքս մեր, Եպքինէս։ Բեր ապէ զնոյն ինքն զհրամանան և զնամակն Փիլիպպեայ, և կարդա կարդաւ. զի 'ի դոցին քննութենէ 'ի վեր ելցէ՝ ո իմ խմիք իցէ ինասապարտ։ Կարդա։

ՀՐԱՄԱՆ

Առ Նէոկլէս Իշխանաւ՝ յամենեանն Բոսէդրոմիոնի՝ ժողով ժողովրդեան կոչեցեալ 'ի զօրագլխաց, Եւքուլոս մնեսթեան կիպրացի ասաց. Քանզի ցուցին զօրագլուխք 'ի ժողովի ժողովրդեան, թէ զլ էոդամաս նաւապետ և զորս ընդ իւր առաքեալ նաւք քսան՝ յուղարկուորք ցորենոյ 'ի Հելլեսպոնտոս, զօրապետն Փիլիպպեայ Ամինդաս վարեալ է 'ի Մակեդոնիա և 'ի գիպահոլ եդեալ, փոյթ տարցին նահապետք և զօրագլուխք՝ զի առեան գումարեսցի, և ընտրեսցին հրեշտակք առ Փիլիպպոս, որ երթեալ խօսեսցին

ընդ նմա՝ Թողուլ զնաւապետն և զնաւն և զզօրականն. և եթէ յանգէաս ինչ արարեալ իցէ զայն Ամինդաս, ոչինչ դնիցէ նմա մեղ ժողովուրդս. իսկ եթէ յանցաւոր ինչ ըստ օրէնս պատուիրանին զնա ըմբռնեալ, զի այց և խնդիր առարեալ աթենացւոց, արժանի ըստ անհոգութեանն ածցեն 'ի վերայ պատուհաս. իսկ եթէ և ոչ մի ինչ յայսցանէ գտանիցի, այլ խրովն անիրաւեալ առաքօղն կամ առաքեալն, յայտ առնել և զայս, զի խելամուտ եղեալ ժողովրդեանն՝ խորհեսցի զինչ պարան իցէ առնել։»

Արդ զհրամանդ զայդ գրեաց Եւբուլոս, և ոչ ես. և զոր ըստ զմանէն՝ Արիստոփան, ապա Հեգեսիպպոս, ապա դարձեալ Արիստոփոն, ապա Փիլոկրատէս, ապա Կեփիսոփոն, ապա այլք ամենեքին, իսկ ես՝ և ոչ մի ինչ յաղագս այսոցիկ։

Ա՛ռ կարդա զհրամանն։

ՀՐԱՄԱՆ

«Ա՛ռ իշխանաւն Նէոկլէսիւ, որ օր վերջին էր Բոէդրոմիոնն ամսոյ, խորհրդով ատենին նահապետք և զօրագլուխք 'ի մէջ մատուցեալ զքանս ժողովոյ ժողովրդեան՝ յայտ արարին, թէ հաճոյ թուեցաւ ժողովրդեանն ընտրել հրեշտակս առ Փիլիպպոս՝ պահանջելոյ զնաւն, ապալ պատուէրս և զհրամանս ժողովոյն։ Եւ ընտրեցին զառաս. զԿեփիսոփոն կլէոնեան անափիլիատացի, զԴեմոկրիտոս դեմոփոնեան ապագիրատեցի, զՊոլիկրիտոս ապեմանտեան կոթովկեցի։ Ի նահապետութեան հիպպոթոնտեան ցեղին՝ Արիստոփոն կոլիտեցի գահերէց՝ ասաց։»

Արդ զոր օրինակ ցուցանեմ ես զհրամանագ զայդոսիկ, ցոյց նոյնպէս և դու, Եպքինէս, զոր հրաման գրեալ իմ՝ պատճառ իցեմ պատերազմին։ Այլ ոչ ունիցես. զի թէ ունէիր, ոչ ինչ յառաջ քան զայն այժմ ածէիր 'ի մէջ։ Նա և

Digitized by Google

ոչ Փիլիպպոս՝ որ զայլս ինքնակար առնէ, ամբաստան ինչ լինի զինէն յաղագս պատերազմին։

Բայց աղէ ընթերցիր և զԹուղթն ևս զՓիլիպպոսի։

ԹՈՒՂԹ ՓԻԼԻՊՊՈՍԻ

«Թագաւոր մակեդոնացւոց Փիլիպպոս, աթենացւոց առնին և ժողովրդեան խնդալ։

«Եկեալ 'ի ձէնջ հրեշտակք առ իս, Կեփիսոփոն և Դեմոկրիտոս և Պոլիկրիտոս, խօսեցան վասն արձակելոյ նաւացդ՝ որոց նաւապետ էր Լէոդամաս։ Ամենևին իսկ 'ի միամտութեան մեծի թուիք ինձ լինել, եթէ զանխլանալ յինէն համարիք, զի այն նաւք առաքեցան 'ի վերին երեսս պատճառանաք իբրև թէ յուղարկ երթալ ցորենոյ 'ի Հելլեսպոնտոսէ 'ի Լեմնոս [34], բայց 'ի ներքոյ՝ օգնել սիլիմբրիացւոց [35] պաշարելոցն յինէն, որ չգտանին ընդ մեզ յուխտի գաշանց բարեկամութեան մերոյ։ Եւ այդ հրաման տուաւ նաւապետք՝ առանց ժողովրդեանդ աթենացւոց՝ յինքնանց այսի ոմանց, և յայլոց՝ որ այժմ արտաքոյ պաշտօնեան են, բայց ամենայն հնարիւք ջղին զի ժողովուրդդ, փոխանակ այժմու բարեկամութեանն ընդ իս, ձեռն արկցէ դարձեալ 'ի պատերազմ, առաւել յոյժ նախանձ բերեալ այդմ դամանդիտ լինելոյ քան զօրավիգն սիլիմբրիացւոց։ և զայդ 'ի շահուց կոմանեալ գնեն։ Սակայն ոչ ձեզ և ոչ ինձ օգտակար թուի այդ։ Վասն որոյ և այժմիկ ահա արձակեմ ձեզ զդերեալ նաւադ, և ապա այսուհետև, եթէ հաճեսջիք չհամարձակել առաջնորդոց ձերոց 'ի խորամանգ տեսչութիւն, այլ պատուհաս 'ի վերայ կապիցէք, ջանացայց և ես զդուշանալ խաղաղութեան։ Ողջ լերուք։»

Ոչ ուրեք 'ի սմա գրեաց զԴիմոսթենէս, և ոչ իրս ինչ ինքնատուն զինէն։ Արդ՝ զի՞ է զի զայլոց տրտունջ եղեալ, զի-

մոց գործոցս չառնէ ինչ յիշատակ։ Վասն զի եթէ գրեր ինչ զինէն, զանխրատութիւնս իւր յիշատակելոց էր, զի ես զնոքաւ գայի, և նոցին կայի պատերազմող։ Եւ նախ զհրեշտակութեանն 'ի Գելոպոնէս [36] գրեցի զհրամանն, մինչ այն ինչ նա դեռ սողոսկէր սպրդէր 'ի Գելոպոնէս. և ապա զԵւրիպան, յորժամ ձեռն յԵւրիպա մխէր. և ապա զարշաւանն, ոչ ևս հրեշտակութիւն, յՈրէոս [37] և յԵրեթրիա, իբրև նա բռնաւորս 'ի քաղաքն յայնոսիկ կարգեալ հաստատեաց։ Յետ այնորիկ զնաւամարտիկ նաւացս գումարտակ առաքեցի, որով Քերրոնեսոս փրկեցաւ և Բիւզանդիոն, և ամենայն իսկ նիզակակիցք առ հասարակ։ Յորոց և ժամանեցին ձեզ բարիքն մեծամեծք, գրուատիք, փառք, պատիւք, պատկք, գոհութիւնք յերախտագիտութենէ ամենի. և հարատահարելոցն՝ որոց ձեզն անսացին յայնժամ՝ եհաս փրկութիւն, իսկ անփոյթ եղելոցն՝ զբազում անգամ առ 'ի ձէնջ գուշակեալն եղև յիշատակել, և առ այնպիսս ունել զձեզ՝ որ ոչ անձանց ևեթ խնամ ունիցին, այլ և արք իցեն խորհրդեալք և հմայօղք. զի ամենայն ինչ եկն ել՝ զոր միանգամ կանխեցէք ասացէք առ նոսա։ Եւ զի գանձ սաստիկ մատուցանէր Փիլիպէիդն՝ առ 'ի պահել իւր զՈրէոս, սաստիկ և Կլիտարքոս՝ առ 'ի պահել զԵրեթրիա, սաստիկ և ինքն իսկ Փիլիպպոս՝ զի ինքն զայդոսիկ գրաւեսցէ ընդդէմ ձեր, և մի ինչ վասն այլոց իրացն կրեսցէ փաշամանն, և մի ոք ուրեք բնաւ խոյզ ինչ և ինդիր ապիրատութեան գործոցն արասցէ, զայդ ամենայն չանգիտանայ և ոչ ոք, և քան զամենեսին գու։ Քանզի հրեշտակքն եկեալք յայնժամ այսր 'ի Կլիտարքոսէ և 'ի Փիլիպեայ՝ առ քեզ ասան, Եպքինէս, և դու էիր նոցին ասանձական, ղորս քաշաքաս՝ իբրև թշնամիս և ոչ իրաւանց ինչ և ոչ օգտի բանբերս՝ հալածեաց. բայց քո սիրելիք էին։ Այս և ոչ մի ինչ յայդցանէ ոչ գործեցաւ, ով հայհոյիչդ իմ, որ ասես՝ թէ 'ի կաշառիլդ կարկեալ կաս, և 'ի վատնելդ կակաչես։ Իսկ դու համբուն և ոչ երբեք. այլ և 'ի յոլփանալդ կակա-

Digitized by Google

չէս, և համրաստիս բնաւ ոչ, եթէ ոչ սուրբ պատուիրանիցս զքեզ՝ անարդեալ արհամարհեալ այսօր։

Իսկ թէրև պատկեցէքն դուք զիս յայնժամ վասն այնր տմենայնի, և զհրամանն գրեաց Արիստոնիկոս՝ նովին որով այժմ ոյս Կոտեսիփոն բանիւք, և պատկն 'ի տեսարանին քարոզեցաւ, և էր այն ինձ հուշակ երկրորդ, Եպքինէս որ ոնդն էր՝ ոչ դիմախօսեաց և ոչ զհրամանահանէն ինչ եղև տմբաստան։

Ա՛ռ կարդա ինձ և զայս հրամանն։ Կարդա։

ՀՐԱՄԱՆ

« Ա՛ռ իշխանութեամբն Քերոնիդիոյ հեգեմոնեան, որ օր քսան և հինգ էր Գամելիոնի, 'ի նահապետութեան լէոնտեան ցեղին, Արիստոնիկոս փրէսբեցի ասաց. Քանզի Դիմոսթենէս գիմոսթենեան պէտանեցի՝ զքաղաքս և զկա-բուր պէտս ժողովրդեանն աթենացւոց պաշտեաց, և յո-գունց 'ի գաշնակցացս յատաչագոյն և առ ժամայս նպաստ եղև հրամանաքն, և զոմանս 'ի քաղաքացն Եւբիոյ ազատ յազատութիւն, և անդադար ինամ տանի ժողովրդեան ա-թենացւոց և այլոց հելլենաց, հաճոյ թուեցաւ ժողովոյ խորհրդեան և ամբոխին՝ 'ի գովութիւն առնուլ զԴիմոս-թենէս գիմոսթենեան զպէտանեցին, և պատկել պատկ ոսկե-ղէն, և զպատկն հուշակել 'ի տեսարանին, 'ի Սպանդարա-մետականն, 'ի նոր ողբերգութիւնս. և քարոզութեան պատկին փոյթ յանձին կացի նահապետական ցեղն և հան-գիստագիրն։ Ասաց Արիստոնիկոս փրէսբեցի։ »

Արդ՝ իցէ՞ զք 'ի ձէնջ, որ գիտիցէ 'ի հրամանէ տասի յայսմանէ յամօթ ինչ մատնեալ զքաղաքս կամ յայսն կա-տականաց կամ 'ի ծաղր, զորոց այժմ դա դալ հասանել ասէ՝ եթէ ես պատկիցիմ։ Եւ սակայն՝ յորժամ նոր և ծա-նօթ ամենեցուն են իրքն, և եթէ քաջիկ վճարեալ, շնորհա

Digitized by Google

գասանէ. իսկ եթէ այլ իմն ազգ, պատուհաս։ Ապա Թուիմ ես՝ շնորհի յայնժամ եղեալ արժանի, և ոչ պարտաւի կամ պատժոյ։

Ապա ուրեմն՝ մինչև՛ի ժամանակն յորս այգդրիկ վճռեցան՝ վկայեցայ Թէ զաւագոյնն գործեալ եմ հանապազ քաղաքիս, յայլթելով՛ի խորհրդեան ձերում՝ ի բան և՛ ի գիր, և զգրեալսն՝ ի գլուխ տանելով, որովք և պակաք եկին քաղաքիս և ինձ և ձեզ բոլորեցունց, և գուք զոհս դից և ուղերձս մատուցէք՝ իբրև՛ ի վերայ բարեաց եղելոց։

Արդ իբրև յԵւբիոյ հալածեցաւ Փիլիպպոս, զինուք առ՛ի ձէնչ, իսկ վարչութեամբ և հրամանաք, Թէ և հեռաձգին ոմանք՝ ի գոցանէ, առ՛ի յինէն, այլ իմն մարակոց խընդրեաց ընդդէմ քաղաքիս։ Տեսեալ՝ զի քան զբնաւ մարդիկ առաւել ունիմք պէտս արտաքուստ ցորենոյ, և կամեցեալ տեր լինել մտից ցորենոյն, անցեալ՛ի Թրակիս՝ աղաչեաց նախ զառաջինն զնիզակակիցսն իւր զբիւզանդացիս՝ մեղ ընդ իւր ընդդէմ ձեր զպատերազմն։ Իբրև չառնուին նոքա յանձն, և ոչ՛ի նիզակակցութեանն տակի զայն լինել ասէին, և արդար ասէին, յայնժամ պահ պատնէշ պաշարուն առուեալ զքաղաքաւն, և մանգլիոնս կանգնեալ, արկ զնոսա յարգել և՛ ի նեղ։ Ի լինել այգոցիկ՝ որ ինչ արժան էր մեզ առնել՝ ոչ ևս հարցանեմ, զի յայտնի է ամենեցուն։ Իսկ ոմ օգնականն էր բիւզանդացւոց և ապրեցուցիչ, ոմ որ չեռ Հելլէնապոնտի օտարանալ և՛ի կողմ եղանել զայնու ժամանակաւ։ Դուք, ով արք աթենացիք։ Եւ յորժամ գուքն ասիցեմ, զքաղաքս ասեմ։ Իսկ ով էր՛ի քաղաքիս բերան և գրիչ և գործօն, և զանձն համակ անխնայ յիրսն տուեալ։ Ես։

Եւ Թէ այն ամենայն քանի օգուտ եղեն բոլորեցունց, չպիտի՛ ի բանից ուսուցանել ձեզ, այլ արդեամբք առէք զհանգէսն։ Զի որ յայնժամ պատերազմն էր, Թող զոր եբերն զգեղեցիկ փաւան, նա և յամենայն իսկ կենցաղս գուստ՝ առատազեղս և գիւրագիւտս զձեզ յարդարեաց քան զարդեան խաղաղութիւնս, զոր դոքա առ եկիրանէ

Digitized by Google

աշխարհիս պինդ պահեն ազնիւքդ՝ յուսով առաջնակայիցն ակնկալութեանց. յորոց եղեալ թէ վերիպեցին, և մի զոր բարեսէրքդ դուք խնդրեք 'ի դից՝ վայելեցեն 'ի նոսին, և մի յորոց նոքայն ախորժեցին՝ կարկառեսցեն առ ձեզ։

Բայց կարգա առ դոսա և զբիւզանդացւոց պասկն և զպերինթացւոցն, որովք պասկեցին վասն այսոցիկ ըզքաղաքս։

ՀՐԱՄԱՆ ԲԻԻԶԱՆԴԱՑԻՈՑ

« Ա. Նուիրապետաւն[38] Բոսպորիկեաւ՝ Դամասգիտոս ասաց 'ի Ժողովի, յատենէ խորհրդարանին առեալ օձման. Քանզի Ժողովուրդն աթենացւոց՝ և յանցեալ ժամանակին անդուլ ջանացեալ ինամ տարեալ է միշտ բիւզանդացւոցս և դաշնակցացս և տոհմայնոց պերինթացւոց, և արդէն իսկ բազում և մեծամեծս հարեալ սպասս 'ի պէտս այժմու ժամանակիս, մինչդեռ Փիլիպպոս Մակեդոն զօրաժողով լեալ 'ի վերայ աշխարհիս և քաղաքիս 'ի խախտումն բիւզանդացւոց և պերինթացւոց՝ հրձիգ առնէ զշէնս և հարկանէ զծառաստունս, հասեալ նոցա մեզ 'ի Թիկուանս հարիւր քսան նաւուք և պարեանիւ և զենուք և սպառազինք[39], Թափեցին զմեզ յահագին վտանգաց, և կանգնեցին զհայրենի պետութիւնս և զօրէնսս և զշիրիմս, հաճոյ Թուեցաւ Ժողովրդական բիւզանդացւոց և պերինթացւոց՝ տալ աթենացւոց ընդ մեզ ինամութիւն ազգասիրութեան, քաղաքակցութիւն, կալուածս դեռնոյ և տանց, բարձրիցութիւն 'ի հանդէս մրցարանաց, մուտ յատեանն և 'ի Ժողովուրդն անընդմիջ զկնի պատարագացն. և որոց կամ՝ իցէ բնակել 'ի քաղաքիս՝ ապահարկ լինել նոցա յամենայն հարկաց։ Կանգնել և պատկերս երիս վեշտասանկանգնեանս 'ի Բոսպոր, զԺողովուրդն աթենացւոց պատկեալ 'ի բիւզանդացւոց Ժողովրդենէն և 'ի պերինթացւոց։ Նաքել և նուիրակութիւնս[40] յաշխարհաժողովուրդս

Եղիազայ, յիսմԹիմեանն, 'ի նեմեանն, յոլիմպեանն և 'ի պիւԹեանն, և քարոզ կարդալ զպսակն, ԹԷ ժողովուրդն աԹենացուց պսակի առ 'ի մէնջ. զի ծանիցեն Հելլէնք ամենայն զԹենացուցն զառաքինութիւն, և զբիւզանդացուց և զպերսիԹացուց շնորհակալութիւնն։»

ԸնԹերցիր և զպսակն որ 'ի քերրոնեսացուց անտի։

ՀՐԱՄԱՆ ԳԵՐՐՈՆԵՍԱՑԻՈՑ

«Ի քերրոնեսացուց բնակեալքն 'ի Սեստոս, Յեղէոս, 'ի Մասիսոս, յԱՀովպեկոնէս [41], պսակեն զատեան խորհրդոյ և զժողովուրդն աԹենացուց 'ի պսակ ոսկի վաԹսուն տասանդաց. և կանգնեն բազին Շնորհի և ժողովրդեան աԹենացուց, զի մեծին 'ի բարիս պատճառք եղեն քերրոնեսացուց՝ ԹափԹելով 'ի Փիլիպպեայ և անդրէն շնորհելով զՀայրենի բնապատաս, զօրէնս, զազատութիւն, զմեհեանս։ Եւ յայսմ հետէ և առ յապա յամենայն յապատեան մի պակասեցին գոհանալ և բարի առնել՝ որ զինչ և ձեռն իւրեանց դատեցէք։ Զայս 'ի հասարակաց տաճարին խորհրդոյ եռուն հրամանն։»

Ապա ուրեմն՝ ոչ միայն զՔերրոնեսոս և զԲիւզանդիոն փրկել, զՀելլեսպոնտոս ապրեցուցանել 'ի ընոյ ծառայութեան Փիլիպպոսի, և 'ի պատճառս այսոցիկ՝ մեծարանք քաղաքիս՝ եղեն հանդէպք իմոյ մտադիրութեանս և վարչութեան, այլ և ամենայն մարդկան յայտ յանդիման ցուցանել զբարեբաղձութիւն քաղաքիս և զՓիլիպպեայ չարութիւնն։ Զի որ բարեկամ և նիզակակիցն էր բիւզանդացոց, ամենեքին տեսին զի պաշարումն ած զնոքաք, քան զոր զինչ այլ անպատեհ և անօրէն։ Իսկ ձեր, որոց գոյր բաղումինչ արդարութեամբ և յիրաւի [42] տրտնջել զնոցանէ, զոր անպգամեցանն առ ձեզ յանցեալ ժամանակն, ոչ միայն

Digitized by Google

անոխակալ եղեալ և ոչ էքեալ զզրկեալն, այլ և կեցուցիչք երևեցարուք, որով փառս և մտերմութիւն և պարծանս ժառանգեցէք յամենեցունց։ Եւ զի զբազումս 'ի քաղաքավարացդ պակեալ է ձեր, գիտեն ամենեքեան. իսկ յոյր այլոց ուրուք ձեռն պակեալ իցէ քաղաքս, խորհրդականի ասեմ և առենախօսի, չունիցի ոք զայլ ոք ասել բայց միայն յինէն։

Եւ արդ, որպէս զի և զհայհոյութիւնն՝ զորս ընդդէմ եւբիացւոց և բիւզանդացւոց ստեղծ և խօսեցար, ուր ուրեք դժուարին ինչ ընդ ձեզ գործեալ էր 'ի նոցանէ՝ զայն յուշ արարեալ, առ 'ի ցուցանել ասեմ և զայնոսիկ զբարութիւն լեալ, ոչ միայն այնու՝ զի սուտ են, զի այսմ գիտուն լինեալ կարծեմ զձեզ, այլ և այնու՝ զի Թէպէտ և Ճշմարիտ յոյժ էին, օգուտ այն էր՝ որով ետս վարեցայ օրինակաւ՝ նովին և վարել, կամիմ անցանել ընդ մի կամ ընդ երկուս 'ի բարեացն գործեցեալոց քաղաքիս առ ձեզք, և զայն կարճառօտիւք։ Զի այր այր առանձինն և քաղաք միաբանութեամբ՝ պարտի միշտ կրթել ջանալ զառաջնկայսն ընտ եղելոց լաւագունացն գործել։

Արդ գուք, ո՛ արք աթենացիք, 'ի տիրապետել լակեդեմոնացւոց ընդ ծով և ընդ ցամաք, և 'ի գրաւել զշրջակայս Ասիակեայ քաղաքապետութեամբ և պահնակութ, զԵւբիա, զՑանագրա, զՔիոսոնիա ողջոյն, զՄեդարա, զԼդինա, զՍկիէոնս և զայլ կողմս, մինչ չև էր դեռ քաղաքիս ոչ նաւ և ոչ պարիսպ, ելէք խաղացէք գուք 'ի Հալիարտոս [43], և դարձեալ՝ յետ ոչ բազում ինչ աւուրց՝ 'ի Կորինթոս [44], Թէպէտ և բազում ինչ կայր յայնժամ աթենացւոց ոխակալ լինել ընդ կորնթացիս և Թեբացիս՝ յիրաց անսի որ 'ի դեկելեան [45] պատերազմին գործեցան, այլ չարարին զայդ, օն անդր ամենևին իսկ ոչ։ Եւ զերկոսին զայդ յայնժամ, Եպքինեա՛, ոչ առ երաքտաւորս ոմանս առնէին, և ոչ անվտանգ ինչ սեստանէին, սակայն ոչ յայն սակս անտես արարին զապաւինեալսն 'ի նոսա. այլ 'ի քաջախառութեան

Digitized by Google

և պարծանաց ապագա՝ փ�թայորդոր լինիցին ասել զանձինս 'ի վիշտս անհնարինս, խորհուրդ բարի և ուղիղ արկեալք 'ի միտ։ Զի ամենայն մարդկան կենաց կատարած է մահ, թէպէտ և 'ի անկան ուրեք ոք զանձն արգելեալ՝ այնմ սպասիցէ. իսկ արանց բարեգործաց պարտ է միշտ յամենայն բարիս ձեռն 'ի գործ առնել՝ պատսպարեալ 'ի յոյս ազնուական, և զոր աստուածն տայցէ՝ տանել առաքինաբար։

Զայս նախնիք ձեր առնէին, զայս՝ երիցագոյնդ 'ի ձէնչ, որք յորժամ թեքացիքն հարստացեալք 'ի լեփտրա բան 'ի գործ առնէին սատակել զլակեդեմոնացիսն՝ ոչ սիրելիս ձեզ և ոչ երախտաւորս, նա և բազմաց և մեծամեծ վնասանուոյ քաղաքիս վրիժապարտս, սակայն արդելէք [46] զնոսա, ոչ ինչ երկիւղած լեալ յուժոյ և 'ի փառաց թեքացուցն 'ի ժամանակին. և ոչ զմտաւ ինչ ածեալ՝ թէ զինչ ինչ ընդ ձեզ անցուցեալ էր արանցն որոց վասն դիմիք 'ի վտանգ։ Եւ գովին յայտ արարէք ամենայն հելլենացւոց, զի եթէ և մեղիցէ ինչ ոք ձեզ, նմա զբարկութիւն յայլ ինչ պահէք. իսկ եթէ փրկութեան կամ ազատութեան ինչ վտանգ հասանիցէ նոցա, չլինիք քինաթաքոյց, և առ ոչինչ գրէք։

Եւ ոչ ընդ գոսա միայն այսպէս վարեցայք, այլ դարձեալ 'ի վտարել թեքացւոց զԵւբիա՝ ոչ անփոյթ արարէք. և ոչ զոր 'ի Թեմիսոփնէ և 'ի Թեոդորէ զլկեցայքն վասն Ոլրովպայ՝ [47] ընդ միտ տարայք, այլ և նոցա ևս հասէք 'ի Թիկուռնս, մինչդեռ տակաւին այն առաջին նուազ էր կարգելոյ քաղաքիս կամաւոր նաւագործաց, յորոց մի և ես էի։ Այլ զայսցանէ չև ևս է ժամ։ Բարուք արարէք ապաքէն փրկել զկղզին. բայց լաւ ևս քան զայդ, զի իշխան կացեալ անձանց նոցա և քաղաքաց՝ դարձուցէք զդոսա արդարութեամբ 'ի մեղուցեալսն առ ձեզ, և ուր 'ի ձեզ էին ապաստան եղեալ՝ չհայեցայք անդ բնաւ 'ի տոյժս ձեր։

Բիւրք այլ ևս կան ինձ ասել, այլ զանց առնեմ, նուազկու�, հետևակամարտս, դումարտակս բանակաց, և 'ի

հնումն եղեալը և այժմուս առ. ձեռք, զոր արարեալ է քա-
ղաքիս զամենայն 'ի վերայ ազատութեան և փրկութեան
այլոց հելլենացւոց։

Ցայսպիսիս և յայսքանս տեսեալ իմ զքաղաքս յօժա-
րամիտ 'ի գուսպարել յօգուտս այլոց, իսկ ապա մինչդեռ
զիւրմէ իսկ էր խնդիր՝ զինչ պարտ էր ինձ տալ նմա հրա-
ման, կամ զինչ խորհուրդ 'ի գործ։ Ոխս պահել, յԱրա-
մազդ երդուեալ, ընդ այնոսիկ որ զփրկութիւն խնդրէին,
և բարեբար յուզել՝ առ 'ի կորուսանել զամենայն։ Եւ ո՞ չ
իրաւամբք ատատակէր զիս, եթէ և բանիս եթէ լրկով լրբէի
յամենի առնել մի ինչ 'ի բարեաց քաղաքիս։ Եւ զի դուք
ոչ 'ի գործ տանիք զբանն, իմ ՀՀմարտիս հասեալ է։ զի
թէ կամիք, զինչ կայր խոչ ընդ ոտն։ միթէ չէր ինչ մարթ,
միթէ ո՞չ դոյին դոքա խրատուք այդոքիկ։

Կամիմ այսուհետև դառնալ դալ յորս յետ այդոցիկ
քաղաքավարեցայ, և 'ի սոսին դարձեալ միւսանգամ միտ
դիք՝ զինչ այն ինչ էր որ օգտակարագոյնն էր քաղաքիս։
Քանզի տեսեալ, ով արք աթենացիք, զնաւատականն ձեր
խաթարեալ, և զմեծատունսն ապահարկս իմն եղեալ՝ առ
նուազութեան տակի նպաստիցն իւրեանց, իսկ զչափա-
ւորսն կամ զանաւատն ընչիւք 'ի քաղաքացիս՝ 'ի դոյնցն
անգամ թափրացեալս, և զքաղաքս այնր ազգաս գձձեալ
տառապեալ 'ի պատեհ ակաս ժամանակին, եդի օրէնս՝
որով զմեծատունսն սոխեցի առնել իրաւունս, իսկ զաղ-
քատսն՝ 'ի զրկանացն հանգուցի։ և որ կարևորագոյնն էր՝
արարի քաղաքիս, պատրաստ ունել 'ի ժամու զամենայն
կազմութիւն հանգերձանաց։ Եւ եկակոչ եղեալ 'ի փուր-
սիշ անիրաւութեան, եկի մտի առ ձեզ և արձակեցայ, և
զմանանն քուէից [48] չըմբռնեաց դատախազն։ Եւ որչափ ինչ
դանձս կարծիցէք մատուցանել առ իս գլխաւորաց զովո-
ղութեանցն [49], կամ երկրորդացն կամ երրորդաց, մնա-
ւանդ առ 'ի ձեռնթափ ինձ լինելոյ յօրէնագրութենէ անտի,
կամ եթէ ոչ՝ դոնէ թողուլ արկանել ընդ յամով երդման [50]։

Digitized by Google

Ա՛յնչափ ինչ, ո՛ արք ամենայնիք, որչափ գանգատելի է ինձ ասելատ. ձեզ։ Եւ զայս 'ի դէպ յոյժ առնէին նոքա։ Քանզի էր նոցա ըստ նախկի օրինացն՝ վերչասանութեամբ միանգամայն զհարկ պաշտամանն հարկանել, սակաւիկ ինչ և ոչինչ իսկ ծախեալ յանձանց, և զչքաւոր քաղաքացիսն ճնշեալ. իսկ յիմանի օրինաց՝ որ ինչ անկին է իւրաքանչիւր ըստ իւրում գոյին բերել 'ի մէջ։ Եւ որ յաստուծոյ վերչասանութիւնդ միայն էր հարկակից 'ի բովանդակութիւն միոյ ևեթ նաւի, երկուց այնուհետև երևեցաւ նաւակառոյց. զի և ոչ իսկ նաւակառոյցս կոչէին զանձինս, այլ հարիսատուգործ։ Վասն որոյ 'ի խափանել զայդ և մի սակաւել յարգարութեան իրաւունս՝ չէք ինչ զոր ոչ տային։

Եւ արդ կարդա ինձ նախ զհրամանն ըստ որմէ եղէ և կանոչ, և ապա զհանդէս համարոյն՝ որ ըստ նախնի օրինացն և որ ըստ խմուսն։ Կարդա։

ՀՐԱՄԱՆ

«Ա՛ռ Պոլիկլեսաւ իշխանաւն՝ որ օր վերչասանն էր ամ. ոյն Բոյեդրոմիոնի, 'ի Նահապետութեան հիպոթեոնեան տոհմին, Դիմոսթենէսի գիմոսթենեան ականեցի մատոյց օրէնս մի նաւագործական փոխանակ առաջնոյն, ըստ որոյ 'ի բովանդակութիւն գործոյն գոյին հարկակից նաւակառոյցք. և ժողով խորհրդեանն և ժողովուրդն ձեռն եռուն հաւանութեան։ Եւ զԴիմոսթենէս յանիրաւութիւն ամբաստան եղև Պասրոկլէս փիլիացի. և չունելով զմանն քուէից՝ տուժեցաւ զլիսուն դահեկանն։»

Թէր ասէ և զդեղեցիկ հանդէս համարոյն։

Digitized by Google

ՀԱՆԴԷՍ ՀԱՄԱՐՈՑ

« Ա՛ռնաւ նաւ կոչեսցին նաւադրօծք վերջասան 'ի միասին՝ 'ի գնդաց գնդաց հարիւրեկացն հաթկակցաց, 'ի քսան և հինգամենից ՃՔառասնեմեանս, հաւասար զմասն բաժնին մատակարարելով։ »

Այլ բեր յառ սմին զոր յիմմէ օրինացս հանդէս համարոյ։

ՀԱՆԴԷՍ ՀԱՄԱՐՈՑ

« Նաւակառոյցք առ մէն մի նաւ ընտրեսցին ըստ սակի ընչեցն [51] 'ի տասն տաղանդէ. իսկ եթէ ընչեցն սակ առաւել գոյաւոր հաշուիցի, ըստ համեմատութեան՝ մինչև յերիս նաւս և 'ի մակոյկ մի՝ մուցեն ընդ հարկաւ։ Ըստ նմին համեմատութեան լիցի և որոց քան զտասն տաղանդ նուազ իցեն ինչք, մինչև 'ի մի եկեալ բովանդակեսցին 'ի տասն տաղանդ։ »

Արդ մինթէ սակաւ ինչ օգնութիւն թուիցիմ մատուցեալ աղքատացդ 'ի ձեզ, կամ թէ դիպն ինչ արդեաք ծախեին մեծատունք առ 'ի զերաւունսն չառնելոյ։ Ապա ոչ միայն ընդ չթոզանալս յայսմանէ գովիմ, և ընդ ամբաստանելս և արդարանալ, այլ և ընդ օգտակար օրէնսդրութիւնս և զիորձն արդեամբքն ցուցանել։ Զի ընդ պատերազմն բովանդակ, իբրև հանդէպք համարոյն ըստ իմում օրինացս լինէին, ոչ ոք երբեք 'ի նաւակառուցից՝ իբրև հարստահարեալ ոչ ուղերձեաց առ ձեզ ոստ ձիթենի [52], ոչ 'ի Մուհիքիա նստաւ, ոչ յոստիկանաց [53] նաւահանդիսեցն 'ի կապանս մատնեցաւ, ոչ մի նաւ քաղաքիս՝ արտաքոյ ամբարնեալ կորեաւ, և ոչ յեռնեալ անբաւական 'ի ջուր՝ կաց մնաց աստէն. որ ըստ առաջնում օրէնսդրութեանն լինէր

Digitized by Google

այս ամենայն։ Եւ պատճառ, վասն զի 'ի չքաւորսն էր հարկ պաշտամանն, և ոչ սակաւ անհնարինք հանդիպէին. իսկ իմ յաղքատաց անտի 'ի գոյատրսն փոխեալ ընտաւորութիւնն, ամենայն ինչ ըստ ակաս յօրինեալ կազմեցաւ։

Եւ վասն այսր իսկ արժանի եմ գովութիւն ժառանգելոյ, զի զայդ ամենայն տնտեսութիւն ընտրեցի՝ յորոց փառք և պատիւք և զօրութիւնք միահաղոյն գային յորդեին քաղաքիս. ոչ յաչակոտ, ոչ գաժան և ոչ ջորտուռատ ինչ է իմ քաղաքավարութիւնս, և ոչ նուաստ ինչ ամարդ և փղոյն, և ոչ անարժան քաղաքիս։ Արդ զնոյն և 'ի տեսչութիւնս քաղաքիս և 'ի հելլենականն երևեցայց ունել գնացս։ Զի ոչ 'ի քաղաքիս զառ 'ի մեծատունցն առաւել ընտրեցի շնորհս քան զբազմութեանն իրուտունս, և ոչ 'ի հելլենականն՝ զպարգևսն Փիլիպոսի և զհիւրութիւնն սիրեցի փոխանակ ընդ հաստատակաց օգտի համարէն հելլենացւոց։

Եւ արդ մնայ ինձ ուրեմն զքարոզութիւնէն ասել և զհամարատուութիւնէն. քանզի թէ զաւադրյանն գործեալ եմ և յամենայն ժամ խնամոտ եղեալ և փութաջան 'ի բարի առնել ձեզ, բաւական ցուցեալ համարիմ յաստուցելոցս։ Սակայն զմեծամեծսն 'ի վարչութեանցս և 'ի գործոց 'ի բաց թողում. զի նախ՝ այնպէս համարիմ, թէ ըստ կարգի՝ զանիրաւին համարս պարտիմ տալ. և երկրորդ՝ թէ և ինչ ոչ ասացից զայլոց քաղաքավարութեանցս, համայն իրաքանչիւր ուրուք 'ի ձէնջ վկայ են ինձ միտք։

Բայց զբանն զորս դա վեր 'ի վայր հարեալ շտոգանեաց յաղագս առընթերադիր ՅԵ օրինաց, ատառուածովքն երդուեալ, ոչ զձեզ ինչ նոցին խելամուտ եղեալ համարիմ, բազմաց 'ի նոցանէ և ոչ ես ինքն ինչ մարթացի կալ 'ի վերայ։ Այլա պարզապար ընդ ուղիղ ճանապարհ զկիրաւանց խօսեցայց։

Ահիչափ օտար է յինէն անպարտական զանձն ասել

համարոյ, որպէս գա այժմիկ բազում անգամ չարաբաստէր և ամենարդէր, որպէս զի և խոստովան եւս լինիմ զամենայն ա-ւուրս կենաց իմոց պարտապան լինել համարոյ զայնմ ա-մենայնի, որոց գամ մի մատակարար կամ անօրէն երևե-ցայ 'ի միջի ձերում: Իսկ զորոց յիսոյց ընչիցս ինձէն 'ի կա-մակարուց եռաւ ժողովրդեան, և ոչ մի օր պարտ դասիմ զանձն համարս տալոյ, լաւս, Եպքինէս, և ոչ զայլ ոք ամե-նեսին, թէ և յինուանց անտի ոք իշխանացն լինիցի: Զի որ այն օրէնք իցեն՝ այդչափ անիրաւութեամբ և ամարգաւ-թեամբ լի, մինչ զի և որ յիւրոցն ինչ տայցէ, և գործ մար-գասիրութեան և առատութեան գործիցէ, զրկեալ զնա 'ի շնորհակալութենէ, և մատնեալ 'ի ձեռս զրպարտչաց, և զնոսա՝ համարապահանջս տրոցն կացուցանեալ 'ի վերայ գլխոյ նորա. փարգաստ, և ոչ մի ամենեսին: Իսկ թէ գա ասէ, թող ցուցանէ, և ես հանդերձեալ և լուռ եղէց: Այլ չէք ուրեք, ով արք աթենացիք: Բայց գորս զրպարտել առեալ, քանզի 'ի տալն զինչս 'ի վերայ տեսլարանացն կայի յայնժամ, ասեմն, ասէ, գովեաց զնա մինչ դեռ տակա-ւին պարտականն էր հաշիւ տալոյ: Ոչ և վասն միոյ իրիք յորոց հաշուի պարտականն էի, այլ զրպարտիչ, այլ վասն որոց եռաւս: — Բայց և պարտաշէն էիր, ասէ: — Եւ յայդ իսկ տակս իրաւամբք գովեցայ, զի զծախսն մատուցի, և ոչ ինչ հաշուեցայ: Զի Հաշիւք՝ հաւասաւեաց և քննա-զաց կարօտին, իսկ տուրք՝ գոհութեան և գովեստի է արժանի: Վասն այսորիկ գրեաց և սա զինէն զայդոսիկ:

Եւ զի այս այսպէս անգարեալ կայ, ոչ միայն յօրէնս, այլ և 'ի սովորութիւնս մեր, դիւրաւ ցուցցիս ձեզ բազում ուսանիք: Քանզի նախ, Հաւասիկ՝ մինչ դեռ տարաբաղեան էր՝ բազում անգամ 'ի ձէնջ պատակեցաւ վասն որ յիւրոց անտի ընձեռեալցն. երկրորդ, զի զվահանն ընծայեաց Դիոս-թիմոս, և դարձեալ Քարիդեմոս, պատակ ընկալան. և տպա Նեռատոլեմոսդ այդ, շատ ինչ գործոց կացեալ ոստիկան, պատուեալ է 'ի տուրսն իւր: Քանզի գժնդակ էր տարաբէն

առն ուրուք գործակալի, կամ չմարթել վասն գործակալութեանն տալ քաղաքին զիւրն, կամ զորոցն՝ փոխան շնորհակալութեան՝ համարս պահանջիլ:

Եւ թէ արդար ասեմ զայդ, ուռ կարգա ինձ զորս վասն նոցա եղեալ են հրամանք: Կարդա:

ՀՐԱՄԱՆ

«Ես իշխանաւն Դեմոնիկոսիւ փիլիսացուով, որ օր քսան և վեց էր Թոեդրոսիոնի, կամաւ առանի խորհրդեան և ժողովրդեան, Կալլիաս փրէարեցի ասաց, թէ հաճոյ թուի հրապարակի խորհրդարանին և ժողովրդեանն՝ պատկել զնաւսիկլէս զինապետ. զի յորժամ երկու հազար սպառազէնք աթենացիք յիմբրոս էին 'ի Թիկուն օգնականութեան աթենացւոցն բնակելոց 'ի կղզւոյն, և Փիլոն՝ կարգեալն 'ի մատակարարութիւն՝ չկարէր յերեսաց ձմերայնոյն նաւել և զհոգան մատուցանել սպառազինացն, նա յիւրոց անտի ընչից եւ, և չպահանջեաց 'ի ժողովրդենէն: Եւ զպատկն քարոզել 'ի Սպանդարամետական, 'ի նոր ողբերգական:»

ՄԻՒՍ ՀՐԱՄԱՆ

«Ըստ բանից նահապետացն խորհրդով առանին՝ ասաց Կալլիաս փրէարեցի. Քանզի Քարիդեմոս՝ իշխան առաջնորդ սպառազինաց՝ առաքեալ 'ի Սալամիս, և Դիոնիսիոս ասպահապետ, իբրև զօրականք ոմանք զինազերծ եղեն 'ի Թշնամեաց՝ 'ի Ճակատուն որ առ գետովն, իւրեանց ծախուք վառեցուցին զերիսասարդն յուԹ հարիւր ասպար, հաճոյ Թուեցաւ ակմբի խորհրդեան և ժողովրդեանն՝ պատկել զՔարիդեմոս և զԴիոնիսիոս ոսկւով պատկաւ, և հուչակել յաւագ համաթենականն 'ի մերկամարտիկ մրցանն, և 'ի Սպանդարամետականն, 'ի նոր ողբերգական: Եւ

Digitized by Google

հուշակերպն հոգ՝ օրինապահացն լեցի, նահապետաց, հան-
գիստագրաց։»

Իւրաքանչիւր ոք 'ի սոցանէ, Եաքինէս, իշխանութեանն
որում իշխէր՝ պարտապան էր համարոյ, իսկ որոց վասն
պակէրն՝ չէր ինչ պարտապան. ապա և ոչ ես. զի 'ի նոյնս
անշուշտ նոյն իրաւունք են և ինձ ընդ այլս։ Եթող, և վասն
այնր գովիմ. և որոց եթող՝ չեմ պարտական համարոյ.
իշխան կացի, և զայնր զհամարսն հատուցի, ոչ զորոց ըն-
ծայեցիս, երգուեալ Ամրամազդ։ — Այլ անիրաւութեամբ
իշխեցի։ — Իսկ դու որ անդ էիր, 'ի մուծանել զիս համա-
րակարացն 'ի նեղքս, չլինէիր ամբաստան։

Այլ զի գիտասջիք՝ թէ գա ինքնին իսկ վկայէ ինձ, զի
ոչ զորոց համարապարսն էի պակիմ, օն առ կարդա ինձ
զհրամանն ազնջոյն զվասն իմ գրեալ։ Զի որովք 'ի գլխոց ա-
ռաջարկութեանն չեղև ամբաստան, որովք գատաստանէն՝
զպարտիչ լինել յանգիմանեացի։ Կարդա։

ՀՐԱՄԱՆ

«Ամ. Իշխանաւն Եւթիկլեաւ, որ օր քսան և մի էր
Պիանեփսիոնի, 'ի նահապետութեան ինէեան ցեղին, Կոտ-
սիմոն Լէոսթենեան անապլիստեցի ասաց. Քանզի Դիմոս-
թենէս գիմոսթենեան պէանեցի՝ հոգաբարձու կարգեալ
բերդեկի պարապացս, և յիւրոց ընչից յաւելեալ ծախեալ
ևս 'ի գործն տապանդս երթս, ընծայեաց զայն ժողովրդեան.
և զի հազարապետ տեսարանացն կացեալ, յաւել 'ի գու-
մար ծախուց ցեղին բոլորեցունց և ետ յիւրմէ հարիւր
ձիաս 'ի պէտս զոհից, հաճոյ թուեցաւ ատենի խորհրդեան
և ժողովրդեանն ասթենացւոց՝ գոհաբանել զԴիմոսթենէս
գիմոսթենեան զպէանեցին՝ վասն առաքինութեանն և քա-
ջալաւութեան, զոր անպակաս յամենայն ժամ ցուցանէ
առ ժողովուրդն ասթենացւոց. և պատկել զնա 'ի պատկ ոս-

կի, և հաշակ հարկանեալ զպատկին 'ի տեսարանին, 'ի Սպան-դարամետականն, 'ի Նոր ոզբեքական. և հանգիստգրին՝ խնամ տանեալ հաշակին։ »

Արդ ուրեմն՝ յորոց եռու և ոչ զվիոյ յայնցանէ եղեր ամբաստան, իսկ զոր նոցին փոխարէն արժանի ինձ համարի տեսանն՝ զայնմանէ գաստախոսել. ապա զտուրան առնուլ՝ իրաւունս խոստովանիս, իսկ զարիւրուրն հատուցանել՝ յանիրաւութիւն ամբաստանեալս։ Իսկ որ այն ոք իցէ ամենաչար այր և աստուածոց ատելի և արդարև չարակն, երգուեալ 'ի գիս, ոչ ապաքէն գա այդ այդպիսիդ։

Իսկ յաղագս 'ի տեսարանին քարոզելոյ, Թողում ասել զրիւրիցս բիւրոց քարոզիչն, և զիմ իսկ ինքեանս բազում անգամ պատկիրս. այլ ապէ, աստուածոմարդն, այդպէս չամբաշ և անդգամ իցես, Եաքինէս, մինչև չկարել 'ի միտ առնուլ, թէ պատկառուին՝ զնոյն խանտանս բերէ պատին ուր և քարոզեսցի, իսկ 'ի տեսարանին լինել քարոզութեանն՝ յօգուտ պատկառուացն է։ Զի որ լսիցէն, յորդորիցին առ հաստատակ 'ի բարի առնել քաղաքիս, և քան զպատկեալն՝ զերախտահատոյցսն գովիցեն առաւել։ Դմին իրի և քաղաքս գրեսոց զօրէնս զայս։ — Այլ սո. ինձ ընթերցիր զնոյն ինքն զօրէնսն։

ՕՐԷՆՔ

« Զորս պատկեն ոմանք 'ի գրոհից, զքարոզութիւն պատկացն ալուսցեն իւրաքանչիւր 'ի դրոհս իւրեանց, բայց միայն յորժամ ժողովուրդն աթենացւոց կամ տեսանն զոք պատկիցէ, նոցա օրէն լիցի քարոզել 'ի տեսարանի 'ի Սպանդարամետականն։ »

Լաւ, Եաքինէս, զօրէնսն որ ասէ յայտնապէս. Բայց միայն զորս ժողովուրդն կամ տեսանն հրամայիցէ, զնոսին և քարոզեսցէ։

Digitized by Google

Արդ ընդհէր զզպատրաեա, այ չուառ. զի բան 'ի բան կարկատաեա, հիմ 'ի վերայ այդոցիկ չառնուա սրբագիտ ըզ-կոձ վրացի։ Նա և չամաչէս և՝ յուռմարեալ մախամարդակ ածել 'ի մէջ դատաստան առանց իրիք ինաստ լինելոյ, և օրէնս փոփոխել, և զկիսոց մման՝ քաղ հանել, որոց համակ արժան էր 'ի կարգացումն գալ այնոցիկ՝ որ երդուեալքն են ըստ օրինացն հատանել վճիռ։ Եւ ապա՝ այդոցիկ գործողդ դու, 'ի մէջ անցեալ ճառես, թէ յառն ընկերահաշուի զինչ ինչ արժան է լինել։ Որպէս զի ոք անդրի մի տայցէ գործել ըստ օրինակի, և ապա առանց լինելոյ 'ի նմա պահանջեալ պայմանաց օրինակին՝ ընդունիցի զայն. և որպէս թէ բանիւ, և ոչ արդեամբք և քաղաքավարութեամբք ծանօթականք իցեն արք ընկերահաշուք։ Եւ ձայն բարձեալ գոչէս, զասելիս և զանասելիս 'ի բան ձգեալ՝ իբրև 'ի վաչէ [88] ուստեին, որ քեզ և ազգիդ քում վայելուչ են, ոչ ինձ՝

Բայց խուն ինչ ևս, ո՛ արք սութենացիք։ Ինձ թուի՝ թէ այլ է լուսանք, և այլ ամբաստանութիւն. այնու՝ զի ամբաստանութեան պատճառք անիրաւութինք են, որոց և պատիժք կան յօրէնսն. իսկ լուսանաց՝ հայհոյութիւնք և յիշոցք՝ զոր ըստ բնութեան իւրեանց պատահէ թշնամեաց ելեզուադարել առ իրարս։ Եւ զգատարանս զայս կարծեմ կառուցեալ 'ի նախահարց մերոց, ոչ զի ժողովեալ զձեզ այսր 'ի տանց ձերոց՝ անարժանս զվիմանց չաղփիոցուք, այլ՝ եթէ անիրաւեալ ինչ ոք գտանիցի առ քաղաքս՝ զնա յանգիմանել։ Ոչ ինչ ընդհատ յինէն այլմ հմուտ Եպքինէս, փոխանակ դատախաղելոյ՝ ընտրեաց կոկոզաքանել։ Բայց և ոչ աստանօր արժան ինչ է պարտեալ կոր 'ի գլուխ ելանել. մեռցայց ապա և յայդոսիկ, զայս ինչ ևեթ հարցեալ զնա։

Զքեզ, Եպքինէս, արդեաք քաղաքին ոք ատացէ լինել թշնամի, եթէ իսկ. յայտ է թէ իսկ։ Եւ սակայն, ուր գոյր դատաստան յինէն պահանջել յայդոսիկ ըստ օրինաց, եթէ

Digitized by Google

անիրաւ ինչ ոք էր 'ի հաշիւս, 'ի փուրսիչս, յայլ ամենայն իրաւունս, քո զայն Թողեալ և ուր բնաւ անպարտ եմ ամենայնիւ, օրինաց, անցեալ ժամանակաւ, ժամադիր ժամուք, բաղում անգամ յառաջագոյն 'ի գաստ վարեալ զոյցանել, և ոչ ուրեք երբեք 'ի ինեաս ինչ ասա ձեզ բանեալ, — բայց քաղաքիս հարկ է ընդ շատս կամ ընդ սակաւ հաղորդ դառնալ փուռաց հրապարակաւ գործեցելոցն, — դուանդ յայնժամ ընդ առաջ ելեալ հարար 'ի գիմի: Ցեռ ազէ, գուցէ սոցա ելցես Թշնամի, և իմ բարբրիցիս:

Եւ արդ, քանզի երկիւղածութեան և արդարութեան գատաստան մերկացաւ բոլորեցուն, և պարտ է ինձ՝ որպէս Թուի, Թէպէտ և 'ի բնէ չեղեմ ինչ Թշնամանաւոր, այլ 'ի պատճառս հայհոյանացն բարբանջելոց 'ի գմանէ, փոխան յլոլիցն և ստոց, զկարևորագոյնն ևեթ փոխանակաբանել զգմանէ, և ցուցանել՝ ով և յոյց ելցէ որ այգպէս արդակ համարձակ ազատաբերան ձեռներեց լինի հայհոյէ՞ առնել, և զբանս ինչ 'ի քարշ արկեալ ընդ վայրս ածէ, այն որ ինքն զայնպիսիս ասէ՝ զորս ոմ ոք 'ի մարգկանէ 'ի հասմեստից չլեհերիցէ բարբառել: Զի եթէ ինքն իսկ Իակոս կամ Հռաքամանթ կամ Մինոս էր գատաստաս, և ոչ սերմանաքաղ ոք, անարգ փարեալ հրապարակին, դպիր կորստական, ոչ կարծեմ ասել նմա զայդպիսիս, և ոչ այգպէս ծանրատաղտուկ բանս կուտակեալ՝ Իդրև յոյբերգուԹեան պատուել: Ո՛վ Երկիր և Արեգական և Առաքինութիւն, և այլս այսպիսիս. և գարձեալ 'ի Հանճար և 'ի Խրատ խրատեալ՝ որով բարիքն և յոռիքն ճանաչին. զի լուսաւք ապաքէն խօսել դմա զայսոսիկ: Այլ ով Ինքնագ խոհերական, զինչ հաղորդութիւն է քո կամ քոյոցդ ընդ առաքինութեան, կամ զինչ գիտութիւն բարեաց կամ չբարեաց. ուստ ուստեք ընկալեալ կամ զիմարդ եղեալ արժանի. և ոչ քո իրաւունք զնրատ յիշատակելոյ, որում 'ի ստոյգ արժանաւորելոցն ոչ ոք արգելաց այգպիսի ինչ ասիցէ զանձնէ, նա և յայլոց ուրուք ասել՝ չիկնեսցի. իսկ Թափուր եղե-

Digitized by Google

լոյն իբրու զքեզ՝ և ձեռագիրս առ անզգայութեան, նոցա յորժամ խօսիցին՝ վշտացուցանել հասանել զանելին, և ոչ թէ այնպիսի ինչ ոք համարիլ։

Ոչ վարանիմ թէ զինչ ասել իցէ զքէն և զքայլդ, այլ տարակուսեալ կամ թէ ուստի սկիզբն տարցի 'ի մէջ անցուցանել։ Արդեաք թէ որպէս հայր քո Տրոմէս, կապիկք առաւարք և խառան [56] ընդ անձն, 'ի հարկի տարուսթեան կայր առ Եղիսեասայ՝ որ առ Թեսեւսայ տաճարին զնեցեալ զիս նշանագրոց ուսուցանէր [57]. կամ թէ զիարդ մայր քո, տուընջենային հանապազորդ հարսանեաք վարեալ 'ի խառնախուց խշանեկի անդ՝ որ առ եղեգնաբնակն Հերովի [58], զդեղեցիկ առնապատակիդ և զծայրագոյն երրորդաթիւ հապիս խեղկատակդ մնոյց զքեզ. բայց և առանց իմ ինչ ասելոյ ամենեքին գիտեն զայդոսիկ։ Կամ թէ որպէս փողարն նաւի Փորմիոն, փրեբարեանն Դիոմենի տարուկ, յարոյց զնա 'ի գեղեցիկ վաստակոյ անտի։ Սակայն, յԱրամանդ և 'ի գիս երդուեալ, հեղգանամ. զուցէ զանկաւորսն քեզ ասելով անվայելուչս ինձ թուիցեմ ընարեալ բանս։ Այս թողեալ զայդոսիկ՝ յորոց կենցաղեցաւն գա արարոյց սկիզբն։

Զի ոչ յորս եհասան՝ 'ի նոցանէ ինչ ոք էր, այլ յորոց ժողովուրդն անէծս հանէ։ Զի անագան ուրեմն ... և զի՞ բնաւ անագան ասիցեմ, նա աւանիկ յերիկէ և յեռանգէ աթենացի համայն և Հարատասան երևեցաւ. և երկուս հեգենայս ելցկեալ՝ զհայրն 'ի Տրոմէսէ արար Աթրոմեաս, և զմայրն՝ պանծալի նազանոք անուանեալ Գլաւկոթէա, զոր ամենեքին գիտեն խուճապաճիւռ [59] յորիորիեալ. յայտ է թէ 'ի գործելոյ և 'ի կրելոյ զամենայն՝ արժանացեալ այգմ անուան. զի և ոչ ասա այլ ուստէք։ Սակայն այնպիսի տարերախտ և ժանտաքարոյ եւ 'ի բնաւս, զի 'ի ծառայէ ազատ՝ և 'ի տառապելոյ ճոխաճան յերեսաց առցա եգեալ, ոչ եթէ շնորհս ինչ տոցա խոստովանիս, այլ և զանձիդ վարձկանեցուցեալ՝ ընդգէմ տոցա քաղաքավարիս։

Digitized by Google

Զորովք երկեան ինչ է, որպէս թէ փոխանակ քաղաքին խօսեալ լիցէ, Թողից ասել զայնոսիկ. իսկ զոր յայտնապէս ցուցիւք 'ի կողմ Թշնամեաց գործեալն է, զայնոսիկ յիշատակեցից։ Զի ոմ՚ոք 'ի ձէնջ ոչ գիտէ զվնաւաւ տարագրեալն Անտիփոն, որոյ բան կապեալ ընդ Փիլիպպեայ՝ հրձիգ առնել զնաւարանագ ձեր, եկն 'ի քաղաքն. զոր իբրև իմ ձերբակալ արարեալ զԹաքուցեալն 'ի Պիրէոնի՝ կացուցի 'ի ժողովի ժողովրդեան, չարայաչաղդ այդ՝ խանչեալ և զաղաղակ հարեալ, իբր այն թէ յընկերհաշտութեան զոնհարին գործիցեմ, զանկածն 'ի քաղաքայնոց Թշնամանել, անհրաման 'ի տունս տունս երԹևեկել, եւ արձակուրդ շնորհել։ Եւ եԹէ ատենի Արիսապդին լեալ իրաղեկ, և անպատեհ եղելոյ անգիտութեան ձերոյ կացեալ 'ի վերայ, չէր 'ի խնդիր եղեալ առանն, և ըմբռնեալ վերատին ածեալ առ ձեզ, իբրեալ այնպիսին և 'ի դատն տալոյ ձնոզապրեալ՝ 'ի բաց արձակեալ լիներ 'ի պերճաբանէ այսի յայդմանէ։ Իսկ ձեր յայնժամ 'ի ասնչանս խոշանգանաց տուեալ զնա՝ ատատակեցէք, որպէս պարտ իսկ էր և զդա ինքնին գլխովին։

Տեսեալ այնուհետև ատենի Արիսապդին զդորա գործեցեալն յայնժամ, յընտրել ձեր զդա 'ի բարեխօս մեհենին Դելֆոսի [60], 'ի նմին անփորձութենէ՝ որով բազում ինչ 'ի համաշխարհի իրաց եատուք վտարանդի, իբրև զդա նախապատիւ ընտրեցէք և աէր արարէք իրին, նոյնժամայն 'ի բաց մերժեաց զդա իբրև զմանանիչ ոք, և Հիպերիդեայ եւ հրաման ատենախօս լինելոյ. և զայս արար՝ անդատին իսկ 'ի բաղնէ տուեալ զվճիռն. և պղծոյդ այգմ՝ և ոչ մի քուէ ոչ անկաւ։

Եւ զի ճշմարիտ ասեմ զայս ամենայն, կարդա ինձ զվերկայս այսոցիկ։

ՎԿԱՅ

« Ի դիմաց ամենեցուն վկայեն Դիմոթէոսի առքա. Կալ՝ լիաս սունիեցի, Զէնոն փիլիացի, Կլէոմն փալերացի, Դեմոնիկոս մալաթոնացի, թէ յընտրել ժողովրդեանն երբեմն զնաքինէս բարեխոս վասն մեհենին Դելէայ առ Ամիկիկոնան, առենակալ ընդ նոսին դատեալ և մեր՝ զՀիպերիդէս առաւել արժանի դատեցաք առենաքանել փոխանակ քաղաքիս. և առաքեցաւ Հիպերիդէս։»

Ապա մինչ դմա կայր խօսել, և առեանն հալածեաց զդա և զայլ ոք 'ի տեղին հրամայեաց, նովին իսկ դատաւճան և նենգաժէտ ձեզ յայտ արար։ Արդ այդ մի է 'ի քաղաքավարութեանց խօլականիդ, ապաքէն նման յոյժ, և զնմրդոչ, այնոցիկ՝ որոնք զինեն չարախօսէ։ Բայց դուք և զմիւս ևս այլ յուշ ածջիք։

Զի զբիւզանդացին Պիւթոնն յորժամ առաքեաց Փիլիպպոս, և յիւրոց անտի դաշնակցաց՝ յամենեցունց հրեշտակս արար ընդ նմին, յամօթ առնել զքաղաքս և անիրաւ յանդիմանել, յայնժամ ես յանդուգն խիզախելոյն Պիթոնի և յորդահոսանս ընդդէմ ձեր վիժողին՝ ոչ խորհեցայ յերեսացն, ոչ տեղի ետու. այլ յոսն կացեալ՝ ընդդէմ դարձայ, և զիրաւունս քաղաքիս չեռու կոխան, այլ ակն յայտնի զՓիլիպպոս կշտամբեցի անիրաւ. մինչև նոցին իսկ ուխտակցաց իւրոց յառնել՝ խոստովան և վկայ լինել. իսկ դա պատերազմակից նմա եղեալ՝ հակառակ վկայէր իւրում հայրենի աշխարհին, և զայն՝ սուտ ևս։

Եւ այս ամենայն չէր շատ, այլ և դարձեալ միւսանգամ փոքր մի զկնի ըմբռնեցաւ, զի ընդ Անաքսինոսի լրտեսին 61 դնայր 'ի տուն Թրասոնին։ Իսկ արդ որ ընդ առաքելուն 'ի Թշնամեաց միայն ընդ միայն կայր զբանիւք անկանէր,

Digitized by Google

նոյն նա յախտարակաց բուն իսկ ինքնին լրտես գուշակ գտանէր և ոխերիմ իւրում դաւառին։

Եւ զի հաւատեաւ ասեմ զայդոսիկ, կարդա ինձ զվերկայսն։

ՎԿԱՅԹ

«Տեղեկեմս կիլիկոնեան, Հիպերիդէս կալիւեաքրեան, Նիկոմաքէս գիսիանաեան վկայեն Դիմոսթենի, և երդմնի իսկ եղեն առ զրպարտիսն, թէ տեսին զնոսքինէս ատրոմաեան կոթովկեցի, զի գնայր գիշերայն 'ի տուն Թրասիպլի, և խօսակից լինէր Անաքսինոսի՝ որ Փիլիպպեայ լրտես դասեցաւ։ Այս վկայութիւնք տուան առ Նիկիաւ, որ օր երրորդ էր հեկատոմբէոնի։»

Բիւրք և այլք առ ձեռն են ինձ ասել զդմանէ, բայց զանց առնեմ, զի դոյնպիսիք ոմանք են։ Էր ինձ այժմ և շատ ինչ յայտնանէ 'ի գէմս ածել՝ որովք գա զայնու ժամանակաւն՝ Թշնամեաց սպասահարկու և ինձ ինքասակար գտաւ։ բայց այդոքիկ չկան պահին առ ձեզ 'ի հաւատսի յիշողութիւն, և ոչ յարդարագատ բարկութիւն։ այլ 'ի ստվորութենէ չարէ իշխանութիւն բազում տուեալ է ձեր ուժ և կամք իցեն խարդաւանել և զրպարտել որ զք օգտի ձերոյ թեւադիր լինիցի, ընդ լուսանացն հեշտութեան և շողումից՝ փոխանակեալ զոգուա քաղաքիդ։ Վասն որոյ յոյժ գիւր և հարթ է միշտ և անքոյթ յապահով թշնամեաց արբանեկել և վարձս առնուլ, քան թէ զձեր կոչին մեծարել 'ի քաղաքավարութեան։

Եւ մինչ չեմ սկսեալ 'ի պատերազմ, մերկագլուխ թեկնածել Փիլիպպեայ՝ դժնդակ է ապաքէն, ով երկիր և դիք, — զի զնարդ ոչ, — ընդդէմ հայրենեաց։ այլ շնորհեցէք, թէ կամիք, շնորհեցէք դմա զայդ։ Իսկ եթէ յայտ յանդիման նաւքս յառ յապուռ մատնեցան, աւար հարաւ

Digitized by Google

Քերթողներս, և Այտոնիկէ հինգերորդաց առաքելական դասու այրն, ոչ ևս յերկրայս էին իրքն, այլ եկեալ առ դուռս հասեալ կայր պատերազմն, որ ինչ յայնժամ վասն ձեր գործեաց յաջողիտոգ այդ մեծավերջակեր [62], չունիցի ինչ ցուցանել. ոչ մեծ ինչ և ոչ փոքր առաջարկութիւն կայ Եպքինեայ յօգուտ քաղաքիս։ Եթէ ասէ ինչ, թող ասասցէ և ասա առ եռեալ ցուցանել յիմոմամ ջրին։ Այլ չէք և ոչ մի ինչ։ Սակայն հարկ է նմա մի յերկուց առասի. կամ զի չաւնէր ինչ մեզ գնելոյ յայնժամ խոց գործոցս, վասն որոյ և չգրեաց ինչ այլ քան զայնոսիկ. կամ զի զԹշնամանացն խնդրելով շահ, լաւագոյն ինչ քան զայնոսիկ չէրեր 'ի միջ։

Իսկ արդ՝ որպէս ոչն գրէր, միթէ և չխօսէր ինչ արդեօք՝ յորժամ չար ինչ ընդ ձեզ կայր գործել։ Կա ասասնիկ չգոյր այլում բերան բանալ։ Եւ զայնն ամենայն Թերևս կարէր տանել քաղաքս, և դա զանխուսալ մնալ 'ի գործելն. բայց մի ինչ գործեաց, ով արք ամենայնիք, այնպիսի, որ այլում ամենայնի եդ գլուխ և ասարա, զորով գլոնանխուսն բանան ծանեալոց, զամենիսեան ՀՈՎՔՐԱՑՈՅՆ հրամանաց արկեալ Հասս երկարաբանութեան, որպէս Թէ խնդրելոյ զՇնամարութիւն։ Եւ այն չէ այնպէս։ Իսկ զնա՞դ։ Խաղր մեծ 'ի միջի կայ։ Ոչ երբեք լուսացիս գործեցեալն քո յայնժամ, ոչ այնպէս ինչ կարող զնեցիս շատախօսել։

Այլ վեհոյ կոչեմ առաջի ձեր, ով արք ամենայնիք, զաստուածս հանդերձն և զաստուածուհիս առ հասարակ՝ որ տեսարքն են առասիկաստան աշխարհիս, և զԹիւթեանն Ապոլոն որ հայրենականն է քաղաքիս [63]. և ապրեցեմ զնոսա զամենեսին, զի Թէ զՇնամարիսն ասիցեմ առ ձեզ, և ասացի իսկ անդէն առաժամայն 'ի ժողովրդեանն, իբրև առաջին նուագ տեսի զսոգաջուրդ զայդ ձեռն մեռեալ յիրն յայն, — զի ծանեայ, իսկ և իսկ ծանեայ, — պարգևել ինձ բանս բարի և կենդանութիւն. իսկ եթէ առ քինալ ինչ կամ 'ի պատճառս ոտիրասիրութեան՝ բաղայս 'ի վերայ գորս յա-

Digitized by Google

բուցանեմ սուտս, յամենայն բարեաց վրէպ և թափուր զիս կացուցանել։

Արդ՝ զի բնաւ այդպէս անիծանեմ զանձն իմ, և այդպէս ուժգին ձկտեալ լարիցիմ։ Այլ զի, Թէպէտ և դպրութիւնք մերձ կայցեն ինձ 'ի հասարակաց պահեսի, յորոց ցուցանիցեմ զայսոսիկ հաւաստեաւ, և գիտիցեմ ասելումն զձեզ անմոռացս եղեալսն, սակայն զայն կասկածեմ՝ թէ գոգցէ առ ոճրագործութեամբք խարուիք նուազ ինչ ոք գտ համարիցի՝ անքաւական առ այնպիսիս։ որ և գիպաւ իսկ յաստաչգոյն, յորժամ զերկեալն փովկիսացեան 'ի կորուստս մատանեաց՝ ստուգութիւնս ասասնոր պատմելով։ Զի զամենեսեան պատերազմն, որով յԵլատիս եկն եմուտ Փիլիպպոս, և առաջնորդ ընտրեալ Ամփիկտիոնաց՝ զհամարէն հելլենացւոցն իրս տապալեաց, դա այդ իսկ է որ ոլորեալ նիւթեաց ընդ նմա, և ամենայն մեծամեծ չարեաց պատճառ եկաց այր մի։ Եւ անդէն 'ի բաղդք արկանել և աղաղակել իմոնա՝ 'ի ժողովի ժողովրդեանն։ «Պատերազմ յԱթենիէ մուծանես, Եսքինէս, պատերազմ ամփիկտիոնեան,» կէաք՝ որ, յորդորակ հրաւիրանաւն ակմբեալ բազմեալ կային, չտային ինձ թոյլ խօսել։ և այլք զարմացեալք՝ հարմարէին զիս փուրսիշ իմն սնոտի ինաստս առ քինալ յարուցանել 'ի վերայ դորս։ Իսկ թէ, ով արք աթենացիք, զինչ էր իրացն ճշմարտութիւն, և յոր ակաս խաուն դաւաճանեաւ կազմեցաւ ամենայն, և որպէս 'ի գործ արկաւ, քանզի զի խափանեցայք 'ի ժամուն, լուսարուք այժմիկ, զի տեսանիցէք իրս մի արդարև քաջիկ յօդեալ յօրինեալ։ և մեծամեծս շահիցիք 'ի հասարակաց հմտութիւն, և թէ քանի հնարիմաց խորամանգութիւն էր 'ի Փիլիպպոս՝ տեսանիցէք։

Զդայր Փիլիպպեայ վախճան կամ ցանցուլ 'ի պատերազմն ընդ ձեզ մինչ չև զԹեբացիս և զԹեսալացիս 'ի թշնամութիւն դարձուցեալ ընդ քաղաքիս։ բայց Թէպէտ և զօրագլուխք ձեր անյաջ և չարաչար մղէին ընդ նմա ըզմարտն, սակայն և 'ի կուսոյ անտի և 'ի հինից աւազակաց

Digitized by Google

բիւրս իմն կրէր նա չարիս։ Զի ոչ մի ինչ յարդեանց յարարոց երկրին ելանէր 'ի դուրս, և ոչ որ ինչ նմա ակէաք էին՝ մտանէր 'ի ներքս. և ոչ զօրագոյն ինչ քան զձեզ էր յայնժամ ընդ ծով, և ոչ յԱտտիկէ միջամուխ արշաւել կարող՝ առանց Թեսալացւոցն զկնի իւր գալոյ և առանց Թեբացւոցն սալոյ նմա անցս։ Բայց և յետ մարտիս վանեալ զձեր որպիսի և խցէ առաքեալ զօրավարդ, — զի զայդու զանց առնեմ, — 'ի նմին իսկ 'ի վայրացն բնութենէ և յուժոյ հարստութեան կողմանցս երկոցունց՝ [64] եհաս նմա ջան և աշխատութիւն։ Եթէ առ իւրում ոխութեան զԹեսալացիս կամ զԹեբացիս 'ի բանի առնէր՝ խաղալ ի վերայ ձեր, ոչ զոք համարէր այնմ միտ դնել 'ի նոցանէ. իսկ եթէ զնոցա հասարակաց բարուրս պատճառեալ՝ ընտրեալ կայր նոցա 'ի գլուխ, դիւրեաւ այնուհետև ակն ունէր՝ ուրեք լարել 'ի հաղթ, ուրեք 'ի բանս հանել։ Ապա զինչ. ձեռն արկանէ, — տեսէք զիարդ ճարտարապէս, — յարուցանել պատերազմ ընդ Ամփիկտիոնսն և ալմուկ շփոթի 'ի ժողովի անդ նոցուն որ 'ի Դրոմնան. զի անդէն 'ի նոյնս ակն ունէր թէ ինքեան կարօտեսցին նոքա։ Եւ եթէ զայդ յաւանդապահաց [65] իւրոց առաքելոց կամ 'ի նեզակակցացն ոք առաջի առնէր, 'ի կասկած անկանել համարէր զկրոն՝ Թեբացւոց և Թեսալացւոց, և զամենեսին զգոյշ անճառապահ լինել. իսկ եթէ ամենացի ոք լինիցի՝ որ զայն առնիցէ, և 'ի ձէնջ 'ի հակառակորդացդ, դիւրաւ ծածկիցի. որպէս և եղեւն իսկ։ Իսկ զնոքդ 'ի գլուխ եհան զայդ... կաշառեալ վարձեալ զդա։ Եւ ոչ ուրուք, որպէս կարծեմ, նախատես եղեալ իրին և ոչ զգուշացեալ, — որպէս սովորեցին լինել առ ձեզ այսպիսիք, — առաջարկեցաւ դա գաղտեան [66] երթալ 'ի Դրոմնան, և երից կամ չորից ընտրելով՝ քարոզ կարգացաւ։ Եւ իբրև առեալ զզատիս քաղաքիս գնաց եհաս յԱմփիկտիոնսն, զայլն ամենայն թողեալ և ապախտ արարեալ, յոր վարձկանեալն էր՝ զայն վճարեալ տարաւ 'ի գլուխ։ Եւ ատելագեալ և ճառեալ խօսս

Digitized by Google

պատուհանաց և աւուտպէս, թէ ուստ ուստիք կիրբայինն երկիր դիցանուէր էին, զարան անպարծս ճառիլ և առ հան-դերձեալն զաչացուս՝ զաւանդապահան՝ հրապուրել հրա-ման առնել, շրջել պատել զգաւառաւն, զոր ամիսացիք իբրև զնուրանոց ինչ ասէին մշակել, իսկ դա բարբէր նուի-րական զերկիրն լեալ, ուր լոկրացւոցն չէր ինչ ընդ մեզ եղեալ դատ, և ոչ 'ի մէջ մատուցեալ զորս դա զարգիս բաղբաղէ՝ ոչինչ պատմելով հնմարիս։ Եւ անսի ծանիցիք։ Անմարթ էր լոկրացւոց դատ ինչ վարել ընդ քաղաքիս ա-ռանց եկակոչ առնելոյ։ Իսկ ո՞ զձեզ ձայնեսցէ 'ի դատաս-տան, առ որոմ իշխանութեամբ. սատ զոր որ գիտիցէ, ցոյց։ Այլ ոչ գտանիցես, այլ զուր և սուտ պատճառեցար զայդ։

Արդ 'ի շրջել Ամիսիկոնացոյ ընդ երկիրն ըստ դորա սադրելոյ, անկեալ լոկրացւոց 'ի վերայ՝ նեռաւոր արարին գրեթէ զամենեսեան, և զոմանս յաւանդապահացն յա-փըշտակեցին։ Եւ իբրև գամ մի յայդցանէ մնասք և պա-տերազմ 'ի վերայ ամիսիսացւոցն յուզեցաւ, նախ Կոտակ-փոս եկաց զօրավար բանակին Ամիսիկոնաց. այլ զի կնաք չէկին, և եկեալքն անգործ կային, 'ի յայնրդ ժողովն Դրանցն զՓիլիպպոս կացուցին զօրագլուխ՝ ոչք պատրաս-տեալքն էին և յառաջագոյն իսկ 'ի բնէ անզգամք 'ի Թեռա-լացւոց և յայլոց ևս քաղաքաց, և բարբարոս պատշաճա-ւորս պատճառեցան. զի կամ ինքեանց պարտ էր, ասէին, մնաքել և հոգալ այլազգիս, և պատժել զորս ոչն հաւասա-րիցին, և կամ զնա ընտրել։ Եւ զի պիտոյ է առաւել ինչ ասել. զի այդոքիւք ընտրեցաւ, և անդէն վաղվաղակի զօ-րաժողով լեալ Փիլիպպոս և խաղացեալ իբրև 'ի վերայ Կիր-բայի, և ողջոյն յոյժ ասացեալ կիրբացւոց և լոկրացւոց՝ երթայ առնու զԵնատիս։ Արդ, եթէ ընդ տեսանելն զայս՝ չէր Թեբացւոց փոխեալ 'ի խորհրդոց մնաց իւրեանց և 'ի մեզ հառեալ, իրդ այդ ամենայն՝ իբրև զհեղեղաստ 'ի քա-ղաքս անկանէր։ Այլ արդ նոքա յեղակարծումն յանկար-

ծակի զգէմ կալան նորա, 'ի վեր քան զամենայն՝ ոչ ոչք աթենացիք՝ 'ի դիցն ուրուք խնամոց, և ապա՝ ըստ կարի առն միոյ՝ յիմանէ առնելոյ։

Աղէ տուր ինձ զհրամանն զայնոսիկ, և զժամանակն յորս գործեցաւ ամենայն. զի տեսջիք՝ քանի՞ քանի՞ իրս ապիկեալ՝ և չէաս վրէժս գլուխդ այդ պղծալից։ Կարդա՛ ինձ զհրամանն։

ՀՐԱՄԱՆ ԱՄՓԻԿՏԻՈՆԱՑ

« Առ քրմաւն Կլինագորաւ, 'ի գարնային ժողովն Դրանց, հաճոյ Թուեցաւ դարասանիցն և ատենակալաց Ամփիկտիոնացն և հասարակութեան Ամփիկտիոնաց, — քանզի ամփիսացիք ոտնակոխ առնեն զսրբատուէր երկիրն, և վարեն, և պաճարս արածեն 'ի նմա, — եկանել անդր դարասանից և ատենակալաց, և արձանաշար պատել զսահմանն, և սատել ամփիսացւոց՝ մի՛ ևս կոխել անդր։ »

ԱՑԼ ՀՐԱՄԱՆ

« Առ Կլինագորաւ քրմաւ, 'ի գարնային ժողովն Դրանց, հաճոյ Թուեցաւ դարասանից և ատենակալաց Ամփիկտիոնացն և հասարակութեան Ամփիկտիոնաց, — քանզի ամփիսացւոց լարաբաժին արարեալ զնուիրական գետինն՝ մշակեն և արօտականս ճարակեն 'ի նմին, և տրգելեալք յայդմանէ՝ զինուք յարձակեալ խոփանեցին բռնութեամբ զհամաշխարհի ժողովն հելլենացւոց, և զոմանս ևս վիրաւորեցին, — զօրագլխին ընտրելոյ Ամփիկտիոնաց՝ Կոտոփոսի արկածացւոյ՝ հրեշտակագնաց լինել առ Փիլիպպոս Մակեդոն, և աղաչել՝ զի օգնեսցէ Ապոլոնի և Ամփիկտիոնաց, և մի անփոյթ արասցէ զաստուածոյն թշնամանելոյ յամփիսացւոց անտի ամպարշաց. և զի զօրագլուխ միա-

Digitized by Google

հեծան ընտրեն զնա հելլէնք ժողովակիցք Ամֆիկտիոնաց առաջնին։ »

Կարգա և ժամանակն յորս եղեն այդոքիկ. քանզի են՝ յորս դարասան եկաց գա։ Կարգա։

ԺԱՄԱՆԱԿՔ

« Իշխան Մեսսենիոսաց, որ օր վերջասան էր Անթեստերիոն ամսոյ։ »

Ցուր ինձ ապէ զհրովարտակն, զոր 'ի սառնդանել Թեբացւոց առաքէ Փիլիպպոս առ ուխտակիցսն 'ի Պելոպոնէս. զի և սնոսի հաւասարի առաջնիցէք, թէ ծածկեր Թաքուցաներ զբուն պատճառս իրացն. այն զի զայդոսիկ ընդդէմ Սելլագայ և Թեբացւոց և ձեր իսկ գործէր, և ձեռնայր խառնել զհաստատակացն և զհաճոյս Ամֆիկտիոնացն։ Բայց որ պատճառս մատոյց նմա և պատճառանս, գա այդ այր է։ Կարգա։

ՀՐՈՎԱՐՏԱԿ ՓԻԼԻՊՊՈՍԻ

« Թագաւոր մակեդոնացւոց Փիլիպպոս, պելոպոնեսացւոց որ 'ի մերում ենդակակցութեան, գործակալաց և բարձակցաց և այլոց ենդակակցաց [67] ամենեցուն խնդալ։

« Քանզի լուրս ցնիք, անուանեալքն Ոգոլք, բնակեալք յԱմֆիսսա, յանցաւորք են 'ի մեհեան գելիսական Ապոլոնի, և եկեալ զենուք առաջ հարկանեն զարբեալ երկիրն, կամիմ ձեզ հանդերձ հաստանել 'ի Թիկուս օգնականութեան աստուածոյն, և վրէժ խնդրել յանարգալոյս արքութեան ինչ իրիք 'ի մարդեկ։ Վասն որոյ զենու զարդու ընդառաջ լերուք ինձ 'ի Փովկիս, բարձեալ պաշար քաղաստութեայ, 'ի գլուխ Իլոնս ամսոյ՝ որպէս մեքս հաշուիմք, իսկ

ըստ աթենացւոց՝ Բոյեդրոմիոնի, և ըստ կորնթացւոցն՝ Պանեմոսի։ Զմիահամուռ ընդառաջելեալն՝ առ խորհրդակիցս կալցուք, իսկ զչեկեալսն 'ի մեզ՝ առ պատժապարտս։ Ողջ լերուք։ »

Տեսանէք զի քողարարզ զիւր պատճառան և յամենիկ-տիոնեանան լինի ապատան։ Արդ՝ ո՞ պատրաստեաց նոսա զայդոսիկ, ո՞ մնասոյց նոսա զպատճառանդ, ով որ եղելոցն գլուխ չարեացապարտ. ո՞չ ապաքէն դա։ Մի ուրեմն, ով արք աթենացիք, ձեռն առեալ յածեալ ասիցէք, թէ յերեսաց միոյ մարդոյ այս անցք անցին ընդ Եվլիպա։ Ոչ 'ի միոջէ, այլ 'ի բազմաց և յապիրատից որ առ ամենեսեան, ով երկիր և դիք. յորոց մի է և դա. զոր, եթէ հանարձակ ասել պարտ իցէ զշնմարտութիւն, ոչ ինչ դանդաղիցիմ ես հաստատակաց պատուհաս ասել՝ ամենայնի որ ըստ նոցանէն առաջիոց առաքանաց, մարդկան, տեղեաց, քաղաքաց։ Զի որ զսերմն վարեաց, նա էր բուսեալոց չարեացն հաւակ։ Զոր ընդ սեսանելդ միանգամ՝ զիարդ ոչ սոսկացեալ սրտկէք զաչսդ, զարմանամ. բայց եթէ, զի որպէս Թուի, խաւար Թանձրամած անկեալ կայ կրճիմ ընդ ձեզ և ընդ ճշմարտութիւն։

Արդ քանզի 'ի հակառակ հայրենեաց գործեցեալն գորա ձեռն արկի, եհաս ինձ գալ միսել յայնս՝ զորս հակառակ նոցին ես ինքնս առաքինացայ. զոր ըստ բազում գլխոց արժան է ձեզ լսել յինէն, և մանաւանդ՝ զի անպատահ իմն է, ով արք աթենացիք, եթէ ես արդեամբք վասն ձեր ընդ փորձ երկանց անցեալ ժուժկալեցի, իսկ գուք և ոչ բանիւք չսփ ևեթ նոցին համբերիցէք։

Զի հայեցեալ իմ՝ 'ի Թեբացիս, գոգ և 'ի ձեզ ևս, զի որ երկոցունց ահագին և մեծի զգուշութեան արժանին էր, Թոյլ տալ Փիլիպպոսի բարդաւանել, զայնու անպոյթ ապարեալ, և ոչինչ բնաւ եղեալ անձնապահ, 'ի նոցա հնարից՝ որ զՓիլիպպեայ միտան ունէին և կաշառեալք էին յեր-

կոցունց կողմանց, նա՝ և մեռ և յորդոր եւս էիք 'ի Թշնամութիւն և յոտոխել ընդ միմեանս, դէտ ակն 'ի վերայ ելեալ՝ սակայ կայի հանապազ, զի մի այդ լինիցի. ոչ յիմանի ինչ կամաց յօժարութենէ եւեթ օգուտ զայն վարկուցեալ, այլ գիտելով եւս՝ զի Արիստոտին, և Եւբուլոս եւս, յամենայն ժամ զայս սէր կամէին անկել. և որ յայլ իրս ընդդիմադարձ միմեանց էին, յայսմ համակ միամիտ միահաւան դասանէին. որոց դու, ով ազուս, 'ի քծինս հարեալ առ կենդանեաւ նոցին զհետ կրթէիր, իսկ յետ մահուանն չիմանաս չառնուս 'ի միտ՝ զի զնոցանէն չարախօսես։ Զի զոր յաղագս Թեբացւոցն յիս պախարակես, քան զնոսն՝ զնոցանէ մանաւանդ լինիս ամբաստան, որ յառաջ քան զեպ ընդ նոյն նիզակակցութիւն հաճեցան։

Այլ անդրէն դասնամ. զի յորժամ գրգեաց յարոյց դա զպատերազմն Յունիսիասա, և գործակիցք իւր կատարեցին զԹշնամութիւն առ Թեբացիս, յայնժամ եղև Փիլիպեայ 'ի մեր վերայ գալ, յոյր սակս դոքա ընդ իրեարս արկանէին զքաղաքս. և եԹէ փոքր միւս եւս չէր մեր վաղայարոյց զարԹուցեալ, և ոչ անձէն անգամ մարԹէաք ըզգալ. այնչափ յառաջագէմ յաջողեալ գոցա զիրն։ Իսկ ԹԷ որպէս էիք յայնժամ ընդ միմեանս, զհրամանքս և զպատասխանիս զայսոսիկ լուեալ 'ի միտ առնուցուք։

Ա՛ռ կարդա ինձ զհրամանս զայսոսիկ։

ՀՐԱՄԱՆ

« Ա՛ռ ՀերոպիԹոս իշխանաւ, որ օր քան և հինգ էր Եւլափեբոլիոն ամսոյ, 'ի նահապետութեան երեքԹեսեան ցեղին, խորհրդով ատենին և զօրագլխացն. քանզի 'ի սահմանակից քաղաքաց՝ էր զոր ասա Փիլիպպոս, և էր՝ զոր տապալեցաց, և հուսկ ուրեմն կազմի գիմել Յունիսիէ, յոչ ինչ համարեալ զդաշինս մեր. և նկրտի լուծանել զերդմունս և զնաղապութիւն, գրժեալ միաբան ուխտին հաւատարմ-

մուԹեան, հաՃոյ Թուեցաւ առեՆին և ժողովրդեան՝ առաքել առ Նա հրեշտակս, խօսել ընդ Նմա և փարել ասել, զի մանաւանդ զսա մեզ միաբանուԹիւն և զդաշինս ցանգ անվԹար պահեսցէ. ապա Թէ ոչ, ժամ ասցէ քաղաքիս խորհել, և գուլ արասցէ զենուց մինչև յամին Թարգելիումն։ Ընտրեցան 'ի միջոց առեՆին Սիմոն անապիրասեցի, ԵւԹիդեմոս փիլիասեցի, Բուլագորաս յԱլովաբեկայ։»

ԱՑԼ ՀՐԱՄԱՆ

«Ա. խշնանաւն Հերոպիլեաւ, որ օր վերջին էր ՄուՆիքիոնի ամսեան, խորհրդով ասպարապետին. քանզի Փիլիպպոս չանահնար լինի օտարացուցանել 'ի մեջ զԹեբացիս, և պատրաստ ևս է ամենայն զենու զորուԹեամբ 'ի մերձակայս Անտիկոյ գալ հասանել, անցեալ զուխտապահանցն որ ընդ մեզ, հաՃոյ Թուեցաւ առեՆի առաքանուոյն և ժողովրդեանն՝ առաքել առ Նա քարոզ զոք և հրեշտակս, խնդրել աշխարհապաղատ պատգամաՆք՝ գալ առանել մարտի. որպէս զի ըստ մարԹելոյ խորհեսցի ժողովուրդն, որոյ չեւ է ցայժմ եղեալ 'ի մոի՝ ՀեռաՆ յայս կամ յայն ինչ տալ 'ի վայելչականաց։ Ընտրեցան յատեՆակալաց անուն Ն.էարՃոս սովսենոմեան, Պոլիկրատէս եպիփրանեան, և քարոզ՝ ԵւՆոմոս անապիլիատացի 'ի ժողովրդականաց։»

Կարգա և զպատասխանիսն։

ՊԱՏԱՍԽԱՆԻ ԱՌ ԱԹԵՆԱՑԻՍ

«Թագաւոր մակեդոնացւոց Փիլիպպոս, աԹենացւոց առեՆի և ժողովրդեան խնդալ։

«Զոր իսկզբանէն ընդ մեզ էիր կամք էին՝ ոչ անպիտանամ, և Թէ զոր փոյԹ առանիք՝ գուն գործեալ զՀեզ ածել

զԹեռաչայցիս և զԹերացիս, եւ և զբիովայցիս անգամ, մինչ գեռ նոքա լաւագունի խորհրդով չտանուն յանձն ձեզ 'ի հպատակութիւն արկանել զկամս իւրեանց, այլ զօգուտս անձանց ընտրեսն։ Իսկ այժմ ստրկացեալ, և առաւելեալ առ խս հրեշտակս և քարոզ՝ գաչինս ինձ յուչ առնեք, և գուչ խնդրեք մարտի, առանց երկեր 'ի մէնչ 'ի ձեզ վնասու լինելոյ։ Սակայն իմ լուեալ հրեշտակացդ՝ հաւանիմ ընդ խընդիրսդ, և պատրաստ եմ գուչ և դադար առնել զինուց, եԹէ միայն զանուղղայ խորհրդականդ ձեր 'ի բաց խլեալ՝ արժանահաս պատուհասին առնիցէք արժանի։ Ողջ լերուք։»

ՊԱՏԱՍԽԱՆԻ ԱՌ ԹԵՌԱՑԻՍ

«Թագաւոր մակեդոնացւոց Փիլիպպոս, Թերացւոց առաջնին և ժողովրդական խնդալ։

«Ընկալայ զգիր ձեր՝ որով ներողեր ընդ իս զմիամտութիւն և զհաշտութիւն։ Սակայն լսեմ, Թէ ահեղացեալք ամենայնիս առատացեալ առ ձեզ՝ կամին զձեզ միաբան լինել 'ի խնդիրս իւրեանց։ Յառաջագոյն ըստգիւտ ձեզ լինել՝ Թէ հրապուրելոց իցէք 'ի յոյսս նոցա, և կամաց նոցին երԹալոց զհետս. բայց այժմ 'ի վերայ հասեալ, Թէ քան այլոց խորհրդոց զինի ընԹանալ՝ ընդ մեզ զնաղղութիւն խնդրեալ պահել, ուրախ եղէ. և առաւել գովեմ զձեզ ըստ բաղձանս գլխոց, մանաւանդ վասն զլապահովագոյնն յայտնի խորհելոյ և առ մեզ զմտերմութիւն պահելոյ, որ՝ ասին ունիմ՝ ոչ փոքր ինչ մեծ կշռոց յաւելցէ 'ի ձեզ, եԹէ յոր 'ի մտին եդիք հաստատուն կայցէք։ Ողջ լերուք։»

Փիլիպպոսայ 'ի ձեռն դոցա յայս կերպարան արկեալ զքաղաքան ընդ միմեանս, և այնու հրամանաւք և պատասխանեաքն գոռոզացեալ, եկին Թափիցաս զորքն և էառ զնշանսն, որպէս Թէ ոչ ևս՝ յորժամ պիտոյ լինիցի՝ 'ի մի

Ինչն զարձեալ դայլէք զուք և Թերացիք։ Իսկ
նպեալ յայնժամ 'ի քաղաքիս՝ գիտէք ամենե-
ուք համայն և սակաւս ինչ կարի կարեւորս։

Ընդ երեկս էր, եկն ոք պատմել նահապետացն, Թէ առաւ Եվատիս։ Ապա յարուցեալ ոմանց իսկ և իսկ յընԹրեաց անտի [68], հալածեցին զկրպակաւորսն 'ի տապաւարաց հրապարակին, զխրՀԼԹան հրՀիգ արարին. այլք զՀրագլխացն յոլեցին, ձայն եառուն փողոցին, և չիտԼ և շուկ լի էր քաղաքս։ Վաղիւ ընդ այգն 'ի խորհուրդ կոչեցին նահապետք զատեանն. և զուք 'ի ժողով չոգայք. և մինչ չև նոցա 'ի խորհուրդ մտեալ և խորհեալ ինչ յառաջագոյն, ժողովուրդն ամենայն բազմեալ ակումբ կայր 'ի վերս անդր [69]։ Եւ ապա իբրև եմուտ ատեանն, և ցուցին նահապետք որ ինչ յառաջագոյն պատմեալն էր նոցա, և զեկեալն 'ի մէջ անդր մատուցին, և նա կաց խօսեցաւ, եհարց քարոզն. «Ո՞վ կամի հրապարակախօս լինել.» ոչ ոք մատչէր 'ի մէջ։ Եւ քարոզին բազում անգամ զնոյն հարցեալ, ոչ ոք բնաւ յարեաւ եկայ, մինչ զեռ անդ էին զօրավարքն ամենայն և ամենայն ՀարտարախօսՔ, և աշխարհն միաբարբառ ձայնիւ հրաւէր կարդայր՝ խօսել ուստիք 'ի փրկուԹիւն. զի զոր ըստ օրինաց քարոզն ձայն արձակէ, հասարակի համաշխարհի զայն համարել արժան է և իրաւ։ Բայց եԹէ պարտ էր ամենեցուն որ ընդ փրկուԹիւն քաղաքիս կամէին՝ 'ի մէջ անդր երԼել. ամենեքին զուք և այլ եւս աԹենացիք յարուցեալ յատեան ելանիք. զի ՀՀմարտուԹեամբ հասեալ եմ՝ Թէ ամենեքին զուք զփրկուԹիւն նորա կամիք. իսկ եԹէ ՀՀոխագունից, երեքարիւրքն [70]. իսկ եԹէ երկոցունց այնոցիկ՝ խնամարկուաց քաղաքիս և մեծատանց, նոքա՝ որք յետ այնորիկ զատաստուր ընծայսն մատուցին. զի և 'ի խնամոտ մատաց և 'ի մեծուԹենէ արարին զայն։ Բայց Թուի ինն այնպէս, Թէ ժամանակն այն և օր՝ ոչ զայր ոք խնամոտ և ընչեղ միայն հրաւիրեր, այլ և որ իսկզբանէն քաջ զՀետ կրԼեալ եղէ իրացն, և ուրիշ հա-

Digitized by Google

սու. եղեալ՝ թէ էր ազգաւ զոյգոսիկ գործէր Փիլիպպոս և յինչ նկրտեալ։ Զի որ ոչն էր այգոսիկ սեղեսակ, և ոչ մանր 'ի քնին մտեալ անգուստ 'ի վերուստ, թէ և արսի մոգք խնամակալ ոք էր և մեծագանձ բազմահարուստ, զուն էր առաւել ինչ գիտել զարժանն առնելոյ, կամ տալոյ ձեզ խորհուրդ։ Արդ յաւուր այնմիկ ես ինքն յայտնեցայ այն ոք. և մատուցեալ խօսեցայ առ ձեզ զորս մտագիւրու թեամբ լուիջիք յինէն՝ յերկուս գէմս։ Մի, զի ծանիջիք՝ թէ ես միայն 'ի ձարտարախօսաց և 'ի քաղաքավարաց ոչ էի 'ի դժուարինն զկարդ միամիտ մտերմութեան, այլ 'ի բան և 'ի գիր 'ի խոյզ և 'ի ինդիր կայի կարևորացն ձեզ և յահագինն անդ։ Եւ միւս կա, զի սուղ ինչ ժամանակի ծախիւք՝ յայլ ամենայն տեսչութիւնդ կարի յոյժ հմտագոյն այսուհետև լինիջիք։ ✓.

Արդ ասացի. « Զկարևոր խոսվեալոգ, որպէս թէ բարեկամութեամբ ընդ Փիլիպպեայ կցեն թեբացիք, ազգաս համարիմ իրացն եղելոց։ Քանզի քաջ գիտեմ, զի թէ այդ այգպէս ինչ էր, ոչ յԵլնատիս այժմ զնա լսէք մտեալ, այլ 'ի մեր իսկ տահմանս։ Այլ զի զԹեբացւոցն իրս 'ի պատրաստի կացուսցէ՝ հասեալ կայ, զայն ասոյգ գիտեմ. և թէ որպէս իցէ այդ, ասէի, յինէն լուարուք։ Նորա՝ զորս 'ի Թեբացւոց անտի զոյր կարասեաս հրապուրել կամ խաբել, զամենեսեան որսացեալ է. իսկ որ խակղբանէն դիմակացք էին նման և այժմ իսկ հակառակորդք, զնասս ոչինչ իւիք զորէ 'ի հաւան ածել։ Արդ զինչ հնարի, և էր ասես կալաւ զԵլնատիս։ Մերձ զբանակն ցուցեալ և յանգիման կացուցեալ զպէնան, զբարեկամս իւր ամբառնալ և խրախուսել, և զհակառակորդսն զարհուրեցուցանել. զի կամ առահին պակուցեալ՝ թողացուսցեն զոր այժմս ոչ կամին, և կամ բռնադատեսցին։ Արդ՝ եթէ մեք, ասէի, սիրեսցուք ընդ միտ սատնել առ ժամայս՝ որ դժուարին ինչ դէպ 'ի Թեբացւոց անտի ընդ մեզ անցեալ իցէ, և կասկածահար լինել՝ իբրև 'ի թշնամեաց կողմ եղելոց, նախ զայն առնեմք

որում ոչխարք փախչէին Փիլիպպոս. երկրորդ, խիստ՝ դուցէ որ այժմս գիմագարձք նորա են, միամտեալ ընդ նմա, և ամենեցուն 'ի մի կամս փիլիպպացեալ, Յունիկէ արշաւեցին երկոքեան։ Իսկ եթէ ինձ հաւանեսջիք, և զորոց խօսեցիմս լինիջիք ուշիւ նկատել, և ոչ 'ի հակառակ մտեալ 'ի հենգնոյ կալ, ակն ունիմ թէ և զարժանն թուիցիմ խօսել, և զմոռալուս սպառնացեալ վասնզ քաղաքիս 'ի բաց փարատել։ Արդ զինչ պարտ համարիցիմ։ Նախ՝ դադարել յերկիւղէդ, և ասպ՝ դասնալ երկնչել ամենեցուն զԹեբացւոց. զի յոյժ իմն մերձաւորագոյն են 'ի ժամ տագնապին, և նոցա է նախ վասնզն։ Յետ այնորիկ հաստակաչափք և այրուձին եկեն Յունիսիս, ցուցանել և զձեզ ամենեցուն կազմս 'ի զէն. զի որոց 'ի Թեբէ 'ի ձեր միտս իցեն՝ լեցի նոյնպէս խիզախել համարձակ յարգարութիւն. զի սեալով չափ՝ զի որպէս վաճառելեացն Փիլիպպեայ զհայրենիս՝ մերձ է զոր Յունատիս յօգնականութիւն, նոյնպէս որոց կամք իցեն 'ի վերայ ազատութեան նահատակել՝ կայք դուք 'ի պատրաստի, և Թէ 'ի վերայ ոք երթիցէ նոցա՝ հաւանիցէք 'ի Թիկունս։ Զկնի այսոցիկ ստիպեմ ընտրել ասան պատգամաւորս, և զնոսա ընդ զօրագլուխն՝ երչխանս կացուցանել ժամանակի անդր երթին և արշաւանին։ Իսկ իբրև հաւանիցեն պատգամաւորքդ 'ի Թեբէ, առ ձեռնարկելոյ յերան խրատ զինչ ասամ. քանզի միտ դիք ինձ առայս։ Մի ինչ բնաւ խնդրէք 'ի Թեբացւոց, — զի անպատեհ է ժամանակն, — այլ խոստասջիք, երբ և հրաման տայցեն, գիմել նոցա յօգնականութիւն՝ իբրև 'ի յետին վասնզի եղելոց, լաւ ևս մեր յատաջատես հանդերձելոյն եղեալ. քան զնոսա։ Որպէս զի, եթէ ընկալցին զայս և անասայցեն մեզ, յուշ նպատակիս լինիցիմք ժամանն, և արժանի քաղաքիս շքով և վայելութեամբ վճարեսցուք զայն։ Իսկ եթէ չհաստատեսցեն մեզ յայնոսիկ, նոքա ընդ այժմու վրիպեալն՝ անձանց մեզ գնիցեն, և 'ի մէնջ կուսակ ոչինչ գործեսցի անվայելուչ և ոչ կորանաց ինչ։»

Digitized by Google

Զայդոսիկ և զդոցին հանգոյնս խօսեցեալ՝ ի բեմին։ Եւ ամենեցուն միախոհ ձուլեալք հաւանութեամբ և ոչ ուրուք ինչ ընդդէմ ճիկ հանելով ոչ միայն ասացի ևեթ զայդոսիկ, բայց ոչ գրեցի. ոչ գրեցի միայն, բայց ոչ պատգամաւորեցայ. ոչ պատգամաւորեցայ ևեթ, բայց ոչ զմիտս հաճեցի զթեբացւոց. այլ խնդրանեմ մինչև՝ ի կատարած ընդ ամենայն անցի, և մատնեցի զանձն իմ ապաստանս՝ ի վասնզաւ՝ որ պատեալ պաշարեալ կային զքաղաքաւս։ — Աղէ բեր դու ինձ զոր յայնժամն տուեալ հրամանն։

Այլ զինչ կամիս, Եսքինէս, եդեալ զքեզ լինել, և զինչ զիս յաւուրն յայնմիկ։ Կամիս զիս՝ զոր լուսալով և՝ ի հենգն արկեալ կուչիցես՝ զԲասալոսն [71] լինել, և զքեզ՝ գեցցարն ոք ոչ գուշնաքեայ, այլ մի յորոց՝ ի խաղս տեսանացն, Կրեսփոնտ [72] ոմն, կամ Կրէոն, կամ զոր երբեմն՝ ի Կալիտոս չարդ չարուս խաղալով խեղեցեր՝ զինոմայոս։ Այլ արդ, անդ յայնժամ Բասալոսս ես ասէանցի՝ քան զքեզ զինոմայոսդ կոթողկեցի՝ առաւել արժանաւոր երևեցայ իմով հայրենի աշխարհիս։ Դու՝ ասա. ոչինչ զատար ապեռանացս, ես՝ զամենայն զոր ինչ անկ էր բարեբաս քաղաքացւոյ՝ գործեցի։

Ընթերց զհրամանն։

ԴԻՄՈՍԹԵՆԻ ՀՐԱՄԱՆՆ

«Ա. Նաւարկիլս խշխանաւ, ՝ի նահապետութեան էաւեան ցեղին, որ օր վերջասան էր Սկիրոփորիոնի, Դիմոսթենէս դիմոսթենեան ապէանցի ասաց. Քանզի Փիլիպպոս մակեդոնացւոց թագաւոր՝ յաւուրս ժամանակաւ գրժեալ երևի ուխտի դաշանցն խաղաղութեան՝ որ ընդ ժողովրդեանն աթենացւոց, արհամարհեալ զերդմունսն և զիրաւունս խաստովանեալս առ ամենայն հելլենացիս։ և առեալ է քաղաքս՝ որ ոչ իւր ինչ անկ էին, և զամենս եւ՝ որ աթենացւոց էին՝ հարեալ է՝ ի սեպ ենիզակի, ոչ ինչ բնա-

Digitized by Google

յառաջագոյն 'ի ժողովրդենէն աթենացւոց զգեկալ. և այժմ ևս առաւել ապարթանեալ ընթանայ 'ի բռնութիւն և 'ի խակագործութիւն. զի զհելլենական քաղաքանին՝ է զոր պահապանաք ընու և զազատութիւնն բառնայ, է զոր յանաշխարհիկս վարեալ՝ 'ի հիմանց բրէ, և է զի փոխանակ հելլենաց՝ խուժադուժս սարեալ բնակեցուցանէ 'ի նոսա, հրոս ածեալ 'ի մեհեանս նոցա և 'ի շերիմս, ոչ ինչ նոր և օտար 'ի հայրենեաց իւրոց գործեալ և 'ի բարուցն, և արգեան բախտիւն անյագ զմայլեալ, մոռացեալ զանձն՝ որ 'ի փոքուէ և 'ի փանաքոյ՝ մեծ եղև յանյոյս. և ցորչափ ժողովուրդն աթենական տեսանէր՝ զի առնայր նա զխուժադուժ քաղաքն [73] որ երբեմն իւրն էին, առ փոքր գրեաց զառ ինքն յանցանան. իսկ զարդիս յանն արկեալ զհելլէն քաղաքանին՝ զոմանս թշնամանեալ, զկէս խլեալ և խախտեալ, անհնարին համարի և անարժան նախնեաց փառաց՝ անուանս առնել զծառայանալ հելլենացոցն. վասն որոյ հաճոյ թուեցաւ ատենին խորհրդոյ և ժողովրդեան աթենացւոց, պաղատանս և զոհս մատուցանել գիցն և գիւցազանց խնամապետաց քաղաքիս և աշխարհին աթենացւոց, և 'ի միտ արկեալ զնախնեացն առաքինութիւն, զի առաւել ընտրեսին քան զիւրանց հայրենեան՝ զազատութիւն հելլենացւոցն պահպանել, նաև երկերիւր ելուցանել 'ի ծով, և ծովակալին նաւարկել ընդ ծովն որ 'ի Դրանց և այսր, և զօրագլխին և ասպահապետին զհետեւակամարտս և զհեծելխուռմբ բանական ածել յԵլևսիս, և առաքել հրեշտակս առ այլ հելլէնս, և յառաջ քան զամենայն առ Թեբացիս, վասն մատուցցին լինելոյ Փիլիպպեայ յերկիր նոցա. քաջալերել զնոսա՝ մի ինչ զարհուրել յերեսաց Փիլիպպեայ, այլ պատասպարան լինել իւրեանց և այլոց հելլենացն ազատութեան. և զի ժողովուրդ աթենացւոց անյիշաչար եղեալ, եթէ այլ ընդ այլոց ինչ յառաջագոյն ընդ միմեանս անցեալ ելցէ քաղաքացս, յօգնել կայ զօրու և գանձիւք և զինուք և 'ի տէգս նիզակաց. գիտելով զի հելլ-

լենացւոց ընդ իրեարս քաջ է գուսպարել զբարձընտիր լինելոյ, իսկ ընդ լծով առն օտարածնի լինել և յառաջին բաւ ձէն անկանել՝ անտրժան է և փառացն հելլենականաց և նախնեացն առաքինութեան։ Եւ և զի ժողովուրդն աթենացւոց, ոչ օտար ինչ ոք համարի զԹեբացւոցն ժողովուրդ, ոչ ըստ ազգի և ոչ ըստ տոհմի. յուշ ևս ածէ զնախահարց իւրոց երախտիս առ նախնիս Թեբացւոցն, զի զՀերակլի որդիս՝ զրկեալս 'ի պելոպոնեսացւոց 'ի հայրենի իշխանութենէն՝ անդրէն դարձուցին, զնուազ յազթեալ յանգնելոյն 'ի մարտ ընդ Թոռունս Հերակլի. և զԴիպոս և զընդ իւր վտարանդիսն՝ ապաստան եղեալ հանգուցեալ. և այլ ինչ բազում է 74 մեր ընդ Թեբացիսն մարդասիրութիւն և փառք պարծանաց։ Վասն որոյ և ոչ այժմ ինչ յետս կացցէ ժողովուրդն աթենական յօգտակարացն Թեբացւոց և այլոց հելլենաց. մնանել ընդ նոսա յուխտ դաշանց և թիկանց առնելոյ, զանակ խառնել և երդմնիս տալ և առնուլ։

« Հրեշտակք, Դիմոսթենէս դիմոսթենեան պէանեցի, Հիպերիդէս կլէանդրեան սփեռատացի, Մենեսիթիդէս անասիփանեան փրէսարեցի, Դեմոկրատէս ստվիբէան փլիացի, Կալլիսքրոս գիոտիմեան էնոթովկեցի։ »

Այս եղև առաջին սկիզբն և հաստատութիւն իրաց ընդ Թեբայ. յառաջ քան զայն՝ 'ի թշնամութիւն և յատելութիւն և 'ի խեռութիւն հատեալ էին քաղաքք 'ի ձեռն գոյց։ Այս հրաման զայնժամ շուրջ մնծեալ վասնզ քաղաքիս՝ անցոյց իբրև զմեզ փարատեալ։ Եւ արդարակորով քաղաքացւոյ էր ցուցանել յայնժամ ամենեցուն, եթէ գոյր ինչ լաւագոյն քան զայնոսիկ, և ոչ այժմ պատուհասակոծ առնել։ Զի այլ խորհրդական և այլ զրգաստ, ոչ յայլում խմբէ նամանեալք, առաւել յայամ 'ի միմեանց որոշին, զի մին զխորհուրդս իւր յառաջագոյն յայտ առնէ զիրացն, և զանձն երաշխաւոր ընծայէ հաւանելոյն, բախտն, հանդամանաց ժամանակին և ուժ և կամք իցեն. իսկ միւսն՝

Digitized by Google

լուռ կացեալ յորժամ պարան իցէ խօսել, եթէ գժուարին ինչ գէպ տայցէ, զայն յաչդրէ։

Արդ այն էր, որպէս ասացիս, գէպ ժամանակ առն՝ որում փոյթ ինչ էր զքաղաքէս և զարդար խօսից. այլ ես աւասիկ այնքան 'ի բանս եղանեմ ըստ չափ, մինչև եթէ և այժմ ունիցի ոք ցուցանել ինչ լաւագոյն, կամ թէ բնաւ իսկ գոյր ինչ այլ քան զոր ես ընտրեցի, ինքնասպարտ զանձն խոստովանիմ։ Զի եթէ իցէ ինչ և արդ ուրուք 'ի մտին, որ օգուտ էր թէ գործէր յայնժամ, չէր պարտ ասեմ և այնմ անցանել զինև։ Իսկ եթէ չիք և չգոյր, և գեռ ևս չմարթի ուսեալք բնաւ ասել և ոչ այսոր, զինչ պարտ էր առնել առն խորհրդականի. ոչ յերևելոց անտի և 'ի գտելոց՝ զաղդաղագոյնն ընտրել։ Արդ զայդ արարի ես, Եաքինէս, 'ի հայրցանել քարոզին « Ո՞վ կամի հրապարակախօս լինել, » և ոչ թէ « զանցելոցն գնացելոց չարախօսել, » և ոչ « զլինելոցն երաշխաւորել։ » Դու 'ի ժամանակին անդարձաւ հեռեզակաւ նստեալ կայիր 'ի ժողովս ժողովրդեանն, ես մատուցեալ խօսէի։ Իսկ զի ոչ յայնժամ, գէթ այժմ ցոյց, ասա՝ ո՞ր այն բան իցէ զոր պարտ էր գտանել, կամ ժամանակ բարեպատեհ օգտի քաղաքիս, և յինէն 'ի գերև եղեալ, և ո՞ր այն նիզակակցութիւն, ո՞ր գործ, յոր առաւել պարտ էր ինձ առաջնորդել ասցս։

Բայց անցեալն ապարտ առնի միշտ առ ամենեսեան, և ոչ ոք ուրեք զնմանէ խորհուրդ հարցանէ. իսկ հանգերձեալն և առաջիկայն զխորհրդականին պաշտօն պահանջի։ Արդ՝ յայնժամ կէաք 'ի գժնդակացն, որպէս թուէր, առ դուրս կային, և կէաք անդ առաջի հասեալ. յորս տեսս զնոտրութիւն իմոյ վարչութեանս, մի զպատահարսն զբաւարս։ Զի եղք և վախճան ամենայնի, որպէս ասատուած կամիցի, այնպէս հասանէ. ընտրութիւնն եթէ զհանձար խորհրդականին առնէ յայտ։ Այսպէս մի զայն ինձ 'ի ինքս գրեսջիր, եթէ գէպք՝ Փիլիպպիայ հատն զպարթութիւն մատրանն. զի այնոր կատարած՝ յաստուած ապաստան կայր,

ոչ լիս. այլ թէ ոչ զամենայն՝ որչափ հնար էր մարդկեղէն մասաց՝ ընտրեցի, և ուղղութեամբ և խնամով ջանիս և վաստակաւէր աշխատանաւք գործեցի 'ի վերս քան զկար, կամ թէ ոչ յաղնուականս և արժանի քաղաքիս ձեռն արկի իրս և 'ի կարեւորս, զայդ ցոյց լնձ, և անդ յայնժամ ամբաստան ելս զենէն։ Իսկ եթէ հատեալ անկեալ կայծակն, ոչ միայն քան զմեզ, այլ և քան զամենայն հելլենացիս, մեծ և ուժգին պայթեաց, զի՞նչ պարտ իցէ առնել։ Որպէս եթէ ոք զնաւուրդիս, որոյ զամենայն ինչ 'ի փրկութիւն հոգացեալ իցէ, և զնաւն ամենայն կազմիւք և տարուք կահաւորեալ՝ որովք ամն ունէր ապրանաց, ապա 'ի ձմեռնատանի լինել և վանդել կահիցն կազմածոց, կամ թէ և 'ի խորասկեն իսկ ջովանդակ, 'ի նաւաբեկութեան մնասս բաստիցէ։ Այլ ոչ քեզ զավարեի զնաւն, ասասցէ արդեաք. որպէս և ոչ ես զօրաւարեի, և ոչ տէր էի Բոսպորին, այլ ամենայնի նա։

Այլ եկ զայն խորհեա և տես. զի եթէ մեզ՝ թեբացւոյք հանգերձ 'ի կոիւ մատուցելոց՝ զայս վիճակեցաւ կրել, թամ խիք ամն ունել պարտ էր, եթէ և ոչ գէթ զնոսին ունէաք նեղակակիցս, այլ 'ի փիլիպպոս երթային զոմարեին։ յոր ոչ ոք զամենայն ճայնս խաբ արձակեաց նոս։ Եւ եթէ, մինչ գեռ երեքօրեայ ճանապարհ հեռի էր ճակատամարտն յԱռակիկեայ, այսչափ վասնզ և սհ պաշարեաց զքաղաքս, իսկ ապա՝ եթէ ուրեք յաշխարհիս մերում այն անդք անցանէին՝ թամ խիք պարտ էր ամն ունել։ կարծիցէ՞ք արդեաք՝ թէ դեռ ես գոյր մեզ 'ի միջի լինել, յաստեան ժողովել և ոչի կշանել. օր մի և երկու և երեք՝ բազում ինչ մատուցին քաղաքիս օճանն 'ի փրկութիւն։ Իսկ յայնժամ. . . այլ չէ արժան ասել՝ զորոյ զգեղծ չէս մեզ առնուլ ուրուք 'ի դիցն խնամ, և քաղաքիս՝ ընդիզակակցութիւնն զայն ետ ամբարտակ առաջի կանգնել, զորմէ գուդ չարտախօս լինիս։

Այս ամենայն բանք բազումք՝ առ ձեզ են, ալիք գաստաւալք, և առ այնոսիկ՝ որ շուրջս կան արտաքոյ և ունկն դնեն. զի առ Հաքակոծելիգ այդ՝ սուղ ինչ և հաւատի բան

բաւական էր։ Զի եթէ յայլոց ամենեցունց քեզ միայն յայտնի էին հանդերձեալքն, Եպքինէս, 'ի խորհուրդ մտանել քաղաքիս զնոցանէ՝ յայնժամ պարտ էր կանխել ասել. իսկ եթէ չէիր յառաջագէտ, նմին ոգիտութեան պատժապարտ ես ընդ այլս։ Ուստի զի դու առաւել զինէն զայդոսիկ դատախազես քան թէ ես զքէն. զի այնչափ ես քան զքեզ լաւագոյն գտայ քաղաքացի յորս ասեմս, — զի դեռ ես ոչ խօսիմ զայլն, — որչափ զի ես զանձն իմ ետուս 'ի Թուեցեալսն օգտակար ամենեցուն, անվնասիւր և անխնայ յամենայն վտանգէ անձինս։ Իսկ դու ոչ ինչ այլ շահեկանագոյն ասացեր քան զայնս, — զի թէ ոչ՝ չվարձին նոքաք, — և ոչ պիտանացու ինչ ոք յայնոսիկ զանձն ընծայեցեր, այլ. զոր վատարանց ոք և ոխերիմ քաղաքիս՝ զնոյն և քո արարեալ, ապա եկեալ փուրսիշ յարուցեր զանցեցին անցելոց։ Եւ 'ի միում ժամանակի Արիստարատոս 'ի Նպքատոս և Արիստոնէոս 'ի Թասոս, ամենայնիւ ամենայն իրաք Թշնամիք քաղաքիս, 'ի դատ վարեն զբարեկամն աթենացւոց, և Եպքինէս յԱթենս զԴիմոսթենէ լինի չարախօս։ Բայց որում Թշնաութիւնք հեղինեացւոց համբարեալ կային 'ի փառաւորութիւն, կորստեան մանաւանդ արժանի է նա քան զայլսն դատախազելոյ. և որում նոյն պատահէք 'ի նպաստ եղեն իւր և Թշնամեաց քաղաքիս, չիք հնար՝ Թէ բարեխոհ հայրենեացն ելցէ. և յայտ առնես յորոց կեսադ և գործես, և յորոց քաղաքավարեսդ և դարձեալ ոչդ քաղաքավարես։ Գործիցի՞ ինչ յօգուտ ձեզ կարծեցելոյն, Եպքինէս անմոռուչ։ Ցեսս ընդդէմ ինչ պատահեաց և եղև որ ինչ չէր պարտ, անդ է Եպքինէս. զոր օրինակ անգամանիսեզ բեկմունք և ջնաձիդ ցաւք ստընդալոյ, յորժամ ախտ ինչ 'ի մարմնին անկանիցի, յայնժամ շարժին։

Այլ քանզի յոյժ հարեալ խզեսթեալ կայ 'ի գիպուածսն և 'ի պատահարս, կամիմ և նորանչան ինչ զարմանալի ասել. և յԱրամազդ և 'ի գիսն երդուեալ, մի ոք ընդ ասաւելահրաշ բանս աքանչասցի, այլ զոր ասեմ՝ խնամովնկա-

տեսցէ։ Զի Թէպէտ և ամենեցուն յայտնի ինչ էին հանդէր-
ձեալքն լինելոյ, և ամենեքեան նախատես եղեալ, և դու Ես-
քինէս, կանխապուշակ և գոչմամբ և աղաղակաւ բողոքեալ,
որ և ոչ ճիկ ինչ հաներ, սակայն և ոչ այնպէս արժան ինչ
էր քաղաքիս յետս կալ յիրաց անսի, եթէ փառացն կամ
նախնեացն կամ առ յապա յաւիտեանցն փոյթ ինչ էր նմա։
Զի զարգիս՝ ձախողեալ ևԷթ երևի 'ի ձեռնարկսն, որ հա-
սարակաց ամենայն մարդկան է, յորժամ աստուծոյ այն-
պէս ինչ հաճոյ Թուիցի. իսկ յայնժամ, արժանի զինքն
դատեալ գլխաւորութեան այլոց, և ապա յետս կացեալ,
զինքս մասն և տուր ամենեցուն 'ի Փիլիպպոս լինելոյ՝
յանձն իւր ձգէր։ Զի եթէ անկուիս ձեռնթափ լինէր յայն-
ցանէ, որոց վասն և ոչ 'ի միոջէ ինչ վասանդ իսրջեցան նախ-
նիքն, ոմ՚ոք ոչ Թքակոծ առնէր զքեզ. զի ոչ զքաղաքս ան-
շուշտ, և ոչ զիս։ Աղէ որոմ՚ երեսաք, երդուեալ յԱրամազդ,
գոյր մեզ յակն արկանել զորեարն եկեալ 'ի քաղաքս, եթէ
իրքն՝ յոր վայր այժմ են՝ հասանէին, և միագլխապետ և
աէր ամենեցուն ընտրեալ լինէր Փիլիպպոս, և առ 'ի չլինե-
լոյ այդմ՝ այլք առանց մեր 'ի դուպարած լինէին նահատա-
կեալք, և այն, մինչ դեռ յառաջին ժամանակս ոչ երբեք
նախամեծար ընտրեալ է քաղաքիս զանխիստուանակ անհո-
գութիւն քան զվիշտ վասանգին 'ի պարծանս։ Զի ոմ՚ոք 'ի
հեղինեանց, ո՞'ի խուժդժից ոչ գիտէ, թէ Թեբացիք և յա-
ռաջ քան զնոսա հզօրացեալքն Լակեդեմոնացիք, և ինքն
իսկ Թագաւորն Պարսից, մեծապէս շնորհակալեաք մտա-
գիւր լծմամութեամբ Թոյլ տային քաղաքիս՝ զոր կամիցին
ուսնուլ և զիւրսն ունել, Թէ միայն ընդ հրամանաւ մտեալ
կամակատար գտանիցի, և այլում զգլխաւորութիւն հեղ-
ինեանցացն Թողուցու։ Կա՛ ուրեմն այդոքիկ չէին յայնժամ
հայրենասուրք աթենացւոց, և ոչ հանդուրժելիք և ոչ
ընդդիմայք. և ոչ ոք երբեք կարող գտաւ յաւուր միում 'ի
հաւան ածել զքաղաքս՝ երթալ խառնել 'ի վերիվայրագործ
բռունն և ծառայել յապահովս. այլ յամենայն ժամ պա-

տերությունքեր վասն յաստուծոյ ահից և պատուոյ և վասն ազգ՝ անդուլ անդադար մատնեսցց զանձն 'ի վասանդ։ Եւ զայս այնպէս պարկեշտ և վայելուչ 'ի բարս ձեր վարիանիք դուք, զի և 'ի նախնեաց ոնոսի դոյնս առաւել 'ի գովեստս առնուք որ յայս առաքինացան։ Եւ կարի քաջ յիրաւի - զի ամ ոք ոչ սիրասցի ընդ քաջութիւն ելանցն այնոցիկ, որ յանձն առին թողուլ լքանել և զաշխարհն և զքաղաքս, և երկիր անկան 'ի նեռան, զի մի ընդ հարիւր հրամանի մատնիցին. և զայդր խորհրդականն զթեմիստոկլէս ընտրեալ 'ի զօրավար, իսկ զոր խրատն տայր հնազանդ լինել հրամանաց՝ քարեկոծ արարին զՆիրսիդես 74. ոչ զնա միայն, այլ և կնոջն ձեր զկին նորա։ Զի որ յայնժամ աներեւոյթքն՝ ոչ խնդրէին ոչ զՀնարաւորսն և ոչ զզօրագլուխ, որով երկիր կարար 'ի լուծ ծառայութեան կեցցեն. նա և ոչ կեալ արժանի համարէին, եթէ չէր մարթի ազատութիւն կեալ։ Զի ասենայն ոք ոչ հոգ և մեր եթէ ծնեալ վարիանէք զանձն, այլ և խրոտմ աշխարհին։ Եւ զինչ 'ի միջի իցէ։ Զի որ ծնողացն միայն ծնեալ հանդերձ, կնքեցցելոյ 'ի ճակատս դրէն և ինքնօրէն մահուն մեռայ. իսկ որ և հայրենի աշխարհին, առ 'ի չարեանեալ զնա 'ի գերութեան, յաժամանեցի մեռանել. և զինչտամանս և զանարգութիւն, որոց հարկ է առանել 'ի ստրկացեալ քաղաքի, ահաւասիկ իմն քան զմահ հաչուեսցի։

Եթէ ժամանակալ լքեալ էր իմ ասել, թէ եռ դրդեցի զձեզ արժանի լսոյ նախնեացդ խորհել, չէք ոք որ ոչ նմանապոյտս առասէք ինձ. բայց ես ապրիմ ձեր առեամ զայսպիսեաց ընտրութեան, և յայտ առնեմ՝ թէ և յասալ քան զկա զայս խորհուրդ կալաս քաղաքս. իսկ 'ի ապաս պատասանն դրծոցն՝ և ինձ իսկ մնան և քաջին կարծեամ լինել։ Բայց դարձ զանենայնմ չարաբասեալ, և ասիցէլով զձեզ՝ ժանտասալ ընդ իս, երբեմն ընդ պնաստակաց ահից և վասանդաց քաղաքիս, զիս 'ի պարծանաց ասասի առաժամայս մերկանալ ցանկայ, իսկ զձեզ յասենայն առ յասալս ժամանա-

կացն գովութենէ կապուտ կողոպուտ կացուցանէ։ Զի եթէ իբրև ոչինչ քաջութեամբ քաղաքավարեալ իմ՝ առանձինք զաս [76] գաստապարտ, յանցաւոր լեալ երևիցիք, և ոչ 'ի բանխին ժլատութենէ կրեալ զանցս իրացն։ Այլ չեք ձեր, ապրք աթենացիք, չեք յանցուցեալ, յորժամ վասն ամենեցուն ազատութեան և փրկութեան վանդ յանձն առէք։ երգնում՝ 'ի նախնիսն՝ որ յառաջագոյն եղին զգլուխս իւրեանց 'ի կշեռս 'ի Մարաթանի, և 'ի Զկամատաելն 'ի Պլատիէս, և 'ի Սալամին նաւամարտիսն, և որ յԱրգեմիսան, և յայլս բազումս՝ որ 'ի դամբարանս [77] աշխարհիս անկեալ գնին ապրք քաջք, զորս քաղաքս՝ նմին պատուոյ արժանիս վարկուցեալ՝ յուսարկեաց 'ի շիրիմ, Եպիմենէս, և ոչ պայծառեալն ևեթ 'ի նոցանէ և պայլթիականն։ Արդարև յիրաւի։ զի որ արանց քաջաց էր անդ, յամենեցունց արիաւ 'ի գործ։ իսկ զբանս՝ զոր ասասուածն բաշխեաց իւրաքանչիւր՝ ընդ նոսն և անցին։ ✝

Յետ այսր ամենայնի, ամ անիծեալք և կորստիոր գայթք, գու 'ի տոցս շքոյն և 'ի մարդասէր կամաց զգիտել զնս յոլովցեալ, սիրոյեանս ինն և Հակատա և վաղնջական արարուածս ոգեցեր, յորոց որոնմ իմիք կարօտէր այս գուշարուած։ և ինձ, ամ երբորդականք խեզիատակ, որ վասն նախատեռոց խորհրդական կայի քաղաքիս, զոր իմաստութիւն յանձին բերեալ պարտ էր յատեան երանել։ միթէ զայնս՝ որ տոցս զանարժանն թելադիր լինիցի։ Իրաւ իսկ էր ինձ մեռանել յայնժամ։

Զեզ այսուհետև, ապրք աթենացիք, ոչ նովին մտաք զառանձինն և զհամաշխարհն փութրեալս պարտ է գտանել։ այլ զհանապազորեայ կենդանական խնդիրս՝ յառանձին օրէնս և 'ի գործս պահելով զանն, իսկ զհասարակաց ընտրութիւնս՝ 'ի նախնեացն ազերճութիւն գէտ ասն կալեալ։ և ընդ ցայոյն և պատուոյ նշանակին՝ պարտի համարել իւրաքանչիւր ոք 'ի ձէնջ և զիորհրդականութիւն քաղաքիս առնուլ յանձն, յորժամ իրաց աշխարհին 'ի դատաստան մտա-

նիցէ, եթէ ըստ նախնեացն արժանի գործ գործել պարտ վարկանիցք։

Այլ քանզի, յարարուածս նախնեացն ձերոց անկեալ, է ինչ 'ի հրամանացն և 'ի գործոց՝ զորովք զանց արարի, կամիմ արդ դառնալ անդրէն ուստի յայդոսիկ խոտորեցայ։

Քանզի իբրև հասաք 'ի Թեբէ, գտաք անդ զդէսպանն Փիլիպպոսի և զԹեսալացւոցն և զայլոց նիզակակցացն 78. և զմեր բարեկամն՝ յերկիւղի, իսկ զնորայսն՝ յանդգնութեան։

Բայց զի զայս այժմ ոչ յիմ ինչ ասեմ, կարդա ինձ զԹուղթն զոր անդէն վաղվաղակի առաքեցաք հրեշտակք։

Սակայն դա յայն սահակութիւն հատեալ անց զանց ըստ չափ, մինչ զի եթէ 'ի պատշաճիցն ինչ գործեցաւ, զժամանակն՝ և ոչ զիս ասէ եղեալ պատճառ. իսկ ամենայն որ այլ ինչ ազգ ձախողակի դէպք եւուն, զիս և զբախտն իմ լինել նոցին ինքնապարտ։ Ապա ուրեմն, խորհրդականս ես և առեղխոս՝ 'ի բանիւ և խորհրդով գործեալսն ոչ ինչ մասն ունել գործակցութեան Թուիմ դմա, իսկ որ 'ի զէնս և 'ի զօրավարութեան ձախողեալ ինչ է, ես միայն չարեացապարտ այնմ։ Եւ որպէս լինիցի զսպարտիչ ապարատսն և անագորոյն, կամ առաւել նզովեալ քան զդա։

Կարդա զԹուղթն։

ԹՈՒՂԹ ՀՐԵՇՏԱԿԱՑՆ 79

Արդ իբրև դումարեցին զժողովն, զնոսա նախ մուծին 'ի ներքս, վասն 'ի նիզակակցաց կարգին լինելոյ. և մատուցեալ հրապարակախօս եղեն, բազում դրուատիս զՓիլիպպեայ և բազում ամբաստանութիւն զէնոյ, և զամենայն զոր հակառակ Թեբացւոցն գործեալ ինչ էր ձեր՝ 'ի մէջ ածեալ։ Իսկ գլուխ բանից խօսիցն, շնորհս խնդրէին մատուցանել փոխարէն առ նոսա երախտեացն Փիլիպպոսի, և զատ-

'ի ձէնչ զրկանացն վրէժ պահանջել՝ որով օրինակաւ և կամք
ելցեն. կամ տալով նոցա անցս 'ի վերայ ձեր, կամ 'ի միա-
սին յարձակելով յԱնտիոկէ: Եւ ցուցին, զպէս թուէր
նոցա, թէ ըստ իւրեանց խորհրդոյն՝ անասունք և գերդաս-
տանք և այլ ևս բարութիւնք յԱնտիոկիայ 'ի Բիսիդիա զե-
ղեալ յորդեացեն. իսկ ըստ մերոց բանից՝ զոր իսօսելոց ի-
ցեմք, ասէին, բիսիդիականաց 'ի յափշտակութիւն յան-
և յանպուտ մատնել յերեսաց պատերազմին. և այլ ինչ ոչ
սակաւ առ ազգք, բայց զամենայն 'ի նոյն դիտաւորութիւն
խօսէին: Իսկ զոր մեքս առ այդոսիկ ընդդէմ եղաք խօսա-
փոխանակ բոլոր արևուս՝ քաղցր վարկանէի ասել մի ըստ
միոջէ. այլ խելթամ 'ի ձէնչ, գուցէ վասն զատանցեալ ժա-
մանակացն՝ հեղեղ իմն անցից համարելով ոգոզեալ գնա-
ցեալ, առ ընդունայն աշխատութիւն զբանսն ունիցիք:
Այլ արդ զոր մեքս հաւանեցուցաք և զոր նոքայն եառուն
մեզ պատասխանի՝ լուարուք:

Ա՛ռ կարդա զսա:

ԳԱՅԱՍԻԱՆԻ ԹԵՐԱՑԻՈՅ

Արդ՝ յետ այսորիկ հրաւիրեալ կոչեցին զձեզ. ելէք,
օգնեցէք: Եւ զի զոր 'ի միջի ասա է՝ զանց արարից, այն-
պէս ընտանեաբար ընկալան զձեզ, զի մինչ սպառազէնք իւ-
րեանց և այրուձին 'ի բացի էին, զզօրականդ յոստան անդր
ժողովեցին և 'ի տունս, առ մանկունսն և առ կանայս, և
առ որ ինչ և այլ մեծագոյն էր նոցա: Եւ երիս գովութիւնս
ազնուագոյնս յուսուր այնմիկ առ ամենայն մարդիկ յայս
արարին զձէնչ Թեբացիքն. մի՝ արութեան, երկրորդ՝ արդ-
արութեան, և երրորդ՝ զգաստութեան: Քանզի զպատե-
րազմն ձեզք հանդերձ քան ընդդէմ ձեր հարկանել յանձն
առեալք, արիագոյնս և արդարամիտագոյնս քան զՓիլիպպոս
զձեզ գտանեցան: Եւ որ առ նոսա և առ ամենեսին իսկ ա-
ռաւել զգուշութեամբ յամրի պահին, զմանկունս և զկա-

Digitized by Google

նայս, 'ի ձեզ ապաստան արարեալ՝ հաւատս պարկեշտութեան 'ի ձեզ ունել ցուցին յայտնապէս. յորում ասմնայնի, արքայութենացիք, քաջալանութիւնք զձենչ ցուցան: Զի իբրև եմուտ բանակս 'ի քաղաքն, ոչ ոք՝ և ոչ իսկ զուր տարապարտուց՝ յօգեաց ինչ զձենչ բամբասանս. այնպէս ցածունս զձեզ ընծայեցուցէք: Եւ երկիցս ընդ նոսին 'ի Ճակատ մտեալ յաստաչին կռիւսն, որ զգեստոնն և որ ձմերանին, ոչ անբաստգիւտս եղեալ, այլ և զարմանալիս զձեզ 'ի գէմն ածէք, կարգաւորութեամբ, կաղմածովք, խրախուսանաք: Ցորս ձեզ՝ յայլոց գովութիւնք մատուցան, և 'ի ձենչ զոհք և թափօրք [80] աստուածոց: Եւ ես հեշտաբար հարցանիցեմ զնաքինեսս. մինչ դեռ այս ամենայն գործեալ լինէր, և նախանձու խնդութեամբ և գրուատեաք լի էր քաղաքս, արդեաք զոհէր ինչ և նա և խրամ լինէր ընդ բազմութեանն, թէ տրամութեամբ և հեծութեամբ գժգոհեալ ընդ հաւատակաց բարութիւնն՝ նստէր 'ի տան: Զի եթէ անդ էր և ընդ այլս 'ի կարգի, զնա՞դ ոչ ապիրատ գործիցէ, նա մանաւանդ ամոգարիշս, յորժամ զոլոց և ինքն զաստուածն վկայս կոչէր իբրև զլաւագունաց, այժմ իբրև խոտանս գատապարտել խնդրիցէ 'ի ձենչ 'ի գիսն երգուելոց: Իսկ եթէ չէր անդ, զնա՞դ չիցէ բազմապատիկ կորբասեան տրժանի, եթէ յարս այլք խնդային, ինքն 'ի տեսիլ նոցին տխաստէր:

Կարդա ինձ և զհրամանս զայսոսիկ:

ՀՐԱՄԱՆՔ ՋՈՀԻՑ

Ալդ մեք յայնժամ գլաշաւիք գայաք, իսկ Թեբացիք՝ մեզ զանձինս համարէին գտեալս. և որ օգնականութեան կարօտ Թուէին յերեսաց գործոց դոցա, եհաս նոցա այլոց 'ի Թիկունս ժամանել՝ յորոց ինձն ասասցէք: Իսկ Թէ ձայնս որպիսիս յայնժամ արձակէր Փիլիպպոս, և յինչ յոյզ

շքեղց ամբոխեց կայր, ուաջնք 'ի թղթոց նորա յորոց 'ի Պե-
լոպոնէս առաքէր։

Ա՛ռ ինձ ընթերց զայնոսիկ. զի տեսջիք թէ ինդուրթիւն
խմ և երկեւեկք և տառապանք և սաէպ սաէպ հրամանք,
որոց դա ապժմ ընդ հենգն եղանէր, զինչ գործ վճարեցին։

Այլ յորմէր տա ձեզ, արք ամենացնք, կացեալ են
ճարտարախօսք փառաւորք և մեծամեծք յառաջ քան զիս.
Պանէլիաներատան այն, Արիստոփոն, Եւփրա՛նոս, Թրասի-
բուլոս, և ապրք բիւրաւորք. այլ սակայն ոչ ոք երբեք 'ի
նոցանէ նուիրեաց քաղաքիս զանձն իւր բոլոր բազմրամին.
այլ որ գրեացն ոք, ոչ չոգաւ 'ի հրեշտակութիւն. և որ չո-
գաւն՝ ոչ ինչ գրեաց։ Զի ամենայն ոք 'ի նոցանէ պահէր
միանգամայն անձինն պարապ և դիւր, միանգամայն և ա-
պաւէն ինչ՝ եթէ յանկարծ գէպ ինչ տայցէ։ Իսկ արդ
զինչ. ասասցէ ոք արդեաք. այնչափ ուրեմն անցուցեալ քո
զայլոքք զբրութեամբ և յոխորտութեամբ, մինչև զամե-
նայն ինչ առնել քեզէն գլխովին։ Ոչ զայդ ասեմ, այլ գտա.
այլ այնպէս հաստատեալ էի ահագին լինել զվատանգն՝ յոր
պաշարեալ կայր քաղաքս, մինչև ոչ թուէր ինձ՝ թէ տեղի
և կամ՝ ուշ ինչ թողուցու անձին զգուշութեան. այլ շատ
համարեալ, եթէ ոք ոչ ինչ ապախտ արարեալ, զոր պարտն
էր՝ վճարիցէ։ Հաստատեալ էի և զանձնէ, թերեւս անզգա-
մութեամբ, և ապայն հաստատեալ էի, թէ ոչ ոք 'ի գրել՝
լաւագոյն ինչ քան զիս գրիցէ, և ոչ 'ի գործելն ինչ՝ գործի-
ցէ, և ոչ զհրեշտակութիւնն առաւել յօժարմամբ
և արդարութեամբ առնիցէ։ Վասն այսորիկ յամենայն ինչ
արկի զանձն։

Այլ ապէ կարդա զթուղթն Փիլիպպոսի։

ԹՈՒՂԹՔ ՓԻԼԻՊՊԵԱՑ

Որ յառաջ քան զայս 'ի բաղում և 'ի յանդուգն բանս խրոխտացեալն էր 'ի վերայ քաղաքիս Փիլիպպոս, յայս տեղի հասոյց զնա իմ քաղաքավարութիւնս, Եաքինէս, զայս բարբառս արձակեաց նա զինէն. որոց փոխարէն իրաւամբք տուաւ ինձ 'ի սոցանէ պսակ. և դու որ անդն կայիր, ոչինչ ընդդէմ դարձար. և դատախազն Դիոնդաս ոչ կալաւ զմսան քուէիցն:

Կարդա ինձ և զհրամանն զյունոսիկ, որ անդատապարտ արձակեցան յայնժամ, և 'ի դմանէ ոչ չարախօսեցան:

ՀԻԳԱՄԱՆՔ

Ա. յս հրամանք, ով արք աթենացիք, մինչև 'ի հեգա և 'ի բայս պապատան, նոյն են ընդ այնոսիկ՝ զոր յառաջն Արիստոնիկոս և այժմ Կաեսիփոնս այս գրեաց. և զսոցանէ ՀՍարոյց ինչ փուրսիշ Եաքինէս,, և ոչ ընդ դատախազին խառն ամբաստան եղև: Սակայն, եթէ Հշմարիտ ինչ զինէն չարախօսէ դա, նմանադոյնս արդեօք յայնժամ զայսոցիկ գրոզէ զԴեմոմէլեայ, և զՀիպերիդեայ, քան թէ զմանէ 31 գոյր նմա դատախազել: Իսկ ընդէր բնաւ: Վասն զի է սմա այժմիկ 'ի նոսա անկանել յամուր ապաւինի, և 'ի դատաստանացն խմաստութիւն, և 'ի ջամբաստանել զորս յայնժամ զնոցանէ՝ որ զնոյնս գրեցին զոր այժմս սա, և 'ի չնեբել օրինացս փուրսիշ ինչ ամբաստանութեան զորոց դամ մի այսպէս վՀարեալ կնքեալ էն, և յայլ ինչ բազում: Իսկ յայնժամ, չէ այսց նախաժամանն լինելոյ արդարադատութեանց, մերկ ինքեան իրին իրաւունք ընտրէին: Բայց չգոյր կարծեմ յայնժամ զոր այժմս առնէ. 'ի վաղնջուց ժամանակաց և 'ի խուռն հրամանաց ընտրեալ հաւաքել զորս ոչ ոք գուշակէր, և ոչ կարծէր թէ ասիցին այսօր, և

այնպէս չարախօս լինել. և ժամանակն փոփոխեալ այլ ընդ այլոց, և 'ի տեղի ճշմարտին՝ պատճառանս սուտս կցկցեալ իրացն, կարծել ասել ինչ։ Ոչ դոյին այսոքիկ յայնժամ. այլ ամենայն բանք լինէին դէմ յանդիման ճշմարտութեան՝ երես առ երես և հուպ առ արդիւնս իրացն, մինչդեռ 'ի միտս ձեր էին և գրեթէ 'ի ձեռին ունէիք ըստ բնաւան։ Վասն որոյ՝ դորա յամենայն յանդիմանութեանց արդեանց իրացն փախուցեալ, այժմ հուսկ ուրեմն եկեալ կայ, ճարտասանից հանդիսի կարծելով գուսպարս, որպէս ինձ թուի, և ոչ քաղաքավարութեանց հարցուփորձ առնել ձեզ աստանօր. և խօսից լինել ընտրութիւն, ոչ օգտի քաղաքիս։

Եւ ապա խելս իմն խառնեալ խորամանդէ, թէ զկարծիսն զոր 'ի դաշն 'ի տանէ ունէիք զմէնջ՝ պարտ է ձեզ ապարատ առնել. և որպէս 'ի կարծելդ՝ թէ մթերեալ խորեալ կայցեն ինչք առ ումեք, համար արարեալ՝ թէ պարզ և յատակ իցեն հաշիւքն [82], 'ի բաց թողացուցանէք. զնոյն և այժմ առնել 'ի խօսից ընծայութիւնս։ Այլ տեսէք՝ քանի յերաւի փուտ և զաղփաղփուն է 'ի քանէ ամենայն որ ինչ ոչ արդարութեամբ գործիցի։ Զի ըստ հանճարեղ առակ օրինակիդ, խոստովան ուրեմն եղև՝ թէ ծանուցեալ է ձեր, զի ես վասն հայրենեացս խօսիմ, իսկ ինքն վասն Փիլիպպեայ. քանզի ոչ ինդրէր արդեաք փոխել զձեզ 'ի մտացդ, եթէ չէին ինչ այսպիսի կարծիք զերկոցունցս։ Եւ զի ոչ արդար ինչ խօսի 'ի ինդրելն դառնալ ձեզ 'ի կարծեացդ, դիւրաւ ուսուցից ես, ոչ հաշիւս ինչ 'ի միջի դնելով, — զի ոչ այդ ինչ է գործոց հանդէս, — այլ զմի մի իւրաքանչիւր կարճառօտիւք յուշ արարեալ, համարառուս և վկայս միանգամայն զձեզ զլսելիսդ ունելով։

Իմ քաղաքավարութիւն՝ զորմէ դայդ չարախօսէ, փոխանակ Թեսալացւոց ընդ Փիլիպպեայ յերկիրս արշաւելոյ, որում ամենեքին ակն ունէին, արար՝ զի ընդ մեզ տայցեն ճակատ՝ զնորա զդէմ ունել. և զի փոխանակ Յատուկիկ լի-

Digitized by Google

նելոյ Հակառամարտին, եօթն հարիւր վասանաւ հեռի 'ի քաղաքէն՝ 'ի սահմանս բիւզանդացւոց լինելոյն։ և զի փոխանակ ծովակատն հինից Եւբիոյ 'ի մեզ հրոսակաց և աւար հարկանելոյ, աստուկէաստան աշխարհ 'ի ծովէն կողմանէ զամենայն ժամանակ պատերազմին 'ի խաղաղութեան վայելեցէք։ և զի փոխանակ ունելոյ Փիլիպպոսի զՀելլեսպոնտոս յատնուլն զԲիւզանդիոն, բիւզանդացիք ընդ մեզ ընդդէմ նորա կռուեցին։ Իսկ արդ նմանն ինչ հաշուիցի Թուխցին քեզ գործոցն հանդէպք։ կամ թէ պարս ինչ իցէ ՀԷՔԷԼ զայսոսիկ, և ոչ մանաւանդ միտ առնել՝ զի զամենայն ժամանակս անեղծ արձանացին յուշոյ յիշատակաց։ Թողում յաւելուլ, զի զդառնութեանն Փիլիպպեայ, զոր է տեսանել յորս միանգամ ատ անդ տեր եկաց, այլոց եհաս առնուլ զհամ։ իսկ զմարդասիրութեանն 83 զոր յայլ գործսն կեղծաւորեալ ձևանայր, դուք զարդիւնսն ժողովեցէք ուղղութեամբդ վարելով։ Այլ զայսոսիկ Թողում։

Սակայն ոչ հեղգացայց զայս ասել, զի որ զայր Հաւատարիսս՝ արդարութեամբ կամէր պահանջել և ոչ զբարպարտ առնել, ոչ որպէս դուք այժմ խօսեցայր՝ այնպէս ամբաստան լինէր, առակս իմն ստեղծանելով, և 'ի ձայնս և 'ի ձևս կերպարանաւորս պատճառելով։ քանզի բնաւ իսկ յիրաւի, — ոչ տեսանես, — ըստ այնմ ինչ եղեն հելլենացւոցն իրք, զի զայս ձայն՝ և ոչ զայն վարեցի ես, կամ այսր զձեռս՝ և ոչ անդր ածի և բերի։ Այլ յորդիւնս իրացն կառուցեալ զանկն հայէր, զինչ օգնեալ էին քաղաքիս և զինչ զՀՐ՝ յորժամ եղէ ես յիրան միջամուխ, և զինչ հայթայթեցի նոցա յետ այնորիկ յիմանալ վերակացութեան, և զինչ ոստիսացն եղեն իրք։ և ապա, եթէ նուազ արարի զզօրութիւնսն, յիս լինել ցուցանէր զինեան։ իսկ եթէ առաւել յոյժ մանաւանդ, ոչ զբարպարտէր։ Այլ քանզի դուսասի 'ի փախուստ դարձար, ես արարիցի։ և միտ դիր՝ եթէ ստուգութեամբ վարիցիմ 'ի բանս։

Զօրք քաղաքիս էին կզգայինքն, ոչ ամենեքեան, այլ

Digitized by Google

սկսարագոյնքն և Թարմատարք • զի ոչ Քիոս , ոչ Հռոդոս և ոչ Կերկիւրա ընդ մեզ էին • և արծաթոյ կշիռ՝ քառասուն և հինգ ահեթ տարանգով չափ , և այն՝ յառաջագոյն ժողովեալ հանեալ էր • իսկ սպառազէն կամ այրուձի՝ բաց 'ի մերոցս՝ և ոչ մի : Եւ որ քան զամենայն ահաւորն էր և 'ի շահ Թշնամեաց , դոցա՝ զամենայն սահմանակիցս յատելութիւն քան 'ի սեր պատրաստեալ էր , զմեգարացիս , ըղթեբացիս , զեւբիացիս : Քաղաքիս այսպէս էին իրք , և չեք ումեք ասել ինչ այսմ հակառակ : Իսկ Փիլիպպեայ իրք , ընդ որում էր մեզ մրցութեան հանդէս , տեսէք որպէս : Կախ ինքն էր իշխան ընդ իւր եղելոյ ամբոխին , և ինքն միահեծան , որ քան զամենայն մեծ է 'ի պատերազմի • և ապա , նոքա հանապազ զէն 'ի ձեռին կային • և ապա , ինքն Հռոմայեցեամբ յօրացեալ՝ առնէր զոր հաճոյն Թուէր նմա , ոչ 'ի հրամանս ինչ տուաջարկեալ , ոչ յայտ յանգիմանն յատենի հրապարակաց առեալ խորհուրդ , ոչ 'ի զրպարտչաց խրճբրծեալ , ոչ անիրաւութեան ամբաստանս կրեալ , և ոչ համարոյ պարտ եղեալ ումեք • այլ համարձակ ինքն տէր , ինքն առաջնորդ , ինքն ամենայնի իշխան : Իսկ ես՝ ընդդէմ նորա ճակատեալս ախոյեան , — զի և զայս արժան է կրչուել , — ի՞մ խմբք իշխան էի • և ոչ խմբք : Քանզի զատենաբանեալն իսկ նախ , որում միայն հաղորդ էի ես , միապէս շնորհէիք դուք վարձկանաց նորա , որպէս և ինձ • և յարս առաւել էին դոքա քան զիս ; — և շատ իսկ այն էին ըստ իւրաքանչիւր պատճառանացն գտեալոց , — զայն ամենայն 'ի նպաստս Թշնամեացն խորհուրդ հաստատեալ ձեր , այն՝ զոր 'ի բաց դնայիք :

Այլ սակայն սովին իսկ նիւզուութեամբ՝ նիզակակիցս ձեզ արարի զեւբիացիս , զաքայեցիս , զկորնթացիս , զԹեբացիս , զմեգարացիս , զլեւկադացիս , զկերկիւրացիս • յորոց գումարեցան բիւր մի և հինգ հազար այլազգիք , երկու հազար այրուձի , Թող զքաղաքական զօրս : Եւ արծաթոյ՝ որչափ մարթացայ՝ յաճախութիւն յոյժ ժողովեցի :

Digitized by Google

Իսկ եթէ զարդար բաժին Թեբացւոցն 'ի գէմն ածես, Եւբինէս, կամ զբիւզանդացւոցն, կամ զեւբիացւոցն, կամ թէ զհաւասար բաժեանց ինչ ճառես այժմ, ոգիտա-նաս նախ, զի 'ի բովանդակ երից հարիւրոց անտի նուաց պատերազմելոց 'ի վերայ Հելլենաց՝ զերկերիւրսն քա-ղաքս մատոյց. և ոչ տեսաւ զեան ինչ զայն համարել, ոչ զնորհրդականս իրին 'ի դատ վարել, և ոչ զայրանալ ընդ այն. — զի և անպատեհ իսկ էր. — այլ աստուածոցն շնորհս կալաւ, զի 'ի հասարակ հասեալ վտանգի հելլենա-ցւոց՝ ինքն կրկնապատիկ քան զայլսն նպաստ եղև 'ի փրկու-թիւն ամենեցուն։ Ապա 'ի նանիր շնթես սրակես շողոմս առնես դու սոցա՝ զնս զրպարտելով։ Զմի է՝ զի զոր պարսն էր առնել՝ այժմ ասես. իսկ յայնժամ, զի ասա 'ի քաղաքիս և մերձ էիր, չեղեր ամբաստան. եթէ միայն հնարաւոր ինչ էր՝ յերեսաց հանդամանաց ժամանակին, յորս ոչ զոր կա-մէաքն, այլ զոր իրքն առաջի մատուցանէին, պարտ էր ընդ-դունել։ Զի որ գնէրն ընդ մեր, և զմերժեալն 'ի մէնջ ընդ-դրկէր վաղվաղակի, և յաւելցր արծաթ 'ի գին, անդ պատ-բաստական կայր։

Սակայն, եթէ այժմ զգործոցս ամբաստանութիւն կրեմ, զինչ կարծէք, եթէ 'ի ճղճմել իմում 'ի խոյզ և 'ի խնդիր այդոցիկ՝ սորսորեալ թօթափէին 'ի մէնջ քաղաքք, և 'ի Փիլիպպոս երթեալ յարնչէին, և համայն Եւբիոյ և Թեբայ և Բիւզանդիոյ տէր լինէր, զինչ կարծիցէք թէ առնէին և խօսէին յայնժամ արքդ այդ ամպարիշտք. ո՞չ ապաքէն՝ թէ դաւ և մատնութիւն գործեցաւ, ո՞չ ապաքէն՝ թէ որ ընդ մեզն լինել կամէին՝ հերքեալ մերժեցան։ Եւ դարձեալ, թէ 'ի ձեռն բիւզանդացւոց հաս կալաւ զՀելլեսպոնտոս, և պարենի ցորենոյն հելլենացւոց աէր եկաց. պատերազմ ծանր և դրացի 'ի Թեբացւոց անտի Յատիկէ եհաս. ծով յերեսաց յարձակմանց հինից Եւբիոյ՝ եղև աննաւելի։ Ո՞չ ապաքէն զայսոսիկ բարբառէին, և այլ ևս բազում ինչ առ ազգաք։ Զար է, ով ազգ աթենացիք, միշտ չար՝ այլ զրպար-

Digitized by Google

տոզ, և յամենուստ չարակնօղ և պարսաւագէտ։ Իսկ այրոմիզդ այդ՝ բնութեամբ իսկ աղուես է, ոչինչ առողջախորհուրդ արարեալ դորա խիզբանէ և ոչ ազատամիտ ինչ, 'ի բնէ հապիտ կապիկ, դեռջուկ Ինոմայոս, բեմբասաց վատանշան։ Զի յինչ պէտս հայրենեաց եկն քո զօրութիւնդ. զանցելոց գնացելոցն այժմ խօսիս առ մեզ. որպէս զի բժիշկ ոք մեռեալ առ աշխատեալ հիւանդան՝ չասիցէ և չուսուցցէ իւ յախտէն թափիցին. և թերև վախճանեսցի ոք 'ի նոցանէ և յուշարկեսցի, զհետ 'ի գերեզմանն ընթացեալ պատմիցէ. « Եթէ զայս ինչ և զայս արարեալ էր այրդ այդ, ոչ մեռանէր։ » Բանդագուշեալ դու, այժմ ուրեմն խօսիս։

Կա աւանիկ և զպարտութիւնն, — եթէ յայն ինչ պերճացեալ ես՝ ընդ որ հեծեալ քեզ արժան էր մանաւանդ, այն նղովեալ, — ոչ իւիք ինչ յինէն կողմանէ գտանիցէք եղեալ քաղաքիս։ Եւ այսպէս առէք 'ի քնին։ Ոչ ուրեք երբեք՝ ուր հրեշտակութեամբ առաքեցայ ես 'ի ձէնջ, յաղթահարեալ դարձայ 'ի հրեշտակացն Փիլիպպոսի, ոչ 'ի Թեսալիոյ, ոչ յԱմբրակիոյ, ոչ 'ի Լիւբիկեցւոց, ոչ 'ի Թագաւորացն Թրակացւոց [84], ոչ 'ի Բիւզանդիոյ, ոչ այլ ուստեք բնաւ, և ոչ հուսկ ուրեմն 'ի Թեբացւոց։ Սակայն, յորս հրեշտակք իւր նկուն լինէին բանիւ, հասեալ նորա զինուքն 'ի վերայ՝ տապալէր զամենայն։ Իսկ արդ յինէն պահանջես զայնոսիկ. և ոչ ամաչես, զայր մի՝ զոր և 'ի կնատուութիւն կատակես, նմին միում միայնում արժան դատել՝ զի յաղթող լինիցի զօրութեանն Փիլիպպեայ, և այն՝ բանիւք եւեթ։ Քանզի իմ այլ իմիք էի ես իշխան. ոչ անձին իւրաքանչիւր, ոչ բախտի ճակատելոցն 'ի մարտ, ոչ զօրավարութեանն՝ զորոյ յինէն պահանջես զհամարս. այդչափ անզգամ ես։ Բայց զորոց միանգամ առն ճարտարախօսի անկ իցէ համարս տալ, զամենայն անս 'ի մէջ հարց և քնին, ոչ հրաժեշտ տուեալ խուսափեմ։ — Իսկ զինչ այն իցէ։ — Տեսանել զերան անդունդ 'ի վերուստ խիզբանէն, զդատ լինել ինքնին յառաջագոյն, և այլոց կանխագուշակ։ Այ-

տաքիկ և պաշտեցան յինէն։ Ար տաքաք՝ և զչիզգութիւնս, զգանգաղանս, զանգիտութիւնս, և զկապս, որ յամենայն քաղաքս կարեալ ինապէն են վարչութեան, զայդոսիկ ևս կարձել ըստ կարի, և նմին հակառակ՝ 'ի միաբանութիւն՝ 'ի սեր և 'ի ջանս պատշաճ պիտոյիցն առնելոյ գործուցանել։ Եւ այդ իսկ ամենայն վճարեցաւ առ յինէն, և ոչինչ ուրեք գոցէ ոք՝ յինէն կուսէ պակաս մնացեալ։ Իսկ եթէ հարցանիցէ ոք զոք. Ի՞նչ իւիք ապա 'ի բաղում ինչ իրս՝ յորս ձեռն արկ՝ յաջողեցաւ Փիլիպպոս. ասասցին ամենեքեան, թէ զօրքն և պարգևքն և կաշառաբերին առնելով զիրացն գործակալս։ Արդ ուրեմն ապային ոչ իշխան էի ես և ոչ զօրագլուխ, վասն որոյ և ոչ զգործոց նոցա ինձ ինչ անկ իցէ տալ համարս։ Եւ 'ի չլինել կարասեաւ կաշառաբերկ՝ զօրագոյն քան զՓիլիպպոս գտայ. զի որպէս որ զգինեան տայ՝ յաղթէ առողին՝ եթէ վաճառակուր լինիցի, նոյնպէս և որ չառնուն ինչ և չկաշառի՝ յաղթէ գնողին։ Ապա ուրեմն, որչափ խմովանն, անպարտելի եկաց քաղաքս։

Արդ ապագիկ, որ ինչ 'ի մէջ բերել էր ինձ՝ թէ յարժանի և յիրաւի գրեաց սա զինէն զայսոսիկ, առ այլովք բազմաք՝ այդոքիկ են և գոցին նմանք։ Իսկ զոր ամենեքին իսկ գուք գիտէք, զայն այժմ ասացից։

Քանզի անգէն և անդ զինի ճակատամարտին, գիտացեալ և տեսեալ ժողովրդեան զամենայն զոր ետս գործեցի՝ յահագինսն և 'ի սարսափելիս եղեալ ձեռնամուխ, յորժամ չէր ինչ զարմանք ապաիսաւորել առ իս բազմութեան, նախ՝ որ ինչ իմ խորհուրդք էին 'ի փրկութիւն քաղաքիս՝ ընտրեալ կալաւ զնոսին. և որ ինչ 'ի պահ զգուշութեան գործեցաւ, գնդի գնդի պահակերացն կարգ յօրինուածոյ, պարկէնք փոսից, արծաթ 'ի պէտս պարապանց, իսով հրամանաքս վճարեցան։ Եւ ապա յընտրելն զոք համբարակապետ[38], զիս քան զամենեսեան կամեցաւ ժողովուրդն։ Յետ այսորիկ, իբրև ամբոխ արարեալ կուռեցան 'ի վերայ իմ՝

որոց միաք 'ի խնամս էին եղեալն ինձ հաստատանելոյ, և փուր-
սիշն՝ հաշիւս՝ քաւութիւնս՝ զամենայն զայս յարուցին յիմ
գլուխս, ոչ յանձանց իւրեանց, դէթ 'ի սկզբանն, այլ ընդ
որովք առաւել ակն ունէին յանձանութիւն մեր. — քանզի
տեղեակ էք և յիշէք՝ զի յառաջին ժամանակս հանապա-
զօր եկեղեաց և գաստափեան լինէի ես, և ոչ Սոսիկլեայ անմբ-
ասութիւն, ոչ զրպարտութիւն Փիլոկրատեայ, և ոչ Դիոն-
գեայ և Մելանոսի շամբշութիւն, և ոչ այլ ինչ՝ պակաս
մեաց 'ի դոցանէ, զոր ոչ 'ի հանդիսի փորձ մատուցին ընդ-
գէմ իմ. — արդ յայնմ ամենայնի՝ նախ ասասուածովքն և
ապա ձեզք և այլովքն ամենեքումբք աթենացւովք՝ ապրեալ
ոչ պահեցայ. արդարապէս. զի և այս ստուգութիւն է և
արժանի ըստ իրաւարարաց, որոց երդմնի լեալ է, և երդ-
մանցն արքութեան խելամուտ։ Արդ յորս քաւութիւնքն
լինէին զինէն և արձակուրդ ինձ հրամայէիք, և զման
քաւէից ոչ տայիք դատախազեցն, 'ի նմին և վճիռ հատա-
նէիք ինձ զլաւագոյնսն գործեալ. և յորս ատենաքարոյ ե-
զեալ՝ անդատապարտ ելանէի, յայս առնէիք՝ թէ օրինա-
ւորս ևեթ գրեալ և խօսեցեալ է իմ. և յորս ընդ հաշիւսն
հաճ և հաւան դատանէիք, խոստովան լինէիք՝ զամենայն ինչ
ուղղութեամբ և անկաշառ յինէն վճարեալ։ Արդ քանզի
այդոքիկ այդպէս, զինչ անուն արժան և իրաւ էր Կոսեսի
փոնի դնել իմոց գործոցս. ոչ զոր 'ի ժողովրդենէն սեպանել
եղեալ, ոչ զոր յերդուեալ դատաւորացն, ոչ զոր 'ի ճշմար-
տութենէ անտի առ. ամենեքին հաստատելոյ։

Այլ, ասէ. այլ լաւ է Կեփալեանն այն, ոչն երբեք ընդ
սմբաստանութեամբ անկանել։ — Այլ, օն և օն երդուեալ
յԱրամողդ, դէթ բարեբախտ է։ Իսկ ընդէր բնաւ բաղում
անգամ սմբաստանեալն և ոչ երբեք անիրաւ յանդիմանեալ՝
իրաւամբք ընդ բամբասանաք յայն սակս լինիցի։ Սակայն
առ գա, արք աթենացիք, գայ ինձ պարծել և զԿեփալեայ
պարծանսն. զի ոչ երբեք փուրսիշ ինչ յարոյց նա 'ի վերայ
իմ, և գաստախազ եկաց յամբաստանութիւն. ուստի և 'ի

Digitized by Google

քէն եւ վկայեցայ, գոնէ ոչ ինչ քան զԿեփալոս վատթար լինել քաղաքացի։

Բազում ուսուցէք տեսանիցէ զք զդորա ապիրատութիւն եւ զյաչաղկոտութիւն, այլ մանաւանդ յորոց զբախտէն խօսեցաւ։ Այլ ես բնաւ իսկ, որ մարդ զք է և մարդոյ զբախտն յանդիման հարկանէ, ամենեւին անմիտ զնա համարիմ և անխրատ։ Զի որ երջանիկ և բարեբաստ զանձն կարծէ, ոչ գիտէ եթէ կացցէ նոյնպիսի բախտ իւր և մինչև ցերեկոյ։ Որպէս ասա արժան իցէ խօսել զնմանէ, կամ զիա՞րդ զայլոյն նախատել։ Այլ քանզի գա առ այլովք բազմօք և 'ի մասինդ յայդմիկ ամբարտաւանս բարբառեցաւ, մի՞ թէ դիք, ով արք աթենացիք, և տեսէք՝ քանի՞ ճշմարտագոյնս և մարդասիրելուչս զբախտէն քան զդա ճառեցից ես։ Ես զբախտ քաղաքիս բարի վարկանիմ, և 'ի Դոդոնիսեանն Արամազդայ և 'ի Պիւթեանն Ապո՛ղոնէ տեսանեմ դուշակեալ ձեզ զայն։ Իսկ զմարդկանն առ հասարակ, որպէս ինչ այժմս գտանի, դժուարին և դժնդակ։ Զի ո՞վ 'ի հելլենացւոց կամ ո՞ք 'ի խժդժից այժմիկ ընդ բազում և մեծամեծ եղերանց ընդ փորձ չանցանէ։ Վասն որոյ՝ զլաւագոյնսն ընտրելդ և զբարեբախտագոյնդ քան զայլ հելլենացիսն [86] լինել, որ կարծէին երջանիկ կեանս վարել 'ի լքանելն զմեզ, բարւոյ մասին քաղաքիս վարկանիմ զայդ։ Իսկ զդայթեալն և ոչ յամենայնի ըստ կամս յաջողել, համարիմ բաժանորդ լինել քաղաքիս 'ի մասն վիճակի այլոց մարդկան, որ ինչ և մեզ անկն էր։ Իսկ զնոյ անձին բախտ, և զմիոյ միոյ իւրաքանչիւր 'ի ձէնջ, արդար կարծեմ յիւրան ինքնուրոյն 'ի քնին առնուլ։ Արդ ես զբախտն այսպէս արժան դատիմ ուղղութեամբ և իրաւամբք, որպէս ինձ թուի, կարծեմ թէ և ձեզ։ Իսկ դա զնմ առանձին բախտ քան զհասարակացն քաղաքիս՝ տիրագոյն լինել ասէ, զփոքրս և զտրուպ քան զանչիւն և զմեծ։ Եւ զի՞ա՞ր մարթի այդմ լինել։

Եւ սակայն, եթէ քեզ, Եսքինէս, հաճոյ է ապաքէն ցասպաք զնմ բախտն կրկոտել, 'ի քոյդ հայեաց։ և եթէ լա-

Digitized by Google

սագոյն զինն քան զքոյդ դասանիցես, գագաթեա 'ի բամբասելոյ զոյն։ Հայեաց արդ ասատէն և ասա անդստին իսկզբանէ։

Եւ մի ոք, երդումն յԱրամազդ տուեալ և 'ի գիս, ոչ ինչ և անհամ յիս ըստգոցէ։ Զի եթէ զաղքատութիւն ոք այսն առնիցէ զուրուք, ես և ոչ միոս անդամ համարիմ ուներնմա, և ոչ՝ եթէ 'ի ճոխութեան մնեալ, և այնիւ սիգացեալ նազիցի։ Այլ յերեսաց հայհոյութեան և ամբարտաւանութեան ժանտիդ այգորիկ ստիպիմ յայսպիսի բանս գալ անկանել, որովք պաշտեցայց ջոփ եւեթ ըստ մարթելոյ խմվանն։

Արդ ինձ՝ մինչ մանուկն էի, Եպքինէս, եղև ցանկորդել յարժանաւոր վարժարանս, և առ ձեռն ունել զինչ և վայելէ ուսեալ՝ որ առ կարօտանաց չառնիցէ ինչ անպատեհս։ Եւ իբրև եղի ըստ մանկութիւն, որ ինչ այնուհետև պատշաճն էր՝ զոյն առնել. պարապեա կալ հանդիսից խաղուց, նաև հանդերձել պատերազմի, հարկս հարկանել, ոչ ուրեք պակասել յառանձին և 'ի համաշխարհի առատաձեռնութենէ, այլ քաղաքիս և բարեկամաց պիտանի լինել։ Իսկ իբրև հաճոյ թուեցաւ ինձ մատչել 'ի գործ հասարակաց, այնպիսի առաքինութիւնս ընտրել՝ որպէս զի բազում անդամ պսակ ժառանգել 'ի հայրենեացս և յայլոց հելլենացւոց, և ոչ առելեացդ իսկ համարձակել գէթ բիծ գնել պարսաւել զընտրութիւնս իմ։ Արդ ես այսպիսեաւ կենցաղավարեցի բախտիս։ Բայց թէպէտ և բազում ինչ է ինձ ասել զնմանէ, զանց առնեմ. զգուշացեալ՝ մի գուցէ տրտմեցուցանիցեմ զոմանս որովք գովիցիմն։

Իսկ դու, մեծարոյդ այր և այլոց անգամանիչ, առ սովաւ միտ եդեալ նայեա, որով իւիք վարեալ ես բախտիս. յորում, 'ի մանկութեանդ յետին կարօտութեամբ մնեալ, ընդ հօրդ կանխեալ սկէիր առ դպրոցին, զսևակն լեսուլ, զնստարանն սրբել սպընգով, աւել ածել դասատան մանկրաւոյն, 'ի ծառայի կարդ, և ոչ մանկան ազատի։ Իսկ

Digitized by Google

իբրև եղէր այր, մայր քո որ ձնեալ նուիրէր՝ գաւ առ նմա գրակարգաց կայիր, և այլ ևս ընդ նմին տանէիր սպաս. և զայգ՝ մորթովք եղնորթուց փերևեռեալ, և լիով թաւկուկք արբեցուցեալ և արբեալ զնուիրեալսն, և չփեռալ կաւով և թեփով, և յարուցեալ [87] 'ի սրբութենէն՝ հրամանն ասայիր ասել. « Փախեայ 'ի յառուցն, գան զլաւն. » և պանծայիր՝ թէ չքք ուրուք երբեք այնպիսի առնացեալ: Այնպէս համարիմ և ես իսկ և իսկ. զի մի կարծիցէք՝ թէ այսպէս մեծամեծս գիտէ բարբառել, այլ ոչ և գերախանչ զօգանջել: Իսկ 'ի տուէ, զչքնաղ կաքաւիչսն ընդ գուեհս ածեալ, պատկեալս 'ի շուամրայ և 'ի սօսի [88], վիշապակս լորտուս 'ի ձեռաց ճմլելով, և 'ի վեր քան զգլուխդ ամբարձեալ աղաղակելով. « Ե՛հ եհէ, վա՜ շաշ Սպանդարամեա, » և կայթս հարկանելով « Կեցցէ Աստէս [89], Աստէս կեցցէ: » Եւ 'ի պատուհանց՝ նահատակ, պարագլուխ, ակէտաբարձ և նքուքանիր և այլ ինչ այսպիսի կարդացեալ հաչակեիր. և վարձս առնուիր 'ի նոցանէ կարկանդակս՝ քաքարս և բլիթս. ընդ որոց ոմ ոչ երանեցէ արդարև դմա և բախանին իւրում: Իսկ յորժամ ընդ քաղաքացիս գրեցար իւ և է օրինակաւ, — զի զայդու զանց առնեմ, — սակայն իբրև մոեր 'ի գիր համարոյ, ընարեցեր առեր քեզ անդէն զգեղեցկագոյնն 'ի գործս. գալիր կալ և սպասաւորել տորին իշխանութեանց: Եւ իբրև անտի ևս ընկեցար, զամենայն զորս զայլոց չարախօսեա՝ քո ինքնին արարեալ և կատարեալ, ոչ յամօթ արարեր, երդուեալ յԱրամազդ, և ոչ մի ինչ յառաջնոց գնացիցդ՝ վարուքդ որ զկնի. այլ 'ի վարձուտուեալ զքեզ առ մեծահառաջ անուանեալ խեղկատակսն, առ Սիմիոն և Սոկրատէս, դուսանամուտ լինէիր 'ի կարգ երրորդ, Թուզս և ողկուզուկս [90] և ձիթապտուղս քաղելով իբրև մրգավաճառ. ոք՝ յօտարին ապարակաց, և յաշխապոյնս առեալ անտի վերս՝ քան 'ի ճակատամարտիցն յորս դուք ընդ ոգւոց ձերոց ճգնեալ նահատակիք [91]: Զի անհաշտ և անազգ պատերազմ էր ձեր ընդ հանգիստ-

տեսան. յորոց վերս բազում ընկալեալ, յիրաւի այնու հետև զանգուածն այնպիսի վասանգից՝ ծագք առնեն որպէս վասասիրտս։

Այլ զանց արարեալ զորոմն չքաւորութեան ոք արդեաք մեզ գնիցէ, անցից 'ի բուն իսկ 'ի վարուցդ դարուութիւն։ Քանզի այնպիսի սխորժեցեր քաղաքականութիւն, — զի և զայս ևս եհաս քեզ երբեմն առնել, — որով 'ի յաջողութեան աշխարհիս՝ կեցեր կեանս նապաստակի, սարսափեալ և գողացեալ, և ցանգ հարուածոց սին կալեալ վասն որոց անիրաւ զքեզ ըսպասանէր մատդ խիղճ. իսկ յորս այլք թշուառացան, յանդուգն և խիզախ տեսար յամենեցունց։ Այլ որ 'ի մահու հաղար քաղաքացեաց խիզախեալ խրախուսեցաս, զինչ արժան էցե նմա 'ի կենդանեաց կրել։

Արդ, Թէպէտ և այլ ինչ շատ կայ ինձ ասել, Թողից 'ի բաց. զի ոչ զամենայն զոր գոյ ինձ հալանել 'ի գնա քարոզականս և այպանելիս՝ պարտ անձին համարիմ ասել յանխուսն և վարկաբարազի, այլ որչափ ինչ չիցէ ինձ ամօթ խօսել։ Արդ դու 'ի հարցփորձ մատո առ միմանս եղեալ զքո և զմի վարս, հեղաբար և մի գանութեամբ, Եպքինէս. ապա հարց զսուտս, զոյր բախտ ընտրիցէ մէն մի 'ի տացանէ։

Ուստեղանեիր նշանագիրս, և ես 'ի վարժարանն հանապազորդեի. ձօնիս նուիրէիր, էի և ես նուիրեալ 'ի պարանգանեիր, և ես էի պարապետ. գպիր կացեր, և ես ժողով կոչէի. կացեր գուսան երգոյգական, և ես 'ի զնին կայի. չաջողէիր, և ես չէի. զամենայն 'ի շնորհուկս Թշնամեաց քաղաքավարեցեր, և ես 'ի շնորհս հայրենի աշխարհիս. Թողում զայլն։ Բայց այժմ այսօր ես վասն պատկերոյ փորձ գտանիմ, և վկայիմ ոչ ինչ ապիրատ գործեալ։ իսկ քեզ՝ զպարտողն կարծիս առնուլ մեայ, և 'ի վանդի կաս՝ Թէ այլ ևս առնիցես արդեաք զայդ, եԹէ պապանձեալ կարկեացիս, չառեալ զՀինգերիր մատն քուէիցն։ Արդ դոմին գեղեցկանախիհ կենցաղիդ յիրագի, — ոչ տեսանես, — զմի բախտն իբրու զնոտան ինչ գարով առնես։

Digitized by Google

Օն առեալ և զպաշտամանսն վկայութիւնս զոր պաշտեցի՝ ընթերցայց ձեզ զամենայն. և դու փոխարէն կարգա մեզ զտունսն զորս ապականէիր.

« Զբաստրիա և զեաւարին Թոզեալ գրքունս եկեալ կամ. 92 »

Եւ զայն ևս,

« Գիտասջիր զիս ակամայ լինել գուժկան բօթաբերք. »

Եւ դարձեալ... հէ, զչարդ չարաւ կորուացեն նախ դիք, և ապա ամենեքին սոքա, զապիրատ քաղաքավարդ, և ըղխեղկատակդ յերրորդաց։

Ընթերցիր զվկայութիւնսն։

ՎԿԱՅՈՒԹԻՒՆ

Արդ ես 'ի քաղաքականսն այսպիսի. իսկ յանձնականս, եթէ ոչ ամենեքին գիտակ իցէք՝ թէ ընտանի և մարդասէր և ամենայն կարօտելոց ձեռնտու, լուռ եղէց և ոչինչ բարբառեցայց, և ոչ մի ինչ առ այդ ածից 'ի մէջ վկայութիւն. ոչ զայն՝ զի ոմանց յոսոխացս գերեդարձ արարի, ոչ՝ զի չքաւորաց ոմանց դատերացն նպաստ եղէ 'ի հարստնիս, և ոչ ինչ այլ յայսպիսեաց։ Զի ես այսպէս ածեմ զմտաւ. Թուի ինձ՝ թէ երախտաւորելոյն է յամենայն ժամ յիշատակել. իսկ բարերարին մոռանալ նոյնժամայն, եթէ պարտ իցէ միումն լաւի առն գործ վճարել, և միւսումն՝ մի գՀիքի և զփոքրագոյ։ Զի զեւր երախտիսն յուշ ածել և ասել՝ հանգոյն ինն է նախատելոյ. քաւ յինէն առնել ինչ այսպիսի, նա՝ և ոչ մատ երթալ։ Այլ որպէս ինչ և համարեալս եմ յայսոսիկ, ինձ շատ է։

Կամիմ յիմոցս 'ի հասարակացն դարձեալ դարձուցանել զբանս, և սակաւիկ ինչ ևս ասել առ ձեզ։ Զի եթէ

Digitized by Google

ունիցիս ասել, Եաքինէս, ով որ 'ի մարդկանէ ընդ արեգակամբս, 'ի Հելլենաց կամ 'ի խուժայնոց, անվնաս ապրեցաւ 'ի բռնութենէն՝ նախ Փիլիպպոսի, և այժմ Ալէքսանդրի, քաջ է. ներեալ քեզ՝ թէ իմ բախտս, կամ անբախտութիւն թէ կոչել կամիցիս, ամենայնի եղև պատճառ։ Իսկ եթէ, որոց չև ուրեք երբեք տեսեալ զիս և ոչ զբարբառս իմ լուեալ, 'ի նոցունց ևս՝ բազումք բազում ինչ և անհնարինս չարչարեցան, ոչ արամբք չափ ևեթ, այլ և քաղաքք ողջոյն և ազգք, քանիսն ուրեմն արդարագոյն և ճշմարտագոյն իցէ՝ զհասարակաց բախտս ամենայն մարդկան, և զիրաւարին և զտարապարտ ընթացս իրաց ասել այնոցիկ պատճառս։ Այլ քո թողեալ զայսոսիկ, զիս զքաղաքավարեալս առ սոսա ըստգտանես. և զայդ՝ զիսեալով չափ, զի թէ և ոչ զբովանդակ, գէթ զման մի հայհոյութեանդ՝ յամենեսին ձգես, և մանաւանդ 'ի քեզ։ Զի եթէ իմ ընդվզեալ կենացեալ՝ ինձէն խոնջեալ էր զիրան, գոյր ապաքէն ձեզ այլոց ճարտարախօսացդ զիս կշտամբել. իսկ եթէ մերձ կայիք միշտ յամենայն ժողովս, և հասարակ ամենեցուն առաջի գներ քաղաքս՝ տեսանել զօգուտն, և՝ այնք լաւագոյն թուեցան յայնժամ ամենեցուն, և մանաւանդ քեզ, — զի ոչ եթէ առ մոերմութեան ինչ՝ յիս ապապարէիր զամենայն գոյսդ և զնախանձդ և զպատիւդ, որ գոյին յայնժամ համարէն յամենայն 'ի գործս իմ, այլ յայտնապէս 'ի ճշմարտութենէն յաղթահարեալ, և առ 'ի չգոյէ քեզ լաւագոյն ինչ ասելոյ, — զնիրդ ապա չկոչես անիրաւ և գժիսեմ, ուր այժմ պատուհասեալ գոռաս ընդ այնս՝ քան զորս չգտեր ինչ յայնժամ ասել ազնուագոյն։

Արդ ես առ այլ ամենայն մարդկան այսպէս տեսանեմ կարգեալ և հաստատեալ զայսոսիկ։ Մեղաւ՝ որ կամայ, բարկութիւն և պատուհաս 'ի վերայ նորա. յանցեաւ՝ որ ակամայ, փոխանակ պատժոյ՝ ներել նմա։ Ո՞չ մեղաւ ինչ որ և ոչ յանցեաւ, տուեալ զանձն յայն ինչ որ օգուտն թուեցեալ էր ամենեցուն, այլ չայնոքեցաւ խառն ընդ ամե-

Digitized by Google

նեալին, ոչ նախատակոծ առնել արժան է զնա և ոչ սան-
գաստակա 'ի վերայ կապել, այլ տրտմակից լինել և արգա-
հատել։ Եւ այս ամենայն այսպէս երևի, ոչ միայն յօրի-
նականն, այլ և բնութիւնն ինքնին գլխովին անգիր օրինաք
և 'ի բարս մարդկան զնոյն յայտ արար։ Արդ վայրենու-
թեամբ և զբաղարտութեամբ այնչափ անցոյց զանցոյց Ե-
քինէս զհամբրէն մարդկաւ, մինչև զորս ինքն իսկ իբրև
ձախողանս յիշատակէր, զնոսին ևս զինէն չարախօսել։

Եւ թող զայլն, որպէս թէ զամենայն զբանս իւր անբը-
ծութեամբ և միամտութեամբ խօսեցեալ, պատուէր ևս
տայր ձեզ՝ պատրաստ և զգոյշ լինել, զի մի նենգ ինչ և
գաւ գործեալ՝ խաբեցից զձեզ, ստոտիկ և կախարդ և խա-
բեբայ անուանս ինձ կարգացեալ, և այլս սոյնպիսիս։ որ-
պէս թէ ոք զիւր պատշաճն՝ զայլմէ ումեքէ կանխեսցէ ա-
ստացէ, և յիրաւի այնպէս ինչ իցեն, և ունկնդիրք չգնիցեն
միտ՝ ո՛ այն ոք իցէ որ զայնս ասիցէ։ Բայց ես գիտեմ՝ զի
ամենեքին ճանաչէք զդա, և քան ինձ՝ գոն առաւել զայնս
'ի գէպ համարիք։ Գիտեմ ևս, զի զաստակութիւնն իմ, —
թող լիցի։ այլ ես տեսանեմ, զի ոչ փոքու ինչ մասին ուժ-
գնութեան խօսելեացն՝ լսելիքն են իշխան։ զի ըստ ձերում
ընդունելոյ և առ իւրաքանչիւրսն մտերմութեան՝ ըստ նմին
և խօսողն կորովամիտ և ուժգնասիրտ համարեցաւ։ — արդ՝
եթէ իցէ ինչ և յիս հմտութիւն այնպիսի, ստուգեալ զտա-
նիցէք զայն ամենեքին՝ համակ 'ի ձեր նպաստ, և ոչ երբեք
'ի մեզս, և ոչ իսկ առանձինն ինչ ուրեք։ իսկ զդորայդ՝ ընդ
հակառակն, ոչ միայն 'ի շնորհս թշնամեաց խօսել, այլ և
եթէ ոք զդա տրտմեցոյց ինչ կամ ընդհարաւ ընդ դա, ընդ
նոսին ևս ոտիսել իժանալ։ զի ոչ ըստ արժանի և ոչ յօրուտ
ինչ քաղաքիս վարէ զայն։ Զի ոչ զքաջութիւն և ոչ զառաքլու-
թիւն, և ոչ այլ ինչ այսպիսի, վայելել բաբոյ և ազնիւ քա-
ղաքացւոյ՝ զհասարակաց իրաց ժողովեալ գաստաւորսն ա-
ղաչել, զի հաստատուն առնիցեն նմա, և ոչ յայն ազազա
ինչ առ ձեզ մատչել։ նա մանաւանդ մի ունել իսկ զայնս 'ի

բնութիւն. իսկ թէ հարկ հասանիցէ, հեզաբար և չափով վարել։ Իսկ արդ յորս պարտ իցէ առն քաղաքավարի և Հարատարսխոսի տասակ լինել։ Յորս ինչ մի յամենայն իրաց՝ քաղաքին 'ի վտանգ դիպցի, և յորս կայցէ ինչ ժողովրդեան ընդ թշնամին. զի այս է քաջի և բարւոյ քաջաքաջոյ։ Իսկ որ ոչն է երբեք արժանի գատեալ՝ զաշխարհս ինչ վնասաւ, յաւելից թէ և զանձինն, առնուլ յինեն վրէժ, ոչ վասն քաղաքիս և ոչ վասն իւր ինչ, գալ նմա այժմ, պատկի և դաւութեան ամբաստանութիւնս կազմ և պատրաստ ունելով, և այսչափ բանս ժայրքել, անձին ատելութեան՝ մոխանաց և փոքրոգութեան է նշանակ, առն՝ յոչինչ ոչխատնացուի։ Իսկ թողուլ և զընդ իս մրցումարան, և սմա այժմ 'ի վերայ երթալ, բնաւ իսկ չարութեան է։

Վասն որոյ և Թուրիս ինձ, Եպիքնէս, ցոյցս ինչ առնելոյ կամաք խօսիլ և քաջաձայնութեան՝ ընտրեալ զայս հանդէս, և ոչ թէ զանիրաւութեան ինչ գատաստան պահանջել։ Բայց ոչ Հառաք Հարատարսխոսին, Եպիքնէս, պատուական ինչ են, և ոչ ձայնին ուղղակք, այլ 'ի նոյնս միակամութիւն ընդ բազմաց, և զնոյնս սիրել և ատել՝ զորս և հայրենիքն. զի որոմ՝ այս միաք իցեն, նա և զամենայն ինչ մեծարմութեամբ ասասցէ։ Իսկ որ յորոց քաղաքն վտանգ ինչ անձին ատանէ՝ զայնոսիկ պաշտէ և գրգէ, ոչ 'ի նոյն խարիսխ ամրանայ ընդ բազմաց. ուստի և ոչ զնոյն անոխալ զգուշութեան ակնկալութիւն ունի։ Այլ ես, — ասեմ՝ — քանզի զնոյն ընդ սոսա ընտրեցի օգուտս, վասն որոյ և ոչ սեփական և առանձինն ինչ արարի։ Իսկ մինթէ և ոչ դու։ Եւ զնոյնդ. որ անդէն վաղվաղակի յետ Հակատամարտին հրեշտակ չոգաւ առ Փիլիպպոս, որ 'ի ժամանակին՝ աղէտից պատճառն էր հայրենեացս. և այն՝ մինչդեռ զամենայն յատաջագոյն ժամանակն 'ի բաց հրաժարէիր 'ի գործոյ անտի, որպէս գիտեն ամենեքեան։ Իսկ արդ ով է որ զքաղաքս խաբէ. ոչ ապաքէն որ չասէ զոր խորհին. և

ուամ քարոզն անէծս կարդայ իրաւամբք յամենայն ժողովս. ոչ ապաքէն այնպիսումն. և զինչ մեծագոյն ունիցի ոք ասել ապիրատութիւն զատնէ ճարտարախօսէ քան զայն՝ զի խորհուրդք իւր և խօսք չիցեն միաբան։ Արդ դու աւադիկ այդպիսի իսկ դասար։

Եւ դու տակաւին կաս բարբառիս, և խչխեն հայել յերեսս սոցա։ Համարիցիս թերևս անգիտանալ սոցա՝ թէ ով ոք իցես. կամ այնչափ քուն և թմբիր անկեալ զամենեքումբք, մինչ չկիշել զճառադ զոր հրապարակախօս եղեր յատենի ժողովրդեան, նղովիւք և երդմամբք հաստատեալ՝ թէ չկայ ինչ քո և Փիլիպպոսի, այլ թէ ես առ քինալ արկանեմ զքեզ զայդ անուն վատութեան։ Բայց անգէն իբրև մարտն պատմեցաւ, ոչինչ զայսպանէ փոյթ արարեալ՝ վկայեցեր իսկ և իսկ, և պատճառեցար բարեկամութիւն և հիւրութիւն ունել ընդ նմա, զայս անուանս ընդ վարձկանութեան փոխանակեալ։ Զի որովհետև հարթայարմար և արդարակ բարրանօք՝ Եսքինեայ որդւոյ Թմբկահարին Գլաւկոնէայ՝ հիւր կամ բարեկամ կամ ծանօթ էր Փիլիպպոս. ես ոչ նշմարեմ. այլ վարձկանեցար նմա յեղծանել զոգուստոցին. համայն և այնպէս՝ ակներև մատնիչ և գահիճ ըմբռնեալ քո, և անձին քում գուշակ նշաւակիչ գտեալ 'ի դէպս դէպս, զիս հայհոյես, և ինձ նախատինս դնես զայն ինչ իրս՝ յորս զամենեսեան մանաւանդ գտանիցես բարեկիս։

Բազում ինչ և գեղեցիկ և մեծամեծ ընտրեաց կալաւ քաղաքս, Եսքինէս, և ինձ յայլոցեաց, զորս և ոչ մոռացաւ. և նշանակ՝ աւասիկ։ Քանզի ընտրել առեալ ժողովրդեանս զոք, որ զդամբանականն ատենախօսեսցէ զկատարելոցն յայն անցս արկածից, ոչ զքեզ ընտրեաց, թէպէտ և ընծայեցար, ոչ զքեզ զքաջնձայնդ, ոչ զԴեմադէս՝ որոյ այն ինչ վճարեալ էր զհաշտութիւնն, ոչ զՀեգեսիոն [93], և ոչ զայլ ոք 'ի ձէնջ, այլ զիս։ Եւ 'ի մատչել քո և Գիւթոկլի ատամբաւորին և լրբաբար, ով Արամազդ և դիք, և 'ի չարախօսել զինեն զայդոսիկ զորս դու այժմ՝ և 'ի հայհոյել,

Digitized by Google

ոչինչ ընդհատ գործեալ զիս ընտրեաց։ Ոչ անգիտանաս զպատճառսն, սակայն և ես ասացից քեզ։ Զերկոսին զայս գիտէին սոքա. և զիմ մեծամութիւն և զկամս սրտիս որով զիրսն պաշտէի, և զձեր ապիրատութիւնդ։ Զի յորոց 'ի յաջողել իրացն՝ երդմամբ բացէ 'ի բաց յուրատատ կայիք, զնոյնս 'ի գթել քաղաքիս խոստովան լինիք։ Վասն որոյ, զնիզակեալսն 'ի խորհուրդս մտաց իւրեանց 'ի վերայ հատարակաց աղէտից՝ համարէին վաղուց թշնամիս, այլ յայնժամ նոցա 'ի ծանօթութիւն եկեալ։ Եւ դարձեալ՝ 'ի գէպ վարկանէին, զի առենախօսն վախճանելոցն, որ զնոցա առաքինութիւնն պանծացուցանելոց էր, մի յարկակից և մի հաւանրնկեր հոմանի գտանիցի ընդ ոսկերիմ ախոյեանս նոցին լինել. և մի անդ ընդ նոսին շուայտել և յաղթութեան նուագել երգս 'ի վերայ հարուածոցն Հելլենաց՝ ընդ բուն իսկ սատակիչսն, և այսր եկեալ՝ մեծարանս ընդունել. և մի կերպարանեալ ձայնիւքն արտասուել զնոցին դիպուած, այլ 'ի սերտ սքանչ վշտակից լինել։ Եւ զայդ՝ յանձինս իւրեանց տեսանէին և յիս. իսկ 'ի ձեզ ոչ. վասն այսորիկ զիս ընտրեցին, և ոչ զձեզ։ Եւ ոչ եթէ ժողովուրդն զայս, իսկ վախճանելոցն հարք և եղբարք, ընտրեալք յայնժամ 'ի ժողովրդենէն 'ի գիահանս նոցին, այլազգ ինչ. այլ զի պարտ էր նոցա մեռելոցթս առնել, իբրև առ ընտանեգունի ումեք գնացելոցն, որպէս սովոր է լինել, յիմում տանս արարին զայն։ Արգարև յիրաւի. զի ծննդեամբ մէն մի առաւել քան զիս ընտանիք էին միմեանց, բայց հասարակ ընդ բոլորեսին՝ ոչ ոք մերձաւորագոյն. զի որում փրկութիւն նոցա և յաջողութիւն առաւել փոյթ էր, նա՝ և 'ի մեռանել նոցին, որ քան մի լինէր, առաւել ևս տրամակից գտանէր 'ի վերայ ամենեցուն։

Հայպա կարգա գմա զարձանագիրս զայս, զոր աշխարհահռչակ ձուլիւք հաւանութեամբ ընտրեաց քաղաքս դրոշմել 'ի վերայ նոցա. զի տեսցես, Եպքինէս, և յայնմ իսկ՝ ապաշնորհ և քիչ չարաբան եղեալ զանձնդ և պիղծ անօրէն։ Կարգա։

Digitized by Google

ԱՐՁԱՆԱԳԻՐ

Հայրենի՛ վասն աշխարհին արկան առքա զԷնս 'ի գուպար,
Եւ ըզխորհուրդսն վանեալ փարատեցին զսոսխաց 94.
Եւ մահուամբ չափ արութեամբ կրուեալ՝ զդիս փրկեցին ոչ,
Զանգենգ հպատն ընտրեցին զամենեցուն դատաւոր,
Ի չընորհս հելլենացւոց, զի զգերութեան մի զսամեսէս
Ի պարանոցս ընկալեալ 'ի թշնամանս անկցին գաժ։
Հարցն երկիր կրբէ 'ի ծոց զհանգուցելոցն յոլով մարմնոս,
ՑԱրամազդայ քանզի այս մահկանացուաց եղ բաժին։
Դիցն է ոչ ինչ սքանչել, և յաջողել հասանկ 'ի կեանս,
Իսկ 'ի բախտէն Հրամանաց ճողոպրել չէտ ինչ երբեք։

ԼաՀս, Եպքինէս, և յայսմ խակ, ուրպէս սատուածոց միայն է ոչ ինչ սխալել և յաջողել յամենայնի. ոչ խորհրդականին եդ զզօրութիւն ուղիղ առաջնորդելոյ պատերազմողաց, այլ սատուածոցն։ Զի՛ ուրեմն, այ անիծեալ, զիա վասն այգոցիկ հայհոյես, և ասես՝ զորս 'ի քո և 'ի քոյոցդ գլուխ գործուացէն դիք։

Բաղում և այլ ինչ, ով զրք աթենացիք, չարախօսեաց դա և ստեաց, այլ ընդ մին առաւել զարմացայ։ Զի յիշատակ արարեալ անցիցն անցելոց յայնժամ ընդ քաղաքս, ոչ մտերիմ և տրդար քաղաքացւոյ միտս եդեր, ոչ արտօար կաթեցոյց, և ոչինչ այսպիսի յանձին զգածաւ. այլ ամբարձեալ զձայնն խնդագին և կոկորդալիր՝ կարծէր անշուշտ զինեն ամբաստան լինել. բայց ցոյցս տայր զանձնէ, զի ընդ վշտալից պատահարսն ոչ ինչ նման այլոց սգացեալ։ Սակայն որ զանձն առ խնամոտս օրինաց և ընկերհաշտութեան ուրնի, որպէս դա աւագիկ, թէ և ոչինչ այլ, փարթար զայս պարտի յանձին կրել, տրտմակից և ուրախակից լինել բազմութեան, և մի 'ի խնամս իրաց հասարակաց՝ 'ի թշնամեաց թեր ելանել։ Զոր դու այժմ յայտ եղեր արարեալ, զիա ամենայնի ճառատեալով պատճառ, և զքաղաքս

ինև անկեալ՝ ի հոգս և՝ ի տարտաստան, թէպէտ և ոչ խմով քաղաքավարութեամբ, և ոչ խմով ինչ կամաց խնամով սկսայք գուք օգնել հելլենացւոց։ Զի թէ զայդ ընդհակառակ լինէիք ինձ, թէ գուք ինև գիմակաց եղերուք իշխանութեանն՝ ընդդէմ յարուցելոյ հելլենաց, զմեծագոյնն յամենայն պարգևս տուեալս այլոց՝ ինձ լինէիք ընձեռեալ։ Այլ ոչ ես ինչ ասացից զայդ, — զի անիրաւէի առ ձեզ, — և քաջ գիտեմ՝ զի և ոչ գուք ներեսջիք. իսկ գա, եթէ իրաւ առներ, ոչ առ ընդ իս ոխիցն՝ մեծագունի պարծանացդ ձերոց ազամասուկ ածէր՝ ի վերայ։

Այլ զի՞ է ինձ պատուհասակոծ առնել զայդոսիկ, ուր այլև գժնդակագոյնս ամբաստան լեալ է գորա և տեսեալ. զի որ զինէն Փիլիպպանալ դատախազէ, սկզ երկիր և դիք, նա զինչ ոչ բաջաղեցի։ Սակայն, ՝ի Հերակլէս և յամենայն՝ ի դիս երդուեալ, եթէ զտուութիւն և զոսոխասէր բանից գոռուութիւն՝ ի միջոյ՝ ի բաց պարտուրեալ՝ Հնմարտիս ուշ ունել պարտ իցէ, թէ ոչք ոմանք իցեն արդարև, որոց վայելչապէս և իրաւամբք զեղեալցն ոՀիր վնաս արդասեաց՝ ի գլուխ կուտեացեն ամենեքեան, յամենայն քաղաքս դասնիցէ ոք զնմանեալսն գոնս, և ոչ ինձ. որք յորժամ Փիլիպպեայ իրք ապիկար և յոյժ յեռանեալք էին, և մեք կանխեալ ժամանեալ ապդ առնէաք, և փարելի ասէաք, և՝ ի մոի գնէաք նոցա զլաւագոյնսն, առ իւրեանցն զոշաքաղութեան զհատարակաց օգտակարսն վարանգի ետուն, խաբեալ իւրաքանչիւր զքաղաքացիս իւրեանց, և կաշառաբեկ արարեալ՝ արկին՝ ի ծառայութիւն. զԹեսալացիս՝ Դատոքոս, Կինեաս, Թրասիդէոս. զարկադացիս՝ Կերկիպաս, Հերոնիմոս, Եւկամպիդաս. զարգիացիս՝ Միրոխս, Տելեզամոս, Մնասէաս. զելիացիս՝ Եւքսիթէոս, Կլէոտիմոս, Արիստեքմոս. զմեսենացիս՝ որդիքն Փիլիագեայ՝ տեսելոյն աստուածոց՝ Ղէոնն և Թրասիկրատս. զսիկիոնացիս՝ Արիստրատոս, Եպիքարէս. զկորնթացիս՝ Դինարքոս, Դեմարատոս. զմեգարացիս՝ Պոլիդորոս, Եկիքատս, Պերիկլեոս.

Digitized by Google

զԹեբացիս՝ Տիմոյաւոս, Թէոդիտոսին, Անեմիտաս։ զեւբիա-
ցիս՝ Հիպպարքոս, Կլիտարքոս, Սոսիտարատոս . . . . Կար-
Ճատեալ՝ ոչ եղեցի ինձ օրս բաւական՝ ի զրուցել զմանուչեացն
անուանս։ Սոքա ամենեքեան, ազգք աԹենացիք, միաբեր-
հուրդք են յաչխարհս իւրեանց ընդ դոսին որ՝ ի ձեզ, ազգք
պիղծք, սուտակասպասք և սոլոչուրք, որ ծայրակուր
յոտից և՝ ի ձեռաց եդին իւրաքանչիւր զաչխարհ իւրեանց,
արքեալք զմայլեալք, և խրախմիտ մատուռակեալք[98] զա-
զատութիւն՝ նախ Փիլիպպէայ, և այժմ Ալէքսանդրի, ոչք
որովայնիւ և եւ ամենաալեաքն չափեն զերջանկութիւն. իսկ
զազգեկամի ազատութիւն և զչունեալն զոք անձանց տէր, որ
նախնի հելլենացւոցն ծագ և սահման բարութեանց էին և
օրէնք, խախտեալ և վեր՝ ի վայր հարեալ տապալեալ։

Արդ յայսմ ամենաալի և աչխարհագոյժ աղմկէ և՝ ի զըմ-
բաղէ, նա մանաւանդ՝ եԹէ չէ պարտ բարբանջել, ոմ ազգք
աԹենացիք, ՝ի մատնութենէ ազատութեան հելլենացւոց,
և քաղաքս առ ամենայն մարդիկ անընտգիւտ եղև խմով
տեսչութեամբքս, և ես առաջի ձեր։ Եւ ապա կաս հաբ-
ցանեա զիս, ընդ որում առաքինութեան ինդրիցեմ ինձ պա-
տիւ փոխարէն։ Եւ ես ասեմ՝ քեզ. փոխանակ՝ զի ուր ամե-
նայն քաղաքավարք՝ ի Հելլէնս կաչառադնաց եղեն, սկսեալ
՝ի քէն, նախ ընդ Փիլիպպոսի և այժմ Ալէքսանդրի, զիս
ոչ ժամանակ, ոչ քաղցրաբանութիւն, ոչ մեծութիւն խոստ-
մանց, ոչ յոյս, ոչ երկիւղ, ոչ շնորհ և ոչ այլ ինչ բնաւ
գրգռեցոյց, և ոչ հրապուրեաց վատարանդել ինչ յորոց
միանգամ թրաւունս և օգուտ հայրենեացս գաստեցայ։ Եւ
ոչ, զոր ինչ իրատան ետու սոցա, ձեզ նման իբրև՝ ի կշիռս
ինչ՝ ի շահն կոյս մեռ լինելով ետու, այլ յուղիվ և յարդ-
գար և յանկաչառ մտաց գործեցի զամենայն. և իրաց մե-
ծամեծաց առ ինև մարդկանս վերակացու եղեալ, զամե-
նայն ուղղմութեամբ և արդարապէս և պարզաբար տնտե-
սեցի։ Սոցին ահա սակ՝ ինդրեմ առնուլ պատիւ։

Իսկ զպարսպաչինութիւնն զայն՝ զոր դու ինձ ընդ

Digitized by Google

քարշ ածեալ գարուվես՝ և զփոքահատութիւն, զոհութեանց և զվերատից գատիմ արժանի. զի զիարդ ոչ. բայց հեռի ուրեք յիմոց տեսչութեանցս կարգեալ։ Զի ոչ վիճակառոյց քարակարկառ պարապեցի ես զքաղաքս և ոչ աղեւսաշար, և ոչ յայդմ զմեծ ինչ յիմոցս իմանամ. այլ եթէ զպարիսպն իմ արդարև յիրաւի կամիս ուշ եդեալ նկատել, գասանիցես զէնս և քաղաքս և գաւառս [96] և նաւահանգիստս, և նաւս և երիվարս և զոսկին վերամարտիկս։ Զայսոսիկ հանի արկի կանգնեցի ես պատուար շուրջ զԱստուկեաւ, որչափ էր կար զօրութեան մեռաց մարդոյ, և սոքիմբք պարապեցի զաշխարհն, ոչ զչքնաղատ եւեթ Պիրէոնի կամ զոստանիս։ Եւ ոչ ես ինչ վրիպեցի 'ի հաշուիցն Փիլիպպեայ, ծն անդր փարդաստ, և ոչ 'ի հանգերձանացն. այլ նիզակակցացս զոլք և զօրավարք՝ 'ի բախտէն։ Զի՞նչ այդոցիկ ցուցակութեան հանգէս։ Պայծառ և յայտանչան. բայց գէտ ակն կալարուք։

Ստերիմ քաղաքացւոյ զի՞նչ արժան էր առնել, ամենայն խնամով և փութով և արդարութեամբ 'ի վերայ աշխարհին առաքիներլոյն զի՞նչ։ Ո՞չ զԵւբիա 'ի ծովէն կուսէ՝ առաջի Աստիկոյ կանգնել ամբարտակ, և 'ի միջերկրեայ կողմանէն՝ զԲիտվտիա, և 'ի պելոպոնիսական ծագաց՝ զսահմանորդս իւր [97]. ո՞չ զպէտս համբարոցն հոգալ, զի համակ ընդ մարդս բարեհամաց մինչև 'ի Պիրէոն հասանիցէ. և յորոց մեզն կային՝ զկէս պահպանել՝ առաքելով Թիկունս և խօսելով և գրելով զարժանն, զՊրոկոնեսոս [98], զԲերոնեսոս, զՏենեդոս. և զայլս առնել յանկս 'ի մեզ և նիզակակիցս, զԲիւզանդիոն, զԱբիդոս, զԵւբիա. և զզօրս Թշնամեաց զհաստատարուստս քակտել 'ի նոցանէ, և որոց պէտք ինչ էին քաղաքիս՝ զայնս բովանդակել։ Այս ամենայն պաշտեցաւ ձեզ իմով առաջարկութեանցս հրամանաք և իմով վարչութեամբս. զորս, ո՛ ալք աթենացիք, եթէ առանց խանտաւորութեան կամիցի ոք նկատել, գտցէ և ուղիղ խորհեցեալս, և գործեալս ամենայն արդարութեամբ. ոչ

զիմիք պատեհ դերև արարեալ, ոչ ոգիտացեալ և ոչ վասրանդի տուեալ լինէին, և որ ինչ միանգամ 'ի կարի և 'ի խելամտութեան միոյ առն էր՝ ոչինչ պակաս արարեալ։ Իսկ եթէ աստուածոյ ուրուք ոխութիւն, կամ բախտին բանութիւն, կամ զօրավարացն վատթարութիւն, կամ չարութիւն դաւաճանաց քաղաքացոյ ձերոյ, կամ այս ամենայն միահաղոյն, ամենայնի հաստատանէր վիթար, մինչև յետոյ ընդդէմ կործանեաց, զինչ պետաս 'ի Դիմոսթենէս։ Իսկ եթէ, որպէս ինչ ոք ասս էի առ ձեզ ըստ իմում պայմանի, 'ի մէն մի հելլէն քաղաքացն մի եթէ այր գտանէր, նա աւանիկ եթէ այր մի եթէ 'ի Թեսալիա, և մի այր յԱրկադիա կայր ընդ իս միախոհ, ոչ ոմիք 'ի հելլէնացւոց նեղեալ և արտաքոյ Դրսանցն՝ ժամանէին չարիքս այս. այլ ամենեքեան ազատք և ինքնօրէն ազգիկամիք, ամենեին աներկիւղ և անհոգ, երջանիկք և երանիք 'ի հայրենիս իւրեանց նստէին, այսչափ և այսպիսի բարեաց փոխարէն՝ ձեզ և այլոց ամենացւոց ինձ կալեալ չնորհս։

Եւ զի ծանիջիք, թէ յոյժ իմն 'ի վայր են բանքս քան զերացն արդիւնս՝ առ 'ի զգուշութենէ նախանձու, մի ասասցեն զայսոսիկ, առ ընթերցիր զհանգէս համարոյ օգնութեանցն որ յիմմէ հրամանաց։

ՀԱՄԱՐ ՕԳՆԱԿԱՆՈՒԹԵԱՆՑ

Զայս և զայսպիսիս, Եղբինէս, պարտ է գործել բարւոյ և քաջի քաղաքացւոյ, — յորոց 'ի յաջողելն, ովք երկիր և գիք, գոյր մեզ մեծամեծս լինել անշուշտ. և իրաւամբքն լինել՝ յոր և կիսց էր. իսկ եթէ ընդդէմքն պատասխեցին, կայ մնայ գոնէ համբաւ բարի՝ և անբասիր լինել քաղաքիս, և ոչ կամաց նորա, այլ բախտին մեզ գնել՝ որ այսպէս կշռեաց զերան, — և ոչ թէ, երդնում յԱրամազդ, յետոյ ընկեցեալ զօգուտ քաղաքին՝ և թշնամեաց մատեալ 'ի վարձու, փոխանակ իւրոյ աշխարհին՝ ոտոխացն գիպող ժամու սպասս առ-

Digitized by Google

նել. և ոչ, որ զիրաց ոք արժանի քաղաքին բուռն հարեալ իցէ խօսել և հրաման տալ և ընտրեալ պինդ կալ մնալ'ի նոսին, յաչաղել զայնպիսին. և թէ ոք առանձինն ինչ տրրտմեցուցեալ իցէ՝ զայն քէն ունել'ի մտի և ոխս պահել. և ոչ'ի վերին երեսս անօրէն և մեղմիկ հանդարտութիւն ցուցանել, որպէս բաղումք անդամ առնեն դու: Քանզի է իսկ է արդարամիտ հանդարտութիւն և օգտակար քաղաքիս, որով բաղումք'ի քաղաքացւոցդ վարիք՝ պարզմտութեամբ. այլ ոչ դովին վարի և դա հանդարտութեամբ. ծն անդր, ամենևին իսկ ոչ. այլ յետս կացեալ'ի վարչութենէ՝ երբ և նմա հաճոյ թուիցի, և յաճախ թուի, դէտակն եգեալ սպասէ՝ թէ երբ յափրացեալ տաղտուկ լինիցիք'ի ստեպ և անդադար խօսողէ ուանքէ, կամ եթէ հակառակ ինչ'ի բախտէն պատահեաց, կամ դժուարին ինչ այլ'ի վերս եկ, որ ոչ սակաւ են'ի մարդիկ, անդ յայնժամ'ի հանդարտութենէ անտի յանկարծակի իբրև այս մի եղեալ ոստուցեալ՝ երևի ճարտասան. և խրոխտաձայն պոռոտ բարբառոյն հանդէս արարեալ, և հաւաքեալ բայս և բանս՝ տղխալեալ տողէ զնոսին՝ համարձակ առանց սրթալոյ և հինինալոյ և ոգի կլանելոյ. յորս ոչ շահեկանութիւն ինչ է և ոչ բարւոյ խիք գիւտ, այլ վիշտ ուստ և է քաղաքացւոյ, և հաստակաց խայտառակութիւն:

Սակայն այդմ փութոյ և խնամոյ, Եպքինէս, եթէ յարդարամտութենէ էին և զաշխարհին օգուտ մեծարելոյ, պարտ էր բերել պտուղ բարի և աղնիւ և բոլորեցուցոյ արդասաւոր. դաշնաւորութիւնք քաղաքաց, արծաթոյ պաշճառանք, շահավաճառի յօրինուածութիւն, օրէնդրութիւնք օգտակարք, յարուցելոց թշնամեացն ընդդէմ կաղմութիւնք: Զի այդր ամենայնի էր անդ ուրեմն երբեմն խոյզ և խնդիր. և անցեալ ժամանակն յոլովս եռ պատճառս առն բարւոյ և քաջի. յորս դու ոչ ուրեք երևեցիս՝ ոչ առաջին, ոչ երկրորդ, ոչ երրորդ, ոչ չորրորդ, ոչ հինգերորդ, ոչ վեցերորդ, և ոչ յոր և ասիցեմք կարդ.

Digitized by Google

ՏՆ և ՕՆ ոչ, յորս բարգաւաճութիւն ինչ մերոյ աշխարհիս լինէր։ Զի որ նիզակակցութիւն քով ջանիւք հաստեցաւ քաղաքիս, որ օգնականութիւն կամ որ կահումն բարեկամութեան կամ փառաց, որ հրեշտակութիւն, որ սպասպաշտաման՝ որով յառաւել պատիւ վերացաւ քաղաքս. զինչ 'ի մերոց աստի կամ 'ի հելլենականաց և յօտարաց՝ որոց գամ մի վերակացու եղեր՝ 'ի քո ձեռն ուղղեցաւ. որ այն նաւք պատերազմիկք, որ զէնք, որ նաւաց հանդերձութիւնք. զինչ նորոգումն պարսպաց, զինչ առնուձիոյ կազմութիւն. յիմ իմիք յամենայնէ պիտանացու ինչ ոք իցես դու. զինչ գոյաւորաց կամ կարօտեալց՝ քաղաքական և աշխարհահոգ ինչ առ 'ի քէն նպաստաւորութիւն արծաթոյ. և ոչ ինչ։ — Բայց, այր դու, եթէ և ոչ մի ինչ յայդցանէ, սակայն գոնեայ խնամ և յօժարութիւն։ — Ո՞ւր, երբ. դու, ով անիրաւդ քան զամենայն, որ և ոչ յորժամ որոց գամ մի բարբառ արձակեալ էր 'ի բեմին՝ հանդգնակեցին 'ի փրկութիւն, և հուսկ ուրեմն Արիստոնիկոս՝ զարծաթն անդամ ժողովեալ իւր 'ի տոյժս տուգանացն 99, և ոչ յայնժամ երևեցար, և չեռուր ինչ. ոչ առ չքաւորութեան. զի զիմդ, որ ժառանգեցերդ զինչս անեղոյ քոյ Փիլոնի՝ առաւել քան զտաղանդաց հնգից, և առեր կուշտ տաղանդս կրկին՝ որ անկան քեզ հանգանակ 'ի գրչխաւորաց զովոզակից դատակարգացն, փոխանակ զի խանդարր ածեր յօրէնսն նաւակատուցական։ Այլ զի մի բան 'ի բանէ բարբառեալ՝ յառաջիկայիցն. ազմկիցիմ, թողից զայնոսիկ։ Բայց յայտ է յայտցանէ, զի ոչ առ 'ի չգոյէ չէտուր, այլ զգուշացեալ՝ մի ինչ հակառակ գործեալ այնոցիկ՝ յորոց պէտս զամենայն ինչ 'ի գործ արկանէիր։ Իսկ արդ դու յիմ աչխոյժ և կայտառ, և երբ պայծառափայլ։ Յորժամ ընդդէմ ոգայ ասել ինչ պիտոյ լինիցի, յայնս ոգեղբարբառ, քաջուշեղ, կատակ գերագոյն, ողբերգակ թէոկրինէս 100։

Եւ ապա՝ վաղնջուց արանցն քաջաց առնես յիշատակ.

Digitized by Google

և բարուրք առնես։ Սակայն ոչ է իրաւացի, ով արք ամենայնիք, առնուլ 'ի ձէնջ զհաւասարի հաճութիւնդ ձեր ընդ վախճանեալսն, և ընդ նոսին 'ի քնին և 'ի կշիռ արկանել զիա՝ որ 'ի միջի ձերում կեամ։ Զի ով ոչ գիտէ, լիէ ընդ ամենեսին որ կենդանի են՝ առաւել կամ նուազ տեղի ունի նախանձ, իսկ զմեռեալսն՝ և 'ի թշնամեաց ոչ ևս առեայ։ Եւ զի այս այսպէս է անդատին 'ի բնութեան, այժմ ես ընդ առաջինն քան զիս կշռեցայց և ընկեցայց. քաւ, մի երբէք. զի ոչ արդար և ոչ հարթ ինչ է, Եպիֆանէս. այլ ընդ քեզ և ընդ այլում ամենայնի՝ զո՛ ոք և կամիցիս 'ի կամակցացն քոց և կենդանեաց։ Տես ևս, արդեաք դեղեցիկ և լաւ իցէ քաղաքիս, վասն առաջնոցն երբախտեաց մեծամեծս յոյժ լինելոյ, մինչև ոչ ումեք զորշափն կարել ասել, զգբաեալսն յայժմու կեանս՝ յապախտիս և յարհամարհանս գրել, թէ ամենեցուն՝ որոց 'ի բարուրք մտեալ ինչ գործիցեն՝ պատիւ և մարդասիրութիւն 'ի սոցանէ ժառանգել։ Եւ սակայն, եթէ պարտ իցէ ասել զամենայն, յորժամ ուղիղ ոք հայիցի 'ի քաղաքավարութիւն իմ և յընտրութիւն, հաւասարս գտցէ և համակամս ընդ այնր ժամու գրուածելն որերոյն. իսկ զքոյդ՝ ընդ նոցին զրպարտչացն։ Զի յայտ իսկ է թէ և յայնժամ կային դարձեալք ոմանք ժամանակակցայ և առաջնոցն գովելք, չարայաչաղք և քո գրուծակիցք։ Եւ ապա ոչ ինչ համբուն նման նոցին ասես զիս. իսկ դու նման, Եպիֆանէս, և եղբայրդ քո, և այլ ոք բնաւ յայժմու ճարտասանից. զի ես ոչ զոք ասեմ։ Այլ զկենդանին և զորս 'ի նմին կարգէ, ով քաջդ, զի մի այլ ինչ ասացից, ընդ կենդանին 'ի հարցփորձ մատոյ՝ որպէս զայլն ամենայն, զբանաստեղծս, զպարարտս, զրմբշամարտիկս։ Փիլիսոփոն 104, քանզի քան զԿարիստեանն Գլաւկոս և քան զայլս ոմանս 'ի յառաջագունեցն ըմբշաց կնատագոյն էր, ոչ վասն այնորիկ անպատակ ելանէր յՈլիմպիայ. այլ քանզի ճարտար քան զմտեալսն յասպարէզ անդր առնա՝ կռուէր, պատկ առնոյր և յաղթող քարոզէր։ Եւ դու զիս առ այժ-

Digitized by Google

մու Հարստարախօսաքն տես, առ. քեռ, առ. որում և կամիս 'ի բոլորեցունց. ոչ խորշիմ յուսեալք։ Յորոց մինչ, մինչդեռ առաջի կայր զոգատակարապային քաղաքիս ընտրել, և աշխարհիս ինամքն՝ բարեյորդաբ ամենեցուն 'ի միջի կային, քաջախօսն ես երևեցայ, և ամենայն ինչ խմով հրամանաքն և օրինաքն և պատգամաւորութեամբք անօրինէր. իսկ 'ի ձէնջ՝ չէր ոք ուրեք, բայց եթէ յոտնհարութիւն սոցա պիտոյ ինչ լինէր։ Իսկ իբրև եկին ելին ընդ մեզ, որոց չէր պարտ պատահել, և ոչ ևս խորհրդականաց էր ինդիր, այլ տրբանեկաց հրամանաց, և ընդդէմ հայրենեաց կոչմ և պատրաստ եղելոց 'ի վարձկանութիւն, և ախորժելոց 'ի պրակել այլոց, յայնժամ դու և մեն մի 'ի գոցանէ յօրինեալ և մեծ և պայծառ տէր երևիարաց. իսկ ես՝ անտատ, խոստովան լինիմ, այլ քան զձեզ առաւել առ սոսա ինամոտ և մտերիմ։

Ի բնէ համառտ քաղաքացւոյ, ով արք աթենացիք, զերկուս զայս պարտ է յանձին բերել, — զի այսպէս ասել 'ի խօսելս զանձնէ՝ աննախանձադոյն է. — յիշնանութիւնն՝ զառաքինւոյ և զզիսաւորի կարգն պահել քաղաքիս. և յամենայն ժամ և 'ի գործ՝ զիմաստութիւն. զի այսմ բնութիւնն տէր է, իսկ կարելոյն և զօրելոյն՝ այլ ինչ իրք։ Արդ զդա առ իս մեացեալ գտանիցէք մինչև 'ի սպառ։ Եռ տեսէք։ Ոչ 'ի պահանջիլ գլխոյս, ոչ յածել թափել 'ի վերայ իմ զամբիկամիտնեան գատաստանն, ոչ 'ի սպառնալիսն, ոչ 'ի խոստմանցն սաւետս, ոչ յարձակելն յիս զնզովեալգ զայդոսիկ իբրև զդազանս, ոչ երբեք զառ ձեզ միամտութիւնն ետու ես վտարանդի։ Զի խակզանէ հետէ՝ անդէն և անդ զուզիլ և զարդարամէտ ճանապարհ քաղաքավարութեան ընտրեալ կալայ. պատուոյ, ճոխութեան և փառաց հայրենի աշխարհիս սպաս տանել, զնոսին աճեցուցանել, 'ի նոսին համակիլ։ Ոչ ես 'ի յայնոսուածս օտարաց՝ ուրախ և զուարթ ընդ հրապարակն ճեմիմ, այլ կարկառեալ և աւետս տուեալ այնոցիկ՝ յորս ակն ունիմ թէ առնոսա պատմացեն, իսկ զուրախութիւնս քաղաքիս՝ սոս-

կալեաք լսեմ և հեծութեամբք և զերկիր նշմարելով, որպէս
ամպարիշտքդ այդոքիկ, որ զքաղաքս գտրովեն՝ որպէս թէ
ոչ նովին զանձինս իւրեանց գտրովեցեն. աչք նոցա 'ի գուրս
հային, և յորս 'ի թշուառանալ հեյլենացւոց՝ այլ ոք 102
երջանկացաւ, զայնս գովեն. և պարտ է, ասեն, սկել՝ զի
մինչ 'ի սպառ յաւերժացին։

Բայց մի ոք 'ի ձէնջ, ո՛վ դիք համարձէն, մի զայսոսիկ
յանձն առեալ ակնարկեացէ, այլ՝ մանաւանդ և 'ի նոսին
միտս իմն և խնամս ազգեսջիք աղնուագոյնս. իսկ եթէ այն-
պէս կացցեն մնացեն անբժշկելիք, զմեն մի իւրաքանչիւր
կորուսջիք զնոսա, և տարաժամ սատակեսջիք ընդ ծով և
ընդ ցամաք. և մեզ մնացելոցս ուրք արագահաս փրկու-
թիւն 'ի սպառնալեաց երկիւղիս, և անընդոստ խաղաղու-
թիւն։

Digitized by Google

Digitized by Google

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ ԻՆՉ

Ի ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՃԱՌԻՍ

Թիւ. 1. Բանք երդմանն՝ զոր պահեալ է Դիմոսթենի 'ի ճառին ընդդէմ Տիմոկրատեայ, այսպիսի ինչ են. «Եւ դատաւորքն և չաստաղոքն՝ երկոցունցն միապէս լուայց։»

2. Զի Եսքինէս, եթէ չշահէր զկէս և զկիսգերիր մասն քուէից, տուժելոց էր հազար դրամ կամ գահեկան, որ առ նորա մեծութեամբն յոչինչ համարելի էր։ Եւ այս իսկ է զոր ասէն՝ թէ անխելի յիմարէ դատախազէն։ Իբրու ոչ ինչ կորուսանել, ոչ յընչէին և ոչ 'ի չքոյն և 'ի մեծարանացն. յորմէ բնաւ իսկ թափուք զնա տայ այդուխմանալ։

3. Ըստ սմանց մարթի նկատել 'ի բնագրին, զի առ Հելլէնան ոչ տակաւ բանք՝ այլափոխիկ յորջորջանք են 'ի գտանէկուսոյ կամ 'ի մարտէ առեալք. զի զամբաստանեալն կամ զդատապարտեալ՝ ասեն փախչող, և զդատախազն՝ հալածիչ։

4. Հրամանն կամ կամն ասէին զդատաւորագոյն խորհեալն յատենէ աւագանւոյն. բայց զվճիռ Փաստաստուրեանն տալ անկ էր ժողովոյ ժողովրդեանն։

5. Ըստ հելլէն ձայնին՝ իբրև հանդէս իմն ճեմելեաց. անտի առեալ, զի 'ի սպանդարանական տեղոն շուրջ ածէին վայելք կամ տայլիք արս գինեհարեալս, որ խնեղաբար օրերս գնեին անցաւորաց, տային և առնուին յիշոցս. և օրէն էր անդ զնամնայն դատաւորքն ժան լոյտս աստի անտի վայրենաբար ժայռքեալ յերեսս մեռելոց։ Եւ այս ակիզն ասի լեալ թատերախաղուց, յորս գուսանամուտ էր երբեմն և Եսքինէս։

Digitized by Google

6. Յանձնեաց Դիմոսթենէսի զբանս իւր, որպէս և ասաց յայսմ վայրի, ակնարկէ յառաջին արուեստին Եպիքնեայ, զի էր ընդ երկար ժամանակ կատակագուսան ի տեսարանս ազգերգակացն։

7. Ի գաստակնքել Կաեսիփոնի ի տուգանս, պարտապան լինէր հաստատակաց գանձուն. և մինչև ի հատուցանել զպարտն՝ անպատիւ ապիրատ լինէր, այս է՝ մերկ յամենայն քաղաքական իրաւանց։

8. Փիլոկրատէս բարեկամ էր Եպիքնեայ, որ և տուեալն էր ժողովրդական զերատ խաղաղութեանն ընդ Փիլիպպոսի։

9. Յերեսաց հանդամանացն Նիլոպոս չկամեցան սթենացիք օգնական լինել փոքրիկասցուց, թէպէտ և ուխտակից իւրեանց էին։

10. Մեսենացիք, արկադացիք և արգիացիք, որ ի մի ուխտ միաբանութեան մնային էին։

11. Ջնուազ իշխանութեան գլխաւորացն խմանայ, զորս կարգեալ էր լակեդեմոնացւոց ի քաղաքն Նիլոպոս. յայնմանակ թեւաց ի Լեւկարա կործանեաց զնոսին։

12. Մի էր սա ի նշանաւոր կատակագուսանաց ժամանակին, և յոյժ մեծարոյ յաչս Փիլիպպոսի։

13. Երկոքեան սոքա ասմկավարք էին, հերձուածապիրք ամբոխին և կողմնակիցք Եպիքնեայ։

14. Եւրիքատես եղեսացի, առեալ արծաթ բազում՝ ի Կրեսսէ առ ի զօրաժողով առնել, հատուածեալ անց ի կողմն Կիւբրաի։ Անուն նորա յառակս եղև ընդ ամենայն Նիլոպոս՝ նշանակել խաբէբայ, առ ամենայն ոճիր ներդութիւն բաւական։

15. Ասեալք էին սոքա կառուցեալք առ ծովեզերքն Թրակիոյ. և էին ողբալին Կերսոբլեպտեայ՝ գաշնակցին սթենացւոց, յորոց կալին գումարք պարհասանք յերկուս ի հոգանէ։

16. Յայգ անուն կոչէր՝ որում յանձն էր շէն պահել զշինուածս տեսարանին. և առնոյր արծաթ ի հանդիսականացն։

17. Ամենայն ցեղք ունէին կարգաւ զգահերիցութիւն, զոր և նահապետութիւն կոչէին, զաւուրս երեսուն և հինգ։

18. Ի ժողովի ժողովրդական, որպէս ասացաք յԵպիքնէս, զհատանութիւնն յայտ առնէին համբարձմամբ ձեռաց, յորմէ և ձեռնադգութիւն անուանեալ կամ ձեռնաբարձութիւն. նոյն ձայն է որ այլուք ձեռնադրութիւն ասի, և ընտրեալն՝ ձեռնադրեալ։

19. Զօրագլխաց և նահապետաց միայն էր իշխանութիւն գումարելոյ զանազանս ժողովս ժողովրդականն։

20. Քանզի յետ ասմանն Թրեալ՝ Ալեքսանդր պահանջեաց յաթենացւոց տալ ի ձեռս իւր զԻփիմոսթենէս։

21. Թեսալացիք, կամ՝ որ նոյն է՝ Թեսալացիք արքամարքն էին յաչս այլոց հելլենացւոց վասն անժուժկալութեան իւրեանց և վայրենութեան։

Digitized by Google

22. Ակնարկէ յառաջն փերեսացուց քաղաքին, և Պանգոսիոյ, և Եվասէայ, և այլոց։

23. Կամի ասել զՀրեշտակութիւնս իւր 'ի Պետրոսնէս և յԱմբրակիա։

24. Ցաղգութիւն և ընտանութիւն Հելլենաց, քանզի յաճախ յուզէր գնացութիւնսն գիպէր ընդ օտարս՝ յորոց ասպիսկանութիւն գտանէին, յայն սակս հիւրասիրեան բազմամանգամ՝ նշանակէ զբարեկամութիւն նոցա ընդ օտարս՝ և առանց իրիք ասպիսկանութեան պատճառս և առիթ լինելոյ որոց հիւրքն կուշեին միմեանց։

25. Զվարձկանն կամ վարձաւոր՝ հելլէն լեզու շեշտոյսը ձայնիւ μισθωτός փոխոգոս ասէ. բայց աւանդեալ 'ի հնոց մեկնչաց, թէ Դիմոսթենի խարամանդ խարհրդով 'ի հարցման անդ այլափոխեալ իցէ զայն 'ի նախայարաշեշտոյսը, և հնչեալ յասանի անդ փոխոգոս. որպէս զի գտաւաւրդ և ժողովուրդն, թէ և ոչ 'ի վկայութիւն իրացն ճշմարտութեան, գէթ առ ուղղելոյ զվրիպակ ասնոնախօսին, որպէս ասելոր էին, ընդասաւցեալ ազատպակեցին միաբարբառ. փոխոգոս, փոխոգոս։ Ցայտ եղև թէ ընդէր և 'ի հայուսմն նմանաբար շեշտեցաք վերոյասոյ։ Բայց այսմ հարիմանաւորութեան Դիմոսթենի, և կամաւոր փոփոխութեան շեշտին 'ի բնագրի անդ խրատ՞, չեն հասու եղեալ ոչ ասկաս ասպագրողք և թարգմանիչք և մեկնիչք ճաւաս։

26. Վերակացուք հանդիսից տեսլեանցն տասն թասով, մասակաբարք էին արծաթոյն կարգելոյ 'ի պէտս ասնոյն և ասմնոյն արարողութեանց հասարակաց։

27. Սոքա վկայք կոչին, թէ գիր ամբաստանութեանն տասուգիմատուցաս առ ատենն։

28. Զանմիջոցս, զՊիգնա, զՊասիդէս։

29. Ի պաշարման Մեթոնի կորուսեալ էր Փիլիպպոս զմի ակնն. և 'ի կռուին Լիւրիկեցւոց՝ վիրաւորեալ յաջ իւր և յանրակ, խակ 'ի ձեռանն՝ 'ի մարտին Տրիպալոյ։

30. Զօրավար աթենացի էր յիսանիդ, որ 'ի Փերսանէս մեկեաց մարտ ընդդէմ Փիլիպպեայ։

31. Փիլիպպոս երեքս փարձ փարձեաց 'ի վերայ Եւբիոյ. 'ի վերջնում պատերազմին՝ եղեալ յաստաղնում ասի հարիւր ինն Ուլմպիադին, հարիւրատակ արար զՊարթամս, կարգեաց երիս բռնաւորս Յեր-սարիա, և ՅՈրեսս յոգանս։

32. Ի նմին ասի վերջին պատերազմին Փիլիպպեայ Յեւբիա՝ հնաբնագաս առնուլ զՊեդարա. որ դուռն բանալոյր նմա 'ի Պելոպոնէս։

33. Զմիւսոցին, 'ի հեռանալ ազգայնոյն իւրեանց Տելիփոսի, աւար հարկանէին դրացիք նոցա. անսի՝ զանանոյն ինչ զոր յատ և յապատ կամակարելոյն մնասեալ լինէր, առակարանելով միւսոցուց աւար կուշեին։

Digitized by Google

34. Լեռնաս կղզի եղեան ծովուն աթենացւոցն էր։

35. Սիլիմբրիացիք՝ երբեմն դաշնակիցք աթենացւոց, էին յայնժամ 'ի հնազանդութեան Բիւզանդիոյ թրակացւոց. զի էր Սիլիմբրիա, որ է այսօր Սիլիվրի, քաղաք Թրակիոյ։

36. Այն հրեշտակութիւն եղև յերկրորդում ամի հարիւր և ինն Ոլիմպիադին. մի էր 'ի նոցանէ և Դիմոսթենէս։

37. Այս արշաւան 'ի վանեալ Յեւբիոյ զբռնաւորսն՝ զօրավարութեամբ Փոկիոնի եղև։

38. Ցայս ամուն յորմէր քուրմն Պոսիդոնի 'ի Մեգարա՝ քաղաք գլխաւոր բիւզանդացւոց։

39. Սպառազէնք՝ էին հետեւակ գունդք վաւերալք ամենայն զինու զարդու պատրաստութեամբ։

40. Դուիրակութիւն կամ ապցելութիւն կոչէր՝ մեծ և հանդիսաւոր հրեշտակութիւնն, զոր ազգք ազգք առաքէին 'ի տեսիլ խաղուց կասդրդիցն Նեղապոլ։

41. Այդ ամենայն քաղաքք էին Քերսոնեսոսի Թրակիոյ։

42. Ակնարկէ յընկերական պատերազմն՝ զոր Քիոսիս հանդերձ և Հռոդոսիս մղեցին բիւզանդացիք ընդդէմ Աթենայ։

43. Ընդ կուսուցան Թեբացիք ընդ Լիւսանդրի՝ որ և անկաւ. կոչեալ էին իւրեանց յօգնութիւն զաթենացիս, որոց գնացեալ հասին ընդ առաջնորդութեամբ Թրասիբուլոսի։

44. Աթենացիք, բիսոտիացիք, կորնթացիք և արգիացիք դաշնաւոր եղեալ՝ զդէմ կալան Պարսից ուժ ամ 'ի պատերազմն կորնթացկան ասացեալ, զի մեծ առապարէզ նահատակութեանցն Կորնթոս էր։

45. Որ եղև 'ի յետին ամս պելոպոնիսեան պատերազմին, սկսեալ 'ի չորրք հարիւր տասն ութն յառաջ քան զՔրիստոս։ Զդեկելիս ամբարտաւանացեալ էր լակեդեմոնացւոց առ 'ի զետեղել մեդ, և անտի գիւրաւ ասպատակել Յունիկեասան։

46. Ցարշաւել Եպամինոնդայ 'ի Լակոնիա, առաքեցին աթենացիք զիփիկրատէս բիւրաւ մի և երկու հազար արամբ 'ի Թիկունս օգնականութեան սպարտացւոց։

47. Թեմիստոքլ բռնաւոր Երեւորիոյ յափշտակեալ էր զՈրովպոս յաթենացւոց 'ի խոր խաղաղութեան, գործակից ունելով զԹեոդոր։ Ցանձն առեալ փաբանեցին առանձել զքաղաքն 'ի Թեբացիս, մինչև ժողով ամփիկտիոնեան առնէին եղեալ՝ 'ի դատաստան. բայց ապա սաքա ոչ հաւանեցան տալ 'ի գուրս զքաղաքն։

48. Ի սովորութենէ զօրութեամբ իմանի հինգերորդ մասին. զի եթէ ամբաստանն չգտանէր յիւր կողմն զկէս և գէթ զհինգերիս մասին քուէից, դատապարտէր 'ի տուգանս. օրինակ ի՝ն, եթէ 'ի հարիւրից չստանայր եօթանասունս։

49. Առ 'ի կազմել զնաւն պատերազմի՝ զհազար երկերիւր ընչե-

Digitized by Google

զաղդի քաղաքացիս բաժանեալ էին 'ի քսան զովղուԹիւնս կամ գա-
սակարգս. յորոց իւրաքանչիւրքն 'ի վարԹսուն քաղաքակցաց յօգեալ՝
պարտէր կազմել երիսուսան կամ գոնե տասն նաւս: Գլխաւորք զո-
վղուԹիւնցն ընտրեալ զդիրքն էին:

50. Մինչ չէ օրինաց իրիք կամ հրամանի վճռեալ 'ի ժողովգնեն,
եԹէ ոք 'ի քաղաքացւոց հակառակ ինչ զայն համարէր առաջնոց օրի-
նաց, պարտէր երդմամբ հաստատել՝ ԹէԹ ամբաստան լինելոց է 'ի ժա-
մու գՀօրէ բանին. այսմ երդման՝ անուն կոչէին Եդդոսի յանդ կամ
յանդ ՊՀ: Պաշտպանին օրինաց մարԹէր ապաստան առնել զայն՝ մինչ չէ
'ի գաստ մատուցեալ. և զայս կոչէին Խողոլ ընդ յանդ Եդդման:

51. Զպահանջելին հարկս 'ի քաղաքացւոցն՝ բայց ըստ այսչափ կամ
այնչափ մասին գոյին, զոր անուանէին Ինչ ըստ սակի: Յառաջնում
կարգին կամ 'ի գաստն՝ մասն այն էր հինգերորդ մի եւեթ:

52. Ղատապարտքն անուանեալ նաւակապարտք կամ քաջարիկք՝ որ
անբաւական գտանէին 'ի հատուցումն սակին, աղերս արկանէին ժա-
ղովգեանն՝ ոստ մի ՁիրԹենի մատուցեալ եդեալ 'ի բագինն յոր գոհքն
մատչէին 'ի սկիզբն ժողովոցն. կամ ապաստան լինէին 'ի մի հեռանն, և
'ի բագինն Դատեմեալ ՊուՀիքիոյ 'ի Պիրեանի:

53. Պաշտօն ատենակեանցս էր փոյթ տանել կազմուԹեան և հան-
գերձանաց նաւացն ամենայն սարքաւ, զի պատրաստ գտանիցին երբա-
նել 'ի ժամու. և զոր յիսունեալ և ապաժաման գտանէին 'ի նաւաբա-
ջաց անտի, իշխանուԹիւն էր նոցա ըմբռնել և կապել զնոսա:

54. Այսպէս կոչէին զօրէնսն զոր ամբաստանօղն օրինաց իրիք
կամ հրամանի՝ տայր գրոշմել դեմ ընդդեմ որոց հակառակն կարծէր՝
'ի միում տախտակի. զի միով ակնարկուԹեամբ տեսցին դատաւորք
զառաջին օրէնսն և զնորն որ նոցին ընդ հակառակս երբեմն՝ եղծանէին
զմիմեանս:

55. Տես զտեղեկուԹիւնն 5 և 6:

56. Փանգի զնաւանն կամ զկանգրիս՝ փայտ ասէ ընդդիրն, է որ
ոՀ խօսից իմանայ, փոխանակ ապէս կամ պարտանդ փայտեայ ասելոյ.
և օրինակ առնու զքերդոզի ասելն. Հեղուսք նրա՝ դաշնաւորանաք և
ասկովք. (Վիրգիլ). փոխանակ պարզ ասելոյ սակի դաշնաւորանաք: Բայց
այլք անուշ իմանան և Թարգմանեն:

57. Որ անարդ և անպատեհ համարեալ էր գործ յայնժամ առն
ազատի:

58. Ոչ 'ի պատմուԹիւնս և ոչ 'ի դիցարանուԹեան գտանի ուրեք
յիշատակ կալամիտս գիւցազին, զոր վերոյգրեալ յօգեալ և յարմա-
րեալ են ասա ոմանք. այլ ուղղին արդի հմուտ քննագանք, ընդ որս
և Տիմոսաֆ, ուսեալ 'ի Փոսիոսէ, որ բժիշկ ոմն Հերոմս անուն ասէ
լեալ. որ ըստ յոյն բանին՝ գիւցազն կամ քաջ, նշանակէ: Իսկ կալա-
միտսն, անուն կարծեցեալ անգոյ գիւցազնին, 'ի յունէն 'ի մեզ ե-

Digitized by Google

ղեղնաբնակ լսի. զի Թերեա 'ի շամբուտս ուրեք բնակէր Հերովդ՝ յանդգնագոյն վայրի։

59. Բնագիրն ասէ ἐ՛μπουσα Ὑσμωνία. որ էր անուն խառնագազան յուշկապարիկ իմն ցնորից, զոր 'ի Հեկատեայ համարէին առաքեալ, և ամենայն ազգի ազգի կերպարանաց ընդունակ։ Իսկ անուանն Գլաւկոթեա, որպէս Թէ խաժակն իմն կամ ծաւի աստուածուհի ասիցէ։

60. Ամենայնիք 'ի վաղ ժամանակաց հետէ սեփականեալ էին ըզաստուածսն Ապոլլոնի 'ի Դելոս. դեղատայնիք պահանջեցին զկրաւունս իւրեանց յամենիկոխոնեան ասնէն։ և յայն տակս յղեցաւ Հիպերիդէս՝ պաշտպան կալ ամենայնոց։ Եւ այս ընտրութիւն, ասէ, եղև 'ի սեղանոյ որբուրեանն առնլով զքուրայս վճռոյն, որ առաւել պատկանելի էր։

61. Որ եկեալ էր յԱմէնս 'ի ժամանակի զի խորհուրդ առնուին ազատել զԵրբիա, և Թիկունս օգնականութեան առաքել 'ի Հելլեսպոնտոս։

62. Երկակի իմաստս տայ ձայնդ. մի՝ երդիծանոզ, զի մեծավերջական չափովքն յօրինէին առանք երդիծանութեանց. և միւս՝ խառնարբէլ տաղից ազգերդական, զի և այնք մեծավերջիւք կազմէին, և նաբիներս գուսան՝ ծանծաքեր աղաւաղեր զայնս։ Իսկ որ փոքր մի գլնի տակ յիմաստ ըլէին՝ յայտնի է ասել 'ի ժամանակի աստ յայտնիկ որ ընորհալս է ինձ 'ի խօսել։ Եւ զի ժամք ըլալ հասելով չափեին առնտա՝ ատացեալ մեր 'ի ճառին նաբիներս։

63. Քանզի ցոնքն, որդի Ապոլլոնի 'ի Կրէտատոյ գաւառին Երեքթեսի տրքայի Ամենայ, հայր և իշխան էր հելլենացւոցն, որ և յոնիացիք կամ ըստ մեզ ցոյնք. որոց հաստատ գնացեալ և սիրալ ընկալեալք յԱստիկէ և անդ բազմացեալք, ապա յետոյ գաթենալ գաւզուրթ չոգան անցին 'ի ցանիա կամ յունաստան, որ 'ի նոցանէ անա զանուն։ Ասի՝ մի 'ի նախահարց ամենայնոցն համարեալ էր Ապոլլոն։

64. Փիլիպպոս չմարթէր ասնանել ինչ ամենայնոց ընդ ծով, զի չէին նորա բաւական նաւք 'ի սանել հանել զզրօս իւր յԱստիկէ։

65. Աւանդապահս կամ նուիրապետս կոչէին զպատգամաւորսն առաքեալս 'ի ժողով Ամփիկտիոնացոյ։ Ցեռ պատերազմին ընդդէմ փոկիխացւոց՝ ստացեալ էր Փիլիպպոսիկ զերկոսին քաւէսն, զորս ժողովուրդն այն ունէր յատենի անդ։

66. Դարատանքն անուանեալք՝ պատուիրակք էին առաքեալք 'ի ժողովն Ամփիկտիոնաց 'ի Ջերմադրտանն՝ երթալ խօսել 'ի գիմաց քաղաքին և տալ հրամանս. որպէս ծանուցցք և 'ի ճառին նաբիներս։

67. Որք էին արկադացիք, մեսենացիք և արգիացիք։

68. Ղահապետք 'ի միասին ընթրէին 'ի նահապետանոցի անդ, որ

Digitized by Google

պրիպանիան կոչէր, մանաւանդ 'ի Ցόλος անուանեալ կամաքայարկ կոնքաձև խորանին։

69. Պիտի՝ սասացեալ տեղին, ուր լինէին ժողովք ժողովրդեանն, էր 'ի վերայ քան զՀասարակաց հրապարակն 'ի կողս բլրոյ մի զմիով աշտիճանեալ։

70. Երիք հարիւրքն ճոխագոյնք էին 'ի կարգս քաղաքացոցն։

71. Բասալլս ըստ Պլուտարքեայ ձայնէր զնա մանկանն վասն վախս և անօրամարութեանն լինելոյն 'ի համբակութեան տիսն. կամ զի էր յայդ անուն սրիգաՀար սաՀ եգիպտացի՝ այր անառակ և յոյժ կնամարդի, կամ զի յայդ անուն՝ կոչէին ատաքկեցիք զամՀրոյ ամբաՀն։ — Իսկ՝ որդեաք մարի՝ յայդ անուն նախանական առնուլ և զոր մերս Ղազար փարպեցի պատմէ 'ի Թղթին առ Վահան մամիկոնեան, թէ նախանՀոռոք զՄովսէս խորենացի և զմատեանս նորա փարեալ կամ չէին, որպէս թէ բասալլեանս։

72. Կրեոփոնտ՝ այր Մերոպէի, յոյր անուն էր ողբերգութիւն մի Եւրիպիդեայ՝ որ այժմ չէ 'ի միջի։ Կրէոն է բառնաւոր թեբայ և աներ Իդիպոսի՝ յԱնտիգոնէն Սոփոկլի, որ կայ ցարդ։ Իսկ Ինոմայոս՝ էր գիւցազն կորուսեալ ողբերգութեան իրիք նորին Սոփոկլի. զոր չարաչար խաղացեալ էր Եպիքնեայ 'ի Կոլիքտոս ատանին Ատտիկէի, ուր գուշակաբեայ գուսանք խաղային. որում ծաղր առնէ զնա Դիմոսթենէս։

73. Այս ինքն են քաղաքք՝ որոց տիրեալ էին աՀեմնացիք զՇովելերքն Մակեդոնիոյ։

74. Որպիսի ինչ՝ օգնութիւնն զոր մատուցին աՀեմնացիք Թեբացոցն 'ի Հալիարտ, և զզօրավիգն զոր յղեցին նոցա 'ի Թիկուս օգնականութեան՝ 'ի Թաքել զկազմական գղեակ Թեբայ։

75. Այս Կիբսիլոս խրատ տուեալ էր աՀեմնացւոց՝ խնայարՀել և ընդունել զՊեսիքրատս։

76. Այս է՝ զկատեսիփոն, որ զՀրամանն եՀան պատկերոյ զԻփիմոթենէս իրրև քաղաքավար և երախտաւոր քաղաքին։

77. Մեծաւ յուզարկաւորութեամբ Թաղէին 'ի Կերամիկոն կոչեցեալ տեղւոջն զմարտիկն անկեալս վասն հայրենեաց. և յառաջ քան զմարմնին հողոյ տալ՝ խօսէին Ճառ գամբանական 'ի գովութիւն նոցին։

78. Որք էին Դոլոպք, փթիաղիք և եւսալիք։

79. Առաջ յառաջ պատկանն պատՀէնք 'ի մէջ ածեալ գրուածոցն, որ յոյժ ցանկալի են յեւանոցս, եւս և 'ի քաջիկ խելամտութիւն ՀարատարութեանԹանիցն Դիմոսթենի։ Բայց այժմս քննաբանք՝ ըստ հին մեկնչաց՝ ոչ 'ի Դիմոսթենէ ասեն յեռեալ զայնոսիկ 'ի խօսն իւր, այլ յետ նորա յայլոց, և չէին իսկ 'ի բազմ՝ գրչագրիս. և 'ի գտեալսն կան ոչ սակաւ փղիպակք անուանց իշխանաց և ժամանակաց, անՀնարինք յուղղել Հաւատուրեամ զամենայն։

Digitized by Google

80. Այս հանգէսք էին մեծաց համաթենական ասնիցն։

81. Իսա նոյնպէս և ասա, որպէս և այլուր, զկտեսեփոն, որ գրեալ զհրաման այսր պատկի զորմէ պատգարս է։

82. Հինգն մանրախիտ կուռածք վարէին 'ի հաշիւս իւրեանց, և յայնս առնլի են ասացեալ հաշիւքդ։

83. Քանզի գարձոյց Փիլիպպոս զգերին աթենացւոց առանց փրկանաց, զմեռեալսն ետ թաղել, և հրեշտակս արար յԱթէնս վասն հաշտութեան առնելոյ։

84. Իսմենայ զՏերէս և զկերսոբլեպտէս, որոց պատերազմ էր ընդ Փիլիպպոսի։

85. Կամ պարենապահ, կոչէին զայնոսիկ՝ որոց պաշտօն էր գնել ցորեան՝ արծաթոյ տէրութեանն, և աւանդել զայն 'ի շտեմարանս աշխարհին։

86. Ակնարկէ 'ի ժողովուրդսն Պերլսպոնիսոյ, որ չառին յանձն դաշնաւորել ընդ աթենացիս ընդդէմ Փիլիպպոսի։

87. Ի սբբել նուիրելոցն՝ անկեալ գնէին 'ի գետնի, ընկղմեալ 'ի մեծ զիջղ և յապաշաւանս։

88. Վասն զի դիւթական զօրութիւնս ընծայէին վայրի ոսկիթին՝ որ այն ինքն է շուտրայ. և պատկս 'ի սօսւոյ առնուին 'ի հանգէսս սպանդարամատական խորհրդատօնիցն։

89. Հելլէնն ասէ Υ"ης Α"ττης, Α"ττης Υ"ης. Հիւ Ա'ռոպս. Ա'ռոպս Հիւ. ոմանք զերկոսանդ ևս իսմանն այլ և այլ անուանս Սպանդարամատին, կամ Դիոնիսեայ և Բակքոսի քան Յունաց և հռովմայեցւոց. իսկ կէսք զՀիէս թարգմանեն Կոյսի, և այլք իսմանն Արամազդ անձրևածին, զոր խառնեին ևս 'ի տօնս Սպանդարամատին, և ձայնդ իսկ նշանակէ. և էին աղաղակք բանդագուշելոցն մինչևց սատուածապարարկաց։ Ոչ գիտեմ որպէս Սարկաւագ մերս վարդապետս այլ ընդ այլոց տանու զԱտոսին՝ որ է Ատիս կամ Ատտիս՝ ընդ Ատտէսի. զի ասէ. «Զնատոսին՝ այսինքն զԴիոնիսիոսայ կապարան (կամ կիրան)։» Թերևս 'ի նմանութենէ ձայնիցն։

90. Այգեկութք լինէին 'ի ժամանակի ագարակային տօնիցն սպանդարամատականաց։

91. Դարձուցանէ յանկարծ զդէմս բանին վայրիկ մի առ ունկընդիրսն, որպէս առնէր և այլ ուրեք ուրեք, և ապա անդրէն առ նոյն դառնայ, զոր և յառաջիկայսդ առնէ դարձեալ։

92. Այս տուն 'ի Հեկաբեայն Եւրիպիդեայ է, առաջին՝ յայն առնուն ողբերգութեան. իսկ յայնոքդդ՝ մեզ անյայտ թէ ուստի առեալ իցէ. և որպէս յերրորդական դուստրացն լինել ասաց զնոքին, քան այնմ խնդկատակելով խաղ առնէ զնա։ Ապա իբրև երրորդ իմն այլ բերել կամեցեալ, տաղտկացեալ՝ յանէծս փոխի։

93. Դեմադէս հզօր ճարտարախօս և պաշտպան էր լակեդեմոնացւոց

Digitized by Google

նայուցն. իսկ Հերմոն՝ Ճոռոմախաս Ճամարտակ՝ վարձկան Փիլիպպեայ։

94. Աթենացիք և Նիկակիդք իւրեանց՝ երկիցս յաղթեալ էին Փիլիպպեայ մարտիս, և Ճակատն Քերոնեայ ընդ երկար եկաց անպարտելի, մինչև հուսկ ուրեմն յաղթեցան աթենացիք։

95. Հելլենական այլասացութիւն է. զի 'ի խրախուսն նախ ըմպեալ ուրուք՝ զնոյն նուագ մատուցանէր բարեկամին. որով իմանային տալ 'ի ձեռս և մատնել զիւրն այլում։

96. Իսն զԵբիս, զԲիսվոխիս և զՄեգարայ երկիրն։

97. Զմեգարացիս, զկորնթացիս և զաքայեցիս։

98. Պրոկոնեսոս կղզի է Պրոպոնտիդեայ, այժմ Մարմարա կոչեցեալ։

99. Զի պարտաւորեալ էր 'ի տուգանս մինչ, և չունելով առ ժամն հատուցանել՝ ապիրատ եղեալ անկեալ էր 'ի քաղաքական իրաւանց իւրոց ըստ օրինացն՝ մինչև հայթայթեցէ. և զժողովեալն ետ առեալ էր։

100. Այրս այս յօրինեալ էր նախ թատերգութիւնս մինչ. ապա ետ զանձն 'ի քաջուց և զպարարաչաց ազնուական արուեստսն, յորում այնչափ յառաջադէմ գտեալ՝ մինչև անուան իւրոյ յառակս լինել։

101. Փիլամմոնդ, որպէս ծանուցեալ է և 'ի Ճառին Եպիմենեայ, էր անուանի ըմբշամարտ աթենացի։

102. ԶԱլէքսանդրոս խմանալի է, որ օր քան զօր երթալով երթայր և բարգաւաճէր։

Digitized by Google

Digitized by Google

ՄԱՐԿՈՍԻ ՏՈՒԼԼԻՈՍԻ

ԿԻԿԵՐՈՎՆԻ

ՃԱՌ

ՎԱՄՆ Ա. ԼԻԿԻՆԻՈՍԻ ԱՐՔԻԱՑ ՔԵՐԹՈՂԻ

Digitized by Google

Digitized by Google

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Ամբիսա անուիոքացի, յազգէ Յոյն, անդատին 'ի պատանութենէն համբաւեալ քերթողական հանճարով 'ի քաղաքի անդ իւրում և շուրջ յասխական կողմանսն և ընդ բնաւ Նեապոլ, իբրև եկն յԻտալիա, տարենոցիք՝ հռետորենոցիք և նեապոլեցիք 'ի քաղաքակցութիւն իւրանց ընկալեալ զնա՝ բազումս էաս մեծարանօք պատուեցին։ Եւ զի վասն համբաւոյն յառաջածնօթ էր յոգունց հոյակապ արանց հռովմայեցւոց պանդխտելոց, չոգաւ 'ի Հռովմ. ուր առաջ Լուկուլլեանք սասնջականութեամբ յապարանս իւրանց հիւրընկալեցին զնա։ Եւ յետ թեաթկութեամբ նոցին՝ քաղաքացի Հռովմայ գրելոյ, 'ի նոցանէ իսկ թուի ընկալեալ և զԼիկինիոսդ անուն հռովմէացի զտոհմին իւրանց։ Հաճոյ և մեծարոյ եղեալ անդ յաչս ոչ սակաւ աւագաց, որպէս Կ. Մետելլոսի Նումիդեան, և որդւոյ նորա Պիոսի, Մ. Եմիլիոսի Սկաւրոսի, Կ. Լուտատիոսի Կատուլոսի՝ հօր և որդւոյ, և Լ. Կրասոսի, իսկ ընդ Լուկուլլեանց եղբարց և Մ. Լիւիոսի, Դրուսոսի և Հոկտաւեանց, և Կատոնի հօր Ուտիկեցւոյն՝ և Հորտենսեանց մտերմութեամբ ընտանեցեալ, ապա յետոյ ընդ Մ. Լուկուլլոսի գնաց 'ի Սիկիլիա վասն առանին գործոց ինչ իւրոց։ Ի փոխել նորա անտի՝ եկեալ գնաց ընդ նմա 'ի Հերակլիա քաղաք Մեծին Յունաստանի՝ որ ընդ մէջ Մետապոնտոսի և Տարենտոնի։ Հերակլիացւոց արժանի տեսեալ զինքն և միջնորդելով առ մեծի առանն Լուկուլլոսի՝ գրեցին զնա յիւրանց քաղաքակցութիւն։ Իբրև 'ի Պլատոնոսէ Սիլուանոսէ և Պապիրիոսէ կարդանէ օրէնքն եղան 'ի Հռովմ, զի որոց միանգամ դաշնակից քաղաքաց քաղաքացի գրեալքն էին, եթէ 'ի ժամանակի անդ օրէնսդրութեանդ՝ կալեալ էին զիտալիա տուն բնակութեան, և ընդ աւուրս վաթսուն առ դատաւորին զկամս իւրանց յայտ արարեալ, ընտրհեցի

Digitized by Google

նոցա՝ "Հռովմայ քաղաքացւոց անցանել 'ի համարի։ Սովին օրինաց անդէն ստացեալ էր ինքնին Աբքիսա զՀռովմէական քաղաքակցութիւն. զի էր իսկ դաշնակից քաղաքին Հերակլիայ քաղաքացի, և սոյն բազումս ընակութիւն 'ի Հռովմ կալեալ, և զկամին յայտնեալ Կ. Սեւտելլոսի Պիսոսի՝ սերտ մտերմի իւրում, որ 'ի նմին ամի դատաւորն էր։ Բայց զկնի՝ ընդ Լ. Լիկինիոսի Լուկուլլոսի գանձաւորին չոգաւ Աֆրիկա, և անդ եկաց ընդ նմա մինչև 'ի դարձ նորին։ Իսկ 'ի գնալ նորին ապա բգնէլս 'ի պատերազմն մի հրդատեան, գնաց դարձեալ ընդ նմին, և ընդ իւր դարձ արար անդրէն 'ի Հռովմ վաղամանակաց։ Անդ ըստ Պապեան օրինաց, զի մերժեսցին նժդեհք՝ որ իբրև քաղաքացիս կան և չեն, Գրակքոս ոմն փուրսիշ ամբաստանութեան յարոյց 'ի վերայ քաղաքակցութեան իւրոյ՝ հերքել զնա։ Կիկերոնն սովին ճառիւս, յորում և յիշատակէ զայդ ամենայն, պաշտպան եկաց նմա, առ դատաւորաւն՝ որպէս թուի՝ Կ. Հոկտաւիոսիւ, այն որ ապա հայրն եղև Հոկտաւիոսի Կեսարու Աւգոստոսի։ Թէպէտ և են որ դատաւոր ժամանակին համարին զԿ. Վիրգիլիոս, կամ զԿ. Կիկերոնն՝ զեղբայր ճարտարախօսիս, բայց հաշիւք ամացն ոչ ներին։

Digitized by Google

Մ. Տ. ԿԻԿԵՐՈՎՆԻ

ՃԱՌ

ՎԱՄՆ Ա. ԼԻԿԻՆԻՈՍԻ ԱՐՔԻԱՑ ՔԵՐԹՈՂԻ

Եթէ գուցէ ինչ յիս հանճար, գատաւորք, որոյ իրա-գէտ եմ նիազութեանն, կամ թէ խօսից վարժութիւն՝ յո-ւրում ոչ ժխտեմ փոքր 'ի շատէ զիս պարապեալ, կամ թէ ինչ այսր իրի [1] հմտութիւն՝ 'ի կրթութենէ ազնուական արուեստից և 'ի հրահանգաց, յորոց վկայեմ զի ոչ երբեք սարսռուցեալ եմ 'ի կեանս իմ, զայնր ամենայնի նախ Ա. Լիկինիոս այս [2] յիրաւի պահանջեցէ յինէն զպտուղ՝ գրեթէ սեփական իմն իրաւամբք։ Զի որչափ հեռագոյնս զօրեն ակնարկել միտք իմ յելս անցեալ զառանցեալ ժա-մանակաց՝ և զմանկութեանս յուշ ածել խորին յիշատակ, անդուստ 'ի վերուստ առեալ արկեալ 'ի միտ՝ զսա տեսա-նեմ իշխան առաջնորդ ինձ կացեալ 'ի սկսանել և 'ի զարգա-նալ 'ի կիրթս ուսմանցս այսոցիկ։ Զի եթէ ձայնս այս բար-բառոյս, սորա խրախուսանքն և օրինքն յարդարեալ, եղև երբեմն ոմանց 'ի փրկութիւն, ապա յորմէ զոյնս ըն-

Digitized by Google

կալաք առ 'ի զօրավիգն այլոց լինելոյ և զայլս կեցուցանել, սմին ինքեան ապաքէն, որչափ 'ի կարի մերում է, և օգնութիւն և փրկութիւն արժան է մատուցանել: Եւ մի՛ ոք ընդ այս բանս մեր զարմացի Թերևս, որպէս զի այլ իմն 'ի սմա [3] իցէ հանձարոյ զօրութիւն քան զայս գիտութիւն և զհրաշահանգս խօսից, և ոչ մեք յայս եւեթ ջանս համակ նուիրեցաք զանձինս: Զի և ամենայն արուեստք առ մարդկութիւն պատկանաւորք՝ ունին ինչ ընդ միմեանս աղերս, և իբրև ազգախառնութեամբ իմն ընդ իրեարս յեռեալ են:

Այլ զի մի՛ ումեք 'ի ձէնջ զարմանս թուեսցի, յօրինական [4] յայս խնդիր և 'ի հրապարակաւ դատաստան, ուր դատ վարի առ դատաւորի [5] հռովմէական ժողովրդեան, առ առն ընտրականի, և առաջի անաչառ քննողաց [6], 'ի ժողովի և 'ի խառն այսքան մարդահոյլ բազմութեան, այսպիսիս արկանել ինձ ճառս, որ ոչ միայն 'ի սովորութենէ դատաստանաց, այլ և յատենական ոճոյ խօսից օտար են, ապաչեմ զձեզ՝ շնորհել ինձ 'ի գաստի ասա զայս ներբումն վայելչական դատապետելոյս, և ձեզ՝ որպէս ակն ունիմ՝ ոչ ինչ դժպհի, զի 'ի ճառելս զդերասանն քերթողէս և զբանիբուն առնէս՝ 'ի հրապարակի ասա արանց գիտնաւորաց, և առ բարեխրատութեանդ [7] ձերում, և 'ի գաստողութեան այսր դատաւորի, թողութիւն առնիցէք ինձ խօսել փոքր մի համարձակագոյնս, և վասն առն այսպիսւոյ, որոյ առ խաղաղական և ուսմնասէր կենացն՝ չէք երբեք 'ի դատ ինչ և 'ի վտանգ անկեալ, վարել նոր իմն և անտեղեր օրինակ բանից: Զոր եթէ տեսից շնորհեալ ինձ առ 'ի ձէնջ, արարից անշուշտ, զի զ՚իկինիոսս զայս՝ զմեր քաղաքացի՝ ոչ միայն չդատիցիք արժանի վտարելոյ 'ի համարոյ քաղաքացւոցս, այլ մնաւանդ ընդունելոյ, թէպէտ և չէր իսկ բնաւ:

Քանզի իբրև անց Արքիաս ըստ տիս մանկութեան, և

յանդուգնութենից անսի որովք մանկականն հասակ սովոր է կրթիլ 'ի մարդկութիւն՝ եւ զանձն 'ի ջանս գրաւոր վասուակոց՝, զառաջինն անդ յԱնտիոք, ուր ծնեալն է յաղնուական տանէ, յերբեմն հռչակաւոր և 'ի ճոխ քաղաքի և քաջահմուտ որերով և աղատական ուսմամբք պերճացելոյ, անդէն վաղվաղակի եհաս նմա անցանել զամենեքումբք 'ի փառս հանճարոյ։ Ապա յայլ կողմանս ասիացւոց և յամենայն յունաստան այնպէս հռչակ հարկանէր գալատեան նորա, զի քան զհանճարոյն համբաւ՝ ակնկալութիւն առնն, և քան զանկալութիւն նորա՝ մուրք իւր և հիացումն մարդկանն առաւել գտանէին։ Էր յայնժամ Խռալիա՝ յունական արուեստիւք և գիտութեամբք բարգաւաճ, և 'ի Լատինն եւս այս ուսմունքս սիրելի յոյժ էին քան այժմ՝ յաւանան յայնոսիկ, և ասա 'ի Հռոմմ՝ վասն խազազութեան տէրութեանն՝ ոչինչ անխնամ և ապախա կային։ Վասն որոյ և տարենատցիք և հռեգիոնացիք և նէապոլսեցիք [8] պարգևեցին նմա զքաղաքակցութիւն իւրեանց և այլ եւս մեծարանս։ և յորս գոյր ինչ ընարութիւն հանճարոյ՝ ամենեքեան արժանի ծանօթութեան և ասպրնչականութեան զնա համարեցան։ Սովին մեծանուն համբաւոմ մինչդեռ ծանօթ էր հեռաւորաց մերոց [9], յարեաւ ելն 'ի Հռոմմ 'ի բդեշխութեան Մարիոսի և Կատուլեայ։ Եգիպտ նախ բդեշխս զայնոսիկ, որոց մին՝ [10] իրս մեծամեծս մատենադրութեան արժանիս, միւսն՝ և զգործս քաջութեան և զիմաստ և զունկն եւս կարող էր մատուցանել։ Մինչ դեռ եւս պատանեակն էր Ալքիաս, անդէն և անդ ընկալան զնա Լուկուլլեանք 'ի յարկս իւրեանց։ Այլ այս ոչ հանճարոյն ևեթ և դարութեանցն, այլ և բնութեանն և առաքինութեան։ զի որ պատանութեան իւրում առաջին եղև յարկ, նոյն և ծերութեան նորա գտաւ ընտանեգոյն։ Էր 'ի ժամանակին սիրելի Կ։ Մետելլոսի, զնուամիգեանն ասեմ, և որդւոյ նորա Պիոսի, քաղցրախորժ 'ի լուր Մ։ Եմիլեայ, կենակից Կ։ Կատուլոսի՝ հօր և որդւոյ,

Digitized by Google

արդոյ յաչս Լ. Կրատոսի. իսկ զԼուկուլլեանս և զԻրուսոս և զՀոկտաւեանս և զԿատոն [11] և բովանդակ զտունն Հորտենսեանց ընտանութեամբ յինքն յարեցուցեալ՝ 'ի մեծաշուք պատիւ վայելէր. զի ոչ միայն որ ճշմարիտ ուսանել ինչ և լսել կղկաթն էին, այլ և որ ձեանայինն՝ յարգէին զնա։

Զայնու ժամանակաւ յետ ոչ սակաւուց, իբրև չոգաւ ընդ Մ. Լուկուլլոսի 'ի Սիկիլիա, և իբրև 'ի գաւառէ անտի մեկնեցաւ ընդ նմին Լուկուլլեայ՝ եկն 'ի Հերակլիա [12]. որ քանզի արդարադոյն իրաւամբք և դաշամբք [13] քաղաք էր մեր, կամեց աւ սա քաղաքակից նմա լինել. և այսմ ինքնին արժանաւոր դատեալ՝ և զօրութեամբ և շնորհիւն Լուկուլլոսի ընկալաւ 'ի Հերակլիացւոցն։ Յօրինաց Սիլլուանոսի և Կարբոնի տուաւ քաղաքակցութիւն «որոց միանգամ 'ի դաշնաւոր քաղաք 'ի համար մտեալքն իցեն, եթէ 'ի ժամանակի անդ օրինադրութեանն՝ յԻտալիս իցեն բնակաւորք, և ընդ աւուրս վաթսուն [14] առ դատաւորին զկամս իւրեանց ցուցեալ։» Եւ զի սա ամն բազում 'ի Հռոմ բնակեալ նստէր, յայտնեաց զկամն առ Կ. Մետելլոսի դատաւորի՝ իւրում մտերմին։

Արդ, եթէ զերաւանց քաղաքակցութեան են մեղ բանք, չասեմ ինչ այլ. վճարեալ է դատս։ Զի ի՞մ խմբք յայսցանէ, ո՛վ Գրակքոս [15], մարթիցի եղծանել Հերակլիայ քաղաքակցութիւնն արդեօք ժխտիցես։ Մերձ է այր մեծազօր իշխանութեամբ և կրօնիւք և հաւատով Մ. Լուկուլլոս, որ ասէ զանձնէ՝ ոչ 'ի կարծ ինչ վկայել, այլ հաւատի գիտութեամբ. ոչ յականջալուրս եւեթ, այլ անձամբ ականատես եղեալ. ոչ անդ գիպելով եւեթ, այլ արդեամբք եղեալ գործակիցս։ Ասա՛ են և գեսպանք հերակլիացիք, որեար ազնուական, 'ի պատճառս այսր դատաստանի՝ պատուիրանաւ և համաշխարհի վկայութեամբ հասեալ կան, և Հերակլիայ քաղաքացի տան զնա գրեալ։

Ասասնոր դու զՀերակլիացւոց քաղաքական գիւանա-

գիրսն պահանջէս, զորս յիտալական մարտին 'ի հրայրեացս անդ գիւանին ամենեքին գիտեմք յաճախն դարձեալ։ Ծա-զու բանք են, զորոց առ ձեռն ունիմք՝ ոչինչ ասել, և զոր անհնարն է ունել՝ խնդրել. լուել զմարգկան յիշատակէ, և զմատենից յիշատակարանն յուզել. և ուր առ քեզն կայցեն մեծի առն երկիւղածութիւն և անխարդախ մարդկան երդումն և հաւատ, որոց չէք իւիք աղաւաղել, զայնս մերժել, և ցանկալ յիշատակագրոց՝ զորոց դու իսկ ինքնին վկայես թէ սուտք են զեղծանիլ։

— « Բայց ոչ կալաւ բնակութիւն Յիտալիս։ » — Սա՛, որ այնչափ ամաչ յառաջ քան զքաղաքակցութիւնն՝ ըզ-հռովմ արար իւր օթեւան ամենայն իրաց և բախեին։ — « Այլ չէք յայտ զկամս իւր արարեալ։ » — Նա մանաւանդ յայն գիւանագիրս գրոշմեալ կայ, որ 'ի պաշտամանէ ան-ան և 'ի դասէ դատաւորաց՝ նոքա միայն առնուն զօրու-թիւն հաստատակաց գպրութեանց։ Քանզի յորժամ գիւա-նագիրքն Ապպեայ [16] ոչ 'ի պահ զգուշութեան լինել համ-բաւէին, և թեթեւամտութիւն Գաբինեայ [17] մինչդեռ ոգ-ջանդամն էր, և յետ դատապարտութեանն թշուառու-թիւն նորա՝ զամենայն հաւատս արձանագրոց ապախտ ա-րարին, Մեռելոյն՝ այրն սուրբ և պարկեշտակրօն քան զքնաւ՝ այնչափ փոյթ և խնամ կալաւ, մինչև առ Լ. Լեն-տուլոս գատաւոր և առ իրաւարարսն երթեալ՝ զմիոյ ա-նուան քերուածոյ ասել զանձն խառնեալ։ Իսկ արդ 'ի գի-ւանագիրս յայտսիկ ոչինչ տեսանէք քերուած յանուան Ա. Լիկինիոսի։

Որ զի այս այսպէս, առ իմՁ երկմտիցէք զքաղաքակցու-թենէ սորա, մանաւանդ յորժամ և այլոց քաղաքաց 'ի հա-մար քաղաքացւոյ թուեալ է։ Քանզի ուր բազմաց չափա-ւորաց և ոչ իւիք արուեստիւ կամ դուշնաքէիւ իւիք պան-ծացելոց՝ ձրի տարապարտուց զքաղաքակցութիւն բաշ-խէին մարդիկն 'ի յունասան, կարծեմ [18] թէ հռեգիոնա-ցիքն կամ Լոկրացիք կամ Նեապոլսեցիք կամ տարենտացիք՝

Digitized by Google

զոր Թատերական Ճարտարացն սովոր էին պարգևել առաստաբար, զնոյն սմա՝ գերագոյն փառաք հանձարոյ Ճոխացեալումն՝ չկցեն կամեցեալ։ Զ՚ինչ ապա, մինչ գեռ այլք՝ ոչ միայն յեռ շնորհելոյ քաղաքակցութեանն, այլ և յեռ Պապեան օրինաց յեղանակաւ իւիք՝ի դիւանագիրս Ժողովրդոյն այնոցիկ սալրդեալ կցեն. իսկ սա, որ և ոչ՚ի պէտս իւր առնու զայնոսիկ՝ յորս և գրեալ իսկ է, զի միշտ հերակլիացի լինել կամեցաւ, ընկեցի՚ուրեմն արտաքս։

Բայց սակայն զաշխարհագիրս [19] մեր որոնես։ Իբրև զի Թաքուն [20] ինն է, թէ առ վերջին աշխարհամարգաքն՝ սա ընդ մեծափառ զօրագլխին Լուկուլլոսի՚ի բանակին [21] էր, առ միջնովքն՝ ընդ նմա որ գանձապետն էր՝ Յաախ գտանէր. իսկ առ առաջնովքն [22], առ Ցուլեաւ և Կրասոսիս, և ոչ մասին միոյ Ժողովրդեան եղեալ է աշխարհագիր։ Բայց քանզի աշխարհագիրն ոչ զերաւունս քաղաքակցութեան հաստատէ, այլ ցուցանէ միայն՝ զի որ յաշխարհամարս մտեալն կցէ՝ այնպէս իբրև քաղաքացի ձևացեալ է յայնժամ, սա զայնու ժամանակաքն, զորովք դու ամբաստան լինիս, թէ ըստ իւրում իսկ մտաց՝ և ոչ յիրաւունս հռովմէական քաղաքացեաց վայելեալ կցէ, բաղում անգամ կատակ գրեաց ըստ մերոցս օրինաց, և զՀռովմայ քաղաքացւոց Ժառանգութիւնս ընկալաւ, և վասն բարերարութեանց՝ի դանձս աշխարհին արձանագրեցաւ [23]՝ի Լ. Լուկուլլոսէ դատաւորէ և բդեշխէ։ Ե՛րթ ապա խնդրես դու քեզ հաւաստիս, եթէ կարես. զի ոչ երբեք ըմբերանեացի սա, ոչ ըստ իւրոց և ոչ ըստ բարեկամացն մտաց։

Հարցանիցես թերևս զմեզ, Գրակքէ, թէ զի այսչափ անուամբս այսուիկ հեշտանայցեմք։ — Վասն զի զայն ինչ նօթՃէ մեզ՝ յոր կաղդուրեսցին ոգիքս յատենական աղմկէ աստի, և հանգիցեն սկանչք պարտաւեալք յամբոխ աղաղակէս։ Համարիցին թէ առ ձեռն մեզ կայցէ խօսել հանապազոր յայսչափ գունակ գունակ կերպարանս իրաց, եթէ չհրահանգիցեմք զմիտս մեր գիտութեամբ. կամ թէ

միտք մեր տոկայցեն այսքանոյ ՀԱՅՈՒԹԵԱՆ, եթէ ոչ նովին գիտութեամբ անդորր ինչ առնիցեմք։ Ա՛յլ ես խոստովան լինիմ, թէ զսովին ուսմամբք զանկեալ և զգածեալ է իմ. յամենի լիցին այլք, եթէ այնպէս 'ի դպրութիւնս խոթեցան ոմանք, զի չուսնիցին ինչ աստի հասարակաց հանել արգասիս, և ոչ 'ի տեսիլ և 'ի լոյս ընծայել։ Իսկ ինձ առ ինչ իցէ ամաչել, որ այսչափ ամք են՝ այնպէս կեամ, դասաւորք, զի ոչ երբեք 'ի կարիս ինչ ուրուք կամ 'ի բարիս՝ յեռս զիս ընկրկեաց հանգիստ իմ, կամ 'ի բաց դարձոյց հեշտութիւն, կամ յուլացոյց քուն։ Վասն որոյ՝ ո՞ այն ոք որ զիս կշռամբեսցէ, կամ ո՞ իրաւամբք ցասնուցու ընդ իս, եթէ զժամանն՝ որ այլոց շնորհին 'ի վճարումն պիտոյից իւրեանց, որ 'ի հանդէս տոնական աւուրցն խաղուց, որ առ այլ ևս զքօսանս զուարճութեանց, և որ առ ինքն իսկ հոգւոյ և մարմնոյ հանգիստ, և զոր այլք նուիրեն կանխեալ յերկարեալ խրախճանաց, և զոր ուլանց և գնդի խաղալոյ, զայն ես ինձ 'ի դեգերանս առից ախորժակացս այսոցիկ։ Եւ այնչափ ևս առաւել ներելի է ինձ այս, զի 'ի վարժից աստի յարգեալ համարի զՔ և այս բանախօսութիւն և ՀԱՐՍՏԱՐՈՒԹԻՒՆ. որ որչափ ինչ և իցէ յիս, ոչ երբեք ապաժամանն գտաւ 'ի վտանգս բարեկամաց։ Որ եթէ ումեք թեթև ինչ թուիցի, և զմեծագոյնն թէ յորմէ աղբերէ առնուցում՝ այնմ ևս քաջ խելամուտ եմ։ Զի եթէ ոչ 'ի մանկութենէ՝ բազմոց խրատուք և բազում դպրութեամբք զմիտս յայն հրահանգուցեալ էր, թէ չէք ինչ 'ի կեանս առաւել քան զգովութիւն և զպարծանս փափաքելի, և թէ 'ի գիւտ նոցին՝ դոյզն ինչ է գրելի զամենայն չարչարանս մարմնոյ և զամենայն վտանգ մահու և ապաստանաց, ոչ երբեք վասն փրկութեան ձերոյ տայի զանձն յայնքան 'ի մեծամեծ մաքառումնս և 'ի հանապազորդ հէնս խուժանի արանց ապականելոց և անուանարկաց։ Բայց լի են մատեանք ամենայն, լի խմաստնոցն ձայնք, լի և հոծեալ օրինակօք վաղք ժամանակաց, որք առ հասարակ 'ի խաւարի անկեալ մնային,

եթէ ոչ հասանէր դպրութեանցն լոյս։ Քանիցն յաճախ նկարագիրս, ոչ 'ի նկատել ևեթ, այլ և 'ի նախանձաւոր լինել, թողին մեզ օրինակագիրք յոյիք և լատինք զարանց քաջաց կենդանագրեալս. զորս իմ ցանգ առաջի աչացս արձանացուցեալ 'ի վարչութեան պետութեանս, զմիտս իմ և զհոգիս 'ի նոյն իմաստս արանցն ընտրականաց տպաւորէի։

Հարցանիցէ ոք թերևս. Իսկ զինչ դ. մինթէ և արքն այնոքիկ վսեմականք, որոց առաքինութիւնք 'ի գիրս դրոշմեալք են, սովին գիտութեամբք հմտացան՝ զորս գտ գովութեամբք պանծացուցանես։ Դժուարին է հաստատել զայդ զբաղորեցունց. բայց անհերկեան է իմ առ այդ պատասխանի։ Զքաղումն վկայեմ ես առանց գիտութեան արս վսեմամիտս և առաքինիս լեալ, և իբրև յաստուածեղէն ինն բուսոյ բնութեան՝ համեստս և զգօնս։ Սա աստիճ և զայս յաւելում, զի բաղում ուրեք բնութիւն առանց գիտութեան բաւական գտաւ 'ի փառս և յառաքինութիւն, քան գիտութիւն առանց բնութեան։ Բայց սակայն և զայս վիճիմ, զի ուր ուրեք յընտիր և յանվնիս բնութիւն զուգաւորեացին հրահանգք ինչ և յօրինուածութիւն գիտութեան, անդ աքանչելին այն և անհամեմատ չգիտեմ զինչ՝ սովոր է 'ի վեր երևել։ Զի 'ի թուոյ աստի էր զոր հարքն մեր տեսին զայրն աստուածային՝ զԱբրիկեցին [25], աստի Կ. Ալիլիոս, Ա. Փուրիոս, արք ժուժկալք և զգաստասէրք. աստի այրն արիական և գիտնաւոր 'ի ժամանակին՝ Ծերունին այն Մ. Կատոնն. որք եթէ ոչ ինչ շահէին 'ի դպրութեանց՝ 'ի գիւտ և 'ի կիրթս առաքինութեան, ոչ բնաւ յուսումն նոցին բերէին պարապ։ Բայց թէպէտ և ոչ արդիւնքս այս մեծ ծնանէին, և զուարճութիւն ևեթ էր ջանիցս կատարած, համայն՝ որպէս ինձ թուի՝ յոյժ վայելուչ վարկանիցք մարդոյ և ազատական՝ զմտադիրութիւնս զայս։ Զի այլք՝ ոչ ամենայն ժամանակի են, ոչ ամենայն հասակի և ոչ տեղւոյ. իսկ այս ուսմունք՝ զմանկութիւն

Digitized by Google

վարժեն [26], զծերութիւն զբօսուցանեն, զարդ են 'ի յաջողուածս, 'ի ձախողանս՝ ապաւէն և ապաքանս ընձեռեն, հեշտութիւն են առանին, արտաքոյ՝ ոչ ինչ խափան լինին, ընդ մեզ հակեն, ճանապարհ առնեն, 'ի հով ելանեն։

Զի թէպէտ և մեզ անձամբ անձին չգոյր հնար յոյնս ժամանել, և ոչ մերով ճաշակելեաքս առնուլ զհամ, սակայն և 'ի տեսանելն յայլս՝ զարմանալ պարտ էր ընդ այնոսիկ։ Ո՞'ի մէնջ այնպէս վայրենամիտ և խստասիրտ երևեալ, որ գեռ ընդ գեռ ոչ ազիատացաւ 'ի մահն Ռոսկիոսի [27]. զի թէպէտ և տալուոր վախճանեալ, այլ վասն մեծի արուեստին և հնարհացն՝ թուէր թէ չէր պարտ մեռանել։ Արդեաւ՝ մարմնոյն միայն շարժուածովք զամենեցուն մեր զսիրտս լինքն էր յանկուցեալ. մեք անսիրթ առնիցեալք զանհաստատալի շարժմամբք մոտաց և զսրութեամբ հանճարոյ։ Եւ զայս Արքիսա քանիցս տեսի, դատաւորք, — զի ձերով ներողամտութեամբդ վարեցայց, որովհետև այգչափ ուշիուշնկդրութիւն լինձ մատուցանեք յայս նորօրինակ քանախօսութիւն, — քանիցս տեսի ես զսա՝ առանց ինչ նշանագրելոյ՝ ընտիր ընտիր տունս բազմաթիւս ապ ֆոթոյ յանկարծաթափ ածել հատել զերաց իրաց առժամայն պատահելոց։ Քանիցս դարձեալ անդրէն վերստին զնոյն քանս կրկնել յեղյեղել այլափոխ բայիւք և խմաստիւք։ Իսկ զոր խնամանին և ուշի ուշով գրեր, այնպէս 'ի գոլութիւն առեալ տեսի զայնս, մինչև 'ի վաղնջուց մատենագրացն ժամանելն 'ի փառս։ Իսկ արդ զսա ես ոչ սիրիցեմ, ոչ զքանչացայց ընդ սա, և չհամարիցիմ ամենայն իրաւամբք պաշտպանութեան արժանի։ Այլ յարանց ակամաւորաց և բազմահրամոց այսպէս ընկալաք, թէ այլոց իրաց ուսանող գոյ գիտութեամբ և օրինաք և արուեստիւ կատարել, իսկ քանաստեղծին՝ անդաստին 'ի բնութենէն է ունել զօրութիւն, և իւրոյ մտացն կորովով շարժել, և հոգի իմն գոգցես ասուածեղէն կրել յանձին շունչ։ Վասն որոյ մերն այն Ենենոս յիրաւի նուիրական կոչէ զքանաստեղծան, զի իբրև

յաստուածոց իմն պարգևաց և շնորհաց երևին 'ի մեզ ա-
ւանդեալ։ Լիցի արդ սուրբ առ ձեզ, դատաւորք, ասա արդ-
մարդասէրս՝ անուն քանասեղծի, զոր ոչ մի ինչ գուժ
վայրենութիւն պղծեաց երբեք։ Վէմք և ափափայք 'ի ձայն
նորա դանչեն արձագանգս, գազանք ամենիք ողբին յա-
ճախ եղոգովքն և ոռնակառեն 28. մեք 'ի լաւագոյնն ընդե-
լակրթեալքս ոչ չարժիցիմք 'ի քերթողացն բարբաս։ Զէր
մերոս քաղաքացի իւրեանց ասեն լինել կոլոփոնացիք,
քիացիք յիւրեանս վասարեն, պահանջեն սալամինացիք,
իսկ զմիւռնացիք՝ իւրեանց լինել հաստատեն. վասն որոյ
տաճար եւ արբեցին նմա յաւանեի անդ. Թող զդասս, այլ
եւ յոլովագոյնք մարտ եգեալ կռուին ընդ միմեանս։

Արդ նոքա զտարն, քանզի քանասեղծ էր, յետ մա-
հուն եւ 'ի միմեանց խլեն. մեք զսա զկենդանիս՝ որ սրտի
կամաւ և օրինաւք մերս է՝ 'ի բաց հանեմք. ուր զի երբեմն և
զամենայն ճիգն և զհանճար Թափեալ է Աղքիայ 'ի քարտ-
ղէլ զիտաւս և զպարծանս հռովմիական ժողովրդեանս։ Զի
և 'ի կիմբրացւոցն իրս 'ի պատանութեան ձեռն արկեալ՝
նմին իսկ Ց. Մարիոսի, որ անազգելի ոք Թուէր այսց ա-
խորժակաց, հեշտալի գտաւ։ Զի և չիք ոք այնպէս գժ-
խահեռ ընդ Մուսայս, որ ոչ մտադիւր ողջունեսցէ՝ Թէ ոք
զյաւերժայիշատակ հռչակ վաստակոց իւրոց հարկանիցէ
'ի տաղս։ Զթեմիստոկլէս՝ զայրն մեծ զաթենացի, իբրև
հարցաւ Թէ որ լուր կամ ՝ի բերս ուրուք ձայն քաղցրացի
յունկն իւր, աւանդեն ասացեալ. «Նորոյն՝ որ զիմ քա-
ջութիւնս աքանչելապէս քարոզ կարդայցէ»։ Վասն որոյ
և ինքն Մարիոս առանձինն իմն սէր կալաւ առ Լ. Գլո-
ստիոս 29, որոյ հանճարոնն ակն ունէր Թէ համբաւեսցին
հանդէպք քաջութեան իւրոյ։ Իսկ 'ի սմանէ՝ պատերազմն
միհրդատեան մեծ և տարժանելի և բազմօրինակ ընդ ծով և
ընդ ցամաք յարձեալ, նկարագրեալ է բովանդակ. որ ոչ զԼ.
Լուկուլլոս միայն՝ զայրն քաջ և զանուանի, այլ և զա-
նուն հռովմիական ժողովրդեանն փառաւորեն մատեանքն

այն։ Զի Ժողովուրդն հռովմէական զօրավարութեամբն Լուկուլլեայ փեռեկեալ եբաց զՊոնտոս, զպարսպեալն երբեմն Թագաւորական հարստութեամբ և նովին խակ բնութեամբ աշխարհին. բանակ Ժողովրդեանն Հռովմայ նորին առաջնորդութեամբ սակաւաձեռն դնդաւ խորտակեաց զանթիւ զօրս Հայոց. հռովմէական Ժողովրդեան են պարծանք, զի սերտ մտերիմ քաղաքն Կիւզիկեցւոց, նորին խորհրդով, յամենայն հինէ արքային և 'ի բոլոր պատերազմին բերանոյ և յորկորոյ կորզեալ ապրեցաւ. մեր հանապազ պատմեսցի և քարոզեսցի՝ մարտիւ պատերազմացն Լուկուլլեայ՝ սատակմամբ զօրապլիսացն խորտուզեալ նաւատորմն Թշնամեաց, և անհաւատալին այն առ Ցենեդեաւ նաւամարտ. մեր են նշանք յաղթութեան, մեր արձանք յիշատակի, մեր յաղթանակք։ Ապա որոց հանձարովն այսոքիկ հռչակին, հռովմէական Ժողովրդեան համբաւի անուն։ Սիրելի եղիր երկրորդ Ակրիկեցւոյ մերս Եննիոս. վասն որոյ և 'ի շերմին Սկիպիոնեանց համարի նոս պատկեր կանգնեալ 'ի կնոջ [30]։ Բայց նորա գովութեամբքն ապաքէն ոչ դրուատեալքն միայն, այլ և հռովմէական Ժողովրդեանն զարդարի անուն։ Նախահաւ սորա [31] Կատոնն՝ յերկինս բարձրանայ. պատիւ մեծ առաւելու յիրս հռովմէական Ժողովրդեան։ Մինչ բանիս, ամենեքեան նոքա առ հապարակ՝ Մաքսիմոսք, Մարկելլոսք, Փուլուիոսք՝ ոչ առանց ամենեցուն մեր համարէն պարծանաց շքեղանան։ Արդ զայրն զայն Ռուդիեցի [32] որոյ զայսոսիկ արարեալ էր՝ նախ նիքն մեր 'ի քաղաքակցութիւն ընկալան. մեք զկերակլիացիս զայս, զցանկալիս քաղաքաց բազմաց, և զօրինաք հաստատեալս 'ի սմա, վարեսցո՞ւք արտաքս 'ի մերմէ քաղաքէս։

Իսկ թէ ոք դոյզն ինչ ևեթ Փամպիլիցի Ժողովրդարդիս փառաց 'ի ստոլեցն յունականաց [33] քան 'ի լատինականաց, անհնարին սխալէ. վասն զի յունականքն ընդհամարէն իսկ դրեթէ ազինս ընթեռնուն, լատինականքդ յանձկագոյն սահմանս իւրեանց գրաւեալ ամփոփին։ Վասն

որոյ, եթէ արարուածք քաջութեանց մերոց ընդ ամենայն ծագս տիեզերաց ընդարձակեալ են, ցոր վայր ժամանեալ ելցեն զէնք բազկաց մերոց՝ անդր և փառաց և անուան մերոյ ցանկալի է խաղալ անցանել. զի եթէ պանծալի են այսոքիկ ազգացն որոց իրք 'ի գիր ելանեն, ապա ևս առաւել որոց միանգամ զգրուխս վասն փառաց 'ի կշիռս դնիցեն՝ քաջալերութիւն են 'ի վանգս և 'ի ճգնութիւնս։ Քանզի ամենեքեան մատենագրաց իրացն իւրոց ընդ իւր ունել պատմի մեծն այն Ալէքսանդր. և սակայն յորժամ 'ի Սիդէոն առ Աբիլեայ դամբանին հասեալ եկաց, « Ո՛վ երանելիդ, ասէ, պատանեակ, որ քաջութեանդ քումդ զՀոմերոս դուեր քարոզ։ » Եւ արդարև յիրաւի. զի եթէ չէր Իլիականն այն 'ի միջի, դերեզմանն այն՝ որ զմարմին նորա ծածկէր՝ և զանուն նորա կորուսեալ էր հետախաղաղ։ Զի՞նչ այլ. և մերս այս Մեծ [34], որ զբախտին յաղողութիւն ընդ քաջութեան հաւասարեաց, ո՞չ ապաքէն յատենի զօրականին պարգևեաց քաղաքակցութիւն Թէոփանեայ միտիլենացւոյ՝ վիպագրի գործոցն իւրոց. և տրի արքն մեր այնոքիկ, բայց շինականք և զինուորք, քաղցրութեամբ իմն փառաց յորդորեալք, իբրև նոցին պարծանաց հաղորդս, մեծամեծ ձայնիւք հնչմամբք հաճեալ ընդ այն հաւանեցան։ Իսկ արդ Արքիաս, եթէ չէր օրինաք քաղաքացի հռովմէական, չկարացաւ՝ կարծեմ՝ [35] 'ի զօրագլխէ ումեքէ զքաղաքակցութեան առնուլ պարգև։ Ի շնորհել զայդ Սիլլայի Սպանոսաց և գաղատացւոց, մերժելոց ինչ էր զսա՝ եթէ խնդրէր, այն որ տեսաք մեք զնա յատենի հրապարակին, զի յորժամ քերթող ոք անպիտան 'ի Ժողովրդենէն մատոյց առ նա գրկոյս ինչ, յորում երգս ինչ զնմանէ յօրինեալ էր միայն՝ փոխ առ փոխ տողիւք տեղ ինչ երկայնիւք [36], անդէն առ ժամայն՝ յորոց վաճառէրն [37] յայնժամ՝ հրամայեաց տալ նմա վարձս, պայմանաւ՝ « զի մի ևս այլ գրեսցէ ինչ այնուհետև։ » Որ զքանս չմարթուն քերթողին վարձուց ինչ դէթ համարեցաւ արժանի, տուրս հանձարոյն և հարստութեան

Digitized by Google

'ի գիր և Հոխոռթեանն ոչ լոգանայր։ Եւ զինչ. միթէ և 'ի մեռելոնն իւրմէ Կ. Մեռեալոսն Պիոսէ, որ քաղաքաց շնորհեաց զքաղաքակցութիւն, ոչ անձամբ և ոչ 'ի ձեռն Լուկուլլեանց էմարթէնը 'ի ձեռս բերել, որոյ մանաւանդ այնքան մեր անձկացեալ արձանագրութեան գործոց իւրոց, մինչև քերթողաց անգամ ոմանց՝ 'ի Կորդուբա 38 ծնելոց՝ խոշոր իմն և օտարախորթ հնչմանց մատուցանել զունկն իւր։ Զի և չէ պարտ թաքուցանել զայս, որոմ անմարթ իսկ է աղօտանալ, այլ խոստովան լինել. ամենեքեան գովութեան տենչանաք ձգիմք, և ամենայն ոք վերհանձն՝ առաւել ևս վարեալ՝ընթանայ 'ի փառս։ Նոքին իսկ խնամատարքը՝ 'ի գիրսն անգամ զոր յաղագս արհամարհութեան փառաց մատեանագրեն, զանուանս իւրեանց դրոշմեն 'ի նոսին. և 'ի նմին իսկ յորում զհամբաւ և զքաջատհմութիւն խոստեալ անգամեն, քարոզիլ և անուանի լինել փափաքեն։ Մեծն այն այր և զօրավար՝ Դեկիմոս Բրուտոս, տաղիք ներս սիրեցելոյն իւրոյ Աստիոսի՝ զգրոնս տաճարաց և մեհեարձանաց իւրոց զարդարեալ ակնեաց։ Նա և այն ևս՝ որ զնինիոս ընդ իւր տարեալ ուղեկից՝ ընդ հետոլացեան կռուեցաւ, Փուլուիոս, ոչ ինչ երկմտեաց զանկածն իւր յաւարէն Արիսի՝ նուիրել Մուսայից։ Վասն որոյ, քաղաք՝ յորում զօրավարք գոգցես դեռ ևս 'ի զէն և 'ի զարգ պատերազմի՝ զքերթողացն անուանս և զտաճարս Մուսայից մեծարեալ պատուեցին, չէ արժան 'ի նմա խազաղագեաց պատմուճանեալ դատաւորաց հեստել՝ 'ի պատուելոյ Մուսայից և կենաց առնելոյ բանաստեղծաց։

Եւ զի մեռադիւրագոյնս զայդ առնիցէք, զանձն ձեզ, դատաւորք, արկից առաջի օրինակ, և զիմմէ աստի սատակագին թերևս՝ սակայն արդարավայելուչ փառասիրութենէ՝ եղէց առ ձեզ խոստովան։ Զի զոր մեքս 'ի բգեշխութեան մերում ընդ ձեզ գործեցաք իբր՝ 'ի փրկութիւն ոստանիս և պետութեանս, և 'ի վերայ կենաց քաղաքայնոցս և 'ի վերայ տէրութեանս առ հասարակ, ձեռն արկ սա 'ի

Digitized by Google

նոսին և սկիզբն արար տալոյ. զորս լուեալ իմ, քանզի մեծ ինչ իր և հեշտալի թուեցաւ ինձ, յորդորեցի զսա 'ի կատարումն ածել։ Զի առաքինութիւն ոչ այլ ինչ խնդրէ փոխարէնս վաստակոց և վտանգից՝ բայց 'ի փառաց աստի և պարծանաց. որ եթէ 'ի բաց կողոպտիցի, զի՞ է զի յանձուկ ասպարիսի աստ կենաց և 'ի տուր՝ յայսչափ 'ի ծանր աշխատութիւն զանձինս արկանիցեմք։ Ապաքէն, եթէ ոգիքն չունէին ինչ զգայութիւն յապայս, և եթէ 'ի սահմանս յորս ժամանակ կենացս բովանդակի՝ 'ի նոսին եւեթ զամենայն խորհուրդս մտացն վճարէին, ոչ յայնքան երկս տոչկէին զինքեանս, ոչ յայնչափ հոգս և 'ի 'աքնութիւնս տառապէին, և ոչ զկենացն անդամ մրցեալ մաքառէին այնչափ։ Այլ արդ յամենայն քաջալաւս՝ ընդաբոյս իմն տրնկեալ կայ 'առաքինութիւն, որ զանս և զգիշեր փառացն խթանաք զմիտսն ընդոստուցանէ, և յուշ առնէ՝ թէ ոչ ժամանակէիս ինչ կենացս պարտ է չափել զանուանցս յիշատակ, այլ առ ամենայն ապագայ հանդերձեալսն յորդորեալ տարածանել։ Իսկ արդ՝ միթէ ՝այնչափ նկնախոհ թուիցիմք ամենեքեան, որ 'ի պետութեանս և յայս վիշտս և 'ի վտանգս կենաց յամենեքեանս, զի իբրև մինչև ցվախճան ասպարիսին ոչինչ խաղալ և անդորր ոգի առնուցուք, զամենայն ինչ միանգամայն ընդ մեզ համարիցիմք մեռանել։ Ուր գրոչեալս և պատկերս, ոչ ոգացն նմանութիւնս, այլ մարմնոց, մեծաւ խնամով թողուցուն բազում արք հոյակապք, միթէ չկցէ՞ արժան առաւել զնորհրդոցս և զառաքինութեանց ցանկալ թողուլ զանիպս 'ի չքնաղ հանճարան կենդանագրեալ և ողորկատեսակ։ Եւ զամենայն ինչ զոր և գործէի, անդամին 'ի ժամանակէ անտի իրացն համարէի սփռեալ և ցանեալ 'ի յիշատակ յաւիտենական ծագաց տիեզերաց. թէպէտ և յետ մահու չիք լինելոց իցէ այն յիսմանէ զգայութիւնս, թէպէտ և ըստ կարծեաց արանց ամենիմաստից՝ 'ի մասն ինչ իմ պատկանիցի, զարդիս ապաքէն մտախոհութեամբ և յուսով զուարճանամ անշուշտ։

Վասն որոյ, դաստաւորք, պահեցէք զայրդ նովին պատ-
կառելի պատուո�ն՝ զոր տեսանէք սիրելի եղեալ բարեկա-
մացն շքոյ և հնութեան [39], և այնքանեաւ հանճարոսն՝ որ-
չափ արժանն իցէ զոյն վարկանել, զոր հանճարոյ արանց
աւագաց տեսանէք եղեալ ցանկալի. իսկ իրաւամբք դա-
ստատանի՝ որ օրինացն շնորհիւ, բանիւ ազատ քաղաքին,
Յունաստանեայց վկայութեամբ, և արձանագրօքն Մեսենիոսի
հաստատեալ է։ Եւ զի այս այսպէս, ինդրեմք 'ի ձէնջ, դա-
ստաւորք, եթէ ոչ մարդկեղէն և եթ, այլ և աստուածեղէն [40]
իմն ընծայութեան հարկ է 'ի մեջ անցանել, զի զոյն՝ որ
զձեզ, որ զզօրագլուխս ձեր, որ զարքական հանդէս հռով-
մէական ժողովրդեան յաւէժ գեղազարդեաց, որ և յայս
'ի մեր և ձեր առանին արդի վասնզա՝ խոստանայ տալ ա-
նեղծական վկայութիւն գովութեանց, որ և յայմմ թուոյ
է՝ որ միշտ առ ամենեսեան ընդ սուրբս են համարեալ և
քարոզեալ, այնպէս 'ի ձեր հաւատս ընկալջիք, որպէս զի
ձերով մարդասիրութեամբդ 'ի դարմանս լինել երևեսցի,
քան 'ի վնաս՝ յերեսաց խստութեան։ Զոր ինչ զդատէս,
ըստ իմում սովորութեան, համառօտ և պարզ խօսեցայ,
դատաւորք, վստահ եմ թէ ամենեքեան հաճ և հաւան
իցէք ընդ այն. իսկ զոր ոչ ըստ ատենից և ոչ ըստ դատաս-
տանական օրինի զհանճարոյ առնն ճառեցի և զուսմանէ
նորա առ հասարակ, յուսամ՝ 'ի ձեզ, դատաւորք, թէ 'ի
բարւոյ մասին զայն ընդունիցիք. իսկ որ զբուն դատողու-
թեանն պաշտօն ունի՝ [41] զնմանէ գիտեմ աներկբայ։

Digitized by Google

Digitized by Google

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ ԻՆՉ

Ի ՃԱՌՆ ԱՐՔԻԱՑ

Թիւ 1. Իմա քերթողութեան, յորում գրուատէ զԱրքիատոյ քաջութիւնն և զվատասկան։

2. Այս ինքն է Արքիաս, որ 'ի Լուկուլլեանց անտի՝ իւրոց ստորնջականաց, որպէս ասացաք, եառ զանուն ազգատոհմի նոցա Լիկինեան։

3. Ցարքիաս՝ քերթողականն հանճար, սոյլ 'ի ճարտարիւսութեանն Կիկերոնի։

4. Զորմէ օրէնք կան, և օրինօք վճարի։

5. Հաւանագոյն կարծեաց՝ Հակատաւիսի, որում առաւել 'ի գէպ են գովեստք Կիկերոնի. որ և բարիանուն իշխան կոչեալ Մակեդոնիոյ, ոչք մեծարոյ՝ սուրբ և անարատ կոչի 'ի վերլուսեան։

6. Առ որս եթէ ըստ գասն ելանիցեն բանքն, անպատեհ համարիցես։

7. Իմա առ մարդավայելուչ խրատուք և ախորժակօք հրահանգեալդ։

8. Բնակիչք քաղաքաց՝ որ յազգաց ազգաց յունականաց շինեալ էին 'ի Մեծի Ցունաստանին, որ են հարաւակողմանք Իտալիոյ։

9. Մեծամեծ արիւրոյն Հռովմայ՝ որ յիտալիա, 'ի Հելլադա և յԱսիա շրջէին։

Digitized by Google

10. Մարիոս՝ քան գրագիտութեամբ՝ պատերազմող քաջութեամբ անուանի, և բաւական 'ի մատակարարել 'նիւթ բազում մատենագրութեան. իսկ Կատուլոս՝ և ուսմամբք ծանօթ էր, և հմուտ գեղեցիկ խորժակաց ոչ չափաւորապէս։

11. Զհայրն իմն Կատոնիսի՝ որ յետ քաղաքական պատերազմին զիւրովին երթեալ Ս Ուտիկէ՝ Ուտիկեցի յորջորջեցաւ։

12. Գաղաք ականաւոր, որպէս ասացաք, ընդ Մէջ Մեսապոտամիայի և Տարենտոնի։

13. Յայտ է թէ հերակլիացիքն սերտագոյն իմն ուխտիւ դաշանց յօգեալ էին ընդ Հռովմայ քան զայլ երիսն. ապա թէ ոչ՝ ընդէր էր յետ նոցա յաւելուլ 'ի վերայ զՀերակլիա, մինչ զի և ոչ զդիւանագիրս նոցա բերել 'ի Մէջ։

14. Վասիոն աւուրքն վասն հեռաւորացն էին, զի 'ի միում 'ի ժամանակեալ աւուրցն կարող լինին գնալ 'ի Հռովմ և տալ զանուանսն 'ի գիր քաղաքակցութեան, և ոչ թէ զամենայն աւուրսն զայնս։

15. Առ Գրակքոս չբՋէ զամն, որ որպէս ասացաք 'ի նախագրութեան՝ դատախազն էր և ոսոխ քաղաքակցութեանն Աբքիասայ։

16. Ապիոս Կլաւտիոս Պուլքէր՝ հայրն Կլաւտիոսի, և Պ. Գաբինիոս ընդ Մեսուլլոսի կացեալ էին դատաւորք։

17. Գաբինիոս մինչդեռ դատաւորն էր յետ իշխանութեանն Աքսիլիոյ՝ ամբաստանեցաւ իբրև հատու և խորոշ հասարակաց գանձուն։

18. Հենգնօրէն է ասդ Կարնէմդ 'ի վերայ յայտնի և ստոյգ իրի։

19. Աշխարհագիր կամ աշխարհամար էր՝ յոր քաղաքացիք ամենայն մատնէին, տալով զհամար ամենայն ստացուածոց իւրեանց 'ի ձեռս համարակարին։

20. Հենգնական է թաքունն ասել զիրն քաջայայտ ամենեցուն։

21. ՅԱսիա, 'ի Միհրդատայ պատերազմն։

22. Առ առաջին համարակարօքն, որ յետ ընդունելոյ Աբքիայ զքաղաքակցութիւնն, չէք ինչ եղեալ աշխարհամար յոր մատնիցէ և Աբքիասայ։

23. Իրաւունք էին այն ամենայն՝ քաղաքացւոց միայն սեփականք. ուստի սուտ ես 'ի բանս քո։ Իսկ արձանագրութիւնն 'ի գանձս աշխարհին՝ էր 'ի պատիս և 'ի յիշատակ երախտաւորին առ պետութիւնն, և 'ի յոյս ևեթ բարեաց և շնորհաց առ յապա ակն ունելոյ 'ի պետան։

24. Ճարտարիօսութիւն բազում ինչ օգտի 'ի քերթուածոց ընթերցմանէ և գովութիւն ժառանգէ, մինչև հայր ասել և այնմ զՀոմերոս վասն բազում ազգի ազգի պերճաբանութեանցն, մանաւանդ ինքնորդի երդոյ Իլիականին։

Digitized by Google

25. Պոպլիոս Կոռնելիոս Սկիպիոն երբեմն, պարտութեամբն Անիբալայ և ափրիկեցւոցն կարգեցեալոց՝ Ափրիկեցի կոչեցեալ, որդւոյն մեծ և զարմանալի այր, պատերազմական քաջութեամբ և առաքինութեամբք դիւցազն հռովմայեցի, որում զուգական փայն եպատմնոնդաս Թեբացին 'ի Հելլէնս։

26. Օրինակք ինչ ընթեռնուն զմանուանին անուացանին կամ դասփաբանին։

27. Կունտոս Ռոսկիոս Գալլոս, անուանի 'ի Հռովմ կատակագուսան՝ բարեկամ Կիկերոնի, այն ինչ մեռեալ։

28. Աւանգուրթիւն որ կարգեալ գայր զամենց վաղեմի երգողաց, որպէս զՈրփէոսն, զԱմփիոնն։

29. Զսա ասեն առաջին կացեալ վարժապետ 'ի Հռովմ լատին գրագրութեան. և Սուետոնիոս ընդ երևելի հռետորսն գասէ զնա։

30. Այնչափ սիրս սիրելի և մեծարոյ համարեալ Ենոնիոս բանաստեղծ մեծին Սկիպիոնի, մինչև հաղորդ զնա ունել գամբանական պատուոյ և իբրև զմի 'ի նախնեացն։

31. Իսա Կատոնին Ուտիկեցւոյ, որ Թերևս անդ էր, և ընդ գաստուրսն եւս բազմեալ։

32. Այս ինքն զԵննիոս, որ էր 'ի Ռուդիք գաշնաւոր աւանն Ապուլիոյ, քերթող վիպասանութեանցն՝ յորս Կատոնն և այլքն յիշատակեալք գովաբանին, և այժմ չեն 'ի միջի, բայց միայն հատակատարք ինչ մեծամեծք։

33. Ցայս է թէ 'ի տաղն Աղբիայ ասկնարկէ, որ քանզի յոյն էր՝ 'ի յոյն լեզու և գրէր։

34. Ենէոս Պոմպիոս՝ որ անդ ուրեմն էր, կամ գէթ 'ի քաղաքին յատենախօսութեան ճառիս։

35. Հենգնական է և այս կարծիմ, որպէս և 'ի վերս անդր ազգ ապարաք։

36. Իսանան յեղերական տապանեալ տաղից տունս՝ որ երկտող են. առաջինն վերնատանի՝ երկոյն, երկրորդն հնգատանի՝ տող ինչ քան զայն կարճ։

37. Վաճառէր յայնժամ Սիլլա հրապարակաս զինչս Մարիոսեանց, զոր պարտեալ էր և տարագիր արարեալ և սպանեալ։

38. Քաղաք Սպանիոյ, ուստի էր և Սենեկա և Լուկանոս և Մարտիալիս, զորոց եւս Ճշմարտեալ է գատակնիքդ Կիկերոնեան մինչև ցայսօր։ Զի ըստ Մուրետոսի բանիբուն ասն և ըստ այլոց բազմոց, յետ աւգուստեան և տիբերեան աւուրց, որ չատ և որ սակաւ առաջինք եղեն յապականիչս ինքնազարդ և բնիկ գեղոյ հռովմէական բարբառոյն և բանաստեղծութեան, որ զանութիւն ունէր իւր առաջնորդ և կողապար, և օրինակ՝ զՀելլէնս։

39. Ոչ վարկպարարի և առժամեան ինչ բարեկամաց, այլ պա-

Digitized by Google

տուտուր և երկայնժամանակեան, որ տուաւել առնէ զաւանն մեծապանս և զբարեբարութիւն։

40. Զի երկնաւոր շնչմամբ երգեն քերթողք, որով սուրբ և նուիրեալ կոչին. և զի աստուածահաճոյ գործ է շնորհակալութիւն առ երախտաւոր փառաւորիչս անուան ազգի մերոյ։

41. Զհոգատիսսէ խմանայ, զոր և գովէ իսկ իբրև գեղեցիկ գլուխ բութեանց և մարգավայելուչ հրահանգաց կրթասէր։

Digitized by Google

ԿԻԿԵՐՈՎՆԻ

ՃԱՌ

ՎԱՍՆ Կ. ԼԻԳԱՐԻՈՍԻ

Digitized by Google

Digitized by Google

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Կ. Կոնստիդիոս Լինդոս, որ կայր փոխանակ կուսակալի Յափրիկէ, 'ի մեկնելն անտի 'ի Հռովմ կոչս՝ զփոխանորդ իւր զԿ. Լիգարիոս կացոյց մեզ ընդ իւր իշխան։ Իսկ իբրև պատերազմն բորբոքեցաւ 'ի մէջ Կայիսոսի Կեսարու և Կնէոսի Պոմպիոսի, քաղաքացիք և զօրաւորկանք՝ կուսակիցք Պոմպեայ՝ կամեցան առնուլ զԼիգարիոս՝ իբրեանց զօրավար ընդդէմ Կեսարեանց. այլ նորա աչք իւր 'ի տուն, և առ ընտանիսն դառնալ անձկացեալ, չառ յանձն շաղել այլ ևս 'ի գործ պատերազմին։ Աստու վարս զկուսակալութիւն Ափրիկոյ յապաստաղոյն առեալ և հասեալ յՈւտիկէ, սիրով կալաւ յանձին զմատուցեալ նմա իշխանութիւնն։ Մինչ այս մինչ այն, 'ի փոփոխել պաշտամանց, Լ. Ելիոս Տուբերոն վիճակաւ ընտրեալ կուսակալ 'ի Ծերակուտէն, երթայ 'ի մարզ անդր՝ որ ընդ ձեռամբ Վարոսի, և մերժեալ 'ի նմանէ որդւոյն Հանդերձ Կուինտոսիս, անցանէ 'ի Մակեդոնիա առ Պոմպիոս։ Լիգարիոս Ծայր Յափրիկէ. 'ի պարտութիւն մատնեին Պոմպիոսեանք և Յափրիկէ։ Կայիսոս Կեսար, թէպէտ և ցաստամբ ընդ յամառելոյն անդ ընդ իւր 'ի կռիւ և յետ անկանելոյն Պոմպիոսի, սակայն զկնի առմանն Ադրումետայ՝ չնորհեաց Լիգարիոսի զկեանն. այլ նորա չիշխեցեալ կամ չկամեցեալ դառնալ Իտալիա, եկաց անդէն ինքնակամ յաքսորս, մինչ գեռ եղբարք իւր և մերձաւորք և բարեկամք, ընդ որս և Կիկերոնն և մտերիմն իւր Կ. Պանսա, ոչ դադարէին աղերսել զԿեսար վասն դարձի նորին։ Կուինտոս Ելիոս Տուբերոն՝ գթութեամբ և ներողութեամբ Կեսարու դարձ արարեալ ընդ հօրն 'ի Հռովմ, առ քինալ ընդ Լիգարիոսի, զի նա Ծայր Յափրիկէ, և ինքն երեսամ մի յապաստ ընդ հօր իւրում մերժեցաւ. Յափրիկոյ, և գիտելով ևս ատելիս Կեսարու զմնացեալսն Յափրիկէ, չարաչար եղև զնմանէ առ ներողամիտն Կեսար, զի չէին յիտալիա և եկաց Ծայր

Digitized by Google

յԱփրիկէ։ Կուինտիլիանոս յիշատակէ և զՀառ. Նորա ընդդէմ Լիգաբիոսի, որում յետ ափրիկէան պատերազմին՝ պաշտպան եկաց Կիկերոնի առ Կեսարու սովին Հարտաք և գեղեցիկ հրապարակախօսութեամբ, զոր իբաւագէտն Պոմպոնիոս ամենագէղ կոչէ, և յոյժ հաճոյ եղեալ Աստիկոսի, Բալբոսի, Ոպպիոսի և այլոց բանիբուն արանց ժամանակին՝ բարեկամաց Կիկերոնի, որպէս յայտ է 'ի թուղթսն որ առ Աստիկոս, և յարդեանցն եւս, զի սովու յաղթահարեալ Կեսարու 'ի գթութենէն, ներեաց և շնորհեաց դարձ Լիգաբիոսի. որ ապա հրապուրանօք այլոց երախտամոռաց գտեալ առ բարերարն՝ ընդ այլ դաւաճանս Նորա կորեաւ ինքն և եղբայր մի եւս իւր։ Կուինտիլիանոս 'ի Հառէ ասի առնու յաճախ օրինակս՝ բազում գովութեամբ 'ի Հարտարախօսութեան հրահանգաց մատենին։ Յայս Հառ. և 'ի յաջորդդ՝ որ վասն Դիոտարայ աքջայի, դիտելի է մեծ ճիգն և Հարտարութիւն Կիկերոնի յարդարացուցանել և զանձն իւր, որ 'ի նոյն կողմնածութիւն Պոմպիոսի բամբասեալ էր։

Digitized by Google

ԿԻԿԵՐՈՎՆԻ

ՃԱՌ

ՎԱՍՆ Կ. ԼԻԳԱՐԻՈՍԻ

Նոր մեկայ, Կ. Կեսար, և յառաջ քան զօրս զայս՝ անլուր [1], քսեաց առ քեզ մերձաւորն [2] իմ Կ. Ցուբերոն, թէ Կ. Լիգարիոս կացեալ մնացեալ է Աֆրիկէ. և զայս՝ այրն գերագոյնագոյն Կ. Պանսա, յուսացեալ թերևս 'ի մոռացումն իւր ընդ քեզ, խլեսաց խոստովան լինել։ Վասն որոյ յոչ դարձայց ոչ գիտեմ։ Իմ, քանզի դու զայդ քեզէն գիտես ոչ մարթիր և ոչ այլուստ լսել, պատրաստեալ եկեալ էր զոգիութիւնդ քո պատրել 'ի փրկութիւն առանն հիքացելոյ։ Այլ քանզի 'ի փութոյ պնդութեան ոսոխին հեռաղօտեալ 'ի վեր ելեալ են դաղտնիքն, մանաւանդ զի և մոռացումն իմ Կ. Պանսա խլեսաց եհան զայն 'ի ձեռաց իմոց [3], պարտ է՝ կարծեմ՝ խոստովան լինել, զի թողեալ զպայքարելն՝ զամենայն բանս 'ի գթութիւն քո արժան իցէ յանդգնանել առնել ապաստան, որով բաղումք իսկ գտին զփրկութիւն [4], ընկալեալ 'ի քէն՝ ոչ զա-

Digitized by Google

զատութիւն յանցանաց, այլ զվերիպանացն ներումն։ Ու-նիս արդ, Տուբերոն, դյուէտ ցանկալին առն դատախազի, զպարտաւոր ոք՝ որ խոստովան լինի. բայց զայն լինի խոստովան, թէ յայնմ կողման գտաւ՝ յորում և դու ինքնին, Տուբերոն, յորում և այլն ամենագովելի՝ հայր քո։ Ապա հարկ է նախ ձեզ զձեր յանցանսդ խոստովանել, քան թէ մեզ ինչ ստգտանել'ի Լիգարիոս։

Վասն զի Կ. Լիգարիոս, մինչ չեմ ինչ դեռ կասկած էր պատերազմի, ընդ Կ. Կոնսիդիոսի տեղապահ չոգաւ Աֆրիկէ. յորում տեղապահութեան այնպէս սիրելի ընծայեցոյց զանձն քաղաքացւոց և նիզակակցաց, զի'ի մեկնել Կոնսիդիոսի 5 'ի նահանգէ իշխանութեան իւրոյ՝ չէր հնար հաճել զմիտն մարդկանն, եթէ զայլ ոք կացուցանէր 'ի վերայ նահանգին։ Արդ Կ. Լիգարիոս, իբրև յետ բաղում հրաժարելոյ՝ ոչ ինչ շահեցաւ, յակամայ կամն յանձն առ զիշխանութիւնն. որում և այնպէս իշխեաց 'ի խաղաղութեան, զի քաղաքացւոց և նիզակակցաց հաճոյ եղև յոյժ ուղղութիւն նորա և արդարամտութիւն։ Հրաւ ընդ հուպ լուցաւ պատերազմն, զորոյ եղեալքն յԱֆրիկէ՝ յառաջ քան զպատրաստութիւնն՝ զմղելն լուան։ Որ իբրև լուաղև, է որ անխորհուրդ ցանկութեամբ, և է որ առ կոյր իմն երկիւղի՝ նախ կենաց, ապա և գործոյն իւրեանց, խնդրէին զոք իւրեանց զօրավար. այլ Լիգարիոս 'ի տուն իւր ակն կառոյց՝ և առ իւրսն խանդակաթ, չառ յանձն մեկել 'ի գործ ինչ։ Առ այնու ժամանակաւք Պ. Առիոս Վարոս 6, որոյ զկուսակալութիւն Աֆրիկոյ ընկալեալ էր, երթայ հասանէ յՈւտիկէ. ամենեքեան առ նա ընթանան վաղվաղակի, և նա ոչ սակաւ տենչանաւք ընդդրկեաց զիշխանութիւնն. եթէ իցէ ինչ իշխանութիւն՝ տուեալն սոսկականի ումեք տաղտկալ տխմար ամբոխին, և ոչ հասարակաց ինչ խորհրդով։ Արդ, Լիգարիոս՝ որոյ իսկէք սրտին էին փախչել յամենայն այնպիսի գործոց, հանգեաւ՝ փոքր մի գաղտ-

առամբն Վարոսի։ — Ցայս վայր, Կ. Կեսար, յամենայն յանցուածոյ ազատ է Լիգարիոս։ Եվ նա 'ի տանէն՝ ոչ միայն և ոչ 'ի մի ինչ պատերազմ, այլ և ոչ 'ի դոյզն ինչ նշմար մարտի. տեղապահ երթեալ 'ի խաղաղութեան, այնպէս եկաց 'ի հանդարտեալ մարդի անդ, զի օգուտ նմա էր տեսեալ բաւեալ անխռով խաղաղութեանն։ Երթ նորա չուն ինչ անշուշտ վշտացուցանել զսիրտ քո։ Իսկ արդ՝ միթէ անգէ՞նն՝ մնալ. ամենևին իսկ ոչ. զի երթն ոչ 'ի չար կամաց էր, իսկ մնալն՝ յօրինաւոր հարկէն։ Ապա երկոքին այս ժամանակք առանց իրիք յանցանաց լինելոյ են. մին՝ զի տեղապահ չոգաւ, միւսն՝ զի Թափանձեալ 'ի գաւառէն կարդեցաւ իշխան Ապրիկոյ։ Երրորդ ժամանակ է՝ յորում յետ գալստեան Վարոսի մնաց անդէն Ապրիկէ. որ եթէ յանցաւորութիւն ինչ է, հարկէն էր յանցումն [8], և ոչ կամաց։ Եթէ կարօղ լինէք հնարիք ինչ խոյս տալ անտի, միթէ յՈւռիկէ՞ ճառաւել քան 'ի Հռովմ, ընդ Պ. Ասիոսմ՝ քան ընդ միասիրտ եղբարսն, ընդ օտա՞ր՝ քան ընդ իւրն սիրէր լինել։ Մինչ գեռ և տեղապահութիւն իւր լի էր անձկաւ և հոգովք յանհնարին գթոց հարազատացն, էր ինչ նմա հնար կալ անպլէկոծ մնաք՝ պատառմամբ պատերազմին յեղբարցն Ճեղքեալ։

Արդ ուրեմն, Կեսար, չգտանես ինչ տակաւին 'ի Լիգարիոս նշան ինչ կամաց 'ի քէն օգտելոյ. որոյ ես, միտ դիր՝ ազատչեմ, որովք վատահութեամբ ջատագով կամ դատին, ուր խմուեմ մնան լինիմ [9]։ Ո՛վ գթութիւն ազանչելի, և ամենայն դրուատից և հուչակաց և մատենից և արձանաց արժանի փառաւորութեան։ Մարիոս Կիկերոնն յառենի քում պաշտպան կայ այլում, թէ չէր յայն ինչ կամն՝ յորում խոստովան լինի եղեալ զանձն. ոչ 'ի լուսն խորհրդոցդ երկնչի, և ոչ՝ թէ 'ի լսելդ անդ զայլմն՝ զինչ 'ի միտդ ելանիցէ՝ զարհուրի։ Տես զիարդ աներկիւղ եմ. տես քանիսն լոյս առաստութեանդ քոյ և խնամատութեան յիս նշուղէ 'ի խօսելս առ քեզ։ Ամենայն զօրութեամբ ամբարձից ըզ-

ձայնս, զի լուիցէ զայս ժողովուրդն հռովմէական։ Ի բանալ դրանց պատերազմին, Կեսար, և 'ի խաղալ նա մեծաւ մասամբ յառաջ, ոչ 'ի բռնութենէ ինչ տագնապելոյ, խորհրդով և կամաւ յայն զէնս ընթացայ՝ որ հակառակ քեզ էին առեալ։ Իսկ արդ առ ո՞ զոք ասեմ զայս։ Առ նոյն ինքն իսկ՝ որ մինչ տեղեակն էր այսմ, չև տեսեալ զնա, դարձոյց սակայն 'ի քաղաքս. որ Թուղթս առ իս Յեգիպտոսէ առաքեաց՝ զի իցեմ նոյն որ ինչ էի. որ յորժամ ինքն միայն էր 'ի բովանդակ տէրութեան հռովմէական ժողովրդեան Սպարապետ, հաճեցաւ լինել զնս երկրորդ [10]. յորմէ, աւետաւորելով ինձ սորին ինքեան Կ. Պանասյի, զշնորհեալ խուրձան սարդենապակս առ իս կալայ՝ որչափ և արժան դատեցայ պահել. և որ յայնժամ համարեցաւ տալ ինձ զփրկութիւն, յորժամ եթէ անկապուտ ամենեին 'ի զարդուցս տայցէ։ Տես, աղաչեմ, Տուբերոն, զի զոր զինէն համարձակաձայն բարբառեմ՝ չիշխեմ խոսաւան լինել զի Իգարիոսէ։ Եւ յայն աղագս սասցի զինէն զայսոսիկ, զի յորժամ և զինքենէ ասիցեմ զնոյնս, ներեսցէ ինձ Տուբերոն. որոյ եւ հաճարարութեանն և փառացն թեանն ածեմ, կամ վասն մերձաւոր ազգախառնութեանն, կամ զի նորա հանձարով և խորժակքն զուարճանամ, կամ զի այնպէս համարիմ՝ թէ փառք մերձաւոր պատանուոյս՝ պտուղ ինչ և ինձ ընծայեսցէ։ Այլ զայս հարցանեմ. ովվ այն ոք՝ որ առ յանցանս ունի Իգարիոսի զլինելն յԱֆրիկէ։ Նա, որ և ինքն իսկ 'ի նոյն Ափրիկէ կամեցաւ լինել, և որանՕրէ նա՝ զի արդեալս 'ի Իգարիոսէ. և անշուշտ զէն իսկ 'ի ձեռին ընդգէմ Կեսարու 'ի կռիւ հակառեալ եկաց։ Զի զինչ այլ գործէր, Տուբերոն, սուսերն քո այն մերկացեալ 'ի պատենից 'ի փարսալեան հակառաւ. զոյր կողս խնդրէր սայրն այն. զինչ միտք էին զինուցն քոց, զինչ քո խորհուրդք, աչք, ձեռք, եռանդն սրտի. յինչ ցանկայիր, յինչ ըղձանայիր։ Կարի յոյժ տագնապեմ. խռովեալ տեսանի պատանին [11]. առ իս դարձայց։ Ի նոյն զէնս եղէ։ Եւ

յինչ այլ ջանացաք, Ցուբերոն, բայց զի զոր սայս կարէ՝ մեք կարասցուք։ Իսկ արդ, Կեսար, որոց անպատուհասն մնալ՝ քոյոյ դԹուլԹանդ պարծանք են, նոցին բանքն զքեզ յանգԹուԹիւն զլինեսցեն։ Սակայն 'ի դատի սատ, Տուբերոն, ոչ սակաւ և զքոյդ եւս, այլ մանաւանդ զՀօրդ խմաստուԹիւն խնդրեմ. զի այրն՝ հանճարով և գիտուԹեամբ վեհագոյն՝ չէ ագեալ 'ի վիտ զդատիս բնուԹիւն. զի ԹԷ էր առեալ, այլով որով և է ոճով և ոչ այսու ընտրէր քեզ վարել։

Աշխատեաս զխոստովանողն. ոչ է շատ. ամբաստան զնը-մանէ լինիս, որոյ լաւագոյն է դատն ըստ իս քան զքոյդ, կամ որպէս դու կամիս՝ հաւասար։ Այսոքիկ զարմանալոյ արժանի. բայց զոր 'ասեալցս եմ՝ 'ի սքանչելեաց իմն սակի է։ Այդ դատախազուԹիւն ոչ զայն ազգէ՝ զի դատապարտ եղջէ Լիգարիոս, այլ՝ զի 'ի մահ վարեսցի։ Զայդ ոչ ոք յա-ռաջ քան զքեզ արար Հռովմայ քաղաքացի. օտար և եկա-մուտ են այդ բարք [12]։ Արեամբ չափ բորբոքիլ գիտէ ատե-լուԹիւն Ցունացն ցոփոգեաց կամ գազանաբարոյ խուժ-գժիցն։ Զի զինչ այլ պահանջիցես. զի մի լինիցի 'ի Հռովմ, զի 'ի տանէն տարագիր լիցի, զի մի ընդ ամենայնս եղբարսն, մի ընդ սմին Տ. Բրուկքոսն՝ քեռւոյ խրուտ, մի ընդ որդ-ւոյ սորա՝ քուտ քեռորդւոյդ և մի ընդ մեզ կեցցէ. զի մի 'ի հայրենի աշխարհին լինիցի։ Եւ միԹէ իցէ. միԹէ մաք-Թիցի ինչ նմա առաւել քան զոր էն՝ Թափուր և ամայի յայդմ ամենայնէ լինել։ Արգելեալ է Յիտալիոյ, յաքսորս կայ։ Ապա ուրեմն ոչ 'ի հայրենեացն արկանել կամիս գու զնա, յորմէ անկեալ իսկ է, այլ և յարևէն։ Այլ զայդ և ոչ առ իշխանապետին այնմիկ [13] գատախազեաց ոք, որ զա-մենայն ատելս իւր մահուամբ պատուհասէր. զինքնին նա հրաման տայր սպանանել առանց ուրուք դատախազի, և վարձուք անդամ հրապուրէր։ Այլ ամենագորութեանն այնորիկ յետ ամաց ինչ խնդրեցաւ վրէժ յայնմանէ իսկ՝ զոր դու այժմ անողորմ լինել կամիս [14]։

Բայց ոչ զայդ պահանջեմ ես՝ ասիցես։ Այդպէս անեցուք. բայց հաւատամ և ես՝, Տուբերոն. քանզի ծանեայ զքեզ, ծանեայ զհայրդ, ծանեայ զտունն և զանուն ձեր. նա և փոյթ և խնամք զարմի ձերոյ և ազգատոհմի յառաքինութիւն՝ 'ի մարդասիրութիւն և 'ի գիտութիւն պէտպէս պատուական արուեստից՝ ծանօթ են ինձ առհասարակ. վասն որոյ ստոյգ գոսկաւ հաստատել եմ, թէ ոչ արիւն խնդրէք դուք. այլ ոչ մանր միտ գնէք. քանզի բանն յայն ակնարկէ, զի ոչ շատ համարիցիք զպատիժն յորում կայ դեռ ևս Կ. Լիգարիոս. արդ զինչ այլ մնայ՝ բայց մահ. զի եթէ յաքսորս է, որպէս զի և է իսկ, զի՞ ևս այլ պահանջէք։ Արդեօք զի մի՞ ներեսցի նմա. այլ խիստ ևս է այդ և առաւել դաժանագոյն։ Ասարտիցեա՞ ուրեմն՝ զի մի՞ ընկալցուք զոր հայցեմքս մեք 'ի տան՝ մայրենանօք և արտասուօք անկեալ առ ոտսն, ոչ այնչափ յիրաւունս մեր յուսացեալք՝ քան թէ 'ի սորա մարգասիրութիւնն. հինահաստ առնիցես զողբուն մեր, և զթաւալելոցս առ ոտսն զպերբական բարբառ հատանիցես։ Եթէ մինչդեռ զայս 'ի տան անդ առնիցաք, զոր և արարաք իսկ, և ակն ունիմ թէ ոչ 'ի նանիր արարաք, դու յանկարծահաս 'ի ներքս անկեալ և զաղաղակ հարկանիցիր. Զգայլ լեր, Կեսար, չներել, զգայլ լեր մի ողորմեացիս եղբարց որ զեղբօր փրկութիւն պաղատին, ոչ ապաքէն յամենայն մարդկութենէ մերկանայիր. քանիցն գժեղակ ևս է, զի զոր մեք առ ոտին աղերսիցեմք՝ դու այնմ յատենի հրապարակիս հակառակ կայցես, և յայս աղէտս բազմաց՝ զողորմածութեանն ապաստան բառնայցես 'ի բաց։ Պարզ ասացից, Կ. Կեսար, զոր գիտեմս։ Եթէ 'ի մեծի ասա յաջողուածի քումմ չէր այն քաղցրութիւն զոր դու քեզ, քեզ ասեմ, ժառանգես, — գիտեմ զոր խօսիցիս, — ստոգ դառնութեան անհնարին՝ յորդեալ զեղոյր 'ի յաղթանակդ։ Զի քանի բազումք լինէին 'ի յաղթականաց անտի՝ որ ապանագորոյն զքեզ կամէին լինել, որ զի և 'ի պարտեալոց անդամ գտանին 15. քանի բազումք, որ կամելով ոչ ունէք նե-

բել քեզ, զգթութիւնդ քո արդելուին, յորժամ՝ որոց և ներեցեր՝ նոքին իսկ չկամին քեզ ողորմած առ այլս լինել։ Զի եթէ և գոյր մեզ հնար հաստատել կեսարու՝ թէ ի խ-գարիսոսի չիք երբեք լեալ Յաբրիկէ, եթէ օրինաւոր [16] և արդարհատող ասով խնամ տանել կամեաք փրկութեան տա-ռապեալ քաղաքացւոյն՝ սակայն ոչ մարդոյ էր՝ յայսպիսի՝ տաղնապի և վտանգի քաղաքակցին՝ հերքել և յան-դիմանել զսուտ մեր. և թէ էր ևս ուանք, ոչ այնմ ինչ էր ապաքէն՝ որ 'ի նոյն փուրսէ և 'ի պայման գտանիցի։ Բայց այլ է՝ չկամել թէ խաբիցի Կեսար, և այլ՝ չկամել թէ ոչոր-մեսցի։ Յայնժամ ասել առաջի կայր. Յուշ, Կեսար, մի հաստատայցես. եղև Յաբրիկէ Լիգարիոս, առ զենս ընդ-գէմ քո։ Իսկ այժմ զինչ ասես. Ցնա, մի ողորմեսցես։ Այս ոչ մարդոյ, և ոչ առ մարդ է բարբառ, որով որ վարիցին զք առ քեզ, Կ. Կեսար, զեռն մնանեանդ յառաջա-գոյն ընկենուցս զմարդկութիւն, քան թէ զքոյդ խախ-տեսցէ։

Այլ առաջին մուտք և դատախազութիւն Տուբերոնի, որպէս կարծեմ, այս եղև, զի խօսել կամք էին նմա զեղե-ռանէ Կ. Լիգարիոսի [17]։ Ոչինչ երկեալիմ թէ զարմացար, զի ոչ զք զայլմէ ուանքէ, կամ զի սա՝ 'ի նմին դատի լինելով, և՝ կամ թէ զինչ նոր ինչ եղեւն յառաջ բերիցէ։ Եղեռն կո-չես դու զայն, Տուբերոն. իսկ ընդդէմ բնաւ. զի այնմ դա-տի չեղև ցայսօր այդ անուն։ Կէսք՝ վրիպակ կոչին, այլք՝ երկիւղ. իսկ որ իսատգոյնս, յոյս, ցանկութիւն, առեալու-թիւն, յամառութիւն. և որ ևս աստակագոյն, յանդգնու-թիւն. եղեռն՝ ոչ զք մինչև ցայժմ բայց 'ի քէն։ Իսկ ինձ, եթէ բուն և ճշմարիտն անուն խնդրեսցի մերոյ չարեացս, ապէտք ինչ թուին աստուածատաք անկարել, և զանգգաստ մեռս մարդկան պաշարեալ. վասն որոյ չէ արժան զարմա-նալ ուանք, թէ հարին աստուածազարմանց և եղ զմարդ-կեղէն խորհրդովք։ Թոյլ տուք թշուառս լինել, թէպէտ և որին յայլմանակաս չմարթի լինել։ Այլ ոչ զմինչ խասիմ.

Digitized by Google

զորոց մեռանին՝ զնոցանէ են բանքս. իցեն ցանկացողք, իցեն քննայցուք, իցեն յետասփիւռք. բայց 'ի մեզուց աշխր եկբ-բան, ապաստամբող մոլեգնութեան, հայրանենգ ապիրատութեան, տացի կն. Պոմպիոսի 18 վախճանելոյ, տացի և այլոց բազմաց սուրբ լինել: Ո՞վ ոք երթիք լուսաւ զայդ 'ի քեզ, Կեսար, կամ զի՞նչ այլ խնդրեցին զեզ քո, բայց բաշնալ 'ի քէն զնախատինսն 19: Զի՞նչ գործեաց բանսին քո անպարտելի, բայց զերկուանս քո պահել և զփառսդ: Եւ զի՞նչ. միթէ գու յորժամ խաղաղութեան ցանկայիր, զայն խնդրէիր՝ զի ընդ երեսնադարձս, թէ ընդ բարեգործաց քոյ զարգացեալ լինիցի քեզ միաբանութիւն: Այլ ինձ, Կեսար, շնորհք քո առ իս մեծասիրեալ՝ ոչ այնչափ ինչ երևեցին, եթէ երբեմն զերեռնասուր զբ զեռ առ 'ի քէն ապրեալ հանարեի: Եւ զիարդ գու երևեցուր առ պետութիւնս լինելիս, եթէ զայսչափ խուռն ամբոխ երեռնադարձաց կամիցիս թողուլ՝ անարբուտ պատուով: Դու 'ի սկզբանէ անաչ, Կեսար, զպատակուութիւն զայն ոչ պատերազմ համարեցար, ոչ ոհարիմ առելութիւն, այլ քաղաքական հերձուած. զի երկոքին զաջոյն պետութեանն ըզձանայիք. բայց է զի խորհուրդք և է զի ջանք 'ի հասարակաց օգուտ սիրալէին: Իշխանդդ գրեթէ զուգափաւք էիք, թիկնակիցդ՝ թերևս ոչ հանգիստապատիւք 20. իրաւունքն յայնժամ գեռ ևս յերկբայս, զի յերկուսեան կողմանն գոյր ինչ գովելի. զարդիս՝ զայն ապաքէն պարտ է լաւ հարմարել՝ որոմ աստուածքդ ինքնին օգնական եղեն: Իսկ 'ի յայսմ եկեալ դիտութեանդ քոյ, ո՞ չ ընդ այն յաղթութիւն հանձեսցի՝ յորում ոչ ոք մեռաւ, բայց որ զենեալն էր:

Այլ թողեալ զհասարակաց դատաստանն՝ եկեսցուք 'ի մերս: Հուսկ ուրեմն, Տուբերոն, որպէսզի դիւրագիր էր ասես Լ Իգարիոսի եղանել մեկնել յԱֆրիկոյ քան ձեզ ելբթալ յԱֆրիկէ: Միթէ էր ինչ մեզ մարթելի, ասես, ուր հրամանն ապատանոյն 'ի վերայ կայր: Եթէ դեռ հարցանես, ամենեքին և ոչ միով խիզ օրինակաւ: Այլ ասեցայն և զ'ի-

Digitized by Google

գարիոս նոյն ինքն աւագանին տեղապահ առաքեալ էր. և նա 'ի ժամանակին հնազանդ եղև, յորժամ հնազանդելն պարտ էր աւագանոյն. զուք յայնժամ հնազանդեցաք՝ յորժամ ոչ ոք հնազանդ գտաք՝ որ ոչն կամեցաւ։ Իսկ արդ՝ մեզ ինչ դնիցեմ։ Ոչ բնաւ. զի ոչ այլազգ ինչ օրէն էր զարմիդ ձերում, անուն, ազգատոհմի և գիտութեան։ Բայց ոչ չնորհեմ, զի յորս գուք պարծիցիք, յայլս բամբասիցէք։ Տուբերոնի ընկերացաւ վիճակ 'ի հրամանէ աւագանւոյն՝ մինչգեռ ինքն չէր մերձ, նա՝ և խոթութեամբ արգելեալ, եղեալ և 'ի մոռ՝ 'ի չքմեղս լինել, հրաժեշտաալ [21]։ Զայդոսիկ 'ի պատճառս բազում ընտանութեանն ընդ Ի. Տուբերոնի՝ գիտացի ես։ Այս ոնին՝ 'ի միասին հրաշանգեալք, 'ի գումարտակի՝ յարկակիցք, և ապա խնամունիք, և յամենայն իսկ 'ի կեանս՝ ընգերակիցք. մեծ իմն կապ և այն՝ զի հանապազ 'ի նոյն ուսմանս պարապեցաք։ Հմուտ ոգեւոն եմ՝ զի Տուբերոն 'ի տան ձնալ ախորժէր. բայց էր որ այնպէս սակաւք, այնպէս զամենատրբ անուն հասարակաց ընկերահաչա պետութեանն առաջի դնէր նոսա, զի թէ և այլ էին նորա խորհուրդք, սակայն խօսիցն ծանրութեան ոչ կարէր տանել [22]։ Զիկա, տեղի ետ բանից տաւագամեծար առնն [23], կամ մանաւանդ՝ պատուական եղև։ Միախուսմբ չոգաւ ընդ նոսա [24] որոց նոյն խնդիրքն էին. յամրագնաց ուղևորեցաւ, եհաս յԱրիրիկէ՝ որ կանխաւ գրաւեալ էր [25]։ Աստուստ յառնէ փուրսիշն 'ի վերայ Ի. Իգաբրիոսի, նա՝ մանաւանդ բարկութիւն. զի եթէ յանցանք են նոսա կամելն [26], ոչինչ ընդհատ մեծ է և ձեր նոսա խամեծաար առնելդ՝ ժառանգել քան զայլ ոք զարշարէն ապրիրիկեցւոց, զդրեանն աստենայն մարդոց, զծնեալն 'ի մարտ պատերազմի ընդդէմ քաղաքիս այսորիկ։ Բայց զոր այլ ոքն ասեմ, ոչ Ի. Իգաբրիոս է. Վարոս ասէր զանձնէ 'ի բանին ունել զիշխանութիւնն. զիսուրձան ունէր ասուզիս։

Այլ այն զիարդ և է [27], այդ բողոքդ ձեր, Տուբերոն,

Digitized by Google

զինչ կամիցի ազգեալ։ — Զընկալան զմեզ 'ի նահանգն։ — Եւ զինչ՝ եթէ ընդունէին. տալցո էիք զայն 'ի ձեռս Կեսարու, թէ ընդդէմ Կեսարու պահելոց։ Ցեռ, Կեսար, զինչ համարձակութիւն, մանաւանդ՝ թէ յանդգնութիւն տայ մեզ քո ազատականութիւնդ։ Եթէ պատասխանի տացէ Տուբերոն, թէ հայր իւր մատնելոց էր 'ի քո ձեռս զԱֆրիկէ՝ յորս առաքեալ էր զնա աւագանին և վիճակն, ոչ ինչ երկմտեցայց՝ թէ դու, որում արարուած նորա քեզ յօգուտ էր, ծանր ծանր բանիւք զխորհուրդ նորա կշտամբէիր առնմա. զի թէ և հաճոյ լինէր գործն, բայց և ոչ գովելի յաչս քո։ Այլ զայսու ամենայնիւ զանց առնեմ. ոչ այնչափ՝ զի մի ներող լաւելացդ պատերազմող եղէց, քան՝ զի մի Տուբերոն՝ զոր ոչն երբեք ած զմտաւ՝ երևեսցի թէ առնելոց էր։ Արդ գնացեալ երթայիք յաֆրիկեանն մարդ, որ միայն էր յամենեցուն անհնարին ոխերիմ այսր յաղթութեան. յորում էր թագաւոր հաստատութեան [28], թշնամի այսմ խնդրոյ. կամք օտարոտի, գունդք հղօրք և ստուարք։ Զինչ առնել էր ձեզ, հարցանեմ։ Այլ միթէ երկայնցիմ ինչ՝ թէ զինչ էիք առնելոց, մինչ դեռ զոր արարէքն [29] ահա տեսանեմ։ Խափանեցայք չկոխել 'ի մարդ խշխանութեան ձերոյ, և խափանեցայք՝ որպէս պատմէքն՝ յետին թշնամանաքդ։ Զիսրդ տարայք այնմ. զկրկին թշնամանացդ առ ի ոք արկէք բողոք։ Առ նա ապաքէն, որոյ ճոխութեանն անասցեալ՝ [30] յարբանեկութիւն պատերազմին երթեալ էիք։ Զի եթէ 'ի Կեսարու ասկս երթանկայիք 'ի մարդն, յարժամ 'ի մարդէն մերժեցայք՝ անշուշտ առ նա անցեալ գնայիք։ Զոգայք առ Պոմպիոս. զինչ է ապա արքառունդ ձեր այդ առ Կեսարու, չարախօս լինել զայնմանէ՝ յորմէ խափանեալս զձեզ քանքաստէք 'ի պատերազմելոց ընդդէմ Կեսարու։ Այլ արդ յայդմ, ընորհեալ ձեզ յինէն, թէ կամիք և ստութեամբ պարծեսջիք, զի եթէ 'ի Վարոսէ կամ յայլոց ոմանց չէիք արդելեալ՝ գուք զմարդն զայն 'ի ձեռս Կեսարու էիք աւանդելոց. և ես խոստովան

եղէց, թէ Լիգարիոսի է ինքեան, որ զայնչափ զմեծի փառացն պատահմ հանեալ է 'ի ձէնջ։

Արդ տես ազաչեմ, Կեսար, զհոյակապ առնն Լ. Ցուլիերոնի զանգեղումն միտն. զոր թէպէտ և ես ինձէն գովէի, որպէս և գովեմս, սակայն ոչ յիշատակիէի, եթէ չէր 'ի վերայ հասեալ՝ զի զայն առաքինութիւն ընդ առաջինն սովոր ես գու 'ի գովութիւն առնուլ։ Արդ՝ յոմ ուանք երբեք երևեցաս այնչափ հաստատութիւն մտաց. զանյոգդողդ միտն ասեմ. չգիտեմ թէ լաւ ևս իցէ արդեաք երկայնմտութիւն ասել։ Զի քանիք ոմանք առնէին զայս, թէ որ չընկալանն զնոսա 'ի քաղաքական հերձուածի, նա և անողորմաբար հերքեցին, անգրէն միւսանգամ առ նոսա 31 դարձեալ երթայցեն։ Մեծի ինն հոգւոյ և առն այնպիսւոյ էր, զոր 'ի խոստովանեալ իրաւանց և 'ի մտացն ազատաբկութենէ՝ ոչ դաթով, ոչ բռնութիւն և ոչ վանդ ինչ զբերէր հարթուցանել։ Զի թէպէտ և այլն ամենայն հատարքակ էր Ցուլիերոնի ընդ Վարոսի, պատիս, ազնուականութիւն, փառք և հանճար, որոց չիք երբեք եղեալ, այս ամենքս ևս առաւել էր Ցուլիերոնի, զի արդար իշխանութեամբ ըստ կամաց աւագանւոյն 'ի մարդ պաշտամանն իւրոյ էր գնացեալ։ Իբրև կրճինն 'ի մէջ անկաս, ամենի ոչ առ կեսար չոգաս, զի մի սրամտեալ երևեցցի. ոչ 'ի տուն՝ զի մի ոգեբրդ. ոչ յաչխարհ ուրեք, զի մի անարդ և խոտան առնել զկոյսն Թուեացի՝ որում հպատակն լեալ էր. 'ի Մակեդոնիա՝ 'ի քանակ անդր կն. Պոմպիոսի գնաց եկն, 'ի նոյն ինքն 'ի կոյսն՝ յորմէ վասրեալն էր անարգանաք։ Զի՞նչ ապա. իբրև այս իր ոչինչ շարժեաց զանձն նորա՝ առ որ եկեալն էիք, կարծեմ փոքր մի լուծեալ լայաք 'ի ջանս ձեր առ իրաւունս նորա. 'ի պարեկապանան եւեթ կայիք 32, խակ ոգիքդ՝ 'ի խնդրոյ անտի աւելոց երևեալ էին։ Արդեաք, որպէս յընտանի պատերազմունս լինի, ոչ այնչափ 'ի ձեզ քան յայլս, 'ի յաղթութիւն ըմբռնեալ կայաք ամենեքեան։ Իմ ջանք՝ միշտ 'ի իսպառութիւն էին. այլ յայն-

ժամ՝ անասնան ուրբեան. զի անմոռ էր, մինչդեռ Ճակատս առաջի տեսանէիր, խորհե՛ի խաղաղութիւն։ Այլ արդարև ամենեքեան յաղթել կամիք. զոր մանաւանդ առանց յերկուանաց՝ որ յայն վայր [33] չոգար, ուր կարուստ կայր քեզ՝ եթէ ցաղթեիր։ Թէպէտ և, որպէս զիարդ ինչ այժմս է, ոչինչ յերկուանամ թէ զպիրկութիւնս զայս առաւել ընարեա քան զայն յաղթութիւն։ Զայս ես ոչ ասեի, Տուրբերոն, եթէ ձեր ընդ անասազամ միտս ձեր ստրջացեալ էր, կամ Կեսարու՝ ընդ բարերարութիւն իւր։ Այլ տեղեաւ՝ հարցանեմ. արդեաք զՀեր, եթէ զհասարակաց ընկերաշահութեանցս զիշնամանան պահանջեցէք։ Եթէ հասարակ զգեստութեանս, զինչ տայցէք պատասխանի զյամառեալ պնդութենէդ ձերմէ յայն խնդիր [34]. իսկ եթէ զձերդ, ասեաք մի սխալեցէք, համարելով թէ Կեսար զիշնամիս ձեր պատուհասեսցէ, որ և իւրոցն իսկ թողութիւն շնորհեաց։

Եւ արդ, Կեսար, իցէ թէ թուիցեմ քեզ ինչ՝ ի գատ ի խաբրիսի մտագիւր պարապեալ, զգէտս նորին ճանաչեալ։ Որ զինչ և խօսեցայս՝ կամիմ բովանդակել՝ ի մի գլուխ մարդասիրութեան քոյ կամ գթութեան կամ ողորմութեանդ։ Բազում գատս խօսեալ է իմ, Կեսար, և ընդ քեզ ևս [35], յորժամ՝ ի պատճառս պատուոյ և փառաց քոյ յամէիր յատենի հրապարակիս. բայց ծն և ծն, ոչ երբեք այսուռՀով, ՆէրէՅԷ, գոգաւոր, պաղէաց, վրիպեաց, ու ի՞ՀրՅեաց. ԷՆԷ ԷրԷԷ այսուհէպա . . . . Զայդ օրինակ՝ առ հայր օրէն է բարբառել. իսկ առ գատաւորս, Ուշաբ, ուրի՛ ի մոբ, ասոբ են Վայ, ՇԷս ոբայոբ։ Դիր, Կեսար, թէ՝ ի գատեսս ի խաբրիսի՝ գատաւոր իցես. հարց, յորմէ՝ պահապան գնդի եղեալ իցէ։ Լուռ լինիմ. և ոչ զայսոսիկ՝ ի հանգիսի անցուցանեմ, որ առ գատաւոր ևս իցեն Թերևս զորսաւոքք։ Տեսապահ երթեալ յառաջ քան զպատերազմն, թողեալ լքեալ՝ ի խաղաղութեան, մարտիս պաշարեալ, յայնմ ոչ գաժան, այլ և հոգւով և ջանիւք բովանդակ քոյ։ Այ գա-

սասուրս սովոր են այս բանք, այլ ես առ. հայր բարբառիմ. Մոլորեցայ, ընդ խօլ գործեցի, զիրՀ է ինձ, 'ի գԹուԹիւնդ ապաւինիմ, Թողութիւն խնդրեմ յանցանացս, ներել ապաւ չեմ: ԵԹԷ չիք ուրուք առեալ զինդրելն, յանդգնաբար 36. եԹէ բազմաց, գու նոյն ինքնդ ձեռն կարկառ՝ որ զրոյն եառաւ: ԵԹԷ չիցեն ինչ Լիգարիոսի պատճառք յուսոյ, մինչդեռ ինձ առ քեզ՝ և վասն այլոց ես գոյ տեղի մաղԹանաց. Թեպէտ և ոչ 'ի ճառս յայս՝ եդեալ է յոյս գասոս, և ոչ 'ի ճգնուն այնոցիկ՝ որ պաղատին առ քեզ վասն Լիգարիոսի ջերմեալն քո կարեւորք: Զի տեսի և 'ի միտ առի, յինչ առաւել գնասին ոմանք, յորժամ բազումք 'ի վերայ փրկութեան ուրուք գուն գործէին. քան զպերս՝ հաճոյս գոյն էին քեզ աղաչաւորացն դառք. և ոչ յայն հայէիր՝ ԹԷ քանի սիրելի քեզ ելեալ աղերսաւորդ, այլ ԹԷ քանի այնմ՝ որոյ վասն տառապէր: Ուստի և այնպէս ճոխաբար ընձեռեաս գու քոյոցդ, զի երանելի ես Թուին ինձ երբեմն՝ վայելեալքն յառաստութիւնս քո, քան զքեզ՝ որ այնպիսի առատապարգև առ նոսա գառանիս: Սակայն, որպէս ասացիս, տեսանեմ զի առ քեզ առաւել զօրեն աղերսարկուացն դառք քան պաղատանք, և գու առաւել 'ի նոցանէ շարժիս՝ զորոց զՀնմարիս ապէսան 'ի խնդրուածն անդ տեսանիցես:

ԵԹԷ ԶԿ. Լիգարիոս փրկեացես, բազմաց և ջերմոցն քոց առնիցես շնորհս. այլ զայս ածի աղաչեմ զմնաս՝ զոր և սովորդ իսկ ես: Ի ինձ զարան հզօրս՝ զաաբինացիսն՝ զքո գովելիս, և զերկիրն ոչՀայն սաբինեան, գծաղիին Իտալիոյ և զկորով առաջի մատուցանել. Ճանաչես քաջ զորեարն: Հայեաց աղէ 'ի տրամաբանութիւն նոցա սահմանեցուն և 'ի ցաւս: Զ8. Բրոկքոսիս, որ ԹԷ զինչ արժիցէ յաչս քո՝ ոչ ինչ երկայիմ, տեսանես զնուրուանն և զարտասուս, զիւրն և զորդւոյն: Զինչ զեղբարցն ասացից: Մի համարիցես, գեսար, ԹԷ միոյ ևԷԹ գլխոյ բանք իցեն մեր. կամ զերբեսան ևս Լիգարեանս պահելոց ես 'ի քաղաքիս, կամ զերբեսեան

Digitized by Google

և տարագիր հանելոց։ Ի վաստակելի միոյն այնմիկ, ամենայն ազգարանք առաւել ցանկալի են սոցա՝ քան զաշխարհս հայրենի և քան զտուն և քան զԵթերապան ընտանիս։ Եթէ 'ի հարազատութենէն, եթէ առ գութեան, եթէ սրտացաւութեամբն պոռնեն, շարժեացեն զքեզ արտասուք սոցա, շարժեացեն խանգաղատանքն, շարժեացէ արիւնն լերգակից։ զօրացի ձայն քո այն որ յաղթեացն։ Քանզի լսէաք զքո ասելդ, թէ մեք զամենեսին՝ բաց յորոց ընդ մեզս իցեն՝ առ թշնամիս ուղիղք, իսկ դու առ քոյս՝ զամենեսին որ ոչն իցեն քեզ հակառակ։ Արդ տեսանիցես զայս շուք փառաւորութեան, զտունս զայս Բրոկքեանց առ հասարակ, զլ։ զայս Մարկիոս, զկ։ Կեսեարիոս, զլ։ Կորփիտիոս [37], զասպետքս զայսոսիկ համարէն հռովմայեցիս, որ ասես են կերպարանափոխ հանդերձիւք, արք՝ ոչ միայն ծանօթք քեզ, այլ և արդեաք, ընդ քեզ եղեալք։ Եւ ասկայն ընդ սոսա բարկացեալ էաք, սոցա 'ի խնդիր էաք, ոմանք և ըստառնային իսկ սոցա։ Եւ արդ պահեա քոյոցդ զնոցայսն, որպէս զի իբրև զայլ բանս քո՝ Հիմարիա գոցի և այդ անվրէպ։

Զի եթէ կալցէ էիր 'ի խորհակատել զլ։ խաչբեանցն միաբանութիւն, զեղբարսն զամենայն ընդ քեզ լեալ վարկանէիր։ Իցէ՞ ինչ ուրեք յերկմիտս լինել, զի եթէ կ։ ։ խաչբիոս յիտալիա գաւանէր, 'ի նոյն միտս և 'ի խորհուրդս լինելոց էր՝ յորում և եղբարքն։ Ո՞ է որ զսոցա համաշունչ և զմիախոհ մտերմութիւն յայսմ գոգցես եղբայրական հարթ հաւասարութեան ոչ գիտիցէ։ ո՞ ոչ 'ի միս առնուցու, թէ ամենայնի մարթէր լինել՝ և ոչ հարազատացս այսոցիկ յայլ և այլ միտս և 'ի բաժանս ասատանգել։ Ամենեքեան ուրեմն ընդ քեզ եղէն կամաք սրտիցն։ Մին մարկաւայփշտակեցաւ։ որ եթէ և կամաւ էր զայն արարեալ, նման այնոցիկ լինէր՝ զորս համայն գու և այնպէս ապրեցուցանել հաճեցար։ Բայց լեցի երթեալ 'ի պատերազմ, օգտակ՝ ոչ 'ի քէն միոյն, այլ և յեղբարցն։ Սոքա քոյքդ

պաղատանն առ քեզ։ Նա աստանիկ անմոռաց ունիմ 'ի մտի, թէ յորժամ յամենայն 'ի գործս քո խառն էի, որպէսզի էր Տ. Յիսուսիոս գանձապետ քաղաքիս ընդ քեզ և ընդ փառան [38] քում։ Բայց փոքր ինչ է յիշելն իմ զայս. ակն ունիմ թէ և դու ինքնին, որ ոչինչ սովոր ես մոռանալ բայց միայն զառ քեզ անիրաւութիւնս, զի այս մոռացդ է, զի և հանձարոյդ, դու ինքնին 'ի խորհելդ ինչ զսորա գանձաւորութենէն և զայլոց ոմանց գանձապետաց՝ ուշ 'ի կուրծս արկեալ յիշատակեացես։ Արդ սա այս Տ. Յիսուսիոս, որ ոչ ինչ այլ արար յայնժամ, — զի և դուշակէր ոչ զայսոսիկ, — բայց միայն զի փութոտ և ժամանն առ քեզ զինքն համարեցիս և այր բարի, այժմ յողոք առ քեզ անկեալ աղերսել զեղբօրն փրկութիւն։ Զոր եթէ սորա միջնորդելով յորդորեալ շնորհեացես երկոցունց սոցա, եղբարս երիս ամենաւաստ և անարատս, ոչ ինքեանց միայն և ոչ այսչափ և այսպիսի արանց և ոչ մեզ սիրելեաց նոցա, այլ և ընկերհաշտութեանս լեցի քո պարգևեալ։ Արդ զոր փոքր մի յառաջ 'ի ասացարին խորհրդոյ ցուցեր 'ի Մ. Մարկելլոս [39] յայրն ազնուական և հոյակապ, ապէ ցոյց զնոյն յատենի սատ և առ. եղբարսն ընտրականս և գովելիս համարէն այսմ բաղմութեանս։ Զոր օրինակ շնորհեցեր զնա աստանդեան, տուր նոյնպէս և զսա ժողովրդական, զորոյ զկամսն սիրեցեր միշտ յոյժ։ Եւ եթէ օրն այն քեզ 'ի մեծ փառս, ժողովրդական հոռովմայ 'ի խնդութիւն եղև, մի ինչ՝ ապաչեամ՝ յերկբայս վարանիր, Կեսար, զնմանօրինակ գովութիւն այնր փառաց յաշխարհ ասէպ խնդրել։ Զի չեք ինչ հանգոյ ժողովրդական քան զքաղցրութիւն, և ոչ մի ինչ յառաքինութենանց քոց 'ի բաղմաց՝ ոչ յաւէտ սխրալի, և ոչ առաւել սիրելի քան զողորմածութիւն։ Զի ոչ այլով իւիք առաւել հուսալ մատչին մարդկի առ աստուածան, որպէս փրկութիւն գործելով մարդկան։ Զիք ինչ 'ի բախտին քում այլ ինչ մեծ՝ բայց զի կարօղդ իցես, և ոչ 'ի բնութեան քում այլ ինչ լաւ՝ բայց զի յոլովագունից իցես կամեցօղ փրկու-

թեան։ Ճառս իմն երկայնագոյնս պահանջէր թերեւս գասն, այլ քո բնութիւնդ հաւասաւեաւ զկարճագոյն։ Արդ քանզի առաւել շահ համարիմ քեզ ինքնին ընդ քեզ խօսել, քան թէ ինձ կամ այլում ումեք, ատոանօր վախճան ազարիցս։ զայս ևեթ քեզ յուշ արկեալ, զի եթէ հեռաւորին այնմիկ շնորհեսցես զկեանն, պարգևելոց ես ամենեցուն սոցա սատ եզելոցս։

Digitized by Google

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ ԻՆՉ

Ի ՃԱՌՆ ԼԻԳԱՐԻՈՍԻ

Թիւ. 1. Հնդնօրէն է այս ճառս և որ զԿիր այլ և ազգ բանք Ի յառաջաբանի առս, որպէս 'ի մեռոց իշխիչն ասել զՊանասլէ, և յո դարձեալն, և փաղանիկն 'ի Վիր Իլն, և այլն։

2. Խնամի նիկերոնեի եր, զի զբոլոր նորա տան կալեալ 'ի կին։ Ի-զայդ խորհրդով յիշատակէ, զի մի ընդ ասելի պարարանութիւնի, և զի բանք իւր հաստատմանպոյն լինիցին, իբրև առ անանձնութեան Լի-գարիոսի՝ չնեայեալ և 'ի խնամութիւն։

Ճ. Խաստովանութեամբն զոր ասաց՝ չեթող ասելի խաբանաց. հնդ-նութիւն է բանվանդակ։

4. Կենանէ և վեցն ինքն զՅուլիոսեանն, որ ներքսութեան կարգս գտան և նոքա 'ի նոցն պատճառս, որպէս և ինքն իսկ Նիկերոնն, որ 'ի միւսում կողմանն կայցին առ Պոմպիոսի. զի ամենայն լաւք և քնկեր-հաշտութեանն սիրողք, իբրև զկատուն, յայտնի կողմանն կին. զոր և օչ առ յանցանս ինչ ասնէին, այլ առ վերնագի ինչ և ներ 'ի մեջ հաստատելոյ պատահեալ. մինչև ասել Լուկանոսի քերթողն (Փարս. ե. 128)։

Դիպ հաճոյ եղև կողմն յաղթող, պարտեալքն կատաղի։

5. Գնայր նա 'ի Հռովմ 'ի խնդիր բդեշխութեան։

6. Վարաս ոգս, իբրև պարտեցան Ցկիպիոն աներ Պոմպիոսի և

Ցուբան արքայ մաւրիտանացւոց, յափրիկեան մարտէն փախեաւ 'ի Սպանիա ընդ Սեքստոսի Պոմպիոսի և Լաբիենոսի: Իբրև անդ և նոր բանգեցաւ պատերազմն ընդ որդւոյն Պոմպիոսի, 'ի Մունդայ կաւուն պարտեալ 'ի Կեսարէ սպանաւ:

7. Հանդերձ 'ի տաղնապելոյ անտի և 'ի փախուստս ամենապարելոյ, զի մի բանի զօրագլուխ կարգեսցի:

8. Զի տեսիցէր հպատակել Ղարոսի՝ նորոյ փոխանակի բդեշխին:

9. Զի Կիկերոնի կամակաւ զՊոմպիոսի կողմ կալեալ և պատերազմեալ և էր ընդ նորա դրօշուք, ուր Լիգարիոս ակամայ 'ի հրամանէ կամ 'ի հարկէն:

10. Զի փոխանակ բդեշխի առաքեալ 'ի Կիլիկիա, խաղաղացուցեալ զԱման, և բարձեալ անտի զանդգաստելի թշնամին, և յօղեալ ոչ տակաւ 'ի գործն. զօրագլուխ աղքատեցաւ. և 'ի գարձին, քանզի չեմուտաւ 'ի Հռովմ՝ ուր օրէն էր մերկանալ յիշխանութենէն, կալաւ յերկաւ զնուրձան և զանուն փոխանակի բդեշխի մինչև ցամ չորս:

11. Ցուբերան որդին. այլ որպէս Կուինտիլիանոս ասէ, շարժեալ է բանիւքս և կեսարաբ ինքնին. և ըստ Պլուտարքեայ, 'ի յիշատակ լեկոյ Ճակատուն Փարսալեայ՝ այնպէս գղջեալ, զի որ դատապարտեալն էր զԼիգարիոս 'ի մոռ իւրում, և առ հարկի եւթ օրինի հրահանգաց կայր ելեր Կիկերոնի, 'ի բանսն յայնս վեր 'ի վայր վազովեալ, և թղթոցն որ 'ի ձեռին՝ անկանել, և հակառակ առանձին մնացին՝ արձակուրդ շնորհել գատապիտելոյն:

12. Աստն ունելնմա առ իւր գաղտագրիս ոմանս և Ցոյնս, որ զնա յոխութիւն և 'ի ժանտութիւն գրգռէին:

13. Առ Սիլլայի, որոյ յայտնի են նախնիքքն 'ի մարիսեան կողմանէն:

14. Զի գատաստան կեսարաբ առ մարդագաս արիկայս կալաւ և զոյնսսիկ, որ ըստ տարապարութեանց մատուցեալ զկառափունս հռովմայ քաղաքացւոցն՝ վարձս առեալ էին արձանի 'ի գանձէ աշխարհին. թէպէտ և Կառնելեան օրէնք անպարտ առնէին:

15. Ալդ և յաղորդ բանգ յայտ յանդիման զՑուբերան զդատաստանն հարկանեն:

16. Օրինաւոր իմն ըստ գատաստանական օրինաց իւրեանց, և ոչ ըստ յաւխանեանական ճշմարտութեան և արդարութեան իրաւանց:

17. Զի այսպէս սկսանէր ճառն Ցուբերանի. «Խօսել կամիմ զերանէն Լիգարիոսի:»

18. Զխոշնէ ինչ անուանել զՊոմպիոս յանգիման լու 'ի լու կեսարու. զի սա ինքն պատուով յիշէր միշտ զնա:

19. Զի արգելուին 'ի նմանէ գլխազրանակ ճեմելիս, և զերկրորդ անգամ՝ բդեշխութիւն՝ զոր տուեալ էր ժողովրդին:

Digitized by Google

20. Մեղմով իմն զպոմպիկանան քան զկեսարիանան նախամեծար առնէ. զի ընդ Պոմպիոսի էին բգեղիքն երկոքին և բազում աւագութեամբ և իշխանիք. իսկ ընդ Կեսարու՝ և ոչ մի յառաջնոց աւագանոյն։

21. Զհօրէն Տուբերոնն է բանն. և խմանալի է 'ի պատճառս հիւանդութեանն՝ զոր պատճառել կամիր։

22. Զի առ սա Լ. Տուբերոն հայր՝ 'ի բիծ սանելով ասէին, թէ դու միայն ես որ ընդ Պոմպիոսի չմիաբանիս։

23. Սովորաբար խմանան զՊոմպիոս, սմանք զկեսարն։

24. Ընդ այլ բազում կուսակալս, որ 'ի հրամանէ Պոմպիոսի և աւագանոյն՝ ընթանային հասանէին այսոր անդր՝ ըմբռնել զամուր տեղիսն։

25. Ի Պ. Վարրոն, որպէս ասացաք 'ի նախագրութեան։

26. Լիգարիոսի կամին արգելուլ զձեզ յԱֆրիկոյ՝ ընդ որ բարկացայք, իբրև թէ զի ինքն մեռացէ, և ձեր ինգալդ ընդ վիճակել Ափրիկոյ ձեզ քան այլում ումեք, հաւասար են։

27. Այս ինքն, թէպէտ 'ի ձեռս Լիգարիոսի էր իշխանութիւնն, թէպէտ Վարրոն։

28. Ցուբաս արքայ մաւրիտանացւոց՝ որ էր կողմնակից Պոմպիոսի. զի հայր իւր Հիեմփսալ 'ի նմանէ կարգեալ էր թագաւոր. ընդ նմա և ամենայն աշխարհին օտարացեալ էին կամք 'ի կեսարէ։

29. Զի Ափրիկոյ մերժեալք դարձան անցին առ Պոմպիոս, որպէս ասացեալ եմք։

30. Ճարտարութեամբ ասէ խմանալ, թէ ոչ իրաւանց ինչ խնդիր էր ձեր, այլ յիշխանապանծ պերճութենէ առնն հրապուրեցուք ապաս հարկանել նմա։

31. Այս է՝ առ պոմպիկանան. յորոց Վարրոն այնպէս անաղարտն դաւեալ առ նա, զի և զորդին հիւանդ 'ի ցամաքն հանել, նա և ոչ ըստ ամենամ առնուլ չէր թողացուցեալ։

32. Այս է՝ մարթեով ասել թէ 'ի ճամբարին Պոմպիոսի կայիք, իսկ միաբ ձեր ուծացեալ յիրաւանց մարտի նորա։

33. Ի բանէն Պոմպիոսի, ուստի հեռի էր Կիկերոնն 'ի պահուփարաքէան ճակատամարտին, 'ի Դիւրրաքիոնի գեղերեալ ընդ Վարրոնի և կասանի։

34. Պետութեանն՝ որ արդ 'ի միջի է, և վարի խորհրդով և խմանութեամբ կեսարու. այս խնդիր ահա վճարեալ է։

35. Զի և կեսար՝ ճարտարախօս քաջ էր, վկայելով նորին իսկ Կիկերոնի և Կուրիոնիլիանոսի։

36. Իսմ յանդգնաբար թախանձեմ. իսկ եթէ բազմաց առեալ իցէ, զի և էր իսկ, նոյնպէս և ինձ օգնեսցիր։

37. Այս այր 'ի ժամուն մեռեալ էր, զոր ոչ գիտէր Կիկերոնն. բայց յաղագս Աստիկոսի մտերմին իւրոյ՝ կամեցաս, ասեն, ապա

Digitized by Google

բառնալ 'ի միջոց։ Իսկ բազմութիւնն ոչնչ զոր ընդ նիւսարու ասէ և-զնալ, ոչ եթէ 'ի Ճակատան, այլ ոչ ընդդիմամարտանալ ընդ նմա, և մեկուսի 'ի լուութեան կացեալ. բայց և այնու իսկ գժուարին եղեալ պատմիչատանց՝ յորս էր և ինքն Եկեղրոնն։

38. Զի հասայց նմա զԹուլական հրամայեալս նմա 'ի բդեշխէն Լիմուսլսակ և միլիապետէ, որ 'ի մեծ բարեկամութիւն նմա համարեալ լինի։

39. Ի յանուն Եկեղրոնի և Ճառ մի 'ի բարեխօսութիւն պատմիչ սեռանն Ս. Սարկիսլսոյ, ոչ յոգոյ խօսեալ առ նիւսար 'ի խարհրդարանին, այլ գովեալ երբեմն 'ի վարժապետաց Ճարտարիսօսութեան. բայց հմտագոյն քննաբանք, որոց հաւանեալս եմ, խստեն զայն՝ իբրև անվայելչական ինչ նմա ըստ սրտակալ իմաստիցն. և պատմական դասն ինքն ևս ընդ սմանչարատաս դասեն, զնոսին գտրու յայլոջ ուսեալ յօրինեալ։

Digitized by Google

ԿԻԿԵՐՈՎՆԻ

ՃԱՌ

ՎԱՍՆ ԱՐՔԱՑԻՆ ԴԻՈՏԱՐԱՑ

Digitized by Google

Digitized by Google

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Դիւսարս այս՝ ազնուական չորրորդապետ Գազարիոյ, ի պատերազմունսն զոր տային հռովմայեցիք Յաֆա, ի Կապադովկիա, ի Պոնտոս, ի Կիլիկիա և ի ստորին Ասորիս, հաստատարիմ ուխտակից եկաց զօրավարացն հռովմայեցւոց՝ ընչիւք և զօրաք հասեալ նոցա ի թիկունս։ Վասն որոյ բազում անգամ գովութեամբք պատուեցին զնա ի ծերակուտին Սիլլա, Մուրենա, Սերուիլիոս և Լուկուլլոս։ Իսկ Պոմպիոս համարեցաւ զնա բարեկամ և սեան և սերս նիզակակից հռովմէական ժողովրդեան. ուստի և զթագաւորութիւն Փոքրն Հայոց պարգևեաց նմա, և ասագանին թագաւոր զնա անուանեաց։ Ի ծագել ընտանի պատերազմին ընդ Կեսար և ընդ Պոմպիոս՝ յղեաց սա օգնութիւն Պոմպիոսի, և անձամբն ևս չոգաւ ի փարսալեան կռիւն։ Յետ պարտութեան նորա՝ մեկնեցաւ յերկիր տերութեան իւրոյ։ Փառանակ որդի Միհրդատայ, որոյ զմայն ևեթ հայրենի թագաւորութեանն ընկալեալ էր ի Պոմպիոսէ՝ զկիմմերեանն Բոսփոր, ցանկացեալ զբամբ ածել և զայլ մասունսն, բանութեամբ մեռեալ յաֆրշտակեաց յԱրիոբարզանայ զկապադովկիա, և զՓոքր Հայս ի Դիոտարայ՝ որ չէր անդ։ Մինչդեռ կեսար յԵգիպտոս զբաղեալ կայր, գիմեաց Դիոտարս առ Դոմիտիոս Կալուինոս, յորոյ ի խնամս հաստատեալ էր կեսարու զԱֆրա՝ հանդերձ շուրջ սահմանաքն, ասելոյ՝ զի մի տացէ թոյլ փառանակայ զրկել զինքն և զԱրիոբարզան. ապա թէ ոչ, ասէ, չմարթի ինձ զկրամանագ կատարել, և ոչ զիսոստացեալ արծաթն հատուցանել կեսարու։ Հրեշտակ արար անդէն Դոմիտիոս առ Փառանակ՝ ելանել յաշխարհաց անտի. և պատասխանի ընկալաւ, թէ ի կապադովկիոյ ձեռնթափ էր, բայց զՓոքրն Հայս իրաւամբք ունէր յանուն հօր իւրոյ։ Յետ սուղ ինչ բանեցուցանց ի

Digitized by Google

խաղաղութիւն լինելոյ, առեալ Դոմիտեայ և զգունդսն Դիոստորայ, և ճակատ առեալ ընդ փառնակայ և ոչ ինչ վնասեալ, կորոյս զբերթէ զգունդսն ողջոյն զպոնտացի, և զմեծ կէս զորացն Դիոստորայ, և ժողովեալ զկաց մեաց վայրաստեալ բանակին՝ պատուաստեցաւ ընդ Կապադովկիս յԱսիա։ Կեսարու՝ յետ ալէքսանդրեան պատերազմին՝ չու արարեալ յԵգիպտոսէ յԱսորիս, իբրև մերձ եղև 'ի Պոմպոս և 'ի սահմանս գաղատացւոց, ուրբայ Դիոստոր ընկեցեալ յանձնէ զարքունական նշանսն և 'ի կերպարանս յանցաւորի մտեալ առնս յաղերս՝ ներել նմա. զի թափուր զկողմանսն տեսեալ 'ի կեսարեանց, հարկեալ 'ի հրամանէ, անցեալ էր 'ի բանակն Պոմպէոսի. զի ոչ իւր ինչ անկ էր գաստաւոր լինել խնդրոց հաւմէական ժողովրդեան, այլ հրամանացն հնազանդ։ Այս բանք ոչ յոյժ գնացին առ Կեսար. և խոտիւ կշտամբեալ զնա՝ կնքեաց, թէ ներեալ քեզ զայդ 'ի ընդհան երեսաց առաջին երախտեացդ, հնոյ հիւրընկալութեանդ և բարեկամութեան, պատուոյդ և հասակիդ և պաղատանաց բազում հիւրոցդ և բարեկամաց. իսկ զինդիրս չորրորդապետացն ապա տեսցուք, ասէ. և զարքունի հանգերձիցն չուք թողու 'ի նա. և հրամայեաց ապայ, զգունդսն զոր յիւրոց անտի կազմուներ Դիոստոր և կիրթ ըստ հաւմէական օրինի և հրահանգաց, և զայրուձին բռնադրակ՝ վարել 'ի պատերազմն առաջիկայ։ Վնասեալ ապա Կեսարու զպատերազմն պանտական, հանեալ 'ի Դիոստորայ զիրքս Հայս և զմանն ինչ գաղատացւոց, և ապայ Միհրդատայ պերգամացւոյ, զոր կայուցեալ էր թագաւոր Բոսփորի։ Զմիւս մանն գաղատացւոց, որ հայրենի իրաւամբք ժառանգութիւն էր Դիոստորայ, շնորհէ նմա, և զանուն թագաւորի։ Ապա յետոյ իբրև գարձաւ Կեսար 'ի Սպանիոյ 'ի Հռովմ, կատարեալ զարքայութիւն նորա, ամբաստան եղև զնմանէ առ Կեսարու, թէ յաստղընկալանել նորա զկերտար 'ի դարձին 'ի փառնակայ՝ գարան գործեալ ինչ ապատանել զնա 'ի տան անդ իւրում։ Առեալ էր իւր գործակից և զօրավիգն յայս չարախօսութիւն՝ զՖիլիպպոս ոմն, ճատաղ կամ հայատակ հաւուն իւրոյ Դիոստորայ, զոյր բժիշկ, կաշառաբեկ զնա արարեալ, որ մի էր 'ի հրեշտակաց անտի առաքելոց 'ի Դիոստորայ առ Կիկերոնն՝ 'ի նա ապաստան առնել զգաստ իւր զայս. զոր և յանձն առեալ Կիկերոնի, ճառիւս ասասս՝ որ մի է յընտանեալգոյնս նորա՝ պաշտպանեալ արքային, վաղեմի ատանչելական իւրում և բարեկամի. ոչ յաստանէի ուրեք և ոչ 'ի հրապարակին, այլ առանձին առաջի Կեսարու՝ յապարանս անդ նորուն։

Digitized by Google

ԿԻԿԵՐՈՎՆԻ

ՃԱՌ

ՎԱՍՆ ԱՐՔԱՅԻՆ ԴԻՈՏԱՐԱՅ

Մինչ խակ յամենայն առեւանս, Կ. Կեսարը, 'ի սկզբան խօսիցս սովոր եմ խաւսիլ աստիճ, առաւել քան զոր 'ի գէպ Թուիցի վարժուԹեանս և հասակիս. այլ մանաւանդ այնպէս ամչտիսկ զիս բաղում ինչ յայս դատ, զի որչափ վատահուԹիւն իմ բերէ յիս փոյԹ և ջան առ 'ի ապաշտպան կալ փրկուԹեան արքային Դիոտարայ, նոյնչափ խէԹ կասկածի անբաւականուԹեան անձինս 'ի գերև հանէ։ Նախ, ապաշտպան լինիմ գլխոյ և բախտի առն Թագաւորի. որ ԹէՀ ապէտ և ինքնին չէ ինչ անիրաւ 'ի քառամ լեռԹ վանդին [1], բայց այնպէս անտոմոր ինչ է առն Թագաւորի գլխապարտ լինել, զի յառաջ քան զոյս անլուր իմն է։ Երկրորդ, զայն Թագաւոր՝ զոր յառաջն համարէին աւագանով հանդերձ սովոր էի գովաբանել վասն անհատ երախտեացն առ պետուԹիւնս մեր, այժմ ստիպիմ ջատագով նմին կալ 'ի դժնդակ յանցանաց։ Այս սոքաք, և յանապարհուԹենէ

Digitized by Google

մեղն[2] 'ի գատաստանեցն, և 'ի քարոզականութենէ միւսոյն յաւելու յիս ամբոխումն։ Անգութ Կատաղը, զի մի սասցից ամպարիշտ և անօրէն, որ թոռն գոլով զհաւն 'ի վանգ գլխապարտութեան ընկէց, և զահավեստ երիտասարդութեան իւրոյ սրկ զնովաւ՝ զորոյ զալին պահել և պահպանել պարտն էր, և զպարծանս քաջութեան գեռածաղիկ հասակին՝ անօրէնութեամբ և եղերամբ հանաւ։ զհաւուն ծառայ՝ վարձուք կաշառաբեկ արարեալ՝ վարեաց 'ի չարախօսութիւն զտեառնէն, և 'ի հրեշտակացն հեռոց ընդ արտաքսի եհան։ Իսկ զպիսխատական ծառային՝ զչարախօսի տեառն իւրոյ, և տեառն հեռաւորի, և տեառն սերտ մտերմի պետութեան, յորժամ զերեսն տեառնէի, յորժամ զբանն լսէի, ոչ այնչափ ընդ վիշտս արքայական աշխարհին ցաւէր ինձ, որչափ ընդ հասարակաց մեր ամենեցուն վասնզգ երկիւղ յիս ընթանայր։ Զի ուր լսա նախնեացն կրօնից՝ և ոչ խոշտանգանաք օրէն է պահանջել զծառայ այր զտեառնէ իւրմէ, յորում տանջանացն ցաւք գիտեն տալ և յակամայ կամս զշնմարիտ ձայնն արձակել, երևեցաւ ծառայ մի՝ որ զոր յերաշխիպան անդ էմարթէր նմա 'ի բերան առնուլ՝ զնա յայտ յանդիման համարձակ չարախօսեաց։

Եւ այն ևս, Կ. Կեսար, խռովէ զիս երբեմն. բայց 'ի խոր ծանուցեալ զքեզ՝ դադարեմ յերկիւղէս։ Քանզի ինքնին անօրէն իմն է[3], բայց քոյով խմաստութեամբդ յոյժ արդարանայ։ Զի զայնցանաց առ նա խօսել, յորոյ 'ի կեսանն նենգ գործել յանդիմանի յանցուածն, եթէ առանձինն ուշոգի ակնարկեացես, ծանր է. զի չեք գրեթէ ոք, որ իւրում վանդին գատաւոր նատեալ՝ ոչ առ ինքն մանաւանդ նպաստաւոր լինիցի քան առ ատենաքարշն. այլ քո, Կեսար, վեհագոյն և շնչախարհիկ բնութիւն ցածուցանէ յիս զայս տագնապ։ Զի ոչ այնչափ խիթամ՝ զինչ գուս զարքայէն Դիոնասիոսյ, որչափ խելամուտս եմ՝ զինչ այլոց զքէն գատաստան առնել կամիցիս։ Խռովեալ եմ և տեղւոյս օտարութեամբ. զի զդատ մի մեծ ոյսպիսի, որ ոչ երբեք 'ի

պայքար եկեալ է, ընդ յարիսա տանդ խօսիմ, արտաքոյ ժողովոյ խօսիմ և ամբոխին, յոր ճարտարախօսացն յեցեալ էլ և էլ տանեն մրցութիւնք. յաչս քո՝ 'ի բերան քո և յերեսս ակնկատոյց կամ. 'ի քեզ միայն նեկատեմ, առ քեզ միայն հայիմ ամենայն բանքս։ Որ ինչ ինձ 'ի յոյս գամագիտ ճշմարտութեան լինելոյ զարարորքն են, առ եռանդն հոգւոյս և առ ամենայն ուժգնութիւն խօսից և 'ի մրցութիւն՝ յոյժ թեթեւք։ Զի եթէ զայս դատ, Կ. Կեսար, 'ի հրապարակին խօսեի՝ քեզ իսկ լու 'ի լու և քո դատողութեամբ, որպիսի զարարթութիւն բերբէր յիս խուռնընթաց խնձոյ հոգեվերական ժողովրդեան։ Զի որ այն քաղաքացի՝ որ թագաւորին այնմիկ չլիներ թիկունք, զորոյ զաւուրսն զամենայն 'ի միտ ածէր մաշեալ 'ի պատերազմունս հոգեվերական ժողովրդեան։ Գոյր ինձ գէտանին ամբառնալ 'ի տատձաբ անդր խորհրդոյ [4], հայել 'ի հրապարակ անդր, և զինքնին իսկ զԵրկինս վկայ ունել։ Ապատէս 'ի յիշատակել ինձ զատուածոցն անմահից և զժողովրդեանն Հռովմայ և զաւագանւոյն բարեբարութիւնս առ Դիոնոսիոս արքայ, անհնար էր պակասել յինէն բանից։ Զորս քանզի 'ի նեղ արկեալ յանձէկի կացուցանեն որմունքս, ճնշեալ նուազի տեղեաւն և դատաստանութիւնս։ Քո է, Կեսար, բազում անգամ զբազմոց ատենախօս եղելոյդ [5], յանձէին քում նեկարել որ ինչ այժմ յիսն կրի. զի գիւրաւ քո արդարութիւնդ և ուղղադրութեանդ մտագիւրութիւն՝ զամբոխում նրա զայս կարճեսցէ յինէն։

Ապա մինչ չեւ 'ի բանս ամբաստանութեանն մատուցեալ՝ զյուսոյ ակնկալութեան չարախօսացն ասացից ստեւուք. որ թէպէտ և ոչ հանճարով և ոչ հմտութեամբ ինչ իրաց և վարժութեամբ թուին արժել ինչ, սակայն ոչ առանց ինչ յուսոյ և խորհրդոյ ձեռն յայս գատ արկին։ Զէին ամաեղեալ՝ զի ցասուցեալ էիր ընդ Դիոնոսիոս արքայ. գիտէին զնա առ զայրացուիս սրտիդ հարուածեալ և զնա-

սեալ [6], և զքո բարեկամութիւնդ ընդ նմա՝ բարեկամութիւն ընդ ինքեանս համարեցան, և զի առ քեզ զքոյոյ վասնդիցդ խաչելով հեշտիւ՝ ի վերայոր սիրոդ մուտս գտանիցէ ոճիրն ասայօգ։ Վասն որոյ, Կ. Կեսար, նախ քոյով արդարամուութեամբդ և հաստատութեամբ և գթութեամբ՝ յերկիւղէ ասոի զմեզ ազատեցո, զի անեկեալծ լիցուք՝ մինչև չմնալոյ՝ ի քեզ ամենևին և ոչ խուսն ինչ նշմար արտամուութեան։ Այլոգ քով այգու ապաչեմ զքեզ, զոր հիւր առ հիւրընկալ կարկառեցեր յարքայն Դիոտարոս, այգու ասեմ աջով որ ոչ՝ ի պատերազմունս և՝ ի մարտս քան՝ ի խոտամունս խաբ և՝ ի հաստատս հաստատպինդ է։ Դու ընդ յարկաւ մարգասկաց նորա մտանել, դու զհին հիւրասիրութեանն նորոգել հաճեցար. զքեզ թերապք նորա ասպնջականեցին, զքեզ հաշտ և բարեկամ տեսին բազմիկք և վաստակաւք արքային Դիոտարայ։ Որպէս գիւրաւ ցածնուլ, նոյն և վերանալամ եւթ ցածնուլ գիտես, Կեսար. թշնամի՝ որ հետս ինչ քինու նշմարեաց՝ ի քեզ մեռցեալ, ոչ երբեք ուղղեաց զքեզ։ Թէպէտ և յուսմ՝ զանխուլ իցեն տրտունջք քո զԴիոտարայ, սակայն ոչ երբեք իբրև զթշնամւոյ բողոք կալաք դու զնմանէ, այլ իբրև զբարեկամի յետանելոյ՝ ի պարտուցն պատշաճից [7], զի միտագոյն՝ ի Պոմպիոսի քան՝ ի քոյդ գոտս բարեկամութիւն։ Հանային և յանդուգնելոյն եւս թագութիւն ընդհանալ տսէիր, եթէ թիկունս եւթի կամ թէ և զորդին եւս առաքեալ էր առ Պոմպիոս, և ինքն հրաժարեալ՝ ազերս զալիս իւր արկանելով։ Այսպէս զերծուցեալ զնա՝ ի մեծամեծաց, չթողեր՝ բայց միայն զիրոքս ինչ մնասս բարեկամութեան. ուստի և ոչ միայն չպատուհասեցեր զնա, այլ և յամենայն երկիւղէ ազատեցեր, ասպընջական ծանեալս, թագաւորս թողեր։

Զի ոչ եթէ առ ասել ինչ զքեզ չոգաւ նա անդր, այլ հաստարակաց սիրալեամբ գթեալ։ Թագաւորս, զոր ասադանին բազում անգամ՝ ի մեծաշուք հրամանաստակն ստվին անուամբ յարքորքեաց, որ և անդամեն՝ ի զարդուն մանչ-

կութենեն պատկառելի և նուիրական համարեցաւ զա-
սեսանն զայն, յերեսաց իրացն այնոցիկ չփոթեցաւ այրն
հեռաքնակ և օտարածին, որովք և մեք ծնեալքս յընկեր-
հաշտութեան ուստ, և 'ի սմին հանապազ գեղբերեալք։ Ցոր-
ժամ լսեր՝ թէ 'ի հրամանէ միաբան աւագանային շարժեալ
են զինք, և 'ի բդեշխան և 'ի զատաւորս և 'ի հազարապետս
ժողովրդեան և 'ի մեղ 'ի զօրագլուխս յանձն եղեալ է ապահ-
պանել զընկերհաշտութիւնն, խառնվեր 'ի միտս իւր, և այր
եղեալ մարդեմ յոյժ տերութեանս՝ զանգիտեր զիրիսու-
թենէ հռովմէական ժողովրդեան, յորում և զիւրն տեսա-
ներ ընդգրգռեալ։ Այլ յանհնարին ապանով ապարակուսի
անդ՝ արժան համարեր կալ նմա 'ի հանգարտութեան։
Բայց կարի ինն ուժգին վրդովեցաւ, իբրև լուաւ զդեշխան
փախուցեալս յԻտալիոյ, զամենայն տաւագարքսն, — զի
այսպէս գոյժ ընթանայր, — զաւագանին բռվանդակ և զի-
սալիս ոգեյն թեթևագիեալ։ Զի այսպիսի բօթից և գուժ-
կանաց հորդ և հարթ համարձակ էր յարևելս Ճանապարհ,
և ոչ ստոյգ ինչ բնաւ զկնի հասանէր։ Ոչ ինչ լսեր նա զքոց
հանգամանացդ, ոչինչ զփութոյ միաբանութեան և խաղա-
ղութեան, ոչ ինչ զընկերշակելոյ արանց ոմանց [8] 'ի գաւառ
զիտաս քո։ Որ թէպէտ և այս այսպէս էր, սակայն նա
ժուժկալեալ հանգեր, մինչև 'ի կն. Պոմպիոսակ եկին առ նա
գեսպանքն և հրովարտակք։ Կերեա, ներեա, կեսար, եթէ
ասէն այնորիկ իշխանութեան տեղի ետ արքայ Դիոտարոս,
յոր և մեք իսկ ամենեքեան յարեցաք, յորում դիք և մար-
դիկ զամենայն շուք հեղին զեղին, և գու ինքնին բաղումս և
մեծամեծս [9]։ Զի եթէ քոց արութեանց հանդէպ՝ այլոցն
պարծանաց ածին ստուերածս, ոչ վասն այնր զկն. Պոմ-
պիոսի կորուսաք մեք զյիշատակն։ Թէ քանիսն էր նորա
անուն, քանիսն Ճոխութիւնք, քանիսն յաղգս ազգս ազա-
տերազանց պարծանք, որչափ ազատեալք հռովմէական ժո-
ղովրդեան 'ի նմա, որչափ աւագանային, որչափ քաջաբ-
խակ, ոմ ոք անգիտանայ. այնչափ նա զանցոյց փառաք զա-

Digitized by Google

ռայնովքն, որչափ գու գլեցեր զամենեսին։ Վասն որոյ զմարտս պատերազմաց Կն. Պոմպիոսի, զյաղթութիւնսն՝ զյաղթանական՝ զբգեշխութիւնսն՝ հիանալեաք 'ի համար արկանեաք, զքոյգ՝ ոչ կարեմք համարել։

Արդ՝ առ նա չոգաւ արքայ Դիոտարոս՝ յայս ողորմ և անհրաժեշտ պատերազմ, առ նա՝ որում ձեռն տուեալ էր յարգար պատերազմունսն ընդ Թշնամիս, ընդ որում ոչ առանձնականութեամբ միայն, այլ և ընտանութեամբ զոր գեալն էր. և չոգաւ, կամ ազաչեցեալ իբրև բարեկամ, կամ հրաւիրեալ իբրև նիզակակից, կամ կոչեցեալ իբրև զոք՝ որ ուսեալ էր հնազանդել աւագանոյն. հուսկ ուրեմն՝ չոգաւ իբրև առ փախստեայ, ոչ իբրև առ հալածիչ, այս է՝ 'ի վտանգին կցորդութիւն, ոչ 'ի յաղթութեանն։ Վասն որոյ և 'ի վճարել փարսալեան ճակատամարտին՝ անչատաս մնկնեցաւ 'ի Պոմպիոսէ, անաահման յուսոյ [10] հեռամուտ լինել ոչ կամեցեալ, կամ պաշտամանն՝ եթէ ինչ պարտն էր, և կամ վրիպակին՝ եթէ ինչ անգիտացեալն էր, համարեալ վճար եղեալ. գնաց 'ի տուն իւր, և 'ի հարկանել քո զալիքամարդեանն պատերազմ՝ 'ի նպաստ քեզ օժանդակեաց հպատակօրէն։ Նա զզօրսն Կն. Դոմիտիոսի [11] զասն աւագի՝ 'ի յարկս իւր և իւրով առատութեամբն դարմանեաց, նա յԵփեսոս առ այն՝ զոր գու 'ի քոյոցդ առաքեալ էիր այր հաւատարիմ և ընտիր 'ի բնաւից, յղեաց արծաթ. նա զարձեալ, նա երրորդ անգամ՝ արարեալ վաճառս հրապարակաւ՝ եւ զդրամսն տանել 'ի պէտս պատերազմի. նա զոգին 'ի բռին կալեալ՝ ընդ քեզ ընդդէմ փառնակայ [12] եկաց 'ի Ճակատու, և զթշնամին քո՝ իւր համարեցաւ։ Եւ զայս ամենայն, Կ. Կեսար, յայնմ համարի հաշուեցարս, զի զնա արքունականսն մեծարուցեր շքեղ պատուով և անուամբ։

Արդ սա, ոչ միայն քեզ ապատեալ 'ի վտանգէ, այլ և շքեղաշուք պատուով պերճացեալ, զատապիեռ առնի՝ թէ 'ի տան իւրում կամեցեալ ինչ ապանանել զքեզ. զոր քեզ

անհնարին է կասկածել, եթէ ոչ առ մոլեկան ոք զնա ուներիցիս։ Քանզի թեղեալ թէ որպիսիսմ ահեղ անօրէնութեան իցէ՝ սպանանել զայր հիւր, ապէն յանգիմանն առանին գիցն թերաբերեց. որպիսիսմ գժնեկ անողորմութեան՝ զամենայն ազգաց և զամենայն յիշատակաց զլոյսն պայծառ շինջուցանել. որպիսիսմ անհնարին զազանութեան՝ չգարհուրել 'ի յայլեղեղն սիեզերաց. որպիսիսմ վայրենամիտ և ապախտաւոր սրտի, զի յորմէ թագաւորն էր անուանեալ՝ 'ի նմա դառն գահիճ երևել. զայս ամենայն թեղեալ, որպիսիսմ ահագին մոլեգնութեան իցէ՝ զամենայն թագաւորս, յորոց բազումք սահմանակիցք իսկ էին, զամենայն ազատս ազգին, զամենայն ուխտակիցս, զամենայն նահանգս, հասեալն ասացեալ՝ զամենայն ամենեցուն զէնս ընդդէմ իւր միայնոյ յարուցանել։ Որովհետև օրինակաւ, թագաւորութեամբն՝ ասամբ՝ կնաւ և սիրասուն որդւով հանգերձ, խլեալ պատառէր, եթէ զայնքան ոճիրն՝ ոչ թէ միայն գործով կատարէր, այլ՝ եթէ և ածէր ևեթ զմտաս։ — Բայց կարծեմ՝ այրն անիծորհուրդ և յանդգնէն չտեսանիցէ զայսոսիկ։ Ո՞ քան զնա խորհրդական, ո՞ առաւել սազդագաս 13, ի յաւէտ մտացի. թէպէտ և աստանօր Դիոսարայ ոչ այնչափ հանձարութիւն և իմաստութեամբ՝ քան թէ հաստատամտութեամբն և կենացն կրօնիւք արժան համարիմ պաշտպանել։ Ծանօթ է քեզ, Կ. Կեսար, առանն լաւութիւն, ծանօթ բարքն, ծանօթ պնդութիւնն. այլ՝ ոմ ոչ ունիք, որոյ գամ մի զհառվանական ժողովրդեան զանուն ևեթ լուեալ իցէ, Դիոսարայ անարատութիւն, զգօնութիւն, առաքինութիւն և հաւասք չիցեն պատմեալ։ Արդ, ոճիր՝ որ և ոչ առն անզգամի անկ ինչ է՝ վասն յայանի կորստեան երկիւղին, և ոչ եղերանաւորի՝ եթէ չիցէ անմոռացոյն եռ, զայն դուք ստեղծանիքդ երկնեալ 'ի միտս ամենալաս առն և ոչ բնաւ անզգայելոյ։ և որովհետև ոչ անհաւատ միայն օրինակաւ, այլ և ոչ գէթ կարծեցք չափ ևեթ։ — Իբրև չոգաս, ասէ, 'ի Լուսիան ամրոց, և գնացեալ ազատ 'ի տան թագաւորին՝

Digitized by Google

վանաբրին քոյ, տեղի մի էր՝ ուր ամենայն ինչ յօրինեալ կայր, որովք եղեալ էր արքային 'ի մեսն օժտել զքեզ։ Ի լուսաբերաց, մինչ չէ քո 'ի սեզան բաղմեալ, անդր կամէր տանել զքեզ, զի արքն զնեսցէ 'ի սպանանել զքեզ՝ դարաստամուտ էին 'ի տեղւոջ անդ։ Ահա վերս, ահա փուրսիչ, յոր սակս փախստականն զարքայէն, ծառայն զտեսանէն լինի սմբատատան։

Ինձ, ան և ան, Կ. Կեսար, 'ի սկզբանէ հետէ յորմէ այս դատ առ իս մատուցաւ, կասկած անկաւ 'ի միտս՝ թէ փի-սիպոս այր բժիշկ, ծառայ Թագաւորին, առաքեալ ընդ դեսպանան, կաշառաբեկ եղեալ իցէ 'ի պատանւոյ ասսի յայսմանէ. զայր բժիշկ որսացեալ քառ, որպէս զի անշուշտ եղեռն ինչ կարիսատեսցէ դեղատուութեան։ Թէպէտ և հեռի 'ի ճշմարտութենէ, բայց 'ի սովորութենէ դատաբաղից ոչ օտար ինչ յոյժ։ Իսկ զինչ ասիցէ բժիշկդ։ Ոչ ինչ զդեղոյ։ Այլ նախ՝ հնարին էր այդմ լինել կարի գաղտակաս ընդ ըմպելի կամ ընդ կերակուր. և դարձեալ՝ անպատուհաս եւ գործի. զի յետ գործոյն մարթ է ուրատա լինել։ Եթէ յայտնապէս հատանէր զարեգ, զամենայն ազգաց՝ ոչ միայն զատելութիւն, այլ և զվէնան յանձն իւր ձգէր. եթէ դեղով, յանկարկութենէ հիւրընկալ գիցն Ա. բարամազդայ վանաբրի՝ ոչ ուրեք ունէր թաքչել, թէ և 'ի մարդկանէ թերեւս թաքուցեալ։ Արդ, զոր լուեալքն հնարել և զգուշադոյն վճարել կարօղն էր, զայն քեզ բժշկիդ խորամանգի, և ծառայի՝ որպէս կարծէրն՝ հաւատարմի ոչ հաւատաց, զվէնան՝ զերկաթն՝ զգարանան ծածկել 'ի քէն [14] ոչ կամեցաւ։ Եւ քանի կատակութեամբ յօգտալ և յարմարեալ եղեռն։ Նոյն բախտ քո, ասէ, որ և միշտն, պահպանեաց զքեզ. չտուեր յանձն յայնժամ մատանել սատանել [15]։ Իսկ զինչ ասա. Իբրև առ տեղեաւն չաջողեցաւ գործն, միթէ հետ ընդ հետ արձակեաց Դիոսարատ զզօրականն 'ի բաց. չգոյր ինչ այլ տեղի դարան գործելոյ։ Այլ քո [16] ասացեալ իսկ էր, յետ ընթրեսցն գաւառալ գալ ան-

Digitized by Google

գրէն։ Ապա և արարքեր։ Ժամ մի կամ երկուս 'ի նոցին տեղւոջ ուր 'ի քմին կային՝ զզինուորսն պահել մեծ խնդ էր։ Որոյհետ լուրջ երեսաք և զուարթ էին 'ի խրախճանն, նոյն գունակ չոգաւոր անդր ըստ որում ասացեալն էր։ Յորում վայրի այնպիսի ծանեալոյ ընդ քեզ զԴիոտարոս, որպիսի Աստաչոս[17] արքայ եղև ընդ Գ. Ափրիկեցւոյն. որում որպէս ընթեռնուցեալ է 'ի գիրս, յԱթոյ մինչև 'ի Նումանտիա յղեաց ընծայս մեծավայելուչս, զորս Ափրիկեցին ակն յանդիման բանակին ընկալաւ։ Զայս իբրև կատարեաց անդ Դիոտարոս արքայաբար արարս և օրինաց, գոյ 'ի սենեակ քնոյդ մեկնեցաւ։ Աղաչեմ, Կեսար, յիշ քեզ ժամն այն. նկարեա զբան զայն առաջի աչացդ. ուծ զմտաւ զդէմս ապրանցն՝ որ հայեցեալ 'ի քեզ և սքանչանային. միթէ ինչ չէ՞ւ, միթէ չիմի՞թ ինչ. միթէ ինչ ա՞յլ քան որ զգաստաբարն է, որ ինչ հանդարտութիւն, որ ինչ ըստ բարեկարգութեան մեծարոյ առն և անարատի։ Զի՞նչ պատճառս խլեն խմանալ, զի մեծ լուանալոյդ կամեցեալ ինչ իսարգանել զքեզ, և ոչ յետ ընթրելոյդ։ Ա՛ւ վասն, ասէ, յամենցոյց՝ զի ընդ հաստատելն յամուրն 'ի Լուկիոն՝ անդ զիորհուրդս կամացն յարդիւնս ածիցէ։ — Ոչ տեսանեմ զպատճառս տեղափոխութեանն. բայց չարաչար գատախազութիւն կայ զնրպցն։ — Իբրև, ասէ, յետ ընթրեսցն ործալ[18] կամեցար, սկսան ասանել զքեզ 'ի լուսալեան. քանզի անդ էին գարանակալքն. բայց զքեզ դարձեալ նոյն քո բախտ փրկեաց. զի առաւել ընտրեցեր երթալ 'ի սենեակ քնոյդ։ — Կորուսցին զքեզ գիք, այ ծառայ փախստական. այդպէս՝ ոչ ժամն միայն ես և ժպիրհ, այլ և յիմար և անվիա։ Զի՞նչ. պատկերս պղնձի՞ս տրճանացուցեալ էր նորա անդ 'ի գարանի, որ 'ի լուսալեաց անտի 'ի սենեակ անդր փոխել ոչ կարէին։ Սապրկի քեզ բովանդակ գարանակալութիւնն ոճիր, զի ոչ այլ ինչ ասաց։ Այսոցիկ, ասէ, իկոգէա տեսչեակ էի։ Իսկ զիարդ. այդչափ ծանծաղամիտ էր այրն, զի զոր հմուտն ունէր առ իւր այնքանոյ ոճրագործութեան՝

արձակեսցէ յիւրմէ, 'ի Հռովմ եւս առաքեսցէ, ուր և զոխերիմն իւր գիտէր զԹոռնն, և զկնայսր ինքնին գլխովին՝ որում զորոգայթն լարեալ էր. մանաւանդ զի և սա միայն էր՝ որ զհեռաւորէն զինքնէնէ կարող էր մատն և գուշակ լինել։ — Այլ զեղբարն իմ, ասէ, վասն զի գիտակք էին, արկ 'ի բանտ և 'ի կապանս։ — Իսկ արդ, զնոսա կապեալ՝ որ անդ ընդ իւրն էին, զքեզ 'ի Հռովմ արձակեալ յղէր, որ զնոյնս զոր զնոցանէն ասես գիտել՝ գիտէիր և դու։

Մնացեալ մասն ամբաստանութեանն կրկին է. մի, զի յորմէհետէ աւելոց եղ 'ի քէն արտիւ Թագաւորն, միտ եգեալ գէտակն ունէր միշտ 'ի պատ զգուշութեան. և միւս, զի բանակ մեծ գումարտակ առնէր 'ի վերայ քո։ — Զբանակէն ասացից կարճ 'ի կարճոյ որպէս և զայլսն։ Դիոսարոյ արքայի ոչ երբեք եղեն գունդք՝ որովք բաւական գասնիցի սալ պատերազմ ընդ հռովմէական ժողովրդեան. այլ այնչափ եւեթ, զի զսահմանս իւր 'ի հինից ասպատակաց թշնամեացն և յաւազակութենէն պահպանել, և զորագրեալսն մերոյ առաքել Թիկունս օգնականութեան։ Կարող էր յառաջագոյն բազմաձեռն եւս հոգալ զորս, այժմ սակաւս ինչ հաղիւ Թէ մարթէ պահել։ — Բայց յղեաց առ Կեկիլիոս ոմն չգիտեմ ով. այլ զորս յղեացն, քանզի չկամեցան երթալ, արկ 'ի կապանս։ — Ոչ հետաքրքրեմ՝ զոր ճշմարտութեան կերպարանս ունիցի, չգոսանել արքայի առ ձեռն՝ զորս ստաքիցէ, կամ առաքելոցն՝ անասատելն, կամ զհետոցն հրամանին՝ յայնմ 'ի մեծ և կարևոր իրի՝ կապելն եւեթ, և ոչ սատակելն։ Բայց սակայն 'ի յղելն առ Կեկիլիոս՝ ոչ գիտէր արդեօք Թէ այն խնդիր մարտիւ յաղԹութեամբ վճարեալ է, Թէ զՍեկիլիոսդ զայդ առ մեծ ոմն ունէր. զոր քաջածանօԹն այն մերոյ որերոյս՝ առանց ընդ բանս ինչ ածելոյ արհամարհէր։ — Յաւել և զայն եւս, Թէ ոչ զայրմտիրան 'ի հեծելոց առաքեաց առ քեզ։ Զհնաւորացն կարծեմ, կեսար. ոչինչ առ քոյով այրուձիովդ. այլ առաքեաց յորոց ունէրն զընտիրսն։ — Առէ չգիտեմ

զի 'ի Թուոյ նոցա 'ի ծառայի կարդ համարեալ [19]։ Ոչ կարծեմ, չլուայ. բայց թէ և եղեալ էր այնպիսի ինչ, ոչ թագաւորին ինչ մեղ գնեի։

Այլ աւելոյց եղ օտարացաւ 'ի քէն հոգւով։ Իսկ զիարդ։ Յոյս 'ի մուի եդ, կարծեմ, թէ գժուարին լինիցին քեզ եղք յԱլէքսանդրիոյ՝ յերեսաց հանդամանաց աշխարհին և գեղոյն։ Սակայն և 'ի ժամանակի անդ յայնմիկ մատակարարեաց արծաթ և զգեստ կերակրեաց. զոր հրամանատար կարգեալ էիր Սոնոյ՝ ոչ իւրք եթող զնա կարօտ. քեզ յաղթողեալ՝ ոչ միայն յասանիկանութիւն, այլ և 'ի վանդդ և 'ի Հակատամարտ պատերազմիդ՝ անդ առ քեզ մերձ գտաւ [20]։ Զհետ եկն պատերազմն ապրիկեան [21]։ համբաւք գժոխալուրք ապոգեցան զքէն, որ և զմոլին զայն կեանկիլեաս գրգռեցին։ Որոմ հոգւով եղև ընդ քեզ յայնժամ թագաւորս, որոյ բազում կարասի հրապարակաւ 'ի վաճառս հանեալ՝ լաւ համարեցաւ զանձն կապուտս կողոպուտս թողուլ՝ քան չլինել քեզ նպաստ գրամս։ — Բայց 'ի նմին պահու, ասէ, և 'ի Նիկիա և յԵփեսոս առաքէր արս, որ զապրիկեան զրոյցն ժողովեալ՝ վաղվաղակի առ ինքն հասուցին։ Ուստի և իբրև լուաւ նմա նաւաքեակ կորուսաս Դոմիտիոսի և պաշարումն քո յամրոցին, ասաց զԴոմիտիոսէ զտուն յուսական նովին մնաք որով և առ մերս կայ լատինեարքն։

Կորիցն բարեկամք, թէ միայն զոյգ անկցին ասիք 22.

զոր եթէ և կարի թշնամի ոք էր քո, ոչ երբեք ասէր նա. զի նա հեղ և համբոյր, իսկ առնդ՝ ժանտալից։ Եւ զիարդ կարէր բարեկամ Դոմիտիոսի լինել որ քեզ թշնամին էր։ Իսկ առ իսկ էր լինել քեզ թշնամի, որ յիշէր՝ զի մինչ ըստ օրէնս պատերազմի կարող էիր սատակել զնա, թագաւորս զինքն և զորդին իւր կացուցեր։

Իսկ ապա զինչ այնուհետև. ցոր վայր ժամերսն վրիժա-

Digitized by Google

պարան ժանա. ասէ. — Այսու ցնծութեամբ փոխեալ-
ցեալ Դիոսկորոս՝ ընդ գինիս եմուտ, և 'ի կոչունսն անդ
կաքաւեաց մերկանդամ: — Ո՞ր կախարդն բաւական լի-
նիցի փախստեիս այսմ 'ի պատուհաս: Աղէ՝ եաթն ոք էր-
քեք զԴիոսկորոս կաքաւեալ կամ զգլխեալ գինեաւ: Կա-
տարեալ են 'ի Թագաւորին յայնմիկ ամենայն ազգայական
առաքինութիւնք, որոց ոչ անտեղեակ կարծեմ զքեզ, Կե-
սար. այլ մանաւանդ ժուժկալութիւն անզուգական և զար-
մանալի. Թէպէտ և գիտեմ, զի 'ի բանս գովեսակից Թագա-
ւորաց այգ ոչ յաճախէ. զգաստ ասել 'ի կերակուրս զայր
Թագաւոր՝ ոչ մեծ ինչ գովութիւն է. քաջ, արդար, անա-
ջառ, մեծարոյ, վեհանձն, առատ, բարեբարոյ, աղքատասէր,
այս են գրուատիք ազգայականք. իսկ այն՝ սոսկականի:
Ընկաղցի որպէս և կամք ոմանք ասեն, այլ ես զժուժկալու-
թիւն, զպարկեշտութիւն ասեմ և զզգաստութիւն, առա-
քինութիւն մեծ հանճարիսմ. և այս 'ի նմա անդամին 'ի մա-
տաղ տիոցն նկատեալ և ծանուցեալ է համօրէն Ասիոյ, և
Իշխանաց, և տեղապահաց մերոց, և սպասաւոր հռովմայե-
ցւոց՝ որոց գամ մի յԱսիա 'ի գին և 'ի վաճառ եղեալ էին:
Ընդ յաջնորդոչ աշխարհն վասատակոց առ պետութիւն մեր՝
ամբարձաւ նա յայգ անուն արքունական. այլ որչափ ինչ
պարապ առնոյր 'ի պատերազմաց հռովմէական ժողովրդ-
գեան, զայն 'ի կցորդութիւն ընտանութեան և սիրոյ արդ-
գեամբք և բանիւք ընդ որեարն մեր հանէր. մինչև ոչ միայն
'ի շամչտութեան ազնուական, այլ և քաջընթեր առնուաէր
և արդիւնարար ժրագլուխ և խաչնագարման ճանաչէր[23]:
Արդ, որ և 'ի պատանութեան անդ, չև 'ի փոքուս պերճացեալ,
զամենայն ինչ զգնաթաբար և շքով գործեաց, նա յայնմ ճա-
խութեան և յայնմ հաստակի 'ի կաքաւն եբանէր: Քան զայր
քաջ և փառաւոր՝ բերանով գնացական ծառային լուսալ,
պարտ էր քեզ, Կասսովը, կրօնիկ և կրթանաց հաւուն
քոյ նախանձաւոր լինել: Զի թէ և կաքաւեալ ոք էր հաւդ,
և ոչ այր սմանպիսի՝ յորմէ ամենայն և պատկառանաց ֆինդրին

Digitized by Google

օրինակք, հանայն այդ բամբասանք չվայելէր բնաւ այնմ հասակին։ Որովք յարգուն տիոյն իսկ ապրեալ և զմայլեալն էր նա սխորժակք, ոչ կաքաւս յօրինելոյ, այլ Հարտապ զէնս 'ի գործ առնելոյ և քաջապէս երիվարելոյ, այնք եւս 'ի զառանցեալ հասակին շինչալ պակնասեալ էին 'ի նմանէ։ Որպէս զի յորժամ յոգունց առեալ զԴիոստարոս ամբառնային յերիվար, ասէր էաք զարմանալ՝ թէ զի և կարէր իսկ ալինդ կալ ծերունին։ Սակայն սա, պատասխան այս [24], որ իմ 'ի Կիլիկիա զորական, 'ի յոնաստան զինուորակից եղև, յորժամ 'ի քանակի անդ մերում ձի ապրեալ խաղայր ընդ հեծեալսն իւր ընտրեալս, զորս ընդ իւր առաքեալ էր հօր իւրոյ առ Պամֆիլոս, որպիսի արշաւանս ընդ նոսին գնել գիտէր, զիարդ սիգալ, իբր նապել, որպէս յայն մերոյսն չեալ ուսիք տեղի ջանիւ և յօժարութեամբ։ Իսկ իբրև կորեաւ քանակն, և ես որ յամենայն ժամ առաջնորդ էի խաղաղութեան, յետ փարաձեան Հակատուն խրատ ասայի՝ ոչ զինապերծ միայն լինել, այլ և զէնքնիկեց, չկարացի զաս 'ի բանի առնել ընդ իս [25]. զի և ինքնին իսկ վառեալ էր 'ի փոյթ պատերազմին, և զհօրն կամն հաճել պարտ վարկանէր։ Երանի տանն այնմիկ, որոյ է ոչ միայն անպատիժ մնալ, այլ և համարձակութիւն չարախօսելոյ. եղուկ Դիոստարոս, որ ոչ միայն 'ի նմին քանակակցէ խրմէ առաջի քո, այլ և յիւրոց անսի քամբասանս կրէ։ Դուք, Կաստուտվ, ձերով քաջերախտութեամբդ ոչ կարէք առանց մերձաւորացդ թշնաստութեան զոհ լինել։

Թշնամութիւնք՝ թոգ լինիցին, որոց չէր ինչ պարտ բնաւ լինել։ Դիոստարոս արքայ զաղդատահմն ձեր ոանկած և զանանուն՝ 'ի խաւարէ 'ի լոյս եհան։ Ո՞ զհայրս քո՝ յառաջ քան զոյր ուրուք փեսայ լինելոյ՝ լուսաւ թէ ով ոք էր։ Բայց թէպէտ և ապերանաս և ամբարշտաբար զտոհմակցութեան անուն մերժիցէք, սակայն զթշնամութիւն դոյր ձեզ մերոգիսէն կատարել, ոչ ստասպատիր յանցանոք զերազարտել, ոչ յարևէ ինդրել արկանել, ոչ 'ի գլխատարա-

տութիւն գատաստանել։ Հապա և այդ ևս՝ Հնարհաւ քեզ և զայդ անհնարին ժանտութիւն և զոխս։ Այլ միթէ և ցո

, մինչև ոչիոյն խակ զկենաց և զհաստատակաց փրկութեան և զմարդկութեան իրաւունս լուծանել։ Զծառայն հրապուրել հանել'ի բանս, յուսով և խոստմամբք կաշառել, առնուլ տանել'ի տուն, ընդդէմ տեառնն զնել։ այս ոչ միոմ մերձաւորի, այլ հսմօրէն տանց բոլորեցունց պատերազմ գժնդակ յայտ առնել է։ Զի եթէ այս մարդելոյզ կաշառաբեկութիւն ծառայի՝ ոչ միայն անպատուհաս մնասցէ, այլ և այսքանով իշխանութեան հաճոյ լինիցի, այնուհետև ոչ որմանք, ոչ օրէնք և ոչ իրաւունք ինչ զկեանս մեր յամրի կացուցցեն։ Զի որ'ի ներքս ինչ 26 և մերթ է, յորժամ աներկիւղ'ի բաց սրանայցէ, և գիմամարտ մեզ լինիցի, 'ի տերութեան՝ ծառայութիւն լինի, և 'ի ծառայութեան՝ տերութիւն։ Ո՛վ ժամանակաց, ով բարուց։ Կնէոն այն Դոմիտոս, զոր 'ի մանկութեան մերում բըդեաչէն՝ համարակար՝ քրմապետ մեծ տեսաք, յորժամ հազարապետ էր ժողովրդեանն, զՍ. Սկաւրոս զիշխան քաղաքին յաստեան ամբոխին եկեալոյ արար, և Սկաւրոսին ծառայ՝ գաղտ առ նա'ի տունն երթեալ ասէր քսել յանցանս զտեռնէն, հրաման եառ ուռնել զայրն և տանել առ Սկաւրոս։ Տեա զինչ խոսիր'ի միջի կայցէ. թէպէտ և անօրինիմ՝ զկատաստվ ընդ Դոմիտոսի'ի կշիռ արկանել. սակայն նա դարձեալ զծառայն առ թշնամին, զոր'ի հաւուրդ վարանդեցեր. նա՝ զոր չէրն կաշառեալ՝ չկամեցաւ ունկն նոսա մատուցանել, զոր կաշառաբեկ արարեր. նա մերժեաց զծառայ՝ որ ձեռնտու գայր ընդդէմ տեառն իւրոյ, զոր և գատապարտ'ի ներքս արկեր։ Այլ դա մի ևեթ անգամ կաշառեցաւ'ի ձէնջ։ Ո՞չ ապաքէն, իբրև ածաւ'ի մէջ և մինչ ընդ քեզ խակ կայր, խուսեաց առ գեսպանան 27, ոչ և առաս ինքն կն. Դոմիտոս չգաւ, ոչ և լու'ի լու այսմ Սեր. Սուլպիկիոսի առն փառաւորի, որ յայնժամանդ գիպեալ՝ ընթերեր առ Դոմիտոսի, և 'ի լուր այսր, Տ. Տրկաստասի

տամնալու պատանւոյ՝ խոստովան եղև, թէ կաշառեալ էր 'ի քէն, և քոյով խոստամանքդ 'ի նենգութիւն հրապուրեալ: Զի՞նչ իցէ լքեալդ այդ և անապտրոյն և անչափ ամարդութիւն: Յոսան այսր ապականել եկիր զիրաւունս և զօրինակս քաղաքիս, և քոյով ընդասուն վայրենութեամբդ զմերոյ քաղաքիս մարդասէր բարս պղծել:

Այլ որովհետուրբ հանձարով պաշտուձեալ են ոձիրքն: — Բ՛ելեսամիոս [28], ասէ, — քանզի յանոնն ասին ընտրականքն և քեզ ոչ անծանօթի՝ չարախօսէր զքէն, — գրէր ասէպ առ Թագաւորն, թէ ասելի ես, բռնաւոր համարեալ, և վասն պատակերիդ [29] քոյ կանգնելոյ ընդ Թագաւորսն՝ զայրացեալ յոյժ են յոգիս իւրեանց մարդիկն, և չեն սովոր հարկանել քեզ ծափս: — Զառնոնա 'ի միտ, Կեսար; զի զայսոսիկ յոտանիկ [30] բանկներոյ չարակամաց հաւաքեալ է դոցա: Զկեսար բռնաւոր գրեալ իցէ Բ՛ելեսամիոս: Մարքէն քանզի զբաղում քաղաքացւոց տեսեալ էր կատաղիսն, զբաղումն՝ Կեսարու հրամանաւ տանջեալս, թոպեալս, սատակեալս, բաղում տուն՝ սատապեալս և կործանեալս, զհրապարակն խոնեալ կուտակեալ սպառազէն զօրականաւ: Զոր յամենայն քաղաքամարտս յաղթութիւնս կրեցաք, ոչ եւ 'ի քում յաղթանակիդ տեսաք զայն: Քանզի դու միայն ես, Կ. Կեսար, յորոյ յաղթութեանն ոչ ոք անկաւ տապատ, բայց եթէ զնաւոր: Եւ զոր մեք աղաչաքս, 'ի մեծի ազատութեան հռովմէական ժողովրդեանս ծնեալք, ոչ միայն առ բռնաւորս չունիմք, այլ մանաւանդ առ գորովագութի՝ եւ և 'ի յաղթութեան, մարթիցի նմա բռնաւոր երևել յաչս Բ՛ելեսամեայ՝ որ ընդ Թագաւորութեամբ կեայ: Զի զպատակերդ գրոշելոյ ո՞ ոք քրթմնջիցէ, մանաւանդ զմիոյ եթէ, ուր զբաղումսն տեսանիցէ. զի և յոյժ իսկ նախանձելի են գրոշեալք նորա՝ ընդ որոյ չնախանձիմք ընդ յաղթութեան նշանն: Քանզի եթէ տեղին իցէ որ նախանձուկս արկանիցէ, չեք տեղի շքեղ գրոշելոյ քան զաստեան հրապարակին [31]: Իսկ զկայթեան հարկանե-

լոյ՝ զինչ տաց պատասխանի. որում ոչ երբեք տեսչացար, և է ուրեք՝ զի առ ափշութեան մարդկանն 'ի հիացմանէն լռեալ կարկեցար. և թերևս զանց ևս եղև, զի ոչինչ 'ի հասարակաց աստի գուշնաքէիցս արժանի քեզ տեսանի։

Ոչինչ յինէն կարծեմ ապախտ արարեալ, այլ թողեալ ինչ 'ի յետին մասն դատիս, որ այն ինքն է՝ ամենայնիւ ամենայն իրազ հաշտեցուցանել Ճառիս զքեզ ընդ Դիոտարի։ Զի ոչ ինչ խիթամ թէ դու ցանուցուս ընդ նա, այլ կասկածեմ՝ գուցէ կարծիցես զնա զժգմեալ ինչ ընդ քեզ. որ, հաւատա ինձ, Կեսար, բացէ 'ի բաց հեռի է ամենևին. զի զոր 'ի քէնդ ունի՝ զայն ընդ միտ արկանէ, ոչ զոր կորոյսն. և ոչ տայժ ինչ 'ի քէն կրեալ համարի զանձն. այլ բաղմաց բաղում ինչ քեզ ընծայեալ արժան դատելով, ոչինչ ըմբռաստացաւ ընդ առնուլդ զայնս յինքեանէ՝ որ 'ի միաւորմամբն զուսանն զտեալ էր։ Զի եթէ Անտիոքոս, մեծն այն ասիացւոց թագաւոր, խրև 'ի պարտութիւն մատնեալ առաջի Սկիպիոնի՝ մինչև 'ի Տարսոս եթէ թագաւորել հրաման ընկալաւ, կորուսեալ զամենայն կողմն Ասիոյ՝ որ այժմ մեր է նահանգ, սակայն է ասել՝ թէ բարի եղև նմա 'ի հռովմէական ժողովրդենէն, զի 'ի ծանր ծանր հոգոց ազատեալ՝ 'ի ջոգ եթէ սահմանի արքայութեան վայելիցէ, գիւրագոյն ևս է Դիոտարայ սիրելի զանձն. զի նա զմոլորութեանն տարաւորդանն, սա զվերիպանացն։ Զամենայն ինչ, Կեսար, պարգևեցեր դու Դիոտարայ՝ շնորհելով նմա և որդւոյն զանուն թագաւորական։ Ի կրեն և 'ի պահել զայգ անուն, ոչ ինչ յերբախտեաց հռովմէական ժողովրդեան, ոչ ինչ 'ի յարգանաց սուագանաւոյն նուազեալ համարի անձին։ Մեծաւ և քաջալերս հոգւով կայ, ոչ լեցի նկուն թշնամեաց և ոչ իսկ բախտին։ Բազում ինչ յառաջագոյն վաստակովքն վճարեալ վարկանի, և ունեալ 'ի մտի և յարութեան իւրում՝ զոր ոչ իւիք կարիցէ 'ի դէպս սունել։ Զի ոչ բախտ կամ ոչ արկած կամ ոչ զգկհայրանք զամենայն զբաղդեաց

զմշիոան եղծանել մարթայկ։ Քանզի յամենեցունց 'ի նոցանէ փառաւորագոյն է, որ միանգամ յետ հաստատելոյ նորա 'ի չափս արութեան ընդ գումարատան երեւելոյ՝ մեծին մարտս պատերազմաց յԱսիա, 'ի Պոնտոս, 'ի Կիլիկիա և յԱստորիս։ Իսկ զաւագանւոյն զնմանէ բազում և մեծապանծ վկայութիւնս՝ աւանդեալս 'ի հաստատակաց գիրս հռովմէական ժողովրդեանս և յարձանս՝ որ հնութիւն ժամանակաց ընկալեալ, կամ որ մոռացօնք չնչեացեն։ Զի՞նչ և զառաքինութենէ նորա ասացից, զինչ զմեծանձնութենէն, զմեծարոյ բարոյութիւն, զանխաբանելի հաստատութենէն, զորս գիտուն՝ ամենայն և իմաստասէր՝ գլուխ և աւարտ բարութեան, և ոմանք՝ միայն բարիս ասացին, և գայսոսիկ՝ ոչ առ բարութիւն եղեալ, այլ և առ երջանիկ կեանս բաւական լինել առաքինութեան։

Զայս ամենայն նորա զմտաւ ածեալ, և զգայեալ և զգեղեալ 'ի նոյնս խորհելով, ոչ միայն ոչ ինչ դժգոհ ընդ քեզ, — զի ոչ ապաշնորհ եղեալ, այլ և անմիտս ևս երեւեր, — նա և զամենայն իսկ զհանգամանսն և զանդորրութեան ծերութեան իւրոյ շնորհս՝ գիտութեանդ քոյ խոստովանի։ Եւ զի յատաջինն իսկ սոսին հոգւով եղև, ոչինչ յերկիւղամամ՝ թէ թղթովդ, զորոյ զպատճէնն ընթերցայ, և 'ի ձեռն այսր Բլեսամիոսի եռուր առ նա 'ի Ցարրականէ [38], առաւել ևս քաջալերեացի և թափեացէ զամենայն ստատամութիւն։ Քանզի պատուիրես նմա՝ բաբեյոյս լինել և սրտապնդել, զոր գիտեմ թէ ոչ վայրապար սովոր ես գրել։ Քանզի յուշ գայ ինձ՝ զի և առ իս գոգ նովին բանիւք գրեցեր, և ես ոչ ընդունայն ինչ զյուսոյ բարեոյ խրախոյս հրամանագ 'ի նա մեկնանողդ ընկալայ։ Ցառաւսիմ արդարև վասն արքային Դիոտարայ, ընդ որում զբարեկամութիւն առեալ ինձ ընկերհաղորդութիւնս, զհիւրութիւն՝ երկոցունցս կամք զոդեցին, զմտերմութիւն՝ ընտանութիւնն եղեալ, իսկ զտերս սիրոյն կապ՝ սպասք նորա մեծամեծք զոր ինձ և զորուս խմեամ եհալ՝ կատարեցին։ Այլ ուր վասն նորա տատա-

ալիմ, անդ և վասն արանց բազմաց հայակուպից, որոց 'ի հարկէ չեք ինչ քո առուեալ բնաւ ծանօթս. զի ոչ քո բարերարութիւնդ երբեք յերկրայս ինչ անկանի, ոչ տագնապ տարակուսի յաւիտեան 'ի միտս մարդկանն հարատեալ մնայ, ոչ երկիւղ ումեք երբեք հասանէ՝ որոց դամ մի քեզ յերկիւղէն ազատեալքն իցեն։

Զեք ինչ ինձ հարկ, Կեսար, զոր 'ի ծանր վասնդս օրէնն է փորձ փորձել, թէ որով արդեօք օրինակաւ բանիկ հնար իցէ զդուռ և զնանմն քո յուզել։ Զկարօտիմ ինչ. նա ինքնին գիտէ ընդ առաջ ելանել ազատաւորաց և վասնդելոց՝ առանց ուրուք բանից հրաւիրանաց։ Դիր առաջի քո զերկոսին Թագաւորսն 33. և զոր աչօք ոչ կարես՝ մտօքդ տես։ Զոր զլացար սրտմտութեան, ողորմութեան տացես ան-շուշտ։ Բազում՝ են գթութեանդ քոյ արժանք յիշատակի, այլ մանաւանդ անվթար փրկութիւն այնոցիկ՝ որոց զկեանսն շնորհեցեր. որ եթէ 'ի սուկականն փառք իցին, առաւել ևս 'ի Թագաւորսն յիշատակեսցին։ Այնուհետև արքայական սուրբ եղև միշտ 'ի քաղաքի սաստ, իսկ ուխտակից Թագաւորացն և բարեկամաց՝ ամենասուրբ։ Զանուն զոր 'ի քում յաղթութեանդ կորուսանել կասկածեցին Թագաւորքս, առ 'ի քէն պահեալ և հաստատեալ, վստահ եմ՝ զի զնոյն սանդեսցեն յորդւոց որդիս։ Իսկ գեղապանքս այս արքունիք, Հիերաս և Բ՚ելեսամիոն և Աստիգոնոս, քեզ և մեզ 'ի վաղուց յառաջածանօթք, 'ի փրկութիւն Թագաւորացն իւրեանց զանձինս իւրեանց ասն 'ի քո ձեռս, և նոքին հաւատով և առաքինութեամբ ճոխացեալ Դորիլաւս, գեղեաս ընդ Հիերայ գեղապան առ քեզ առաքեալ. զոր՝ արքայիցն կարեւոր բարեկամք, և քեզ՝ որպէս յուսամ՝ ընդունելիք։ Հարց և փորձ արա զԲ՚ելեսամեայ. իցէ՞ ինչ գրեալ առ Թագաւորն՝ ոչ քեզ 'ի փառս։ Իսկ Հիերաս՝ ոգեղէն իսկ զինեան 'ի գլուխ իւր առնու, և զամենայն մեզապարտութիւնն յանձին ունի փոխանակ Թագաւորին. զկղզոր յիշողութիւնդ ազերսեալ, յուրաստ կայ՝ թէ երբեք 'ի Դիո-

Digitized by Google

տարի՝ շամշուԹեանն խուն ինչ 'ի քէն մեկնեալ իցէ. 'ի գլուխս սահմանացդ՝ անդ առ ձեռն զինքն ասէ լեալ, և մինչև 'ի ծագս նոցին խաղացեալ. ընդ քեզ յելանելդ 'ի լուսալեաց, 'ի զննելդ զընծայսն յետ ընԹրեացն, 'ի յանկողնին մտանելդ. և 'ի նոյն ապաս ցանկորդեալ առ քեզ 'ի վաղիւանդը։ Վասն որոյ, եԹէ 'ի չարախօսուԹեանց անտի յայնցանէ արդարև խորամանգեալ ինչ իցէ, ոչ խորշի ԹԷ զերեռանն զայն նմա գրեացես։ Սմին իրի, Կ. Կեսար, իղձ լինիմ, զի գիցես 'ի մտի ԹԷ գատաստան քո այսօր՝ կամ մեծաւ անարգանաք աղխողրմ կործանումն հասուցանելոց է Թագաւորացդ, կամ փրկուԹեամբ հանգերձ՝ բարեփառհամբաւ անարատուԹեան։ Յորոց միումն փափաքել՝ նոցա 34 անողրմուԹեանն է, զմիւսն պահպանել՝ քում գԹուԹեանդ։

Digitized by Google

Digitized by Google

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ ԻՆՉ

Ի ՃԱՌՆ ԴԻՈՏԱՐԱՑ ԱՐՔԱՑԻ

Թիւ. 1. Զի ինչան եղեալ 'ի վերայ Դիոտարայ՝ 'ի վանդ կենացն կեսարու ակնարկէր, որպէս տեսցի ստորև. ուստի ասէ, անիրաւ լինէր՝ եթէ զայլմէ իմիք էր խնդիր. բայց ուր զքումմէ վանդէն իցեն բանք, անսովոր արդարև՝ այլ ոչ անօրէն ինչ է համարելի փուրսիշ զանունն թագաւորք։

2. Այս է կաստոմոր ընդդէմ հաւուն ամբարձեալ. միւսն՝ Փիդիպոս ծառայ ընդդէմ տեառնն։

3. Իսկ դատ մի այնպիսի՝ յորում զվանդէ նորին ինքեան կեսարու են բանք, և այն՝ առաջի նորա։ Առանց իմաստութեան նորա մեծի, կասկածելի էր՝ առաւել դատախազին անասնամա։

4. Ակնարկել թուի 'ի յաղթանակն՝ զոր տարաւ Կիկերոնն ընդ աւագանւոյն 'ի խորհրդարանի առդ, ներուն ընդունելով 'ի կեսարէ և ազատութիւն Մ. Մարկելլոսի, և զնոյն յուշ արկանել կեսարու։

5. Զի և ինքն կեսար՝ հզօր ճարտարախօս էր, զբազում խնդրոց և զդատաստանաց ատենաբանեալ։

6. Թողեալ զիշատակութիւն ընդ Պոմպիոսի լինելոյն Դիոտարայ, մեղմական բանիւք զզջկել նորա ասէ 'ի փոքուն Հայոց և 'ի մասնէն Գալատիոյ, զի մի ուժգնագոյն կիրք 'ի Դիոտար իմասցին, և անտի՝ գաւոյ ինչ ակնկալութիւն։

7. Զի ասէն գրեալ առ նա. «Անարժան է, զի և ես քո բարեկամ եղեալ եմ. առ իմէ առ Պոմպիոս անցանիցես. այլ ներեալ քեզ, եթէ

Digitized by Google

յանուն աւագանուցն յարեցար։ Ցղեա զորս առ Պոմպիոս, առաքեա զորդիդ. զու միայն 'ի չքմեղիկս լիցիր առ Ծերուիթանդ։»

8. Լ. Դոմիտիոսի, Պ. Սկիպիոնի, Մ. Բիբուլոսի, Մ. Կատոնի, և այլոց՝ յորոց զոմանս աւարի յոյս, զկէսս ասելութիւն կեսարու և անձնական ոխութիւնք գրգէին 'ի մարս։

9. Մեծագոյն շուք իմա զգուստրն կեսարու՝ յոր փեսայացուցեալ էր զնա, վասն բազմագիմի առաքինութեանցն զնա ընտրեալ իւր արժանի։

10. Իսմա զայս նորոգելոյ զպատերազմն, որպէս խորհէին Պոմպիոս, որում ոչ սահման և ոչ կատարած ինչ երևէր։

11. Որոյ բգեղչն լեալ՝ և էր 'ի կեսարու կողմանէն յայնմ աղգային մեծի հերձուածի։

12. Աբբայի Պոնտոսի, որդւոյն Միհրդատայ, որոյ 'ի ժամանակի քաղաքական պատերազմին հռովմայեցւոց յափշտակեալ էր զՀայս։

13. Օրինակք ինչ ունին տրտաթիլզիոնոյն։

14. Առ Փիդիպպոս հային այս գէմք բանին։

15. Ցայտ է թէ զպատրաստեալ ընծայսն Դիոտարայ։

16. Ասա գէմքն առ Կեսար գտանան։

17. Ոմանք կասին ընթեռնուլ Անտիոքոս. բայց գրչագիրք ամենայն ունին Աստաղոս, զոր և հին մեկնիչք հաստատեն. զի և բարեկամութեանն նշանակ եթողոյ, մինչև թագաւորութեանն ժառանգ կացուցանել, զժողովուրդն հռովմայեցւոց. և առ Սկիպիոն, 'ի կռուին Նումանտիայ, ոչ միայն նպաստ եղև 'ի կարևոր պետան, այլ և պարգևս ծանրագինս յղեաց, զորս և գոհութեամբ ընկալաւ նա։ Զդիտարայ առաստութիւնն առ Կեսար՝ համեմատէ ընդ Աստալենայն առ Ափրիկեցին։

18. Կամ զնողկանս ինչ զգայր, կամ զծանրութիւն տհալ կերակրոցն թափել՝ զի մի վնասեսցի։

19. Զի ծառայից կամ ստրկաց՝ չէր օրէն 'ի զինուորութիւն մտանել թող թէ 'ի վաշտ հեծելազօրու, իբրև անարդաց ոմանց եղելոց։

20. Զի կեսարու յաղթեալ ալեքսանդրեան մարտին, դարձ ընդ Գազատիս արարեալ, օթեալ առ Դիոտարայ, անտի ընդ գէմ փառնակայ խաղաց, հրամայեալ և նմա առնուլ գալ զիւր գունդսն և զայրութիւն։ Այս այն պատերազմ է՝ զորոյ յաղթութիւնն գրեաց Կեսար 'ի Հռովմ երիւք բայիւք, նկ, գոչ, յաղթեալ։

21. Զոր յետ պարտութեանն փառնակայ ետ կեսար ընդ Ցուբատայ նուիրագացոց արքայի և ընդ Սկիպիոնի և Կատոնի, որ ստուար բանակաւք ունէին զԱֆրիկէ. և զոյցքս ելին յանկարծակի, կեսարու պաշարեալ յամրի ուրեք և սատակեալ ամենայն բանակաւն։

22. Որպէս Դոմիտիոս, որում բարեկամն էր Դիոտար։ Ցոյն և լատին տոմքն անդայտ են թէ որոց քերթողաց էին։

Digitized by Google

23. Զի ոչ անարդ ինչ էր առ հինն երկրագործն և անասնաբոյծ, և օրինակք բազում են առ արտաքինսն, ոչ յաւադ ևեթ որերոյ, այլ և յարքայից, զոր օրինակ Հերոն, Փիլոմետոր, Աստալես, Արքելաւոս, Քսենոփոն, Փիլիպիկն Մագոն, Կատոնն երեց՝ որոյ կայ և մատեանն:

24. Այս է Կատոնը, Թոռանն և քաւն Դիոտարայ:

25. Զի Ձեռնթափ լինելոյ իբրև զոմանեսին 'ի զհետ ամենելոյ անտի յուսոյ պատերազմին այնորիկ: Զի որ յառաջ քան զփարաւլեան կուին՝ խաղաղութեան թելադիր լինեալ Պոմպիոսի և զզենան մերկանալոյ, յետ այնորիկ՝ ոչ միայն մերկանալ, այլ և բացէ 'ի բաց թօթափել տալի այլոց խրատ:

26. Գերդաստանիկք որ ընդ մեզ 'ի նմին տան յարկակից են:

27. Առ դեսպանն Դիոտարոսի՝ յորոց օգտեալ էր զնա Կատոնը:

28. Մի էր սա 'ի դեսպանացն Դիոտարայ, այր գաղատացի յիշխանութենէ նորա, որում և երկու ընկերք էին՝ Հիերաս և Անտիգոնաս:

29. Կայրն 'ի Կապիտոլին գրաշեալք եօթանեցունց թագաւորացն, ընդ որս և Լ. Բրուտոսին՝ սուսերն 'ի ձեռին: Ի միջի նոցա կանգնեցաւ և Կեսարուն, ընդ որ կարի զչարեցաւ որեաքն, զփառամոլութիւն նորա 'ի բանակալութիւն յայտ յանդիման հատանել Համարելով. զոր և 'ի բերանոյ գրատախտակին յառաջ բերէ Կիկերոնն:

30. Հենգնօրէն առջիր զոտանիկդ, զոր վարէ երբեմն լատին լեզու, և այլուր ևս ինքն իսկ Կիկերոնն, փոխանակ նոցա՝ որ գրատարկապորտ և ընդվզրայայծ դեգերէին յոստանին 'ի Հռովմ, և զոլոյս և համբաւս սուտս և չաւատալիս սփռէին ընդ խաղ և առ 'ի ծաղր:

31. Ուր կանխաւ իսկ կանգնեալ կայր գրաշեանն Կեսարու, և ընդելեալ էին աչք ժողովրդեանն:

32. Ի Տարրակոնէ քաղաքէ Սպանիոյ, ուր գտանէր յայնժամ Կեսար:

33. Երկոքին թագաւորքն են Դիոտար և որդին իւր: Հայրն միայն թուի ամբաստանեալ, կամ՝ զի որդին հաշտարարն էր յաչս Կեսարու. և այսու հնարի յոգորմ և 'ի գութ ածել 'ի վերայ երկոցունցն:

34. Անողորմութեան ոստիանն գատաստանից: — Բազմաքանդակ ճառիւս ոչինչ աւելի շահեալ ասի Կիկերոնին 'ի խաւութենէն Կեսարու, բայց միայն՝ զի ոչ պատուհասեաց զդատապարտեսեալն, և զիոգին մի ևեթ գաղատիոյ և զանուն թագաւորի ետիոյ 'ի նա:

Digitized by Google

Digitized by Google

ԿԻԿԵՐՈՎՆԻ

ՃԱՌ ԵՐԿՐՈՐԴ ՓԻԼԻՊՊԵԱՆ

ԸՆԴԴԷՄ ՄԱՐԿՈՍԻ ԱՆՏՈՆԻՈՍԻ

Digitized by Google

Digitized by Google

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Հայրենասէրն Կիկերոնն՝ մի յականաւորաց ասենի աւագանւոյն Հռովմայ, այր լաւ, վաստակաւոր և ալեաւք պայծառացեալ, և նախանձայոյզ ազատութեան՝ խաղաղութեան և հասարակաց բարեաց, սեւեակ՝ զի թէպէտ և սուսերահար սպանմամբն Կայիոսի Յուլիոսի Կեսարու ազատեցաւ աշխարհն 'ի բռնաւորէ, կամ որ նոյն էր ըստ նոցա՝ 'ի թագաւորէ, այլ ոչ 'ի բռնաւորութենէ կամ 'ի թագաւորութենէ, որպէս ինքն իսկ ասէր և գրէր, նմին իրի և ցանգ հոգայր և կասկածէր, մանաւանդ զՄարկոսն Անտոնիոսն՝ զսքսաւոր արքանեկէ նորին, որոյ գնացք անօրէն և ապիրատք էին, և ընթացիցն դէմք՝ գէպուզիզ 'ի յաջորդութիւն նորա, և 'ի չար և բռնակալութիւն ըստ անբարի արտին իւրում։ Թէպէտ և զանայր նա մեզմիս խորհրդովք խորամանգութեան թաքուցանել զմիտս իւր, բայց խորագէտն Կիկերոն՝ հանգերձ հաւատարմաբն և մտերմաբ՝ հաճեալ ըմբռնեալ էր զդաղանիս կնճռան նորա, և արդաբ նախանձուն յայտնեալ էս զտրտունջ իւր յառաջին աւուրս ինչ յետ սպանմանն Կեսարու, և տարագէմ գնացեալ՝ 'ի յունաստան պանդխտել մինչև անցցէ մրրիկն. բայց խարեալ 'ի յոյս մեռոյ՝ դարձաւ անդրէն։ Անգուստ և Անտոնիոս, խելամուտ լեալ 'ի յոյս և գաղտ քրմիմիջանաց նորա, և ծանուցեալ զնա ասոյ՝ ամբաստանն գահասիրութեան իւրում, մերկացաւ զմիմերեալ ծածուկ ոխն, էս առաւել՝ կոչոյ պատգամ առ նա յղելով յատենէ աւագանւոյն խրոխտ և աներկիւղ սպառնալեաւք, մինչև անձամբ երթալոյ և քանդելոյ զտուն նորա, զի և բդեշխ իսկ էր։ Ոչ չգաւ Կիկերոն, և 'ի ձեռն բարեկամի պատճառեցաւ առ նմա՝ խնդալ յուզոյ լինել և անհանգիստ, զի և այն ինչ դարձեալ եկեալ էր 'ի քաղաքն յուսով բարեաց, և 'ի դերև երևալ. բայց 'ի ներքոյ՝ վասն զի Անտոնի կամք

Digitized by Google

էին յայնմ ժողովի պաղատանս հրամայել և սահմանել վասն կեսարու աստուածարելոյ։ Ի վաղիւ անդր՝ յատենի անդ ուր չէր Անտոնիոս, գնաց խօսեցաւ Կիկերոնին զառաջին փիլիպպեանն իւր, որով ծանոյց մեղմաբար զխաղաղասիրութիւն իւր և զատելութիւն բռնաւորութեան, բողոքեաց զերեկի անիրաւութենէն Անտոնի յանձին իւր, յանդիմանեաց զինքնահրաման գործն նորա, և զառաջատ կամ կամանաց հանդերձեալ նենգութեանցն նորա փեռեկեալ, ՝ի վեր երկան զերկնեալն ՝ի սրտին նենգ ընդդէմ ազատութեան. և կնքեաց զբանն ՝ի խրատ առ նա և առ միւս բգեշխն Դուլաբելլա, թէ զինչ ճանապարհ իցէ ճշմարիտ փառաց։ Ազդ եղև Անտոնի այս ատենախօսութիւն կիկերոնեան. որոյ ՝ի մեծ սրամտութիւն բարկութեան բրդեալ՝ յայտ յանդիմանն հրապարակագոյժ արար զթշնամութիւն ընդ Կիկերոնի, և կէտ եդեալ՝ հրաման առնու առաքեաց՝ գալ յատեան աւագանւոյն։ Բայց նորա ՝ի բարեկամաց խրատեալ, և խիթացեալ և յանձին վտանգէ՝ ոչ կամեցաւ անալ. և ՝ի ձեռն մտերմաց զեկոյց՝ զի թէ և կամեցի, չէ հնար գալ նմա յատեան։ Ի ժամանել ժամանակեալ աւուրն երրեալ Անտոնի յատեանն անհնարին գազանութեամբ, խօսեցաւ մեծ մի՝ բազմօրեայ երկնեալ մտածութեամբ, ատատիկ կրշտամբողական, թշնամանալից զպարտութեամբք ընդդէմ Կիկերոնի, թափեալ զամենայն մղձ գառնութեան իւրոյ։ Կիկերոնն, յայնժամանց վարեցաւն և երից, ազգասէր նախանձու և իւրով իսկ արդար սրտմտութեամբ, և նախնեացն արժանի արիութեամբ ընդդէմ ամենազօր բռնն և վէս ոստիին, գրեաց զճառս զայս՝ երկրորդ ՝ի Փիլիպպեանն իւր, որ մի է ՝ի նշանաւոր ճարտարախօսութեանց նորա, մինչև Յոբնաղի ատատուածային զառ յորջորջել. յորում թէպէտ և ձեռանայ իբրև առ նա խօսել յատենին, բայց չէ խօսեալ, այլ գրով միայն հանեալ է։ Դատախազդ և զրգռատ չարախօսութիւնք Անտոնի ըստ խմաստիցն տեսանին բաւականութեամբ ՝ի պատասխանեացն։ Իսկ ճառքն իւր չորեքտասանք ընդդէմ Անտոնիոսի՝ Փիլիպպեանք անուանեալ են ըստ նմանութեան Դիմոսթենեսի, որոյ Փիլիպպեանս յորջորջեալ է զչորեսին հզօր և կորովի խօսս իւր ընդդէմ Փիլիպպեայ մակեդոնացւոյ. զի որպէս նա խրախուսէր զաթենացիս ընդդէմ այնր արքայի՝ ոխերին իւրեանց, նոյնպէս սա վառէ զաւագանին և զժողովուրդն Հռովմէական՝ ընդդէմ Անտոնի թշնամւոյ վիրագի ազատութեան իւրեանց։ Եւ այս իսկ է պատճառք անուանակոչութեանդ, և ոչ այլ ինչ։

Digitized by Google

ԿԻԿԵՐՈՎՆԻ

ՃԱՌ ԵՐԿՐՈՐԴ ՓԻԼԻՊՊԵԱՆ

ԸՆԴԴԷՄ ՄԱՐԿՈՍԻ ԱՆՏՈՆԻՈՍԻ

Որով բախտիս լինել ասացից, Հայք ատենակալք, զի 'ի քանանեին ասես յայտակիվ [1] չեկաց ոք ընկերհաշտութեան Թշնամի, որոյ չիցէ 'ի նմին ժամանակի և ընդ իս 'ի մարտս գոռացեալ։ Զէ ինձ ինչ հարկ յանուանէ զոք նշանակել, զուք ձեզէն 'ի ձեզ յուշ ածէք։ Դարձ՝ ասասցուք քան զոր գոյր ինձ ցանկալ՝ եռուն ինձ վրէժս [2]։ Ընդ քեզ զարմանամ, Անտոնիէ, զի որոց գործոցն նմանող եղեր, 'ի նոցա կատարածէն ոչ ինչ զարհուրիս։ Ընդ այս ոչ այնչափ զարմանայի յայլս. ոչ ոք 'ի նոցանէ ամբարձաւ ինձ ինքնակամ Թշնամի. ամենեցուն՝ ընկերհաշտութեան ազագաւ՝ յինէն զայրացեալ։ Դու, և ոչ բանիս ինչ իւիք զկծեալ, որպէս զի յանդգնագոյն քան զլ. Կատիլինա, մոլեգին քան զՊ. Կլոդիոս երևեցիս, ինքնաձեռն յարձակեցար յիս Թշնամանոքդ. իբրև զի զնեռալդ ընդ իս՝ գովութիւն քեզ լինել առ քաղաքացիս համարեցար։ Զինչ վարկայց. արհամարհեալ զիս. ոչ նշմարեմ՝ ոչ 'ի կեանս իմ, ոչ 'ի շնորհս, ոչ 'ի գործս պաշտամանցս և ոչ 'ի չափաւորու-

Digitized by Google

թեանս հանձարոյ, թէ զինչ արդեաք անդամանել կարիցէ Անտոնիոս։ Արդեաք 'ի կարծիս ինչ եղև, թէ յատենի ա-ւագանւոյս՝ դիւրին իցէ նմա բամբասել զիս. բայց առեանս այս՝ քաղաքացւոց բազմաց հոյակապից զբարւոյն տեսչու-թեան պետութեանս ետ վկայութիւն, իսկ ինձ միայնոյ՝ զիրկութեանն։ Արդեաք ոգորել ընդ իս կամեցաւ 'ի պայ-քար բանից. այլ այդ շնորհք է առ իս. զի զինչ յորդա-գոյն, զինչ պարարտագոյն՝ քան ինձ փոխանակ անձինս և ընդդէմ Անտոնիոսի ճառս արկանել։ Այլ այս իսկ է ան-շուշտ. ոչ համարեցաւ հաւաստի լինել առ իւր նմանեան՝ թէ թշնամի հայրենեաց իցէ, եթէ չլինիցի ինձ ոխերիմ։ Առ որ յառաջ քան զայլոց իրաց տալոյ պատասխանի, ըզ-բարեկամութենէն ապահաս առնելոյ՝ որով զիսն ըստդիտ, և յաչս իմ ոճիր յանցանք են, ասացից սակաւուք։

Բողոք կալաւ զինէն, թէ ինչպա գործեալ իցէ իմ իրաց իւրոց [3], չգիտեմ երբ։ Մինթէ չէր ինձ պարտ ընդդէմ ելա-նել օտարի ումեք՝ փոխանակ ընտանւոյս և բարեկամիս. ոչ հակառակ յառնել պաշտպանութեան՝ ոչ առաքինութեան յուսով գտելոյ, այլ 'ի ծաղկէ տիոցն. ոչ ախոյեան կալ ընդդէմ անիրաւութեան, զոր սա [4] անօրէն բարեխօսին բարերարութեամբ ժառանգեաց, ոչ դատաստանական իրաւամբք։ Այլ զայս յայն սակս կարծեմ յիշատակեալ առ 'ի քէն, զի արդոյ ընծայեցուցցես զանձն քո խառնա-ղանձին. քանզի ամենեքեան գիտեն զքեզ փեսայ եղեալ առն ստրկի՝ այն ինչ ազատելոյ, և զորդիս քո՝ Թոռունս Կ. Փաղիոսի՝ 'ի ստրկութենէ յազատութիւն ելելոյ։ Այլ քո զանձն ինձ 'ի դատիարակութիւն աւանդեալ էր, — քանզի այդպէս իսկ ասացեր, — և էր 'ի յարկս իմ յաճախեալ։ Եթէ զայդ արարեալ էր քո, այո՛ օն և օն՝ լաւ ևս համբաւոյդ, լաւ ևս պարկեշտութեանդ տարեալ լինիցէր քո հոգ ինամոյ։ Բայց ոչ արարեր, և ոչ՝ եթէ ցանկայիր ևս՝ ներեր քեզ Կ. Կուրիոն [5] առնել զայդ։ Ասացեր՝ շնորհեալ

քո ինձ զհաւատամոյութեան խնդրուած [6]։ Ո՛վ անհաւատալի յանդգնութեանն, ո՛վ հռչակելի լրբութեանն։ Զի յորժամ զնա 'ի բոլոր դասակարգէն ցանկացեալ՝ հաւատամոյ ընտրեցին Կն. Պոմպիոս և Կ. Հորտենսիոս, — քանզի և չէր օրէն յոլովագունից ընտրել, — ոչ զպարտագ գոյր քեզ հատուցանել [7], և ոչ այլով իւիք անպարտ քեզ արձակիլ ակն ունէիր, բայց միայն կործանմամբ ընկերհաշտութեանն։ Էր ինչ հնար խնդրել քեզ յայնժամ զհաւատամոյութիւն, մինչդեռ չէր Կուրիոն յիտալիա. կամ յորժամ եղերդ, զքեզ մի ևեթ [8] առանց Կուրիոնի կարօղ էիր շահել. որոյ և ծառայք ևս դատակնքեցան 'ի բռնութիւն՝ վասն կարի իմն զքէն փոյթեռանդն գտանելոյ։

Այլ յերախտիս քո վայելեցի։ Ցո՞ր. Թէպէտ և զոր յիշատակեան՝ հանապազ խոստովան եղէ. առաւել ընտրեալ շնորհապարտ քեզ զանձն գտանել, քան անիմաստանագունի ումեք՝ ապերախտութեան տալ կարծիս։ Այլ աղէ յո՞ր երախտիդ։ Զի 'ի Բրունդիսիոն ոչ ապաներ զնա. զոր յաղթողին [9], — որոյ որպէս գուն սովոր էիր պարծել՝ յիւրոց անտի աւազակաց քեզ տուեալ էր ի՞նչ-նութիւն, — նորա ինքնին կամեցեալ էր ապրեցուցանել զնա, և հրամայեալնմա յիտալիա երթալ, գո՛ւ զնա սպանանէիր։ Գրեսջիր թէ կարօղ էիր։ Զի՞նչ այլ իցեն, Հարք առեռնակաւք, աւազակացն երախտիք, բայց զի կարեն յիշատակել, թէ զարև շնորհեցին այնոցիկ յորոց ոչն հատին։ Որ եթէ երախտիք ինչ էին, սպանօղք կեցուցչին իւրեանց [10], զորս գու ինքնին արս փառաւորս սովոր ես կոչել, ոչ երբեք այնմ փառաց հատանէին։ Աղէ զի՞նչ երախտիք իցեն, զի յոմեր եղերանէ անտի պահեցեր զձեռագ. յորում ոչ այնչափ քաղցր թուեցաւ ինձ չմեռանելս 'ի քէն, որչափ եղկելի՝ կարեալ զքո անպատուհաս գործել զայն։ Այլ դիցուք թէ երախտիք իցեն, զի մեծ ինչ քան զայն չելև գտանել յառնէ աւազակէ. յիմ խիղք ասիցես զնա ապախտաւոր։ Զէր պարտ արդեաք զմեռելութենէ ընկերհաշտու-

թեան բողոք բառնալ, զի մի առ քեզ ապաշնորհ երևիցիմ։ Նա զի և յայն բողոք, թշուառական ապաքէն և ազետալի, բայց կարևոր ինձ յաշտիճանիս յայսմ, յոր կացոյց զիս աւագանին և ժողովուրդն հռովմէական, զինչ ինչ ասացի ես նախատանոք, զինչ ոչ չափով և համով, զինչ ոչ սիրողաբար։ Այլ զինչ ժուժկալութիւն եղև այն, 'ի արանջելն զԱրիստոս Անտոնիոսէ՝ զգուշանալ 'ի թշնամանաց. մանաւանդ ուր քո ցրուեալ ցնդեալ էր և զնչիարեալ մնացորդս ընկերհաշտութեանն. ուր 'ի տան քում յանարգ վաճառաշահութիւն հանեալ էր ամենայն ինչ. ուր զքէն և 'ի քէն օրէնս ինն խոստովան լինէիր եղեալ՝ որոց չէր երբեք հրապարակեալ. ուր հաւահմայդ՝ զհմայս, բդեշխդ զդիմադարձութիւն բարձեր 'ի միջոյ [11]. ուր դժնեաբար ածեալ խոնեալ էիր զքև սպառազէնս. ուր զամենայն քարուկանս 'ի պարկեշտ անդր ապարանսն [12] ժողովէիր հանապազօր, 'ի գինիս և 'ի շուայտութիւնս ոգողեալ։ Սակայն ես, գոգ իբրև թէ ընդ Մ. Կրասոսի անկեալ էր ինձ պայքար, — ընդ որում բաղումք իսկ և մեծամեծք անկան, — և ոչ թէ ընդ 'ի վսեր եկելոյ վատշուէր սուսերամարտի, վասն ընկերհաշտութեան ծանուցս բողոքեալ՝ զմարդոյն ինչ ոչ ասացի։ Այլ արդ այսօր կատարեցից, զի 'ի միտ առցէ՝ քանիսն երախտիս յինէն ընկալեալ իցէ յայնժամ։

Այլ նա և զնամակն, զոր յինէն գրեալ առ ինքն ասէր, ընթերցաւ. մարդ՝ և մարդկութեան անհաղորդ, և աշխարհօրէն կենցաղի անհմուտ։ Զի ոմ՝ ոք երբեք՝ որ խուն ինչ ևթթ լաւացն սովորութեան տեղեակ էր, զառ ինքն թուղթս բարեկամին, 'ի մէջ անկանել դժկամակութեան իրիք, 'ի դուրս եհան և կարդաց հրապարակաւ։ Զինչ այլ իցէ բառնալ 'ի կենաց զկենաց կցորդութիւն, բառնալ զհեռաւոր բարեկամացն ընդ միմեանս զրուցատրութիւն։ Քանի՞ քանի՞ խաղք և կատակք սովոր են լինել 'ի թուղթս, ուր եթէ յառաջ բերցին՝ անպատեհ երևին. և քանի՞ ծանր

Digitized by Google

և զգօն բանք, այլ ոչ երբեք համբաւելիք։ Տացի այդ քում մտարդուքեանդ. տեսէք արդ զանհաւատալի յիմարու-թիւնն։ Չինչ ունիցիս ինձ ընդդէմ գնել, այրդ պերճաբան, որպէս Թուխիդ Մուստիլայի Տամիսեայ և Տիրոնիկեանի-սեայ, որք քանզի սուսերաւոր արձանացեալ կան 'ի ժա-մուս յանդիման աւազանդոյս, և ես ինքն պերճաբան զքեզ համարեցայց, եԹէ ցուցանիցես՝ զիարդ պաշտպանել ու-նիցիս նոցա 'ի սրիկայս։ Այլ ապէ հուսկ ուրեմն զինչ ու-նիցիս ընդդէմ բերել, եԹէ յուրատոտ կացից՝ Թէ չէք իմ բնաւ երբեք զԹուղԹն զայն առաքեալ առ քեզ. որոմ վը-կայիս զիս ըմբերանիցես. արդեաք ձեռնադրմամ, յորում ունիս զգիտութիւն շահաբեր։ Չիարդ հնարեսցիս. քանզի ձեռն դպրի է։ Կախանձիմ ընդ վարժապետդ, որ այնչափ վարձուքն, զոր ընդ հուպ ցուցից, ուսուցեալ է քեզ չգի-տել և ոչ ինչ։ Չի զինչ առաւել անհահ, չասեմ ճարտա-րախօսի, այլ մարդոյ, քան զայն ինչ ընդդէմ հանել ոտ-խին, զոր եԹէ բանիւ լրկով ժխտեսցէ, ոչ ես կարասցէ յա-ռաջ խաղալ ախոյեանն։ Այլ ես ոչ յուրատոտ լինիմ. և զքեզ յայտմ իսկ ոչ տմարդի միայն յանդիմանեմ, այլ և ան-միտ։ Չի զինչ բան կայցէ 'ի ԹղԹի անդ՝ ոչ մարդասիրու-Թեամբ, պատուշաճիւք և լաւակամութեամբ լի։ Քո է ամե-նայն մեղադրութիւն, զի 'ի նամակի անդ յայնմիկ ոչ առ. ապիրատոս ունիմ զքեզ, զի իբրև առ. քաղաքացի ոք գրեմ, իբրև առ. լաւ այր, ոչ իբրև առ. ամպարիշտ և յելուզակ։ Այլ ես զքո նամակդ, Թէպէտ և 'ի քէն գրգռեալ կարօղ էի, սակայն ոչ հանից յերևան. յորում խնդրես զի Թոյլ լիցի քեզ յինէն՝ դարձուցանել զոք 15 յաքսորանաց, և երդնուս՝ չառնել զայն արտաքոյ իմոց կամացս. և առնուս զինդրելիդ։ Չի զի՞ էր ինձ դիմադրաւել յանդգնութեանդ քում, զոր ոչ իշխանութիւն աւագամեծար այսր առեալ, ոչ հռոմկական ժողովրդեանն դատաստան, և ոչ օրէնք ինչ կարէին նահանջել։ Այլ ապէ՝ զինչ էր զոր յինէնս ժառէիր, ուր վասն որոյ ժառէիրն՝ դարձեալ էր նա՝ Կեսա-

ղու օրինաքն։ Այլ յինէն կամեցաւ լինել զշնորհան, յորում և ոչ իւր ինչ գոյր լինել 'ի կալ օրինացն։

Այլ քանզի, Հարք առեռնակալք, կայ ինձ ասել ինչ զինէն վասն ընդդէմ Մ. Անտոնեայ բաղումս ինչ, զմին՝ 'ի ձէնջ հայցեմ, զի 'ի խօսելս զինէն՝ քաղցրութեամբ մատուցիք ունկն, զմիւսն՝ ես արարից, զի զընդդէմ նմին բանքս մատադիւրութեամբ լուիջիք։ Համայն և զայս ևս ազաչեմ. զի եթէ զիմ յամենայն 'ի կեանս և 'ի խօսս ճանաչէք զհամեստութիւն և զպարկեշտութիւն, մի՛ զիս այսօր՝ 'ի պատասխանելս սմա ըստ գրգռելոյն իւրոյ, 'ի մոռացօնս ինչ անձինս անկեալ համարիջիք։ Ոչ վարեցայց ընդ նմա իբրև ընդ բդեշխի, և ոչ նա ընդ իս իբրև ընդ երբեմն բդեշխի։ Թէպէտ և նա չիցէ ամենևին բդեշխ, Թէպէտ վարուքն, Թէպէտ տեսչութեամբ ընկերհաշտութեանս, և Թէպէտ 'ի բուսոյ բարուցն, յիս սակայն՝ առանց ընդ բանս ինչ ածելոյ՝ բդեշխութեան կայ պատիւ։ Արդ, առ 'ի վերայ կալոյ ձեզ՝ Թէ որպիսի բդեշխ զանձն իւր ընծայեցուցանիցէ, 'ի բիծ տանի զիմ բդեշխութիւնս, որ յանուան՝ իմ, իսկ արդեամբք՝ ձեր էր բդեշխութիւն, Հարք առեռնակալք։ Զի զինչ կարգեցի, զինչ կատարեցի, զինչ գործեցի, որ ոչ ըստ խորհրդոյ կամաց և իշխանութեան և մտաց այսր առեռնի։ Զայսոսիկ, դու այր խմաստուն, ոչ ճոռոմաբան միայն, առ նոսա՝ որոց հանճարոնն և իմաստութեամբ վճարեալ են, իշխեցեր անգամանել։ Այլ՝ ո՞ գտաւ՝ որ զիմ բդեշխութիւնս նախատեաց, բաց 'ի Պ. Կլոտիոսէ, որոյ ճակատագիրն և քեզ մնայ, որպէս Կ. Կուրիոնի. զի 'ի տանդ է այն՝ 14 որ երկոցուն նոցա օրհասաբեր եղև։ Բդեշխութիւն իմ չէ հաճոյ Մ. Անտոնիոսի. բայց հաճոյ եղև Պ. Սերուիլիոսի, — զի զնա նախ անուանեցից 'ի բդեշխութեամբ պատուեցելոց ժամանակին, որ և 'ի մտոյ աւուրս վախճանեցաւ. — հաճոյ եղև Կ. Յուստասեայ Կոտուլոսի, որոյ կենդանի կայ միշտ իշխանութիւն յընկերհաշտութեանս. հաճոյ եղև երկոցունց Յուկուլլեանցն, Մ. Կրասոսի, Կ. Հորտենսեայ, Կ. Կու-

րիոնի, Մ. Լէպիդոսի, Կ. Գիսոնի, Մ. Գլաբրիոնի, Լ. Վոլկատեայ, Կ. Փիգուլոսի, Դ. Սիլանոսի, Լ. Մուրենայ, որ յայնժամ 'ի բդեշխութիւն որոշեալք էին. և որ ինչ 'ի բդեշխութիւն կարդեալցն, նոյն և Մ. Կատոնի [15] դուստր հաճոյական, որ ելանելովն 'ի կենաց աստի՝ բաղում ինչ հոգացաւ, այլ և զայն ևս՝ զի չետես զքեզ բդեշխն։ Բայց ընդ բդեշխութիւն իմ հաճեալ հաւանեցաւ կն. Գոմպիոս, որ 'ի մեկնելն յԱսորւոց, իսկ և իսկ ընդ տեսանելն զնա՝ գիրկս արկեալ և գոհութիւն մատուցեալ, յիմմէ շնորհէ ասաց արժանի լինել տեսոյ հայրենի աշխարհին։ Իսկ զի մի մի Թուլցեմ զամենեսին. ակմբահոյլ առեալ ապագանոյն այնպէս հաճոյ եղև, զի չմնաց ոք՝ որ չխոստովանէր ինձ շնորհս իբրև հօր, որ ոչ երախտապարտ ինձ հաշուէր զկեանս իւր, զորդիս, զստացուածս, զընկերհաշտութիւնն։

Այլ քանզի յորոց անուանեցիս յայնչափ և յայնպիսի արանց որբացաւ ընկերհաշտութիւնն, եկեսցուք առ կենդանիսն, որ երկուք ևեթ մնացին 'ի Թուոյ բդեշխութեամբ պատուեցելոցն։ Լ. Կոտտաս, այր մեծ հանճարով, մեծ և իմաստութեամբ, ուխտս և պաղատանս սահմանեաց Հոռ և պերճ քանիս վասն իրացն գործեցելոց՝ զորս դուն խծբըծես. և նմա, նոքին իսկ ինքեանք՝ զորս այժմդ յիշեցի, զոր բդեշխութեամբ պատուեալք, և առեան աւագանոյն համբրէն, հաճեալ հաւանեցան. պատիւ, որ անդատեն 'ի շնութենէ հետէ քաղաքիս՝ ոչ ումեք յառաջ քան զնա պատմուճանաւորի երբեք մատուցաւ։ Լուկիոս Կեսար՝ քեռին քո, որով բանիւ, որով արութեամբ, որով զգօնութեամբ մերկացաւ զմիտան ընդդէմ քեռւանն իւրոյ [16], յօրայնն քում։ Ուր զնա քեզ արժան էր առաջնորդ և դաստիարակ ունել ամենայն խորհրդոց և բովանդակ կենաց, հօրուն քում ընտրեցեր նախանձաւոր լինել քան քեռւոյդ։ Նորա խորհրդովք վարեցայ օտարատերմս ես 'ի բդեշխութեանս. դու, նորա քեռորդի, զինչ երբեք հարցեր ցնա զընկերհաշ-

Digitized by Google

առութենէս։ Իսկ ընդ ոյս խորհիցի դա խորհուրդ։ Ո՛վ դիք անմահք, ընդ այնոսիկ՝ զորոց և զաւուրս ծննդոցն հաստատեմ զեզ ասել։ Այսօր չեկն չէլ չերևեցաւ Աստուծոյ։ Ընդէ՞ր։ Ցօն ծնողաց խմբէ 'ի պարտէզս։ Ո՞ւմ ուստիք։ Զանուանեցեալ և ոչ զոք։ Հաշուեցարուք՝ մերթ Փորմիոնի ուսեմն, մերթ Գնաթոնի, մերթ Բայլիոնի [17]։ Ո՛վ եղեռնաւոր գարշութեան առնն. ո՛վ անտանելի լրբութեան, անզգամութեան և լկտութեանն։ Դու, որում՝ այնքան մերձաւոր էր իշխանն խորհրդական, անհամեմատ քաջաքացին, ո՞չ ինչ խորհիս ընդ նմա զընկերհաշաւութենէս. ընդ նոսա խորհիս՝ որոց չիք ինչ, և զդոյս քո վատանն։ Ահա արդարև՛ քո բդեշխութիւնդ՝ փրկաւէտ, իմն՝ եղեռնական։

Ա՞դչափ զամենի ընդ պատկառանաց մերկացար, զի զայդ իշխեցեր ասել 'ի տաճարի անդ [18], յորում էս 'ի խորհուրդ մտանելի ընդ աւագամեծար ատենին, որ երբեմն ծագկափայլ՝ ընդ ծագս տիեզերաց տայր հրամանն. դու և արս ժանտագործս կանգնեցեր անդ սուսերաւորս։ Համարձակեցար էս, — և զինչ իցէ յոր դու ոչ համարձակիցիս, — զբլուրն կապիտոլեան յիմոմ բդեշխութեան լի և հոծ ասել սպառազէն արքանեկոք։ Կարծեմ բուռն աւագանային առնէի, զի եղեռնաւոր հրամանքն [19] այնոքիկ յայլոցեացին։ Վա՛հ հիքիդ, թէպէտ չեցեն քեզ այնոքիկ ծանօթ, — զի ոչինչ 'ի բարեաց ծանեար, — թէպէտ և իցեն, որ ասա արս այսպիսիս՝ այնչափ ժամրաեալ խօսեցար։ Զի՞ որ ասպետ հռոմայեցի, ո՞ բաց 'ի քէն՝ պատանի ազնուատոհմ, ո՞ ոք յամենայն կարգէ, որ դամ մի զանձն քաղաքացի գիտէր, մինչդեռ ատեանն աւագամեծար 'ի տաճարի ատ էր, չդատաւ 'ի կապիտոլեան բլրին. ո՞ ոչ եմուտ 'ի դիր զենուորութեան. թէպէտ և ոչ դպիրք բաւեցին և ոչ տախտակք՝ բովանդակել զհամար անուանց նոցա։ Զի իբրև արք անօրէնք, քաւութեամբ խորհրդակցացն, իւրանց ձեռնադրօք, գոլցես նշանագրացն ձայնիւք, խաստովան լինէին զատատակմանէ հայրենեաց, թէ միաբանեալ են՝ զքաղաքն

հրոյ և զքաղաքացիս արոյ տալ Հաբրահ, զԻսահակ սպարապետ վարել, բնաջինջ բառնալ զընկերհաշտութիւնն, ո՞ այն ոք էր՝ որ 'ի փրկութիւն հասարակաց ոչ փութայր լինել զորավիգն. Նա զի և աւագանին և ժողովուրդն հառվիչական ունէին յայնժամ առաջնորդ, որպիսի եթէ գոյր ոք և այժմ, որ ինչ ընդ նոցա՝ նոյն և ընդ քո կառուսին ելաներ։

Զմարմին յօրային իւրոյ, ասէ, ոչ առուեալ խա՛ի թագուն։ Բայց զայդ և ոչ Գ. Կ՛ուզիս ասաց երբեք. որում քանզի իրաւամբք ոսոխ եղէ, ցաւէ ինձ՝ զի դու յանմեծայն չարութեան մնատուն եղեր զանցուցեր զնովաւ։ Իսկ զի՞ բնաւ անկաւ 'ի միտս քո՝ յուշ ածել մեզ, զի 'ի տան Գ. Լենտուլոսի 30 անեալ իցես. խիթացուր արդեաք, թէ գուցէ ոչ բաւական համարիցիմք զբնութիւնդ յայդքան ապիրատութիւն՝ առանց յաւելլոյ և կրթութեան։ Ա՞յդչափ պանդոյր էիր, մինչև անձամբ ընդ անձին կռուել քեզ՝ի բոլոր Հռոմիդ. ոչ միայն բան բանի անՀահս բարբառել, այլ և յոյժ հակառակս և գիմամարտս. մինչ զի ոչ այնչափ ընդ իս՝ քան թէ քո ընդ քեզ ոգորել։ Զահագին եղեռն հօրուիդ լինելիր խոստովան, իսկ զպատուհասէն՝ բոզոք բառնայիր. ապա ուրեմն՝ որ ինչ յիսն հայի՝ գովեցեր, իսկ որ յաւագանին բովանդակ՝ պարսաւեցեր. քանզի ըմբռնումն չարագործաց՝ ինձ անկ, պատիժ պատուհասին՝ աւագանւոյն էր։ Այրն Հռոմ ոչ խմնայ, թէ որում ոսոխեալ կայ՝ գովի յիւրմէ, իսկ առ որս բարբառի՝ քամահրին։ Եւ որ այն իցէ՝ չասեմ յանգգնութիւն, զի յանդուգն սիրէ կոչիլ, այլ զոր ոչն բնաւ կամի, անմտութիւն՝ որով գլէ զամենեսին, կապիտոլէան բլրոյն յիշատակ առնել, մինչգեռ զաթոռակոք մերոյք շրջին զենակիրք. մինչգեռ 'ի տաՀարի սատ Մխաքանութեան, ո՛վ անմահ գիք, յորում առ ինև բգեշխաւ՝ հատան վՀոգն փրկականք՝ որովք կեանքս ցայսօր, կարգեալ կան ազգ սուսերաբորոք։ Բամբասեա զաւագանին, բամբասեա զասպետացն գասս՝ որ յայնժամ ընդ աւագանւոյն էին միացեալ, բամբասեա զկարգս ամենայն,

զամենայն քաղաքացիս, միայն թէ խոստովան լինիցիս, զի զատենիս այսու՝ ասա յայսմ ժամանակիս Խուրացիք շուրջ պաշարեալ գարանակալ նստին։ Զայսոսիկ դու ոչ առ յանդգնութեան ինչ խիզախեալ բարբառիս, այլ զի զանհնարին իրացն հակառակութիւն ոչ նշմարես. արդարև իսկ թափեալ ուղիղ։ Զի զինչ անմտադոյն քան զայն կայցէ, զի յորժամ դու ինքն ընդդէմ ընկերհաշտութեան զէն կորստաբեր շարժեցեր, այլում զիրկանութեան յանդիման հաթանիցես։ Բայց է ուրեք՝ զի և կատակաբան լինել կամեցար։ Քանի՞ անհամ անշնորհ էր այն, բարերարը դիք. յորում և է ինչ քո մեղ. մարթէր քեզ 'ի հոպիտ կնոջէդ 21 աղ ինչ անուշիչ ձգել յանձն։ Տեղի փոյնն պէնի պշնաւոր հանդերձին 22։ Եւ զինչ. միթէ չետոնն յայնժամ տեղի. բայց ապա զինուց քոց տեղի ետ պշնաւորն։ Եկ արդ խնդրեսցուք. արդեաք լաւագոյն էր, առաջի ազատութեան հռովմէական ժողովրդեանն՝ ամպարշտացն զինուց տալ տեղի, թէ մերոյ ազատութեանս՝ առաջի քոց զինուցդ։ Իսկ ըզտանց տաղիցն՝ ոչինչ տաց քեզ պատասխանի. զայս եւեթ ասացեալ համառօտս, զի ոչ զայնս, և ոչ այլ ինչ ամենևին ուսեալ է քո դպրութիւն։ Իմ ոչ առ ընկերս հաշտութիւնն, և ոչ առ բարեկամս երբեք պակասեալ է, բայց և ամենայն ազգի ազգի արձանագրութեանցս վաստակոց պարապմամբք՝ գործ 'ի գլուխ տարեալ, զի տքնութիւնք իմ և մատենագրութիւնք յօգուտ լինիցին պատանեաց, և 'ի պարծանս ինչ հռովմէական անուան։ Այլ այսոքիկ ոչ այսր ժամու էն, եկեսցուք 'ի մեծ ամենն։

Իսով խորհրդով ապանեալ ասացեր զգ. Կլոդիոս։ Զինչ արդեաք համարելոց էին մարդիկ, եթէ յայնժամ էր սպանեալ, յորժամ դու 'ի հրապարակին՝ ակն յանդիման հռովմէական ժողովրդեան՝ սուր հանեալ 'ի նա յարձակեցար. և զգործն վճարեալ լինէիր, եթէ չէր նորա 'ի սանդուղս կրպակի գրոց ընկեցեալ զանձն, և խցեալ զայնս՝ զերափ բռնութեանդ խափանեալ։ Ար որ զնա յօժարամիտ ընդ-

քեզ եղեալ վկայեմ. հրապուրեալ, և ոչ դու ինքն ասես։ Իսկ առ Միլոն՝ և ոչ յորդորամիտ անդամ կալուցի լինել. զի չէ ուրուք 'ի կարծիս լեալ գործոյն, նա արդեամբք կա-տարեաց [23]։ Այլ ես հաւանեցուցի զայրն. վասն զի այն ինն հոգի էր Միլոնի՝ որ առանց համոզակեր թուչի չմար-թէր օգուտ ինչ ընկերհաշուութեան առնել. բայց ուրախ եղէ։ Եւ զինչ. յայնչափ խնդութեան համօրէն քաղաքիս՝ ինձ ուրեմն պարտ էր միայն տրտում լինել։ Թէպէտ և զմահուանէն Գ. Կլոդեայ ապաքէն եղև փուրսիչ [24], այլ ոչ յոյժ խնամանաքարը 'ի հարցփորձ մատուցեալ։ Զի ուր փուրսիչն օրինաք սահմանեալ էր, զի և սիտեր այնուհե-տև նոր օրինաք խոյզ և խնդիր առնել զմարդասպանէն։ Սա-կայն եղև հարցուփորձ։ Արդ՝ զոր 'ի դատել իրացն ոչ զք բամբասեաց յիս, յետ այնչափ ամաց գո՞ւ գոտար բաղբա-զել զայն։

Իսկ զոր յանդգնեցար ասել, և զայն՝ բազմաբանու-թեամբ, թէ խմով առնելով Հեղբեցաւ Գոմպիոս 'ի բարե-կամութենէն Կեսարու, վասն որոյ և խմով յանցանաքն ծա-գեցաւ պատերազմն քաղաքական, յայդմ գու ապաքէն ոչ յիրացն բովանդակ, այլ որ ևան է՝ 'ի ժամանակացն ասե-ցիւրեցար։ Ես 'ի բդեշխութեան Մ. Բիբուլոսի առն նշա-նաւորի՝ ոչինչ թողի յորոց կարէի գործել և ջանալ, զի մի օգտեցից զԳոմպիոս 'ի միաբանութենէն Կեսարու, յորում Կեսար աջողագոյն գտաւ, զի նա զԳոմպիոս յիմմի ընտա-նութենէս ուծացոյց։ Իսկ Իբրև Գոմպիոս բնաւ 'ի ձեռս ետ զինքն Կեսարու, զի էր ինձ գուն դնել պատառել զնա 'ի նմանել. յիմարի էր յուսալ, յորդորել՝ լրբենաց։ Սակայն դէպ եղև երկիցս, զի թեզարդրեցի ինչ Գոմպիոսի ընդդէմ Կեսարու. զայն թէ կարես՝ պարսաւեսջիր։ Մի, զի զհին-գեմեանն զօրավարութեան Կեսարու մի առաւելուցու. երկրորդ, զի մի տայցէ թոյլ վնիս առնել՝ 'ի համարի [25] զնա ունելոյ 'ի հեռաւորութեան անդ իւրում. յորոց եթէ 'ի մին յերկոցունց յանկուցեալ էի զնա, ոչ երբեք սոպոս-

Digitized by Google

կէաք 'ի Թշուառութիւնս յայսոսիկ։ Իսկ յորժամ զամենայն զգօրութիւնս իւր և զհռովմէական ժողովրդեանն՝ աւանդեաց Գոմպիոս 'ի Կեսար, և անագան ուրեմն սկսաւ 'ի միտ առնուլ զոր իմ յոյժ կանխաւ նկատեալ էր և տեսեալ, զի անօրէն պատերազմ յառնելոց է 'ի վերայ հայրենեաց աշխարհիս, նոյն ինքն ես ոչ դադարեցի խաղաղութեան՝ միաբանութեան և հաշտութեան լինել առաջնորդ։ և ծանօթ իսկ է բազմաց բարբառն իմ այն՝ թէ «Երանի թէ, կն. Գոմպիոս, մի երբէք 'ի միաբանութիւն գայիր ընկերաբար ընդ Կեսարու, կամ մի երբէք քակէիր։ մին պերճութեանդ քումէր, միւսն խմաստութեանդ։» Այս էին յամենայն ժամ, Մ. Անտոնիէ, և զԳոմպիոսէ և զընկերհաշտութենէն իմ խորհուրդք։ որոց եթէ տիրեալ կալեալ էր, կայր միայր ընկերհաշտութիւնն, դու քոյին եղեռնութեամբդ՝ չքաւորութեամբ և կեզտ անուամբ սատակէիր։

Այլ այսոքիկ հինք։ իսկ նոր այն, թէ իմով խորհրդով եկէ Կեսար սպանեալ։ Զանգիտեմ, Հարք ատենակալք, դուցէ՝ որ ամօթոյ իրք են՝ զողողակից ինձ առեալ թուիցիմ զդատախազն, որ զիս ոչ իմովս եթէ գովութեամբք գրուատիցէ, այլ և օտարոտիս յիս բառնայցէ։ Զի ո՞ այն ոք՝ որոյ ընդ իրագէտս մեծապանծ գործոյն լուեալ իցէ զիմ անուն։ իսկ սիրբ ուրուք 'ի համարուէ անտի նոցուն ծածկեցաւ անուն։ և զի՞ ծածկել ասիցեմ, նա մանաւանդ որոյ ոչ անգէն առ ժամայն հռչակեցաւ։ Սակայն համարձակ, թէ մանաւանդ պարծեցան և ոմանք լընկերչակութենէ անտի լինել՝ որ էին 'ի խորհրդին, քան թէ որ էրն՝ զանխլանալ ոք կամեցաւ։ Նա աւանիկ քանիսն հաւանութեան իցէ, թէ յայնքան բազմութեան, որոց կէաք անշնանք ոմանք, կէաք երիտասարդք՝ որ ոչ զոք թաքուցանեն, անուն իմ մոռացեալ կայցէ։ Իսկ եթէ ձեռներէցք յաղաւութիւն հայրենեաց պիտոյ էին, զԲրուտոսն [26] դրդէի ես։ որոց մին՝ զԼուկիոսի Բրուտոսի պատկերն զոր հանապազ տեսանէր, միւսն և զԱհաղայ։ Այսպիսի նախնեաց

սերունդք՝ միթէ յօտարոյն ինչ խնդրէին խորհուրդ, և ոչ յիւրեանցայոցն, և արտաքոյ՝ քան առանին։ Զ ինչ. Կ. Կասսիոս, ծնունդ ազգատոհմի՝ որ ոչ միայն զհիրապետու-թիւն, այլ և ոչ զկարողութիւն ուրուք տանել չժուժեաց, կարօտացաւ կարծեմ ունել զնա առաջնորդ. այն որ և առանց այսց արանց հոյակապից՝ անդէն 'ի Կիլիկիա առ բերանով Կիդնոս գետոյ վճարեալ էր զիրս զայս, եթէ նորա 27 'ի սահմանեալ ոչն՝ և ոչ 'ի հակառակն հասեալ էր նաւան։ Եւ զկնն. Դոմիտիոս՝ 28 ոչ ծնողին ապանուսին՝ առն ականաւորի, ոչ քեռւոյն մահ, ոչ կապուտ կողոպուտն լինել 'ի պատուոյն՝ դրդեաց դառնալ յազատութիւն, այլ իմ բանքս։ Արդեաք հրապուրեալ ինչ ի՞նչեմ զկ. Տրեբոնիոս 29, զոր և ոչ յորդորել իսկ իշխէի. որում և մեծագոյն պարտի ունել շնորհս ընկերհաշտութիւնն, զի զազատութիւն հռովմէական ժողովրդեան առաւել մեծարեաց քան զմիոյն բարեկամութիւն, և տէրութեան վանիչ քան բազորդ լինել ցանկացաւ։ Մինթէ Լ. Տիլլիոս Կիմբեր իմոմ առաջնորդութեանն եկն զհետ. ընդ որոյ ես առաւել ընդ գործն զարմացայ, զի ոչ համարեի թէ առնիցէ. և վասն այնորիկ զարմացայ, զի զերախտիսն 'ի մոռացօնս դարձուցեալ՝ յիշատակող դառաւ հայրենեաց։ Զ ինչ զերկոսին Սերուիլիոսն 30. Կասկայա սասցից թէ Ահալայս. զտոսա և իմոմ բանիւ դրդեալս վարկանիս քան 'ի սիրոյ ընկերհաշտութեան։ Երկայն է ճառել և զայլսն. և այս՝ ընկերհաշտութեանն պարծանք, զի այնչափ բազումք ելին երկեցան, ինքեանց՝ փառաւորութիւն։

Բայց որպէս յանդիմանիցէ զնա այրն սուր, ապէ ածէք զմնաս։ Ընդ սրախոսող լինել Կեսարու, ասէ, ամբարձեալ անդէն 'ի վերս Մ. Բրուտոսի զարիւնաներկ դաշոյնն՝ զՆիկերոնն կարդաց յանուանէ, և ուրախակից նմա եղև ընդ ազատութեանն հասանել։ Ընդէր մանաւանդ ինձ. թէ զի գիտէի՞ արդեաք։ Տես՝ գուցէ յայն սակս ձայնեալ ի՞նչ զնա, զի գործ մի հանգոյն իմոցս կատարեալ, զնա առաւել

Digitized by Google

վկայ ունէր՝ նախանձաւոր խմոյ պարծանացս լինելոյ։ Իսկ դու, պանդոյր քան զամենեսեան, չխմանաս՝ զի եթէ ընդ մահն կամել կեսարու, զոր յիս բիծ շփես, ինաս ինչ էջ, ինաս է և ինդալն 'ի մահ կեսարու։ Զի զինչ 'ի միջի իցէ ընդ յորդորիչն և ընդ դովոլ։ կամ զի՞ փոյթ է՝ թէ կամեցեալ իցեմ արդեօք, եթէ ուրախացեալ ընդ գործն։ Արդ՝ ի իցէ, բաց 'ի քէն և յորոց ընդ թագաւորել նորա ցնծային, որոյ չեցէ կամեցեալ զլինել իրին, կամ զեղեալն պախարակեալ։ ապա ամենեքեան բասրելիք։ զի առաքինիք առ հասարակ, որչափ 'ի նոսա էր, ապանին զկեսար։ ոմանց՝ խորհուրդ պակասեաց, կիսոց՝ հոգի, այլոց՝ ժամանակ։ կամք՝ ոչ ումեք։ Այլ միտ դիք ափշութեան առնդ, կամ թէ ասել դրատուդ։ քանզի այսպէս ասաց։ « Մարկոս Բրուտոս, զոր ես 'ի պատիւ իւր անուանեմ, զարիւնաշաղախ դաշոյնն կալեալ՝ 'ի ձայն բարձր զԿիկերոնն կարդաց։ յորմէ իմանալ է՝ թէ կամակից ուրեմն էր։ » Արդ ես վրիժագործ 'ի քէն կոչիմ, զոր 'ի կարծիս ինչ եղեալ վարկանիս։ իսկ որ զարիւնաթոր դաշոյնն 'ի բուին ունէր, նա 'ի պատճառս պատուոյ 'ի քէն անուանի։ Այդպէս իցէ։ լեցի այդ ափշութիւն 'ի բանս քո։ իսկ որչափ ևս առաւել յիրս և յիմաստս։ Ցոյց զայս հուսկ ուրեմն, է՛ բդեշխ։ զինչ կամիցիս լինել զԲրուտոսեանցն դատաստան, զկ։ Կասսիոսին, զկն։ Դոմիտիոսին, զկ։ Տրեբոնիոսին և զայլոց։ Սթափեցիր ապէ՝ լրջացիր 'ի քնոյ շուայտութեան, և թափեա ըզգինիդ։ Մատիցեն արդեօք ջահ՝ զարթուցանել զքեզ ըզթմբրեալդ 'ի դատաստան այսպիսի։ Զիմանամս համբուն՝ թէ պարտ է քեզ սահմանել, սպանողք արդեօք իցեն դրծոնք իրիդ, եթէ ազատութեան քինախնդիրք։

Ինա փոքր մի, և զիսոկս առն լրջամտի վայրիկ մի ընկալ։ Ես, որ որպէս ես խոստովանիմ, բարեկամ նոցա եմ, որպէս 'ի քէնդ ամբաստանիմ՝ գործակից, յուրատամ կամ աւասիկ՝ թէ գուցէ ինչ այլ միջին։ և վկայեմ, զի եթէ չեցէն նոքա աղատեցուցիչք հռովմէական ժողովրդեան և ընկեր-

հաշտութեան պահպանիչք, եղեռնաթիւրք են քան զորիկայս, քան զարիւնահեղս և քան զհայրախոշոշս անգամ. զի անագորոյն ևս է՝ զաչխարհին հայր սպանանել քան զիւրն։ Դու այր խնամատուն և խորհրդական, զի ասես։ Եթէ հայրասպանք, ընդէր 'ի պատճառս պատուոյ յիշատակին միշտ 'ի քէն յատենի ասա և առ Ժողովուրդն հռովմիական։ Զմի՞ Մ. Բրուտոս քոյով առաջարկութեամբդ արձակեցաւ յօրինաց, եթէ աւուրս աւելի քան զտասն հեռացի յոստանէս [31]։ Հիմ ապոլոնեան խաղք՝ անակնկալ փառաք Մ. Բրուտոսի հանդիսացան [32]։ Ա՞ռ իմ՞ տուան կուսակալութիւնք Կասիոսի և Բրուտոսի [33]. էր աղագաւ յաւելան գանձապետք. էր աճեաց տեղապահացն Թիւ. և այս ամենայն 'ի քէն գործեցաւ։ Ուրեմն ոչ մարգասպանք, այլ փրկիչք էին՝ քոյով իսկ գատաստանաւ. զի երբորդ իմն այլ չէք։ Զինչ ինչ ասեմ. միթէ խռովեցուցանեմ զքեզ. զի թերևս ոչ ըստ արժանի առնուս 'ի միտ զասացելոցս զանազանութիւն։ Այլ սակայն գլուխ քանից խօսիցս այս է. քանզի յեղերանէ արձակեցեր զնոսա, նոյն ինքնդ և մեծամեծ պարգևաց արժանի զնոսա դատեցար, արդ ես յետս ընդդէմ գարձուցանեմ զՃառս։ Գրեցիր առ նոսա, զի եթէ ոք երբեք հարցանիցեն՝ թէ ճշմարիտ ինչ զոր յիսն բասրեցեր, մի ուրեք ուրասա լինիցին. քանզի խիթամ, գուցէ թաքուցանել զանձնս՝ ոչ 'ի պատիւ ինչ նոցա լինիցի, կամ 'ի հրաւիրմանէն հրաժարելս՝ ինձ 'ի յոյժ գարշանս։ Զի զինչ այլ երբեք ուրեք, ով սուրբդ Ա՞ստամազդ, ոչ միայն յոստանիս յայսմ, այլ և ընդ ամենայն ոլորտս տիեզերաց գործեցաւ վերհագոյն, զինչ այլ պանծագոյն, զինչ յաւերժայիշատակ գրուատելի յաղագս մարդկան։ Ցայսր խորհրդոյ ընկերութիւն՝ իբրև յերիվարն տրովական՝ առեալ արկանես գու զիս. ոչ մերժիմ, այլ և շնորհս ունիմ, որով հոգւով և առնիցեպ։ Իր մի այնպիսի մեծ է, զի զատեալութիւնն զոր գու ընդ իս ճգնիս գրգռել, ոչ համեմատեցից ընդ գովութեան։ Զի զինչ երանելի քան զնոսա՝ զորս գու վտա,

Digitized by Google

ըեալը առ 'ի քէն և տարագիրս քարոզես. ո՞ր այն տեղի այնպէս ամայ և վայրենի, որ 'ի մատչել նոցա՝ ոչ խօսել և փափաքել նոցին Թուիցի. ո՞ր այն մարդիկ չինականք, որ 'ի տեսանելն զնոսա՝ ոչ համարիցին զանձինս 'ի քաղցրագոյն պտուղ կենաց վայելել. իսկ ո՞ր այն երախտամոռաց ազգապայք, ո՞ր այն ապաշնորհ դպրութիւնք գտանիցին, որ ըզփառս նոցա ոչ արձանագրեսցեն 'ի յիշատակ անմահութեան։ Արդ ծն գու յաւել գրեա և զնս անշուշտ այնպիսի 'ի Թիւս նոցին։

Բայց խնԹամ՝ գուցէ ընդ մի ինչ ոչ հաճեացիս։ Քանզի եԹէ էի, ոչ զԹագաւորն միայն, այլ և զԹագաւորութիւնն ինքնին գլխովն բառնայի լլնկերհաշտութենէս. և եԹէ իմ ինչ էր գրիչն այն շեշտ [34], որպէս ասի, հաւատս ինձ, ոչ զմի արարուածն ևԹ, այլ ողջոյն իսկ զվկայսն հանգէս 'ի գլուխ վՀարեալ տանէի։ Սակայն եԹէ յանցումն ինչ իցէ զապանումն կամել Կեսարու, ազէ տես քաջ, Անտոնիէ, զինչ քեզ հասանիցէ [35], զորմէ քաջայայտ է՝ զի զայս խորհուրդ առեր ընդ Կ. Տրեբոնիոսի 'ի Կարբոն, և 'ի պատՀառս այսր խորհրդակցութեան՝ 'ի զրաւիլ Կեսարու տեսաք նմին իսկ Տրեբոնիոսի մեկուսի զքեզ 'ի տեղւոյն 'ի բաց մոցեալ։ Իսկ ես, — տես զիարդ ոչ Թշնամեբար ընդ քեզ գնամ, — զայն զի երբեմն բարւոք խորհեցար՝ գովեմ, զի ոչ գուշակ եղեր՝ շնորհս ունիմ. իսկ զի ոչ ձեռն 'ի գործ արարեր, ներեմ։ Այլ պիտեր 'ի գործն. զի եԹէ 'ի գատաղ զքեզ վարեացէ, և 'ի վար ՀԱասիոսին առնուցու. Որոմ օգուտն ՀԱել Ինչ, տես ազաչեմ՝ գուցէ 'ի վարան տագնապի մտանիցես։ Զի Թէպէտ և այն իր, որպէս գուգ ասէիր, ամենեցուն եղև յօգուտ՝ որոց ոչն կամէին ծառայանալ, բայց մանաւանդ քեզ՝ որ ոչ միայն չծառայես, այլ և Թագաւորես և.ս. որ յահագին պարտուց՝ գու զքեզ յանգորբ հաներ 'ի տաՀարին Ոփսեայ [36]. որ 'ի նոցին տախտակաց անսի՝ անԹիւ անհամար գանձս վատնեցեր. առ որ 'ի տանէն Կեսարու՝ արծաԹ անբաւ մատուցաս [37]. որոյ տունգ՝

Digitized by Google

ամենաշահ արուեստանոց է ստայոգ արձանաց և յեռակ-
րաց, և ագարակաց՝ գիւղից՝ ապահարկաց և բաժանաց
պղծագործ ոմանավաճառ։ Զի զինչ այլ նպաստ լինել մար-
թէր կարօտութեան քում և պարտուց՝ բաց 'ի մահուանէն
Կեսարու։ Թուի ինձ թէ խոովեալ իմն իցես։ Զանգիտեա՞
ինչ արդեաք, թէ գուցէ 'ի քեզ պատշաճիցի ոճիր գործս
այս։ Աղատեմ զքեզ յերկիւղէդ. ոչ ոք հաւատասցէ եր-
բեք. ոչ քոյ ինչ է երախտաւոր առ ընկերահաշտս լինել.
ընկերհաշտութիւնն՝ այսր չքնաղ գործոյ առաջնարդ գիտէ
արս հոյակապս. իմ զքեզ խնդամիտ ևեթ ընդ այն սաս-
ցեալ, գործօն ոչ յանդիմանեմ։ — Ա. մեծամեծ ամբաս-
տանութիւնն եռու պատասխանի, արդ և առ այլն արժան է հատուցանել։

Զքանակն Պոմպիոսի և զամենայն ժամանակն զայն
ինձ 'ի մեզ գրես. յորում ժամանակի՝ եթէ որպէս ասաս-
ցիս՝ զօրէին բանք իմ, գու այսօր ցակամեալ և մեք ազատք
լինիցք, և ընկերհաշտութիւնս ոչ այնչափ զօրավարս և
զօրս 38 կորուսանէր։ Քանզի վկայեմ, թէ 'ի լինել եղելոյն՝
զոր իմ կանխեալ գուշակեալ էր, յայն տրամութիւն ան-
կայ՝ յոր և այլ ընտիր քաղաքացիքս անկանէին, եթէ նոյն-
պէս և նոցա նախատես լեալ էր։ Ցաւէր ինձ ցաւէր, Հարք
ատենակալք, զի ընկերհաշտութիւնն՝ ձերով երբեմն և ի-
մով խորհրդով պահպանեալ, կորնչելոց էր հուպ ընդ հուպ։
Զի չէի այնպէս ոգէտ և անտեղեակ իրացն, մինչև սրտա-
բեկ լինել առ սէր կենաց, որ 'ի կալն և մնալ՝ հաչելոց էր
զնս թախանձալից, իսկ 'ի գնալն՝ յամենայն նեղութեանց
ազատելոց։ Եա զարմն զայնոսիկ ականատես, զլուսաւորն
ընկերահաշտեաց, կամէի թէ կեցցեն, զամբոխ բռնչիչից,
դատաւորաց, արդարակորով աւագորդեցոյ, նա՝ և զբոլոր
ծաղկի ազնուականութեան և մանկութեան, ըստ նմանէ և
զամենալաւ քաղաքացւոցն բանակս. որ եթէ կենդանի
կային, թէ և դժպհի պայմանաւ խաղաղութեան, — զի
ինձ ամենայն խաղաղութիւն ընդ քաղաքացիս՝ օդտակար

Digitized by Google

թուէր քան զքաղաքական պատերազմ, — 'ի ձեռին ու-
նէաք այսօր զընկերահաշտիս։ Եթէ այս խմաստ զօրացեալ
էր, և ոչ նոքա մանաւանդ՝ որոց կենացն ես խնամ տանէի,
ինձ հակառակ ամբարձեալ՝ յաղթութեանն յուսով խրոխ-
տացեալք, դու, զի զայն ամենայն թողից, դու անշուշտ
ոչ երբէք յայսմ ակմբի, նա և ոչ 'ի քաղաքի ատ մնայիր։
— Այլ բանք իմ ուծացուցանէին յինէն զսիրտ Գոմպիտ-
սի 39։ — Բայց սիրեաց նա զոք առաւել քան զիս, կամ 'ի
բան և 'ի խորհուրդ յաճախագոյն եմուտ ընդ նմա. որ մեծ
ինն էր ապաքէն, զբախտէ ընկերհաշտութեան երկպառակ
եղելոցս՝ կալ յամենալ 'ի նմին ընտանութեան մտերմաբար։
Բայց և ես զնորա և նա անդուստ զիմ միտս և զրոյս տե-
սանէր։ Եւ՝ նախ քաղաքացւոցս ողջունին և ապա պա-
տուոյն հոգ տանէի, նա՝ առաւել առաժամայն պատուոյն։
Եւ զի էր իւրաքանչիւր ումեք 'ի մէնջ յոր միտ եդեալ յա-
ղեսցի, նմին իրի և ներելի էր չմիաբանութիւնն մեր։ Իսկ
թէ զինչ այրն այն անզուգական և զբեթէ աստուածային՝
զնինն խորհէր, դիտեն որ միանգամ փարաւէան փախստե-
ղհետ չոգան նմին 'ի Գափտս։ Ոչ երբէք յիշատակեալ նորա
զիմ անուն՝ բայց եթէ չքով, սիրահարեալ տենչմամբ. ուր
զի վկայէր՝ թէ իմ խորագոյն նկատեալ տեսեալ էր, նորա՝
լաւագունի յուսոյ ակն կալեալ։ Եւ իշխեմ ընաւ յանուն
առնն այնորիկ յարձակել 'ի վերայ իմ, որում զիս բարե-
կամ, զքեզ՝ յարձակ յարձակ վաճառական խստովանիս 40։
Այլ զանց զպատերազմն արասցուք, յորում դու յոյժ
բարեբախտ գտար։ Իսկ զկատարեալութեանցն՝ զոր 'ի
բանական 'ի վար արկեալ ասացեր յինէն, ոչ տաց պատաս-
խանի։ Այն բանականեսեալք լն հոգովք էին. այլ մարդիկ,
թէպէտ և 'ի ժիտոր և 'ի շշուկ կայցեն, բայց եթէ միայն
մարդիկ իցեն, երբէք երբէք գիւր առնեն մեռայ։ Այլ
քանզի որ զԹախիծս իմ ըստգտանէ, նոյն և զնաղքս, ի-
մում յերկոսին կա չափաւորութեան նշանակ մեծ է։

Ասացեր թէ ժառանգութիւնք չեկին առ իս ուստակք

կատակաւ [41]։ Ո՛ տայր Ճշմարիտ լինել եպերանացդ. բա-
զում բարեկամք իմ և մտերիմք կենդանի լինէին։ Այլ ուստ
ուստեք այդ 'ի միտդ անկաւ. զի իմ աւելի քան զերկու
հազար բիւր փող [42] 'ի հաշիւ Ժառանգութեանցս արձանա-
գրեալ է. Թէպէտ և յայսմ մտին բարեբաստագոյն զքեզ
վկայեմ լեալ. զիս՝ բաց 'ի բարեկամէ՝ ոչ ոք այլ արար Ժա-
ռանգ, որպէս զի ընդ շահուն՝ եթէ էր ինչ՝ յաւելցի ցաւ
ինչ արտի. զքեզ, զոր ոչն բնաւ տեսեր՝ Լ. Ռուբրիոս Կաս-
տինաս կացոյց Ժառանգ։ Եւ տես սրչափ սիրէր [43] դա ըզ-
քեզ, որ յանդէաս՝ թէ սպիտակ ելցես եթէ սեւ, զեղ-
բօրորդուն զանց արարեալ, զԿ. Փուփիոսի՝ զհամեստա-
գունի ասպետին Հռովմայ և իւրոյ սիրելւոյն, զոր և միշտ
իւր պայազատ ցուցեալ էր յայտնապէս, զքեզ՝ զոր ոչ ու-
րեք տեսեալ, անշուշտ ոչ երբեք ողջունեալ, Ժառանգ հաս-
տատեաց։ Աղէ ասա ցիս, եթէ չեցէ աշխատութիւն։ Լ.
Տուրսելլէայ զինչ կերպարանք էին, զինչ հասակ, յորմէ
քաղաքէ էր, յորմէ տոհմէ։ Ոչ ինչ գիտեմ, ասիցես, բայց
զգաստական զոր ունէր։ Արդ և սորա անժառանգեալ զեղ-
բայրն, զքեզ կարդէր Ժառանգ։ Արտաքոյ այդոցիկ, 'ի բա-
զում ստացուածս արանց օտարածնաց իբրև Ժառանգաւոր
մտեր հինաբար, զքուն պայազատն հանեալ տարագիր։
Բայց ընդ այս կարի զարմացայ, զի որ զՀօրդ [44] Ժառան-
գութիւն ոչ պայազատեցեր, Ժպրհեցար Ժառանգութեանց
առնել յիշատակ։

Առ 'ի զայդ բաղայագ կցկցել, այր մտաթափ, այնչափ
աւուրս 'ի կիրթս հանդիպի խօսից անցուցեր յօտար ամա-
ռանոցին [45]. Թէպէտ և դու, որպէս ընտանիքդ զուցեն
յաշխարհ, ոչ 'ի սրել զմիտդ, այլ 'ի թափել զգինիդ ստէպ
ճառատես։ Եւ ընդ խալ առ քեզ ունիս վարժապետ՝ ըն-
տրութեամբ գինարբուացդ քոց՝ զՃարտասանդ, որում
ներեցեր զնչ և կամին ասել ընդդէմ քեզ։ Ո՛հ ազու և
նրբախօս առն. բայց դիւրագիւտ են հանճարաբանու-
թիւնք ընդդէմ քո և քոյոցդ։ Այլ աղէ տես զինչ խօսիր 'ի

Digitized by Google

միջի իցէ ընդ քեզ և ընդ հաւն քո։ Նա մեղմով խօսէր առ 'ի պէաս խնդրոյն, դու Թափառնակի օտարոտիս բաղքանչես։ Սակայն վարձք քանիսն տուան Հարտասանին։ Լուարուք լուարուք, Հալբ ատենակալք, և 'ի միտ առէք զվերս ընկերհաշտութեանս։ Երկու հազար արտավար 'ի Լէոնտեան անդաստանացն պարգևեալք Սեքստոսի Կլոդիոսի Հարտասանի, և այն՝ ապահարկս, որպէս զի այնքան վարձուք հռովմէական ժողովրդեան՝ ոչինչ գիտեալ ուսանիցիս։ Միթէ և այս, ով այրդ ժպիրհ, յարձանացն Կեսարու իցէ։ Բայց ասացից այլուր և զ'Լէոնտեան ագարակէն և զԿամպանիոյ, զորս յափշտակեալ սորա յընկերահաշտեացս՝ ամենագարշ ստացողք պղծեաց զագարական զայնոսիկ։ — Այլ քանզի չարախօսութեանց սորա ետու բաւական պատասխանի, ժամէ արդ ասել ինչ ինչ զնոյն ինքն զանդիմանչէ մերմէ և զկշտամբողէ։ Ոչ հեղից Թափեցից զամենայն։ զի եթէ յաշխարհ պայքարել հասանիցէ, որ և լինելոց իսկ է, միշտ նոր երևեցայց։ Հոխութիւն՝ զոր առատապէս նօթՀէ ինձ խուռն յոռութեանց սորա և մեղանաց յոլովութիւն։

Կամիս արդ 'ի մանկութենէդ զննեացուք զքեզ։ Այնպէս կարծեմ. անդուստ 'ի վերուստ արասցուք սկիզբն։ Ունիցիս 'ի մտի, զի մինչդեռ տակաւին մանուին էիր՝ կերեալ վատնեալ ապառեցեր զդոյսդ։ Այդ, ասիցես, հօրս մեղ է։ Ներեալ քեզ։ զի հայրագութ գորովոյ է պաշտպանութիւնդ։ Բայց խրոխտ յանդգնութեանդ քոյ է այն, զի 'ի կարգս չորեքտասան աշտիՀանացն 46 երեալ բազմեցար, մինչդեռ Ռոսկեան օրինաքն ուրոյն տեղի զատուցեալ էր վատնողաց անանկացելոց, թէպէտ և ոք 'ի բախտին վրիպակէ՝ և ոչ իւրումն տնանկացեալ իցէ։ Առեր զայրական պատմուՀանն, զոր անդէն վաղվաղակի համակ 'ի կանացի դարձուցեր։ Զառաջինն՝ չնտիսի ոք հասարակ, կարդեալ կապէնք անառակութեանդ, և այն ոչ փոքր ինչ։ բայց փութով 'ի վերայ եհաս Կուրիոն, որ զքեզ 'ի բոլոշն շահէ 'ի

Digitized by Google

բաց դարձոյց. և որպէս թէ խիլայ զքեզ արկեալ 'ի հաւաստի և 'ի ստոյգ ամուսնութիւն հաստատեաց։ Ոչ ոք 'ի մանկուց անձնամատն վաճառեալ՝ այնպէս ընդ ձեռամբ տեառնն եկաց որպէս դու ընդ Կուրիոնին։ Քանիցս հայր նորա արտաքսեաց զքեզ 'ի տանէն, քանիցս պահապանս կացոյց, զի մի և ընդ սեամն անցանիցես, սակայն քո զգիշեր օգնական առեալ, մորակեալ 'ի տուիլց, հրապուրեալ 'ի վարձուց, ընդ տանիան և ընդ ցիւան իջանէիր. զոր անդր ևս այլ ոչ կարաց տուն այն տանել զքարուկանդ։ Գիտիցես, զի զկարի ծանօթական ինձ իրաց խօսիմ։ Յուշ քեզ ժամանակն, յորում հայրն Կուրիոն Թաղծալից դնէր 'ի մահիճս, որդին յոտս իմ անկեալ արտասուագին՝ յիս զքեզ առնէր ապաստան, պաղատէր՝ զի Թէ վեց հարիւր բիւրս փողոց պահանջեացէ, պաշտպան կացից քեզ ընդդէմ հօր իւրոյ. զի այնքանոյ խոստուվ և երաշխաւոր լեալ էր քեզ։ Իսկ ինքն 'ի մարմանէն ջերեալ և կողեալ պնդէր, զի առ չժուժալ տարփից անչնամանդ՝ ըստ աշխարհս վատրանդի ելանիցէ։ Եւ զայսչափ աղէտս բարգաւաճ ազգատոհմին ցածուցի ես 'ի ժամանակին, մանաւանդ Թէ սրբեցի։ Ի հաւան ածի զհայրն՝ հատուցանել զպարտիս որդւոյն, փրկել [47] յատաստուԹենէ ընչից զպատանին՝ յորում յոյս մեծ զոյր սրտի և հանճարոյ, և զնա՝ ոչ միայն 'ի քուսմէ ընտանուԹենէդ, այլ և 'ի տեսուԹենէդ՝ հայրական իրաւամբքն և իշխանուԹեան ստատիւ արդելուլ քեցեալ։ Զայս ամենայն յինէն գործեալ դիտելով քո, եԹէ ոչ 'ի վաղակատրան՝ զոր տեսանեմք՝ վստահացեալ էիր, իշխէիր Թշնամանօքդ դրդռեալ զիս։

Այլ զգարշուԹիւնդ և զնայատանդ լռեցից. են են՝ զոր չմարԹեմ պարկեշտաբար 'ի բան ձգել. իսկ դու այնպէս ապերասան, զի զոր յամօԹաղծ ոտիսկ լսել չկարես՝ յանձն մատուցեր։ Բայց տեսէք զայլ ևս գնացս վարուցն, ընդ որ ԹեԹևակի սահեալ անցից։ Զի զոր յընտանի պատերազմին՝ 'ի դժնդակ տառապանս ընկերհաշ-

Digitized by Google

աւութեանն գործեաց և զոր հանապազօր գործէ, յայնս փութան միաք իմ. զարս և ինդրեմ, զի թէպէտ և ծանօթագոյն ձեզ քան ինձ իցեն, սակայն մատագիւրութեամբ լուիջիք, որպէս և առնէիք իսկ։ Զի յայտնիցի՝ ոչ ծանօթութիւն ևեթ իրացն շարժելոց է զսիրտս, այլ և յիշատակն։ Բայց և պարտ է զմիջինսն զեղչել, զի մի յոյժ անազան 'ի վերջինսն հասանիցեմք։

Որ զշնորհս իւր առ իս երախտեալ յիշատակէ, մտերիմ էր Կլոդիոսի 'ի հազարապետութեան նորա. ամենայն հրձգութեանց նորա ջահ, յորոյ և 'ի տան անդ նորա՝ նիւթեաց ինչ դաւ [48]։ Զի խօսեցայց, ինքնին Հարտարագոյն իմանայ։ Ապա յետ այնորիկ Հանապարհ յԱլէքսանդրիա՝ ընդդէմ հրամանի աւագանւոյն, ընդդէմ ընկերահաշտեաց և կրօնից. բայց առաջնորդ ունէր զԳաբինիոս, ընդ որում զամենայն ինչ կարէր ուղիղ գործել։ Իսկ զինչ ապա անդուստ դարձն կամ որպիսի։ Յեգիպտոսէ նախ մինչև 'ի Ծագա Գալիլիոյ [49] քան 'ի տուն իւր։ Եւ որ այն տուն էր. զի այր իւրաքանչիւր ունէին յայնժամ զտունս իւրեանց [50], և քո չէր ինչ բնաւ։ Եւ զի զարակ ասիցեմ. զինչ կայր բնաւ յերեսս երկրի, ուր իբրև 'ի քոյդ գնիցես զտուն, բայց միայն 'ի Մխեանէ՝ զոր ընդ ընկերադ իբրև զԱիսապան [51] ունէիր։

Եկիր 'ի Գալիլիոյ 'ի խնդիր դանձաւորութեան։ Աղէ ժարհեցիր ասել, թէ քան առ իս՝ առ ծնողդ քո մատեար նախ։ Քանզի ընկալեալ էի յառաջագոյն զգիրն Կեսարու, զի զիջայց քեզ հաշտիլ ընդ իս. վասն որոյ և ոչ իսկ թողի քեզ խօսել զշնորհսց։ Ապա յետ այնորիկ՝ գու անմեկնելի ինձ զգուշացար [52], ես քեզ 'ի խնդիր դանձաւորութեան կացի պաշտպան. յորում ժամանակի հաշտութեամբ ժողովրդեանն Հռովմայ կրթեցար սպանանել զԳ. Կլոդիոս 'ի հրապարակին. յոր ինքնակամ նկրտեալ քո և ոչ յիմմէ ինչ դրդմանէ, համայն և այնպէս քարոզէիր, որպէս թէ ոչ հատուցումն ինչ առ իս անիրաւութեանդ փառնել հա-

Digitized by Google

մարիցես, բայց միայն եթէ զնա սատակիցես։ Յորում զարմանամ, զի է զի յիմամէ գրգեալ զերն զայն Մէլոնի վէճարեալ ասիցես, ուր և յառաջարկեալ ինձ զնոյն ինքնայօժար՝ ոչ երբեք յորդորեցի. Թէպէտ և եթէ 'ի նոյն միտս հաստատուն կացեալ էիր, առաւել 'ի քո փառս կամիմ թէ գրեսցի գործն քան ինձ 'ի շնորհս։ Կացուցար գանձապետ. անդէն եւ ընդ եւս առանց աւագանւոյն հրամանի, առանց հմայից, առանց օրինաց ընթացար առ Կեսար. զի զայդ միայն ընդ ոլորտս տիեզերաց համարէիր կարօտութեանդ ապաւէն, պարտուցդ, շռայլութեանդ, կորստական ճանապարհաց վարուցդ։ Անդ իբրև նորա առատութեամբքն և քոյով յափշտակութեամբք լցար յօրացար, — եթէ ընուլ իցէ խծկել՝ զոր խակոյն ցնդեացես, — սրացար չքաւոր 'ի հազարապետութիւն. որպէս զի յիշխանութեան անդ յայնմիկ, եթէ կարող ինչ իցես, առն քում [83] նմանօղ լինիցիս։

Ընկալարուք արդ, աղաչեմ, ոչ զոր յանձն իւր և յառաջնին ծանականս խենեշաբար և անխատնութեամբ արար, այլ զոր ընդ մեզ և ընդ բաստս մեր, այս է՝ ընդ բոլոր ընկերհաշտութիւնն, անօրէն և ամպարշտաբար անցոյց։ Զի 'ի դորա ապիրատութենէն զսկիզբն ամենայն աղէտիցս դատնիցք։ Քանզի յորժամ 'ի բդեշխութեան Լ. Լենտուլոսի և Մ. Մարկելլոսի, 'ի գլուխ ամենայն Յանուարի խղճ ընդէք ամրացուցանել զսասանեալ և գրեթէ կործանեալ ընկերհաշտութիւնն, և նմին խակ Կեսարու՝ եթէ առողջ էր խորհրդովք, խնամ տանել կամիցիք [84], սա յայնժամ զվաճառականուր և զվտարանդի հազարապետութիւնն ընդդէմ եդ խորհրդոց ձերոց, և զպարանոց իւր արկ ընդ տապարաւն՝ որով յոլով սակաւամեղք խակ կորեան։ Յայն զքեզ, Մ. Անտոնիէ, դատակնքեաց աւագանին, մինչդեռ ողջանդամն էր, և ոչ այնչափ լուսաւորք իւր չիջեալք, յոր նախնեացս օրինաց սովոր է դատապարտիլ թշնամի պատմուճանաւոր [85]։ Եւ դու ժպրհեցար չարախօսել զինեն առ կա-

Digitized by Google

Ճառեալ Հարսս, մինչդեռ ես յատենէ տասի փրկիչ դա-
ռեալ էի, դու վերագ ընկերահաշտեաց։ Ցիշատակ այնր
ամպարշտութեանդ զանց եղեալ էր, ոչ ընթեալ 'ի յուշոյ։
Մինչև մարդկան ազգ, մինչև անուն հռովմէական ժողովրդեան կացցէ, — զոր եթէ դու թողացուցցես՝ յաւիտեան
կացցէ, — զուցցի և այն քո ժանտագործ ընդդիմադարձութիւն։ Աղէ զինչ 'ի քումց, զինչ յախտուն ինչ 'ի լինել
կայր, յորժամ դու՝ մի եւեթ պատանի՝ արդելեր զառեանն
համարէն չառնել վէճիս 'ի փրկութիւն ընկերհաշտութեանն.
և զայդ՝ ոչ մի անգամ, այլ բազում. և չեռուր տեղի՝ թէ
իշխանութիւն աւագանւոյն ազդեսցէ ինչ 'ի քեզ։ Եւ զինչ
էր զոր ազդէրն, բայց մի բնաջինջ բառնալ և հիմն 'ի վեր
տապալել զընկերհաշտութիւնն. ուր զքեզ՝ ոչ դիպաւորք
քաղաքիս աղերսանաք, ոչ երիցագոյնք խրատուք, և ոչ ա-
ւագանին համադումար ջան 'ի գործ դնելով, ոչ բաւեցին
'ի կաշառակուր և 'ի ստրուկ մոացդ դրդուել զքեզ։ Յայն-
ժամ ապա, յետ բազում իրաց փորձոյ, հարկաւ տուաւ
քեզ հարուածն՝ որ սակաւուց յառաջ քան զքեզ, յորոց
ոչ ոք ոչքանդամ ապրեցաւ։ Յայնժամ առեանս այս եւ
ընդդէմ քո զէնս [36] բդեշխից և այլոց իշխանութեանց և զօ-
րութեանց. յորոց ոչ ճողոպրեցիր, եթէ չէիր 'ի բանական
կեսարու ապաւինեալ։

Դու, ասեմ, դու Մ. Անտոնիոս, կ. կեսարու՝ որ զա-
մենայն ինչ ցանկայր վեր 'ի վայր վրդովել, զլուխ և առաջ-
նորդ եղեալ՝ պատճառս եռուր յարուցանելոյ զպատե-
բազմն ընդդէմ հայրենեաց։ Զի զինչ այլ ասէր նա, զինչ
պատճառս անմիտ խորհրդոցն և գործոյն յառաջ ածէր,
բայց զի էր միջորդութիւն դիմադարձութեանն ապախա-
լեալ, իրաւունք հաղարապետութեանն բարձեալ, Անտո-
նիոս 'ի ձեռն աւագանւոյն 'ի պաշտամանէն խափանեալ։
Թողից ասել քանի սուտ են այդոքիկ, քանի անտուտ, մա-
նաւանդ ուր ոչ ումեք մարթի ունել իրաւունս զէն վերա-
ցուցանելոյ ընդդէմ հայրենեաց։ Այլ կացցեն բանք զկեսա-

Digitized by Google

րէ. քեզ ինքնին անշուշտ խոստովանելի է, թէ 'ի քոմ ան-
ձինդ էր պատճառք կորստական պատերազմին: Ո՛վ չուտադ-
դու՝ եթէ իմանաս, չուտադգոյնդ՝ եթէ չիմանաս, զի այդ
'ի դրի հարկանի, այդ 'ի յիշատակարանս արձանագրի, այդ
էր և ոչ դպեանովք ամենայն յաւիտեանց անյիշատակ ան-
ցանիցէ. զի բդեաշխք Յիսայիոյ Թօթափեալք, ընդ նոսին
և կն. Պոմպիոս՝ որ իշխանութեան հռովմէական ժողովրդ-
դեանն փառք և ճաճանչն էր. ամենեքեան որ 'ի բդեշխու-
թեան պատուի էին, և յուժի կային ընթանալոյ 'ի փա-
խուստն յայն և 'ի փոթորիկ, դատաւորք և դատաւորա-
կանք, հաղարապետք ժողովրդեան, մեծագոյն մասն աւա-
գանեանն, ամենայն տոհմ մանկութեան, և հակիրճ ընկեր-
հաշտութիւն ոչնչոյն մերժեալ և հալածական 'ի կայից իւ-
րոց: Արդ, զոր օրինակ 'ի սերմանն է՝ ծառոց և արմանցն
բոյս, նոյն և այսմ աղետաբեր պատերազմի դու եղեր սերմն:
Ցաւէ ձեզ վասն սատակման երից բանակաց հռովմէական
ժողովրդեանս. սատակեաց Անտոնիոս: Կարօտիք հուշա-
կաւոր քաղաքացեացդ. զնոսա ևս 'ի ձէնջ յաջիշատակեաց
Անտոնիոս: Իշխանութիւն ատենիդ տապալեալ է. տապա-
լեաց Անտոնիոս: Համայն և զամենայն զոր յետ այնորիկ
տեսաք, — և ո՞ր աղէտք իցեն զոր ոչ տեսաք, — եթէ ու-
ղիղ 'ի քնին առնուցուսք, Անտոնիոս համարեսցի այնմ
պարտ չարեաց, օրինակ իմն որպէս Հելենէ տրոյացւոյն,
և սա այսմ ընկերահաշտեաց պատճառք պատերազմին,
պատճառք ժպնոի և կորստեան դատս:

Մինս ևս դրուագք հաղարապետութեանն՝ սկզբանն
հանդունակք: Զամենայն ինչ որում զգուշացեալ էր աւա-
գանին՝ զի մի ընկիցն 'ի կալ և պահել ընկերհաշտութեանն,
արար սա և կատարեաց. զորոյ չարութիւնն և 'ի չարու-
թեան անդ ծաներուք: Բազմաց տառապելոց դարձ շնոր-
հէր յաքսորանաց. 'ի նոսա ոչինչ բնաւ յիշատակ հօրեղ-
բօրն: Եթէ անաչառ, ընդէ՞ր ոչ առ ամենեսին. եթէ ողոր-
մած, էր ոչ յիւրան: Բայց թողեալ իմ զայլն, զի՛ Իկինիոս

Digitized by Google

Լենոիկուլաս, զդատապարտեալն վասն խաղոյ բախտի, զնոր խաղակիցն դարձոյց. ոչ զի չէր օրէն խաղալ ընդ դատապարտելո�ն, այլ զի զոր 'ի խաղն կորուսեալն էր՝ 'ի շնորհէ անսի լուծանելոյ օրինացն հատուսցէ [57]: Զոր իրաւունս յառաջ բերեր Ժողովրդեան Հռովմայ, դատել զնա արժանի դարձի: Թերևս [58] զի հեռաւորն ընդ պարտաւորս համարեալ էր, զի առանց հարցափորձի իրացն դատապարտն եղեալ էր, զի չգիտէր ինչ օրինօք վճիռ զնաղուց, զի բանի և զինուք էր հարատահարեալ. հուսկ յետոյ, որ ըզհօրեղբօրէդ լու լինէր, զի կաշառով Թիւրեաւ էր դատապարտեան: Եւ ոչ մի ինչ յայսցանէ: — Այլ այր բարի էր և ընկերհաշտութեան արժանի: — Ոչինչ է այդ առ խրնդիրս [59]. իսկ ես, քանզի դատապարտն լինել առ ոչինչ է համարեալ, եթէ այդպէս ինչ էր, ներելի արդեաք: Բայց որ քան զամենայն անօրէն այր, որում ոչինչ էր բնաւ խիղճ 'ի հրապարակի անգամ 'ի քուեայս խաղալ, զդատապարտեալն յօրինացս խաղուց, դարձոյց անարատ յառաջին չափն, նա ոչ ապաքէն ինքնին մերկապարանոց խոտովն լինի զախորժակս մտացն: Իսկ 'ի նմին հազարապետութեանն, 'ի խաղալ Կեսարու 'ի Սպանիա, իբրև ամս կոխան ետ գիտալիա, որպիսի ինչ եղև արշաւան Ճանապարհաց իւրոց: Միթէ երթևեռիք յայց և 'ի զնին ազատ քաղաքաց: Գիտեմ զի 'ի հուչակեալսն 'ի բերանս ամենեցուն դեպերիմ, և զի զոր ասեմն և ասելոց եմ՝ ծանօթագոյն են ամենեցուն գտելոցն յայնժամ յԻտալիա քան ինձ որ չգտայ, սակայն նշանագրեցից զիրսն մի ըստ միոջէ, թէպէտ և անհնար իցէ ամենեքին հաւաստարել բանիցս՝ գիտութեան ձերում: Զի ո՞ւր ուրեք յաշխարհի լսելի լեալ իցէ այնքան անառակութիւն, այնքան պղծութիւն, այնքան նշաւականք: Բարձեալ կրեր յօտարաբուն կառս հազարապետն Ժողովրդեան, նուիրակք սարգենապատակք կարապետէին. յորոց միջի՝ հոլանի դեսպակաւ ածեալ լինէր վարձակն [60], զոր 'ի քաղաքաց քաղաքաց ընդ առաջ ելեալ առ հարկին պար-

Digitized by Google

կեշտ որեսարն, ոչ ծանօթ և գուսանական անուամբն, այլ Վալուանիա զնա ողջունէին։ Զհետ գայր յոպնակ բազա-բոյծ կաւատոգ, ընկերք ժանտագործք. մայրն անարգեալ 'ի բաց ընկեցեալ՝ հոմանուոյ ալիզծ որդւոյն իբրև նուոյ զկնի գնայր։ Ո՛վ տառապեալ կնոջն Թշուառական ծնողականու-թեան։ Զայսոց անուսակութեանց հետս յամենայն ազատ քաղաքս, 'ի գաւառս, 'ի գաղթականս, միով բանիւ՝ ընդ ամենայն Իսրայէլս տպաւորեաց։

Այլոց գործոց նորա, հաղք ստեղնակաւք, գժուարին արդարև է յանդգնամանութիւնն և զէրս։ Գտաւ 'ի մարտին, յաղթեցոյց զանձն արեամբ քաղաքացւոց՝ անմամանեաց խրոց. բախտաւոր եղև, եթէ գուցէ բնաւ յամպարշտու-թեան բախտ։ Այլ քանզի պատկառ կալ կամիմք հինաւ-ուրց զօրականին, թէպէտ և չեն ինչ հանդոյն զնոսուրացն գտտ և քոյդ, զի նոքա զհետ կրթեցան զօրագլխին խրատանց, դու 'ի խոգիր եղեր նմին. սակայն զի մի զնոսա ընդ խս յա-տեղութիւն դարձուցես, ոչ ինչ զբնութենէ պատերազմին առացեր։ Ի Թեսալիոյ յաղթող դարձար 'ի Բրուտգիսիոն հանդերձ գուսարատակ գնդաք. անդ ոչ ապաներ զնա. շնորհ մեծ. քանզի վկայեմ՝ թէ կարող էիր [61]. թէպէտ և չէր զբ՝ յորոց ընդ քեզն էին, որ ոչ պարտ վարկանէր խնայել յիս։ Քանզի այնպիսի է սէր հայրենեաց, որպէս զի և յաչս գրն-գայն ձերոց սուրբ էի. զի զնա ինձ փրկեալ գիտէին։ Բայց գրեսջիր՝ թէ զոր ոչն բարձեր, շնորհեցեր ինձ, և թէ 'ի քէն զկեանս իմ ուսիցիմ, այնու զի ոչ հաներ յինէն. միթէ 'ի քոց թշնամանացդ թոյլ եւս եղև ինձ՝ այնպէս անմոռաց ունել 'ի սրտի զերախտիդ զայդ՝ որպէս ունէի. մանաւանդ զի և գիտէիր եւս՝ թէ զայսոսիկ լսելոց էս։

Եկիր 'ի Բրուտգիսիոն, 'ի ծոց և 'ի գիրկս քոյոյ վար-ձակիդ։ Զքնչ. միթէ սուա խօսիցիմ։ Քանզի՞ եղուկ էցէ չկարել ժխտել՝ զոր խոստովանեալն գարշելի է։ Եթէ չամա-չեցեր յաղագս քաղաքանուոյն, փարթամ և ոչ 'ի հինօրեայ ապայէն։ Զի՞ր այն զինուորս՝ որ չէտես զնա 'ի Բրուտգի-

Digitized by Google

սիան։ Ո՞ որ չգիտաց՝ թէ զայնչափ առուրց Հանապարհ հա-
տեալ եկեալ էր նորա առ՝ ի խնդակից քեզ լինելոյն։ Ո՞ որ ոչ
տարիացաւ ընդ այնոսիկս անոգան խելամուտն լինել՝ թէ որ-
պիսումամանն զհետ կրթեալ էր։ Դարձեալ ապա խոսելա-
կան արշաւան, ընկերելով նոցին վարձակաւ։ Յաւանեան՝
անապարամ և թշուառայեղց նիստ զարաց։ Յոտանեան՝ ոտից
և արծաթոյ՝ եւ առաւել զինեաց զերդիանք առ և ապրա-
ստակալի։ Յաւելաւ՝ ի վերայ, զի յանդգնաց կեանսս՝ որ
ՅԱՀԷԱՆԴԳՆԱ էր։ Հնարիւ բարեկամաց նորին՝ ասպա-
հապետ եւ կարգեցաւ։ Յայնժամ իրաւունս իւր վարիսա-
կենակից Հիպպիասայ [62] լինել, և զասպասաւորական երիվարս
այրուձիոյն՝ տալ Սերգեայ խոզկասակի՝ ի շահ վարձուց։
Յայնժամ ոչ զասպարանս զայս [63], զոր այժմ վարանի ասպա-
հանել, այլ զԱ։ Պիտանին ընտրեալ էր իւր՝ ի բնակութիւն։
Զի՞ է ինձ զորս հրամանն, զի՞ զաւարատութիւնն, զի՞
զբաշխայս ընչից ժառանգութիւնց, զի՞ զապահովեալն յիւրմի
յաստաջ ածել։ Սոխակեր տաղնապակեր կարօտութիւն։ Չգոյր
յոր դարձցի։ Զև էր՝ ի Լ։ Ոտարբոսն, չև՝ ի Լ։ Յոտան-
լեալոյ հասեալ առ նա այնչափ ժառանգութիւն։ Չև գոս-
խանակ կն։ Պոմպիոսի և այլոց բազմաց բացակայից՝ յան-
կարծական ժառանգ սարդեալ մոռալ էր։ Մնայր նմա ա-
ռաստակարէն կեալ, այնչափ ինչ ոռնել՝ որչափ կարողանայր
կարիցէ։

Այլ զայսոսիկ, որ ուժգնագոյն ապիրատութեան են,
՝ի բաց թողեալ, խօսեացուք մանաւանդ զգեղմապտոյ թե-
թեւանացն։ Դու գովին որկորովդ, գովին կշտիւդ, գովին
վերականատարամարտի ագնդակազմութեանդ բազմանգամ
իրանացդ, այնչափ գինի կլլեալ էիր՝ ի հարբանին հիպպիա-
սայ, մինչև հարկ լինել քեզ վաղիւ փսխել ժայռիքեալ ակն
յանդգնման ժողովրդեանն հռովմայ։ Ո՛վ էր՝ ոչ միայն՝ ի
տեսել, այլ և՝ ի լուր նոցիկալի։ Եթէ յընթրեկերս անդ՝
յահագին տաշտս բաժակացն քոց յայնոսիկ պատահէր
քեզ ապա, ոմ՝ ոչ զաղիր հանդերձէր։ Իսկ գա՝ ի հանգիստ

Digitized by Google

հռովմէական ժողովրդեան, 'ի պաշտելն զդրսի աշխարհին, առապահանեալ. որում և զայրանալ անդամ մնախիզ է, ործ-կասելով և շնալով զինեհոտ պատառովք խորտկացն ըզ-զոգան և զատեանն ողջոյն ոդողեաց։ Բայց ինքնին և նա վկայէ այդոցիկ 'ի հիքութեան իւրում մասին լինել. եկեա-ցուք 'ի շքեղն։

Զերծաւ Կեսար յԱլէքսանդրիոյ բարբարոսաց, որպէս Թուէր յաչս իւր. բայց ըստ իս, որ առ ընկերհաշտութիւն չարաբաստ իցէ, բարբարոս լինել ոչ ունի։ Կանդնեալ 'ի զանգ 64 առաջի մեհենին Արամազդայ Նահանջողի, ասա-ցուածք կն. Գոմպիոսի, — աւանդ ինձ, արքասուք հա-տեալ, այլ կակիծ ցաւոց 'ի սիրտս մեռեալ հարստեալ կայ, — ստացուածք, ասեմ, կն. Գոմպիոսի Մեծի' 'ի դժնդակ բարբառս քարոզին մատնեալ։ Բայն տեսիլ միայն՝ մոռա-ցեալ քաղաքիս զգերութիւն իւր՝ հեծեաց. և 'ի սարսակա-նալ ոգւոց, յահ և յերկիւղ պաշարել ամենայնի, ազգաս ինաց հեծութիւն հռովմայեցի ժողովրդեան։ Բայն ունել ամենեցուն, թէ ն իցէ այնպէս ամպարիշտ, այնպէս խելաս-զուր, այնպէս գիլ և մարդկան թշնամի՝ որ յայն եղեռն վաճառու հոլանեալ յանդգնեալ զանձն յառաջ վարեսցէ, գտաւ և ոչ ոք՝ բայց Անտոնիոս միայն. նա զի և բազում ամբոխութիւնք կային զնեալ զանուն, յայլ ամենայն կամա-կարողք ձեռնարկեցք։ Մի ոք ևեթ գտաւ յայն ինչ լպրշեալ, յորմէ զարհուրեալ խուսափէր ամենեցուն ծարհութիւն։ Ապա ուրեմն՝ ապիշութիւն այնպիսի զբև անկաւ, կամ Աշգրատագոյնս ասել՝ կատաղութիւն այնպիսի, զի նախատաս՝ վաճառուց զին հատանող 'ի տեղիս յայս ծնեալ 65 առ 'ի շոպել, ապա զինս և Գոմպիոսի հատանող, և չգիտիցեմ տակաւին զքեզ զաղիր և գարշելի հռովմէական ժողովրդեան, ոչ և զդիս ամենայն և զամենայն մարդիկ թշնամիս քեզ լեալ և լինելոց։

Այլ քանի լրբաբար անդէն և անդ յարձակեցաւ շուայ-տութիւն 'ի դոյս առնն այնորիկ, որոյ քաջութեանն ահաւոր

էր ժողովուրդն հռովմէական առ. օտարազգինս, արգելարու-
թեամբն սիրելի։ Արդ իբրև անգէն լոզացաւ 'ի փարթամ-
ութիւնս նորա, խոպայր առ. խնդին, խեղկատակ գիմա-
կաւոր, առաժամայս չքաւոր; յանկարծոյն մեծատուն։
Սակայն որպէս քերթողն ունի՝ չգիտեմ սր 66, Զարաս
ստացեալքն՝ չարաւ և կորնչին։ Անհաւատ և հրաշանշան
ինն է, թէ զիարդ զայնքան զբազմամարթեր ստացուածսն՝ 'ի
քանի սակաւ, չասեմ ամիս, այլ աւուրս, վատնեալ վա-
րատեալ եղէ։ Էին յոգնահամբաւ կարապք գինւոյ, արծա-
թոյ ընտրոյ՝ կշիռ մեծայազգի, հանգերձանի ծանրագին,
բազում և պայծառ. կահ և կարասի չքեղաշուք 'ի տեղիս
տեղիս, ոչ առն շուայտաբարոյն, այլ Ճոխի։ Ի սակաւ
աւուրս և ոչ մի ինչ կայր 'ի ստացանէ։ Ո՞ր Քարիբդ 67 այդ-
պէս կլանող եղէ. և զի՞ իսկ զՔարիբդ ասիցեմ, որ եթէ
եղեալ ինչ եղէ, մի ևեթ յուշկապարիկ նմանզ էր. ան և օն
'ի հաւատոյն գիս երդուեալ, աշխարհածանիլ մեծ հազիւ-
թեամբ բաւական զայնքան իր, այնչափ ցեր և ցան, այնչափ
'ի հեռի վայրս զետեղեալ, այնպէս յապուրակի կլանել։
Զեր ինչ 'ի միջի փակ և ոչ կնքեալ, ոչ գրով դրոշմեալ։ Շտե-
մարանք առ հաստարակ՝ արանց անզգամաց գնային 'ի պարգև. էր զոր խաղակատակք յափշտակէին, էր զոր վարձակք. խոնեալ էր առանն խաղացողաց քուէից, արբեցելոք լի. զաւուրս ողջոյն գինեբբուք էին, և 'ի բազում տեղիս։ Յանէրլին գամու գամու և զեանք խաղուց, — զի ոչ միշտ բախտաւոր է գա։ Ի ծառայիցն խուզ տեսանելիր խշտիս ծածկեալս ծիրանաներկ պատատակալաքն կն. Գոմպիոսի։ Վասն որոյ մի և այլ զարմանարս, թէ այն սանոնայն այնպէս վաղվաղակի գերփեալ սպառեալ բարձան 'ի միջոյ։ Ոչ զմիոյ ուրուք՝ թէպէտ և բազմագանձ հայրենի ստացուած, որպիսի ինչ այն էր, այլ և զքաղաքս և զՀապաստուրութիւնս կարէր այնպիսի անառակութիւն լափել լեղել վաղվաղակի։

Իսկ զնարս ապարանան ևս, և զգրախաս. ոմն անհնարին

յանդգնութեան։ Դու՝ 'ի տուն անդր իշխեցեր մնանել, դու զամենասուրբ զայն սնամեան կոխել. դու զեց երգոցն այնոցիկ զզաղջատեսիլ երեսաց ցուցանել. յոր երբեմն ոչ ոք կարէր հայել 'ի տուն յայն, ոչ ոք առանց արտասուաց ընդ այն անցանել, դու ո՞չ պատկառես օթել այսչափ յերբեկար 'ի յարկեան յայնոսիկ, յորս թէպէտ և չես զգոնամիտ ոք, համայն չեք խմիք քեզ քաղցրանալ։ Մինթէ դու, իբրև գամ մի 'ի գաւթի անդ զբեմեան, զկապուտան յակն արկեր, համարիցես 'ի տուն քո մնանել։ Անհնար է այդմ լինել. զի թէ և անմիտ անդգայ ոք իցես, որպէս և ասաց, սակայն զքեզ և զքոյսդ և զգերգաստանդ ծանուցեալ ես։ Հաստատեալ երբեք, ոչ յարթմնի և ոչ 'ի քուն՝ զգոն և խոսգալ միտս ունել քեզ. հարկ է, զի թէպէտ և իցես՝ որպէս և ասաց՝ զմենակեղ և մոլի, 'ի յանգիմանն լինել քեզ կերպարանաց առնն չքնազի, ընդոստնուլ քեզ զարհուրապին 'ի քնոյ, և 'ի զարթմնի ևս ուսեալ մոլեդնել։ Իսկ ես զմամ և յորմունն յայնոսիկ և 'ի մարդական. զի զինչ այլ բնաւ տեսեալ էր յարկին այնմիկ, բայց որ ինչ զգաստութեան է, որ ինչ բարուց բարութեան և արդեան հրահանգաց։ Զի այրն այն, որպէս գիտէք, հարք աստենակալք, թէ անուանի եղև արտաքոյ, և թէ առանին զարմանալի. և ոչ յիրս արտաքինս առաւել գրուատելի, քան 'ի անտեսական բարեկարգութեան։ Արդ 'ի տան անդ սորա՝ փոխանակ սենեկաց՝ լիցք են, փոխանակ ճաշարանաց՝ աշխարհանդէս։ Թէպէտ և արդ յուրատ կացցէ դա, մի և մի ինչ այլ որոնէք, որբիկ ոմն եղեալ է։ Վարձակին իւրում հրամանն եաս ըստ երկոտասան տասանակացն՝ ժողովել զկարասին իւր [68]. զիսկանան եհան 'ի նմանէ, արտաքսեաց։ Այլ քանի՞ սքան չելի քաղաքացի, քանի՞ գովելի, յորոյ 'ի բովանդակ կեանսն չեք ինչ այլ գործ վայելուչ քան զաստուածպաշտութեան վարձակին։ Բայց քանիցս յաշխարհ յեղեալեղու. Ե՞ բդեալն Ե՞ Անտոնիոս. որ է ասել՝ և բդեաչեն և անամօթ քան զամենայն, և բդեաչեն և մարդ քան զբնաւ անօրէն. զի զինչ այլ ինչ Անտոնիոսդ.

Digitized by Google

քանզի եթէ էր ինչ շուք յիմանալ անուանդ ։ կարծեմ թէ և հաւն քո սակը ուրեք զանձն և բգեղն և Անտոնիոս, զոր ոչ երբեք ասաց. սակը արդեաք և պաշտօնականին իմ՝ հոր եղբայրն քո։ Բայց միայն զի գու եղեր Անտոնիոս։

Այլ լուեմ զոճիրսն որ ընեն 'ի բնէ գործոցդ, որոմեք ազգիկեցեր գու զընկերհաշտութիւնն. 'ի քոյդ դառնամ, այս է յընտանի պատերազմն՝ որ 'ի քո ձեռն յարեաւ բորբոքեցաւ ճարակեցաւ։ Ի պատերազմէ անտի՝ գու առ երկչոտութեան և առ հեշտախոտութեանցդ՝ յետնեալ կատեցեր։ Ճաշակեալ էիր 'ի տոհմային արիւնէ, նաս մանանայդ արբեալ և թրջեալ. 'ի փարաւէան ճակատուն եղեալ գրոշակիր, ապանեալ զԼ. Դոմիտիոս զայրն ազնուական և առկանաւոր, զբազում փախստականս 'ի մարտէն՝ զորս կենդանս, որպէս զայլս ոմանս, փրկեր արդեաք, անողորմութեամբ հալածեալ և խոշտեալ։ Ցետ այսչափ և այսպիսի ազատնոյ գործելոյ, զի է զի զհետ կեսարու չեղեր յԱֆրիկէ, ուր զի մնայր տակաւին մանն մի մեծ՝ պատերազմն։ Իսկ արդ զոր տեղի կալար առ նմին իսկ կեսարու յետ գործին խրոյ 'ի կողմանցն ափրիկեցւոց, յոր կարդ դասեցար։ Որոմ քոյ 'ի զօրապետութեանն զանձաւոր եղեալ էիր, յիշխանապետութեանն 69 ասպահապետ, սկզբնապատճառ խռովին, անգթութեանն հաւակ, սաստրին բաժանակից, 'ի կատակին՝ որպէս գուդ ասէիր՝ պայազատ, գու այդպիսիդ՝ գաստատուանաւ պահանջեցար զարծաթն՝ զոր պարտէիր ընդ ապարանիցն, ընդ դրախտիցն, ընդ գնոց վաճառուցն։ Զառաջինն՝ սատակութեամբ եռուր հաստատ պատասխանի, և զի մի յամենայնի քեզ հակառակ թուիցիս, գրեթէ արգար և իրաւ ասէիր. « Կեսարն յինէն արծաթ. ընդէր ոչ ես մանանայդ 'ի նմանէ. միթէ առանց իմ յաղթեցաց նա. այլ և ոչ խակ բաւական գոսա։ Եթ նմա պատճառս եռաս անանկան պատերազմի. ես առաջի արկի օրէնս սատակչական. ես զէնս ընդդէմ բգեղչիոց և զօրագլխաց հռովմէական ժողովրդեանն, ընդդէմ սաստանուոյն և ազգին հռովմայեցւոց։

ընդդէմ գէշն հայրենասիրեաց և բարձեաց և ասեց, ընդդէմ հայրենեաց չարժէցն։ Մինթէ անձին առանձին յաղթեսցեաց։ Որոց հաստատակ քաջութեանն է հանդէս, առ խիզ և աւարն չիցէ հաստատակաց։» Իրաւունս խնդրեցեր. այլ զինչ օգուտ, նա հզօրագոյն էր։ Վասն որոյ 'ի բաց ընկեցեալ զքո ձայնագ, առ քեզ և առ երաշխաւորսն քո զինուորս առաքեաց։ Անդ յայնժամ յիզակարծ եղ 'ի գուրս առ 'ի քէն ասխատակն այն մեծապայծառ։ [70]։ Քանի՞ ծառայս առ մարդկին. զի այնպէս ահագին էր ասխատակն, այնչափ պէտակս և բազմապատիկ ստացուածք, յորս բաց 'ի մասնէն Միսանեայ՝ չգոյր ինչ զոր վաճառօղն կարիցէ ասել թէ իւր իցէ։ Իսկ վաճառողն կերպարանք՝ ողորմելի. Գոմ ոչխատան հանդերձանի՝ ոչ բազում ինչ, և այն՝ աղտեղեալ. ապատաք ինչ նորա արծաթիք՝ կոշկառուսուն. ծառայք և աղախնայք՝ ժանտատեսիլք. մինչև 'ի զեղջ հարկանել մեզ. թէ իցէ ինչ ասկաւին 'ի նշխարաց անտի զոր տեսանել հաստանիցէ։ Բայց և զվաճառն զայն խարեսնեցին ժառանգքն Ի. Ռաբբիոսի՝ Կեսարու հրամանաւ [71]։ Ի վերան ասպնջական մնանէր անդադարն, ոչ գիտէր յոր կոյս գարձցի. նա և ասացաւ իսկ 'ի ժամանակին, թէ ապանոզ գաւառաձան 'ի գմանէ առաքեալ 'ի տուն Կեսարու, և ընթանեալ էր նպատնաձն հանդերձ. զորմէ յատենի աւագանոյն՝ յայտնապէս 'ի քեզ լուսացեալ՝ բազոք կալաւ Կեսարս։

Գնայ Կեսարս 'ի Սպանիա, ասկաւ ինչ աւարս վասն չքաւորութեանդ յաւելեալ քեզ 'ի հաստատանել. և ոչ յայնժամ զհետս գնաս։ Ա՛յնչափ արի սուսերամարտդ՝ այնպէս վազ ընկալար զմահանն [72]։ Իսկ արդ այր՝ որ առգործս խր, առ յաջողուածն ասեմ՝ այսչափ վաստ իցէ, երկիցէ ինչ զք 'ի նմանէ։ Հաւակ ապա ուրեմն չոգաս 'ի Սպանիա. այլ որպէս ասէրն՝ չկարաց անկանակած հաստանել [73]։ Իսկ զիմ՞ դ ապա եհաս Դոլոգաբէլլա։ Կամ չէր պարտ, Անտոնիսէ, մնանել յայս կոխ, կամ զի գամ մի մնարդ, ապնդ կալ նպատաստ լինել մինչև 'ի ապատ։ Երիցս ճանկատ եղ

Digitized by Google

Կեսար ընդ քաղաքացիս. 'ի Թեսալիա, յԱֆրիկէ, 'ի Սպանիա. յայս ամենայն կռիւս գաւառ Դոլաբելլա, 'ի սպանիական. վերս եւս էառ։ Եթէ զիտաս իմ հարցանեա, չիսամեի զայն. այլ սակայն խորհուրդն յառաջմէ ստգտանելի է, անգուշութիւնն՝ գովելի։ Իսկ դու զինչ կարծիցես։ — Որդիք կան. Պոմպիոսի նախ զաշխարհն իւրեանց խնդրէին։ — Այդպէս իցէ. լիցի այդ երկոցուն կողմանցն հաստատակաց խնդիր։ Բայց նոքա՝ 'ի վերայ այնր և զՀայրենի աստուածն խնդրէին, զքաղաքնսն, զերդան, զարքին իւրեանց ընտանի՝ յորս քո հինգաբար մտեալ էր։ Ի խնդրել նոցա զայսոսիկ զինուք, որոց և էինն իսկ օրինաք, Թէպէտ և յիրս անիրաւութեան զինչ արդար մարթիցի գտանել, սակայն արդար յոյժ էր, վաճառողին կն. Պոմպիոսի՝ տալ պատերազմ ընդ որդիսն կն. Պոմպիոսի։ Եւ զինչ ուրեմն. դու 'ի Կարբոն՝ զսեղանս հիւրասիրաց փոխեացես, Դոլաբելլա 'ի Սպանիա փոխանակ քո պատերազմեսցի։

Իսկ զինչ դարձն 'ի Նարբոնէ։ Եւ սակայն խնդրէր՝ Թէ առնինչ ես այնպէս Ճեպով դարձայ 'ի Ծովաչուն Ճանապարհէս[72]։ Փոքր մի յառաջ յայս արարի, Հարք ստեղնակաք, զպատ Ճառս դարձիս[73]։ Ընտրեցի, եթէ էր ինչ հնար, և յառաջ քան զամսամուտն Յանուարի ժամանել յՕգնութիւն ընկերհաշտութեանս։ Այլ զի հարցանէիր զղեարդն դարձիս, նախ՝ 'ի լոյս տուընչեան, ոչ 'ի խաւար գիշերոյ. ապա՝ կոչկոք և ալՃնաւոր պատմուՃանաւ, ոչ 'ի մոկիս գայլիացիս և ոչ 'ի կրկնոց։ Այլ տակաւին յիս դէտ ակն ունիս, նա և որպէս երևիսգ՝ ցասուցեալ ես։ Այո, ապաքէն հաշտ ընդիս եղեցես դու եթէ 'ի վերայ հասանիցես՝ քանի ամսոթ կրեմ ես ընդ զեղխութիւնգ քո՝ ընդ որ դու ոչ ամաչես։ Ի բնաւ համաշխարհի զեղծագործութիւնս՝ չտեսի ինչ ուրեք գարշագոյն, չլուայ ինչ։ Որ աստուահաւետ լինել թուէիր յայս քո, և յառաջիկայ ամին զբարեխութիւն խնդրելոց էիր, մանաւանգ Թէ Թախանձելոց, այդպիսիգ դու՝ ընդ աղատ քաղաքս և ընդ գաղթականս Գայլիոյ, ուստի մեք

սովոր էաք զբաղչխութիւն խնդրել, մինչդեռ խնդրելի էր բաղչխութիւնն և ոչ թախանձելի [76], զոր 'ի մոյկա գայլ ի ա-ցիս՝ կրկնոց զԹիկամիք ընդ նոսին ընթացար : Այլ տեսէք զԹիեթեռութիւն ասնն : Իբրև զասան ժամանն հասեալ 'ի Կարմիր վէմանն [77] եմուտ զոգեցաւ 'ի կրպակի ուրեմն, և անդ 'ի Թաքստին էարբ սատիկ մինչև ցընդերեկան, անտի երկանիւ կառաք շտապ տարձնապաս յոստան այսր վարեալ եկն 'ի տուն՝ պատատեալ զգլուխն : — Դանդաղանն. Ո՞վ ես դու : — Դեսպան 'ի Մարիոսէ : — Անգէն վաղվաղակի առ նա [78] այր վասն եկեալն էր՝ ածեալ լինի. և ասայ 'ի նա Թուղթ մի : Զոր իբրև ընթերցայր նա արտասուախառն, — քանզի սիրտքաբ էր գրեալ՝ և գլուխ բանիցն, ոչ էս ինչ այնուհետև ընդ վարձակին ունել, զամենայն տուփուն նորա 'ի բաց Թողափեալ և բովանդակ յինքն զեղեալ, — և 'ի յորդ արտասուս հեղուլ կնոջն, ոչ կարաց հանգարտել այլն գորովելոր, հոլանեաց զգլուխն և անկաս զպա-ղանոցատն : Ո՞վ այր անզգամ. զի զինչ այլ ասացից. չունիմ գիտզագոյն ինչ ասել : Այս ուրեմն, զի զեսեսեալ կնամարդ. յանկարծուստ երևեալ՝ արտաքոյ ակնկալութեանն տեսանիցէ կինն, վասն այսորիկ զոստանն՝ գիշերական արհաւրոք, և զԴասալիա՝ բազմարեայ երկիւղիւ դղրդեցեր [79] : Առանին գոսա քեզ պատճառք առփանաց, և արտաքոյ՝ ևս չարագոյն, այն զի մի Լ. Գլանիոս զինչս երաշխաւորացդ 'ի վաճառս հանիցէ : Կոչեցեալ ապա յոստան 'ի հաղարապետէ ժողովրդեանն, իբրև հատուր պատասխանի՝ Թէ վասն իրին իմոյ եկեալ եմ, զլեզու ամբոխին ևս 'ի քեզ արձակեցեր [80] : Այլ շատ է շատ զնոտեաքս, առ մեծամեծսն ընթացուք :

Կեսարու՝ 'ի գարձին 'ի Սալանիոյ՝ գնացեր ընդ առաջ մինչև ցմեծ հեռատան : Հասանելով գնացեր և եկիր, զի զէրթ ժիր տեսցէ զքեզ, Թէպէտ և ոչ կարի իմն քաջ : Դարձեալ վերատին, չգիտեմ արդեաւ, եղեր նոսա ընտանի : Եր էր 'ի Կեսար այս ինչ. զոր ոք տեսանէր 'ի պատճառս ապար-

Digitized by Google

տուց կորուսեալ և տառապեալ, բայց և այր ժանտ և ժը-
մերտ, մեռոգիւր զիւրև ածեալ ընդունէր զնա յընտանու-
թիւն։ Արդ սոքիսիք պայծառապէս բարեհաչակեալ, հրա-
ման տուաւ բգեշխ զքեզ քարոզել, նա և ընդ իւր եւս։
ԶԴոյլաբէլլայ ոչինչ տրտնջեմ, որ 'ի նմին ժամանակի գրը-
գեցաւ՝ հրապուրեցաւ՝ պատրեցաւ, յորում ո՞ անդիտաս-
նայ զանհնարին մեծութիւն նենգութեան ձեր երկոցունցդ։
Նա հրապուրեաց խնդրել զբգեշխութիւն. յետ խոստա-
նալոյ և երաշխաւորելոյ՝ գաղձոյց և յինքն շրջեաց. զու՝
խարդախութեան նորա գտար կամակից։ Գայ հասանէ ամ-
սամուտն Յանուարի, ժողովիսք յատեան աւաքախուսք.
կշռամբեաց զսա Դոյլաբէլլա Ճռուտն և խիզախ քան զոր
այժմ ես։ Իսկ սորա արամտեալ՝ զինչ ինչ ասաց, բարե-
բարբ աստուածք։ Նախ քան զամենայն, իբրև եցոյց կեսար՝
թէ յառաջ քան զլուեալն՝ 81 բգեշխութիւն հրաման տալոյ
է Դոյլաբէլլայի, — զոր չխոստովանին թագաւոր լեալ, որ
հանապազ առնէր ինչ այսպիսի և ասէր, — այլ իբրև ասաց
զայս կեսար, յայնժամ հաւանեցոյց քաջ՝ այնպիսի քրմու-
թեամբ Ճոխացեալ ասաց զանձն, մինչև հմայիւք արգելուլ
զժողովն կամ խանգարել. և անդեալ կայր արգելամբք կա-
տարել։ Յորում 'ի վեր քան զամենայն՝ զանկարծելի ափ-
շութիւն առնն ծաներ։ Զի զինչ. զոր քրմութեան ի-
սաւամբք կարող զքեզ ասացեր գործել, եթէ չէիր հաւա-
հարց և բգեշխ էիր, չէիր ինչ այնպէս կարող 'ի գործել։
Ցէս գուցէ գիւրաւ եւս. զի մեզ՝ 82 հմայիցն ազգարարաւ-
թիւն եւթ տուեալ է, իսկ բգեշխից և այլոց գործակալաց՝
հաւատիտութիւն եւս։ Ցացի և այս խամութեան. զի այր՝
որ ոչ երբեք լուրջ լեալ իցէ, չէ պարտ խնդրել 'ի նմանէ
խոհականութիւն. բայց սեպէք զժարհութիւնն։ Բազում
սամովք յառաջագոյն ասաց յատենի աւագանոյն, թէ ըզ-
ժողովն Դոյլաբէլլայ խափանելոց է հաւատիտութեամբք։
կամ զայն ինչ առնել՝ զոր և արարն իսկ 83։ Իցէ՞ ինչ ուրեք
հնար գուշակել՝ զինչ յոտութիւն գիպելոց իցէ 'ի հմայս,

Digitized by Google

բայց եթէ որուամ 'ի մտին իցէ հմայս հմայել. այլ զայդ 'ի ժողովն անդ՝ չհրամայեն օրէնքն. իսկ եթէ ուրուք հըմայեալ իցէ, ոչ 'ի լինել անդ ժողովոցն՝ այլ յառաջագոյն պարտի ազդ առնել։ Բայց տգիտութիւն խառն ընդ լքութեան է. ոչ զհաւահմայի պատշաճն գիտէ, և ոչ զցածնոյն գործէ։ Արդ, յօրէ անտի յայնմանէ մինչև 'ի հնգեռտասանն Մարտի յիշէք զբգեշխութիւն նորա. ոմ զոր երբեք արբանեակ խոնարհ իբրև զնա, նուաստ իբրև զնա։ Ինքնին անկարօղ առ ամենայն, զամենայն ինչ ազելուեր. զգլուխն 'ի հանդիպակաց գահաւորակն [84] խթեալ, շնորհս 'ի պաշտանակցէն խնդրեր առ 'ի վաճառել։

Ահաւասիկ օր ժողովոյ Դոլաբելլայ։ Վիճակարկութիւն առաջնոյ ընտրեալ հարիւրեկին [85]։ Հանդարտէ։ Քարոզի։ Լռէ։ Ցառաջ կոչի առաջին դասն. քարոզի։ Ա. պա որպէս սովոր է՝ յառաջ կոչի դասն երկրորդ 'ի վիճակարկութիւն։ Եւ այս ամենայն՝ արագ քան զոր ասացիս՝ կատարեցաւ։ Ցետ իրացն վճարելոյ՝ հաւահմայն քաջ, — գոգցես Լէլիոս ոմն, — ասէ. Ցայլսմ ասուբ։ Ո՛վ նորացեալ անամօթութեանն։ Զի՞նչ տեսեր, զի՞նչ իմացար, զի՞նչ լուար. զի ոչ հմայս ինչ հմայեալ ասացեր զքէն, և ոչ այսօր ինչ պատմես։ Այն ինչ ուրեմն գիպաւ յոռութիւն, զոր քո յառաջնմէ 'ի գլուխ ամենայն Ցանուարի տեսեալ էր թէ պատահելոց է, և այնչափ կանխաւ գուշակեալ։ Ապա ուրեմն, օն և օն, առաւել 'ի քո գլուխդ, որպէս ակն ունիմ, քան յընկերհաչտութեանն ստեցեր զհմայսն, արկեր զժողովուրդն հռովմէական յերկիւղ խորանաց կրօնից, հաւահմայ հաւահմայի, բդեշխ բդեշխի [86] ազդեցութիւն արարեր։ Ոչ կամիմ կուտակել զբանս, զի մի զհրամանն Դոլաբելլայ [87] եղծանել թուիցեմ, որոց հարկ է յաւուր միում գալ յանդ 'ի մեր ուխտս։ Այլ զյանդգնութիւն առանն և զապարատանութիւն ծաներուք։ Ցորժամ քեզ կամք իցեն, թերակատար բդեշխ Դոլաբելլա. ապա դարձեալ իբրև կամիցիս, անթերի հմայիւք ընտրեալ [88]։ Իսկ

Digitized by Google

եթէ չէք և ոչինչ յայդն առնել հաւահմայի՝ որովք դուն ազգեցեր բանիւք, խոստովան լեր՝ թէ յասելդ Յիսուսի ա-ռաւ՝ չէիր զգաստ մտաց տէր. իսկ եթէ գուցէ ինչ զօրութիւն 'ի ձայնդ, զինչ այն իցէ. հաւահմայս 'ի պաշտօնակցեգ հարցանեմ:

Այլ զի մի գուցէ 'ի յոգնաթիւ արարուածոցն Մ. Անտոնիոսի զմիով չքնաղագունիւն վաղեալ անցանիցէ բանս, 'ի Լուսերկեան տունն մատիցուք: Ոչ պատրուակէ, Հարք ատենակալք. խռովեալ թուի, ընդ քիրտն մտանէ, այլ-գունէ: Արտացէ զոր և կամի, միայն թէ մի՛ փսխեսցէ, որպէս 'ի Մինուտեան գաւթին արար: Զինչ աղէ աղերսաբանութիւն կայցէ այնքանոյ եղեռնութեանն, ցանկամ լսել, զի տեսից՝ ուր Ճարտարիսօսութեան վարժապետին փարթամաշնորհն վարձք, ուր Լէոնտեան անդաստանքն երևիցին: — Նստէր 'ի բեմ հրապարակին պաշտօնակիցն քո, արկեալ պատմուճան ծիրանի, 'ի գահ ոսկեղէն, պսակ 'ի գլուխ [89]: Ելանես, մատչիս յաթոռն. — էիր քուրմ Լուսերկեան, բայց պարտէիր յիշել՝ թէ բդեշխ ես. — յերևան հանես թագ մի արքայական: Հեծութիւն ընդ հրապարակն ողջոյն: Ո՞ւստ ուստեք թագդն այն. զի ոչ զանկեալն ինչ ուրեք բարձեր 'ի գետնոյ, այլ 'ի տանէ ածեր զերկնեալ և զնիւթեալ եղեռնն: Դու թագ նմա 'ի գլուխ գնեիր ողբովք և կոծով ժողովրդեանն, նա մերժէր՝ [90] ծափիւքն և կայթիւք: Դո՞ւ ուրեմն միայն գտար, այ ամպարիշտ, որ առաջնորդ թագաւորութեան կացեալ՝ զպաշտօնակիցն քո տէր ունել կամիր, և փորձ ինն 'ի թեթուս մատուցեալ փորձեցեր, զինչ յանձն առնուցու և հանդուրժեսցէ ժողովուրդն հռովմէական: Նա և զգթութիւն որսայիր, անկանիր առ ոտսն աղաչաւոր. առ 'ի զինչ խընդրել. զի ծառայ լինիցիս. քեզ միայն խնդրեիր, որ 'ի մանկութենէ այնպէս կեցեր՝ զի զամենայն ինչ յանձն առնուլ առ 'ի հեշտ պաշտօն ծառայութեան. 'ի մենչ և 'ի հռովմէական ժողովրդենէն չունեիր բացէ 'ի բաց ամենեին զայդ

պատուէր։ Ո՛վ սքանչելի Հարատարիսատութեանդ քում, որ մերկանդամ ստեղծանեցեր։ Զի՞նչ այլ քան զայս գործեալի, զի՞նչ ազատելի, զի՞նչ ամենայն պատուհասի արժանի։ Սապատիցես Թերևս՝ զի խնամաւ զքեզ ընդունուցից. եթէ խուն մի է 'ի քեզ զգայութիւն, այս բանք կեզուքեն զքեզ, յարիւն Թանաւեն։ Խիստ Թէ մի՝ նուազ արարից զիմաստ արանցն վերամականաց [91], ասկայն ասացից 'ի ցաւացս ասելոյ։ Անարժան յոյժ է կեալ Թագաւորին, ուր ըստ ամենեցուն վկայելոյ՝ արժանապէս սպանաւ մերժողն Թագի։ Նա և արձանագրել հրամայեաւ 'ի գիւանս Լուսերկեան ասնեց. «Կ. Կեսարու, մշանիկնաւոր իշխանապետի, Մ. Անտոնիոս բգիշն՝ պատուիրանաւ ժողովրդեան մատոյց Թագաւորութիւն, Կեսար չկամեցաւ ասնուլ»։ Արդ ոչ ևս զարմանամ զի վերդվեաց զնաղղութիւն, զի ատեան՝ ոչ միայն զուստանս, այլ և զլոյս. զի ընդ կորստական աւազական ոչ միայն զօրն կեաս, այլ և ատ օրին [92]։ Զի ո՞ւր ուրեք դու 'ի խաղաղութեան զեռեղ առեալ կայցես. որ այն քո տեղի իցէ յօրէնսն և 'ի գատաստանս, զորս գոռ՝ որչափ ինչ 'ի ձեռաց էր՝ Թագաւորական սէրութեամբ բարձեր։ Մինեէ յա՞յն ատեն Լ. Ցարկուինիոս հալածեցաւ, Սպուրեանքն կատիոս, Մենիկոս, Մ. Մանլիոս սպանան, զի 'ի վախճան դարուց բազմաց 'ի Մ. Անտոնիոսէ արտաքոյ աստուածեղէն իրաւանց Թագաւոր կարգեսցի 'ի Հռոմի։ Այլ 'ի հաւատհայայն գործոցդ։

Զորոց իրաց 'ի հարց և 'ի քնին էր մոռանելոց [93] Կեսար յատենի ուսադանուցն 'ի հնգեռասան Մարտի, զի՞նչ առնել էր քեզ յայնժամ, հարցանեմ։ Լսէի զքէն՝ կամ և պատրաստ եկեալ, զի կարծեալ այնպէս էր քո զինեն՝ Թէ հանդերձեալ իցեմ զատութենէ հմայիցդ խօսել, Թէպէտ և հարկ այնուհետև էր անսալ նոցա։ Հռոմէական ժողովրդեանն բախտ բարձ ստրաւ զօրն զայն. մի եթէ և զքոյդ գատաստան զհաւատհայոյց եբարձ մահն Կեսարու։ Այլ եկի անկայ յայն ժամանակ, զոր կանխեալ խօսել արժան է

քան զերան՝ յորս մեռեալ էր Հառա։ Զի՞նչ այն փախուստ էր քո, զի՞նչ արհաւիրք յաւուրն յայնմիկ. զի՞նչ ասա խզձի չարութեացդ յուսահատութիւն կենաց, յորժամ 'ի փախչելոյն անտի՝ շնորհիւ այնոցիկ, որ եթէ ոչ՝ մեռեալ ոք էիր՝ մրկեալ զքեզ կամեցան, գաղտագողի թաքթաքուր անկար 'ի տունդ։ Ո՛վ խոցս 'ի նանիր՝ միշտ ճշմարիտ գուշակութեանդ հանդերձելոյն։ Աստի 'ի Կապիտոլին 94 ասա ազատութեանցս մեր, իբրև կամէին զիս ասա քեզ առաքել՝ ասա 'ի յորդորելոյ զքեզ 'ի պահպանութիւն ընկերհաշտութեանն, թէ մինչդեռ յահի իցես՝ զամենայն ինչ խոստանայցես, 'ի փարատել երկիւղիդ՝ գարձեալ դու քեզ նման գտանիցես։ Վասն որոյ 'ի գալ և 'ի դնալ այլոց 'ի բդեշխական կարգէն՝ ես հաստատուն կացի 'ի միտս իմ, և զքեզ ոչ զայն օր և ոչ զկնի տեսի. և յանհարիւց համարեցայ՝ թէ կռեսցին ինչ բնաւ դաշինք միաբանութեան քաղաքացւոց առաքինեաց ընդ չարաշուք թշնամւոյ։ Յետ սաւուրն երրորդի եկի 'ի տաճարն Երկրի 95, և այն ակամայ, ուր յամենայն անցս գարմանակալ նստէին սպասաւորքդ։

Որպիսի՞ ինչ եղև քեզ օրն այն, Մ. Անտոնիէ։ Թէպէտ և իսկ և իսկ թշնամի ինձ դարձար, սակայն ողորմիմ քեզ, զի դու ընդ քեզ խանդացար։ Որպիսի՞ այր, դէք անմահք, և ո՞րչափ մեծ լինիցի, եթէ զկիշատակ աւուրն այնորիկ կարացեալ էր ունել 'ի մտի։ Ա՛ռ ձեռն կայր մեզ խաղաղութիւն, որ և եղեալ իսկ էր 'ի ձեռն պատանդին, ազնուական մանկանն՝ Թոռվնն Մ. Բասիլիոնի։ Թէպէտ և երկիւղ, ոչ երկարօրեայ առաջնորդն պարտոյից, զքեզ 'ի քաղցրութիւն դարձուցանէր, այլ դառնացոյց զքեզ այն՝ որ 'ի գնալ երկիւղին անմեկին կայ 'ի քէն, յանդգնութիւնն։ Նա և յայնժամ՝ յորժամ քաջալաւ զքեզ կարծէին, իմ յայլակարծիս գտլով, թագման բանաւորին ոստիկան կացեր ամենայն ամպարշտութեամբ։ Այն քո չքնաղ գովասանութիւնդ 96, արգահատանքդ քո, խրախուսանքդ քո։ Դու, ասեմ, դու զքահան զայն բարբաջեցեր, և որովք կի-

Digitized by Google

սայրեաց կայնա, և որովք հրձիգ լեալ բոցակիզեցաւ ապա-
րանքն Լ. Բեղլիենոսի։ Դու զքանութիւն արանցն այնո-
ցիկ ժանտից, և կիսով մեծաւ՝ սարբկաց, զորս մեք ուժով
և բազկաւ վանեցաք, 'ի յարկս մեր խանձեցուցեր։ Բայց
և նոյն ինքնդ, որպէս թէ զմուրդ ջնջեալ յանձնէդ, 'ի միւս
աւուրսն զշնաշխարհիկ հրամանսդ հաներ 'ի Կապիտոլին,
զի մի ինչ յետ հնգետասանից Մարտի կախեսցի տախտակ
ապահարկութեան կամ բարեբարութեան։ Ցիշատակեցեր
քեզէն զվտարանդիսն, գիտես զոր ինչ զապահարկութենէն
խօսեցար։ Բայց ամենալաւ այն, զի զիշխանապետութեան
անուն սպառսպուռ բնաջինջ բարձեր յաւիտեան յընկե-
րահաշտեացս. որով այնպէս ինն յատելութիւն դարձեալ
համարեցար թագաւորութեան, մինչև վասն գեռ ևս այն
ինչ նորդ գնացելոյ իշխանապետութենէն[97] զկասկած իսկ
նորին բնաւ անհետ կորուսանել։

Այլոց՝ կանգնեալ թուէր ընկերհաշտութիւնս, իսկ ինձ՝
ամենևին ոչ, որ 'ի քում վարչութեանդ յամենայն նաւա-
բեկութենէ խիթայի։ Իսկ արդ, միթէ խաբեաց զիս դա,
կամ կարաց ինչ յերկարագոյն ինքն ինքեան անմնան լինել։
Զեզ ակն յանդիման 'ի բոլոր Կապիտոլին կախէին տախ-
տակք. և ոչ միայն ումեք ումեք վաճառէին ապահարկու-
թիւնք, այլ և ընդհանուր ազգաց և ազանց։ Քաղաքակ-
ցութիւն ոչ ևս առանձինն ոմանց շնորհէր, այլ նահանգաց
միանգամայն։ Արդ՝ եթէ այսոքիկ կացցեն մնացեն, որոց
'ի կալ ընկերհաշտութեան չմարթի մնալ, համարիցն զամե-
նայն նահանգս կորուսեալք, հաւք ատենակալք. և ոչ միայն
հարիւք հռովմէական ժողովրդեանն, այլ և տերութիւնն
գլխովին նուազեցաւ սորա առանին շահավաճառաքն։ Ո՞ւր
իցեն եօթանասուն հազար բիւր փողքն՝ որ 'ի տախտակսն
առ Ոմխեայ տաճարին 'ի յայտ կային. արծաթ նորա ա-
պաքէն եղեռնական[98], բայց սակայն՝ եթէ առ տերարան
չդառնայր, կարեր զմեզ 'ի հարկահանութենանց ազատել։
Իսկ դու՝ որ 'ի հնգետասանն Մարտի ջորեք հազար բիւրս

փողոյ պարտէիր, զի՞արդ յառաջ քան զամսագլուխն Սպրի-
՝ի վճար եղև պարտուցն քոց։ Արդարև անթիւ են և զոր
այլք բազումք գնեցին ոչ առանց գիտութեանդ, բայց վճիռ-
մի նշանաւոր զԴիոտարայ արքայէ, զմեծ բարեկամն հռով-
մէական ժողովրդեան, 'ի Կապիտոլին կախեցաւ. յորոյ ե-
րևեալն՝ չգոյր ոք որ և 'ի ցաւան անդ կարիցէ արգելուլ ըղ-
ծաղրն։ Զի ո՞վ ոք ումեք առաւել ոխերիմ քան Կեսար
Դիոտարայ, նոյն և դաստա աւագանւոյս, նոյն և ասպե-
տացն, նոյն և մասխ՝լիացւոցն, նոյն և ամենեցուն առ հա-
սարակ՝ որոց զընկերհաշտութիւն հռովմէական ժողովրդեան
սիրելի տեսանէր։ Ուրեմն, յորմէ առ կենդանութեամբ
նորին ոչ 'ի մօտոյ ոչ 'ի հեռուստ բարի ինչ յիրաւի և յար-
ժանի ընկալեալն էր, առ վախճանեալն երախտագիտ ե-
րևեալ է։ Խօսեալ էր խստիւ ընդ ասպնջականին, 'ի համար
մտեալ ընդ նմա, հրամայեալ արծաթ, և 'ի յոյն ընկերակ-
ցաց իւրոց նստուցեալ զմի ոմն 'ի շամշտութեան նորա.
հանեալ 'ի նմանէ զՀայս՝ զոր տուեալ էր աւագանին։ Զայ-
սոսիկ կենդանեաւ իւրով կապտեալ 'ի նմանէ, ապա յետ
մահուն դարձոյց անդրէն ուրեմն։ Այլ՝ որո՞մք բանիւք.
մերթ՝ զի արդար Թուի ինքեան, մերթ՝ զի ոչ անիրաւ.
պատուած բանից զարմանալի։ Բայց նա 99, — քանզի
ցանգ օգնական եղէ Դիոտարայ 'ի հեռաւորութեան անգ
իւրում, — ոչ երբէք արդար երևեալ ասէր յաչս իւր՝ զոր
ինչ և խնդրէաք մէք վասն նորա։ Եւ ահա մուրհակ մի հա-
զար բիւր փողոյ 'ի ձեռն գեսպանաց, արանց բարեաց՝
բայց երկչոտաց և անիսորձից, առանց մեր և առանց այլոց
հիւրոց Թագաւորին խորհրդոյ՝ յօրինեալ 'ի խորոպշին
կանանոյն 100, յորում տեղւոջ շատ ինչ իրք 'ի վաճառ
եղին և եղանեն։ Զինչ առնեալցն իցես մուրհակաւն այնուիկ,
մտոյոյզ լինիս՝ կարծեմ. զի Թագաւորն ինքնին իւրով կա-
մաւ, առանց ինչ հարցանելոյ զդիշատակագիրսն Կեսարու,
ընդ լանէն զպանութիւն նորին, իւրով իսկ գլխով զբառամ-
էարկ զտէրութիւն իւր։ Գիտեր այրն խմաստուն, զի իրա-

ուունք են միշտ՝ զկոպոպատծս բռնաւորաց անգրէն ստանալ զրկելոցն 'ի ապականանել բռնակալացն։ Արդ, ոչ զք իրաւա-գէտ, նա և ոչ իսկ այն՝ 101 զոր դու միայն առ իրաւագէտս ունիս և նոմա գործեա զայդոսիկ, պարտս ինչ հասանել ասիցէ 'ի մուրհակէ այսի փոխանակ ստացուածոց՝ որ յա-ռաջ քան զմուրհակն 'ի բուռն արկեալ էին. զի ոչ եթէ 'ի քէն գնեաց, այլ մինչ չեւ քո զեւրն նոմա վաճառեալ՝ ինքնին ստացաւ։ Նա այր երևեցաւ, իսկ մեք՝ անգոնեալք, որ զգործողն ատեամք, գործոցն պաշտպան լինիմք։

Իսկ զինչ ես զանգաւ արձանաց, զինչ զանհայր յեա-կարաց խօսեցայց, որոց և նմանահանք գոն 102, որ իբրև զտուներամարտիկ խաղուցն ազգարար ալիտակս հրապա-րական վաճառեն զայնս. ուստի այնչափ անչափ կոյսք գրամոց առ սմա մթերին, մինչև ոչ համարել զարծաթն, այլ կշռել։ Այլ քանի զաչացաւ է ագահութիւն։ Արդ և ա-կախեցաւ տախտակ՝ որով կրետացւոցն ամենախարթամ քաղաքք ազատս թողեալ լինին 'ի հարկաց, և տահմանի Կրետէ՝ ոչ ևս յեա Մ. Բրուտոսի փոխանակի բդեշխի՝ լի-նել մեզ նահանգ։ Մտաց տէր իցես դու, ոչ դու կապելոյ արժանի։ Մինթէ Կեսարու հրամանաւ, յեա Եղիցն Մ. Բրուտոսի, կարէր ազատ լինել Կրետէ, ուր առ կենդա-նեաւ Կեսարու տակաւին չեւ էր անկ Կրետէ Բրուտոսի։ Այլ վաճառով հրամանիգ այդորիկ, — զի մի համարիցիք ոչինչ յարդիւնս եկեալ, — կորուսէք զնահանգն Կրետէ։ Ձերևեցաւ ոք ամենեին իմիք առգնող, որում ոչ առ ձեռն պատրաստ կայցէ Անտոնիոս 'ի վաճառել։ Եւ զվտարան-գեացն օրէնս՝ զոր կախեցեք, մինթէ և զայն Կեսարի կար-գեաց։ Ոչ ուրուք թշուառութեան արհամարհող եմ. բա-զոքեմ միայն, նախ՝ զի զորոց դատաստանն աննման դա-տեալ էր Կեսարու, դու զնոսա հաւասարորդս եդիր 'ի դարձ. և ապա՝ զի չգիտեմ էր վասն ոչ զնոյն և այլոց շնոր-հիցես. զի և չմնացին այլք քան զերիս կամ զչորս։ Որ միանգամ 'ի նոյն ապէտս են, ընդէր չվայելիցեն 'ի նոյն ողոր-

մուԹիւնդ. հիմ զնոսա 'ի տեղի հօրեղբօրդ ունիցիս, զորմէ
չկամեցար հրամանն տալ 'ի տալդ զայլոց. զոր և գրուեցեր
և խնդրել զպաշտօն քննողուԹեան վարուց, և հորդեցեր
նմա զինդիրն, որ 'ի ծագը և 'ի աթոռունՁ շարժեաց [103] զո-
րեարն: Իսկ առ ինչ զժողովն ոչ գումարեցեր. միԹէ զի
հաղարապետ ժողովրդեանն գուժէր շանՀ 'ի ձախմէ [104]:
Յորժամ քո ինչ պէտք լինիցին, ոչ ինչ են հմայք. յորժամ
քոյոցդ, անդ երկիւղած խորող երևիս: Զինչ. միԹէ ոչ և
յիշանուԹեանէ արանցն եօԹանց 'ի քաց զնա ելեր [105]: —
Քանզի կրՃիմ ընդ մէջ անկաս... ՁիմՀ երկեար. կարծեմ,
զի գուցէ 'ի յառնել նորա 'ի կենանս՝ չմարԹիցես յուրատ
յիմէքն լինել: Ամենայն ԹշնամանՁք լցեր զնա՝ զոր 'ի տե-
զի հօր պաշտել պարտ էր, եԹէ էին ինչ 'ի քեզ ազգք: Ըզ-
գուստրնորա, զքո քոյրաԹիս, ընկեցեր արտաքս, խնդրեալ
քեզ այլ իմն հարանիս և յառաջագոյն նկատեալ [106]: Զէ
շատ, այլ և 'ի գաբշուԹիւն զզպարտեցեր զկինն ամենա-
պարկեշտ: Զինչ այլ յաւելուլ կայցէ. այնու ևս ոչ շա-
տացեալ, 'ի յոգնախումբ աւազանին յամանգուխն Ցա-
նուարի, անդ բաղմելով և հօրեղբօրդ [107], լքեցեալ զայն
ինչ ասել քեզ պատՃառս ատելուԹեան ընդ Դոլաբելլայ,
զի քեռն քում և կնոջ խարդաւանուԹիւն առ 'ի նմանէ
եղեալ գտեր: Ո՞վ բաւական իցէ Թարգմանել, արդեաք ա-
ռաւել անամո՞Թ իցես՝ զի յատենի աւազանուոյն, ԹէՀ առա-
ւել էար՝ զի զԴոլաբելլայ, ԹէՀ առաւել անպարկեշտ՝ զի
լու 'ի լու հօրն, ԹէՀ առաւել անագորոյն՝ զի 'ի առաջեալ
կինն, զայդ պղծուԹիւն և զայդ անօրէնուԹիւն բարբառե-
ցար: Այլ դարձեալ 'ի ձեռնադրեալ յետկարսն եկեսցուք:
Զմի հարց և քնին արարեր. զի յաւազանէն վասն խա-
զաղուԹեան հաստատեալ պահեցան վՃռականքն Կեսա-
րու, զոր ինքն Կեսար հրամայեալ իցէ, ոչ զոր Անտոնիոս
ասիցէ՝ 'ի Կեսարէ հրամայեալս: Ուստի այդոքիկ յոր-
գեալ ելանեն, յորմէ ականէ բղխեն: ԵԹէ սուտ են, ըն-
գէր լինին հաՃոյ. եԹէ ՃշմարիտՀ, ընդէ՞ր վաՃառին: Այլ

Digitized by Google

այն էր մեր 108 ընարութիւն, զի յամենամեծն Յունեայ խորհրդով 'ի քէնն մեռանիցէք վճռոյն Կեսարու։ Զինչ խորհուրդ եղև, զո՞ղ կոչիցեր, որում ամենազիտոյ Յունեայ ոչոսեցեր. ամենամարգեալ՝ յորում չջնջեալ ընդ գաղութս հինգուրց զօրականին՝ գարձար եկիր խուռն ամբոխիւ զինուց։

Ո՛վ չքեզ ապշաւանիդ յամենեանն Ապրիլի և Մայիսի, յորժամ և 'ի Կապուս գաղթականս մուծանել ջան 'ի գործ արարեր։ Անտի զիարդ Հողոպրեցար, նա մանաւանդ զրեթէ և ոչ Հողոպրեցար 109, գիտակ եմք։ Սպառնաս գուքաղաքին այնմ. օշ թէ գուն եգեալ նկրտեցցես՝ զի բարձցի երբեմն այն գրեթէ։ Ա՛յլ քանի՞ մեծաշուք եղև արշաւանն քո այն։ Զի՞ է ինձ ձնաեալ զսպասուց Հաշոցդ, զի զմոլեկան ապրշումենդ. այսոքիկ քո են ինչսք, այնոքիկ՝ մեր։ Զգեմենն Կամպանեան, զոր յորժամ ազատ 'ի հարկաց լինէր առ 'ի բաշխել զօրականին, և սակայն վերս իմն մեծ համարէաք ընկերուհաշառութեան, զայն գու սեղանակցացդ և խաղակցաց բաժանէիր։ Խեղճասակս և վարձակս ասեմ, Հարք ասենակաւք, 'ի Կամպանեան գեմենն նստուցեալս։ Իսկ զինչ կալայց բողոք զԻ Էմոնեան արտորդեից։ վասն զի այս հարատունք՝ երբեմն սատգուած ժողովրդականն Հռովմայ էին 'ի շահ մեծ և 'ի պատուաբերութիւն։ Բժշկիդ՝ երեք հազար արտավար, որպէս թէ առողջացուցեալ իցէ ըզքեզ 110. Ճարտասանիդ՝ երկու հազար, իբրու այն թէ ոսկերձաման զքեզ յարդարեալ։ Բայց գարձցուք անդրէն Յիտալիա և յուղևորութիւնն։

Արկեր գաղթականս 'ի Կասիլինոն, ուր Կեսարու յաւաջագոյն բնակեցուցեալ էր։ Հարցեր գու յինէն գրով խորհուրդ վասն Կապուայ՝ այլ զնոյն ասայն պատասխանի և զԿասիլինոնէ, թէ կարօղ ինչ իցես արդեաք ուրանօր կայցենն գաղութք՝ գարձեալ նոր գաղթականս մուծանել իրաւամբք։ Ասացի քեզ՝ թէ չմարթի նոր գաղութ տանել իրաւամբք 'ի վերայ գաղթականի հմայիւք երթելոյ՝ մինչ

գեռ յաջողեալ էր ինն, բայց մարթի յաւելուլ նոր հոգա-
գործս. այս եղև իմ պատասխանի։ Իսկ քո խնդրութեանդ
սատմանակեալ, վերս 'ի վայր հարեալ զամենայն իրաւունս
հմայիչ, առեալ մուծեր հատուած մի այլ 'ի Կասիլինոն,
ուր սակաւ ամաց յառաջ ածեալ կայր, մինչև գրոշ ամբան-
նալ քեզ, և արօրագիր առնել, և խոփոնն քերել գրեթէ
առ գրամբքն Կապուայ՝ կրճատել զսահմանս բարգաւաճ
գաղթականին։ Յաղմկելոյ աստի կրօնիչ՝ սլանաս 'ի Մ.
Վարրոնի՝ առն արդոյ և անարատի՝ 'ի Կասինեան ապարանին։
Որմով իրաւամբք, որմով երեսաք։ Նովին, ասիցես, որով 'ի
պայազատացն Ի. Ռուբրիսի, որով 'ի Ի. Յուրանէայ ժա-
ռանգացն անդաստանս, որով և յայլ անթիւ առացուածս։
Եւ եթէ 'ի հրապարակաւ վաճառուց 111, լեցին վաւեր
ասիասակքն, միայն թէ կեսարուն, ոչ քոյքդ. որոց պարա-
տապանն գասար, ոչ որովք դու զքեզ հաներ 'ի ծանծաղ։
Իսկ զԿասինեան գեղինն Վարրոնի ոմն ասէ վաճառեալ, ո՞
զվաճառումն եղեալ հրապարակաւ, ո՞ զձայն քարոզելն
լուաւ։ Ասես՝ թէ յոլեցի զոք Ամէնքասնդրիս գնոց առ-
նուլ 'ի Կեսարէ. իբրև զի ծանր էր սպասել նմա։ Իսկ ժ
լուաւ երբեք, — թող թէ և ոչ այլոց ուրուք անմեղասու-
թեան այնչափ յոլովից փոյթ եղև, — թէ 'ի Վարրոնի ա-
բարոյն էրէ ինչ բնաւ շորթեալ։ Իսկ զինչ, եթէ և գրեաց
իսկ առ քեզ Կեսար հատուցանել տալ 'ի գուրս. զինչ
մարթիցի ասել բաւական զայնքանոյ ժարհութենէդ։ Հե-
ռացա սակաւիկ մի զուսերան զայնոսիկ զոր սեսանեմք,
յայնժամ 'ի միա առնուցուս՝ թէ այլ բան է վաճառուցն
Կեսարու, և այլ՝ լքութեանդ քոյ և յանդգնութեանդ։
Զի ոչ միայն սէրն, այլ և ամենայն բարեկամ, գրացի,
հիւր և գաւառապետ հալածեսցէ զքեզ 'ի հանդրուանաց
անտի։

Եւ քանի աւուրս յաղաքակի անդ զեղխեալ շուայտե-
ցաւ չարաչար քարուսանոք։ Յերրորդ ժամն աւուրն գի-
ներբուք էին, խաղք և փսխունք։ Ո՛վ և յարկացն այնոցիկ

թշուառութեան. ընդ փանիմն անենան փերամբ [112]: Թէպէտ և զեռաբդ սա տէր. այլ քանի՞ անհամեմատ ոք ունէր զնոսին. զի Վարդան ուսմանց իւրոց ընտրեաց զայն Հեմարան, ոչ շռայլութեանց: Զի՞նչ բանք լինէին յառաջագոյն 'ի գաստակերտի անդ, զինչ ինչ 'ի գիրս գրոշմեին: Իրաւունք հռովմէական ժողովրդականն, նախնեաց յիշատակարանք, ամենայն իմաստութեան օրէնք և ամենայն գիտութեան: Իսկ 'ի քուա՞ վարձկանութեանդ, — քանզի չէիր տէր, — վայրքն առ հասարակ արքեղելոց ձայնիւք հնչէին, յաստակք լոգայնի 'ի գինի, տաճկանային որմունք. ազատերամ մանկունն՝ ընդ խգացեալս, բազք ընդ սանտիկնայս Թարթափէին: Ի Կասինոն, յԱկուինոն, յԻնտերամնա երթային նմա յոլովք. ոչ ոք մուծաւ 'ի ներքս. և այս յիրաւի. զի յանձին առն գարշելոյ քամահեալ լինէին բարձի և պատուոյ նշանակք: Անտի իբրև 'ի հռովմ գէմ եգեալ մերձեցայր յԱկուինոն, ընդ առաջ գնացին նմա ամբոխ բազում, զի քաղաք է մարգախիտ. իսկ սա ամրափակ գեսպակաւ բարձեալ՝ անց ընդ քաղաքամէջն իբրև զմեռեալ: Ընդ խօլ գործեցին ակուինացիք, բայց սակայն առ Հանապարհաւն ընակեալ նստէին: Իսկ զինչ անագնիացիք, որ 'ի բացէ գոլով յուզուին՝ իջին յոլոյն սմա իբրև բգեշխի: Անհաւատ պատմութիւն, բայց վկայեալ յամենեցունց. ոչ զոք փոխարէն ոչինչ առաց, նա զի և երկուս անագնիացիս ընդ իւր ունէր, մին իշխան սուսերաց, միւսն բաժակաց: Զի՞ կա՞ ես զապատանալս տորա և զանդաստական յիշատակեցից, որոյք հրոսեաց 'ի սիդիկինեցիս, սասանեցոյց զպուտեոլիացիս, զի զկ. Կասիոս, զի զԲրուտոսն առին իւրեանց պաշտպանս: Եւ սակայն մեծաւ ընտրողութեամբ, խնամով, լաւակամութեամբ և սիրով, և ոչ բռնութեամբ և զինուք որպէս զքեզդ, որպէս զԲասիլեան և զայլս ձեզ նմանեսս, որոց և ոչ թեւարկել ոք յանձին կայցի, Թող թէ ընդ թեւովք նոցին մտանել: Մինչ դեռ դու մեկնեցար 'ի քաղաքէս, զինչ այն օր եղև պաշտօնակցին քում. յորժամ զոր դու պաշտել

սովոր էիր զմահարձանն՝ ի հրապարակին կործանեաց [113]. որ իբրև պատմեցաւ քեզ, որպէս յայտնի էր որոց ընդ քեզն էին, անկար բեկար։ Զքեզ յետ այնորիկ անգք անցին, ոչ գիտեմ. կարծեմ՝ երկիւղ և զէնք բռնացան [114]. զպաշտօնականիցդ յերկնից ընկեցեր. և արարեր, ոչ և այժմ ինչ դու՝ զի քեզ հանդոյն լինիցի, այլ զի անշուշտ ինքն ինքեան լինիցի անմոռան։

Իսկ զինչ ասա գարձ իւր անդրէն ի Հռովմ, որպէսզի ամբոխումն համօրէն քաղաքին։ Ցուշ լինէր մեզ Կիննա անչափ հզօրացեալ, ապա Սիլլա տիրացեալ, արդ և ըզ-Կեսար տեսանք Թագաւորեալ։ Էին Թերևս սուսերք, այլ ծածուկք, և ոչ այսչափ բազումք. իսկ այս զինչ և ոչ խժդժութիւն իցէ։ Զհետ ընթանան զինուորք սուսերաւորք՝ դունդ չորեքհազարի, տեսանելիք վահանս ածեալ շալակաց։ Եւ այսոցիկ, հարք ատենակալք, իբրև վաղուց հնացեալ սովորութեանց՝ ժուժկալեցաք։ Ի գլուխ ամենեանն Ցունեայ իբրև կամեաք, որպէս էրն կեցս եղեալ, գալ յատեան սուգանոյս, յեզակարծ ահիս զարհուրեալ՝ ի փախուստս գարձաք։ Իսկ սա՝ որ անկարօտն էր սատանայ, ոչ զրաք խնդրեաց, այլ մանաւանդ ուրախ լեալ ընդ մեկնել մեր՝ կատարեաց իսկ և իսկ զսիրելի յօրինուածութիւնսն։ Որ մուրհակացն Կեսարու պաշտպանն կայր՝ ի շահ անձինն, նա ինքն զորէնսն Կեսարու՝ և զերևելիս՝ տապալեաց, զի զընկերհաշտութիւնն կարող լինիցի տասանեցուցանել։ Ցաւել՝ ի թիւս ամաց [115] իշխանութեանցն. և որում հրամանաց Կեսարու ջատագովն լինել պարտ էր, ՝ի հասարակաց և՝ ի մանաւորս իրս զվերնսն Կեսարու պատուեաց։ Ի հասարակաց՝ չեք ինչ պատկառելի քան զորէնս, ՝ի մանաւորս՝ հաստատումն է կուսակն։ Զօրէնս՝ էր զոր առանց քարոզելոյ եգարձ, և էր զոր առ՝ ի բառնալ՝ քարոզեաց։ Զկատակ՝ որ և առ յետին սինքքոր քաղաքացիս յարգեալ է միշտ, գերև արար։ Զպատակերսն գրոշելաս և նկարեալս, զոր Կեսար դրախտիքն հանդերձ ժողովրդեան ժառանգիք,

ցոյց, սա՝ էր զոր 'ի պարտէզն Պոմպիոսի փոխադրեաց, էր զոր յամարանոցն Սկիպիոնի [116]:

Եւ գու ինամոտ իցես 'ի յիշատակ Կեսարու. սիրիցես գու զնա մեռեալ: Զի՞նչ կալաւ նա մեծ քան զայն փառս, զի ունէր բարձ, դրօշեալ, դարանաւանդ զմբեթայարկ [117] և քուրմ: Իսկ արդ՝ որպէս Ալամաղդայ, որպէս Արիսի, որպէս Կուիրինեայ, նոյնպէս և սատուածարեալն Ցուլիայ իցէ ուրեմն քուրմ Մ. Անտոնիոս: Արդ զի դիւաս, զի ոչ նուիրիս և կատարիս. ընտրեա օր, սեռ ի զքեզ որբեսցէ. պարտնամեցիցք եմք, ոչ ոք տացէ հրաժեշտ: Ո՛վ այր դարշ, թէ բռնաւորին իցես քուրմ, և թէ սատուակամահին: Հաբ-ցանեմ այսուհետև. անգէտ իցես արդեաք՝ զի՞նչ է օրս այս [118]: Զգիտիցես թէ չորրորդ օր էր երեկ 'ի կրկինն խաղուցն հռովմէականաց. և քո իսկ հրամանն առ ժողովուրդն հանեալ, զի հինգերորդն ըստ նմանէ օր՝ Կեսարու նուիրեալ լիցի: Ընդէր չիցեմք պատմուճանեալ, առ իմ ներքեմք ապախու զպատիւն առնել Կեսարու՝ զտուեալն քոյով օրինաք: Մի եթէ կալցիր յանձին պղծել զօրն՝ յաւելով պաղատանաս, իսկ զբարձկնեարն ոչ կամիցայք: Կամ յամենուստ բացէ 'ի բաց բարձ զիրսնն, կամ պահեա յամենայնի մինչև 'ի սպառ: Խնդրիցես. իցէ՞ ինձ հանոյ բարձ, զմբեթայարկ, քուրմ: Ինձ՝ և ոչ մի ինչ յայդցանէ հանոյ է. բայց գու՝ որ հրամանացն Կեսարու պատկառ կաս, զի՞նչ ունիցես ասել, թէ զնմ կիսոցն պաշտպան կաս, զայլոց անփոյթ առնես. բայց եթէ զի խոստովան լինել կամիցես, թէ քեզ ամենայն ինչ քով շահիւքդ չափ է, ոչ նորա արժանեօքն: Օ՜ն, հանպա զի՞նչ առ այսոսիկ. քանզի ակն կալեալ մեռամ քուրմ պերճաքանուեթեանդ: Ցոյժ քաջալիսանակ ոք ծանեայ զհաւդ քո, իսկ զքեզ՝ ապատարդէմ և հալանի 'ի բանս: Նորա ոչ երբեք մերկանդամ հրապարակախօս լեալ, իսկ զքո ղանդաճոյժ առն՝ զլանջադ տեսաք [119]: Ցաղեցես ինչ առ այսոսիկ պատասխանի, կամ բնաւ և բերան անդամ բանալ իշխեսցես: Իսկ զի՞նչ դատանիցես յայսչափ

կարախոտ Ճանաչիս, որում պատասխանին տալ համարձակեցայս։

Այլ Թողցուք զանցեալն. միոյ աւուրս այսմիկ, այսմ ասեմ միայնում սերկեան աւուրս, վայրկենիս այսմիկ ժամնանակի յորում խօսիմ՝ պաշտպանեա Թէ կարես։ Ընդէր շուրջ պատեալ բոլորեալ է աւագանիս զինաւորք. զմէ արբանեակք քո՝ սուսերաւոր կան ինձ յունկնդրութիւն. առ ինչ գրանդիք Միաբանութեան տաճարին չեցեն բաց. առ իմէ արս խժդժագոյնս քան զամենայն աղէնս, զիտուբացիս, կապարձաւորս ածես 'ի հրապարակ։ — Ի պահ զգուշութեան անձինն ասէ արարեալ։ Արդ ո՞չ ապաքէն լաւ իցէ հաղար անգամ կորնչիլ, քան յիւրում քաղաքի առանց գլխապահ զինուորաց չկարել կեալ։ Այլ այդ, եկ հաւատա ինձ, չէ ինչ բնաւ պահպանութիւն. զսէր և ըղձաւակամութիւն քաղաքացւոց պարտ է շուրջ բակ ունել, ոչ զէնս։ Հանցէ խլեսցէ 'ի քէն զայնոսիկ Ժողովուրդն հռովմէական. ո՛ տայր Թէ մեր ուղղանգամ ապրեալով. բայց որ ինչ և ընդ մեզ անցուցանիցես անցս, ցոր վայր 'ի գոյն խորհուրդս համակեաց Ծրգեալ կաս, ոչ կարացես՝ հաւատա ինձ՝ երկարակեաց լինել։ Քանզի և ամուսինդ քո այդ՝ ամենեին անագահ, զոր ես առանց նախատելոյ նկարագրեմ, յոյժ ընդ երկար յապազէ զկասայթն երրորդ 120 հռովմէական ժողովրդեան։ Գոն ժողովրդեանն հռովմէացւոց՝ յորս ապապարեսցէ զքեզնս ընկերհաշտութեանն, որ և յոր ծագս երկրի գտանիցին, անդ են ընկերհաշտութեանն պահնակք, նա մնանանդ ընկերհաշտութիւնն ինքնին գբլխովին, որ ցայժմ զքէն վրիժուցն Լեթ եհան, չև ևս եգիտ զանձն։ Են են ընկերահաշտիցս պատանեաք ազնուատոհմք՝ պատրաստք 'ի պաշտպանութիւն։ Ցեղի տացեն՝ որչափ և կամին՝ հանգստեան պարապեալ։ Համայն յետս այսրէն կոչեսցէ զնոսա ընկերհաշտութիւնն։ Քաղցր է ապաքէն և անուն խաղաղութեան, և ինքն իսկ կենսաբեր. բայց ընդ խաղաղութիւն և ընդ ծառայութիւն՝ բազում է խորոց

Digitized by Google

'ի միջի։ Խաղաղութիւն է՝ հեզ և հանգարտ ազատութիւն. ծառայութիւն՝ յետին ամենայն չարեաց, ոչ պատերազմաւ միայն, այլ և մահուամբ չափ հերքելի։ Ազատարարքն մեր այնոքիկ, եթէ յերեսաց մերոց անհետացան, այլ զորինակ գործոյն թողին աստ. զոր ոչ ուրուք արարեալ էր՝ արարին նոքա։ Պատերազմաւ հալածեաց Բրուտոս զՑարկուխիոս, որ յայնժամ թագ կապեաց՝ յորժամ օրէն էր լինել թագաւոր 'ի Հռովմ. Սպուրեանքն կասխոս և Մելիխոս, Մանլիոս, առ կասկած եւեթ զթագաւորութեան թեկն ածելոյ՝ սպանան։ Սոքա 121 նախ արարողքիս արարին, ոչ զնկրտեալն 'ի թագաւորութիւն, այլ զթագաւորեալն. որոց գործ նոցա՝ թէ ինքնին չքնաղ ինն է և աստուածային, և թէ 'ի կաղապար առաջի արկեալ. նա ասանիկ այնպիսի փառս ժառանգեցին սոքա, զոր հաղորդեալ երկինք թուիցին բովանդակել։ Զի թէպէտ և 'ի նմին իսկ վկայութեան մնաց չնաշխարհիկ գործոյն պատուղ բազում իցէ, սակայն մահկանացուի ոչ կարծեմ արհամարհելի զանահութիւն 122։

Արդ յիշեա, Մ. Անտոնիէ, զորն զայն՝ յորում ինչեցեր զիշխանապետութիւն. առաջի աչացդ նկարեա զցնծութիւն սուգանոցն և զհռովմէական ժողովրդեանն. մոյծ ընդ նմին 'ի կշիռ զշահավաճառան քո և զքոյոցդ. յայնժամ 'ի միտ առցես՝ որչափ ինչ 'ի միջի իցէ փառաց և շահուց։ Բայց զոր օրինակ են որ յախտէ իմեքէ կամ թմբրութեամբ զգայնոցն չար[illegible]համ կերակրոց, նոյնպէս վաւաշոտք, ընչաքաղցք, չարագործք չունին զհաշակ ճշմարիտ փառաց։ Այլ զքեզ եթէ փառք չարժեն 'ի գործս ուղղութեան, ոչ և երկիւղ խոտորեցուցանէ 'ի չարեաց գործոց։ Ի դատաստանացդ ոչ երկնչիս. եթէ առ անմեղութեան, գովեմ. եթէ առ բռնութեան, չեմնասա՝ թէ աներկիւղն 'ի դատաստանացդ յիսմէ պարտիցի զանդիտել։ Զի եթէ յարանց քաջաց և յընտրական քաղաքացւոց ոչ զարհուրիս, վասն զի զի-

Digitized by Google

նուք մերժեալ որոշեալ են 'ի մարմնոյդ, նոքին իսկ քոյքդ, հաւատաս ինձ, ոչ հանդուրժեսցեն քեզ յերկար։ Իսկ զինչ կեանք իցեն՝ զոյդդ և զերեկ յիւրոցն իսկ 'ի իւեթի և 'ի կասկածի լինել. բայց եթէ՝ կամ մեծ ևս երախտեաք շնորհապարտս քեզ զնոսա կացուցեր՝ քան զոր նա զամենայն յորոց խոշոշեցաւն, կամ թէ իցես ինչ դու յիմիք 'ի համեմատութիւն ընդ նմա գալոյ արժանի։ Էր 'ի նմա հանճար, մտաւորութիւն, ուշ, դպրութիւնք, խելամտութիւն, ժըրութիւն. անցեալ էր ընդ հանդէս մարտից պատերազմաց, թէպէտ և աղիտաբերս ընկերհաշտութեան, սակայն մեծամեծս. ամս ոչ սակաւ՝ թագաւորութեան ուշ եդեալ, ջանիւ մեծաւ և հաւգին վասնդաւք՝ զոր 'ի մտին էր 'ի դլուխ ասարեալ. տրովք, յիշատակաւք, առատութեամբ պարենից և խրախութեամբք զանգէտ ամբոխն ողբեալ. զիւրսն՝ պարգևաք, զհակառակորդսն՝ գթութեան կերպարանաք զեռև ածեալ։ Զի՞ ևս այլ. է զի ահիւ սատակից, է զի երկայնմտութեամբ յարամրի 'ի ներքս մուծեալ էր՝ յաղաս քաղաք այսր՝ զսովորութիւն ծառայութեան։ Գոյ ինձ համեմատել զքեզ ընդ նմա յիշխանասիրութեան, իսկ յայլում ամենայնի՝ ոչ իւիք բերես նմանութիւն։ Բայց 'ի քաջալերմ չարեացն, որովք յոգի խարեաց նա զընկերհաշտութիւնն, գէթ այս ինչ գտանի բարի, զի ուսաւ ժողովուրդն հուսալ մեկական՝ սրչափ ինչ ումեք հաւատս ընծայեսցէ, յոյս ոմանս վստահ դնիցէ, յորմէ զգոյշ լինիցի։ Այդ զայսոսիկ չածէս ինչ զմտաւ, չանսնուս 'ի միտ՝ թէ արանց քաջաց շատ է ուսանել քանիսին դեղեցիկ իցէ ինքնին, [illegible] աղտեաք քաղցր, անուշամբ գերապատ, ատատակէլ զայր բռնաւոր. որ նմա ոչն համբերին արք, միթէ քեզ տարցին։ Կա՛ յետ այսորիկ, հաւատաս ինձ, մի զմիով եղ և եղա արասցեն ընթանալ յայս գործ, և ոչ գանդաղելոյ ժամուն կալցին ակն։

Աղէ հայեաց, աղաչեմ, գամ մի յընկերհաշտութիւնն, Մ. Անտոնիէ. արկ 'ի միտ՝ յորոց ծնեալդ ես, և մի՛ ընդ որս կենցաղեալդ. ընդ իս՝ որպէս և քեզ կամք իցեն. ընդ

ընկերահաշտիս դարձիր 'ի սէր և 'ի հաճութիւն։ Այլ ըզ-
քէն՝ դու քեզէն տեսջիր, ես զանձնէս յայտ յանդիման
վկայեցից։ Պահեցի զընկերհաշտութիւնն յերիտասարդու-
թեան, ոչ լքից 'ի ծերութեան. արհամարհեցի զտուսերսն
Կասիլինայի, ոչ շրջեայց 'ի քոյոցդ. նա աւանիկ կամ-
կար մատուցից զանձն, եթէ մարթիցի ազատութեան քա-
զաքիս՝ իմով մահուամբ յառնել անդէն 'ի կեանս. որպէս
զի ցաւք հռովմէական ժողովրդեան՝ ծնցեն ուրեմն զոր երկ-
նեն 'ի վաղուց։ Զի եթէ յառաջ քան զամս իբրև զքսան,
'ի տաճարի աստ յայսմիկ ասացի վասն առն բդեշխութեամբ
պատուելոյ, թէ չէ հնար տարաժամ պատահել նմա մա-
հու, որչափ ճշմարտագոյն ևս ասացից այժմիկ վասն ալևո-
րիս։ Այլ ինձ, հարք առեղնակալք, արդէն փափաքելի իսկ
է մահ, յետ յանկ հանելոյ զպարտս պաշտամանցն՝ յորս
վիճակեցայ և կատարեցի։ Երկուս ինչս միայն խնդրեմ.
մի, զի 'ի մեռանելս՝ ազատ թողուցուս զժողովուրդն հռով-
մէական. մեծ ևս ինչ քան զայս ինձ պարգևել չիք բնաւ
դիցն անմահից։ և միւս, զի իւրաքանչիւր ումեք ըստ գոր-
ծոց ձեռաց իւրոց առ ընկերհաշտութիւնն, նոյնպէս և 'ի
գլուխ նորա կշռեացին փոխարէնքն [125]։

" Ces paroles sont toute la mélancolie d'un adieu;
c'est le testament politique de l'homme d'État qui va
bientôt venir [illegible] mort ! " C. Sommerville - Caesarius Cif. -

Digitized by Google

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ ԻՆՉ

ՅԵՐԿՐՈՐԴ ՓԻԼԻՊՊԵԱՆ ՃԱՌՍ

Թիւ. 1. Որք անցեալ էին 'ի բդեշխութենէն Կիկերոնի մինչև 'ի սպանումն Կ. Յուլիոսի Կեսարու։

2. Կարի վայելուչ զմարդասիրութեան և զգթութեան կերպարանս ցերեկ 'ի գլուխ Ճառիս։ Զոր ինչ երկոքին լուծին վրէժս ընկերհաշտութեանն և Կիկերոնի, յայտնի է 'ի պատմութենէ ժամանակին։ Եպատիլինա՝ վիրապն հայրենեաց՝ 'ի պարտութիւն մատնեալ առաջի Գեսարիսի տեզկալին Անտոնի, չարաչար խոցեալ ներսուք՝ 'ի կոյս գիականց գտաւ սատակեալ. իսկ Կլոդիոս՝ յԱպպիան Ճանապարհին սպանաւ 'ի Ծառայէն Միլոնի։

3. Զի չատագով եկաց Կիկերոնի իրաւանց բարեկամի իւրոյ ընդդէմ օտարի ուրուք՝ Փագիոսի, որ էր հայր առաջին կնոջն Անտոնի. այր ճոխ՝ որոյ թիկունս արարեալ զնա՝ զբիկեր զանազան. բայց ամանային նենգութիւնք անկան առաջի հզօր ճարտարախօսին։

4. Սա՝ Անտոնիոս, անօրէն հաղարապետի ժողովրդականն շնորհաց որով զերծանէր. իսկ Փագիոսն՝ որ և վասն թոռոմութեանն Բամբալեան, առաջին մեր Անտոնի, էր այր 'ի նուաստութենէ մեծացեալ ընչիւք։

5. Որ անարգական սիրով հարեալ էր յԱնտոնիոս պատանեակ։ Զայս պարտ է 'ի մտի ունել առ 'ի հաւս լինել այլ և այլ բանից որ զկնի։

Digitized by Google

6. Իբրև թէ զսեղի իւր՝ Կիկերոնի տուեալ իցէ Անտոնիոս 'ի խնդիր հաւահմայութեան. որ ընդհակ մեծ համարեալ էր, իբրև սրժանագունի զիմանալ այլում, յամենայն պաշտամունս։

7. Վասն զի պարտապանք որ ոչն ունէին հաստատեալ՝ ոչ կարէին մատչել 'ի քրմութիւն, յորոյ սակի էր և հմայութիւն կամ դուշակութիւն։

8. Քրմոյ կամ հաւահմայից էր այսր պաշտաման ընտրութիւն, բայց յուլեան օրէնքն կեսարաւ՝ սահմանեցին, զի ընտրութիւնն հաստատեցի 'ի ժողովրդենէն։

9. Յուլիոսի Կեսարու, որոյ հաճութեամբ՝ մանաւանդ թէ հրամանաւ՝ անցեալ էր Կիկերոնն 'ի Փարսալիոյ 'ի Բրունդիսիոն, և այլ էս ընդհանս ընկալեալ, որպէս սեռաւք 'ի ճառին Լիգարիոսի. վասն որոյ և չէր մարթ ձեռն մեկել 'ի նա Անտոնի։

10. Զի և կեսար բազմաց զկիսանն ընդհանալ էր, զի չսպան զնա, բայց ոչ այնու անպարտ եղև 'ի մահուանէ, նա և սպանողքն փառաւորեցան. է սպանութիւն որ փառս ածէ, և է ընդհանալ զկիսանն՝ որ անարգութիւն, որպէս աւազակացն։

11. Զի առանց հարցանելոյ կամ անսալոյ հմայից և քան օրինի գիմակացութեան հաղարապետաց ժողովրդեանն՝ առներ զոր կամէր։

12. Ի տանն Պոմպիոսի, զոր ամենայն աղխութն հանդերձ՝ ընդարձութն կեսարաւ գնեալ էր 'ի հասարակաց վաճառս։

13. Զսեքստոսէ Կլոդիոսէ էր բանն, զորոյ Անտոնիոս յաւագոյն խնդրեալ էր զգարձն 'ի կեսարէ։

14. Իսանի Փուլուիա, նախ Կլոդիոսի, ապա Կուրիոնի, հուսկ յետոյ Անտոնեայ կնին, փաստաբեր՝ խաղմարաբ և արիւնախանձ, հրապուրիչ արանց իւրոց. մինչև զկնի ուրեմն և ընդգմ՝ Աւգոստեայ կեսարու պատերազմ յուզել 'ի հեռաւորութեանն Անտոնի, և վայրենաբար գազանանալ 'ի մերոյ անմեղ հասեալ գլխոյն Կիկերոնի։

15. Այս այն կատաղն է՝ որ չհանգուրժեալ բանաւորութեան և յաղթանակացն Յուլիոսի կեսարու, յՈւտիկէ քաղաքին Աֆրիկէի չոգաւ զիւրովին։

16. Քաղք էր Լուկիոսի Կեսարու. Յուլիա մայր Անտոնի. որ յետ մահու առնն անց յամենութիւն Պ. Լենտուլոսի Սուրայ, որոյ ընդգաւառնանս հայրենեաց ըմբռնեալ 'ի Կիկերոնէ՝ խողխողեցաւ 'ի բանտի։

17. Անուանք են պատատաբերք հայկատակաց 'ի կատակերգութիւնս, զորս փոխանակ ճշմարիտ անուանց առնու Կիկերոն յանարգութիւն Անտոնի։

18. Ի տաճարի գինն Միտրադատիսեան։

19. Իմանալ հենգիսորէն զշրամանս ասենին՝ որ ասէան Կիկերոնի 'ի վերայ դատաճանացն. որպէս և Կորդիլն ասաս և հենգնական է։

Digitized by Google

ԵՒ որ փոքր մի զինի յիշատակեալ առաքելոյդ ժամանակին՝ ինքն Կիկերոնն է։

20. Հօրուն իւրոյ իմա, առն ոճրագործի, որպէս յիշեցաք վերագոյնդ։

21. Ի Կիթերիսն հմանուոյ Աստուծոյ, զոր ընդ իւր միւսկ 'ի Համբարձման շրջեցուցանէր, որ և Վոլուտինիա կոչէր. զի յառաջ քան զԱստուծոյ՝ Վոլուտինիա ոմն Եւորապէլ սիրելիս էր նորա։

22. Կիկերոնին երկուց անհարթ ատանցն սկիզբն, 'ի քերթուածոյ իւրոյ բդեշխութեանն, զոր Աստուծոյ ծաղր արարեալ էր։ Զի փոքր բանին էր, թէ լոկ պատմուճանն խորհրդակատութեան՝ առաւել գոնա քան զզինս զորավարաց, զի արար խաղաղութիւն 'ի խաղին կապելիսնեան. ապա տեղի տացին զէնք և զորագլուխք՝ խաղաղութեան և պատմուճանին։ Եւ անձնդողութիւն չէ անտարակոյս ինչ 'ի բերան Կիկերոնին, թէպէտ և ոչ յանիրաւի։

23. Սպանեալ զՆլոգիոս։

24. Զի թէպէտ ջատագովեաց Կիկերոնն Միլոնի, բայց դատաստանն պարտաւորեաց և աքսորեաց 'ի Մասիլիա։ Ճանն Միլոնեան զոր այժմս ունիմք՝ չէ այն զոր խօսեալն է յատենի, այլ նորոգ յօրինեալ և առաքեալ նմա 'ի տեղի տարագրութեանն. զոր և ընթերցեալ նորա՝ ասացեալ է. Բաւ՝ այլ, Կիկերոն. այլ եթէ զայդ էիր ասենաբանեալ, ես այժմ զնկուն զայսոսիկ ոչ ճաշակէի։

25. Այս է՝ 'ի թիւս կամ 'ի կարգի ընտրելեաց 'ի բդեշխութիւն 'ի ժողովս, մինչ դեռ չէր 'ի քաղաքին ըստ օրինաց, այլ զորավար 'ի Գալլիա։

26. Երկու էին Բրուտոսք գաւակիցք 'ի ազանութիւն կեսարու, որք 'ի տան իւրեանց զոր ամենայն սեռասէրն զոյսոսկեր նախնոյն իւրեանց Լուկիոսի Բրուտոսի հալածչին Տարկուինեանց։ Մ. Բրուտոս 'ի մայրենի հաւուց սեռասէրք և զԱհալայ Սերուիլեայ՝ որ ձեռամբ իւրով սպան զՊոմպէիոս Մելիոս զկամակաձեալն 'ի թագաւորութիւն։ Եւ կասասիոս 'ի նոյն կարծիս ազանեալ ասի զորդին իւր։

27. Այս ինքն կեսարու։

28. Մի էր և սա 'ի գատաճանաց, որոյ հայրն անկեալ էր 'ի փարսալեան ճակատու, և քեռին Մ. Կատոնն անձամբ անձին արարեալ Յուլիկէ, զի մի անկցի 'ի ձեռս յաղթողին՝ կեսարու բանակալի։

29. Ի վերնատուն աւագանի խորհրդարանին՝ սա փայն գոնա գործակից ազանողացն կեսարու 'ի բդեշխութեամբ պատուելոցն։

30. Պ. և Կ. Սերուիլեան եղբարք կապակք, որք և Ահալայ 'ի Սերուիլիասէ Ահալայ, որոյ զՊոմպէիոս Մելիոն ազանեալ էր, որպէս ասացաք։

31. Գանալի քաղաքական գաստուար էր, չէր օրէն նմա ասելի քան զաւուրս տան 'ի բաց մեկնիլ։

Digitized by Google

32. Քաղաքական դատաւորին էր վնասուն կատարել. և զի Բրուտոս հեռի էր առ ահին, Անտոնիոս կատարեաց զայնս մեծահանդէս՝ յանուն և ծախիւք նորին։

33. Բրուտոսի՝ Մակեդոնիա, կասիոսի՝ Ասորիք։

34. Հինգն, որպէս յայտ է, երկոքին ալեաքեալ գրէաւ գրեին, որ որոգէաս ծայրին 'ի գաշտին Թեսալ օրինակեալ։ Այդ ասել կամի. եթէ ես էի քերթող՝ արարող այնր վիպի ազատութեան հայրենեաց, ոչ զի եւ թէ մեռանն զնաբերի ազատութեամբ կեսարու., այլ զբանդպան, յաւելեալ և հանգէաս չարս, զմահ Լեպիդոսի և զերից Անտոնից։ Հանդոյն ոգին իմաստք են և 'ի Թեսալիան Եկիկերոնի։

35. Զի 'ի Նարբոն քաղաքի Տրերտիոս մեղմով իմն ազդեալ Անտոնի զնորհուրդ ազատութեանն, սա խնամով լուա կացեալ պահեաց, և չհասոյց յանկն կեսարու. յորմէ հանէ Եկիկերոնի՝ թէ կամակից ուրեմն էր և նա, այլ յարութենէն վերջացաւ։

36. Ոգի սա. Հռոմոս էր ասասաւծուհի առաստութեան և ճոխութեան. որոյ և սահմարն էր տուն հաստատեալ դանձին. և անդ տախ. տակք կամ մեռանեալք յիշատակաց. որոց սիրեալ Անտոնի և խարդախեալ՝ յաւել 'ի նոսա հրամանս տուաս իբր 'ի գիմաց կնոջաւրու. 'ի բաշխս արծաթոյն։

37. Յետ մահուան կեսարու. կին նորա Կալպուռնիա իբրև երիս հազար տաղանդս եդ առ Անտոնի 'ի պահեաս, ընդ որս և զարձանագիրս կեսարու., զորս խարդախեալ նորա՝ արար զոր և կամեցաւ. յայն ազատատն՝ զի հրամայեալ էր յաւագանեաւն՝ մի թող 'ի կարգելոյն կեսարու. փոփոխել, առ չասելոյ պատճառս նորոյ ազգիի և վերադարձելոյ ակնկալեալ խաղաղութեան։

38. Երիս բանակս կուրայս. զմին 'ի Թեսալիա առ. փարսալաս., զերկրորդն յԱֆրիկէ առ. Թափասուս., զերրորդն 'ի Սպանիա առ. Մունդաս։ Առաջնումն զօրագլուխ էր կն. Գոմպիոս, երկրորդին՝ Գ. Սկիպիոն, երրորդին՝ կնեոս և Սեքստոս որդիք Գոմպիոսի։

39. Այս ընդդիմադրութիւն է 'ի գիմաց Անտոնի. քանզի գժկամակեալ իսկ էր Գոմպիոս 'ի կատարակատութեանցն Եկիկերոնի, մինչ չէ ասել. «Ցանկամ անցանել Եկիկերոնի առ. Թշնամեան, զի երկիցս 'ի մէնջ.» կամ որպէս նուիրեալ առ. նա ինքն ասոյ ասել. «Անդ առ. կեսարս, և երկիցս յինէն։»

40. Զի զնչան Գոմպիոսի վաճառեաց համարձակ հրապարակաւ և յինքն վաստակեաց։ Յարչակ յարչակ յաւելու. 'ի հայսմն, զի ըստ լաւագունն նեմեսանաչութիւն ինչ լինիցի ընդ յարչակին։

41. Ի նախասանին Եկիկերոնի ասէր զայս Անտոնիոս, ցուցանել թէ ասելի եղեալ էր բարեկամաց և սիրելեաց և անչիշատակ թողեալ 'ի կասկան։

42. Փոր՝ իմն զանասարս հռովմէական՝ գրամ արծաթի, որ որ-

Digitized by Google

ժէը իրը քսան դանդ կամ հինգերորդ մի դալլիսկան գահեկանի և սակաւիկ մինչ աւելի : Իր և փող ԱԾ որ արժէր հազար փող փոքր , բայց էր մնաւոր միայն դրամ առ 'ի հաշիւ :

43. Հնութիւն , որ վաստերագրոյն մինչ տայ կասկածել . զի անծանօթի սէր ոչէ . և ակնարկել կամի՝ թէ կասկին այն խարդախեալ էր և փոխանակեալ :

44. Այն է Մ . Անուանիս կրնայի , յորմէ վասն ահագին պարտուցն ոչ մինչ ՅՈՒՆ որդւոյն ժառանգութիւն :

45. Ի Տիւրբեան ամարատունին Սկիպիոնի Մեռելոսի , ուր առանձնացեալ առաջ երթեռատան՝ կրթէր զանձն յայն ճառատանս չարաքսութիւնց :

46. Որ զատացեալ կայրն ասպետացն և ազնուացն որդւոց 'ի թաղարդն սեղանաբանս :

47. Փրկել ասէ , վասն զի պարտապանք՝ եթէ չունէին հատուցանել , կապեալք 'ի ծառայութիւն պարտատերացն մնանէին մինչև հատուցանեն . և այս օրէնք յերկոսեան տարեսակսն իսկ հատուսեալ էր :

48. Ի որ կարծէ քարշանս լինել Փաւլուխոյ կնոջ Կլաւդիոսի , և է որ ապանաւանն Զոսիմոսի և սպասոյ ամենց իշխանաց քաղաքին .

49. Որ չգայ առ. կերաբ առ. անյուսութեան կենացն և չիարելոյ կեալ 'ի Հռովմ , կամ վասն չարեաց ասելի լինելոյ , մինչև չհամարձակել և ոչ առ. մայրն գնալ :

50. Այս է , յայնժամ ամենայն որ 'ի Հայրենի տան բնակէր , և ոչ արդէն յեռ քաղաքական մարտին՝ զի զհայրենին իւր 'ի պարտան առեալ Անուանի և անուան ՅՈՒՆՑԻ , յարիշտակեալ էր զայլոցն :

51. Աւան էր այն 'ի Յապանիս , յորոյ բուսոյն քանզի խրուկ բազում հնանէր , ուրբեին նմա բազում մանրատեսք 'ի միասին . Նոյնպէս Միանեան գեղանոյն ոչ Անուան միայն էր ասեր , այլ և ընկերք իւր :

52. Ցերեսաց գառանացն Գ . Կլաւդիոսի՝ սխեբին Եկիկերոնի :

53. Կուրինի , զորմէ 'ի վերս ասաց թէ զմինչ ոք էր . և ասա ակնարկէ 'ի հազարապետութիւն նորա , որ կաշառեալ 'ի Կեռարէ՝ յամառեալ ազնիւալ եկաց 'ի կողմ նորա : ԵՒԿ ԿՈՐՕՂ ԷՅԵ , ասէ , զի ոչ հոգաւ , ոչ մտաց և ոչ ճարտարիւսութեամբ մինչ հուսալ էր 'ի նա Անուանիս :

54. Եւ խնդիրն էր՝ չափարարել զիշխանութիւնն Կեռարու . և ասալ արձակել զզօրս իւր , ընդ որ խեռապէս աւազանին և ամենայն ազգաւոր :

55. Այս էր ցասումն աւազանայն , և հակառակ ընկերակցութեան ասնել և 'ի թշնամոյ համարի զընդվզեալն ընդդէմ հրամանաց իւրոց . որում և դատավճիռ էր մահ , զոր ասպարն յայտ առնէ . որում և արժանի եղեալ էր Անուան ընդդիմակացութեամբն 'ի հազարապետութեան իւրում 'ի չնորհս Կեռարու . պատճառանաք

պաշտամանն. զի հաղարապետաց ժողովդիանն անկ էր ընդդէմ կալ կարծեալ ինքնաս նոցա։

56. Այս է՝ հրաման սպանանելոյ զնա իբրև թշնամի ընկերհաշտութեան. զոր տայր առագանին այսու ևեթ սուգ և զգոնական վճռովք. «Տեսցին բդեշխք և այլ ևս փոխանակք բդեշխից, զի մի ինչ հասցէ ընկերհաշտութեան ինքն։»

57. Իսմ՝ կալառաջ գարձին զվոնա պարտատերոցն զոր կոչուսեալ էր ի խաղս։

58. Ընդ կատակս իսմ հենդնական, զի որպէս ասէ ընդ հաւ՝ և ոչ զմի յայոց պատճառաց յառաջ բերեալ էր Անտանի։

59. Վասն զի, որպէս այլուր խորհրդածէ Կիկերոնն. «Ի կարելի քաղաքաց յանկաստութեան ամենայնի՝ այս կատարած է կարտատան նոցա. դատապարտեալք հաստատին յառաջին պայմանն, կապեալք արձակին, աքսորեալք դառնան, խլեին լուծանին գտանվինքք։ Ի հաստատել այսր ամենայնի՝ չիք ոք որ ոչ ի միտ առնուցու, թէ ահա կարծանի ընկերհաշտութիւնն։» Վասն այսր ամենայնի՝ բարութեան և ընկերհաշտութեան բանք ոչինչ են արդ առ Խնդիրս մեր ի կարբասանան ասա ընկերհաշտութեանս։

60. Կիկերոնս, որ և ըստ արամ ասացաք՝ Վոլուտիոս, ի Գ. Վոլուտիոսէ նշանագրելի, արամ նախ հանանի լեալ՝ ապա անցեալ էր առ Անտանիս, և Կիկերոնս յարկարելու նա զի Վոլուտիոսն առհանի ազնուական էր, Վոլուտիոս ձերբազատ արարեալ էր և զնա։

61. Եկատաս՝ բանդութեան զարս խրոյ յետ փարատելոն յաղթութեան առաջնորդ կացուցեալ զԱնտանիս՝ արձակեաց յիտալիա, և ինքն ինացելովք գնդաքն ամենեցուս զկնա Գոմպիոսի փախստէի։ Կիկերոնն, ակամայ խառնեալ յայն պատերազմ, և չտեսեալ ինչ յայս կոգմանն Գոմպիոսի, և առ խոթութեանն չկարացեալ մնանել ի ճանկատն, յետ կոտորածին գարձաւ ելն յիտալիա, և պատուհաց Անտանի ի Բրունդիսիոն և յաղթական բանակի նորա, ուր ըստ օրինաց պատերազմի կարէր ապանանել զնա Անտանիս և կեցոյց։

62. Պաստաբրոս յայտ իսկ ցուցանէ զոս անաբական ոք ոչինչ լեալ, և ի Սերգիոս անցեալ յԱնտանիս. արամ և ստ ընդհ արարեալ՝ տայր զնիան ապային, զի ի վարանս տուեալ չահեցոցի։

63. Իսմ զՊոմպիոսին, զոր գրաւեալ էր և անբաւական ի պահել, զի որդին Գոմպիոսի կենդանի կայր և զինուզ պահանջել թուէր։

64. Ցնկեին տեգ մի ի մէջն, և զնովս առնելին զՀասարակաց հրապարակս. վարճառն ի ձայն քարոզի. զոր և պարզաբար գրէ կամ վարճառ ընդ գիտս կոչելին. Թերևս անտի սովորեալ, զի զկապաստամարտից, իբրև զնու և նիզակաս ասարեալս, այնպէս վարճառելին։ Իսկ Արամանդ Գոհանջիլ կոչեցեալ, զի առ Հռամանէաս՝ ուխտէ առ նոյն գիս՝ զկայ առեալ կացին պատերազմաց ի փախչելոյ։

Digitized by Google

65. Զի 'ի մանկութենէն վասնիչ լեալ գոյիցի, և ապա 'ի հասապակաց վաճառան դիմս հաստատելով, յանարգութիւն գործոցանէր զաղնուական ասէին։

66. Ընդ Լիսիոսի համարեալ է, որոյ էր քերթուած զկապիտանական կամ փիլիպիկեան պատերազմին։

67. Որպէս յայտ է, պատոյտք ինչ ըստ ծովուն են 'ի ներոյին Սիկիլիոյ առ Մեսինաս, դէմ յանդիման Սիկիլիայի՝ որ այն ինքն է Ապուլ և Շնիկնիթի և Գանձ ըստ մերոյ նախնեաց թարգմանելոյ, զի ապառեալ կլաներ զանկեալսն 'ի յորձանս նորա հանդոյն Գարիբդին. վասն որոյ և 'ի գալան ինչ կամ յընդդէմ և 'ի նշանագ ծովական այլազանութենէն զնա հինքն։

68. Այս բան էր օրէն արձակելոյ զկին. «Զիրա քո քեզ կալ։» Ի նոյն հայի և ասնաւելն 'ի նմանէ զանանչս ասանն. արամ զ զիրա դոյ մերժելն 'ի տանէ։

69. Զի 'ի վճարել ափրիկեան մարտին՝ իշխանապետութեան պատիւ առաքեցաւ առ Կիւսար, որում 'ի գաւառանն այսրէն՝ յաչաց ելեալ գոսաս նոմա Անտոնիոս։

70. Որում 'ի վաճառ հանէր Անտոնիոս զկոհ և զկարասին իւր, զի հաստատցէ Կիւսարու զպարտիսն։

71. Գիանզի լուսաքերցին առ նա, թէ Անտոնիոս իբրև զիւր կամ վաճառել և զանրան զի բնէ հարազատ պայազատացս։

72. Յուսերամարտս որ յիւր բաղում մրցանաց ազատ լինել խնդրէր՝ չդալ այլ ևս 'ի վերս, տայրն նմա ցուցմ մի խորտարարս 'ի նշանակ։

73. Զի յատազակաց կամ 'ի Գամպիսանանց երկնչել ասէր զճանապարհսն. վասն որոյ ուղղոյ լեալ՝ մեռաց 'ի Նարբոն։

74. Յետ մահուան Կիւսարու գարձ արար Կիկերոնն յաւարարկեալ գնացեալ 'ի յունաստան, ըստ յուսացուցանելոյ բարեկամացն։

75. Յառաջիւրմ Փիլիպպեան ճառանն, զոր և ասան ցուցանէ համաւսիւ։

76. Խանարն են. գոս զրգիչխութիւն 'ի Կիւսարէ շնթելով պատուելով թախանձելիր. մեք՝ 'ի կալ քնկերհաշաւութեանն՝ և 'ի քաղաքաց և 'ի գաղթականաց Գալլիոյ խնդրեաք. զի ունիցէն զիրաւունս քուէի։

77. Էր տեղի ինչ Յեսրուրիա, 'ի մէջ Վէիսց և Կրեմերայ գետոցն։

78. Առ Փուլուիս այրին Կուրիոնի, զոր սուղ ինչ յատաջ ասեալ էր կին, և գիսեր զնա խոժոռեալ ընդ ինքն վասն տակաւին ընդ հոմանիս անդանելոյ։

79. Զի համբաւ սատ հնչեալ էր՝ թէ Կիւսար ապանեալ է, և կողմ կրաերոյն Գամպիսան հարգան ասայ զոքանն 'ի Հռոմայ. գալուստ Անտոնի ատաղել թուեր զոյն, իբրև լուր առեալ հաստատի և առաքարեալ 'ի քաղաքն։

Digitized by Google

80. Վասն երկրանութեան լաւին ձայնիցն էրն իմոյ, զոր յանապարկիչս միաս առեալ՝ իմանալոյն զնմն մի զմեւելութիւն։

81. Ի պարթեւական պատերազմն, որպէս 'ի մոռ ունէր. բայց ապանաւ և չկարաց։

82. Զի և ինքն Նիկերոնն 'ի կամաս հաւատիմայիցն դասեալ էր։ Հաւատիմութիւնն զոր ասէ՝ լինէր նկատելով ընդ երկինս և գնելով և խարելով զերեալս, զկռիւս և զնախարանս հաւուց, որպէս և զկուսաւորեալ նացա կամ՝ զլուսաւորեալ, և զայլ ևս խարական դասակութեանց նշանս՝ որ յերկինք և որ յերկրէ։

83. Այս է՝ խանդարեալ, զոր 'ի վերդ ասաց։

84. Կեսարու պաշտօնակցին իւրոյ որ յասաղոյ վարէր, և զնի գայր Անտոնիոս։

85. Զի ժողովուրդն 'ի հարիւրական կամ հարիւրապետս բաժաներ, հինգ դասս ունելով. յասաղնուն՝ ինքնուն և ուր հարիւրական, որ առաւել էր քան զայլոցն միանգամայն։ Կեսարս ետ նոսա վիճակաւ ընտրել հարիւրական մի առանձինն, զի յասաղ քան զայլսն նոքա արկցեն զվիճակս իւրեանց. առ որ ոչինչ կարաց ասել Անտոնիոս։ Այս է ընտրեալ հարիւրական։ Այսպէս կարգաւ և յայլոց դասուց հարիւրական ընտրեցաւ Դոլաբելլա, և քարոզեցաւ։ Զիթիւ բազմութեան քաջութիւնն ասեալ Անտոնի՝ լքուցեալ հանդարտեալ. 'ի քարոզել Դոլաբելլայ՝ լուն։

86. Այս ինքն Կեսարս պաշտօնակցի խրատ՝, որ և բգեշխ էր և հաւատիմայ։

87. Զի եթէ ոչ ըստ օրինի ընտրեալ էր Դոլաբելլա 'ի բգեշխութիւն, ամենայն հրամանք նորա այնու հետեւ անվաւեր և անիրաւ համարեին։ Զայսոր ընտրութիւն՝ պատկանեալ ասէ ժողովոյ հաւատիմայիցն, զոր ձեռ ոսիր կոչէ։

88. Զի ապա իբրև հաշտեցաւ ընդ Դոլաբելլայ Անտոնիոս, ոչ ինչ թերութիւն լինել ասաց 'ի բգեշխութեան նորա։

89. Կրկին պատկ շնորհեալ էր Կեսարս յասաղանդն. առաջի՝ մշանջնեալս, և ոսկի՝ 'ի հանգեստս խազաց, որ 'ի Լուսերկրկեանն թուի առեալ նմա։

90. Ոչ միայն մերժեալ պատկի Կեսարս զԹագն, այլ և կասկածանն Աքսանդրայ նուիրեալ, զնա միայն ասելով թագաւոր հռովմայեցւոց։

91. Սպանողացն Կեսարս, զի զնա բարձեալ, զԱնտոնիոս թագին։

92. Զօրն կեալ ասէ՝ որ 'ի հեշտանս փափկութեան անցուցանեն, իսկ առ օրին՝ որ զվտանգն ոչ խորհին։

93. Մինչ չէ 'ի Պարթեւս արշաւեալ, խնդրելոց էր Կեսարս յաւանդանէն, թէ թցէ Դոլաբելլա բգեշխ օրինաւոր, թէ ոչ. զի 'ի տեղի իւր կացուցցէ զնա։ — Բախտ Հռովմայ կոչէ Նիկերոնն զպանուն

Digitized by Google

կեսարու՝ որ 'ի հնգետասան Մարտի գործեցաւ. զկնի որոյ եմուտ կալաւ Դոլաբելլա զբգեղչութիւնն, և Անտոնի հաշտեալ ընկալաւ զնա իւր պաշտօնակից, մոռացեալ զհմայսն իւր։

94. Ուր սպանօղք կեսարու յետ գործոյն վճաքելոյ մեկնեալ կացին զտիւն զայն և զդիշեր. ընդ այլս և Կիկերոնն գնաց առ նոսա հոգալ զընկերհաշտութենէն։

95. Աստուածուհւոյն Երկրի, ուր 'ի խորհուրդ ժողովեցան աւագանին. և Կիկերոնն 'ի խաղաղութիւն յորդորեաց զամենեսեան և յանոխակալութիւն. 'ի նոյն կեղծաւորեցաւ և Անտոնիոս։ Եւ տուեալ պատանդս յորդւոց նորա և Լեպիդեայ, իբրև թէ հաստատեցաւ հաշտութիւն ընդ դաւաճանն. և վճիռ եղև յատենէն, մի խղճ և խնդիր առնել դատաստանաւ զսպանողացն կեսարու, և զմիռս նորա և զհրամանն առ վաւերական ունել։

96. Զի ճառ գամբանական խօսեալ Անտոնի՝ գրուատեաց զկեսար, ողբացաւ զմահն, դրդեաց զխառնաղանձն 'ի վրէժխնդրութիւն, որոյ 'ի խարուկէ անտի կեսարու յափշտակեալ ջահս և խանձեալ՝ դիմեցին հուր հարկանել զտանց սպանողացն։

97. Իսկ կեսարուն։

98. Զի յափշտակութեամբք կուտեալ էր յընչից Պոմպիոսեանց։

99. Կեսար։

100. Որով տայ իմանալ գործակից զՓուլուլիա։

101. Սեքստոս Կլոդիոս ոմն։

102. Յետ սպանման Կեսարու, որպէս ասացաք, կին նորա Կալպուռնիա չորեք հարիւր տաղանդ և զիշատակագիրս նորա յանձն արար յԱնտոնիոս, որոյ նենգագործ հնարիւք խարդախեալ զայնս՝ արար զոր կամեցաւ, վաճառել մուտս և հասոյ, պաշտամունս, իշխանութիւնս, ապահարկութիւնս. յուսացեալ 'ի վճիռն որ եղև՝ չփոխել զկարգեալսն 'ի Կեսարէ։

103. Ծաղր, զի որ աքսորանօքն անուանարկ համարեալն էր, դայր քնիչ և դատաւոր լինել վարուց. և տրտունջ՝ զանազորոնութենէն Աէտոնի, որ ծաղր և քրքիջ կացուցանէր զՀօրեղբայրն։

104. Ժողով հրամայեալ Անտոնի՝ յանկարծ դադարեցոյց. զի որպէս թուի՝ հազարապետ ոմն ժողովրդեան պատէր շանթ տեսեալ 'ի ձախոյ կուսէ, որ և առ Լատինս ձախող նշանակէ յաճախ, որպէս միշտ առ Հելլէնսն։

105. Զի առ 'ի բաշխել զինուորաց զկամպանեան և զԼէոնտեան անդամն՝ արս եօթն կարգեաց Անտոնիոս, այլ և ոչ 'ի նոսա զՀօրեղբայրն. զի նախ պարտ էր 'ի պատուի կացուցանել զնա՝ առ 'ի կարօղ լինելոյ հասանել յիշխանութիւն ինչ. բայց յայնժամ խիթայր թէ չկարիցէ ժխտել և զանալ նմա զարծաթն զոր պարտէր. զի 'ի քաղաքական մահուանէ տարագրութեանն կենդանանայր նա յայնժամ յամենայն իրաւունս իւր։

Digitized by Google

106. Այն է զփուլուիա։

107. Յայտնի երևի թէ 'ի Հռովմ էր Կ. Անտոնիոս հօրեղբայրն, թէպէտ և ոչ օրինօք տրբեալ յեպերանացն. վասն զի լաւն օրէնք 'ի քաղաքական պատերազմի։

108. Առ աւագանին ասէ։

109. Ի շահել և յինքն յանկուցանել զվաստակաւոր զօրականն, կամեցաւ գաղուլիս 'ի նոցանէ ընակեցուցանել՝ անձամբ երթեալ 'ի Կապուա. այլ հին ընակիչքն ընդդէմ դարձան նմա, և մնազապուր ելեալ 'ի սատակմանէ։ Վասն որոյ ասէ, զկնա կրթեցիր այդմ, զի յաւուր միում և ոչ էրեթիկ ապրեացիս, այլ կորիցես։

110. Ընդ հենգն իմա՝ 'ի մնաց խօշտութենէ. զի զինչ մարմնոյ հիւանդութիւն յայրն շուայտոտ իբրև զԱնտոնիոս։

111. Ըստ Անտոնի. զի կեսաք հրապարակաւ ետ վաճառել զինչս Պոմպիոսեանց՝ իւրոց հակառակորդաց կորուսելոց 'ի քաղաքական պատերազմին, և գնեաց Անտոնիոս. այլ և խորեաց գողացաւ ևս յաւանդիցն Կեսարու 'ի տաճարին Ոփսեայ, որպէս տեսաք 'ի վերդ։

112. Վաղեմի ուրուն քերթողի է բանդ։

113. Զի յետ ապահութեան Կեսարու աղմկեալ ամբոխն՝ արձան իբրև բագին պաշտամանն 'ի խաղուկին տեղւոջ կանգնեաց նմա 'ի հրապարակին, և գիր 'ի նմա Հօրն հայրենեաց. զոր 'ի մեկնել գնալ Անտոնի պատճառանօքք զգաղթականօքն շրջելոյ, կամ յերկիւղէն՝ զի վասն ապանման սուտ Պարիսոսի ուրուն՝ ատելի լեալ էր ամբոխին, յայնժամ պաշտօնակից նորա Դոլաբելլա կործանեաց զարձանն, ցրուեալ հետապնդեալ արարեալ և զվայրն. 'ի խուռվչայն՝ զծառայս 'ի խաչ ելեան, զազատսն քարավէժ արար ընդ ժայռն Տարպէական։

114. Իբրև. դարձաւ Անտոն 'ի քաղաքն խուռն ամբոխիւ. զինուց, Կիկերոնն զանգիտեալ համարի զԴոլաբելլա, և փոխեալ յինքեանէ. բայց այլք զօշաքաղութեան նորա տան զայն, որում և Կիկերոնն յայտնապէս վկայէ 'ի թղթի միում առ Ատտիկոս մտերիմ իւր։

115. Դատաւորութեան տարի մի կարգեալ էր Կեսարու, բդեշխութեան՝ երկեամ. Անտոնիոս՝ հաղարապետութեան օրինօք՝ դատաւորաց ետ ամս կրկին, բդեշխից՝ զերեամ մի։

116. Զորս Անտոնի գնոց առեալ էր զերկոսին 'ի հասարակաց վաճառաց։

117. Զի միայն մեհենից անկ էր ունել գմբեթ 'ի վերայ տանեացն, իբրև աստուածային վայրի. որպէս և բարձ՝ աստուածոց, յոր հանգուցանէին զպատկերս նոցա յերկրպագութիւն առնուլ։ Պատիւքդ և պաշտօն 'ի սրտկող աւագանւոյն տուեալ էին Կեսարու առ կենդանութեամն. իսկ Անտոնիոս և զքրմութիւն նորա խնդրեալ էր և ընկալեալ, բայց չէ նուիրեալ՝ ապանաւ Կեսար. և նա ոչ էա այնուհետև կամեցաւ նուիրել, և յայս անկարկէ հենգնութիւն Կիկերոնի։

Digitized by Google

118. Զոր Կիկերոնն համարի քան Սեպտեմբերի, յոր անկանէր հինգերորդ օր հռովմէական խաղոց կրկիսին. յորում և Անտոնի սահմանեալ էր տօն կեսարու, և բարձնմա և դրօշեալ ընդ այլ դիս. յորոց և ոչ զմին արար յետ սպանութեանն, բայց միայն աղօթս և պաղատանս կարդեաց: Զայս ամենայն կշտամբէ Կիկերոնն:

119. Երկրդմի խօսիւք ընդ անպատուական բանիւքն և զմերկութիւն նորա յանդիմանէ, որպէս տեսաք 'ի վերոյ՝ զի երևեալ 'ի հրապարակին առաջի Կեսարու և ժողովոյն՝ ատենաբանեաց 'ի Լուպերկեան տօնին:

120. Երրորդ հաս կամ հասոյթ՝ խմանայ զմահն Անտոնի. զի երկոքին արքն Փուլուիայ, Կլոդիոս և Կուրիոն, կանխեալ կորուսեալ էին 'ի միջոյ, և մահ նոցա հատուցումն եղեալ էր հռովմէական ժողովրդեանն:

121. Յետ առաջնոց հնոցն՝ սոքա սպանողք Կեսարու՝ որով սատակեցին զթագաւորացեալն. Թէպէտ և վասն կարեաց ժամանակին 'ի նանիր եղև. Չսն նոցա և այլոց բազմաց. զի զմնի յաջորդեաց եռապատութիւն, և ամս կայսերութիւն. և Կիկերոնի ևս բաժին եղև մահ:

122. Այս գովեստք սպանութեան և սպանողացն Կեսարու՝ խմանալի են զբռնակալէ զատելոյ օրինաւոր տերութեանն՝ զհասարակաց վերագէ: Ապա թէ ոչ, յայլմտեռանս իւր զհակառակն բազում հաւատեաք ասանդէ Կիկերոնն զօրինաւոր տերանց: Թող զի և օրինացն դուլ և պատուէր տուեալ էր ամենեցուն 'ի Հռովմ՝ սպանանել զբռնաւորս, զդահիճս հայրենեաց:

123. Հէք Կիկերոնն, որ և ոչ միում 'ի խնդրուածոցդ հասեր. զի կորեաւ զնաց ազատութիւն, և զմնատակիր գլուխդ դահիճն Անտոնի հատ ընկեց և տարաւ առ Փուլուիա, և ինքասկաղը ընկերհաշտութեանն ոչ միայն անպատուհաս մեռցին, այլ և վերացան բարձրացան մինչև 'ի գահ միահեծան՝ միապետական կայսերութեան: Ա՛յսպէս ոչ խմաստութիւն, ոչ արդարութիւն և ոչ բանք տիրեն աշխարհի, այլ կամք և բռնութիւն: «Եւ օրէնս արդարութեան՝ բռնութիւն մեր եղիցի:» Իմաստ. Բ. 11:

Digitized by Google

ՑԱՆԿ ՃԱՌԻՑ

Եսքինեսի ընդդէմ Կտեսիփոնի . . . . . էջ 7
Դիմաստենի յաղագս Պասկին . . . . . » 109
Կիկերոնի վասն Ազքիայ քերթողի . . . . » 223
» վասն Կ. Լիգարիոսի . . . . . » 247
» վասն արքային Դիոտարայ . . . » 271
» Երկրորդ Փիլիպպեան ընդդէմ Մ. Անտոնիոսի . . . . . » 299

Digitized by Google

Digitized by Google

Digitized by Google

UNIVERSITY OF MICHIGAN
3 9015 04147 2054

Digitized by Google

Digitized by Google